Шифр
55 ✓

II 3/9

2002

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ՄԱՐԻԱՄՈՒ

ԿՈՒՍԱՄՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անթոր
55

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ՄԱՐԻԱՄՈՒ

ԿՈՒՍԱՄՕՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ

ԳՐԵԱՑ

ՏԷՐ ՕՐՍԻՆԻ ՔԱՀԱՆԱՅ

590

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ ՀԱՆԴԵՐՁ ՅԱԽԷԼՈՒԱԾՈՎ

Ի Հ. ԱԽՕՍԵՆՏԻՈՍԷ Վ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻ

ՎԻՆՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
1885

36527 ա.հ.

(3821 41)
(20173 – 60)
55 – 2001
1.857

ՅԱՆԿ

ՅԱՌԱՋԱԲԱՆ
Փրանկլիանոսի Բենիամինայ, առ կուսամայրն Պաղատանք սրտի ղղջացելոյ:
Օրացոյց և Պատկեր Տօնից Ս. Աստուածածնի:
Գլ. Ա. – Ակնկալութիւն համօրէն աշխարհի վասն կուսին և Մեսիային 1
Տանօթութիւնք Ա. Գլխոյ 28
Գլ. Բ. – Անարատ յղութիւն Մարիամայ 45
Տանօթութիւնք Բ. Գլխոյ 56
Գլ. Գ. – Ընտանի Մարիամայ 65
Տանօթութիւնք Գ. Գլխոյ 71
Գլ. Դ. – Ընծայումն Մարիամայ ի տաճարն 76
Տանօթութիւնք Դ. Գլխոյ 84
Գլ. Ե. – Մարիամ ի տաճարին 88
Տանօթութիւնք Ե. Գլխոյ 104
Գլ. Զ. – Մարիամու որբ մնալն 109
Տանօթութիւնք Զ. Գլխոյ 119
Գլ. Է. – Հարսնութիւն Մարիամայ 122
Տանօթութիւնք Է. Գլխոյ 139
Գլ. Ը. – Աւետումն 145
Տանօթութիւնք Ը. Գլխոյ 154
Գլ. Թ. – Այցելութիւն Մարիամայ 158
Տանօթութիւնք Թ. Գլխոյ 169
Գլ. Ժ. – Կուսամայրն 171
Տանօթութիւնք Ժ. Գլխոյ 182
Գլ. ԺԱ. – Մարիամ ի Բեթլեհէմ 183
Տանօթութիւնք ԺԱ. Գլխոյ 203

ԳԼ. ԺԲ. – Տեառն ընդ առաջ, Մաքրութիւն Մարեմայ . 208
Ծանօթութիւնք ԺԲ. Գլխոյ 214
ԳԼ. ԺԳ. – Փախուստ Յեգիպտոս 215
Ծանօթութիւնք ԺԳ. Գլխոյ 228
ԳԼ. ԺԴ. – Դարձ Յեգիպտոսէ 232
Ծանօթութիւնք ԺԴ. Գլխոյ 244
ԳԼ. ԺԵ. – Մարիամ ի ժամանակս քարոզութեանցն Յիսուսի 246
Ծանօթութիւնք ԺԵ. Գլխոյ 266
ԳԼ. ԺԶ. – Մարիամ ի Գողգոթա 269
Ծանօթութիւնք ԺԶ. Գլխոյ 285
ԳԼ. ԺԷ. – Մարեմայ կեանքն յետ յարութեան և համբարձման Աստուածորդւոյն 288
Ծանօթութիւնք ԺԷ. Գլխոյ 314
ԳԼ. ԺԸ. – Ննջումն և թաղումն Աստուածամօր . . . 318
Ծանօթութիւնք. ԺԸ. Գլխոյ 325
ԳԼ. ԻԹ. – Վերափոխումն Տիրամօր 328
ԳԼ. Ի. – Փառք Տիրամօրն յերկինս, և պաշտպանութիւն նորա յերկրի ի վերայ հաւատացելոց . 338
Հերոնիմոսի վիտա ի կուսամայրն մեծ 343

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ա՛րարչական զօրութեամբ տիեզերաց մէջ երևեցած այս հրաշալի կարգս դրուելէն յառաջ, երկիրս անկերպարան և անպատրաստ վիճ մի էր, և ըստ սուրբ Գրոց խաւար թանձրամած պատէր ի վերայ անդնդոց։ Աստուածային ա՛մենակարող զօրութեամբ դրուցուած միակ խօսքով երկիրս յոյս՝ ծագեցաւ անդէն և անդ այն հրաշալի եղական լոյսն՝ որ անեղական լուսոյն գեղեցիկ պատկերն էր. եւեթ զայն Արարիչն և հաճեցաւ և հրամայեաց որ յաւիտեան զատուի և անջատի՝ այն անգոյ և սկզբնաճին խաւարէն։

Սակայն սկզբնական յանցանօք Նախամարդոյն՝ այլ աւելի սոսկալի խաւար մի պատեց զաշխարհս՝ ստուեր յաւիտենական մահու, որոյ մէջ անկեալ դնէին որդիք Ադամայ քառասուն դարերէ ի վեր։ Յանցանաց և մեղաց այս թանձր մթութեան մէջ՝ ամենագութն Աստուած՝ իմացընելու համար մարդկան իրեն մեծաւոր աղաւաւթիւնն՝ նոր լոյս մի երևցուց՝ որուն անճկանօք փափաքէին ի սկզբանէ անտի իրենց անկմանն. և այս լոյսն էր Օրհնեալն և Երանեալն Աբրահամու հայրն Մարիամ՝ որ ի լրման ժամանակաց պիտի ծնանէր աշխարհի

զբանն Աստուած յաւիտենական՝ որ զմեզ ի գլորմանէ պիտի վերականգնէր։ Մարիամ անդէն ի ծնանելն յայտարկի՝ նախիմաց իմաստութեամբ Աստուծոյ՝ յղացեալ անարատաբար զերծ և անմերձ ի սկզբնական մեղաց՝ եւ կանգնեցաւ բոլորովին անբիծ և անարատ յանդիման Աստեղծողին. եւս զնա Աստուած և հաճեցաւ և հրամայեց որ բոլորովին զատուի որոշուի այն երկրորդ խաւարէն մեղաց, որ է ասել հաստատեաց զնա ի չնորհս և արար զնա ամենևին անմեղանչական։

Այս հրաշալի անցքէս ի վեր՝ որ կատարեցաւ ի քառասներորդ դարու ստեղծագործութեան աշխարհի այսինքն յամի 3986, մինչև այս ներկայ տարիս 1885 բոլորեցան տասնևհինն դարեր. և Մարեմայ վարքն և գովեստք՝ իրեն անձին համար խօսած մարգարէութեանն համեմատ՝ ցայսմ հետէ երանեացեալ ինձ ամենայն ազգք, հաղար իննհարիւր տարեաց արձագանքովն հասան մինչև առ մեզ վարդապետաց և Աստուածաբանից անթիւ և անհամար գրուածներովն։ Այնպէս որ ասի երեսուն տարի յառաջ վրանկիացի հռչակաւոր մատենագրին Աւգոստոսի Նիքոլայի վկայութեանն նայելով մինչև իր Աստուածամօր վարքն գրած ատեն (1855ին) քառասուն հազար տեսակէն աւելի գրուածք հրատարակուած էին, դեռ ի նոցանէ շատերն ալ անծանօթ իրեն, և ի սոցանէ մեծագոյն մասն միածալ և քառածալ մեծ հատորներ, և որոց գրողներն աշխարհիս առաջին կարգի նրբահանճար մարդիկն եղած են,

որոց մէջ յիշեմք միայն զսուրբսն Աւգոստինոս, Անսելմոս, Բեռնարդոս, Մեծն Ալբերտ, Յովհաննէս Գերսոն, Պերիւլ, Պոսիւէ, և այլն. և ի մերոց հարց Ս. Խորենացի և Նարեկացի. և վերջերս Զամչեան և Ալեքսեան և այլն։ Վերոյիշեալ վկայութենէն եւս անցած երեսուն տարիներուն մէջ ալ՝ գարճեալ հաղարաւոր նոր գրուածք հրատարակուած են այս նիւթոյս վրայ, և տարուէ տարի՝ մանաւանդ Կուսամօր նուիրեալ Մայիս ամսուն մէջ անվրէպ նոր երկասիրութիւններ երևին տպագրութեամբ։

Այս անբաւ գրուածոց մէջ մեք ընտրեցաք գրեթէ ամենէն համառօտն՝ միանգամայն և կատարեալն՝ զոր Օրսինի քահանայն վրանկերէն լեզուաւ գրած է գարուս առաջին քառորդին մէջ, և առաջին տպագրութեան յիսուն հազար օրինակներն մեկէն սպառելով՝ շատ անգամ կրկնուած է տպագրութիւնն, նոյն ժամանակի երևելի գրագիտաց և աստուածաբանից վկայութեամբքն պանծալի, և յետոյ զանազան լեզուներ ալ թարգմանուած, որոց մէջ մեր ձեռն եղածն իտալերէնն էր՝ բնագրին երկրորդ ճոխացուցեալ տպագրէն թարգմանուած և տրպեալ ի Միլան յամի 1839։ Սակայն բաց աստի ունէաք ի ձեռին նաև քանի մի անուանի մատենագրաց գրուածներն, որք շատ քննութիւնները և ճանաչութիւններով ճոխացուցած են Աստուածամօր վարքն, որոց մէջ գլխաւորներն են՝ նախ վերոյիշեալ Աւգոստոս Նիքոլայ հըռչակաւոր փաստաբանին գրած Աստուածածնի վարքն երեք հատոր. — Ճենթիլուչչի քահա-

նային գրածն մի ստուար հատոր նուիրեալ առ բարեյիշատակ Գահանայապետն Պիոս Թ. — Թրոմպելլի՝ որ անուանի է իր մանրախոյզ քննութեանցն համար. — Սուրբն Ալֆոնսոս Լիկուորի, Սեների, վենթուրայ, Պալլերինի, Հուրթերի և այլն: — Մեծապէս օգտուեցաք նաև մեր հոգելոյս Ջամչեան և Ալգերեան վարդապետաց երկասիրութիւններէն, հայկական աւանդութիւններն ալ աւելցընելու համար գործոյս վերայ՝ իւրաքանչիւր գլխոց ծանօթութեանց մէջ:

Իսկ այս փոքրիկ աշխատութեանս վախճանն ուրիշ բան չէ՝ բայց եթէ նախ յայտնել որդիական սէրս առ Տիրամայրն, և երկրորդ կերպիւ իւիք ձեռնտու լինել և այլոց իրենց սէրն յարգութիւնն և բարեպաշտութիւնն աւելցընելու առ Մայրն ամենագութ և ամենասիրելի՝ որ գանճապահ է աստուածային չնորհաց, և յորոյ ձեռաց ալիտի ընդունիմք ինչ օգնութիւն և նպաստ որ հարկաւոր է մեզ՝ ոչ միայն ներկայ կենաց մէջ, այլ և վաստկելու համար յաւիտենական երանութիւնն 'ի յերկինս: — Ընդունելի սիրելի է Տիրամօր նուէրս. ապա անտարակոյս եմ՝ որ նուէրն ընդունած ժամանակ՝ ոչ մերժէ զնուիրաբերս

Հ. Ա. Գ.

Ի Հռոմ, 1885 'ի տօնի Աշխատաց Կոչման.

ԱՒ ԿՈՒՍԱՄԱՅՐՆ

ՊԱՂԱՏԱՆՔ ՍՐՏԻ ՋՂՋԱՅԵԼՈՑ.

Կոյս հրաշագեղ արփիազգեաց երկնաճեմ
Աստեղազարդ թագուհ պճնեալ բազմահոյլ
Ամբաստան հաճոյ վեհի արփւոյն վերնական
Ջ' 'ի քեզ աքօղեաց ճառագայթիցն ընչաղուլ·
Սիրայօրդոյ խօսել կամիմ՝ այլ չգիտեմ
Սկիզբն առնել թէ ոչ մատչիս յօգնական·
Եւ որ տարփամբք կալաս 'ի քեզ օթևան·

Կոյս հեշտալուր որ սիրով — Ջհայցուածս լսես հաւատով·
Եթէ գքեզ մինչ 'ի գութ չարժեն վիշաք մարդկան՝
Պաղատանացս լեր աղաչեմ ունկնդիր,
Թեզպէս ես հող՝ իսկ դու գլխոյ ես երկնից
Ի գժուարին մարտ եղկելոյս մերձ մատիր:

Կոյս խնամառն 'ի համարոյն գեղապարգ
Երանելեաց և գգաստից կուսանաց
Նա՛ առաջին պայծառափայլ 'ի լապտեր
Ո՛վ աննկուն վահան ազգի թշուառաց
Մահու բաղձին 'ի հարուածոց մեզ ասպար
Որով ապրիմք այլ և յաղթեմք անվհեր·
Ցայրատ բոցոյն բորբոքելոց յօդաբեր

Պանդոյր սիրով մահացուաց· — Աղէ զաչացդ հայեցուած
Որ տրամադին դառն գերաչխալս կարեկիր
Տեսեր գողորիկ յանդամս սիրուն քո որդւոյդ՝
Դարձո՛ այժմէն 'ի խիճալին իմ պայման
Որ վարանեալ առ քեզ գիմեմ 'ի խորհուրդ:

Կոյս հրաշալիառ յաւէժակաց անսասան,
Մըրրկածուփ ծովուս ասաղիկ լուսալոյս
Աներկեան դու նաւուղղին ուղեցոյց,
Տես թէ քան՝ ի կոհակս ու ի ծուխըս ծփեալ
Անօգնական անոք անղեակ կամ տատան.
Եւ թէպէտ մերձ հասեալ յեղին ճիչ անկոյս,
Այլ տակաւին քեզ աչն ունիմ անբիծ կոյս.
Գիտեմ լինձէն ես ըղմեղս — Այլ աղերսեմ կոյս առ քեզ·
Մի խնդայցէ ժանտն ի կորուստ իմ հոգւոյս.
Յիշեա զի մեզք խակ մեր զԱտուած շարժեցին
Ի կուսական ի քոյմ յանխորհ արգանդէ
Մարմին ղգենուլ ի փրկութիւն մահացուին:

Կոյս քանի՞ն հեղի ես դառն արտասուս
Յուսահատիւր քանիցս զուր ես յաղերս
Կողկողեցայ՝ լինձ ի հարուածս և յաղէտ
Յորմէ հետէ ծընայ ԻԱտնոյ ես յեղերս.
Հայ յայս հայ յայն առեալ դեղերս ի յափուն,
Եւ կեանքս անցին ի վիշաս ի հոգս զըրահետ:
Գեղ վաղանցիկ, դընացք, բարբառ ետ ընդ ետ
Ջհոգիս ողջոյն դերեցին.— կոյս սուրբ չքնաղ տիրածին,
փութա՛ ճեպեա՛ թեւիս յամաց իցեմ կէտ.
Աւուրքըս չոյտ քան ըղկայծակըն սրացան՝
Ընդ աղետից և մեղանաց ընդ դուալարս
Անհետ ու անդարձ, օրհաս մընայ լինձ միայն:

Կոյս ահա նա որ ետ սրտիս վերս հասոյր
Լուծաւ ի հող, որ կենդանեաւ լինքն անդէտ
Վշտացս լոյց՝ յողբս համակեաց զիս յանբաւ,
Որ թէ գիտակ խակ դոյր՝ վախճանն էր հանդէտ.
Զի անպատեհ գընալ ըղհետ կամաց իւր
Ինձ մահ անչուշտ, ու անուան նորին կեղտ համբաւ:
Օ՛ն Դիցուհիդ երկնից գէխոյ մեր քնաւ
Թէ ներհոսիլ ասել ղայդ — Ըղքէն կուսանդ դերազարէ;
Դու փարատեա՛ ըղվիշտս յինէն և ըղցաւ,
Որ և զհամայնըս տեսանես և կարես
Ցիս բարձրասցի պատիւդ և քո փրկեցայց,
Զի անհնարքն պղտից հեշտինք են առ քեզ:

Կոյս մաքրափայլ բոլոր մասամբք անթերի
Զքնաղագեղ ծնիցելոյդ դուստր և մայր՝
Ատեաց կենաց դու լոյս և զարդ ազգդ այդ,
Ո՛վ լուսանցոյց երկնից բարձանց վեհավայր.
Քեզ քո Որդին Հօր ծոցածին եթերի
Ի վախճան աւուրց եկեալ մեզ ի յայդ
Ի բովանդակ հողանիւթեայ յէակաց
Դու ընտրեցար միայնակ — Սիրամայր կոյս երանեակ
Որ զեշտալի ողբս զարձուցեր հրճուանաց.
Երանուիդ ի վառս յաւերժ անտրտում
Այս կարողդ և դիս ընդհայն արժանի
Պատակազդեացդ յարքայութեան ի վերնում:

Կոյս սրբուհի լի չընորհօք բազմաբեր
Որ խակասէս խոնարհութեամբ զերազանց
Եղեր յերկինս՝ ուսոի լսես զիս լալիս,
Դու խակ ծնար զաղբիւրն համայն զթութեանց
Եւ զԱրեգական արեգակութեան լուսատիւս
Որ ըղմայդ ցրուէ վհատս աշխարհիս.
Երահիւսեակ քաղցրիկ անուամբք յորջորջիս
Ի Հարս ի Դուստր և ի Մայր — Կոյս դու ի վառս զերածայր,
Ազբայուհիդ այնմ որ զմեղայց լոյծ սարիս
Ածեալ յաշխարհ զազատութիւն երջանիկ,
Նորին ի սուրբ ի վէրս եղեալ խորասոյզ
Ըզսիրտս հանգեա յանդորր ով կոյս զեղեցիկ:

Կոյս յաշխարհի անհամեմատ ու աննման
Որ սրտակաթ զեղումդ զերկինս արարեր
Ում ոչ յատաջ և ոչ երկրորդ ոք բնաւին
Վեհին տաճար դու կենդանի սրբանուէր,
Անբիծ խորհուրդք, զուարթ և զորով անսահման
Ըզկուսութիւնդ արգասաւոր զործեցեն,
Քեզ և իմ կեանքս ի խնդութիւն փոխեցին՝
Քոյ հայցուածովք բարեխնամ — կոյսդ անուշակ Մարիամ.
Զի ուրանօր մեզք՝ անդ և չնորհք յորդեցին:
Ի գուռս հարեալ հոգւով մաջքս ի խոնարհ
Ըզխեղաթիւր զընացս ուղղել աղերսեմ
Եւ ցուցանել մոլորեալս ճանապարհ:

Կույս յոր յենուն ակնկալիք իմ և յույս
Չի՛ կամելդ կարես օգնել ինձ հիքիս,
Մի յիս հայիր այլ որ յօժար կաս եաեղծ
Մի պաղատիմ յեանին՝ ի քայլ թողուր զիս.
Այլ ալ կարկառ ինձ՝ ի խոնարհ անկելոյս,
Ոչ յիմ արժանս այլ՝ ի պատիերն անախեղծ՝
Զոր դեղ պատիր վիմատաեաց յիս և եղծ
Ի սնոտի քերան ապաժոյժ։ — Կույս դու յարտօսր քաղցրանոյշ
Աղբերացո՛ թաղձեալ ըղսիրտս յար՝ ի մեզս.
Չի զեթ վերջինք իմ լեցին սուրբ արտասուք՝
Ոչ հողեղէն՝ ի կաւ հեղեալ զերդ յառաջ
Զորս հոսէի անմիտս՝ ի կիրս զառն՝ ի սուգ։

Կույս մարդասէր բարձրայօնից ահաւոր՝
Համաբնակից ծադմանն զքեզ դուէի չարժեսցէ
Մի ոանհար լինել սրտիս քեզկելոյս.
Չի թէ՝ ի դոյզն մահացու հող յերկրէ
Յայսքան եառնդ ես ցանկացայ տարփաւոր՝
Ո՞հ քանի՞ն զքեզ սիրեցից չքնաղ Կույս
Եթէ երբեք՝ ի պայմանէս վիս յանդոյս
Վերականգնես քո ձեռամբ. — ինձ ձօնեցիր խնդութեամբ
Ըղմիտս և զսիրտ, զերկս վաստակոց հանճարոյս,
Զբարբառ չրթանց, զարտօսր հառաչ անուան քոյլ.
Չ՝ ի հաճոյս քեզ տենչս ընկալեալ զղջական
Տեսցես հասեալ զիս հանդրուանն՝ ի յանքոյթ։

Ահա սրացեալ հասանէ օրն այն յեաին
Ա՛ռ դուրս ժաման, և ժամք թռուցեալ անհետին,
Կույս իմ միակ սպասէն.
Մերթ խայթ մերթ մահ խոցեն ըղսիրտս կարեվէր.
Յանձն արա՛ զիս առ Միածինդ մարդասէր
Մարդ ճչմարիտ և Աստուած՝
Յոր տուրեաառ յեաին չնչոյս ես հանդեպոյց։

(Ի Հռոմ՝ ի 15 Հոկտեմբ 1884).

ՕՐԱՑՈՑՑ ԵՒ ՊԱՏԿԵՐ ՏՕՆԻՑ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱՇՆԻ

	ՀՏՆ.	ԸՍՏ Ն.Տ.		տես յէջ
Յնր.	1	1	Տօն անօրէնութեան Տեառն մե- ծոյ Յիսուսի Քրիստոսի . . .	192
	6	6	Աստուածայայտնութիւն . . .	192
		20	լտ. Երկրպագելի Անուն Յիսուսի. .	192
		23	լտ. Հարանութիւն Մարիամայ . . .	122
փետր.	2	2	Տեառնընդառաջ և Մաքրութիւն Տիրամօր	208
		18	լտ. Մայր դիմած Աստուածածնին . .	
Մարտ	25	25	Աւետումն Ս. Աստուածածնի .	145
			լտ. Վերջին ուրբաթ մեծապահոց Յա- ղագին Աստուածածնին . . .	269
Մայիս.			Ամբողջ ամիսն նուիրեալ կուսա- մօր	
			լտ. Առաջին կիր. Փաղ հովուի Ա- տուածածնին	
		24	լտ. Օգնական քրիստոնէից Աստուա- ծածնին	
Յնս.			լտ. Առաջին կիր. Անբծութիւն Ա- տուածածնի	
		20	լտ. Մխիթար Աստուածածնին (դիւա դօտւոյն)	
			լտ. Վերջին կիր. Օգնական Ա- տուածածնին	
Յլս.		2	լտ. Այցելութիւն Տիրամօրն առ Ե- լիսաբեթ	158
		3	լտ. Խոնարհութիւն Տիրամօրն. . .	
			լտ. Եօթն ցնծութեանց Տիրամօրն .	
		2	հյց. Գլուա տիոց և լաչակի Տիրամօրն.	
		16	լտ. Աստուածածնին Կարմելոս Լերին համ Տօն հանդերձից . . .	
		26	լտ. Ս. Աննայի մօր Աստուածածնի .	45

Հ. Տ. Ն. Տ.			տես էջ
Օգոստ.		5	Լո. Ջիւնաքեր Աստուածածին . . .
	15	15	Վերափոխումն Տիրամօր . . . 328
			Հյ. Զկնէ լննօրէից՝ Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստուածածնի . . . . .
	25		Հյ. Յետ լննօրէից Տօն խակուէյն կարգեալ ՚ի Ս. Լուսաւորչէ .
	20		Հյ. Տօն պատկերին Հոգեայ վանայ հաստատեալ ՚ի Ս. Բարթողիմէոս 297
	31		Հյ. Գիւտ պատուական գօտւոյն . . Լո. Զորրորդ կամ հինգերորդ կիր. Ամենասուրբ սիրտ Մարեմայ.
Սեպտ.			Լո. Առաջին կիր. Շնորհաբաշխ Աստուածածնին . . . . .
	8	8	Ծնունդ կուսին 65
		14	Լո. Անուն Մարեմայ. 68
			Լո. Երրորդ կիր. Եօթն ցաւոց Տիրամօրն . . . . .
	24		Լո. Գերեհան Աստուածածնին . . .
Հոկտ.			Լո. Առաջին կիր. Վարդարանին Տիրամօր . . . . .
			Լո. երկրորդ կիր. Մայրութիւն Աստուածածնի . . . . .
			Լո. Երրորդ կիր. Բարեխրատ Աստուածածնին . . . . .
Նոյ.			Լո. Երրորդ կիր. Պալատան Աստուածածնին.
	21	21	Ընծայումն Աստուածածնի . . 76
Դեկտ.	9	8	Անարատ յղութիւն Աստուածածնի 45
		10	Լո. Տուն Տիրամօր ՚ի Լաւրետոն . .
		18	Լո. Անկասելիւն ծննդեան փրկչին.
	25	25	Ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 171

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

ԿՈՒՍԱՄՈՐՆ

ԳԼՈՒԽ Ա.

Յկնկալուրիւն համօրէն աշխարհի վասն Կուսին և Մեսիային.

Աշխարհիս ստեղծագործութեան մերձաւոր նախնիքն ժամանակաց ՚ի վեր՝ երբ մեր առաջին նախահաբք եգեմայ հովանաւոր ծառոց ներքև՝ ահիւ և դողութեամբ պաշարուած լսէին Ամենակալին որոտաձայն բարբառն՝ որ գառասպարտէր զնրեննք յաքսոր յաշխատութիւն և ՚ի մահ, ՚ի պատիժ իրենց անմիտ անհնազանդութեանն, խորհրդաւոր նախագուշակութիւն մի՝ յորում՝ նշմարէր Աւրարչին գթութիւնն զայրացեալ Աստուծոյ բարկութեան մէջ, մխիթարէր այն երկու տակաւ արարածոց որոմագին սրտերն, որք Աւրհաւիկին նման հպարտութեամբ մեղանչած էին. և խոստանայր որ մին ՚ի գաւերաց Եւայի, կին մի այրասիրտ սլիտի ջախջախէր զգլուխ նենգաւոր օձին ընդ ոտիւք իւրովք, և վերստեղծէր ցյաւերան իրենց մեղաւոր սերունդն. և այս կինս ինքն իսկ էր կուսամայրն Մարիամ [1]:

Այն ժամանակէն ՚ի վեր նախնիքն հեղհեղեան սերնդոց մէջ՝ անշարժ ապահովութիւն մի հաստատուեցաւ՝ որ լուսոյ պէս գեղեցիկ և մաքուր կոյս մի ստուեր-

ծային զաւակ մի ծնանելով պիտի գարմանէր ՚ի կնո-
ջէ յառաջ եկեալ զաղէտն. և այս մխիթարական
աւանդութիւնս որով անկեալ մարդկութեան յոյն
արծարծէր՝ ոչ երբեք ջնջուեցաւ ՚ի մտաց մարդոյ՝
նա և երբ ցիրուցան եղեն Աստուածային դպրոց խու-
ճապմամբն. մանաւանդ թէ ուր աւերուածք որ ցրուե-
ցան՝ իրենց հետ տարին անդր քան զերկիրս և ըղ-
ծովս այս քաղցր և հեռաւոր ակնկալութիւնս: —
Իսկ երբ երթալով նախկին կրօնքն սկսան տկարա-
նալ և հին աւանդութիւնք մթագնիլ, ժամանակաց
եղծման դէմ՝ գրեթէ միայն անեղծ մնաց Կուսին և
Մեսիային աւանդութիւնն, և հին հաւատալեաց ա-
ւերակաց վերայ բարձրացաւ ՚ի միջոց առաստելեաց
բազմաստուածութեան, ինչպէս այն մշտադալար
ծառն որ հնոյն և մեծին Բաբելոնի աւերակաց մէջ
բուսանի [2]:

Եւ յիրաւի եթէ մարդ չոչն ՚ի հիւսիսոյ ցհարաւ
և յարեւմտից մինչև յարեւելս յամենայն կողմանս աշ-
խարհի, և քննէ ազգաց և ազանց կրօնական տարե-
գիրներն և աւանդութիւններն՝ ՚ի բարեխառն գո-
տեաց ուր նոքա բուսանի՝ մինչև յարևակէզ լե-
րինս ուր արևադարձիկ ասացեալ ծաղկին ածի՝ ա-
մենայն ազգաց աստուածածնութեանց խորն գտանէ
զկոյսն խոստացեալ և ըՈրդի նորա աստուածային,
զանազան կերպարանօք բացատրեալ:

Թիպէթի, Ճափոնի և արևելեան Հնդկաց թե-
րակղզւոյն միոյ մասին մէջ՝ տեսանէ Ֆոյ աստուածն
որ զմարդիկ փրկելոյ համար՝ մարմնանայ յարգան-
գի Թագաւորի մի խօսեցեալ աղջկան՝ որ է յաբեր-
ժահատ Լամիկիոբրուշ՝ գերեզկագոյն և սրբագոյնն
՚ի կանայս: — Զինաց մէջ՝ Շինկ-Մու մարգասիրա-
գոյնն յաստուածուհիս ըզաբոյս ծաղկի մի միայն
հպելով յղանայ. և իւր զաւակն ձկնորսի մի հիւղն
անանելով՝ զարգանայ և հրաշս ներգործէ: — Ա-

մայք տեսն թէ Պուտտա հրաչէայ աստուածն ծը-
նեալ է ՚ի կուսէն Մահա-Մահէ: — Սիամու աս-
տուածն Սոմմոնոքոտոմ իշխան և օրէնսգիր՝ ծնեալ
ասի նոյնպէս ՚ի կուսէ յղացելոյ ՚ի Ճառագայթից ա-
րեգական: — Լաո-Ցէօ մարմնանայ յարգանգի խափ-
չիկ օրիորդի՝ յասպիսի պէս գեղեցիկ և զարմանալի:
— Եգիպտացւոց կենդանակամարի Իսիան կոյս է՝
միանգամայն և մայր: — Դրուիդաց Իսիան պիտի ծը-
նանէր ՚ի Հանգերձեալ Փրկիչն [3]: — Պրամինք քուրմք
հնդկաց ուստուցին որ երբ աստուած մի մարմնանայ՝
ծնանի յարգանգի կուսի աստուածային ներգործու-
թեամբ. այսպէս եղեն Ճակրնաթ՝ Հաշմանդամ փըր-
կիչ աշխարհի [4]. և Բրիշնա որ ծնաւ յայրի ուրեք՝
ուր եկին հրեշտակք և հովիւք պաշտել զնա յորոր-
ցին, և երկոցուն մայրն ալ կոյս էին: — Դոկդօ
բաբելընացի տեսանէ յերազի զրուսաւոր գեսպան
Որմզդայ՝ որ աբկանէ առ ոսս նորա փառաւոր զգեստ-
ներ, և երկնային լոյս մի ծագելով յերեսս նորա՝ ա-
րուսեկի պէս գեղեցկանայ, և այս գիշերային տեսլե-
նէ ծագի Զորոաստր կամ Զրադաշտ և կամ լաւ
ևս Իպրահիմ-Զէր-Ադեշտ՝ [5] մոգուց հռչակաւոր
մարգարէն և Զինաս-վէսթա գրոց հեղինակն Քրիս-
տոսէ 600 տարի յառաջ: Բռնաւորն նեբրոտվէ՝ յաս-
տեղագիտաց իմանալով՝ որ ծնանելոց մօտ եղած մա-
նուկ մի իր աստուածնեղն և գահն պիտի կործանէր՝
իր տերութեան սահմանին մէջ եղած ամեն յղի կա-
նայքն ջարդել տայ. սակայն Զրադաշտայ մայրն
Ճարտարութեամբ և խոհեմութեամբ իւր զաւակն
ազատէ [6]: — Մագենիկ ասացեալ ցեղն որ բնակին
՚ի Բարակուա Խարայես լճին եղերքն՝ պատմեն թէ
շատ հին ժամանակ գեղեցիկ կին մի մայր լինելով
հանգերձ կոյս մնացել է, և իւր զաւակն զարմանա-
լի հրաշս առնելէն ետև՝ օր մի յօդս վերացել է իւր
աշակերտաց առջև, և յարև փոխարկել է [7]:

նիցն և վիպասանութիւններէն քաղած են։ Բայց ինչպէս կարելի է այս բանս, որովհետև գիտենք որ առաքեալք ամէն ժողովրդէն ընտրեալը՝ հազիւ թէ իրենց նահակն Տիբերեայ ծովակին վրայ ուղղելու չափ գիտութիւն ունէին, և յառաքելութիւն կոչուած ժամանակ դեռ իրենց ուսմանութենէն կը կաթկթէին ձկներն ջուրերն. ինչպէս կարելի էր որ իրենց քարոզութեանց ժամանակ՝ սախսուած և լինելով աշխատանօք իրենց օրական ապրուստն ձարելու, ժամանակ ունեցած լեցին հնդկաց չինաց և պարսից գրեանքն թղթատելու, և այնոց մէջէն իրենց պէտք եղած առասպելներն հաւաքելու։ Ճըշմարտանմանութեան երեւոյթ մի ունի՞ արդեօք կարծել՝ թէ Սիմոն Պետրոս և որդիքն Զեբեդեայ և Պաւղոս Գամալիէլի եմաստուն և խստակրօն աշակերտն՝ որ Կորնթոսի պէս ճոխ և չքեղ յունական քաղքին քարոզած աուեն գոչէր Ոչ ևղի՛ ի մոխ գիտել ինչ՝ բայց միայն զՅիսուս Քրիստոս և զնոյն՛ի խաչ ևլեալ, գիցաբանական գրութիւններէ առած լեցին այս հատուածներս՝ զնոսա խարդախութեամբ կարկատելու համար Յիսուսի Քրիստոսի այնչափ պարզ և վսեմ կենաց հետ, այն կատարելութենէ զոր ընդունէն իրենց պաշտօնն և առաքելութիւնն էր։ Մանաւանդ որ միայն ասիական գրեանքն քննելն և քաղելն բաւական չէր. վասն զի աշխարհիս միւս մասանց մէջ ալ գտանին այս լուսաւոր կէտերս կատարելութեան խոր խաւարին մէջ՝ որ պատկ կազմեն՛ի գլուխ մարգացելոյն Աստուծոյ։ Ի բաց թողուով զաշխարհն Հնդկաց՝ որ յոյժ անկատար կերպով ծանուցեալ էր Տիբերիոսի ժամանակ, և յախճապակեայ աչառարակօք զարգարեալ Ճենաստանն՝ որոյ հեռաւոր գաւառներն հռոմէական աշխարհակալութեան քաղցն ոչ գրգռէին, ինչպէս կարելի էր առաքելոց՝ հաղորդութիւն ունել ընդ հեռաւորն Ամե-

Եթէ այլայլեալ հաւատոց այս ամենայն ցանուցիւր հետքս մարդ Ժողովէ՝ Կուսին և Քրիստոսի պատմութիւնն գրեթէ ամբողջ կարէ կազմել իւր պարագայիւքն։ Սուրբ կոյս թէ և յարքունական զարմէ՝ սակայն Զրադաշտայ մօրն պէս աննշան և անտոհմ վիճակ մի ունի, նորա պէս երեն ալ հասանէ հրեշտակ մի բանբեր երկնային աւետեաց։ Բանաւորն Եբրովթ՝ որոյ գոյութեան վրայ պատմիչք ոչ միաբանին [8]՝ ղՀերովդէս յիշեցընէ, և որա պէս կամի ըսպանանել զմանուկ մանն, ինչպէս որ Մարիաննայի արիւնարբու այրն՛ի խնդիր է կորուսանել զմանուկն Յիսուս. և սակայն երկուքին ձեռքէն ալ մանկունքն ազատին։ Մեր աստուածային Փրկիչն ալ որպէս ըզ-Պօստատա՛ի կուսէ ծնանելով, սննդացոյց աստուածհաւնային զաւկին պէս՝ ազքատ ժողովրդեան մէջ ապրի. հրեշտակք և հովիւք գան պաշտել զնա՝ իւր ծննդեան գիշերն, որպէս զԲրիշնա. և յետոյ շատ հրաշս գործելէն ետև՝ զմրրիկս գադարեցուցանելով՛ի վերայ ջրոց քայլելով, զդևս հալածելով և ըզմեռեալս յարուցանելով, յաղթական փառօք՛ի յերկինս համբառնայ առաջի հինգհարիւր աշակերտաց, որոց աչքն շլանալով ոչ ևս տեսանէն զնա՛ի միջոյ ամպոց, ճիշդ որպէս պատմեն վայրենիքն Բարակուայի։

Յիրաւ զարմանալի է որ այս հրաշալի վէպերս՝ (որք շատ աւելի հին լինելով քան զաւետարանս՝ ի նոցանէ օրինակուած չէն կարող լինել) այսչափ նըմանութիւն ունիցին Որգէսն Աստուծոյ իրական կենաց հետ։ Կարելի է որ ճշմարտութիւնն ծագի՛ի մշտրութենէ ... ապա զինչ կարեմք ասել այս նըմանչան պատահմանց վերայ։ Մի՛թէ յետին հեթանոս խմաստակաց և մեր դարուս ինքնահաճ խմաստասիրաց կարե՞մք հետևիլ որ ասեն՝ թէ առաքեալք այս ամեն առասպելներս ասիական ժողովրդոց կրօ-

բիկայ՝ որ ’ի հին ցամաքէն բաժանեալ էր Ովկիանոս սի համապարփակ ալէօքն, և գրեթէ կորուսեալ մարգարիտ մի ’ի մէջ անդնդոց։

Բայց ենթադրեմք թէ առաքեալք որ և իցէ միջոցաւ ձեռք ձգած լինին այս հին և մեծին աւանդութիւններս, և իրենց քնածին պարզմտութեան և խոթին սրբութեան հակառակ՝ որք իրենց արեամբն իսկ իրենց վկայութիւնն կնքեցին և հաստատեցին, համարեցուցեք թէ խորհեցան և կամեցան՝ այս առասպելեալ պարագայներէս զոմանս աւետարանական պատմութեան մէջ անցուցանելու, և սակայն ասեմք թէ այս բանս իրենց կարողութենէն վեր էր։ Օրինակի ազագաւ լինչ երեսով կարէին Հերովդեսի ընծայել Պարսից անծանօթ թագաւորի մի անգիտութիւն՝ որոյ վերայ պատմութիւնն անստոյգ լիշատակներ միայն պահած է՝ առասպելեաց ծովու մի մէջ կորուսեալ, և որ թերևս և ոչ իսկ այնպիսի անձ մի և դէպք մի եղած է, և կեղծ ասացեալ անաստուած ցեղի մի ստեղծաբանութիւնն և երևակերպութիւնն հնարած է։ Արդ ինչպէս կարելի էր առաքելոց՝ այս անօրէն գործս սակաւ մի փոփոխութեամբ՝ այսինքն փոխանակ յղեաց զորդիան կոտորեցի՝ Հերովդեսի ընծայել՝ զոր բովանդակ Երուսաղէմ ճանաչէր և որոյ չքեղ և աղեսալից թագաւորութիւնն ծանօթ էր ամենեցուն։ Կարելի բան է կարծելն որ այն նենգաւոր փարիսեցիք որ չանային Քրիստոսի ամեն խօսքն ’ի չարն մեկնել և իրեն դարանները կազմել, պիտի կլնէին այն պարակական հին առասպելն՝ իբրև իրենց ժամանակ հանդիպած. և կամ Հերովդիանոսք լուսութեամբ պիտի համբերէին այն զրպարտանաց՝ նոյն իսկ իրենց աստուածոյ տեղ դրած իշխանի մի [10] արքունեաց գաւթներուն մէջ, այն իշխանին յորմէ այնչափ բարիք և պատիւ տեսած էին։ Մանաւանդ որ միայն այս աղանդաւոր թագաւորութիւնքս չէին եգիպտեցի արքային կողմնակից՝ որ ղինքն արդարացնել պիտի ուզէին, այլ այն ամեն անթիւ բարեկամներն որ Թովել էր աշխարհիս վերայ, և որք պատրաստ էին՝ այնոր սուտ ամբաստանութեամբ անարգեալ պատուոյն և յիշատակին վրէժխնդիր լինելու։ Որովհետև որչափ ալ Հերովդէս կրիւք և բռնութեամբ խռովեալ մարդ մի էր, սակայն և այնպէս դիտեր ինքզինքն սիրելի ընծայել. արիւնռուչ քաղաքագէտ մի էր՝ սակայն և ճարտար, զօրավար քաջ, իշխան առատաձեռն. որ թէպէտ վարքի քնութեամբն և օտարախորթ լինելուն՝ հրեից շատին հաճելի չէր՝ սակայն և այնպէս բարեկամներն ալ շատ էին։ Իսկ արդ անմեղ մանկանց կոտորածն սովորական յանցանք մի չէր՝ որ քաղաքական եղելութեանց մէջ կորսուի և անյայտ լինի. այլ այս անագորոյն գործոյս մէջ՝ յայտնի երևէր անմտութիւնն և բարբարոսութիւն. եթէ իւր արիւնարբու գազանութիւնն իր մտերիմքն Անտոնիոս և Աւգոստոս ներելի համարեցան բայց ոչ նոյնպէս և անմտութիւնն ... Արդ եթէ Հերովդիանոսք չկարացին բողոքել աւետարանի այս պատմութեանս դէմ իբրև ամբաստանութիւն՝ պատճառն այս է որ իրն ստոյգ էր, ծանօթ ամենեցուն և դէպք կարի մօտաւոր ժամանակաց՝ զորս ուրանալ անհնարին էր. և գարձեալ զի Հերուսաղէմ երկու ժամ աւելի հեռի՝ դեռ ևս կենդանի էին մարք մատաղերամ վկայելոյն որ իրենց տղայական հասակի մահուամբ ցուցին զպատիւ ժամանակակից լինելոյ ծննդեան Յիսուսի Քրիստոսի. և գարձեալ եթէ Հերովդիանոսք քրիստոնէից զրուցածն սուտ հանելու որ լինէին՝ ժողովուրդն իրենց դէմ պիտի բողոքէր՝ ասելով թէ ինչն իսկ ականատես եղած էր այն անագորոյն գործոյն։

Նոյն բանն կարեմք ասել նաև վասն կուսութեան Մարեմայ և աստուածային ծննդեանն և վասն այլ

լուԹեան հովուաց 'ի հրեշտակաց յորդորեալ, վասն փառաւորեալ յարուԹեանն և վասն ամենայն սքանչելեաց որ երևեցան 'ի գալսեեանն Քրիստոսի: Վասն զի առաքելոց այս բաներս գրած ժամանակ՝ դեռ կենդանի էին այն անձինքն զորս յիշատակեն. և կեանք Տեառն մերոյ այնչափ կարճ եղև՝ որ հովիւք Բեթլեհեմի՝ որք երկրպագին նմա յորորանան՝ կարէ- լի եր Թէ խօսակից լեալ իցեն ընդ առաքելոց՝ որք վկայք կացեալ էին համբարձման նորա յերկինս: Ա- ռաքեալքն Պետրոս և Յովհաննէս որ Քրիստոսի ժա- մանակ այնչափ երիտասարդ էին՝ համարձակ յանդիմա- նէին զնշխանս Ժողովրդեանն և զքահանայապետս, և զնոսա աստուածասպան համարէին. և այս բանս ցուցանէին սքանչելեօք ծննդեան և կենաց և մա- հուանն Քրիստոսի: Եւ հիմա ևս հրեայք այս ամբաս- տանուԹեամբս գրգռեալք և զայրացեալք՝ սակայն ոչ համարձակին ասել Թէ այս իրք սքանչելիք՝ նենգու- պատիր զորպարուԹիւնք են: Եւ յիրաւի ոչ երբեք ալ ուրացան զայսոսիկ. բայց իրենց խստասրտու- Թիւնն արգարացնելոյ համար՝ համարին զնոսա դիւ- ԹուԹիւնս ուսեալս յեգիպտացւոց:

Ասել հեռւի Թէ առաքեալք ամենևին մանա- կցուԹիւն չունին այն համաձայնուԹեան մէջ որ ե- րևի աւետարանաց պատմածներուն՝ նախկին աղ- գայ առասպելախառն աւանդուԹեանց հետ: Այս ուրեմն ինչպէս բացատրելոյ է այս նմանուԹիւն- ներս. արդեօք դիպաց խաղ և պատահմունք սեպե- լու եմք զնոսա:

Սակայն դէպք և պատահմունք չէ կարող լինել այն հիմնական հաւատքն ասիական աղգաց՝ որով հաւատան աստուածոց մարդեղուԹեանն որ պիտի կատարուի միշտ յամենատուրք յարգանդի կուսի: Նոյնպէս գարձեալ դիպաց արդասիք չէ կարող լի- նել այն զոր համարին հեԹանոսք Թէ կանայքն այ-

նոքիկ առանձնաշնորհեալք որ կրեցին յարդանդի իւրեանց զծագումն աստուածուԹեան՝ լինելոց են միշտ կուսանք անարատք սուրբք և դեղեցիկք, հա- մանմանք իրերաց՝ նախատիպ օրինակի մի յարմար՝ որ հնագոյն ժամանակաց մԹուԹեան մէջ ծածկուած է: Դիպուած և պատահար չէմք կարող համարել այն հաստատուն հաւատքն զոր կալան աղգք զանա- զանք և հեռաւորք յիրերաց՝ Թէ լուսաւոր Ճառա- գայթ մի կարէ միացնել զաստուածային բնուԹիւնն ընդ մարդկային բնուԹեան:

Այս գաղափարներս՝ որոց վերայ երևի նախկին ժա- մանակաց կինքն՝ մինչև աշխարհիս ծագումն հասա- նեն: Ուրեմն ջրհեղեղէն յառաջ եղած նահապետաց շարքն՝ որ երկայնակեաց էին որպէս զմայրիս, ուզե- լով գաղափար մի տալ կանանց մէջ ամենէն աւելի երանելոյն՝ որոյ հրաշալի զաւակն փրկելոց էր զաղգ մարդկան, նկարագրեցին զնա որպէս զԵւա յառաջ քան զանկումն նորին. համարեցան զնա հրաշա- փառ և անարատ դեղեցկուԹեամբ զարդարեալ, որ որգւոց մարդոյ սիրոյն ուրիշ զգացումն չէր կարող ազդել՝ բայց եԹէ կրօնական յարգուԹիւն. ցուցին զնա որպէս պայծառ և սիրուն աստղ՝ քաղցր խոր- հըրդաւոր անարատ և քօղարկեալ լուսով պայծա- ռացած՝ որոյ ծագումն նախընԹաց լինելոց էր արե- գականն արդարուԹեան: Այն միջոցներն՝ զորս 'ի գործ ածէ Աստուած այս կուսական արգանդն բեղմ- նաւորելու՝ հիանալի կերպով համաձայնին այն գա- ղափարաց հետ՝ զորս տեսանեմք աշխարհիս զանա- զան աղգաց աստուածածնուԹեան մէջ: ԵԹէ աչք մի տամք հին կրօնիցն վերայ՝ յամենեսին 'ի նոսա նկա- տեմք հուր իմն սրբազան. իսկ արդ հուրն՝ մոգուց կարծեաքն արեգական երկրաւոր նշանակն էր, և ինքն իսկ արևն ոչ այլ ինչ էր ԵԹէ ոչ օթևան Բար- ձրելոյն, զոր երբայեցիք Աբելի հաւատոցն աւան-

գտպահք և նահապետաց նախկին գաղափարին [11] պահպանիչք՝ Մշտնջենաւոր Աստուծոյ խորանն հաստատէին: Սուրբ Գիրք ասեն՝ Թէ յառաջին ժամանակս աշխարհի Աստուած ընտանեբար խօսակցէր ընդ նահապետաց. բայց որպիսի կերպարանօք երեւէր նոցա՝ մինչդեռ ոչ որ ի մարդկանէ կարէ տեսանել զԱստուած և կեալ: Մովսէս որ խօսէր ընդ նմա դէմ յանդիման և որպէս զբարեկամ՝ ոչ այլ ինչ տեսանէր բայց զմերձակայութիւնն աստուածային ի ձև ամպոյ իջեալ ի վերայ քաւութեանն՝ որ էր ոսկեզէն ծածկոյթ տապանակին, և այս երեւոյթս երբայեցիք կոչէին Շեքինա: Անշուշտ այս կերպով յայտնէր Աստուած զինքն Սեթայ ցեղին՝ մինչ տակաւին չէին տապականեալ: Իսկ երբ այս ընորհս ալ զրկեցան՝ որ Եգեմայ բարեմասնութեանց յետին նշոյլն էր՝ Նոյի սերունդքն արարածոց մէջ ձառագայթակ և մաքուր էակ մի որոնեցին՝ որ Ամենակալին ներկայութեան հետ նմանութիւն մի ունիցի. ուստի և զարեգակն զաստղն զայն մեծ և շքեղ՝ որոյ շլացուցիչ ճառագայթք սոսկալն զաչս մարդոյ յերկիր խոնարհիլ, համարեցան որպէս յարմարագոյն երկրաւոր նշանակ ներկայութեանն Աստուծոյ. և Աստուած ալ իրենց այս գաղափար հաստատեց երեւելով ի բոց հրոյ մրենուոյն ի Փորեբ և ի կաատրս Լերինն Սինայի: Ուստի արեգակն համարեցաւ՝ որպէս աստուեր անսահման լուսոյն, և աստի անշուշտ յառաջ եկին ասիական ազգաց այն կարծիքն Թէ լուսաւոր ճառագայթ մի ածելոյ էր զՓրկիչն ակնկալեալ յարգանդ կուսին՝ որ նորոգելոյ էր զաշխարհս:

Աստուածային պաշտօնն՝ որ կրօնական արարողութեամբք մեր առ Աստուած ունեցած սէրն և երախտագիտութիւնն յայտնէ, աշխարհիս սահմանադրութեան հաւասար հնութիւն ունի, նոյնպէս և

սեղանք և բագինք երիցագոյն են որպէս զպաշտամունս [12]: Անշուշտ անմեղութեան վիճակին մէջ Ադամայ և Եւայի նուիրքն էին միայն պտուղք և ծաղկունք [13]. բայց երբ մեղքն մուծին զմահ ի կեանս մարդոյ, և երբ նախահայրն՝ կենաց ծառոյն սրբազան հովանւոյն հետ ի միասին իւր անմահութեան բժժանքն ալ (հնարքն) կորոյս [14], իւր աքսորանաց երկիրն բուսած վայրի պտղոց և ծաղկանց վերայ աւելցուց իւր ոչխարաց հօտին երախայրիքն, որ ծանր խորհրդածութեան նիւթ լինելով՝ կարժէ որ սակաւ մի բացատրեմք: Անշուշտ Ադամ որ մարմնոյն բարեկազմութեան հետ բանաւոր և վեհ հոգի մի ալ կրէր՝ յորում Աստուած դրած էր ամենայն առաքինութեանց և ծանօթութեանց ընդհանրներն՝ զուրկ չէր կարող լինել նա և ի գթութենէ. իւր յանցաւոր բարեհաճութիւնն առ նա՝ ցուցանէ իւր անչափ սէրն զոր ունէր առ կողակից իւր՝ որ մինչև ի տկարութիւն հասաւ, որով և երևի թէ քաղցրութեան և մեծմտութեան զգացումն ալ ինչ աստիճանի տիրած էր իր սիրտն: Այս ուրեմն ուսալ միտքն անկաւ Թէ Աբրահմն հաճոյ կարէ լինել իւր արարածոյն սպանութիւնն, և ղի նոցա կեանքն բառնալն՝ բարեպաշտութեան գործ մի կարէր համարուիլ:

Անտարակոյս անասնոց զոհն՝ որ մարդուս մտաւորական ըղձից հետ ամենևին յարաբերութիւն չունի՝ ի սկզբան անդ բնական սոսկում մի պիտի պատճառէր իւր սրտին: Վասն զի այս խեղճ անասունք՝ Թէպէտ և զիրկ ի բանէ՝ այլ սիրոյ և գթութեանց ընդունակք, իր Եգեմայ դրախտին մէջ եղած առեն՝ իւր Թագաւորութեան հպատակներն էին. և ինքն նոցա սեղանոյն ճաշակից՝ նոյն բլուրն մարգագետնաց վրայ ի միասին հանդչէր, նոյն առուակէն երկուքն ալ իրենց ծարաւն անցընէին, և արևն մայրն մտած ժամանակ

երբ իւր աղօթքն յերկինս վերառաքէր՝ Թուխուհներն ալ իրեն ձայնակից լինէին՝ իրենց երեկոյեան երգերովը։ Յետոյ երբ իր յանցանաքն աքսորուեցաւ այն երջանիկ դրախտէն՝ անասունք ևս որ իր երջանկութեան մասնակից եղած էին՝ իր թշուառութեան և արտասահմանութեանն այլ բաժանորդ եղեն 13. ոմանք իրենց վայրագ կատաղութեան բնազդմամբն՝ զոր դրախտին մէջ մոռցած էին, անասնատեր ու խորերն և լերանց անձաւներն քաշուեցան, մարդկանց հետ մինչև ցմահ պատերազմելու պատրաստ. իսկ այլք սկսաք անմեղ և սիրուն արարածք՝ իրենց գժբաղդ սիրոջն Թշուառ վիճակին մասնակից լինելով՝ նորա քարայրին մօտերն մակաղեցան՝ իրենց կաթն և փափուկ գղաթն նմա մատակարարելով, նորա աշխատութեանն ձեռնտու և նորա տրտմութեանն միխթար իրենց ձայնակցութեամբն։ Եւ սակայն այս սիրալիր գերեաց գասէն՝ որ անմեղութեամբ նորա իշխանութեան վստահացել և հնազանդել էին՝ սկսակ ընարեր Ադամ իր զղջերն, և վախկոտ ոչխարին վիզն մեղ զսուրն՝ մինչդեռ նա իր սիրոջ ձեռքն քաղցրութեամբ լիզէր։ Ահ որչափ այլայլած պիտի լինի մարդն երբ նախ առաջին անգամ իւր ոսից առջև թաւալած տեսաւ անզէն և անպատսպար կենդանի արարած մի՝ որ հոդեվարի մահագոյժ ցնցմամբ գետըր և գալարէր։ Բայց այս մտածութիւնն իւրն չէր, և ոչ ալ իւր կողմանէ կամաւոր ընարութեան գործ մի. այլ մանաւանդ վըշտամբեր հնազանդութենէ սուսկեալ գործ մի՝ անկատար կերպով քաւելու համար այն մեղաց յանցանքն՝ որ արիւն պահանջէր։ Ո՞վ էր ուրեմն այս բանս հրամայողն. բայց եթէ Աստուած որ կենաց և մահու քացարձակ տէրն է։

Նախամարդն աստուածային պատուիրանն անարգելուն պէս՝ Աստուած կարող էր զինքն անմիջապէս

ոչնչէ գարձնել և իր հետքն անգամ երկրիս վրայէն ջնջել՝ զոր իւր յանցանաքն պղծած էր։ Սակայն ամենակալն չուզեց այս բանս, ի գուբթ չարժեցաւ այն սղոցմանլի ապստամբին վերայ, և զվճիռ մահու որոշ արժանի եղել էին իրենց ապստամբութեամբն, ի տարագրութիւն փոխարկելով՝ նոյն վայրկենէն իւր անբաւ ողորմութեամբն բացաւ նոցա առջև անմահութեան նոր և փառաւոր ակնկալութիւն մի։ Ըստ սրբոյն Բեռնարդոսի այս անճառելի շնորհս՝ զոր Քրիստոս պիտի կնքեր իւր արեամբն, ի վերայ խաչին, ի պատիւ Մարիամու արուեցաւ, և այս անարատ և սուրբ կոյս յոչնչութենէ ազատելու համար՝ նայեց Բարձրեալն Յեսայի մեղապարտ և ի բովանդակ սերունդ նորա։ Թերպէտ և մեզ չափազանց երևի այս բարեպաշտ կարծիքս և չուզեմք ալ զոյն ընդունիլ՝ սակայն ոչ տարակուսիմք հաւատալով՝ որ երբ Յակոբենականն ի կշիռ գրաւ մարգկանց ճակատագիրն ընդ արեան Որգւոյն իւրոյ միածնի՝ արգիւնք և առաքինութիւնք Մարիամու որ օր մի թագուհի լինելոց էր հրեշտակաց և մխիթար տրտմեցելոց, աստուածային կշռոց մահագոյժ մեռն ի կողմն ողորմութեան դարձուցին։ Եւ այն տեղին խորհրդաւոր գուշակութիւն մի յայտնեց՝ թէ ժամանակաւ մարգելի մի պիտի ծնանէր ի կնոջէ՝ որ զմեզս աշխարհի պիտի փրկանաւորէր իւր անպարտական մահուամբն վասն ամենեցուն մեռանելով։ Եւ այս յայտնութիւնս՝ ըստ հրէական աւանդութեան, հրեշտակ ամենակալն կըրկին հաստատեց առ մայրն Աբելի և Սեթայ։

Այնուհետև այս գուշակութիւնս որ մարգկանց փըրկութիւն խոստանայր՝ հարկ էր անջնջելի տառիւք տպաւորիլ նոցա միտքն. բայց Արարիչն ճանաչելով մարդկային մտաց անհաստատութիւնն, և թէ ինչպէս կերբ որ են մըրիկք հոգւոյն՝ պիտի ջնջէին նորա սըրտէն աստուածային ապառնալեաց աւետեաց յիշա-

ատակքն՝ այնպէս գիւրաւ որպէս ջնջին հեաք նաւու
՝ի ծով հղմամոծ, այնոր համար Փրկչին խոստումն
ուղեց կապել սարսափելի տեսարանի մի հետ, այն-
պիսի տեսարան որ խորին ազդեցութիւն մի ունիցի
մարդկային բնութեան անհատատ և մուսացկոտ մի-
տաց վերայ: Այս բանիս համար ահա հատատեց
զոհերն և այնոր հետ միացեալ կրօնական արարողու-
թիւններն՝ որ են միանգամայն յուշարարք, քաւչա-
կանք և նշանականք:

Երբոր մարդկութեան մեծ դերդաստանն՝ զոր Աս-
տուած պահել էր աշխարհս նորին բազմացնելու հա-
մար, բոլոր երկրիս երեսն ցրուեցաւ, իւրաքանչիւր
գալթական իր հետն առեալ տարաբ համայնապինդ
նաւակոծութենէ զերծեալ փրկութեանց և արուես-
տից միացորդաց հետ՝ աստուածային պաշտօնն ալ՝ զոր
Ենովք և Նահապետք հատատեալ էին, և հիմնեց զը-
նոսին այն անարօր երկիրներուն մէջ՝ ուր որ իր վը-
րանները կանգնէր [16]. և Նոյ Աստուծոյ եռան-
գութն պաշտօնեայն այնոց վերայ աւելցուց այն պատ-
մական և կրօնական աւանդութիւնները՝ զորս յառաջ
քան զջնջհղեղն իւր երկայնակեաց տարեքն գիւ-
րաւ կարացել էր հաւաքել իւր հարց և նախահարց
խօսքերէն: Ինքն ծանոյց իւր սերնդոյն մարդուս ՝ի
հողոյ ստեղծուիլն, ապստամբութիւնն և անկումն, և
հանգերձեալ կանգնումն՝ որոյ համար երախատ-
պարտ լինելոյ էին նոր Եւայի մի հրաշալի ծննդեանն.
ինքն ուսոյց նոցա որ արիւնաթափուղս զոհերն տեսած
աստեղին՝ որ անկարող էին իրենց նախահարց յան-
ցանքն քաւել, աչուընին վերցնեն գերազանց զոհի
մի որնատի ընդ աջմէ Բարձրելոյն աստեղազարդ երկ-
նից կամարն, այն զոհին որուսմ տուսեր և նշանակ
էին մատուցեալ զուարթակեն և ոչխարք, և որ միայն
կարող էր յաղթել մահու և աւերել զդժոխս:

Այս նախկին ծանօթութիւններս ՝ի սկզբան հա-

տատարմութեամբ պահեցին ազգք և ազինք, որ և
գտանին ամենայն կրօնից մէջ [17]: Ոտսկ կանգնեցին
սեղանս և բագինս յափուսնս գետոց, յանտառս հո-
վանաւորս, ՝ի ծագս լերանց և յեղերս կանաչագեղն
Ովկիանուս և յատազակոյտ բլուրս՝ ուր օշինդրն գտա-
նահամ սպարզէ զտերևս իւր ՝ի խորչակ անապատին:
Ի սկզբան քօղազարդ լոյս լուսնակին և եթ լուսաւո-
րեր այն գեղջկական տաճարներն՝ որոց տահմանն հո-
րիզոնն էր և կամար երկինքն աստեղազարդ: Այն հե-
ռաւոր ժամանակաց մարդիկ այնպիսի արժանաւոր
պաշտօն մատուցանէին Աստուծոյ, և այնպիսի ու-
ղիղ վեմ միօրինակ և պարզ մտօք՝ որ անտարակոյս
մինչև առ ինքն եղեալ հասանէին:

Սակայն սակաւ տարիներ յառաջ հանդիպած
սարսափելի աղետից յիշատակ մի՝ որով բոլոր աշ-
խարհ համայնապինդ ջրհեղեղով ծածկել էր կուլ
տալով բոլոր մարդկան ազգն՝ աւելորդապաշտ վախով
մի ամենուն սիրան դողացնէր, և նախկին ժամանա-
կաց [18] զուարթագին տօնախմբութենց վերայ մահա-
ռիթ քօղ մի տարածէր: Եւ տեսնելով այն բարձրա-
բերձ աշտարակաց [19] լուռ աւերակներն՝ որ չէին կա-
րացել ջնջեալ ցեղից հսկայներն այն նաւաբեկու-
թենէ ազատել, և միանգամայն լերանց ձիւնապատ
գագաթանց վերայ նշմարելով Ովկիանոսի հեաքն մին-
չև ցբարձրութիւն բուռնոց արծուեաց, դող և սար-
սուռ մի եկն մարդուս վերայ, և զայրացեալ Աս-
տուծոյ վրէժխնդրութիւնն զինքն սասանեցուց. և ինքն
իր վերայ դառնալով՝ տեսաւ ինքզինք որպէս և էր
իսկ՝ հիւծէ մի առ յաւիտենականին, և վհատութեամբ
հարցանէր թէ արդեօք կարելի՞ էր որ իւր աղօթքն և
իղձք հասանէին մինչև յաթոռ հինաւուրց թագա-
ւորին, որովհետև ինքն այնչափ անարգ և Աստուած
այնչափ բարձր էր: Եւ ահ հարցմանս հատատատական
պատասխան մի ոչ կարելով տալ՝ համարեցաւ թէ

հղօր միջնորդի մի կարօտ էր՝ որոյ ձեռքովն կարասցէ իւր պէտքն յայտնել և իւր երախտագիտութիւնն ցուցանել: Այս միջնորդութեանս համար ընտրեց երկնից աստղերն՝ որոց վերայ հետացած նայէր իւր անքուն գիշերներն, և կարծէր թէ երկնային հոգիք էին որ զնոսա կառավարէին: Այս է ահա սքէսութեան կամ աստեղագիտութեան և մոգութեան ծագումն՝ որ յետոյ դիցապաշտութեան վոխուեցաւ:

Ժամանակ անցնելով՝ խաւարն աւելի թանձրացաւ, և կրօնից վերայ զանազան արարողութիւնք յաւելան, և Աշմարաին Աստուծոյ պաշտօնն հետ զհետէ աստեղաց և տարերաց պաշտամանն հետ խառնուեցաւ. սրբագիր նշանագրաց գիւտն ալ խառնակութիւնն'ի ծայրն հասուց, և հաւատալեաց կործանմանն Ճողոպրած սակաւ Աշմարաութիւնք՝ մեհենից խորերն թաղուած ճեացին խորհրդաւոր լռութեան մէջ, որպէս գերեզմանական լապտեր մի որ զմեռեալս ևեթ լուսաւորէ. և քուրմք մեհենից այնոցիկ ամենայն ղգուշութեամբ ծածկեցին զնոսա յաջաց ամբոխին [20], և Թողին որ ռամիկն պաշտօն մատուցանէ անմիտ երկրպագութեամբ վագերց և առիւծուց և սիսեռանց և մինչև անգամ բուսոց և անկոց, նա և իւր կիրքն և ախտն աստուածացնելով: Ոչն աւելն էր որ նենգագործք ոմանք՝ մարդկային գիւտբահաւանութիւնն իրենց շահուն գործածելով՝ աւելի և աւելի թեցին և կամաւորապէս խզեցին նահապետական աւանդութեանց արդէն բզդզեալ թելն, և յանգգնաբար ապագայ ակնկալութիւնն անցելոց յիշատակութիւն և արդէն կատարուած համարելով՝ Թանին մարմնաւորութեան աքան չելիքն և նորա վսեմ և ալէտալի մահուան սկզբնագիր յիշատակարանն՝ սուտ և առասպելաբար աստուածոց վերայ յարմարցուցին: Ըստ մեզ այս կերպով բացատրելի են այն նմանութիւնքն՝ որ զաղանիներն անիմանալի երևին մեզ և անբացատրելի:

Սակայն և այնպէս ոչ եթէ ամենայն ազգք բազմաստուածեանք արդէն կատարուած համարէին Մեսիային խորհրդաւոր անցքն. ինչպէս գրուիգք կամ քուրմք կելտաց՝ քրիստոսական գարէն սակաւ մի յառաջ Գալլիոյ (նախկին Փռանկիոյ) մուրթ անտառաց մէջ կանգնէին զքագին (Virgini parituræ) կուսի որ ծնանելոցն էր: Սինեգացիք (չինք) Կոնֆուկիոսի հրահանգաց հետևելով՝ որ հին աւանդութեանց մէջ գտած էր այս պատգամն՝ սպասէին Արդոյն որ լուսաւորելոց էր զարևմտեան կողմանս Ասիոյ, և Մարգացելոյն Աստուծոյ մահուանէն կէս գարու չափ յառաջ հանգիստաւոր գեսպանութիւն մի յղէին՝ զնա որոնելու համար: Եւ մոգք Զրադաշտայ խօսիցն հաւատալով՝ համաստեղութիւնն զննէին՝ Յակոբայ աստղն գտնելու համար, որ իրենց առաջնորդէր ալիս յորրանս Քրիստոսի [21]: Պրահմինք հնգկաց հաւաքանօք սպասէին փառաւորեալ Ավատարի [22] այս ինքն մարգելութեան այնմ՝ որ մարդկոյցն էր գայիսարհրս'ի վերայ բազնաց նորին գոհար ակունս և բռնալիր ուհան հոտաւէտ՝ որ սիրելին էր հնգիկ չաստուծոյն: Գուռոզ որդիք Հռոմուլոսի որ այնչափ լեգենոս գից հնարած էին և Կումէայ սիբիլլային ի մատեանն երկիւղածութեամբ պահէին՝ որ Աբրլէսկ և Հեկատոբէ ժամանակակից էր, ընթեռնուին'ի նոսա վասն կոչնի և ևանկանն աստուածայնոյ, զերկրպագութիւն հովուաց և զօձն ջախջախեալ, և գդարն ոսկի նորոգեալ յաշխարհին: Վերջապէս Մեսիայի գալստեան մօտ ամենայն ազգք արևելից մեծաւ ակնկալութեամբ սպասէին հանգերձելոյ Փրկչին, զոր Պուլանժէ յետ ցուցանելոյ թէ որչափ հանրական էր այս յոյսն՝ անխորհրդաբար սիեղերական ցնորս կարծէ, Թեպէտ

և մեռնելու ժամանակ խելքն գլուխն եկած [23] համարի [25]։

Այսպէս Աստուած թողուց որ աղքք և աղինք գիւցակրօնք նոյն իսկ իրենց ցոփութեան մէջ՝ այս հաւատքս պահեն, որ ղիրենք մեղրութեանց բաղձն հանելու մի միայն թեղն էր. նաև սոխպեց ղՀայրն խաբէութեան գրելու սիրելյին ձեռաք ծառի տերևոյն վրայ զանունն Մարիամու [24], որպէս զի բանին մարմնաւորութիւնն ակնկալութեան նիւթ լեցի ամենեցուն. և սակայն ոչ չափ նուաղ և մութ էր այս պղպղացող կայծս այն թանձր խաւարին մէջ, համեմատութեամբ այն լուսաւոր հեղեղին որ լուսաւորեր զորդիս Աբրահամու։ Ո՛վ ոչ զարմանայ այն չղթայաշար մարգարէութեանց վրայ որ աշխարհիս սկիզբէն սկսեալ հասանէ մինչև ցգերեզմանն Քրիստոսի [25]։

Ինչպէս որ ասացաք Մեսիայի նկատմամբ առաջին պատգամն՝ Աստուծոյ դժոխային օձին տուած ըստ պատուհասիքն է, որ ցուցանէ ոչ միայն Որդւոյն փառաւոր զօրութիւնն այլ և Մօր նորա գերմարդկային քաջութիւնն և գերազանց առաքինութիւններն։ Նա որ պիտի ծնանի ի կնոջէ՝ պիտի ձգմէ քոյ գլուխդ, ասաց Յաւիտենականն, և այս խորհրդական խօսքերս այլ աւելի բացայայտ կերպով Դրախտէն արտաքսելոյ [26], և զոր Նոյ ալ աւանդեց Սեմայ՝ որ Ժառանգ կարգեալ էր հաւատոց, և Սեմ որ իր նահապարց չափ երկայն ապրեցաւ՝ անշուշտ աւանդեց զայն Աբրահամու որ հայր էր հաւատացելոց։ Եւ ստրա ժամանակն էր որ խորհրդաւոր օրհնութիւն մի՝ յորում բովանդակեր և խոստումն Մեսիային, ծանոյց որ այն Եւայի խոստացեալ օրհնեալ բարեբանակն՝ պիտի լինէր միանգամայն բարեբանակ և շառաւիղ Աբրահամու։ Այս նախկին աւանդութեանց անմիջապէս յաջորդէ Յակոբայ հոչակաւոր նախագու-

չակութիւնն՝ որ մեռնելու մտ աբանելով հոգւոյն աչջք երկոտասան ցեղից վիճակն Պաղեստինի մտած առեներին, իր մահուան անկողնոյն բոլորն ժողովեալ օրգոյն ծանուցանէ՝ թէ ի միջոյ ամենայն եղբարց Յուդայ ընտրուած էր լինել Իսրայէլի թագաւորաց աղգատոհմն, և սահմանեալ լինել հայր խոստացեալ Շիլոհի ։ որ լինելոց էր թագաւոր թագաւորաց և տէր տերանց։ Այս գուշակութեանս մէջ Քրիստոսի գալստեան ժամանակն իսկ ճշդիւ նշանակուած է, այսինքն Նահապետամ պիտի ծագէ ի միջոյ աւերակաց հայրենեացն՝ երբ գաւազանն իշխանութեան (ըստ եբրայեցւոց չիպկր) օտարի ձեռք անցնի [27]։

Մովսէս ի ջրասոյզ մահուանէ փրկեալ մարգարէն՝ որ յաստուածակոյս կոչմանէ կոչեցաւ հաւատքելոյ և ի գիր անցընելոյ առաջին գարուց պատմութիւնն և մարգկային ազգի նախկին աւանդութիւնն՝ որոց յիշատակն գեռ անմոռաց էր ազգաց մէջ, ինքն ալ մեծապէս հաստատեց իւր ծանր վկայութեամբն Յակոբայ մարգարէութիւնն ասելով առ ժողովուրդն Աստուծոյ. « Մարգարէ յարուսցէ ձեզ տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք. և եղիցի եթէ ոք ոչ լուիցէ ձայնի մարգարէին՝ սատակեսցի անձն այն յԻսրայէլէ [28] »։

Եւ յիրաւի ժողովարանն հրեից մինչ Մեսիայի համար զուսցուած համարեցաւ այս յայտնի խօսքս. և փիլիպպոս առանց տարակուսելու աստուածային փրկչին մերոյ տայ գնոսին ասելով առ Նաթանայէլ. « Զորմէ գրեաց Մովսէս յօրէնն և մարգարէքն՝ գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ի Նազարէթէ »։

Երբ Մովսէսի պաշտօնն աւարտելու մտ էր, և Իսրայէլ գեռ անապատին մէջ ի վրանս բնակէր՝ Մովսէսի թագաւորն կաշառքով ուզէց որսալ զԲաղամ որ գայ և Ուռենեաց հովիտներէն [29] զերբենք անիծէ։ Եկն մարգարէն՝ բայց փոխանակ անիծանե-

լոյ՝ ինքն ալ Մեսիայի գալստեան ակնկալութիւնն զօրացուց ; Հիւդ և որիշ կերպով նորա երևելուն ժամանակն ալ հաստատելով։ Կեցաւ կանգուն փեդուրայ քարաժայռին գագաթն՝ մինչդեռ իւր բոլորտիքն առելութեան զոհերն կատարուէին, և տեսնելով անիծեալ լեռն (Մեռեալ ծովն) և Աբրահիմ ապաւէր ինքնին՝ եփրատայ ափունքէն եկած գիւղն առուածային հոգւով սարսեցաւ, և երակատես աչօք [30] զարմանալի տեսիլք մի տեսանէր։ Իր հասկնալ շնորհով և վսեմական ծանրութեամբ զրուցած կարուկ անկանոն և անարուեստ խօսքերէն՝ յայտնի երևէր որ քան զինքն շատ աւելի զօրաւորագոյն և աներևոյթ իշխանութեան մի առջև կեցած էր, և յաճախուն խոնարհութեամբ այս խորհրդաւոր խօսքերս զրուցէր որ ըստ հօթանանից սակաւ մի տարբերի յերբայականէն Դ. Էս սիրոի տեսնեմ զինքն... բայց ոչ հիմա։ Կիատեմ սիրոի զինքն... բայց ոչ այժմ։ Աստղ մի սիրոի ժագի 'ի Յակոբայ... շառաւիղ մի սիրոի բռնանի յիսրայէլ, և սիրոի տիրե 'ի վերայ ազգաց բազմաց։ Այս կցկտուր խօսքերուն փառահեղ բայց միանգամ տխրագին տեսիլ մի կը յայտնուէր՝ աշխարհակալ ազգի մի յաղթութիւններն. և հռոմէական հսկայազօր իշխանութիւնն կը նկարուէր այն մարդասիրութեան մէջ լրին ամենէն բարձր կէտն հասած երևելով. և ահա այն ժամանակն է որ Քրիստոս պիտի լինէ յերկիր և նուիրէ զինքն 'ի վերայ փայտին պատուհասի և անարգութեան։ Այս արհնահեղգ գարս աշխոյժ և արագ կերպով գծագրէ մարգարէն. և կարծես թէ դեռ չծնած քաղաքներ և պետութիւններն կանգուն տեսանէ անապատին վերայ երբև 'ի հայելւոյ։ Նշմարէ կայսերաց նաւատորմիղն որ Իտալիոյ նաւահանգստին մէկնելով և երկնց յաղթութեամբ քաջալերեալ ցնծագնաց զալիս ծովուն պատռեալ՝ հասանէն Ասորւոց դաշտերուն եզերքն։ Տե-

սանէ այն Հրէաստանի կործանումն և աւերակներն որ դեռ չկայ և շատ տարիներէ ետև Հրէաստան պիտի կոչուի, և ուր Աստուծոյ ժողովուրդն նոյն տեղն ուրիշ սեպհական տացուածք չունէր՝ բայց եթէ իր նախահարց քանի մի գերեզմաններն։ Վերջապէս իր սրտոտ աչուըներովն նշմարէ հռոմէական արծիւներու անկումն՝ երբ դեռ հռոմէական ժողովուրդ կոչուածն չկար երկրիս վերայ, Իլիոնի որդւոյ ծնանելէն եօթնհարիւր տարի յառաջ, երբ այնք վայրիք Լատինն՝ տակաւին հանգիստ սրածէին եօթն բլրոց անտառախիտ եմակաց գարափանց վերայ։

Այսոր վերայ շատ դարեր անցանեն՝ և նոր աւետիք կամ խոստումմի ոչ լսի Աստուծոյ կողմանէ. բայց Մեսիայի նկատմամբ եղած պատգամներն աւանդութեամբ յազգէ յազգ շարունակեն հաւատարիմ պահպանութեամբ, և կամ աստուածատուր օրինաց մէջ արձանագրին։ Իսրայէլի ազգն անյայտ բայց միանգամայն անգադար և կամակոր կառուով մի՝ իւր բոլորն եղած և զինքն նեղող կառապետ ազգաց հետ պատերազմի. իսկ երբոր տեղիք տայ իր խստապարանոց հակամիտութեան որ զինքն 'ի գերապաշտութիւն մղէ՝ այն ատեն ամովքացուց և մոլաբացուց մահաբեր սուրն մերկանայ՝ առանց երեսց ուշադրելոն պաշտպան կանգնելու Աստուծոյ գաղին, և Յակոբայ սիրոյն եղած նախատանաց վրէժն խնդրելու։ Բայց այս յողդողդ վիճակիս մէջ ալ ժողովուրդն ոչ մոռանայ զգալուստ Օծեալին, և Մեսիայի հաւատումն ապրի, և փոխանակ նորանոր յայտնութեանց՝ իւր իսկ կեանքն մարգարէական կերպարանք մի առնուն. իւր քաղաքական և կրօնական սահմանադրութիւններն, տեղական սովորութիւններն և առանձնական կենցաղն բոլորովին նոյն վախճանին գիմեն և 'ի նոյն ազբերէ յառաջ գան, և ամենայն ինչ զգաւորի Յուդայի ցեղէ կօսէ մի ծնանելու փրկչին ծննդեան հետ։ Մեսիա-

յի ակնկալութիւնէն յառաջ եկած է Երկրորդ օրինաց այն օրէնքն ալ՝ որ հրամայէ անզաւակ մեռնողներուն ժառանգ մի յարուցանելոյ՝ նորա կինն առնելով. որպէս զի վախճանելոյն անունն Իսրայէլի մէջ մշանջենաւորէ, և նովաւ օր մի մօտէն կամ հեռուէն ազգական համարուի երկնային Աստուածն: Եւ ահա այս 'ի դերև եղած յուսոյն վրայ է որ ողբայ Գալատացոց էքնազագեղ կոյսն (գուսանն Յեփթայեայ) Յուդայի լերանց վերայ, ցաւագնելով իւր արհնաքանդ հնդմին վերայ՝ յորում պիտի հնչեցնէր 'ի սպառ իւր հօր ցեղն, ինքն միայն լինելով միամօր դուստր քաջ զօրավարին[31]: Եբրայեցւոց մէջ եղած այս հանրական հաւատքս նկատէր նաև այն Թեկուսացի կինն Իմաստուն՝ որ ասպատակ Աբիսողոմն իր հօր հետ հաշտեցնելու համար գործածած վարպետութեան մէջ, յայտներ Դաւթի այն ձևացեալ ծածուկ գաւազրուքին որ իր միակ զաւկին դէմ կուզէին գործածել, գորովագութ մօր և յուզական ցեղի սիրտնոջ երկիւղն քերթողաբար բացատրելով այս գորովական խօսքերովս. Ցիր արքայ, իմ քրնամիներս իմ վերջին կայծս ալ մարել կաշխի:

Որչափ խոր է արդի հրեից անհաւատութիւնն նոյնչափ խոր էր իրենց նախնեաց հաւատքն: Նախկին ժամանակի մարդկանց մեծ մասնաւորութիւնն Մեսիայի գալուստն էր. աստուածային խոստման կատարուելն ժամանակէն այնչափ գարեր յառաջ եղողներն՝ այս հաստատուն համոզմամբ մեռանէին՝ որ այս խոստումնէքս օր մի պիտի կատարուէր. և յաւիտենական նուիրեան սեմոյ վերայ հասած առեններն՝ հեռուէն այս յոյսս ողջունէին, ինչպէս որ մեծ մարգարէն Մովսէս հառաչանօք ողջուներ զերկիրն աւետեաց որ ղեկաւ զիսարև և զլիդր, որոյ մուտքն արգիլեալ էր իրեն Աստուած:

Դաւթի և իր արքայաժառանգ որդւոց ժամանակ՝

մարգարէական գուշակութեանց թելն կը նորոգուի, և կուսին և Մեսիային խորհուրդն քան զարեգակն աւելի պայծառ մարգարէութեամբ կը յայտնուի:

Թագաւորն սուրբ զոր Աստուած Իսրայէլի՝ նախադասեց քան զառնն Սաւուղայ, տեսանէ զկուսութիւն Մարիամու և զաստղակոչ ծնունդ որդւոյն Աստուծոյ և գոչէ՝ քոյ ծնունդդ որդւոց մարդկան ծննդեան պէս շաղախած պիտի չլինի՝ այլ մարքոր և սուրբ որպէս զանձրև 'ի վերայ գեղհաւ և որպէս ցօղ դի ցօղէ յերկիր. և յետոյ զաչքն առաւել ևս 'ի բարձունս ամբառնալով տեսանէ զայն՝ զոր Աստուած առաւել էր նմա յորդի քան մարմնոյ, նստեալ ընդ աջմէ Հարձրելոյն, քան զերկինս և զաստեղս աւելի անչարժ աթոռի վերայ:

Դրախտին մէջ արուած պատգամին՝ մինչև եբրայեցւոց 'ի պաղեստինացւոց աչխարհն հաստատուած ժամանակ՝ կուսին ծնունդն աւելի զօրութեամբ խամցեալ էր քան թէ նախահարց և մարգարէից դուշակութեամբն յայտնեալ բայց Դաւթի ժամանակէն ևս աւ՝ Մարիամու Ճառագայթաբաճակ դէմքն միայն անորոշ գծագրութեամբ ոչ ներկայանայ, այլ առաւել պայծառ նկարուած տեսանելիք զնա՝ որ սահմանեալ էր Աբրահամու, Յակոբայ և արդարոյն Յեսեայ արիւնն ընթացուցանելոյ յերակունս Աստուծոյն մարգացելոյ: Աբրդէն Դաւիթ խօսած էր այն կուսական զաւկին վերայ. իսկ որդի նորա Սողոմոն այնպիսի փափուկ վիճնով նկարեց նորա կերպարանքն՝ որ գերազանցէ քան զչնորհագեղ նկարագրութիւնս յաւերժահրաման Աբևելից՝ զորս Հիւրիւ անուամբ քաղցրաժպիտ և թեթև ամպոց նման ոգիներ երազէ հովիւն արաբացի: Ինքն Սողոմոն տեսանէ զկոյսն վերացեալ ամբարձեալ 'ի մէջ դասերաց Յուդայ որպէս շուշան 'ի մէջ փշոց, իւր աչկունքն գողար և աղաւականք են որպէս զաչկունս աղաւնոյ,

իբեն իրրև զարհուրելիս երևեցաւ ինձ ձայն զմայլական և գաղնակաւոր՝ որպէս զձայն տաւղաց՝ որ զիսրայէլ խրախուսեն ՚ի պատերազմ. իւր օգտապար ընթացքն իրրև զծուռիս կնդրկի ժառացեալ բարձրացեալ, և գեղեցկութիւն նորա յաղթէ պայծառութեամբն զդուսիկ ծագելոյ բոլորածիր. պարզ և քերթողական են իր զուարճութիւնքն, սիրէ զգնալ ՚ի հովիտս զովարարս՝ երբ այգիքն ծաղկեալ են և թըզենիք ցցուին որպէս զմրուխտ յանապարհի բարուն նակս. իրրև զկնդև ևառան [32] այտք նորա, և հաճոյութեամբ ուռկնդիր լինի տատրակաց որ վուվուս արձակէն. անմռունչ և համեստ՝ ծածկէ զինքն յաչաց ամենեցուն և գագաթէ ՚ի տան իւրում որպէս զառաջնիս թռչնեալս ՚ի ծերպս վիմաց: Ինքն խորհրդաւոր հարսանեաց մի սահմանեալ է՝ նախամեծար քան զընդհարձն և զթագուհիս ամենայն ազգաց, և սիրելին ոգոյ նորա թագ արքայական խոստացեալ է նմա, և այն բարեբաղդ կապն սիրոյն որով կապեալ է իւր փեսային հետ՝ հզօր է իրրև զմահ [33]:

Իսկ եղիա մարգարէ կարմելոսի ծայրն աղօթած ժամանակ՝ որ Աստուած վերջ ասէ այն ցամաք երաշտութեան որ երեք տարուընէ ՚ի վեր աղբիւրներն ցամքեցնելով երկիրս կը խորխռէր, տեսանէ զկայն խոստացեալ թափանցիկ ամպոյ նմանութեամբ որ բարձրանայ ՚ի ծոցոյ ջուրց՝ անձրևաց դարձն աւետելով: Ժողովրդեան օրհնութիւնքն կողջունեն այս բարեբաղդ գուշակութիւնս [34], և մարգարէն աստուածային խորհրդոց տեսանող՝ հանդերձեալ երկնից թագուհւոյն աղօթարան մի կանգնէ հոն տեղն [35]:

Եսայի ալ յայտնէ տանն Դաւթի՝ որոյ գլուխն Աքաոբ հողմակոծ անտառի մի սկս կը դողայ ՚ի լսպառնալեաց ամբարիշտ զօրավարին, թէ Աստուած պիտի տայ իրեն ապահով նշան մի՝ Էրեսատանի հեռաւոր փառաւոր ապագային վերայ՝ ասելով, « Ահա

կոյս [36] յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ որ թարգմանի ընդ մեզ Աստուած:... Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, և էջցէ ծաղիկ յարմատոյ անտի [37]:... Չի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ... և անուն կոչեցաւ նմա. Աստուած հզօր, իշխան հայր հանդերձելոյ աշխարհին. մեծ է իշխանութիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահման: Յաթոռն Դաւթի նստցի և զարքայութիւն նորա յաջողեսցէ: — Եւ կանգնեսցի նա ՚ի նըշան ազգաց, և ընթացսցին աղնիք մատուցանել նմա զաղօթս իւրեանց. և գերեզմանն նորա փառաւորեալ»:

Մեսիայի խորհուրդն բովանդակապէս յայտնեցաւ մարգարէից. յորոց ոմանք տեսանեն զփառս Բեթլեհեմի ուր ծնաւ. այլք գուշակեն զաղթական մուտս նորա Երուսաղէմ, նշանակելով նաև զնորն և զամրընթաց էջն և զաւանակ յորս հեծաւ. տեսանեն այս սրբազան ֆհանայապետիս որ ըստ կարգին Մելքիսեդեկի ՚ի տաճարն մտնելն. գիտեն զթիւ գրամին զոր գահիճք ժողովարանին պիտի տան վատ աշակերտին՝ որ զէրն պիտի մատնէ. տեսանեն նորա տանջանարանն որ գերեաց յատուկ էր, և Աստուծոյ հոգեվարքին ժամանակ անարգաբար նմա մատուցած լեղին. և իւր մօրն ձեռօք հիւսուած պատմուճանին վերայ վիճակ ձգելն. լսեն այն բևեռներուն ձայնն՝ որ նորա զձեռս և զոտս ծակելով աւրինեալ մարմինն գամեն պատուհասի փայտին վերայ: Ցեսսէ տեսարանն կը փոխուի, և Յափայելն նըկարուց պէս՝ նիւթեն երկրիս վերայ սկսելով անդր քան զամպս չարունակէ: Մարգն ցաւագին և Մեսիայն խոնարհ զոր իրենները մերժեցին և իւր ժողովուրդն ոչ ծանեաւ՝ ՚ի բարձանց երկնից յաղթականն աչքն դարձուցանէ իր սարսափած թշնամեաց վերայ. և ամենայն ազգք երկրի յիշեն իրենց Աստուածն՝ զոր այնչափ դարերէ ՚ի վեր մոռցած էին:

Ազգք և ազինք խաչին գրոչին ներքև կը հաւաքուին, և Քրիստոսի պետութեան սահմանն պիտի լինի բովանդակ աշխարհիս եղերքն: Եւ այս մարգարէութիւններս ամբողջապէս կատարուեցան. Յակոբ գուշակեց Նորա գալուստն ՃԼՃ այն ժամանակ՝ երբ հրեայք պիտի դադարէին յունէղէն գրերէն սեպհական օրէնս՝ որով և տէրութիւնն ալ պիտի կործանէր. Բալաամ յաւելու թէ այս կործանումն պիտի լինէր Յիսուսէ եկեալ ժողովրդեան ձեռօքն. Եւ նախատարն Դանիէլ ՃԼՃԴ կերպով հաշուէ զեօթներորդսն որ մինչև այն առեն պիտի անցանէին:

Հանճարեղ մարդ մի ասաց թէ ինչ որ հանդիպի աշխարհիս մէջ՝ իր նախընթաց նշաններն ունի. երբ առեգային ծագելու մօտ է՝ հորիզոնն հազար ոս բիւր երանգօք գունաւորի, և արևելք բովանդակ բորբոքած երևին. երբ մրրիկ պիտի փրթի՝ ծովուն եղերքն խոր մռնչին մի կը լսուի և ալիք յանկարծակի երես անցնին: Եկեղեցւոյ Հարց կարծիքն ալ այս է որ Աստուածաշնչին նմանութիւններն ալ նախընթաց նշաններ են՝ որ արեգականին արդարութեան Քրիստոսի, և զուարթաբար արուսեակին այս ինքն Տիրամօր ծագումն աւետեն. Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ վերաբերի զօրութիւնն, իսկ Մարիամու շնորհքն և բազմագութ ողորմութիւն. զի ինքն է ծառն կենաց զոր Աստուծոյ ձեռքն ինքնին բերաբ անկեց 'ի մէջ մարդկան, մեր նախահարց Դրախտին մէջ վայելած երջանկութենէն աւելի գերազանց երանութեան մի երաշխաւոր. ինքն է այն Տապանին աղաւնին որ կը բերէ աշխարհի հաշտութեան ձիթենին. ինքն է ալբիւրն կնքեալ՝ յորում անմաքուր բան մի չէ կարող մտնել իբր յատակ ջրերն պղտորելու. դեղնի խմաղալի՝ որ ընդունի զցօղն երկնային. լեառն վիմածին՝ յորմէ կը բաժնուի վէմն առանց ձեռին հատեալ՝ որ կը փշրէ հեթանոսական կուռքերն, և այլն:

Հին առեն պատմին թէ Փիղիաս գիցուհւոյ մի արձանն ուղելով շինել՝ Յունաստանի գեղեցկագոյն կանանց զանազան մասերն առնուլ յօրինեց զայն. այսպէս և ամենասուրբ Տարն Հոգւոյն Սրբոյ իբր միակ անձին վերայ համահաւաքեց այն ամենայն կատարելութիւնները՝ որ տեսնուեցան հին օրինաց հրաշակոր կանանց վերայ՝ որք իրենց ժամանակակից մարգիկն հիացուցել էին. Եւայի, Սարայի և Հռաքէլի աննման և գերազանց գեղեցկութեան վերայ յաւելուլ Դեբովրայի և Յայելի խմաստութիւնն և քաջութիւնն, Սամուէլի մօրն Աննայի եռանդուն ատաուածապաշտութիւնն, Աբիգէայի խոհեմութիւնն, Յուդիթայ անձնանուէր սէրն, որոյ շուշանազարդ պըսակն Հոլոփեռնեսի արեամբն ներկաւ[38], Եսթերայ ներկիւղ համարձակութիւնն, Շուշանայ իր անուան նման ծաղկին մաքրութիւնն, Ասքայի Փաղեբայ դըստեր աղնուութիւնն որ մրցանակ արուեցաւ կարիճ Գոդոնիէլի շահատակութեան, և Այն դառնակսկիծ մօր՝ որ իւր մեծագնեալ աջոց առջև տեսաւ իր եօթն որդւոց դառնակսկիծ մահն՝ վասն պահպանութեան օրինացն հայրենեաց: Եւ սակայն ասքս ամենեքեան ժժգոյն և ամչն օրինակներ էին Մարիամու՝ որ յանձին պիտի բերէր զամենայն կատարելութիւնս հինոլ և հրեշտակի:

Զարս հազար տարիներու երկայն ակնկալութենէ ետև՝ վերջապէս այսչափ մարգարէութեանց լման սահմանեալ ժամանակն հասաւ, որով հին օրինաց տաւերքն փարատին և Մարիամ ելանէ բարձրանայ Հրեաստանի հորիզոնին վերայ՝ որպէս յառաջընթաց ասաղ տուընջեան:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Ա. ԳԼՈՒԽ

1 Ըստ աւանդութեան բալուններաց՝ Եւայի պատուիրանազանցութեան ժամուն՝ արեգակն զարհուրելով իւր դէմքն ծածկել է, և ի յիշատակ այս չարագոյժ երևութիս՝ կանայք երբայեցւոց պարտաւորէին շաբաթ օրերն ի բուն կանթեղներն վառ պահելու (Պուլանժէ, Հնութիւն. տաղանդաբեր.)։ Գրեթէ նոյն է Շնորհալեցւոյն աւագ ուրբաթու Այսօր անճառ երգոյն մէջ ասացեալն. « ի միջօրեային նահանջաւ՝ յորժամ Ադամ մեղաւ մեռաւ »։

2 Բաբելոնի աւերակաց մէջ մի միայն ծառ գտանի՝ որում պարսիկք ասել անուն տան. ըստ իւրեանց այս ծառս հին քաղաքին մէջ էր, և հրաշիւք պահուեցաւ՝ որպէս զի իրենց մարգարէն Ալի որ էր փեսայ Մահմետի՝ Հիլլայի պատերազմէն ետև իւր ձին կապէ. մշտադալար ծառ մի է, և այն երկրին մէջ այնպէս գժուարագիւտ՝ որ նոյն տեսակէն ուրիշ մ'ալ միայն կայ ի Պասրայ (Ռիչ, Յէլտոկոբան.)։

Ա. Նախկին հելլենք և ասիացիք կոչ անուամբ պատուէին իրենց առաջնակարգ աստուածուհիներէն զԱֆրոնտա՝ փառաշէն տաճարովն Պարթենոնի որոյ աւերակքն ցարդ հիացուցանեն զուշադրս։ — Իսկ առ մեզ նոյ համարեր կարծեմ և Անահիտ։

3 « Աւոթ դրուխդոն (անուանեալ քուրմք կելտաց) ի Նէրէիս յալս անթառամ անթրկ Նուիրեան կանթեղեցին Իսիդեայ կամ կոչ՝ յորմէ ձնանելոց էր որդի՝ այսինքն փրկիչ ազգի մարդկան։ (Ելիսա Սկեւտիոս Յաղագս դից էերմանաց գլ. ծԲ)։ Ասոնց կուսին որ ծնանիցի ի սերմանէ Որմզդի տես Յեղնիկ Եղծ աղանդոց դիրք Բ 10։

4 Ճակրնաթի եօթնեորդ մարմնակերպութիւն համարեալ Պրահմայի՝ դրոշմի ի ձև բրգան անուն և անձեռն. պրահմինք ասեն թէ աշխարհ փրկելու համար վերուցած աստն՝ կորուսած է զձեռս և զոտս իւր (Փիրքէր)։

5 Ջէր-ահուշտ կամ Զրադաշտ նշանակէ լուացեալ յոսկի. այս անունս եռուն Զորոաստրի ասեն ինչ անուանեալ աղանդաւորք, որովհետև իր առաքելութիւնն ցուցանել ուզելով վըշտասպ Կուշտասպայ սաքայեցի իշխանին՝ հալած ոսկւոյ մէջ ընկղմեցաւ, կամ ձեռքն կրակ լեցնելով երկայն աստն մնաց առանց այրելու (Թովէրնիէ Հտ. Բ էջ 92)։ Բայց հին պատմութեանց

մէջ զանազան անձինք յիշատակին Զրադաշտ անուամբ. որպէս և ոմն հայ պատմիչ (Զամչեան Պաթմ. հայոց հտ. Ա. էջ 176 և Ղուկասի Հնութիւն)։

6 Տես Թովէրնիէ ի նոյն տեղն։

7 Մուրթադոր։

8 Թրքաց և պարսից Նեմրուտ ասացեալն որ ըստ մեզ Նեբրովէմ՝ ըստ ոմանց է նոյն ինքն հսկայն որսորդ. իսկ ըստ այլոց՝ պարսից Զոհակ ասացեալ բռնաւորն՝ զոր հեղեղէն ետև անմիջապէս թագաւորող ցեղին կամ հարստութեան թագաւորն. այլ ոմն համարի զսա Կայխոս երկրորդ թագաւոր՝ երկրորդ հարստութեան։ — Ըստ Մարիբասայ, Խորենացւոյ, Եւսեբիոսի, Հերոնիմոսի և Ագոստինոսի և ի վերջնոց Աբրահամէ՝ և այլն, Նեբրովէմ նոյն է ընդ Բելայ որդւոյ Քուշայ սպանելոյ ի նահապետէն մերմէ Հայկայ (Զամչեան, Պաթմ. հայոց հտ. Ա. էջ 169)։

9 Սերացւոց կամ սինեացւոց կամ ճենաց աշխարհէն (որ հիմա Չինաստան, և ի Ս. Գիրս Գոգ և Մագոգ, տճ. Զին ու Մաչին) առաջին դեսպանք հասին առ հռոմայեցիս Աւգոստոսի ժամանակ, որք և ասէին թէ երեք տարի տևել է իրենց ուղևորութիւնն։

10 Շաղաբորդ դրանիկք Հերովդէ՝ նորա մեծութենէն և ճոխութենէն շլացեալք՝ սկսէին թէ ինքն է Մեսիան. ի սոցանէ յառաջ եկն աղանդն հերովդիանոսաց՝ յիշատակեալ յԱետարանս, որ և ծանօթ էր հեթանոսաց։ Պերսէոս և իւր մեկնիչն ասեն թէ մինչև Ներոնի ժամանակ այս աղանդաւորքս Հերովդէսի ծնունդն մեծահանդէս կատարէին՝ որպէս զսոն շաբաթու։

11 « Յարևու երէար զվսորան իւր ». Սաղմ ԺԹ. 6։ Պարսիկք ևս նոյն կարծիքն ունէին, ասէ Հէյնուէյ, և համարէին թէ Աստուծոյ աթոռն արեգական մէջ է, և ասոի յառաջ եկած է իրենց արեգական մատուցած պատիւն և երկրպագութիւնն։

12 Հաւանական է որ Աբէլ և Կայէն և առաջին նախահարք իրենց զոհն բարձր քարի կամ դալարազարդ հողակոյտի մի վերայ մատուցանէին. ուստի յառաջ եկած է բառիս զսեղանս յորոց վերայ զոհքն լինէին։ Նոյնպէս նաև առ լատ. altare բառն, զոր ոմանք ի կեղտական բառիցս allt բառիր և ar +ը ածանցեալ համարին։ Իսկ հայկական բառիցս սեղան և բոլոր նշանակութիւնն յայտ է։

13 Ըստ հեթանոսական աւանդութեան՝ զոր յիշէ Պորփիւր (Յաղագս ջոջ-քալըն-ինան գիրք Բ.) նախկին մարդիկ միայն ճաղկունս, պտուղս և դալարիս նուիրէին դից։

14 Աշխարհիս վերայ մարդս ոչ երբեք նոյն պատճառաւ անմահ լինելոց էր՝ որով են պարզ հոգեղէն արարածք, որովհետև

հողեղէն մարմինն պէտք էր որ ի հող դառնայր. այլ անմահ էր մահական և անօրինակ ընօրհիւն Աստուծոյ որ պայմանաւ տուեալ էր նմա Աբրչէն, որով քան զնական վիճակն բարձրագոյն աստիճանի մի հասած էր, և յորում պիտի յաւերժանայր եթէ պայմանն պահէր: Մարդս ոչ երբեք ստացած է զանմահականութիւն յերկրի իրաւամբ ծննդեան, այլ սր և է հողեղէն մարմին պիտի եղծանի լուծմամբ մասանցն, եթէ մանաւանդ կամք Աբրչին ոչ ընդդէմ դարձեր. այս աստուածային կամքս յայտնեցաւ ի ընորհս նախահարց մերոց: Աստուած անկեաց ի դրախտին փափկութեան ուր եգեալ էր զմարդն, զձառն կենաց՝ որ երկնային ճաշմամբն ունէր զզօրութիւն վանելոյ զմահ, որպէս սարդենին՝ որ ըստ կարծեաց հնոց ունէր զզօրութիւն վանելոյ զչանթիս: Այլա ուրեմն այն խորհրդաւոր ծառոյն հետ կապեալ էր մարդկան ազգի անմահութիւնն, և հետի յայսմէնէս մահն իւր որսոյն վերայ պիտի հանէր, որով մարդս յերկնային բարձրութենէն անկանէր ի հողապատեան վիճակ իւր թշուառ (Ս. Աւգոստ. խոստ. վէմն և ընդոյ խոսքաբանոց. խնդիր ԼԹ): Ասուի ոչ ոք կարծեմ կարէ տարակուսիլ թէ Աստուած իւր իրաւունքն բանեցուց արտաքսելով զԱդամ ի դրախտէն յետ անհնազանդութեան նորա. և այս աքսորանացս հետ կապեալ էր վճիռն մահու վասն մարդոյ և սերնդոց նորա. առանց ծառոյն կենաց ինքն տկար և դիւրաբեկ արարած մի էր՝ ներքոյ անկեալ օրինաց արարածական մարմնոց. որպէս առ ի չգոյէ դեղթափի թոյնն սպանանէ: Ադամ մահկանացու դառնալով՝ ծնաւ նոյնպէս որդիս մահկանացուս, և հարկ եղև որդւոցն ի նմին պայմանի կալ յորում անկեալ էր ծնող նոցին: Եւ այսու Աստուած ոչ անիրաւեցաւ մարդկային ազգի. բնութեամբ մահկանացու էաք, և եթող զմեզ մեր պայմանին մէջ: Երբ մարդ իրեն առաւտաձեռնեալ ընորհաց մուրհակն իւր ձեռաք պատռէ՝ այն ընորհն ետ առնուլն անթերութիւն չէ՝ այլ արդարութիւն:

15 Ճիշդ ոչ գիտեմք թէ Ադամ և Եւա ո՛րչափ ատեն կեցին յերկրաւոր դրախտին. և սակայն բաւական երկար ժամանակ ճնացած պէտք է լինին: Այսպէս համարի Միլտոն՝ զոր ոչ իրրև քերթող այլ իրրև հմուտ արևելագէտ կոչեմք հոս ի վկայութիւն: Եթէ յիշեմք թէ Ադամ եդեմայ մէջ ուսաւ զանազանել և անուանակոչել զամենայն թռչունս երկինից և զամենայն անասունս երկրի և զամենայն ձկունս ջուրց, և թէ ծանեաւ զամենայն սեռակականութիւնս և զզօրութիւնս բուսոց, և զորս կամեցաւ Աստուած ուսուցանել նմա սակս ընթացից աստեղաց, կարեմք ի վերայ ածել թէ այս ամենայն մի աւուր մէջ չէր կարող լինել: Պարսիկք և սինէացիք համարին թէ նախամարդն

չատ դարեր բնակած է ի դրախտին. ըստ արաբացւոց և ըստ բանեաց միայն կէս օր, բայց այս կէս օրս իրենք հինգհարիւր տարեաց համեմատեն, որովհետև զօր մի դրախտին հազար տարի համարին: Եղբայրասպանն Կայէն՝ որդի ծնունդն ժամանակակից համարի ի գիրս Ծննդոց արտաքսելոյ ծնողացն ի դրախտէն, ընդհանրապէս կարծուի թէ ծնած է յերեքտասաներորդ ամի արարչութեան, որով ճշմարտանման երևի հաստատել զընակութիւն նախահարց ի դրախտին ամս երկուտասան: Այս ժամանակս՝ թէ և սակաւ մի կարճ, բաւական եղև նախամարդոյն հաստատել զիշխանութիւն իւր ի վերայ անասնոց կարգելոց ընդ պետութեամբ իւրով, և կապելոյ կապանօք ընդելական սիրոյ ընդ խնարհ հպատակաց իւրոց:

16 Ստոյգ է որ առաջին մարդկանց կեանքն գիւղական էր՝ բայց ոչ բնաւ վայրենի, և յառաջին ժամանակաց անտի իրենց պետոյից և հաճոյից արուեստներն գիտէին: Որդիք Ադամայ փոքրիկ հասարակութիւններ կազմելուն պէս՝ տեսանելի որ անդէն կրօնական պաշտօն մի հաստատուն, վասնզոր չինեն, բաղաքս կառուցանեն, երկաթէն գործեն, պղինձն հալեցնեն, երաժշտութեան գործիս հնարեն և աստեղաց ընթացքն դիտեն: Ըստ Պայլիի՝ աստեղագիտութեան պատմութիւնն ջրհեղեղէն յառաջ եղած ժողովրդէ սկսելու է՝ որոյ յիշատակն թէ և կորուսեալ է, սակայն թողած է քանի մի աստղաբաշխական ճանօթութիւնս տիեզերական յեղափոխութենէն ետև: Իսկ Լալանտ՝ որում այս կարծիքս չափազանց երևի, և վախէ որ մի դուցէ այնու Սուրբ գրոց հարազատութիւնն հաստատուի՝ որոց ինքն ընչաքաղցութեամբն հակառակ էր, աստեղաբաշխական գիտութեան սկիզբն յեղիպտացոցմէ համարի: Բայց երբայեցիք որպէս դրացիք ժամանակակիցք և աւելն մի նոյն իսկ հիւրք են, գիպտոսի՝ որ այս վէճս լուծելու բաւական հմտութիւն ունին՝ Լալանտի հակառակ՝ Պայլիին իրաւունս տան ասելով՝ թէ եգիպտացիք իրենց առաջին աստեղաբաշխական ճանօթութիւններն ջրհեղեղէն ապրեալ աւանդութիւններէ առած են (Յովսեպոս Ֆլաւիոս հրէից):

17 Ընդհակ, սինէացիք, բերուվիացիք նաև Հիւրոնք ընդունին որ առաջին մարդն ի հողոյ արարաւ: Պրահմինք որ զարմանալի կերպով նկարագրեն իրենց դրախտն Ինդրա՝ անուանելով, յիշեն թէ հոն ծառ մի ևս կայր՝ որոյ պտուղն անմահութիւն պարգևէր՝ եթէ հրաման լինէր անտի ուտելու: Պարսիկք մազդեզականք ասեն թէ չար հոգին Արհմն կամ Խաբոմեն խաբեց մեր նախածնողքն ընդ կերպարանօք օձի, յորմէ մեր մէջ ալ սովորութիւն եղած է ասել օձ խաբոմեն: Իրոքաց մէջ աւանդութիւն կայ թէ կին մի մոլորեցաւ առ ոստս ծառոյ միոյ, որոյ վասն Աստուած

քարկացաւ, և եղբայր զեղբայր իւր սպան: Թաթարք մարդուս անկման պատճառ համարին բոյս մի որ քաղցր էր իբրև զմեղր և յոյժ գեղեցիկ տեսլեամբ: Թիակեթացիք նոյնպէս պատճառ համարին առաջին մարդոյն խաբուելով ուտելն 'ի միսասաբեր ծառոյն անուանեալ ոչխար որ քաղցր և սպիտակ էր որպէս գշաքար, զոր ճաշակելով իմացաւ զմերկութիւն իւր: Կնոջ և օձի աւանդութիւնն ծանօթ էր նաև առ մեքսիկացիս, և այլն. (Ռոզելլի տը Լորկ, Բիբլիոթեկ-Ընդհան. Էնցիկլոպեդիա գլ. Թ): Տես գարձեալ Շահոպրիանի Ոգի երկրագործութեան:

18 Տես Պուլանժէ Հնութ. Էնցիկլոպեդիա:

19 Բաբելոնի աշտարակն որ ժամանակաւ այնչափ մօտ էր ջրհեղեղին՝ գաղափար մի կարող է տալ նախջհեղեղեան ճարտարապետութեան, զոր շինելու համար գործածէին աղիւս և կուպր. շատ հաւանական է որ այն ահագին աշտարակն նման էր հին անուանի Բելայ աշտարակին որ 'ի Բաբելոն. որ արաւքուստ զնստագոյն վերինքը մի ունէր պարուրաձև մինչև 'ի վերջին անճառք դասիկոնն, և որ չէնքն այնպէս երեւցներ որպէս թէ եօթն աշտարակներ իրարու վերայ շինուած լինէին:

20 Պլատոն 'ի խօսելն զԱստուածոյ արարչէ տիեզերաց ասէ՝ թէ արգելեալ է տալ ծանօթս զնմանէ առ ժողովուրդն: Նուսմայի մատեանքն գրեալք բարւոյ ծառոյ կեղևոց վերայ՝ զորս իւր մահուանէն շատ դարեր ետև իւր գերեզմանին մէջ գտին՝ քուրմերն ծածուկ այրեցին, յազգաստուածութեան վարդապետութեանն վնասակար սեպելով զնոսա: — Պրահմինք որ ըստ ումանց ճանապարհորդաց վեմ գաղափար ունին Աստուածութեան վերայ՝ թողուն որ հնդիկ ժողովուրդն այլանդակ անասնոց երկրպագէ: Միայն ճշմարիտ կրօնքն եղև որ զմարդիկ անմահ և բանաւոր արարածս համարեցաւ, և ուսոյց նոցա զպաշտօն ճշմարտին Աստուծոյ:

21 Ապուլեիոսէրաց (Պոմոնիոն հոմոսոնիոնս) ասէ թէ Զրադաշտ նախաձայնեաց մոգուց զնոնունդ Մեսիային 'ի կուսէ, և թէ 'ի ծննդեան նորա անսովոր և անճանօթ աստղ մի պիտի երևէր՝ որ նոցա պիտի առաջնորդէր մինչև յորբանանորա, ուստի հրամայեց՝ որ այն աստեղ երևելուն՝ ընծայատար լինգին նմա: Նոյնպէս Շահրիսթանի պարսիկ մատենագիրն յիւէ Զրադաշտայ մի կանխաւացութիւնն որ նկատէ մարգարէ մի մեծ՝ որ պիտի նորոգէր զաշխարհս թէ ըստ կրօնից և թէ ըստ արդարութեան. և որում պիտի հպատակէին թագաւորք և իշխանք երկրի:

22 Նշանակէ զառասպելեալ մարմնակերպութիւն գիցն հընդկաց:

Բ. Ութիւլլե որ եւոլացւոց գաւառական յոյն բարբառովն առ-

պոռաձախոհ կամ ասպռոձիմաստ թարգմանի՝ էինդի հնութ. առ հեթանոսս կուսանաք՝ որ զանազան նիւթոց վերայ գուշակութիւններ աւանդած են. 'ի սոցանէ գլխաւորն էր կումականն:

23 « Միաձայն վկայութեան զօրութիւնն մեծ է. քանզի չէ մարթի լինել մոլորութիւն ինչ տիեզերական » ասէ Պէրնարտէն տը Սէն Բիէր (Հէթոզդոքս-Ընդհան. հետազօտ. Ը. էջ 398):

24 Տես 'ի Պաւլոս Սէնեերի Պոտծատէր Մարիամ անուանեալ գրոց Ա. մասին մէջ:

25 'ի ժողովարանէն հրեից ուսուցեալ աւանդութիւն և յեկեղեցւոյ իբրև ճշմարիտ ընկալեալ է՝ զի մարգարէք առ հասարակ վասն ժամանակի Մեսիային մարգարեացան:

26 Ըստ աւանդութեան երբայեցւոց Աստուած տեսնելով Ադամայ յուսահատութիւնն իւր յանցանքէն յառաջ եկեալ սարսափելի հետևանաց վերայ, հրեշտակի ձեռօք ասաց նմա հանգարտել 'ի ցաւոցն. վասն զի 'ի սերնդոյ իւրոյ պիտի ծնանէր ազատիչ մի որ ընջէր պիտի զսկզբնական մեղս, և թէ լինելոց էր փրկութիւն ամենեցուն որ յուսալոյ էին 'ի նա (Պատասժ. հա Դ. գիրք Ե. գլ. Իե):

Գ Շէլոհ յերբայականին նշանակէ որդի, որոմ համարեալ յաւուկ անուն Մեսիային, այսինքն որոմ մեայ թագաւորել կամ որդի է հանդերձեալ թագաւորութիւն. վասն որոյ և 'ի հայերէն թարգմանուած է Որդի Ե-ՐՈՅ ԵՆ ՀԱՆԴԵՐՁԵԼՔ:

27 Քրիստոնեայք Մեսիային համար ասացեալ համարին այս յայտնութիւնս, և այսու ցուցանեն անհաւան հրեից թէ նա 'ի վաղուց եկեալ է. որովհետև լինելոցն գարերէ 'ի վեր նոցա ցեղերն ցրուած և խառնուած են իրարու հետ, զոհերն գադրած, քաղաքական իշխանութիւնն վերցած, և չունին այլ ևս երկիր հայրենի և ազգային իշխանութիւն, և յամենայն տեղիս ուր որ ցրուած են՝ օտար ազգաց օրինաց հպատակ են: Այս պատճառաբանութիւնս ակարացընելու համար՝ արդի հրեայք ասեն թէ չէդէր բառն՝ զոր մեք գաւազան իշխանութեան խմանամբ, նշանակէ նաև զգերիս պատժելոյ գաւազանն. և այս լանկիս վերայ պնդելնուն պատճառն այն է՝ որ եթէ Մեսիայի համար ասացեալ ևս լինի այս պատգամս՝ ուրիշ հետևանք ոչ ելանիցէ անոտի՝ եթէ ոչ այս որ իրենց պատիժն պիտի տեւէ մինչև 'ի գալուստ Մեսիային՝ առ 'ի ազատել զնոսա: Դարձեալ ուրանան թէ էլհ բառն զՄեսիա ոչ ցուցանէ. բայց իրենց հին գրեանքն զիրենք սուտ հանեն. վասն զի թալմուտի մէջ այս մարգարէութիւնս Մեսիային համար լինելն հաստատուի. և Ընդելոս ասացեալ քաղդէարէն յարատութեան մէջ այսպես կը մեկնուի սոյն մարգարէութիւնս, որոյ բառական թարգմանութիւնն այս է. « 'ի

Յուդայէ ոչ լինաւ պակասեցեալ ոք զգերագոյն իշխանութիւնն յանձին ընտրելով, և ոչ ՚ի յայլորդս նորա պակասեցին գպիրքն՝ մինչև ոչ ևկեսցէ Մեսիան»: Հիւլէլ բարուեսոյն որդին Յոզաբադ՝ զոր նախասպատիւ համարին հրեայք և մեծարեն գրեթէ որպէս զՄովսէս՝ զբառս ղեկեբ թարգմանէ էլեհոռուիւն և զէլիհ Մեսիա. երուսաղէմի ասացեալ յարատութիւնն ալ այս կարծեացս հետևի: Այսպէս ամենեքին հին և հարազատ և յարգի ունկնդրութիւնք Սուրբ գրոց՝ զոր առ ՚ի յաղթահարել զհրեայս:

28 Ասի յառաջ գայ երբայեցւոց ակնկալութիւնն նոր օրէնս ընդունելոյ ՚ի Մեսիայէն՝ որ պիտի գերազանցէ քան զօրէնս Մովսիսի. ուստի իրենց վարդապետք ասեն. «Օրինք զոր ուսաներին մարդիկ յաշխարհիս ունայնութիւնք են՝ առ օրինօք Մեսիային» (Մեռրաշ-Բապպա Յենէհուդա գլ. ծԱ, 8):

29 Դաշտն Բաբելոնի ընդ որ անցանէն բաղում գետք և ջրանցք՝ ճախնային են և լի ուռենեօք. վասն որոյ և ՚ի Գիրս կոչի հովիտ ուռենեաց, որպէս և ՚ի Սաղմ. ճԼԷ «Ի մէջ ուռեացնոցա կախեցաք զկտակարանս մեր» այսինքն բաբելացւոց:

30 Թէ և Բաղաամու մարգարէութեան հնազոյն լինելն ոչ գիտեաք՝ սակայն նոյն իսկ գրուածոյն կերպն բաւականապէս զնոյն ցուցանէ, վասն զի Բաղաամ քալդէացի աստեղագէտն՝ Յուդայի գեռևողոյ պէս ոչ մարգարէանայ. իրեն ընդարձակ ոլորտք մի պէտք է՝ յորում կարասցէ տեսանել զերկիր զծով և զերկինս. նա՝ ինքն իրեն խօսող մարդու մի պէս՝ տեսածներն ինքն իր անձին պատմէ՝ որ իր վերայ մեծ տպաւորութիւն գործեն: Այս մարգարէութիւնս կերպով մի նմանի այնոցիկ՝ որոց Սկովտիոյ լեռնաբնակք երբորդ գեռևրիէն անունն տան:

Դ. Յակոբայ նահապետին մարգարէութիւնէն ետև՝ Մեսիայի համար եղած գուշակութեանց մէջ ամենեն հռչակաւորն Բաղաամու կանխաձայնութիւնն է, թէ նիւթոյն գերազանցութեամբ թէ զրուցուածքին խորհրդաւորութեամբն և թէ ժամանակին հնութեամբն որ է Քրիստոսէ 1500 տարի յառաջ. ուստի զարմանք չէ որ միանգամայն մուխ և գժուարին ալ լիցի նորա մեկնութիւնն, մանաւանդ ըստ զանազանութեան թարգմանութեանց երբայականին, զոր սակաւ մի պարզելու համար աստ կարգեմք՝ կանխաձայնութեանս երկու գլխաւոր մասունքն միայն յառաջ ածելով. յորոց առաջնոյն մէջ ցուցանի Մեսիայի գալստեան և նորանշան աստղն՝ որ պիտի ծագէր ՚ի Յակոբեան նորա. և յերկրորդին երբայեցւոց ազգին աստուածասպանութեան յանցանաց պատիժն՝ ՚ի սպառ կործանմամբ ՚ի ձեռն Հռոմայեցւոց պետութեան, որ Աստուծոյ բարկութեան գաւազան լինելէն յետոյ՝ ինքն ալ ջախջախեցաւ, և տեղի ետ միանձնաւոր թագաւորութեանն Քրիստոսի: Արդ բազմամայ կանխաձայնութիւնն այս է (տես ՚ի գիրս Թուոց ԻԴ 17 և 24) համեմատութեամբ երբայական ընագրին և երից թարգմանութեանց հայ, յոյն և լատին:

ՀԱՅԵՐԷՆ	ՅՈՒՆԱՐԷՆ
Ա. Յուզից նմա և ոչ այժմ. երանեցից և ոչ ՚ի մօտոյ: Ծագեսցի աստղն Յակովբայ, և յարիցէ այր Իսրայէլէ:	Յուզից նմա և ոչ այժմ. երանեմ և ոչ մերձենայ: Ծագեսցի աստղ ՚ի Յակովբայ, յարիցէ այր Իսրայէլէ:
ԼԱՏԻՆԵՐԷՆ	ԵՐՐԱՅԵՑԵՐԷՆ
Տեսից զնա բայց ոչ այժմ, նկատեցից զնա բայց ոչ ՚ի մօտոյ: Ծագեսցի աստղ ՚ի Յակովբայ և յարիցէ գաւազան Իսրայէլէ:	Տեսից զնա և ոչ այժմ, նկատեցից զնա և ոչ ՚ի մօտոյ: Մերձեսցէ աստղ ՚ի Յակովբայ և յարիցէ գաւազան Իսրայէլէ:
ՀԱՅԵՐԷՆ	ՅՈՒՆԱՐԷՆ
Եւ հարցէ զիշխանս Մովաբայ և առցէ աւար զամենայն որդիս Սեթայ:	Հարցէ զիշխանս Մովաբայ և առցէ աւար զամենայն որդիս Սեթայ:
ԼԱՏԻՆԵՐԷՆ	ԵՐՐԱՅԵՑԵՐԷՆ
Եւ հարցէ զիշխանս Մովաբայ և առցէ աւար զամենայն որդիս Սեթայ:	Եւ վիրաւորեսցէ զիշխանս Մովաբայ և սպառեսցէ զամենայն որդիս Սեթայ:
ՀԱՅԵՐԷՆ	ՅՈՒՆԱՐԷՆ
Բ. Եւ ելցէ ՚ի ձեռաց կիտացւոց. և չարչարեսցեն զԱսուր, և չարչարեսցեն զեբբայեցիս, և ինքեանք միանգամայն կորիցեն:	Եւ ելցեն ՚ի ձեռանէ կիտացւոց. և չարչարեսցեն զԱսուր, և չարչարեսցեն զեբբայեցիս, և ինքեանք նմանապէս կորիցեն:
ԼԱՏԻՆԵՐԷՆ	ԵՐՐԱՅԵՑԵՐԷՆ
Եկեսցեն եւ աւերիցեն զհայր. յորդեսցեն (superabunt) Ասորիս, աւարեսցեն և զեբբայեցիս, և ՚ի վախճանի նա և ինքեանք կորիցեն:	Եւ նաւք ՚ի ձեռանէ փիլթիմ. և չարչարեսցեն զԱսուր, և չարչարեսցեն զեբեր, և նա և ինքն բոլորովին կորուսցի:

Հարկ է գիտել նախ որ կռոցդես մէջ յիշուած Ա-պոլլոն տան անգամ յիշուած գտանիմք Ս. Գրոց մէջ, և Հայերենի, յունարէնի և լատիներենի մէջ իրարմէ զանազան կերպով գրուած: Այս անունս անշուշտ տեղոյ և երկրի մի յատուկ է որ յերբայականին մէջ սակ սովորաբար Քիրիմ, որոյ վերայ զանազան կարծիք եղած է ասէ Բոչարտն յատուկ ա-

Նոյնոյն աստուածաշնչագրեալ ճրոց հին և նոր ևթողութեանց (տպագրեալ ի Վենետիկ յամի 1769 յաշակերտաց Մխիթարայ Աբբայի). « Բայց առաւել հաւանական է բանն Սրբոյն Եպիփանու կիպրացւոյ և այլոց բազմաց, որք ասեն թէ անուամբս ՅԷՒՕ կամ ՅԷՒՕՄ ի սուրբ գիրս լմանի կիպրոս կղզին, և ուրանօր ի Սուրբ գիրս գրի ՅԷՒՕՅԻ+ լմանին կիպրացիք : Եւ քանզի ոմանք ի կիպրացւոց գնացեալ բնակեցան ի Մակե-

դոնիա, վասն այսորիկ և Մակեդոնիա յոմանց ասացաւ ՅԷՒՕՄ և բնակիչք նորա կոչեցան կիւոմացիք . տես յՍ. Մակաբ . գԼ. Ա. 1 » : – Երկրորդ պէտք է գիտել որ առ երբայեցիս կղզիք ասէին և հեռաւոր աշխարհք՝ ուր նաւով հարկ լինէր երթալ ի Պաղեստինայ, որպէս Եղիպտա, Իտալիա, Սպանիա և այլն: Զիս ևս գնեմք հոս կիւոիս անուան յիշատակուած տեղերն և առնուանակոչութեանց զանազանութիւնն.

Գիրք	Հայ թարգմն. ԵՕԹԱՆԱՍՆԻՑ	Յունարէն ԵՕԹԱՆԱՍՆԻՑ	Լատին ՎՈՒԿԱՍԹԱ ՅԵՐՈՅԱՅԱՆՆԷ
Ծննդոց	կիտացիք	Նոյն ընդ հայ .	կիտիմ կամ Cettim
Թուոց ԻԴ , 24	ի ձեռաց կիտացւոց	Նոյն ընդ հայ .	եռաթիօք Իտալիոյ *
Ա. Մնացորդ Ա, 7	կիտացիք	Նոյն ընդ հայ .	կիտիմ
Ա. Մակաբ . Ա, 1	յերկրին քետիմացւոց	Նոյն ընդ հայ .	յերկրէն կիտիմ
» » Ը, 5	զաբբայն կիտացւոց	զարբայութիւն կիտացւոց	զարբայն կիտացւոց
Եսայի ԻԳ , 1	յերկրէն կիտացւոց	Նոյն ընդ հայ .	յերկրէն կիտիմ
» » 12	ի Կիտիս	Նոյն ընդ հայ .	Նոյնպէս
» ԿՉ , 19	Յելադա և ի կղզիս հեռաւորս	Նոյն ընդ հայ .	in Italiam et Græciam — Իտալիա և Յելադա *
Երեմիա Բ , 10	ի կղզիս քետիմացւոց	Նոյն ընդ հայ .	Նոյն ընդ հայ .
Դանիէլ ԺԱ, 30	բանակք կիտացւոց	կիտացիք (պարզաբար)	եռաթիք և հռոմայեցիք *
Եզեկիէլ ԻԷ , 6	ի կղզեաց քետիմացւոց	Նոյն ընդ հայ .	ի կղզեաց Իտալիոյ *

* Դիտողութեան արժանի է որ ի լատին թարգմանութեան զոր արարեալ է Ս. Հերոնիմոս ի գարուն մէջ և որ Վուլկատա կամ հրատարակեալ անուամբ ընդունելի և միայն գործածելի եղած է արեւմտեան եկեղեցւոյ մէջ իբրև մեկնութեամբ երբայական փիլիպ անունն եղեալ է Իտալիա բաղաձմու կանխաձայնութեան մէջ. վասն զի հրեից կործանումն որ կը գուշակուի

Երբայեցի ԲՆԱԳԻՐ	Յարմոնիկն Քաղդէարէն ի թարգոմ ՈՆԳԵԼՈՍ	Ասորերէն կամ Սիրիանական	Արաբերէն
Փիթթիմ	Փէթիմ	Փէթիմ	Կիպրոս
ի ձեռանէ այսինքն ի Յովվեզրեայց Կիտիմ	և նաւք եկեսցեն և էգեհռնք ելցեն յերկրէն կիտացւոց	և լեգէոնք ելցեն յերկրէն կիտացւոց	ի նաւահանգըստ Կիպրոսի
Նոյնպէս	(չէք ի վալըծոն)	Փէթիմ	Կիպրոս
(չէք ի վալըծոն)	չէք	յերկրէն քիտացւոց	(չէք ի վալըծոն)
չէք	չէք	Նոյն ընդ լ .	չէք
Փիթթիմ	ի թարկում Յոշլաթան՝ յերկրէ Փէթիմայ	Նոյն ընդ քաղդ .	յերկրէ կիտաց
Նոյնպէս	Նոյնպէս	Նոյն ընդ քաղդ .	չէք
ի կղզիս	Նոյն ընդ լ .	Նոյն ընդ հայ .	չէք
ի կղզիս Փիթթիմ	Նոյն ընդ երբ .	ի կղզիս քետացւոց	ի կղզիս Ալէթիթ
Նոյն ընդ լ .	(չէք ի վալըծոն)	Նոյն ընդ հայ .	յարտաքին կիտացւոց
Նոյն ընդ հայ . և յոյն .	ի գաւառէն Ակուլիոյ (որ է Իտալիա)	կիտացւոց	ի կղզեաց Հնդկաց

Նոյն նախաձայնութեամբ ի ձեռն հռոմայեցւոց եղև՝ որք եկին Իտալիոյ, ինչպէս որ երբայականն ալ հասկանար Փիթթիմ ասելովն. վասն զի ահա Դանիէլի մարգարէութեան մէջ ալ հռոմայեցի անուամբ բացատրուի թէ երբայականին և թէ լատինականին մէջ:

31 Ոմանք ՚ի բաբունեաց համարին թէ Յեվթայէ նուիրակա-
նապէս ոչ զոհեց իւր դուստրն՝ զնելով զնա որպէս զոչխար, այլ
՚ի միանձնաւորս ամուրի կեանք անցուցանելոյ դատապարտուե-
ցաւ: Բայց զայս կարծիս ցրէ նոյն իսկ սուրբ Գրոց խօսքն որ ա-
սէ թէ « Ժողովեին դստերք Իսրայէլի ողբալ զդուստրն Յեվ-
թայեայ գաղաադացւոյ՝ չորս աւուրս ՚ի տարւոջ » (Դատ. ԺԱ., 41):
Իսկ արդ կենդանի մարդոյ վերայ ողբս առնուլ սովորութիւն չէ:
Յովսեպոս Փլաւիոս ևս հաստատէ թէ դուստրն Յեվթայեայ
զենաւ (Հնախօս. գիրք Ե գլ. Թ):

Ե. Այս է ընդհանրապէս Սուրբ հարց կարծիքն ալ, որք ասեն
թէ Յեվթայէ իւր զաւակն զոհելով գոնէ մահու չափ ոչ մեղան-
չեց ոչ ուխտին և ոչ կատարման մէջ. վասն զի սեւսանեմբ զի
Գիրքը ևս ոչ մեղադրէնգնա. մանաւանդ թէ ՅԱստուծոյ իսկ ազ-
գեալ համարի զայս ուխտս առնելու (որպէս երևի ՚ի համարս
29 և 30), որով և գյաղթութիւնն ստացաւ. ուստի և բանաւո-
րապէս հետևցուց թէ Աստուած որ է Տէր կենաց և մահու՝ այս
պարագայիս մէջ հաճեցաւ իւր տուած օրէնքն դադարեցընել, և
թէ Աստուծոյ կամքն էր որ ինքն ալ զրած ուխտն կատարէ:

32 Աբեղեան ազգը զնուռն պոռոտ դրախտին կոչէն, զոր և
երբայեցիք իրենց կրօնական արարողութեանց մէջ գործածէին,
և իբրև զարդ զգեստուց և կահուց տաճարին:

33 Սուրբ հարք երէոյ երէցն գիրքն Տիրամօր վերայ յօրի-
նեալ այլաբանութիւն մի համարին. և զոր Յովսէփ Երբոլանի
անուամբ քահանայն՝ որ իւր արկադեան Ներալտոս կատրիմե-
նացի անուամբն աւելի ծանօթ է՝ հովուական դեղօնից վերա-
ծած է քերթողական գողտրիկ հանճարով ընդ անուամբս Սո-
նային որ և տպագրեալ է ՚ի Հռոմ յամի 1739 յարդի պղնձագիր
պատկերօք զարդարեալ:

34 « Յորժամ անձրևէ ՚ի պաղեստին, ասէ Վոլնէյ, ածն ցնծու-
թեան կատարէ ժողովուրդն՝ ՚ի մի վայր գումարեալ և ցցովք և
պարուք բարձրաձայն աղաղակելով. Օրհնեալ է Աստուած »
(Ո–ղո–ղո–ՐՒ–Ն ՅԱ–ՈՐՔ–):

35 Աղօթատեղին զոր կառոյց Եղիա ՚ի վերայ լերին Կարմելոսի՝
նուիրեալ զայն Կ–ՈՒ–Ի որ ՅՆԱՆԵԼՑԻՆ ԷՐ կոչեցաւ ԱԵՆԵԼՈՆ որ Նշա-
նակէ Նուիրեալ օգոստափառ դշխոյի, որ և է նոյն ինքն Մա-
րիամ Թագուհի երկնից և երկրի (ՊԱՏՄ–ՐՒ–Ն ԼԵՐԻՆ ԿԱՐՄԵԼՈՍ,
ՅՈՒՐԴՈ–ՐՒ–Ն ԱՐՔԻ ՄԱՐՔՍԵՐԻՆ, գլ. Լ.):

36 Այս գերահրաշ մարդարէութիւնս երկայն և դժուարա-
կնճիռն վիճից նիւթ եղև ՚ի մէջ հրէից և քրիստոնէից: Թաւունիք
որ յետ Յիսուսի Քրիստոսի մեկնաբանեցին այս խօսքս՝ ջանացին
այլայլել այնոր ապացուցական զօրութիւնն որ զերծնը դատա-
պարտէր, և մարգարէին խօսքն աղօտացուցանել ուզելով՝ ա-

սէին թէ երբայական բնագրին գործածած բառն հալմ՝ պար-
զապէս ցուցանէ զկին մանկամարդ՝ թէ և Հօթանասունքն Յու-
թարգմանած են զայն: Սակայն Հարք եկեղեցւոյ իրենց այս ա-
ռարկութիւնս քաջայաղթ կերպով հերքած են. օրինակ լմն
Սուրբն Յուստին Ոսկերերան ասէ. « Հաւատարմագոյնք են մեզ
թարգմանիչքն Հօթանասունք, որ գարու միով և աւելի յառաջ
քան զՔրիստոս Յեղին զնոսին միաբանութեամբ. ժամանակն և
թիւ և միութիւն նոցա հաւատարմագոյն ևս ընծային մեզ քան
զերբայեցւոցդ որ յաւուրս մեր՝ որք չարութեամբ կամակորեցին
զսուրբ գիրս ՚ի բազում տեղիս » (Ճառ Դ. գլ. Ա.): – Սուրբն Հե-
րոնիմոս քաջհմուտ երբայական բարբառոյ ՚ի մէջ ամենայն
թարգմանչաց և մեկնչաց սուրբ գրոց՝ ասէ. « Ոչ երկնչիմ բնաւ
թէ ոք ՚ի հրեից յանդիմանեսցէ զիս իբրև սուտակասպաս՝ ՚ի
հաստատելս եթէ բառս հալմ յամենայն տեղիս սուրբ գրոց
ցուցանէ զկոյս անարատ ամենևին և անբիծ, և ոչ բնաւ զկին
առնակին (՚ի Մեկնո–ՐՒ–Ն Եսայեայ գիրք Գ): – Լուտեր ևս որ
այնչափ ՚ի չարն վարեցաւ իւր գիտութեամբն՝ բնիկ մոլեգնու-
թեամբն գոչէ. « Եթէ հրեայ մի կամ երբայախէտ մի կայ որ
կարասցէ ցուցանել թէ հալմ բառն սուրբ գրոց որ և իցէ տեղ
հատոյ կին ցուցանէ և ոչ կոյս՝ ես հարիւր փիորինս խոստանամ
նմա » (Գոբ–Լո–ՐԻՒ հտ. Ը էջ 129): – Նոյն ինքն Մահմետ վը-
կայէ Տիրամօր կուսութեան, զի ասէ. « Եւ Մարիամ դուստր
Ամրամայ որ պահեց իւր կուսութիւնն, և մէջ յղեցաք ՚ի նա
զՀոգի մեր, և նա հաւատաց ընծայեց բանից Տեառն և գրոց նո-
րա » (Ղո–ՐԱՆ, Սո–ՐԱՒ 66. Ղուրանն 144 սուրաթս կամ գլուխս
բաժանի):

37 Ցնաս՝ որ և կոչի Իսայի որդի էր Ովբէդայ, հայր Դաւթի,
որոյ յիշատակն յոյժ յարկի է առ հերբայեցիս՝ և համարին
զնա այր կատարեալ արդար:

Ջ. Այս հաստատութեամբ ազգային յեկեղեցական երդոյ և չա-
րականաց մէջէն ինչ որ Սրբոյ կուսին համար գովաբանական
մակդիրներ տրուած է Սուրբ գրոց նմանութեամբ, որ և սիրուն
վինջիկ մի ձևանայ կարծեմ ոչ անհաճոյ յաչս Սիրամօրն ՚ի բաղ-
մաբուրեան բուրաստանէ Հայաստանեայց եկեղեցւոյ քաղեալ.

Ազատիչ յանցանաց նախամօրն. — Աթոռ փառաց յերկ-
րի. — Աթոռ փրկութեան. – Աթոռ քերովբէական. — Աղա-
խին և մայր կենաց. — Աղբիւր անսպառ լուսոյ. — Աղբիւր ծա-
րաւեաց. – Աղբիւր կենաց բղխեալ յեդեմայ. – Աղբիւր կնքեալ
ջղոյն կենդանութեան. – Աղբիւր յորդառատ. – Անենագովելի և
քան զերկինս բարձրագոյնի. – Անենասյայտառ բերկրեալ միշտ
կոյս. — Անենօրհնեալ աստուածամայր Մարիամ. — Անենօրհ-
նեալդ ՚ի կանայս. – Անենօրհնեալ սրբուհի. – Անմեղ թեթև յեր-

կրային ցանկութեանց. – Ամպ թեթև և լուսաթին. – Ամպ թեթև և լուսաւոր. – Ամպ թեթև ցօղեալ՝ի մեզ զարդարութիւն. – Ամպ լուսեղէն. – Ամպ հովանաւոր. – Ամպ հովանի. – Այգի վայելուչ. – Անապական անարատ կոյս Աստուածամայր. – Անապական և միշտ կոյս. – Անապական տաճար. – Անարատ տաճար անվայրապիկ բանին. – Անարատ տաճար, բնակարան անբաւ Աստուծոյ բանին. – Անարատ տաճար տնօրէնութեան. – Անգաստան մաքուր՝ի փշոց մեղաց. – Անդաստապարտ շառաւիղ. – Անթառամ ծաղիկ. – Անխիզել լուծիչ և քաւիչ մեղաց. – Անկիզելի մորենի. – Անհաս տնօրէնութեան մայր. – Անհարսնացեալ մայր. – Անհարսնացեալ Մարիամ. – Անձեռաւոր տաճար. – Անձրև կենաց. – Անճառելի լուսոյ մայր. – Անսկզբնական բանին Հօր բնակարան. – Անտանելի բանին բարձող. – Անտանելոյն տաղաւար. – Ապաւէն մեր և կոյս. – Առագաստ անճառ բանին. – Առագաստ անճառելոյ բնակողին. – Առագաստ լուսոյ. – Առագաստ հրաշալ ծագմամբ. – Առագաստ վեհապացեալ բանին. – Առաւօտ խաղաղութեան. – Արարողին երկնի և երկրի տաճար և առագաստ. – Աստուածածնին անարատ կոյս. – Աստուածածնին անարատ մայր Տեառն և կոյս սուրբ. – Աստուածածնին անհարսնացեալ, յերկրէ յերկինս հարան ընծայեալ. – Աստուածածնին յոյս և ապաւէն. – Աստուածատունկ խնկաբեր ճառ յանուշահոտ բուրաստանէն. – Աստուածորդւոյ մայր. — Այն զոր ծանեաւ Գեդէոն. — Արևելք արեգականն արդարութեան. — Արևելք գերարփին. — Արևելք խմանալի. — Արմատ տնկոյն անմահութեան. — Արուսեակ զուարթարար:

Բանաւոր բարուննակ համեղաճաշակ պտղոյն: — Բանաւոր երկիր. — Բանին բարձող. — Բանին բարձող որ զամենայն կրէ զօրութեամբ. — Բանին հօր մարմնաւոր, և առագաստ բնակութեան. — Բաշխող բարութեանց. — Բարեբեր բոյս բարի. – Բարձող անիծից. — Բարձող էից բարձողին. — Բարձող սըրտմտութեան նախամօրն Եւայի. — Բարձրագոյն սերովբէից. — Բարձրելոյն հովանացեալ զօրութեամբ. – Բարունակ ծաղկեալ բնակ հրեղէն աստուածութեան. — Բնակարան անբաւ բանին Աստուծոյ. — Բնակարան անսկզբնական բանին Հօր. — Բնակարան անսկզբնակից Որդւոյն. — Բնակարան աստուածութեան. – Բնակարան աստուածային ներմարդութեան. — Բնակարան բանին. — Բնակարան բանին Աստուծոյ. — Բնակարան եկաւորութեան. — Բնակարան հոգւոյն սրբոյ. — Բնակարան և առագաստ արարչին. – Բոլորից փրկութեան մայր:

Գանձ անապական. — Գանձ կենաց աստուածային. — Գաւազան ծաղկեալ յարմատոյն Ցեսսեայ. — Գեղ մարգարտափայլ: — Գեղմն ընդունիչ զցօղն երկնային. — Գեղմն իմանալի զոր ետես Գեդէոն. — Գերագոյն երկնից խորան և առագաստ. — Գերագոյն քերովբէից. – Գերահրաշ ծաղիկ բուրեան Եդեմայ. — Գրաւական կենաց մարդկան:

Դառնաճաշակ պտղոյն քաղցրացուցիչ. — Դուռն երկնային. — Դուռն երկնից. — Դուռն ընդ որ եմուտ բանն Աստուած. — Դուռն կնքեալ. — Դուռն փակեալ. — Դուստր Դաւթի թագաւորի. — Դուստր լուսոյ. — Դրախտ աստուածային և Արևելք իմանալի:

Երանելիդ ամենեցուն. — Երկին վերագոյն. — Երկիր բանաւոր արեգական օծմարան. — Երկնաբերձ աշտանակ ձոյլ ոսկի. — Երկնային դուռն աստուածային. — Երկրպագեալ յանմարմնական զօրաց. — Երջանիկ կոյս. — Եօթնարփեան ընտրհաց հոգւոյն ընդունարան:

Ջանապական կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի եկեղեցի. — Ջուգաթիւ աւուրց դարուց անցաւորաց. — Ջօրութեամբ բարձրելոյն հովանաւորեալ:

Էին ասեն:

Ընդունարան եօթնարփեան շնորհաց. — Ընդունող լուսոյ. — Ընտրեալ յառաջ քան զհիմունս աշխարհի:

Թարգման աստուածութեան:

Ի լիբանանէ դիմեալ հարսն. — Իմանալի Արևելք — Իմանալի բանաւոր տախտակ օրինաց. —

Լայնածաւալ տեղի անպարագիծ էին. — Լեառն վիմածին. — Լոյս լուսոյ մայր. – Լուծիչ երկանց Եւային. – Լուսեղէն տաճար Աստուծոյ բանին. — Լուսոյ մայր և կոյս. — Լուսոյն աշտանակ:

Խարիսխ յուսոյ հաստատութեան. — Խորանայարկ կամարանման յօրինեալ. — Խորան և տաճար Աստուծոյ բանին. — Խորան լուսոյ. — Խորան լուսոյ անվայրապիկ արփւոյն կենաց. — Խորան հոգւոյն սրբոյ. — Խորան սրբութեան. — Խորհուրդ կենաց. – Խորհրդաւոր խորան բանին:

Ծագող արեգականն արդարութեան. — Ծագումն արեւու. – Ծաղիկ անթառամ. — Ծաղիկ դաշտաց. – Ծառ կենաց ծաղկեալ. — Ծառ կենաց որ զանմահութեան պտուղն ետուր. — Ծառ կենաց անկեալ յԱգին. — Ծիրանազգեաց կոյս. – Ծնող Արարչին. – Ծնող և աղախին Տեառն:

Կատարումն մարգարէից. — Կենարար բանին բնակարան. — Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտի. — Կոյս ամենասուրբ. — Կոյս անապական. — Կոյս անարատ. — Կոյս անհարսնացեալ. — Կոյս Աստուածորդւոյ մայր. — Կոյս բերկրեալ. – Կոյս երջանիկ. – Կոյս և մայր և բնակարան՝աստուա-

ծային ներմարդութեան. — Կոյս յետ ծննդեան. — Կոյս սուրբ. — Կոյս սրբուհի. — Կուսին նախնոյ մօրն Եւայի՝ բարձան անէծքն տրտմական, քո սուրբ ծննդեամբ կոյս Մարիամ. — Կուսութեանց մայր. — Կուսութեանց պարծանք:

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ. — Հանդիստ աշխատելոց. — Հարան անփորձ. — Հարան երկնաւոր. — Հարան երկնային. — Հարան երկնից. — Հարան զգեցեալ զարեգակն արկեալ զբե. — Հարան ընծայեալ յերկրե յերկինս. — Հարան 'ի յերկրե երկնից. — Հիմն եկեղեցւոյ. — Հոգւոյն սրբոյ տուն և տաճար. — Հողմնխութեայ տաճար փառաց. — Հոտ անմահութեան ծննդոց Եւայի:

Ճանապարհ արքայութեան. — Ճեմարան Բանին Աստուծոյ. — Ճշմարիտ արեւելք Արեգականն արդարութեան:

Մայր անարատ. — Մայր անարատ անհայր ծննդեան. — Մայր անարատ Իմմանուէլի. — Մայր անճառ լուսոյն. — Մայր անտանելոյն. — Մայր Աստուծոյ. — Մայր Բանին. — Մայր Բանին ծնող. — Մայր Բանին անտեսութեան. — Մայր և աղախին Փրկչին մերոյ. — Մայր և բնակարան աստուածութեան. — Մայր և կոյս աղախին Քրիստոսի որ բարեխօս ես միշտ աշխարհի. — Մայր և յետ ծննդեան մնալով կոյս. — Մայր լուսոյ և առագաստ Աստուծոյ Բանին. — Մայր լուսոյ Մարիամ. — Մայր խաչելելոյն. — Մայր կենաց. — Մայր կենդանութեան. — Մայր կուսութեան և յղութեան լուսոյ. — Մայր հաստատութեան մարդկան. — Մայր միածնին. — Մայր սուրբ անարատ լուսոյն. — Մայր վերածողին. — Մայր Տեառն. — Մայր Քրիստոսի. — Մարգարէից հանդիսարան, գրաւական կենաց մարդկան. — Մարգարիտ լուսափայլ, հոգւոյն սրբոյ տուն և տաճար. — Մարգարտատեսիլ և ծիրանազգեաց հրաշալափառազգին կոյս. — Մարգարտափայլ սուրբ կոյս. — Մարիամ անհարանացեալ. — Մաքուր աղաւնի. — Մաքուր և անբիծ կոյս. — Մաքուր ծնող վեսայի. — Միածին Որդւոյ բնակարան. — Միամայր Մարիամ. — Միայն կուսութեանց մայր. — Միայն օրհնեալդ 'ի կանայս. — Միշտնորդ Աստուծոյ և մարդկան. — Միշտնորդ օրինաց և շնորհաց. — Մորենի անբոցակեզ. — Մորենի անկեզ. — Մորենի անկիզելի. — Մորենի վառեալ որ ոչ այրէր. — Մորենի Մարիամ:

Յարուցելոյն 'ի մեռելոց բնակարան մայր և կոյս. — Յերկրէ յերկինս հարան ընծայեալ. — Յոյս հաստատութեան. — Յոյս և փրկութեան Մայր. — Յոյս մեր և ապաւէն:

Նախամօր երկանց բարձող. — Նախաստեղծին ծնունդ. — Նիւթեղէն սրտիզբ. — Նմանող երկնից. — Նորատունկ բուրաստան. — Նոր խառնարան հրաշալի նոր խառնման. — Նոր խոբան Արեգական արդարութեան. — Նոր տաճար անճառ լուսոյն:

Շառաւիղ օրհնութեան. — Շնորհ աշխարհի. — Շուշան հովտաց:

Ուրախութիւն աշխարհի. — Ուրախութիւն երկնի և երկրի. — Ուրախութիւն հրեշտակաց. — Ուրախութիւն տրտմեցելոց լնութեանս:

Պայծառ երկինք. — Պայծառ քան զերկինս. — Պարգև բընութեանս. — Պարծանք ազգի մարդկան. — Պարծանք եկեղեցւոյ. — Պարծանք և մայր հաստատութեան մարդկան. — Պարծանք կուսութեան. — Պարտեզ փակեալ աստուածատունկ Եդեմ. — Պսակ կուսից Տիրամայր:

Սափոր ոսկեղէն. — Սափոր ոսկի երկնային հացին. — Սափոր ոսկի երկնային մանանային. — Սերովբէ հողեղէն. — Սիւն լուսոյ. — Սիւն հրեղէն. — Սիւք հանդարտ. — Սուրբ սրբոց. — Սպասաւոր անճառելի ծննդեան. — Տեղեաղոլն մայր և հնութեան կերպի նորոգողին. — Սրբուհի Մայր Քրիստոսի:

Վառարան աստուածային բոցոյն. — Վերովբէից սերովբէից և բազմաչեայ քերովբէից. — Վերընկալ աստուածային բանին. — Վերադարձիր 'ի սրովբէից:

Տաղաւար արբահամեան աստուածընկալ. — Տաղաւար հոգւոյն. — Տաճար անապական. —. Տաճար անեղ Բանին. — Տաճար անխախտելի. — Տաճար Բանին Աստուծոյ. — Տաճար և առագաստ արարողին երկնի և երկրի. — Տաճար լուսոյ անբծութեանն. — Տաճար լուսոյ մայր. — Տաճար ընդհանուր լուսոյն. — Տաճար սրբութեան անճառ լուսոյն. — Տաճար սքանչելի արդարութեան. — Տապանակ աստուածային ուխտի կըտակարանաց. — Տապանակ կտակարանաց. — Տապանակ կտակի Բանին. — Տապանակ ապրեցուցիչ. — Տեղի անտանելի լուսոյն. — Տեղի անտանելի Բանին. — Տեղի իմման. — Տիրամայր Աստուածածնին. — Տիրամայր սրբուհի կոյս. — Տումար անճառ անքնին. — Տուն և տաճար Հոգւոյն սրբոյ. — Տուն տընօրէնութեան.

Ցանկալի զուարթնոց. — Ցանկալի կուսից. — Ցաւագին մայր Տեառն. — Ցող քաղցրածաւալ:

Փափկութեան դրախտին բացող բանալի. — Փրկող կենդանութեան ազգի մարդկան:

Քաղաքավարեալ 'ի մարմնի անարատ վարուք. — Քան զարեգակն պայծառագոյն. — Քան զերկինս բարձրագոյն. — Քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց. — Քրիստոսի բարձող. — Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ. — Քրովբէական աթոռ արարչին մերոյ: — Քերովբէ հողեղէն:

Օդնական և շնորհ աշխարհի. — Օթարան արեգական. — Օթարան լուսածին. — Օրհնեալ ես կոյս տաճար մաքրեալ. — Օրհնեալ 'ի կանայս. — Օրհնէիւ Եւայի:

38 Շուշան ծաղիկն որ առ երբայեցիս ասի ջլեն կամ լե-
նա ուսսի և թուրքերէն սուսէն կամ սուսամ և պմպակ ծանօթ
է ամենեցուն իւր սպիտակափառ գեղեցկութեամբն և քաղց-
րաբոյր հոտովն, որով և անարատ մաքրութեան և անմեղու-
թեան նշան համարեալ՝ կնոջ յատուկ անուան տեղ ալ բանի:
Ղաւնիք այս ծաղկիս համար ասէին թէ վկայ դիւթութիւն-
ներն և ախտական ծարաւներն ցրուէ և վտանգներն հեռացնէ:
Յուդիթայ համար ասի թէ Հողոփեռնէսի բանակն և վրանն ան-
երկիւղ մտնելու համար՝ շուշան ծաղկանց պակ կրէր ի գլու-
խըն՝ որ նորա արեամբն ներկաւ (Մէնուպէն բոքոնէոց ի
Էէր- Յոպէյ):

ԳԼՈՒԽ Բ.

Ա.հարատ յղութիւն Մարմնոյ.

Ա.յն կէտն որ ի յաւիտենից նախասահմանեալ էր՝ մարդկային բնութիւնս աստուածացնելով՝ աշխարհիս փրկութեան առիթ լինելու և ընդունելու յանարատ արգանդն զՈրդին Ա.ստուծոյ՝ զոր երկինք և երկիր և ծով համատարած ոչ կարեն տանել, այն կէտն որուամ աշխարհիս ստեղծագործութենէն ի վեր ամենայն արարածք սպասէին, և զոր Ա.ստուած ինքնին յայտնեց գրախտին մէջ, և որ վախճան և նպատակ սահմանեալ էր բովանդակ այն սուրբ սերնդեան որ նահապետաց ժամանակէն սկսեալ միրաւ յաջորդեցին [1], այն կէտն ասեմ հատարակ կէտն մի չէ կարող լինել. այլ հարկ է որ մարդկային բնութենէ գերազանց ձրիւք ճոխացեալ լիցի: Ա.հա ասիկ Մարիամու անարատ յղութեան վարդապետութիւնն ալ այս մեր առինքն ունեցած յարգութենէ յառաջ գայ: Վասն զի մեք գժբաղդ նախահօր զաւակներն և յաջորդն լինելով, և ապստամբ հօր յանցանօքն անարգեալք և անկեալք յառաջնի պատուոյն, և իր դատապարտութեան վճռովն անչքացեալք, փոխանակ չնորհակ կեանքն ընդունելու՝ ընկալաք զմահ մեղաց, և սարսափելի ճակատագրով մի՝ ծնանելէ յառաջ դատապարտեալ եմք: Ա.յս գժբաղդութիւնս՝ որ յարակից է մարդկային ցեղին՝ որ ի ծագման անդ իւրում ընդ անիծիւք անկաւ՝ որպէս մարդ մի ևեթ նկատուելով, այս գժբաղդութիւնս ասեմ ամենեցուն հաւասար է, և Ա.ուրբ գիրք ոչ զոք յորդոց Ա.դամայ՝ յայնմանէ աղատ համարին. բայց հաւատացելոց բարեպաշ-

թուԹիւնն ոչ երբէք կարաց համոզուիլ՝ որ Աստուածոյ Մայրն ալ ենԹակայ եղած լինի այս անարգական գառակնքոյս՝ որ գրոշմէ ՚ի մէջ դժոխոց խարանադրոշմն յարգանդի անդ մօր մերոյ. և միշտ այս կարծիքս պաշտպանեցին Թէ գերագոյն Դատաւորն իւր անողոքելի օրինաց վճիռն և հետևանքն դագրեցուցած է Մարիամու նկատմամբ՝ որ աշխարհ եկին առ ՚ի մանկակից լինիլ կատարման աստուածային անհասանելի և ՚ի յաւիտենից ծածկեալ խորհրդոյն՝ որ է մարմնաւորուԹիւն Բանին Ա։ Եւ որչափ ալ Ա֊հեռարանք այս նիւԹոյս վրայ լռեն, սակայն հանրական հաւատք մի գործած է որ կայսն ՚ի պատիւ գերահրաշ մայրուԹեանն առ որ սահմանեալ էր՝ պահուած է այն սարսափելի անդնդոց եղերայ վերայ՝ զոր մեր նախահարք մահագոյժ անհնազանդուԹիւնն մեր ոտից նեբքև բացաւ, և զի իւր յղուԹիւնն ալ այնպէս անարատ եղած է՝ որպէս իւր բովանդակ կեանքն [2] Բ։

Եւ սակայն այս կարծիքս՝ որ Կուսամօր պատուոյն և մեր իսկ սիրոյն այնչափ յարմար կուգայ՝ միչին դարու ժամանակներն իւր հակաԹոյներն ունեցաւ հզօր մարդիկ, որք լմաստուՆք և գիտուՆք և աստուածառաքք անուանիք և եռանդուն սիրողք Մարիամու, որպիսիք էին սուրբն հարք Բեռնարդոս, Բոնավենտուրա, Թովմաս ագուինացի, մեծն Ալբերտոս և այլք։ Բայց և այնպէս առ կայսն եղած հաւատքն և եռանդն յորում յոյնք առաջին համարին, չաղԹեց նոցա կարծեացն. և այն որ գպրոցական վարդապետաց արծուատես չաչացն վրիպած էր՝ պարզամտաց չայնուեցաւ։ Նորին քննուեցան առաքելոց և հարց գրուածքն, մանրակրկիտ և խղճամիտ հետազօտուԹեամբ չայտնուեցան՝ ինչ որ նոքա գարուց ՚ի գարս աւանդել էին Կուսին բարեմասնուԹիւնք, և այս հետազօտուԹիւններէս պայծառ լոյս մի ծագեցաւ այս

նիւԹոյս վերայ՝ որ Տիրամօր պատմուԹեան մէջ մուԹ կէտ մի էր համարուած։

Եւ չիրաւի մինչև առաքելոց ժամանակն ՚ի վեր եԼնեԼով՝ տեսանեմք որ Մարիամու առնիւատուրք և անարատ անուններն կը տրուին [3] Գ. և Աբգիտաս բաբելոնացւոյն չիշածին համեմատ՝ Ս. Անդրէաս առաքեալ այսպէս խօսի Աստուածամօր վերայ. « Որպէս առաջինն Ադամ արարաւ ՚ի հողոյ որ չև եր անիծեալ, այսպէս և երկրորդն Ադամ յօրինեցաւ ՚ի կուսական հողոյ՝ որ ոչ քնաւ անկաւ ընդ անիծիւք »։

Սուրբք և վկայք որ եղեն երրորդ գարուն մէջ որպէս Ս. Իպպոլիտոս, Ս. Գրիգոր Նեոկեսարացի, Որոգինէս, Ս. Դիոնեսիոս Ալեքսանդրացի միշտ անգրուր և անարատ անուամբ չիչեն զՍ. Կոյսն։ Իսկ Ս. Կիպրիանոս աւելի ճշդուԹեամբ այսպէս գրէ. « Խոիր մեծ է ընդ Կոյսն և ընդ այլ մահկանացուս. քանզի բաց ՚ի քնուԹենէն չիք ինչ նորա ընդ նոսա կցորդուԹիւն. օտար ամենևին ՚ի յանցանաց »։

Զորրորդ դարու մէջ Ս. Բասիլիոս և Եպիփան նոյն պատիւն ընծայեն Մարիամու։ Ս. Ամբրոսիոս նմանեցուցանէ զնա « Իբարուհակ գեղաղէշ և լուսապայծառ յորում չիք ոչ վարակ սկզբնական մեղաց և ոչ կեղև ներգործական յանցանաց ». և Ս. Հերոնիմոս նմանեցուցանէ զնա « Յամպ տուընչեան՝ որ ոչ քնաւ գիտաց զնաւար » ե Սաղմոսի այն խօսքին վրայ որ առ Աքրիսորդեաց նոցա առիպով ՚ի տուէ։ Կրիսիպպոս ոմն երէց Երուսաղէմի որ շատ չին հեղինակ մի է ասնարատ անուն տալէն եաև Մարիամու՝ յաւելու. « Զիք ինչ նորա հասարակ ընդ ազգին իւրոյ Թիւրեղոյ, նա որոյ քնուԹիւն ազատ է ՚ի կշտամբանաց և ՚ի մեղաց, և նման է վարդենւոյ անկեղծ յանդաստան փշալից »։

Ս. Յովհան Ոսկեբերան կոչէ զկոյսն ամենասուրբ, անարատ, երանելագոյն քան զամենայն արարածս և փառաւորեալ տայր Աստուծոյ։

ի հինգերորդ դարու Ս. Ագաթինոս և ոչ իսկ հանդուրժէը՝ որ սկզբնական մեզաց վերայ խօսուած ժամանակ՝ Մարիամու անունն անգամ՝ ի բերան առնուի. և գիտեմք բան է որ այս ասացած ժամանակ ինքն Պետրոսեանց գէմ պաշտպաներ սկզբնական մեզաց վարդապետութիւն։ — Ս. Յովհան Ոսկիբան ալ հաստատէ թէ « Արդեամբ Մարիամու փրկեցաւ մեռեալն »։ — Ս. Փուլգենտիոս՝ի սկիզբն վեցերորդ դարուն ասէ թէ « Ս. Կոյսն ամենեին ազատ եկաց յառաջնոյ գատակնքոյն »։ — Ս. Յովհան Դամասկոյի ուղեգրորդ դարուն վերջերն Կուսին յղութեան վերայ խօսելով՝ առարք և աւետարան կոչէ զայն ասելով. « Ամենեին գեղեցիկ ես ով Մարիամ. ամենեին գեղեցիկ ես ի յղութեանդ. զի առ ի լինել տաճար Աստուծոյ սահղծար, և արտա մեզաց ոչ երբեք զնոփիդ քոյ վարակեաց ոչ մահուչափն ոչ ներելին և ոչ սկզբնական »[4]։

Մարիամու անարատ յղութեան նկատմամբ այս զղեցայշար վկայութիւններս յանկարծ գտագարին յարևմուտս իններորդ դարէն սկսեալ մինչև ցչորեքտասաներորդ դարու սկիզբն. սակաւք ոմանք արք համբաւաւորք՝ ի նպաստ կարծեցս գրեցին, իսկ բազումք գիտութեամբ և սրբութեամբ գերազանց՝ հակառակն ճառեցին։ Բայց փոխանակ այսմ երանելւոյ Կուսին յղութեան ուսմն նոյն առեներն շատ տեղութեանց մէջ հաստատուեցաւ նաև յարևմուտս՝ որ յարևելս է գարէն՝ի վեր արդէն հաստատեալ էր։

Հենրիկոսի առաջնոյ Անգղիոյ թագաւորին և Նորմանդիոյ դքսին արքայութեան ժամանակ՝ Ռուան քաղքին մէջ տարօրինակ հանդիսութեամբ կատարուէը այս ուսմն. և այն առենի ժամանակագիրք հաստատեն թէ յառաջ եկած է Սրբոյ Կուսին երևմանէն առ արեղայ ոք երկիւղած և արժանահաւատ՝ զոր հրաշիւք ազատեալ էր սարսափելի նաւակոծու-

թենէ։ Եւ հին պատմութիւններն հաստատեն թէ նոյն քաղքին երևելիներն ընկերութիւն մի հաստատեցին՝ որ տարուէ տարի ծանրագին մրցանակներով վարձատրէին որ և իցէ լեզուաւ գրուած ճառական և քերթողական գրուածներն՝ի պատիւ Կուսին։ Այսպէս ընորհօք բերկրեալ Տիրամայրն բանաստեղծութեան կենդանանալոյն ալ պատճառ լինէը, և իւր անարատ յղութիւննիւթմատակարարէը քերթողաց։

Կուսամօր անարատ յղութեան ուսմն՝ի Նորմանդիոյ՝ ծագէ անցնելով՝ հաստատեցաւ Անգղիա որ այն առեն ուղղափառ էր, և իւր իշխանազունքն և պարոնք խորին յարգանօք մեծարէին զՏիրամայրն։

Նոյն առեններն այս ուսմս հաստատէը նաև՝ի գաւառն Լուգդունի. թէ և Սուրբ Բեռնարդոս յանգիմանէը զկանոնիկոսս Լիոնի՝ որ առանց առաքելական աթոռոյն խորհրդակցութեան կատարէին զուսմն անարատ յղութեան[5]։ — Բարիզու հայրապետ մի Պանոլիոս անուամբ՝ի վախճանեն յամին 1288 մեծագումար կտակ ձգեց առ՝ի հաստատել զժամերգութիւն անարատ յղութեան Կուսին։

1394 ին Արագոնայի թագաւորն Յովհաննէս Ա. արքունի հրովարտակաւ անարատ յղութեան ուսմն հաստատեց Սպանիոյ ամենայն գաւառաց մէջ՝ որ Սարակինոսաց լուծն թօթափել էին, ասելով որ իւր նախորդներն ալ յառաջ քան զինքն նոյն ուսմն փառաւորապէս կատարէին՝ի յիշատակ գթութեանց Տիրամօրն։ Կարեմք ասել որ այս հրովարտակս Մարիամու թագին ամենէն գեղեցիկ գոհարներէն մին է՝ որ և արձանագրեալ է՝ի գիրս առանձնաշնորհութեանց թագաւորութեան Վալենցայի 1394 ամին։

Թէպէտ և երկար ժամանակ արգիլուած էր բեմբէն և գպրոցաց մէջ անարատ յղութեան վերայ վարդապետելն, սակայն շատ կրօնական միաբանութիւնք և մանաւանդ Փրանկիսկեանց Ոհան[6] նոր եռան-

դեամբ զայն արծարծել սկսան, և բանիւ և գրով հրապարակաւ զայն դաւանէին, և այնպիսի հզօր և յաղթահարիչ վաստերով զնոյն հաստատէին որ ոչ միայն հաւատացելոց բազմութիւնն՝ այլ և եւրոպիոյ ուսումնական ընկերութիւնք եռանդեամբ զայն ընկալան. ինչպէս Բարիզու Սորպոնի աստուածաբանութեան գպրոցին վարդապետք 1576ին ժողով մի գումարելով՝ հրատարակեցին որ Կուսին անարատ յղութիւնն իրենք հաւատոյ մասն համարէին. նոյն վարդապետներն ուրիշ վճռոյ մէջ ասէին՝ որ իրենց նա խորհրդոյ հետոցն հետևելով պարտաւորէին զանձինս երդմամբ այս կարծիքս պաշտպանելոյ. հաստատելով և յայտարարելով որ յայսմհետէ ոչ ոք իրենց կաճառին անդամակցի՝ մինչև որ իրենց պէս երդում չտայ բոլոր կենաց մէջ պաշտպան կալու անարատ յղութեան վարդապետութեանն: Նոյնն արարին Լեոյ նաև Մակոնցայի, Ռոլոնիայի, Վալենցայի, Ալքալայի, Ռոմպերայի, Սալամանքայի և Նափոլիի համալսարաններն:

Ֆրանկիսկեանք սկսան ոտնախմբել զայն տուրք և անարատ յղութեան անուամբ, և ժամերգութեանց մէջ յիշատակել ըստ հնոյ հզօր Մարիամ աղաւ պահուած էր սկզբնական մեղաց արատաւորութենէն: Սուրբ Ադոռն ալ ոչ միայն թոյլ տայր այս ոտնս կատարելու՝ այլ և յայտնապէս ձեռնտու լինէր նոյն առանձնաշնորհութիւններն և ներողութիւնները ընծայելով ինչ որ Ամենասուրբ Հաղորդութեան տօնին համար սահմանուած էին:

1618ին Նափոլիի փոխարքայն և բոլոր պալատականք և զինուորք Ադոռ Տիրամօր եկեղեցւոյն մէջ ուխտ եդին հաւատալու և պաշտպանելու զանարատ յղութիւն Կուսին: — 1624ին Նէվէրի դքսին ասպետական կարգն Հռոմայ մէջ հաստատուեցաւ ընդ անուամբ Ասպետք անարատ յղութեան Կուսին:

Նմանապէս քանի մի ժողովք պաշտպանեցին այս վարդապետութիւնս ինչպէս Բասիլէայի ժողովն որ 1429ի սեպտ. 21ի գումարման մէջ այսպէս ասէ. «Սուրբ ժողովոյս մէջ գժուարին վէճ մի ծագեցաւ վասն Կուսին Մարիամու Տիրամօր յղութեան վերայ՝ և իւր սրբացման սկզբնաւորութեան նկատմամբ, յասել ոմանց թէ իւր հոգին առ սակաւ մի ժամանակ կամ գոնէ առ վայր մի սկզբնական մեղաց ենթակայ եղած է. և այլոց ջնակառակն պաշտպանելով՝ թէ Աստուծոյ սէրն զոր ունէր առ Կոյն նախահաման հասած է յառաջնում իսկ վայրկենի ստեղծման, և զի Բարձրեալն որ զնա արարչագործեաց, և Որդին որ ընտրեաց զնա լինել իւր մայր՝ի վերայ երկրի՝ ճոխացուցին զնա առանձինն և տաբօրինակ շնորհօք. և զի Քրիստոս փրկանաւորեաց և զնա գերագոյն լիու և սեպհական եղանակաւ պահելով՝ի սկզբնական արատոյ և սրբացուցանելով անդէն յառաջնոյ վայրկենէ յղութեանն, (որով եղև և Փրկիչ նորին ոպէս և ամենայն մարդոյ): Ուսաի խոհեմութեամբ քննելով այն պատճառներն և երևելի արանց վկայութիւնները՝ որ շատ տարիներէ՝ի վեր յերկուց կողմանց յառաջ բերուած են այս սուրբ ժողովոյս հրապարակական գումարմանց մէջ, և ուրիշ շատ բաներ աչնկատելովնոյն նիւթոյն վերաբերեալ, և զամենայն ինչ կշռելով և կատարեալ եղանակաւ խորհրդածելով՝ որոշեմք և հրատարակեմք՝ թէ այն վարդապետութիւնն որ ուսուցանէ թէ փառաւորեալ կոյս Մարիամ Աստուածամայր՝ մանաւանդ նախասիւնահաժաման և գործունեայ ընտրեալ՝ ոչ բնաւ ենթակայ եղած է ներգործապէս սկզբնական մեղաց, այլ մանաւանդ թէ ինքն եղած է միշտ սուրբ անարատ և աղաւ յոր և է սկզբնական և ներգործական մեղաց, այսօրինակ վարդապետութիւնս ասեմք է բարեպաշտական, համեմատ պաշտամանն Եկեղեցւոյ, կաթողիկէ

հաւատոց, ուղիղ բանի և Սուրբ գրոց. և այսպէս լինելոյն համար պէտք է որ ամենայն ուղղափառք նոյնպէս գաւանին և ընդունին. այնպէս որ յայսմ հետէ ոչ ումեք օրէն լինի զհակառակն քարոզել և ուսուցանել: Դարձեալ նորոգելով անարատ յղութեան հաստատեալ ծոնն՝ որ վաղեմի և գովելի սովորութեամբ կատարի յ'8 Դեկտեմբերի ն թէ 'ի Հռոմ և թէ յայլ եկեղեցիս, մեք կամիմք և հրամայեմք որ այս ծոնս կատարուի նոյն օրն անուամբ Ցղութեան Սուրբ Կուսին յամենայն եկեղեցիս 'ի մեծաստանս և 'ի վանորայս կաթողիկէ կրօնիդ, և զի հաւատացեալք յայտնեսցեն զուարախութիւն իւրեանց երգովք օրհնութեան և ցնծութեան»: Ժողովն յաւելու ևս նե-րողութիւնս այս հանդիսութեանդ օրն:

Հարք Ժողովոյն Տրիտենդի բացայայտ կերպով հրատարակեցին որ սկզբնական մեղաց նկատմամբ իրենց տուած վճռոյն մէջ՝ ոչ համարին իմանալ զնաքատ և զերանեալ Մայրն Աստուծոյ ասելով. «Սուրբ սիւնհոդոսս յայտ առնէ՝ զի ոչ համարի 'ի վճռիս յայսմ յորում բանք լինին զսկզբնական մեղաց, իմանալ զԱստուածամայրն երանեալ և ԱՆԱՐԱՏ[7]»:

Եկեղեցւոյ մէջ երկու կողմնակցութիւնք կային այս գժուարահնձիւն խնդրոյս վերայ. և յերկուս կողմանս ևս կային երևելի վարդապետք և հռչակաւոր աստուածաբանք: Ոմանք համարէին եկեղեցւոյ վարդապետութիւնն զուտ որպէս և էր ջատագովել՝ վասնգաւ իսկ նովին անկանելոյ յանխոհեմութիւն և գիտելոյ առաւել քան զարժանն. իսկ այլք մեծային զանիւք պնդէին պաշտպանել Տիրամօր առանձնաշնորհութիւնն ևս:

Սուրբ աթոռն առջի բերան ազատ թողուց աստուածաբանական հակաճառութիւնն, և իւր գերագոյն և երկայնամիտ իմաստութեամբն հշեաց երկուց կողմանց հաստատութեան պատճառներն. և հանդարտութեամբ քննելով Հարց և նախկին վարդապետաց կարծիքն՝ մեծ չափանականութիւն գտաւ 'ի նպաստ զերազանց առանձնաշնորհութեանն՝ զոր այլք կամէին կապել 'ի Սրբոյ Կուսէն, յորում և սեանէր առաքելական աւանդութեան ճառագայթարձակ անդրադարձութիւնն. և այն առենէն ինքն ալ հակամիտ եղեւաւ անարատ յղութեան պաշտպաններուն. որով և Ֆեստոս Դ վերահաստատեց այս տօնս. իսկ քահանայապետքն Պաւղոս Ե և Գրիգոր ԺԵ ոչ միայն արգիլեցին այսնիւթոյս վերայ հրապարակական հակաճառութիւններն, այլ և առանձին խօսակցութիւններն՝ հակառակ խորհրդոյ անարատ յղութեան: Սակայն Ս. Աթոռն իւր սովորեալ խոհեմութեամբն ոչ կամեցաւ վճռաբար գատապարտել հակառակ կարծիքն՝ 'ի պատիւ երևելի արանց և սրբոց որ ներհակ կարծեաց կողմն էին. և ոչ երբեք թոյլ տուաւ որ այն կարծիքն հերետիկոսական յանդուգն կամ գայթակղական կոչուի, և ոչ իսկ սխալական. այլ բաւական համարեցաւ անարատ յղութեան վարդապետութեանն համոզել զամենեսին. քանզի գիտելով որ կաթողկէական բարեպաշտութիւնն կարօտութիւն չունէր այլ աւելի կերպական որոշողութեան՝ առ 'ի ընծայել Մարիամու զայն ամենայն փառս և զպատիւ որ իր մեծավայելչութեանն արժանաւոր էին, իրեն որ Մայր է գթութեան և Աղաստան մեղաւորաց, և զոր եկեղեցին ընծայէ մեզ որպէս Միջնորդ և Բարեխօս առ Յիսուս Քրիստոս:

Այս գաղիս ժամանակ մեծարգոյ ձայն մի լսուեցաւ, ձայն Պօսիւէի վսեմական հաւատոյ որ եղ կանգնեցաւ 'ի պաշտպանութիւն Սրբոյ Կուսին. «Աշնարատ յղութեան կարծիքն, ասէ ինքն, ոչ գիտեմ որպիսի զօրութիւն մի ունի՝ որ զպաշտօնասէր հոգիս համոզէ. յետ մասանց հաւատոյ՝ գրեթէ ոչ այլ ինչ տեսանեմ աւելի սուրգագոյն քան զայս. ուստի և ոչ

զարմանամ որ Փարիզու աստուածաբանից դպրոցն ալ իւր աշակերտքն պարտաւորէ այս վարդապետու-թիւնս պաշտպանելու. ես ալ ուրախ եմ և ցնծամ նոցա գիտմանն հետևելուս համար: Նոյն դպրոցին կաթոլիկ անած՝ կամակար հնազանդիմ իւր վճռոյն, այնչափ առաւել որչափ որ ինձ երևի թէ եկեղեցւոյ կամքն ալ այս է, և Մարիամու յղութեան մեծ յարգութիւն մատուցանէ: Ոչ պարտաւորէ զմեզ աւանդ դաւանել զյղութիւն նորա, այլ խնդրէ թէ այսպէս հաւատալն իրեն հաճոյական է: Կան նիւթեր զորս ինքն հրամայէ՝ որոց հաւատալով ցուցանեմք նմա զհնազանդութիւն մեր. կան և այլք զորս համզէ, և յայտնակի կարեմք ցուցանել մեր սէրն առ նա: Եթէ ձչմարիտ եկեղեցւոյ որդիք եմք՝ մեր ծնողասիրութեան վայելէ ոչ միայն պատուիրանացն հնազանդիլ՝ այլ և հպատակիլ առ դոյն ակնարկութիւն կամացն այսպիսի բարեգութ և սուրբ մօր »:

Երբ Աբծուին մեզգաց (Պօսիւէ եպիսկոպոս մեզգաց) այս կերպով իւր միաքն բացատրէց՝ անարատ յղութեան ջերմեռանդութիւնն օր աւուր աւելի տարածուէցաւ: Սպանիոյ մէջ՝ ուր կարգինալն Խիմենէս 1506ին Գնարատ յղութիւնն անուամբ եղբայրակցութիւն մի հաստատէլ էր, մեծաւ հանդիսութեամբ կատարուի այս ծանս՝ որով մշտնջենաւորապէս ալ պահի յիշատակն այս բարեփառ առանձնաշնորհութեանն Մարիամու: Ամեն քարոզիչք իրենց քարոզն այս բառերով սկսանէին. « Օրհնեալ լիցի Ամենասուրբ Հաղորդութիւնն սեղանոյն, և անարատ յղութիւն Կուսին Մարիամու Տիրամօրն յղացելոյ զերծ ի սկզբնական մեղաց՝ յառաջնոյ վայրկեանէ անոի բնական և իրական կենաց իւրոց. ամէն »:

Եւ ոչ միայն ի բաղում դարուց հետէ այս վարդապետութիւնս ընդունելի եղած է սպանիական եկեղեցւոյ մէջ, այլ և այնչափ ջերմեռանդ է Փերդինանդոս և Իզապելլի ժողովուրդն առ Տիրամայրն՝ որ զիւրար ողջունելու հաճոյական ձևն՝ անարատ յղութեան դաւանութիւնն է. սպանիացի տուն մի մտնող հիւրն բարի լոյս մաղթելէն յառաջ պէտք է ասէ Ողջոյն քեզ Մարիամ անարատ, որում տանտէրն պատասխանէ Առանց մեղաց յղացեալ: Նոյն հաւատքն ծաւալեալ է նաև ընդ բովանդակ Իտալիա և Փրանկիա ինչպէս որ վկայէ Բարիզու հայրապետ մի ասելով. « Այս բանիս վերայ պարծենալով վկայեմք, և փափաքիմք որ աշխարհիս ամենէն հեռաւոր տեղեաց կաթողիկեայք ալ գիտասցեն՝ որ մեր Թեմին մէջ այս ջերմեռանդութիւնս ի վաղուց խոր արմատ ձգած է, և զոր աւելի և ամրապնդեն աձեցընեն և ընդարձակեն դժբաղդութիւնք ժամանակիս »: Ուսոյ Անարատ յղութեան ջերմեռանդութիւնն ինչպէս ի Փրանկիա՝ այեա բաղում մըրկաց, այսպէս ալ բոլոր Եւրոպա հաստատուած է: Եւ Ս. Անսելմոսի հետ կարեմք հաւատալ թէ Աստուած որ երկինց հրեշտակներն ապահովէց՝ իրենց ապստամբ ընկերներն յերկնից թօթափած ժամանակ, նոյնն պահած է նաև զՍուրբ Կոյսն՝ որ հանդերձեալ էր լինել Մայր իւր Որդւոյն և Թագուհի հրեշտակաց, այն անկմանէն որում դժբաղդաբար հաղորդ եղեն ամենայն մարդիկ. և թէ Աստուած ալ ասաց Մարիամու ինչ որ Աստուերոս կամ Արտաշէս առ Եսթեր. « Այս ամենուն վերայ դրուած օրէնքս՝ քեզ համար չէ »:

Փութամք հոս տեղս աւելցընելու որ այսպիսի վկայութեանց վերայ հաստատուած, և գրեթէ բոլոր աշխարհի եռանդն տեսնելով բարեյիշատակ Բահանայապետն Պիոս Թ գումարեց այն հռչակաւոր ժողովն ի Հռոմ յամի 1854, և առաւել քան 500 հայրապետաց միաձայնութեամբն՝ որ յամենայն ազգաց և յամենայն կողմանց աշխարհի ժողովեալ էին, վճռեցաւ և սահմանեցաւ ևսուն հաւատոյ Աստուածամօր անարատ յղութիւնն:

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Բ. ԳԼՈՒԽ

1 Ըստ Սրբոյն Աւգոստինոսի սերունդն որում բաղձային ա-
մենայն նահապետք է Յիսուս Քրիստոս և Յիսուս Քրիստոս ՚ի
Մարիամ՝ առ որ միայն կարէր հասանիլ իրենց ըղձութեան-
թիւնն: « Եւ յիրաւի, ասէ իմաստուն աստուածաբան ոմն, եթէ
բոլոր համադոյից ճիգն դիմէ ՚ի Յիսուս Քրիստոս ՚ի Տէրն դա-
րուց և ժամանակաց, սակայն այսու ոչ յաւելնի հասանիլ իւ-
րով զօրութեամբ մինչև ցՈրդին Աստուծոյ. այլ իւր զօրու-
թեան ընդարձակութիւն զկայ առնու ՚ի խոնարհն Մարիամ՝ որ
պիտի ծնանի զբոլորովքն օրհնեալ՝ ոչ զօրութեամբ հաւուց իւ-
րոց՝ այլ զօրութեամբ բարձրելոյն:

Ա. Այս օրս որ արդէն անարատ յղութեան վարդապետու-
թիւնն մասն հաւատոյ սահմանեալ է ձայնակցութեամբ առա-
ւել քան զ300 հայրապետաց այնպէս որ ալ ամեն վիճաբանու-
թիւնք աստուածաբանից դադարեալ և արգելեալ են, և հաւա-
տացելոց ուրիշ բան ոչ մնայ բայց եթէ յարգութեամբ հնա-
զանդիլ եկեղեցւոյ իշխանութեան և վճռոյն, մանաւանդ թէ շը-
նորհակալ ևս լինել նմա՝ որ Աստուածամօր այս գերազանց ձիր-
քըս հաճեցաւ վերջապէս հրատարակել բոլոր աշխարհի՝ որ ՚ի
վաղուց փափաքելին և ըղձալին էր ամենայն սիրողաց և սիրե-
լեաց Տիրամօրն, հարկ համարիմք յորդորել զբարեպաշտս ըն-
թերնուլ ՚ի տօնական ճառս լինելատար վարուց սրբոց զճառ
ասէրպ յղութեան կուսին յօրինեալ 100 տարի յառաջ ՚ի
լուսահոգի Հ. Մկր. Վ. Աւգերեան և 70 տարի յառաջ տպա-
գրեալ ՚ի Վենետիկ ՚ի վանս Սրբոյն Ղազարու յամի 1814:

Այս տեղս դնեմք գարձեալ վարդապետիս վարդապետ լուսա-
հոգի Զամչեան Հ. Միքայելի Պապիր գծիչ ասացեալ գրոց մե-
ջէն ՚ի գծիչ անարատ յղութեան Ս. Աստուածածնին ճառէն հա-
տուած մի՝ որ գոնե հարիւր տարի յառաջ գրուած է և գրեթէ
80 տարի յառաջ տպագրեալ (էջ 39):

« Այլ ոմանք աստանօր առարկեն ասելով. որդին Աստու-
ծոյ եկն յաշխարհ առ ՚ի փրկել զամենայն մարդ. զի ամենայն
մարդիկ անկեալ էին ՚ի ներքոյ դատապարտութեան ՚ի ձեռն
սկզբնական մեղաց. որոց ամենեցուն փրկիչ եղև Քրիստոս: Իսկ
եթէ սուրբ կոյսն չլինէր անկեալ ընդ նովին դատապարտու-
թեամբ, որդին Աստուծոյ ոչ լինէր նմա փրկիչ: Եւ այսմ հետե-
ւեցուցանեն՝ թէ ուրեմն սուրբ կոյսն ՚ի յղանալն անդ՚ անկաւ

ընդ այնու դատապարտութեամբ: Բայց յաւելուն ևս՝ թէ ՚ի
նմին վայրկենի ազատեաց զնա որդին ՚ի դատապարտութենէ
անտի, և սրբեաց ՚ի սկզբնական մեղաց. և այսու որպէս այլոց՝
նոյնպէս և մօր իւրում եղև փրկիչ: Դիւրաւ լուծանի այս առար-
կութիւն. վասն զի որպէս աւանդեն և հաստատուն աստուածա-
բանք և փիլիսոփայք, երկու տեսակք են փրկութեան. մին ա-
զատող և միւսն նախապահող. կամ մին բարձող և միւսն պա-
հող. զոր օրինակ ըստ ասելոյ Գաղենոս բժշկի՝ երկու տեսակք
են դեղոց. մին բժշկէ զհիւանդութիւն, և միւսն արգելու զայն,
կամ նախապահէ ՚ի հիւանդութենէ. արդ առաւել գովելի է
նախապահելն ՚ի չարէ՝ քան զեկեալ չարն խափանել. առաւել
գովելի մասն դեղոյ ասէ Գաղենոս ոչ է այն՝ որ առողջացուցա-
նէ, այլ այն՝ որ խափանէ: Բժշկին առաւել ուրախանալ յար-
գելուլն զհիւանդութիւն՝ որ դալոցն է, քան յորժամ եկեալ
հիւանդութեան դարման մատուցանիցէ. առաւել ճարտար հա-
մարի բժշկին այն՝ որ մինչէն եկեալ իցէ հիւանդութիւն ընդ-
դէմ ելանէ այնմ. քան բժիշկն այն՝ որ յետ տիրելոյ հիւանդու-
թեան՝ դեղով փարատէ զայն. վասն զի մին ոչ թողու կրել զնե-
ղութիւն հիւանդութեան և զդառնութիւն դեղոց. իսկ միւսն
ենթադրէ կրել հիւանդին զնեղութիւն, և զայն եդեալ՝ դառն
դեղով բժշկէ: Մխոյն գործ՝ է գործ սիրոյ. իսկ միւսոյն՝ գործ
ցաւակցութեան. արդ գործ սիրոյ մեծ է քան զգործ ցաւակցու-
թեան: Եթէ այս այսպէս իցէ, ուրեմն և Քրիստոս նախապա-
հելով զսուրբ Կոյսն ՚ի սկզբնական մեղաց՝ առաւել ևս գերա-
զանց փրկիչ եղև նմա՝ քան թէ յետ անկանելոյ նորա ՚ի նոյն
բժշկէր զնա: Գիտէր՝ թէ ծանր հիւանդութիւն է սկզբնական
մեղքն. զիարդ ապա մարթ էր լինել զի նա գիտելով թողացու-
զի մայր իւր անկանիցի յայնպիսի հիւանդութիւն ծանր: Յան-
ցանք է բժշկի՝ որ ստոյգ գիտելով զդեղ հիւանդութեանն՝ որ
գալոցն է, ոչ կամի տալ զայն դեղ. այլ թոյլ տայ՝ զի եկեսցէ
հիւանդութիւնն և տապնապեսցէ զհիւանդն, և յետոյ ձեռն
արկանիցէ բժշկել: Այնպէս (որ քաւ լիցի ասել) յանցանք իմն
համարիւր որդւոյ Աստուծոյ՝ որ գիտելով զանհնարին խոթո-
թիւն կամ զհիւանդութիւն սկզբնական մեղաց՝ ոչ կանխեր
դարման մատուցանել մօր իւրում. միթէ պակասեր ՚ի կարելոյ
կամ ՚ի սիրելոյ: Ասէ Կանոնէրոս բժիշկ՝ թէ գերազանց ար-
հեստ է բժշկին զհիմնս ՚ի դեղ փոխարկել. զիարդ ապա ամենա-
ճարտար բժիշկն տեսանելով զհիմն սկզբնական մեղաց՝ ոչ փո-
խարկեաց զայն ՚ի դեղ մօր իւրոյ: Այսէ դարձեալ նոյն Կանոնէ-
րոս թէ նմանէն պահին ՚ի նմանեաց. արդ չէք առաւել նման
մօր քան զորդի. զի է հայելի ծնողին և բնական պատկեր նորա՝
ապա և որդւոյն Աստուծոյ արժան էր պահել զիւրն նմանն՝ այսինքն
զմայր իւր ՚ի սկզբնական մեղաց: Ցայս ամենայն հայելով կարող

եմք ասել՝ թէ սուրբ Կոյսն առաւել պարտական եղև Քրիստոսի նախապահողի զինքն ՚ի մեղաց՝ քան ազատողի ՚ի տիրող մեղաց. որպէս առաւել պարտական լինի մարդ այնմ՝ որ ըմբռնէ զինքն և ոչ թողու անկանիլ ՚ի տիղմ, քան այնմ՝ որ յետ անկանելոյ ՚ի տիղմ հանէ զնա և մաքրէ: Եթէ Աստուած ոչ նախապահեր, այլ միայն փրկեր զսուրբ Կոյսն ՚ի դատապարտութենէ սկզբնական մեղաց փրկագործ ընդհիւ, ոչ այնչափ փառաւոր երևեր գործ փրկութեան նորա. իսկ նախապահողական ընդհիւ փըրկելով առաւել փառաւոր երևի այն գործ: Այսպէսն առաւել բարի է նախապահել զքաղաքն ՚ի խռովութենէն և յամպարշտութենէն քան զկիզուցանել զյարուցեալ խռովութիւնն և բառնալ զամպարշտութիւնն: Առաւել բարի է նախապահել զտունն ՚ի կրակէ՝ քան յետ ՚ի կրակ յափշտակելոյն շիջուցանել»:

2 Ընարատ յղութեան վարդապետութիւնն և հաւատքն հայոց և յունաց մինչ շատ հին է և ՚ի վաղ ժամանակաց հաստատեալ, որոյ համար և մանաւանդ տօն սահմանեալ է որ յԴ դարէ ՚ի վեր կատարի:

Բ Մինչդեռ լո. յ8 դեկտ. կատարեն զտօն անարատ յղութեան, Հայք և այլ արևելեան ազգք կատարեն զնոյն յ9 դեկտ. յայս հաստատեալ որ Մանուէլ Կոմնենոս կայսրն՝ ըստ մեզ կիւ Մանուէլ Թագաւորեալ յամէ 1145 ց1180 ՚ի գրուածի ուրեք (զոր յիշատակէ Թէոդորոս Պալսամոն ՚ի ընդդէմ-Լիւնոս Օրթոդոքսոն փոփոխ)ժողովդեան հրամայեալ տօներն համրած ժամանակ ասէ. «ՙԻններորդ օր դեկտեմբերի զի ՚ի նմին աւուր կատարի տօն յղութեան Ծնողի Աստուծոյ մերոյ» (տես Բենեդիկտոս ԺԴ յաղթ փծնէց Յէսոուի Քրէսթոսի և կոուէն Մարիամ զէ ԺԶ յօդ. Գ):— Բայց յայնմի է թէ տօնս արդէն ՚ի վաղուց կայր, և ոչ եթէ նոյն առեն հաստատուեցաւ. զի ըստ ասելոյ Գեորգայ ուրումն եպիսկոպոսի Նիկոմիդիոյ արդէն սովորութիւն էր այն տօնն կատարել Հերակլ կայսեր ժամանակ՝ որ զփոկաս սպանեալ էր ՚ի Սերգիոսէ պատրիարքէն Կ. Պօլսոյ Հերքոդ ամի քահանայապետութեան Վենիամինոսի Դ ի: — Մատթէոս բարիզացի առնուամբ միանձին գրոց մէջ այսպիսի յիշատակութիւն մի ալ ընթեռնումք որ յամի 1228 եպիսկոպոս ոմն ՚ի հայոց ՚ի կալն յԱնգլիա օթեանեալ ՚ի մենաստանի Սրբոյն Ալբանոսի՝ մի ոմն ՚ի միանձանց եհարց նմա թէ իրենց կողմերն ալ կատարէր տօն յղութեան կուսին. առ որ պատասխանեց «Այո, քանզի յղութիւնս ալ հրեշտակային աւետեաց ծանուցաւ Յովակիմայ մինչդեռ նա տրտմագին կայր յանապատի. (թերևս ասել կամի անսերմ յղութեամբ որպէս ասեն յոմնք, և որ չէ մեզ ընդունելի): Նոյնպէս կատարեմք և զտօն յղութեան Յհ. Մկրտչի սակս նոյն

պատճառաց: Իսկ վասն յղութեան Տեառն մերոյ՝ որ եղև աւետեաց հրեշտակապետին առ Մարիամ, և յղացաւ ՚ի Հոգւոյն սրբոյ՝ չեղև բնաւ տարակոյս»: Այս ուրեմն ՚ի սկզբանէ էր դրուս կայր տօն առ յոյնս, հաւանականապէս յետ սակաւուց եմուտ և առ հայս թէ և սկզբնաւորութիւնն յայտնի չէ:— Դարձեալ դիւրին չէ ցուցանելն թէ երբ և որպէս անցաւ այս տօնս յարևելից յարևմուտս. սակայն ենթադրուի թէ երկուց կայսերութեանց մէջ յարաբերութիւնն անալական լինելով պատճառը կուսին յարևմուտս սկսեալ են Աստուածամօր այս շնորհիւ խարհիկ գերազանցութեանս յիշատակին կատարել զոր ոմանք Անգլիոյ համարին սկսեալ յաւուրց անտի Սրբոյն Անսելմոս հռչակաւոր բնաղանցին և աստուածաբանին և եպիսկոպոսին Կանտորբերիոյ ՚ի ԺՍ. դարու, և այլք համարին ՚ի Սալնիոյ ըստկսեալ Վերոյիչեալ Զամչեան Հ. Մխիթարեան Անարատ յղութեան ճառին մէջ ընթեռնուք համառօտելով. «Տօն յղութեան յառաջ քան զամենայն սկսաւ (յարևմուտս) ՚ի Սպանիա որպէս ցուցանէ քան Տեսիփոսի աշակերտի Սրբոյն Յակոբոյ առաքելոյն՝ որ եղև քարոզիչ սպանիացւոց. զոր Հաստատէ Որոզիոս սպանիացի յամի 400: Հնագոյն է և Անգլիա ըստ վկայութեան Բեդայ քահանայի յԸ դարու. ՚ի սմին դարու մտեալ էր և ՚ի Գաղղիա, և հետզհետէ ՚ի Գերմանիա և Իտալիա: Ա. յոյնս ևս կայր տօնս ՚ի վաղուց, որպէս յայտ է ՚ի տօնացուցէ ՅՀ. Դամասկացւոյ ՚ի Ժդարու և ՚ի սահմանադրութենէ կիւ Մանուէլի կայսեր: Իսկ առ մեզ չէ յայտ սկզբնաւորութիւն տօնիս: Ի տարածիլ այսր սովորութեան ընդ ամենայն տեղիս՝ ապա յետ բազում ժամանակաց հաստատեաց զտօնս պատն Ալէքսանդր Ե յամի 1409. և Փսեստոս Դ հռչակեաց յընդհանուր եկեղեցիս, որ և յամի 1483 Նզովեաց զընդդիմակացս նորին, զոր և ընկալաւ ժողովն տրիտենդեան և հաստատեաց Պիոս Ե: Ալէքսանդր Է յամի 1656 վճռեաց զի տօնս է անբաւ յղութեան և ոչ պարզապէս յղութեան, և զի ուղղութեամբ կատարեսցի յեկեղեցիս, զոր և հաստատեաց Կղեմէս ԺԱ՚ի 1656, յորում ըստ ժամանակագրաց յամի աշխարհի 1656 ապրեցաւ ՚ի ջրհեղեղէ տապանն Նոյի: Արևելեայք կատարեն զտօնս յ9 դեկտ. իսկ արևմտեայք յ8 նորին (տես զպատճառն ՚ի վեր անդր) զի առ նախնի հռովմայեցիս հնգեհետասն նոյն օր նուիրեալ էր Նեպտունոսի չաստուածոյն ջուրց՝ պաշտպան համարելոյ յընկղմանէ, որ և փոխադրեցաւ ՚ի տօն անարատ յղութեան Կուսին՝ որ ազատ գտաւ յընկղմանէ մեղաց. էր առ հռոմայեցիս հնգեհետասն և տօն ինչ անուանեալ յղութեան ըստ Մակրոբիոսի, զոր անուանէին յղութենական և ինքնակալական»:

3 Տես ՚ի պատարագամատոյցս Յակոբայ մեծի և Ա. Մարկոսի: Գ. Մեր ժամակարգութեան մէջ յետ երեքսըբեան օրհնա-

բանութեան Աստ. Աստուած, Աստ. և հզօր յաւիտեան զաղօթս Թովմայի առաքելոյ ասացեալ ֆաստաստիկ և օրհնեալ ՏԼ ԱՍՏ. կոչ Աստուածդէն Մարիամ, յորում բովանդակի Աստուածամօր ամենայն գերազանց ձիրքն. բայց ոչ կարացաք ստուգել թէ ուստի Թովմայի առաքելոյ ընծայի մաղթանքս. միայն Ստեփանոսի ուրումն Սիւնեաց եպիսկոպոսի առ Ներսէս եպիսկոպոսն գրուած թղթի, մի մէջ ընթեռնումք այս ա-ւանդութիւնս (տես վերջի գլխոյն Ծանօթութեանց մէջ):

Դ. Ի վկայութեանցս երևի թէ մինչև չորրորդ դար անընդհատ Աստուածամարտք եկեղեցւոյ ամենայն ջանք ի գործ դրին հաստատուելոյ ընդդէմ աղանդաւորաց զաստուածամայրութիւն Մարիամու և զմիշտ կուսութիւն նորա և զանարատութիւն ի մեզս: Մինչև դարուս մէջ չկանգնին ցուցանել նորա անարատութիւնն նախ ի թեթևագոնից անգամ թերութեանց, և հաստատեցին թէ Հոյն ամենևին իսկ անընդունակ էր որ և է մեղաց: Յետոյ ուրեմն ի վերջ ԺԳ դարուն երևեցաւ ՑՀ. Տուընս Աբոթ սկովտիացի փրանկիսկեան վարդապետն որ կոչեցաւ Նըբբիմաստ՝ որ հակառակ Թոմայականաց սկսաւ զօրաւոր փաստիւք ցուցանել զանարատ յղութիւն կուսին անդէն ի ծագմանէն որումհետևեցան Փրանկիոյ, Գերմանիոյ և Սպանիոյ Լատինքն. որ թէպէտ ի սկզբան շատ հակառակութիւն կրեց, բայց վերջապէս 1616ին Պաւղոս Ե Քահանայապետն արգիլեց որ ոչ ոք գրով կամ բանիւ հակառակի վարդապետութեանս հրապարակաւ. յետոյ 1622 ին Գրիգոր ԺԵ արգիլեց նաև առանձնական վիճաբանութիւնսն ալ. զոր և հաստատեաց կրկին Աղեքսանդր Է: — Յոյն և լտ. հարց վկայութիւնսն բաւական դրուած են յընթացս վարուցս, հոս կուզեմք յաւելուլ՝ ինչ որ հարք հայոց ասացին վասնդրոյս, յորոց պարզագոյն և վաճառագոյն են Ս. Գրիգորի Նարեկացւոյ հոգեառնգն խօսքերն՝ որոց հաւասարն ոչ գտանի թերևս առ այլ ազգս: Սա ոչ միայն կոչէ զՄարդ Կույսն « Հրեշտակ ի մարդկանէ մարմնաւորեալ քերովբէ » և « Անճառելի մաքրութեամբ, անարատ սրբութեամբ, անաղտ, մաքուր և անբիծ բարի » զոր և ամենայն հարք ասացին, այլ և յաւելու « Անխառն իբրև զօդ, մաքուր որպէս լոյս. անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան, գեղացոյցիչ երկանց էակի, լուծիչ անիծից, մահու նահանջիչ, եղծման ընդոտնիչ »: Բայց քան զսոսա առաւել ապացուցական են այս խօսքերս. « Որ ի դրութենէ խառնութեան քառից յեղյեղական՝ տարերաց անկցորդ մնացեր ի մանէ հղացմանէդ հաւասարակաց, ոչ բերող ծանրութեան բնականի համաստեղծս կարեաց. այլ քրովբէօրէն հրաբերան բղխող նշուլից: Ուստի

(վասն ազատ գոլոյ քոյ ի սկզբնական մեղաց և ի հասարակաց յանցուածոյ) թեթևընթաց գտեալ երագ ընթացիւք հետոյ հեռացեալ ի վայրն անմատոյց՝ յարփին վերին ընծայեցար սուրբ Աստուածամայր»: Եւ յետոյ այլ աւելի պարզ խօսքով յաւելու. « Ալեացեալ հասեր ի բարձունս երկնից իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման. մաքրին՝ յորմէ պատկառեաց ամենիւ պարտիչն մահու». առել կամելով թէ մահն պատկառեաց ի նմանէ՝ վասն զի չէգիտ ի նմա զմեզս՝ որ վասն սահմանեալ էր դատաւկնիք մահու: Դարձեալ « Մեղուցելոյ կնոջն առաջնոյ՝ առանց յանցանաց զաւակ գովեցար, և ամենայն անբընծաց ընտրութեան պատկ սրբութեան դու դաւանեցար »: « Նախատեղծին մերկացելոյ վառք անկապտելի, վշտացելոյ անիծապարտ մօրն՝ ապիրիչ քաւութեան, որդւոց նոցին խոտովութեան՝ խաղաղութեան ձայնատու ». « Իբր ի գժնեայ փշոց խստութեանց.. ծաղկեցար. և իբր ի դառն արմատոց երկրի՝ քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար ». « Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յերդնականաց սեռիցս՝ անմահ սերովբէ, ի հողային նիւթոյ՝ ոսկի սովփերայ. — Ի հաւուց նախնեացն՝ (մայնակ) ճիւռ օրհնութեան »:

Արդէն Ա. Գլխոյն Ծանօթութեանց մէջ (Զ) գրինք գրեթէ ամբողջ ինչ որ անարատ կուսին վերայ զրուցուած է մեր եկեղեցական գրոց մէջ, յորոց զմանս ևս եթէ յիշել բաւական է. « Տաճար անապական բանին հօր՝ բարեբանեն զասք հոգեզինաց »: « Անդաստան մաքուր ի փշոց մեղաց՝ որ զբոյն երկնային առանց սերման ծնար ». « Դու ծաղիկ անթառամ տոհմի սեռիս մարդկութեան, և շառաւիղ օրհնութեան նախնոյ ծնողին մեր ընութեան ». « Անիծից լուծիչ և քաւիչ մեղաց սուրբ Կոյս ». « Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յեդեմայ, հոտ անմահութեան ծնդոցս ելայի՝ յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս ». իսկ պանծագոյն քան զայսոսիկ « Անթառամ ծաղիկ անդաստանապատ շառաւիղ ». վասն զի եթէ անխոտոր ծաղիկ ասելով ի ներգործական մեղաց ազատութիւնն ցուցանէ՝ որ ամենեցուն ընդունելի է, անդրադարձ լեռնէղ այլ ասելով ի սկզբնական մեղաց ազատութիւնն յայտնի երևի. վասն որոյ մնծն Վարդան մեկնելով ասէ. « Ծաղիկն մեռ անթառամ. ոչ որպէս որք ընդ առաւօտս ծաղկին, և ընդմանէ մեղացն հողմով թառամին չորանան և անկանին ընդ երեկոյս, այլ ըստ արդար գոլոյն իբրև զարմաւենիս ծաղկեալ, միշտ կայ և մնայ: Իսկ անդաստանապատ շառաւիղն ասէ՝ թերևս զնեայ ածեալ զմտաւ, որ յԱդամայ հատաւ կողՙ որպէս շառաւիղ յորթոյ, և մեղաց պտուղ ցուցեալ՝ դատապարտեցաւ ի մահ, և մայր եղև մահկանացուաց (անուանեալն մայր կենդանեաց): Այլ անարատն Իսկուհի՝ յա-

մուլ ճեղոյց արդարոց շառաւիղ շնորհաց ընձիւղեալ կենաց և փրկութեան ցուցեալ պտուղ՝ « արտաքոյ եղև Եւային պարտեացն » պատճառ և մայր կենաց եղև և ասացաւ »: Արդ ինչպէս կարէր արտաքոյ լինել պարտեացն Եւայի Տիրամայրն՝ եթէ ընդ նորա մեղօքն գրաւեալ էր: Դիտելոյ բան է վկայութեանս մէջ և այն զի շարականաց մէջ Քրիստոս ինքնին Աստուած ձայնէ կոչի, ըստ այնմ՝ « Այսօր զանեղառաւն ճաղկեցար զճաղիկ » որպէս զմայր իւր. և յայտնի է թէ այսու չիմացուիր վասն Քրիստոսի իբրու անարատ և ի ներգործական մեղանչականութենէ միայն ազատ: Այլա ուրեմն ինչ իմաստով որ ասի զՈրդւոյն Աստուծոյ ձաղկէ, նոյն իմաստով կիմացուի նաև իւր մօրն համար ասացեալն Աստուածածին էր, այսու եւեթ զանազանութեամբ որ Որդին ի բնութենէ իւրմէ իսկ է անարատ և անմեղանչական լինելով Աստուած, իսկ Մայրն աստուածային Որդւոյն շնորհօքն և յատկութեան նախասահմանութեամբ: — Յաւելումբ և զմիւս այլ պանծալի վկայութիւնն « Ցղացար անարատաբար և զԱստուած վայելչապէս ծնար ». որ եթէ չպնդել բայն թէ ներգործական և թէ կրաւորական իմաստ ունելուն համար՝ երկդիմի ալ սեպուի, սակայն իմաստն պարզի այսպէս. Ցղացար անարատաբար, այսինքն զերծար ի սկզբնական մեղաց, և վասն այսորիկ զԱստուած վայելչապէս ծնար. վասն զի եթէ չպնդացն ներգործաբար միայն առնուի՝ հետևութիւն ոչ ճշմայ ի բանին, և ոչ իսկ պատճառ, թէ ընդէր Կոյսն վայելչապէս ծընեալ միայն իցէ զԱստուած, և ոչ նոյնպէս վայելչաբար չպահեալ (տես Հիւրմիզեան Ե. Ա. Աստուածաբանութիւն պեւական հա. Բ. էջ 176): « Մարիամ եթէ անարատ մայր, ապա և անարատ զաւակ. եթէ չպնդացաւ անարատաբար ներգործապէս, և զԱստուած վայելչապէս ծնաւ, ապա և չպնդացաւ անարատաբար կրաւորապէս, և Աստուծոյ ծնող սահմանեցաւ վայելչապէս՝ ծննդեամբ չՈՒնայէ » (Ագերեան Տօնական ճառ ի չքնաղ անապատ էջ 9):

4 Նոյն իսկ մահմետականք խոստովանին զանարատութիւն չքնաղ Կուսին, և արաբացի մեկնիչք Ղուրանին իրենց կերպովն բացատրելոյ կաթողիկէ աստուածաբանից կարծիքն այս վարդապետութեանս վերայ: « Ամենայն ադամորդիք ծնանելուն պէս, ասէ Կոստաթա, սատանայէն հարուած մի ընդունին իրենց կողն, ի բաց առեալ զՅիսուս և զմայր նորա. վասն զի Աստուած նոցա և սատանայի մէջ քօղ մի ձգելով այս հարուածէն պահեց զնոսա » (տես զծանօթ. 36 Ա. գլխոյն):

5 « Թանզի եթէ այսպէս երևէր՝ հարկ էր նախ հարցանել զիշխանութիւն առաքելական գահուն, և ոչ այնպէս գահավիժաբար և յանխորհուրդս սակաւուց ևեթ տգիտաց զհետ երթալ

պարզմտութեան »: — Նմանապէս Սուրբն Թովմաս ի լիակատար աստուածաբանութեանն ասէ թէ Եկեղեցի զիջաւ մանաւանդ քան թէ հաւանեցաւ ընդ ոճոս այս:

6 Մոնֆոքոն (Բեռնարդոս ծնեալ 1655 գրագէտ անուանի բենեդիկտեան) 1698ին յունվարութեան իւրում Իտալիա՝ Բաւիա քաղքին մէջ Պելերիտի բարեպաշտ աստիսին գրատունն մտնելով շատ զարմացաւ՝ տեսնելով որ այն անբաւ հաւաքուն բովանդակ վրանկիսկեանց գրած ճառերն և գրուածք էին ի պաշտպանութիւն անարատ յղութեան: Այն գրոց միջճախատն փորագրեալ պատկեր մի կայր՝ յորում երևէր Սուրբ Կոյսն ընծտեալ ի վերայ ամպոց. և ի վերայ նորա ցանկապատ մի աշտարակօք ամրացեալ՝ յորոց վրանկիսկեանք պատերազմէին ընդդէմ հակառակորդաց անարատ յղութեան. և մատանին գրեալ էր ի հօրէն Ամէն:

Ե. Անարատ յղութիւնն Մարիամու եղև ի քառասներորդ դարու ստեղծագործութեան աշխարհի, այսինքն յամի 5986 ըստ ժամանակագրաց ի քասղև ամսեան հրեից՝ որ ըստ աստղութեան զուգընթացեայր յայնժամ դեկտեմբերի, յութերորդ աւուր նորին ամսոյ, ի կայսրութեան Աւգոստոսի կեսարու և ի թագաւորութեան Հերովդէ մեծի ի վերայ Հրէաստանի: — Ընդհանուր կարծիք է հիմնեալ ի վերայ աւանդութեան որ Կոյսն եղ ի կուսաստանէ տաճարին և ամուսնացաւ ընդ Յովսեփայ տանուէրոց կամ տանուհիւնդ տարուան. դարձեալ հանրական կարծիք է թէ ամուսնութենէ չորս ամիս յետոյ ընկալաւ զաւետիս հրեշտակապետին՝ որպէս ասէ Սուրբն Իգնատիոս Աստուածազգեաց ի Թղթին առ եփեսացիս. վերջապէս անյաղթելի փաստիւք ցուցեալէ որ փրկիչն մեր ծնաւ ի Կուսէն ի Բեթղեհեմ յամի աշխարհի 4002, ի քառասներորդ երկրորդ ամի կայսերութեան Աւգոստոսի կեսարու: Արդ Աստուածամօր գրեթէ տանուհիւնդ տարուան հասակին վերայ՝ յաւելլով այն տարին ալ որ անցաւ յամսանութենէն ընդ Յովսեփայ մինչև ցծնունդ Տեառն, և այս տասնուվեց տարիս հանելով ի 4002 տարեաց՝ իւր անարատ յղութիւն եղած լինի յամի աշխարհի 3986 որպէս և եդաք (տես ի Հ. Կէյլօնէն ճառ վերոհիշեալ ի ղամայ Ինքնոսէ Ա. յօգ. 1): Իսկ թէ ընդէր մեք և յոյնք ոճոսիմք յ9 դեկտ. ես ի Բ ծանօթ. գլխոյս:

7 « Ժողովս ասէրք յայտ առնէ ալ ոչ իմանայ ինքն՝ ի վճռիս յայմ՝ յորում զնէրքինեան ծեղոյ լինին բանք, հարմարել վերոնեալ և զանարատ կոյն Մարիամ Աստուածածնայրն. այլ ալ պահելէ ընծեն առհասարակ բարեխելոյ պատկեր Պետրոս ընդ պատուով որ ի նոյն առհասարակ բովանդակելն, և զբռ կրկին նորոգեն ժողովս »:

Զ Պոսիւէի մեղադ եպիսկոպոսի Յաղիպ անարատ յղութեան

սրբոյ Խոսքն Ճառ Ա։ Տես ի Բիւռատոս-Բէնոս ի Տէրմայըն թարգմանեալս ի Հ. Եդուարդայ Հիւրմիւզ յարքեպիսկոպոսէ Շիրակայ և տպագրեալ ի Վենետիկ ի վանս սրբոյն Ղազարու յամի 1879 էջ 77։ Յորդորեմք զբանասէրս մանաւանդ զՏիրամայրասերս ամբողջ կարդալու այս հրաշալի Ճառերս որոց գրիչք առաջին Ճարտարախօսք են յաշխարհի, և թարգմանիչն յառաջին կարգէ հայկաբանից։

8 Ի Սպանիա տուն մի մանողն յառաջ քան բարի օր մաղթելն ասէ Ave Maria purissima Ողջոյն ի քեզ Մարիամ ամենամաքուր. և անեցիք պատասխանեն. Sin peccado concedida Առանց մեղաց յղացեալ։

ԳԼՈՒԽ Գ.

Ծնունդ Մարիամայ.

Հրէից կրօնական և քաղաքական վիճակին անկման ժամանակն, և ի մարգարէից գուշակուած ատեն՝ երբ թագաւորական գաւազանն օտարազգւոյ ձեռքն անցած էր՝ ըստ նախագուշակութեանն Յակոբայ, ատրճն Գալիլեայի Նազարէթ քաղքին մէջ որ շատ հեռի չէ ի Կարմելոս լեռնէ, Յովակիմ[1] անուամբ արգար մարդ մի բնակէր ի ցեղէ Յուդայ ի զարմէ Դաւթի Նաթանայ գծոյն ելլեալ. իւր կինն՝ զոր Ս. Աւգոստինոս[2] ի քահանայական ցեղէ համարի, կոչէր Աննա՝ որ եբրայեցւոց լեզուաւ չնորհազարդ թարգմանի Ա. երկուքն ալ արդարք էին առաջի Աստուծոյ և կատարեալ սրտով[3] գնային ի սուրբ պատուիրանս նորա։ Բայց կարծես Թէ Բարձրեալն զսկէզ էր զերծենք ի լուսոյ աստուածային երեսաց իւրոց[4]. զի զուրկ էին զաւակ ունելու ինքնաարուեստէն և օրհնութենէն. որովհետև Իսրայելի մէջ անզաւակութիւնն անարգութիւն համարուէր ։

Յովակիմ որ զկողակիցն սիրէր իւր զարմանալի քաղցրութեան և գերազանց առաքինութեանցն համար՝ չուզեց նորա վիշտն յաւելուլ՝ ապահարզանի թուղթն տալով իրեն և արձակելով, որ այն օրերն շատ գիւրաւ կը տրուէր[5]. այլ միշտ իւր քովն պահեց զնա. և այնպէս այս բարեպաշտ ամուսնիք խոնարհաբար հպատակելով աստուածային տեսչութեան՝ աշխատանքով աղօթքով և բարեգործութեամբք իրենց ժամանակն անցուցանէին։

Այսչափ առաքինութիւնք առանց վարձուց մնալու

էին. քսան տարի ամուսնութենէ ետև՝ Աննա դրեթէ հրաշիւք յղացաւ և ծնաւ այն բարեբաղդ զաւակն որ քան զամենայն սուրբս ՚ի միասին առեալ՝ ամենէն աւելի սուրբ և քան զամենեսին առաւել հաճոյ եղև աչաց Տեառն:

Թ[6] ամսոյն սկիզբն՝ որ հրեից քաղաքական տարւոյն առաջին ամիսն է, մինչդեռ ողջակիզաց Հենձերն յերկինս վերանայր՝ ՚ի քաւութիւն մեղաց ժողովրդեանն, ծնաւ նախասահմանեալ կոյսն որ զառաջին յանցանս նախամօրն պիտի լուծանար արեամբն Քրիստոսի[7]: Իւր ծնողացն ևս իւր աստուածորդւոյն ծննդեան պէս առանց աղմկի կատարեցաւ. իւր ծնողքն թէ և թագաւորական զարմէ ելեալ՝ այլ ժողովրդեան գասէն էին, և երբէք թէ աննշան կեանք մի անցուցանէին. և այս խորհրդական վարդս՝ զոր յետոյ ետես Յովհաննէս զարեգակն իբրև զօթոց ղինքեամբ արկեալ պիտի բացուէր գԺբաղդութեան տօթագին հողմոց փչման առեն՝ Յեսսեայ մերկ և չորցած գաւազանէն[8]: Հրեշտակաց Թագուհւոյն որորոցն ոչ ոսկեզարդ էր և ոչ եգիպտական ասղնեգործ պատառօք ծածկեալ, և ոչ հրեից իշխանաւորացն պէս նարգոսիւ և կասիայիւ քրքմացան խնկաւորեալ. այլ գիւբաթէք ծառի ճիւղերով չինուած, և խանձարուրք հաստ կտաւէ պնդէին այն փափկիկ ծղիքն՝ որ օր մի այնչափ շնորհալից կերպով պիտի գրկէին և քնացընէին զՔրկիչն աշխարհի: Թագաւորաց երախայքն գեռ ծիրանի խանձարրուղք պառկած ժամանակ՝ տէրութեան նախարարք նոցա առջև գլուխնին խոնարհեցուցանեն և Տէր կոչեն զնոսա, իսկ այս սուրբ մանկիկս որ հարսն և մայր եղև Աստուծոյ՝ իւր առաջին ժպիտն ժողովրդեան աղքատ կանանցն եցոյց, որ իրենց խեղճ և անարգ վիճակն յիշելով ՚ի մէջ մարդկան՝ թերևս ամրոտմութեամբ ասէին. Ախաւասիկ գերի մ՚աղ աւելցաւ: Ասի թէ Կուսին սուրբ մայրն ՚ի հրեշտակէ ուսեալ

թէ ինչ մեծ և անգին գանձ է իրեն չնորհուածն՝ սրբոտանց չնորհակալ եղև Աստուծոյ երախտագիտութեան երգով մի՝ որ աւանդութեամբ մեզ հասած է, և եռանգուն կերպով բացատրէ իւր մայրական ցընծութիւնն ասելով. « Աստուծոյ օրհնութիւններ երգեմ որ ինձ այցելութեան եկն, և զիս թշնամեացս նախատինքէն ազատեց, և արգարութեան բաղմաբեղուն պտուղ մի չնորհեց առաջի երեսաց իւրոց: Ո՛վ պատմեսցէ որդւոց Ռուբենի թէ Աննա մայր եղև. լսեարուք, լսեարուք ամենայն ցեղք Իսրայելի որ Աննա մայր եղև »: « Ո՛վ գերագոյն բարութիւն, գոչէ Ս. Յովհան գամասկացի լի եռանգեամբ՝ զոր պէտք է զգան նաև ամենայն բանաւոր արարածք ՚ի ծննդեան Մարիամու, ով անպատուհասնորհք և անհանգիստ առատաձեռնութիւն Աստուծոյ մերոյ. բովանդակ բնութիւնն ցնծայ և խայտայ ընդ ծնունդ Մարիամայ, ապա թող ուրախանան և մարդիկ յաւուր ծննդեան նորա՝ որ առանց արատոյ պիտի ծնանի զԱրարիչն աշխարհի, յաւասլով որ պիտի ազատին յատկականութենէ »:

Եկեղեցին որ Մարիամու ծնունդն կետ ծննդեանն Քրիստոսի ամենէն մեծ և կարևոր դէպքն համարի՝ նոյն օրն քրիստոսական եկեղեցիներն հնչեցուցանէ ուրախութեան և ցնծութեան երգերով, և զմայլեալ սեպհեռմերի ցին հաստատած տօնախմբութեամբն՝ որ այնոր բարեբաղդ տարեդարձն յիշատակէ « Ով կոյս Մայր Աստուծոյ, գոչէ, քոյ ծնունդդ ուրախութեամբ եղից զսիրեզերս. վասն զի ՚ի քէն ծնաւ արեգակն արդարութեան Քրիստոս Աստուած մեր, որ զազգ մարդկան ազատելով յանիծից ընդ որով հեծեր՝ եղից զնա օրհնութեամբ, և յաղթելով մահու՝ չնորհեաց մեզ զկեանս յաւիտենից »: Ասսի և եկեղեցի հայաստանեայց յուրախութիւն յորդորելով զիւր մանկուհին երգէ. « Երգեցէք որդիք Սիոնի երգ նոր ՚ի ծննդեան մօր Տեառն. քանզի որ ծնաւ զանժամանակին ՚ի հօրէ

ծնեալն՝ այսօր ծնաւ յամուլ արգանդէ. տուք օր-
հնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ: — Յնծայէք
որդիք մարդկան այսօր ծննդեամբ սրբուհւոյ Կուսին.
քանզի որ տարաւ զանտանելին յարգանդի անսեր-
մնապէս, այսօր բղխեաց յարմատոյն Յեսսեայ. տուք
օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ: — Ուրա-
խութիւն աշխարհի ծնաւ զՄարիամ ամուլն Աննա՝
աւետեաց զուարթնոյն, որ զտուողն օրինաց հնոյն՝
ծնաւ մարմնով պարգեւիչ նորոյս կտակի. տուք օրհ-
նութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ: — Խնդա մայր
Բանին 'ի Հօրէ ծնեալ նախ քան զարուսեակ, որ
զլոյս երկնային ծագեցեր մարդկան, զլուծիչ մեղաց
մերոց. մաղթեա Բանին փրկել զմեզ 'ի մեղաց
մերոց » և այլն գ:

Իսրայէլացւոց մէջ սովորութիւն էր ծնանելուն
ութերորդ օրն համախմբութեամբ ազգականացն՝
անունն դնել որով ակն ունէին կոչուէր մանուկն: Յովակիմ
իւր հայրն կոչեց զնա Մէյրեմ՝ որ ասորերէն տիկին,
դշխոյ, թագուհի նշանակէ, իսկ եբրայեցերէն ատող
ժողովին. որոյ համար Սուրբն Բեռնարդոս ասէ « Թէ
այլ աւելի յարմար անուն մի չէր կարող տրուիլ՝ իր
մեծվայելչութիւնն ցուցանելու համար. վասն զի յի-
րաւի Մարիամ է այն գեղեցիկ և լուսապայծառ
աստղն որ փայլի աշխարհիս ընդարձակ և մրրկալից
ծովուն վերայ »:

Այս հրաշագեղ անունս այնչափ սիրուն և քաղցր
է, որ մարդ բերանն առած ժամանակ՝ սիրան գորովի
և գրելու առեն ոՀն գեղեցկանայ: « Անունն Մա-
րիամու, ասէ Ս. Աթոռն պատուական, մեղր է 'ի շըր-
թունս, մեղեգի յականջս և զուարթութիւն 'ի սըր-
տի [8] »:

Աղջիկ զաւակ ծնող կինն ութսուն օրէն ետև տա-
ճարն երթայր մաքրուելու համար՝ իւր հետն առնելով
անդրանիկ ծնունդն ալ. և ըստ օրինացն Մովսիսի ըն-

ծայէր Աստուծոյ գառն մի կամ ղոյգս տատրակաց.
այս վերջինս աղքատաց ընծան էր, ուստի և Աննա
զնոսին ընծայեց. բայց այն բարեպաշտ մօր երախ-
տագիտութիւնն սովորական ընծայովը գոհ չեղաւ. այլ
Եկեղեցւոյ կնոջ և մօր Սամուէլի Աննայի արժանաւոր
հետևող՝ ընծայեց Աստուծոյ աւելի անարատ զոհ մի,
աւելի անմեղ աղաւնի մի՝ քան այն տատրակներն որ
խայտալով արիւնլուայ անկան զոհագործին դանա-
կին ներքև. և չունենալով ոսկեղէն պսակներ ձօնի նուի-
րելու տաճարին գրանդեաց [10], Ամենակալին ոտից առ-
ջև դրաւ իւր ծերութեան պսակն. այն գերանիկ ման-
կիկն որով օրհնել էր Աստուած իւր կեանքն, և հան-
դիսապէս խոստացաւ նորին բերելու նուիրելու իւր
զաւակն 'ի ծառայութիւն սուրբ տեղւոյն՝ երբ նորա
բանաւարութիւնն բացուի բարին և չարն ընտրելու,
և այս իւր ուխտս մանկան հայրն ալ իւր հաճութեամբ
վաւերացուցանելով՝ պատասխանի խոստում մի ե-
ղև [11]:

Աղաղողութիւնն երբ աւարտեցաւ՝ երկու ամու-
սինք իրենց գաւառին Ճանապարհն բռնեցին, գաւառ
մի ուստի երևելի մարդ մի ելած չէր ամենևին, և Ի-
րայել ակնկալութիւն չունէր որ անտի մարգարէ մի
երևի [12]. և եկին մանն իրենց անշուք տունն՝ որ միշտ
բաց էր կարօտելոց և պանդխտաց: Հոն տեղ, այն օրհ-
նեալ շնորհալի և հրաշալի մանկիկն՝ իւր առաջին հա-
սակին մէջ ընտանեացն հրճուանքն էր, և աճեցաւ այն
չուշանեորուն նման զորս Յիսուս Քրիստոս գովէ, և
Սուրբ Բեռնարդոսի քերթողաբար ասացածին պէս
յոտոյ անուշահոտութիւն բուրեալ: Անշուշտ Աննա ինքն
դիեցուցած է իւր զաւակին, ինչպէս որ այն ազգին սո-
վորութիւնն էր [13]:

Մարիամ բանաւարութիւնն տղայական հասակէն
շատով բացուեցաւ, և զուարթ արշալոյս մի ունե-
ցաւ՝ ինչպէս որ ութն ծագի՝ արեգական սիրելի գա-

ւառներուն մէջ։ Իւր կանխահաս աստուածպաշտու-
թիւնն, խօսուածքին մէջ ցուցած իմաստութիւնն՝
յայն հասակին յորում այլք ՚ի մանկանց հաղիւ ընա-
կան կ՚ելանք մի ուներն, իւր ծնողաց իմացուցին՝ որ իրմէ
բաժնուելու ժամանակն հասած էր. և երբ Յովա-
կիմ իւր հայրենի փոքրիկ կալուածին հնձոց և պաղոց
երրորդ երախայրիքն մատոյց Աստուծոյ, որով և զա-
ւակներն ալ երեք տարուան եղէ՝ այս երկու ամուսինք
երախտագէտք և Աստուծոյ կամացն հնազանդ՝ ճամ-
բայ ելին Երուսաղէմ գառնալու, առ ՚ի աւանդել տա-
ճարին սրբավայրն այն գանձն՝ զոր Սուրբն Իսրայէլի
տուեալ էր նոցա Գ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Գ. ԳԼՈՒԽ

1 Քրիստոսփոր սի Քասթրոյ յիսուսեան պատմագիր վարուց Մարիամու՝ համարի զի հայր կուսին երկու անուն ունէր Հեղի և Յովակիմ, որպէս համարին և բարեունիք հրէից, այլ և Սուրբն Իլարիոն և այլք ՚ի սրբոց հարց։ Յայս կարծիս է և Զամչեան Հ. Մկրտչէ Վ. (Պատիւ գծէչ էջ 59) որ Ղուկասու աւետարանչի խօսքին «Որպէս կարծիւր՝ որդի Յովսեփայ, որ Հեղեայն» ևն ասէ։ « Հեղեաւն իմացեալ լինի Յովակիմ՝ որ եղէ բնական հայր սրբոյ Կուսին։ Իսկ Թէ Յովսեփայ տայ՝ (այսինքն Յովսեփայ համարի հայր) այն ոչ է ըստ բնական հայրութեան, այլ ըստ օրինականին. ըստ որում անէրն՝ ասի հայր փեսային. կամ ասացից՝ ոչ ըստ հայրութեանն. զի աւետարանիչն՝ ոչ ըստ բնութեան զազգահամարն կարգէ ատ, այլ ըստ օրինացն. որպէս ասէ Խորենացի ՚ի Թուղթն առ Սահակ արծրունի. ըստ որոյ ոչ ասէ՝ որդի Հեղեայ, այլ որ Հեղէայն, այսինքն Թէ որ փեսայ էր Հեղեայն, և ոչ Թէ ծնեալ ՚ի Հեղեայ. որպէս յաւել նորա անդ որ Աքսմայն որ Աղոռածոյն, ոչ ցուցանէ Թէ Աղամ ծնեալ իցէ Աստուծոյ, այլ Թէ Աստուծոյ էր»։ Աբաբայելք և մահմետականք՝ զՀայր կուսին կոչեն Ամրամ որդի Մատթէի. այլ է ըստ նոցա և միւս Ամրամն Հայր Մարիամու քեռ Մովսիսի (տես ՚ի Բարթողիմէոս ս՝ Լրբալըղ արևելագէտ Հմուտ ծԵ. դարու, ՚ի գիրսն Մոպէնոպրաբան աբէլէան)։

2 Սուրբ Աւգոստինոս Համաձայնութեան աւետարանչաց։

Ա. Մովսէս Խորենացի առ Սահակ արծրունի ուղղեալ Թղթոյն մէջ վասն վերափոխման սրբամօրնէ փայտեայ պատկերն որ՚ի Հոգեաց վանս (որում համաձայնի և Դամասկացին ՀՐ դարու) Յովսեփայ աստուածահօր աղգաբանութիւնն այսպէս գնէ. Դաւիթ ծնաւ զՍողոմոն (զոր յիշէ Մատթէոս) և զՆաթան (զոր յիշէ Ղուկաս). ՚ի Սողոմոնէ սերունդք որդւոց յորդիս մինչև ցեղիազար՝ որ ծնաւ զՄատթան, Մատթան ծնաւ զՅակոբ, և Յակոբ զՅովսէփ զայր Մարիամու կուսի և զկնէովպաս։ Իսկ ՚ի Նաթանայ եղեն սերունդք որդւոց յորդիս մինչև ՚ի Ղևի. որոյ Ղևեայ երեք Մեղքի, Մատաթ և Պանթեռ կամ Բար (որդի) Պանթեռ կոչեցեալ։ Ի մեռանել Մատաթայ անորդի՝ Մեղքի եղբայր նորա էառ զկին նորա, և ծնաւ զՀեղի ՚ի կնոջէն Մատաթայ կամ Մատթանայ, այսինքն ՚ի մօրէն Յակո-

բայ. և Հեղի մեռաւ անորդի. և ըստ այմ որպէս Մատաթ նոյնանայ ընդ Մատթանայ, նոյնպէս և Ղևի ընդ Եղիազարու: Իսկ Յակոբ որդի Մատթանայ՝ի մեռանել Հօր իւրոյ՝ մնաւ՝ի տան Մեղքեայ օրինական Հայր իւր կոչեցեալ. զի և Հեղի և Յակոբ համամայր եղբարք էին յայլևայլ հօրէ, Յակոբ՝ի տանէ Սողոմոնի և Հեղի՝ի տանէ Նաթանայ: Եւ՝ի մեռանել Հեղեայ անզաւակ՝ եառ Յակոբ զկին նորա, և յարոյց զաւակ եղբօր իւրոմ զՅովսէի և զԿղէոփայաս. վասն որոյ սոքա կոչին նաև որդիք Հեղեայ: — Իսկ Պանթեռ որդի Ղևեայ կամ Բարպանթեռ որդի Պանթեռայ որդւոյ Ղևեայ՝ ծնաւ զՅովակիմ. Յովակիմ ծնաւ ԻՆնայէ զՄարիամ կոյս, յորմէ ծնաւ Յիսուս որ անուանեցաւ Քրիստոս: Այլ է Աւետիսէի կարծիքն՝ որոյ հետևաւած է երանաշնորհ Հայր մեր Մխիթար Աբբայ Մատթէի մեկնութեան մէջ զոր տես անդ:

Բայց ըստ յայսմաւրաց Հայոց և յունաց (որոց համաձայնի բաբեպրոբ՝ի վարս ՅՀ. Մկրտչի) Մատթան քահանայ ղևւսացի ծնաւ երիս դստերս այսինքն զՄարիամ, զՍովիէ կամ զՍոբէ և զԱննա: Աննա կին Յովակիմայ ծնաւ զսուրբ Կոյսն Մարիամ աստուածածնին, Սովիէ ծնաւ զԵղիսաբեթ զկին Զաքարիայ և զմայրն Մկրտչին, Մարիամ ծնաւ զՍողոմ զմայր որդւոցն Զեբեդեայ, կամ զայլ ոք Սաղոմէ միւս Մարիամ կոչեցեալ: Իսկ եղբարք և քոյր Քրիստոսի կոչեցեալքն՝ էին զաւակք Կղէոփեայ եղբօրն Յովսեփայ աստուածհօրայր կոչեցելոյ (վասն որոյ զաւակք նորա համարեցան՝ի դստերն Մատթանայ քահանայի) որք և էին Յակովբոս եղբայր Տեառն, Սիմոն կամ Շեմաւոն ազգական Քրիստոսի, Յուդա, Յովսէս. Մարթա, Եսթեր և Սողոմէ՝ մայր Յակովբայ և Յովհաննու որդւոցն Զեբեդեայ, (տես Մ. Խորենացւոյ վերոյիշեալ Թուղթն. յորում դոն և այլ կարեւոր աւանդութիւնք զվարուց Տիրամօրն):

Իսկ Պանթեռ անունն՝ որ առ յետինս անծանօթ համարի՝ յիշի Եպիփանէ, ՛ի Խորենացւոյն և ՛ի Դամասկացւոյն. քանզի առաջինն ՛է ἐἐ» հէչ»-ա-ֆ»ղ գրէ (ըստ այժմեան օրինակաց) թէ Յովսէփ և Կղէոփաս ծնան ՛ի Յակոբայ՝որ մականուանեալ կոչէր Պանթեռ. Խորենացւոյն խօսքն արդէն վերն յիշեցաք, որ ճիշդ այսպէս ասէ. « Աստ և Եպիփան կիսրացի մեծ վարդապետն այսպէս. Սուրբ Կոյսն Մարիամ աստուածածնին դուստր էր Յովակիմայ և Աննայի. իսկ Յովակիմ որդի Բարեայ՝ որ կոչի Պանթեռ, եղբայր Մեղքեայ, որպէս կայ յաւանդութեան հրէից. որդի Ղևեայ ՛ի զաւակէ Նաթանայ և Սողոմոնի (կամ Սողոմոնի) ՛ի ցեղէ Դաւթի յազգէ Յուդայ»: Իսկ Դամասկացին ՛ի գիրսն յաղագս ո—ղղ»ֆ»ա հ»ա»ֆ»ղ Դ 14 գրէ այսպէս. Ղևի ծնաւ զՄեղքի և զՊանթեռ, Պանթեռ ծնաւ զԲարպանթեռ

զայսպէս մականուանեալն, և այս Բարպանթեռ ծնաւ զՅովակիմ, Յովակիմ ծնաւ զԱստուածածնին սուրբ: — Պանթեռ անուան աստուգաբանութիւնն յայտնի չէ, զոր և Կելսոս նախատանօք յիշէր (ըստ վկայութեան Որոգինեայ) զՍուրբ Կոյս Պանդերայ կին ասելով. որպէս և պարսիկք զԲրիստոս անարգանօք Պանդուրակայ որդի կոչէին (ըստ Սրբոյն Եղիշէի վարդապետի). Հ. Մկրտիչ Վ. Ակերեան մերձաւոր համարի զձայնս բառին պ»ր»ա»ֆ»ղ որ է հիւսն փայտի, և պ»ն»պ»ր»ա»ֆ»ղ որպէս թէ ֆ»պ»պ»ր»ա»ֆ»ղ այսինքն որդի հիւսան (տես ՛ի Լ»ա»ա»ֆ»ղ»ա ա»բ»ո ՛ի վարս Յովակիմայ և Աննայի ՛ի 4 ծանօթութեան):

3 Մաշմաւտականք ժառանգորդք աւանդութեանց արաբացւոց ճանաչէին զերանեալ մայր Աստնասուրբ Կուսին՝ զոր և կոչէին Հաննա՝ որ ըստ իւրեանց էր դուստր Նաբոլեայ և կին Ամրամայ (տես տ՛Հրպերլոյ Մոփն. ա»ի»Հ»լ.):

4 Յառաջին դարուց հետէ եկեղեցին հանդիսապէս պատուէր զյիշատակ Սրբոցս Յովակիմայ և Աննայի: Եպիփան ՛ի ճառին ՛ի գովեստ սրբոյ Կուսին մեծապէս գրաւոտ զնոսա. նոյնպէս Սուրբ Յովհան դամասկացին յերկս ճառն ՛ի ծնունդ Մարիամ՝ մեծամեծ գովեստներ տայ նոցա առաքինութեանցն: Յուստինիանոս կայսր յամի 550 եկեղեցի մի կառոյց ՛ի Կ. Պոլիս յանուն Սրբոյն Աննայի ուր ասի թէ փոխադրեցաւ մարմին նորա ՛ի Պաղեստինէ յամի 710 (տես ՛ի ՅՀ. փրանկիսկոս Կոտէպար ՛ի սկիզբն ԺԸ դարուն, հտ Ն էջ 319) ուստի կեսոյ ՛ի բազում վայրս սփռեցան ՛ի Պոլսոնիա Իտալիոյ, ՛ի Կողոնիա Գերմանիոյ, ՀԱբդ Փրանկիոյ. որ և յաւուրս մեծին Կարոլոսի հրաշիւք յայտնեցաւ, և յայլ տեղիս: Ըստ տօնամատենին յունաց Մանուէլ Կոմնենոս կայսր հրամայեց որ Սրբոյն Աննայի տօնն աւելի մեծահանդէս տօնսւի քան որ յառաջն (տես Բենեդիկտոս ԺԴ Յաղագս ծննդեան Տեառն, Սիմոն կամ Շեմաւոն ազգական Քրիստոսի, Յուդա, Յովսէս. Մարթա, Եսթեր և Սողոմէ՝ մայր Յակովբայ և Յովհաննու որդւոցն Զեբեդեայ, (տես Մ. Խորենացւոյ վերոյիշեալ Թուղթն. յորում դոն և այլ կարեւոր աւանդութիւնք զվարուց Տիրամօրն):

Իսկ Պանթեռ անունն՝ որ առ յետինս անծանօթ համարի՝ յիշի Եպիփանէ, ՛ի Խորենացւոյն և ՛ի Դամասկացւոյն. քանզի առաջինն ՛է ἐἐ» հէչ»-ա-ֆ»ղ գրէ (ըստ այժմեան օրինակաց) թէ Յովսէփ և Կղէոփաս ծնան ՛ի Յակոբայ՝որ մականուանեալ կոչէր Պանթեռ. Խորենացւոյն խօսքն արդէն վերն յիշեցաք, որ ճիշդ այսպէս ասէ. « Աստ և Եպիփան կիսրացի մեծ վարդապետն այսպէս. Սուրբ Կոյսն Մարիամ աստուածածնին դուստր էր Յովակիմայ և Աննայի. իսկ Յովակիմ որդի Բարեայ՝ որ կոչի Պանթեռ, եղբայր Մեղքեայ, որպէս կայ յաւանդութեան հրէից. որդի Ղևեայ ՛ի զաւակէ Նաթանայ և Սողոմոնի (կամ Սողոմոնի) ՛ի ցեղէ Դաւթի յազգէ Յուդայ»: Իսկ Դամասկացին ՛ի գիրսն յաղագս ո—ղղ»ֆ»ա հ»ա»ֆ»ղ Դ 14 գրէ այսպէս. Ղևի ծնաւ զՄեղքի և զՊանթեռ, Պանթեռ ծնաւ զԲարպանթեռ

ասացեալ պարզ ուխտ էր՝ զոր յետս կարէին դարձուցանել Աստուծոյ նուիրածին փրկանքն տալով, այսպէս էր Մարիամմոր Աննայի ուխտն. իսկ երկրորդն «էբէմ անվզեալ պարտաւորիչ էր, որով խոստացեալ իրին վերայ ունեցած իրաւունքէն խոստացողն բոլորովին հրաժարէր: Այսն խոսայելացի այս կերպով կարող էր ամեն ունեցածն նուիրել զտունս, զՀող, զանասունս, զդրամս, զգերիս և այլն, և այս ուխտիս կապեալ իրերս կարելի չէր վաճառել կամ փրկանաւորել որ և է գնով:

12 «Մինէ մարթ ինչ իցէ՝ի Նազարեթէ բարւոյ իմիք լինել», ասէր Նաթանայէլ Քրիստոսի վերայ գովեստ խօսողներուն. այն տեղն աննշան և անարդ տեղ մի էր, ասէ Ոսկեբերան, ոչ միայն քաղաքն այլ և բոլոր Գալիլեա (Ճառ Թ):

13 Հրէից մէջ մարդ դուն ուրէք իրենց մայրական պարտքէն պակասէին՝ դիեցուցանելոյ զորդիս իւրեանց. բոլոր Ս. Գրոց մէջ երեք ամուսուք Համրուին Հռեբեկայ, Մեմիբոստէի և Յովասայ. և գիտելի է որ Հռաքէլ արդէն օտար էր, և միւս երկոքն ալ թագաւորազունք:

Դ. Մարեմայ Ծննդեան տօնն առաջին դարերէ՝ի վեր կը տօնուէր եկեղեցւոյ մէջ թերևս առաքելոց ժամանակէն սկսեալ, որոյ յիշատակութիւնն ունիմք՝ի Ս. Աւգոստինոսէ և՝ի Դամասկացւոյն: Բայց ընդհանուր հրամանն տօնելոյ զտօնս եղև յամի Տեառն 1243 Ինոսվկենտիոս Դ ի քահանայապետութեան ժամանակ, որ հրատարակեց թէ այս տօնս կատարուի յամենայն տեղիս. ուստի և մեր ազգին մէջ ալ նոյն ժամանակէն սկսաւ ունել մեծահանդես կատարուիլ տօնս. և մեծն Վարդան որ նոյն ժամանակներն ծաղկէր՝ յօրինեց վերոյդրեալ գերապանծ շարականն՝ի Ծնունդ Կուսին յամի Տեառն 1245. յետոյ Յակոբ կլայեցի կաթողիկոս յօրինեց և երկրորդ շարական մի՝ի նոյն խորհուրդ (տես՝ի վեր ծան. Գ):

Անցեալ դարուն սկիզբէն՝ի վեր Մխիթարեան Միաբանութիւնս ուղղափառ կատարէ զտօն Ծննդեան ամենօրհնեալ Կուսին. զի ճիշտ նոյն օրն հաստատուեցաւ 1701ին՝ի Պօլիս. և գրեթէ ամեն մեծամեծ յեղափոխութիւնք նորին նոյն օրերն հանդիպած են. որպէս փոխադրութիւնն նորա՝ի Վառա՝ի 1703, և անտի՝ի Վենետիկ՝ի 1717, հաստատուիլն՝ի Ս. Ղազարէն՝ի 1712. մեծին Պափոլէոնի յաւտակ հրովարտակովն՝ի 1810 անսասան մնալն երբ կայսերական հրամանով ամեն կրօնաւորական կարգերն բարձան Իտալիոյ. նմանապէս վերջին տարիներս յիտալական կառավարութենէ՝ի 1865:

երկոքին ևս լալով ուխտ եդին որ եթէ Աստուած իրենց գթալով զաւակ մի շնորհէ՝ իրեն ընծայեն զայն, ինչպէս որ եղև: Աստանօր գիտելի է զի Ծնունդն Մարեմայ ոչ էր անսերմնապէս որպէս իմանան յոյնք:

5 Ալահարզանի զեղծումն փարիսեցիք մուծին յերբայեցիս. և որոյ համար այնչափ կշտամբէ զնոսա Քրիստոս. վասն զի ուսուցանէին որ մարդ իւր կինն կարէ արձակել որ և է փուճ պատճառաց համար, օրինակ իմն եթէ կինն անհոգութեամբ երկանն ուտելու կերակուր չատկէ եփէ կամ երէ, կամ թէ բաւական սիրուն չերևի իր աչաց. այն կարծեաց հետևեր նաև իմաստնագոյնն՝ի նոսա բաբունին Հիլլէլ:

6 Բարնիոս (Կեսար Ծնեալ՝ի սահմանս Գեալոլոյոյ յաղօթավանիցն կարգէն՝ի Տաբէէբս իւր) զծնունդ Մարիամու գնէ յամի Հռոմայ 733, քան և մի ամբք յառաջ քան զքրիստական Քրիստոսի, յ8 սեպտեմբերի, յաւուր շաբաթու ընդ առաւօտս: — Սեբաստիանոս Կանոս տը Թիլլըմոն՝ի մէջկայս ԺԻ դարու՝ ասէ Ծնեալ զկոյսն յամի Հ. 754, որ աւելի հաւանական է (տես գլ. Բ ծանօթ Ե):

7 Թուրք ամենասուրբ Կուսին Ծննդեան համար ասեն. «Ամբաամայ (Յովակիմայ) կինն երբ Ծնաւ զդուստրն ասաց Աստուծոյ. Տէր իմ դուստր մի Ծնայ՝ բայց ոչ ոք՝ի մարդկանէ նման պիտի համեմատի. կոչեցի ես զնա Մէյրեմ (Մարիամ) և զոր յանձնեմ քեզ և զապագայ սերունդ նորա՝ ընդդէմ սատանայի քարկոծելոյ» (Սուրաթ Գ, տող 36):

8 Եպայի մարգարէացել էր ասելով «Բղեհեմի գաւազան արմատոյն Յեսսեայ». այս գաւազան բառս՝ որ երբայականին և անտի ալ՝ի լտ. բառն թարգմանած է՝ ըստ Սրբոյն Հերոնիմոսի նշանակէ զբուն ծառոյ անոյտ և անտերև, առ՝ի ցուցանել զի աւգոստափառն Մարիամ Ծնանելոց էր՝ի զարմէն Դաւթի՝ երբ այս աղգատոհմն կորուսեալ էր զպայծառութիւն իւր և բոլորովին անկեալ՝ի բարձրութենէն:

Գ. Կրկին են առ մեզ պանծալի շարականք ամբողջ պատկեր աւուրցն. մին կանոն Ծննդեան սրբոյ Աստուածածնին՝ի Ծնողաց իւրոց՝ի Յովակիմայ և Աննայէ որ սկսանի «Երէկուց+ որդէ+ Սէրնէ երբ նոր, արարեալ՝ի Յակոբայ կաթողիկոսէ առաջնոյ յամի 1267. և երկրորդն կանոն Յովակիմայ և Աննայի Ծնողաց Սուրբ Աստուածածնին որ նախնմայ էմատուրնիամբ՝ի վարդան վարդապետէ Մեծէ 1245:

9 Նոյն խօսքն Սուրբ Բեռնարդոս Յիսուսի անուանն համար ասացեալ էր:

10 Ս. Մակաբայեցւոց գլ. Գ 57:

11 Հրեայք երկու տեսակ ուխտս ունէին. առաջինն Նէդէր

ԳԼՈՒԽ Դ.

Ընծայառնլն Մարեւնայ ՚ի տաճարն.

Հեղեզատն Կիսոնի [1] փիլերահատասարի անձրևնեբոլին յորդելով՝ գարնե և գարնե թաւալէը իւր շառագոյն ջուերն, և Գալիլէայի կանաչագոյն լերինք սկսել էին ձիւնով ծածկուիլ՝ երբ ծնողք Մարիամու ձամբայ ելլին գէպ՚ի Երուսաղէմ երթալու։ Ոչ գիտեմք թէ ինչ պատճառաւ որոշեցին այն անձրևային յեղանակին իրենց հայրենի գաւառն Թողլու. Թերևս փափաքէին տաճարին նաւակատեաց մեծահանդէս ծոնեբուն ներկայ գտնուիլ, և կամ թէ այն ժամանակն որոշեցին երբ Զաքարիա քահանայապետն որ ՚ի Փեբրոն կամ Յուդին (Թերևս Նային) բնակէը՝ իւր սուրբ պաշտօնն պիտի սկսէր, որուն համար որոշեալ ժամանակներ սահմանուած էին [2]։

Եւ որովհետև քանի մի օր պիտի տեւէը այս ճամբորդութիւնս անհարթ եղանակի մէջ՝ իրենց հետ ունելով մատղաշ մանկիկ մի, խոհեմ և բարեպաշտ ուղեորքն Թողլով այն գիւղաբաղնաց և քարուտ ճանապարհն՝ որ Հրեաստանի և Սամարիոյ ջուր ցամաք գաշտերու փրփրագեղ հեղեղատներու և խոր վիհերու ափափայից մէջէն անցանէ, ուր որ ձմերուան սաստկութիւնն ալ աւելի կիմացուի, այն ուղին բռնեցին՝ որ Կարմելոսի ծաղկաւէտ և անուշահոտ բարձունքէն իջանէ և Սահարոնի բերրի գաշտերայքն հասանէ, ուր օդն այնչափ քաղցր և բարեխառն է՝ որ նարնջենիք պանդք և արմաւենիք բաց դաշտերու մէջ աձին [3]։

Ուստի այս կողմանէս հանելով մտին Երուսաղէմ Եփրայիմի դռնէն, և քանի մի ծուռումուռ և մուխ

փողոցներէ անցնելով՝ որոց երկու կողմն քառակուսի տգեղ տներ չլինուած էին՝ առանց լուսամուխ և պատուհանի. ամենքն ալ երդիքով ծածկած և խարխալած և աւերած տանտներու նման, վերջապէս քաղքին արևելեան դին անշուք տան մի առջև կանգ առին, որոյ համար տանդուէիէնն ասէ թէ Ս. Աննայի տունն է [4]։

Հաղիւ մանկիկն Մարիամ ճանապարհի հոգնութիւնն առաւ, Յովակիմ քաղքին մէջ եղած ազգականներն ժողովելով և Աստուածոյ նուիրելի գառնն գնելով [5] եւ ՚ի տաճարն, և իր հաւէն իր բազմաթիւ բարեկամներն՝ տօնական ղգեստներով զարդարուած։ Երբ արտաքին գաւթէն անցանէին՝ ուստի անդին ոչ կարելին անցանել հեթանոսք ընդ պատժով մահու, հոն մեծ բազմութիւն հանդիպեցան որ էին թագաւորին սպայքն, փարիսեցիք, վարդապետք օրինաց և աղնուական մարդիկ, որ Աստուածոյ նախախնամութեան ծածուկ տեսչութեամբն՝ գրեթէ գիպուածով հոն ժողովել էին ՚ի սրահն Սողոմոնի։ Անշուշտ Աստուած այնպէս կամեցել էր որ բարեբաղդ կոյսն՝ զոր ՚ի յաւիտենից սահմանեալ էր լինել Մայր Փրկաւորին՝ իւր բարձր պաշտաման արժանաւոր պատուով մոգէ ՚ի տաճարն աղօթից։ Բարեպաշտ մատենագիրքը ոմանք [6] համարին որ հրեշտակք ևս մանկիկն եղեն այս երկրաւոր հանդիսին, և տաճարին անտեսանելի պահապաններն՝ Մարիամու շուրջն բոլորելով՝ իրենց պայծառ թևաքն զնա թևասքողէին, նորա ոտից ներքև դրախտին բազմաբուրեան ծաղկունքն սփռելով, և քաղցրանուագ երգովք նորա գալուստն տօնելով։ — Սակաւ մի առեն կենալով շիշ [7] ասացեալ գաւթին արտաքուստ պատող մարմարեայ սանդղոց վերայ՝ տեսանէին փարիսեցւոց երեքաչ գաչն ցոյց տալով իրենց երկայն գրասպանակներն [8], և իրենց գոռոզ գլուխն ծածկած ճերմակ և նրբանիւթ բրդեայ թպիտին [9]

քաղաքին՝ որոց վրայ ասղնեգործած էին ծիրա-
նեգոյն նռներ՝ յակինթագոյն ժապաւէններով զար-
դարուած. տեսանէին Հերովդեսի քաջ զօրավար-
ներն իրենց հարուստ լոգիկներուն մէջ պլլուած և ոս-
կի ճարմանդով ուսերնէն կոճկած. տեսանէին զգես-
տեր Սիոնի երկայն լայնակներու ծալքերուն մէջ ինք-
զինքն պարակելով՝ առ պատհառանաց ՚ի հրճշտակաց
սրբարանին[10]: Յետոյ աստուածահրաշ մանկիկն և իբր
հանդիսակից անցին ընդ դուռն պղնձի որ զատէր
զսրբավայրն յօտարաց և ՚ի պղծոց:

Հիւսիսային աչխարհաց մէջ ընդարձակ եկեղեցի-
ներ հարկաւոր են՝ ժողովուրդն օդոց անհարթութե-
նէն պատսպարելու համար. վասն որոյ մեծամեծ
տաճարներ չինուած են՝ որոց մէջ բազմութիւ ժողո-
վուրդ կարեն հաւաքիլ. բայց հին ատեն Սիոյ մէջ
տաճարներն դրեթէ միայն պաշտօնէից համար էր, իսկ
ժողովուրդն գուրս կանգնած աղօթէր: Իսրայէլա-
ցւոց մէջ եկեղեցին կամ ժողովն հաւատացելոց՝ սովո-
րաբար կանուանց գաւիթն էր, որ տաճարին
երկրորդ գաւիթն էր, և այսպէս կոչուելովն պատ-
ճառն այն էր որ եբրայեցի կանայք՝ որ ՚ի հին օրէնս
գերեաց կարգն էին, անտի անդին չէին կարող անցա-
նել. և իրենց արու զաւակներէն և իրենց այրերէն
զատուած՝ որոնք պաշտամանց կատարուած ժամա-
նակ գաւթին բակին մէջ և կամ կամարակապ սրահից
մէջ կանգնէին, կանայք զատ վերնատանց մէջ աղօ-
թէին՝ գլուխնին գեալ ՚ի Աստուծոյ տունն ծուած՝ որոյ
մայր փայտէ հեծաններով և ոսկեզօծ բևեռներով եր-
դիքն՝ սակաւ մի հեռուէն երևէր:

Ընծայման արարողութիւնն անշուշտ կանանց գաւ-
թին մէջ կատարեցաւ, և ոչ թէ ՚ի ներքս ՚ի տաճարին՝
որպէս ոմանք համարեցան: Հանգիսն զոհով մի սկսաւ.
և երբ Նիկանովրայ դուռն իր պղնձի ծխնեաց վրայ
անձևինչ դառնալով բացուեցաւ՝ ուստի պիտի անցնէր

զոհն՝ Զորաբաբելի տաճարին ներքին տեսիլն կարա-
ցին տեսանել հանդիսակիցք իւր ձօնեալ պսակներովն
ոսկեսպատ դռներովն և իւր յղկած սրբատաշ կճեայ
պատերովն՝ որ ժամանակի հնութենէն դեղնած տե-
սիլ գոյն առած էին, ինչպէս ամենայն նախկին շի-
նուածք Արևելից: Ամենայն ինչ վեհ և սուրբ էր այս
Ամենակալին տան մէջ, և սակայն իր մեծվայելչու-
թեամբն հանդերձ՝ ոչչափ նուազած էր այնոր պայ-
ծառութիւնն և սրբութիւնն. մինչև անգամ իւր վե-
րականարարողութեանց մէջ թերութիւններ երևէին.
իւր քահանայքն՝ այլ ոչ ևս էին Աստուծոյ օծեալներն,
տաճարին անօթներն չունէին այն առաջին նուիրա-
գործութիւնն, տապանակն ուխտի աներևոյթ եղած
էր, և ընդ նմա այնոր ծածկոյթն ալ որ Փառութիւն
կոչէր (Եբրայեցերէն շէքինա), և քահանայապետին
լանջաց վերայ կրած այն տախտակն որ թանակ կամ
տախտակ դատաստանի կոչէր՝ այն գեղափայլ և գե-
րագոյն պատգամն ևս՝ որով որ Աստուած յայտնէր
որգուոյն Ահարոնի իւր կամքն, պայծառութիւնն կո-
րուսած էր, և ա՛լ ոչ գուշակէր ոչ զպատրաստութիւն և
ոչ զյաղթութիւն [11]: Սակայն փառաւոր օր մի ծա-
գելու վերայ էր այն սրբութեան յարկին վերայ՝ որոյ
արշալոյսն արդէն փայլէր յԱրևելս:

Քահանայք և ղևտացիք վերջին գաւթին մէջ ժողո-
վեալք՝ ընկալան ՚ի ձեռաց Յովակիմայ գոհարևան
զոհն[12]: Այս Աստուծոյ կենդանւոյ պաշտօնեայքս՝ գից
քուրմերուն պէս գաղնիկ և նախուրբ պսակներով
պսակեալ չէին, այլ կլորիկ խոյր մի կրկին գլուխնին
բարակ բեհեզէ, բազկին ալ նոյնպէս մաքուր կտաւէ
երկայն և նեղ, մէջքերնին հանգրիւճած լայն գօտւով
որ ոսկւով յակինթիւ և ծիրանւով ասղնեգործած էր.
այս էր քահանայական հագուստն՝ զոր միայն տաճա-
րին մէջ հագնէին: Զոհագործներէն մին բռնեց գառ-
նուկն և գլուխն գեալ ՚ի հիւսիս դարձուց և կարգա-

լով համառօտիւ զանուն Աստուծոյ Յակոբայ՝ մերթեւ զայն. և զարիւնն որ սղնձի անօթի մի մէջ վազէր՝ դրաւ 'ի մի կողմն՝ սեղանոյն չորս անկիւններն սրսկելու համար [13]: Այս առաջին արարողութիւնս կատարեցին եաւ՝ քահանայն ոսկեղէն ափսէի վրայ դրաւ զոհին գեւ դողդոջուն անդամոց մի մանր հանդերձ փորոտեօքն՝ զոր ձեւացիք [14] լուացած մաքրած էին աւազանի սրահին մէջ, ալ և խունկ ցանեց, և յետոյ բոկոտն եղնելով 'ի զնստագոյն վերնէից ոզջակիզեաց սեղանոյն մինչև վերին ծայրն՝ գնաց և արեան նուիրուածն արար, և արծարծեալ բոցոյն վրայ՝ որ մարդու չնչով վառած չէր [15], նաչխոյ և զուտ ձիթոյ փոխինդն արկանելով՝ որ ոսկեղէն բաժակի մի մէջ պատրաստուած էր՝ վերջապէս վառած փայտերուն վերայ դրաւ խաղաղական զոհն: Ոզջակիզեաց փայտն Սիւբեմայ [16] անտառներէն կը կտրուէր, զոր սաորին պաշտօնեայք տաճարին՝ խնամով ընտրէին և կեղևներն մաքրէին [17]: Իսկ զոհէն աւելցած միսն՝ բայ 'ի երբուծէն և աղ ուսէն որ զոհագործոց մասն էր, յովակիմայ տուեցաւ՝ զոր իր մերձաւորագոյն ազգականացն բաժնեց, որպէս սովորութիւն էր:

Երբ քահանայական փողերուն ձայնն դեռ ևս հնչէր դաւիթներու լայնարձակ կամարակապներուն մէջ, և զոհն այրէր սեղանոյն վերայ՝ մին 'ի քահանայից էլ կանանց դաւիթն արարողութիւնն լրացընելու համար՝ այն առեն Աննա մանկիկն գիրկն առած՝ Յովակիմ ալ ետևէն՝ առաջ անցաւ գլուխն քողով ծածկեալ, և Աստուծոյ պաշտօնէին մեռենալով՝ նորա ոտից առաջն դրաւ զմատաղ աղաւնին Տեառն [18], որ գրեթէ անմիջապէս յորանէ առ սեղանն անցանէր: Քահանայն ընկալաւ յանուն Աստուծոյ՝ որ բեղմնաւոր գործէ զարգանդ մարդ, զայն պատուական աւանդն՝ զոր երախտագիտութիւն մերն իրեն յանձնէր, և օրհնեց զՅովակիմ և զբարեպաշտ կողակից նորա. ինչպէս որ Հեղի նման

պատգամի մէջ՝ օրհնել էր զերկիւղածն Ելկանայ և նորա բարեբաղդ կինն. և յետոյ տարածելով իւր ձեռքն 'ի վերայ Ժողովրդեան՝ որ դեռևին ծառած [19] նորա օրհնութիւնն ընդունէին, ասաց. «Ո՛վ Իսրայէլ, Աստուած յաւիտենական իւր երեսաց լոյսն սփռէ քու վերայ, ամեն գործդ յաջողէ, և քեզ խաղաղութիւն տայ»: Ցնծութեան և երախտագիտութեան ներդաշնակաւոր երգով մի և քահանայից տաւիղներուն ձայնով՝ աւարտեցաւ ամենասուրբ կուսին ընծայման հանդէսն ալ, որ կատարեցաւ նոյեմբեր ամսոյ վերջի օրերն Սիոնի սուրբ տաճարին մէջ:

Մարդիկ որ սովորաբար իրաց արտաքին երևոյթն միայն դիտեն՝ ուրիշ բան ոչ տեսին այս արարողութեանս մէջ՝ բայց միայն հրաշալի գեղեցկութեամբ և զարմանալի եռանդեամբ բորբոքեալ մանկիկ մի զոր Աստուծոյ նուիրէ իւր մայրն՝ զոր այնչափ պահօք և արտասուօք ընկալեալ էր իբրև զաւակ դերանիկ. բայց հրեշտակք երկնից որ սաւառնէին այն սրբարանին վերայ՝ ծանեան որ այն մատաղ և սիրուն արարածն՝ եսայեայ նախաձայնեալ կոյսն էր. Սողոմոնի երգոց խորհրդական հարսն, և երկնայինն Եւա որ գայր ջնջել զմեղս՝ զոր յանցաւորն Եւա էր կարացեալ ջնջել իւր արտասուօքն [20]. որդեգրական և սիրելագոյն դուստր հզօրին Աստուծոյ, այն զոր Ադամ յաւաջագոյն նկատեալ էր 'ի բարձանց դրախտին, և որ սահմանեալ էր բերել նմա զմիակ ապաւէն փրկութեան յետ նաւակոծութեան իւրոյ. և երկոքին ևս լցեալ ցնծութեամբ և տեսնելով վերջապէս որ Մեսիային գալստեան օրերուն արշալոյսն փայլէ՝ 'ի հեռուստա ողջունէին այն փափուկ ծաղկին որ պիտի աճէր առ ոտս սեղանոյն, որպէս զձիթենին խաղաղութեան և նորոյ ուխտի, և որպէս սարգենին շանթահալած ընդ մէջ մարդոյ և երկնից:

Բայց ինչ զգայր Մարիամ յայնժամ իր սրտին

մէջ՝ որ սրբաբար հոգւոյն ընչմամբն իբրև ծաղիկ բա-
ցուելով՝ խաղաղութեան սուրբ սիրոյ և պայծառ
լուսոյ մէջ խայտայր և շողայր. որպիսի ծածուկ կա-
պանօք միանար Աստուծոյ հետ՝ որ զինքն նախամե-
ծար ընտրել էր ի միջի այնչափ կռւսանաց և թա-
գուհեաց աշխարհի: Այս բանս իր և Աստուծոյ մէջ
անհասանելի խորհուրդ մի է. և սակայն ամենայն ի-
րաւամբ կարենք ասել թէ ոչ երբեք եղած էր նուէր
մի քան զայս աւելի հաճոյական, և եկեղեցւոյ վար-
գապետք առ հասարակ՝ Ս. Եւոդիոս անտիոքացւոյն,
Սուրբ Եպիփանու սալամինացւոյն և Ս. Անդրէի կը-
րետացւոյն հետ միաբանին ասելու թէ Սրբուհւոյ
Կուսին Նուիրման պէս կրօնական գործ մի եղած չէր
բնաւ ի մարդկանէ՝ այնքան աստուածահաճոյ:

Այն քահանայն որ ընկալաւ զսուրբ Կոյսն ի դաս
դաստերաց Սիոնի՝ անուամբն անյայտ է մեզ. Սուրբ
Գերմանոս պատրիարքն Կոստանդնուպօլսոյ և Գէորգ
Նիկոմիդացի համարին թէ Յովհաննու Մկրտչի հայրն
էր. այս կարծիքս Հնմարտանմանելով եթէ մտածեմք
Զաքարիայի Յովակիմայ գերդաստանին հետ ունե-
ցած աղգակցութիւնն, և իրեն նոյն ատեն քահա-
նայական դասակարգութեան մէջ ունեցած իշխա-
նութիւնն [21], և այն գործովական սէրն զոր պահեց միշտ
Մարիամ առ նա և առ Ելիսաբեթ Ա: Որ զինչ և իցէ
Յովակիմայ երջանիկ դուստրն հանդիսապէս մտաւ ի
դաս կուսանաց կամ օրիորդաց որ հեռի յաչաց
մարդկան կը պահուէին ընդ հովանեաւ սուրբ տա-
ճարին, զորս երբայեցիք հաւնա անուանէին որ կոյս
նշանակէ: — Աղաքէլական աւանդութենէ, սուրբ
Հարց գրուածներէն և Եկեղեցւոյ կարծիքէն հաս-
տատուած և ապացուցուած է՝ որ Մարիամ իր գեղեց-
կագոյն տարիներն տաճարին մէջ անցուց. և գիտեմք
ալ որ եկեղեցին տարակուսական բաներն հաստատե-
լու սովորութիւն չունի [22] Ա: Այսու ամենայնիւ հե-

րեփիկոսք սմանք այս պարագայս առաստել կարծե-
ցին. եղան և ուղղափառք որ մերին համարեցան այս
կէտս՝ հնութեան քողոքել ծածկեալ և գիւտարին ի
լուսաբանել: Աղբիւներուն ուրացութեան վերայ ոչ
զարմանամք. բայց վերջիններուս տարակոյսն մեզ
յիրաւի անտեղի երևի. վասն զի եթէ կայ հարազատ
նշաններ ուշեցող քրիստոնէական աւանդութիւն
մի՝ անտարակոյս այս է: Սուրբն Եւոդիոս՝ որ յառաջ
քան զամենսին Սրբոյ Կուսին մանկութեան այս փա-
ռաւոր պարագայն յիշէ՝ իւր Լոյս կոչուած Թղթոյն
մէջ, և որ Նիկեփորոսի ձեռքով առ մեզ հասած
է, Եւոգիոս ասէ՝ առաքելոց և Տիրամօր ժամանա-
կակից էր. ինքն Անտիոքայ ասորւոց եպիսկոպոսն
էր՝ ուր յաճախէին հրեայք և քրիստոնեայք. և ե-
րուսաղէմայ տաճարն ուր նոր հաստատուելոք խո-
րին մեծարանօք մատչէին զինի հետոց Որգէոյն Աս-
տուծոյ և մօր նորա երանելւոյ՝ գեռ կանգուն կայր
իւր բովանդակ փառաւորութեան մէջ: Այս աւան-
դութիւնս՝ որ յերուսաղէմայ եկեղեցւոյն եկած
էր որոյ անդամք էին ոչ միայն առաքեալք և աշա-
կերտք Յիսուսի Փրկիսոսի՝ այլ և բազուկք յաղ-
գականաց Սրբոյ Կուսին և Ս. Յովսեփայ, այն նախ-
կին ժամանակներէ ի վեր հաստատուեցաւ կրօնա-
կան յիշատակարանով մի՝ որ ապացուցական փաստ
մի է նոյն իսկ յաչս բողոքականաց [23]: Վերջապէս Ս.
Ղարց մեծագոյն մատն [24], և յանուանէ Ս. Հերոնի-
մոս որ նոյն իսկ այն աստուածակոխ տեղերն բնակէր
և աւանդութիւնք գեռ կենդանի և մեծաւորք էին ժա-
մանակաւ, այս պարագայս Յիսուսի համարին: Այս
ուրեմն այս աւանդութիւնս ալ պատմական ստուգագոյն դիպաց կարգն կարէ համարուիլ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Դ. ԳԼՈՒԽ

1 Կիսոն փոքրիկ գետ կամՀեղեղատ մի Է՝ որ ընթանայ ընդ
մէջ Նազարեթի և կարմելոս լերին, որ ամառն պաղետինու
միւս գետերուն պէս ցամքի, իսկ անձրևային եղանակին յորդե
և ծաւալի, և հունքն գժուարանցանելի լինին. հոս էր որ կո-
րեաւ Սիսարայի յաբինացոց զօրավարին լանակն:

2 Դաւեթի կարգադրութեամբն քահանայք ՚ի քանեւչորս դա-
սակարգութիւնս բաժնուած էին, յորոց իւրաքանչիւր շաբաթ
մի սպասաւորէին Յերուսաղէմ. իւրաքանչիւր դասակարգու-
թիւն ալ յեօթեն խումբս բաժանէին, իւրաքանչիւրն նոյն եօթ-
նեկին մէջ յատուկ պաշտօն վարելով զոր վիճակաւ Հանէին.
Զաքարիա Աբիայի դասակարգութենէն էր (Բրիտոյ Պոփո-
ռիւ՚ն հրէից):

3 Վընէչ փրանկիացի ՚ի Ճանապարհորդութեանն յարևելս
տեսաւ նռնենիներն պողպեից յամանանն յունուարի ՚ի ծովե-
զերս Ասորեաց, ՚ի բացօթեայ դաշտս տնկեալ: Մեր երկիրներուն
մէջ, ասէ նա, բնութիւնն բաժնած է զեղանակս տարւոյ ամիս-
ներով, իսկ անդ կարելի ասել թէ միայն ժամերով բաժնուած
են. եթէ Տրիպոլսոյ մէջ յուլիսի տօթէն նեղիս՝ վեց ժամ հեռի
դեպ ՚ի լեռներն գնա, և մարտ ամսոյ զովութիւնն գտանես. և
ընդհակառակն եթէ դեկտեմբերի ցուրտ իմանաս լերանց վե-
րայ՝ մի աւուր ճամբով ՚ի ծովեզերս հասանես՝ մայիսի ծաղկամբք
զարդարեալ:

4 Սրբոյն Աննայի տանս վերայ մենաստան մի շինուեցաւ՝ որ
յետոյ ՚ի մզկիթ փոխուեցաւ (Շաթոպրիան Ո՚ղևորութիւն ՚ի
Բաբէվ յԵրուսաղէմ հտ. Բ էջ 211):

5 Հանդիսաւոր ընծայմանց ժամանակ հրէից սովորութիւն էր
միշտ զոհ մի մատուցանել. որպէս Աննա մայր Սամուէլի մա-
տոյց՝ իր զաւակն ՚ի Սելով տարած առնն: Հայրն Բրուաղ հա-
մարի թէ նոյնպէս զոհ մի մատուցուած է Ամենասուրբ Կուսին
ընծայման ժամանակ, որ շատ հաւանական է, որովհետև գրեթէ
անոնօրինելի էր:

6 Ս. Անդրեաս կրետացի և Գէորգ Նիկոմիդացի:

7 Շէլ ասացեալ վայրն տան կանգնաչափ տեղ մի էր՝ ընդ
մէջ գաւթին հեթանոսաց և կանանց:

8 Գրապանակ և երբայեցերէն ՚ի ֆէլէմ ասացեալն մագաղա-
թի շերտեր էին՝ որոց վերայ մանաւոր թանաքով Սուրբ Գրոց
չորս խօսք գրուած էին, և զորս հրեայք ձախ արմկան վերայ
պլլէին կամ ճակատնուն վերայ կրէին: Յիսուսի Քրիստոսի
ժամանակ շատ յաճախեալ էր այս սովորութիւնս աւելի եր-
կայն գրութիւններով մանաւանդ առ փարիսեցիս, որով կու-
զէին յայլ հրէից որոշուիլ և իբրև աւելի պատուիրանապահք
պատիւ ստանալ, որոյ համար Տէրն զերծնք յանդիմանէր (Պաս-
նաժ հտ. Ե, գիրք Ը գլ. 17):

9 Թալէթ տեսակ մի քառակուսի վերարկու էր՝ զոր հրեայք
ագանէին աղօթելու համար՚ի տաճարն ելած ատեն, զոր ոմանք
վզերնին պլլէին, և այլք գլուխնին ծածկէին՝ որ աւելի սովորա-
կան էր (Պասնաժ հտ. Ե, գիրք Ը):

10 « Վայն որոյ պարտ է կնոջ շուք դնել գլխոյն վասն հրեշ-
տակաց » (Ա. Կորնթ. ԺԱ. 10):

11 « Աստուած Իսրայելի պատերազմաց մէջ յաղթութիւն-
ներն դուշակելու համար՚ի գործ ածէր զգոհար ակունան որ յէ-
ռեալ էին ՚ի տախտակն դատաստանի ասացեալ լանջապանա-
կին վերայ՝ զոր կրէր քահանայապետն. վասն զի երբ յաղթու-
թեամբ պիտի աւարտէր պատերազմն՝ այն} գոհարներն կարգե
դուրս փայլէին, որով ժողովուրդն իմանայր թէ Աստուած իր
մեծվայելչութեամբն պատրաստ էր իրենց օգնելու: Բայց իմ
այս բաներս գրած ատենս՝ երկու հարիւր տարիներէ ՚ի վեր էր
որ այս լոյսս դադրած էր » ասէ Յովսեպոս (Հնախօս. հրէից
գիրք Գ):

12 ՅԱստուծոյ շնորհք մի խնդրելու և կամ ընկալեալ շնոր-
հաց համար երախտագէտ լինելու զոհն ֆոհո-րիւ՚ն ըսհ անուա-
նէր:

13 Ողջակիզաց երկայն քառակուսի սեղանոյն չորս անկիւն-
ներն չորս փոքրիկ սիւներ կային մի կանգուն բարձրութեամբ
որ եղջիւր+ սեղանոյ անուանէին. ոտք մէջն փորուած էր և զո-
հից արիւնն այնոց մէջ հեղուլին. ինչպէս շատ անգամ յիշատա-
կի ՚ի Ս. Գիրս (Բրիտոյ Պոփո-րիւ՚ն հրէից):

14 Զոհ մի մատուցանելոյ համար բազմաթիւ քահանայք և
ղևտացիք հարկաւոր էին. Պատաժ ասէ թէ գառն մի զոհելոյ
համար տասնևւեւթ զոհագործք պէտք էին:

15 Զոհից սեղանոյն կրակն վառելոյ համար բերնով փչել կամ
փուքով արծարծել օրէն չէր. այլ վառած ածխոյ վերայ խունկ
թափելով բռընկցընէին (Բրիտոյ):

16 Զոհի վայն պաղեստինու Նաբլուսա երկրէն դայր, զոր
կեղևներէն մաքրելով ամէաբէին. Սիւքեմայ երկիրն ալ ար-
դէն անտառային էր (Թէլհօկո-րիւ+ ոլհէլէյ հտ. Դ):

17 Բրիտոյ Պաւղոս Ընկեր հրեէց։

18 Ըստ մահմետական աւանդութեան երբ Աննա մատոյց ըզ-Կոյսն առ քահանայս՝ ասաց նոցա զայսոսիկ. Ահաւասիկ նուէրն զոր կ՚ընծայեմ, ինչպէս որ գրեալ է Ղուրանին մէջ, և որոյ պարսկական յարաստութեանց մէջ յաւելու. Որովհետև պարզ ես՝ զոր կ՚ընծայես Աստուած. կամ ճիշտ ևս Որովհետև ՚ի պարզեւ ստոյ ծնեալ կ՚ընծայես Աստուած (տ՚ Էրսլէյ Մոհամետական տրանքլան)։

19 Քահանային օրհնութիւն տալու ժամանակ՝ ժողովուրդն ձեռքով երեսն ծածկէր, որովհետև արդելեալ էր Հայել ՚ի ձեռս նորա. հրեայք համարէին թէ Աստուած քահանային եւին կեցած՝ նորա ձեռաց մէջէն իրենց նայէր. ուստի ոչ համարձակէին իրենց աչքն ՚ի վեր առնուլ. վասն զի ոչոք կրէ պեսոնել զԱստուած և ապրիլ (Պատմաժ գիրք Ե գլ. 15)։

20 Եւայի զղջման ապաստութիւնն իմացնելու համար՝ բաբբիք ասեն թէ Տիբերիոյ ծովակն նորա յարտասուացն ձևացած է։

21 Հրեայք համարէին զՅովհաննէս Մկրտիչ մեծ քան զԲրիստոս որդի քահանայապետի լինելուն համար (Յովհ. Ոսկեբ. ճառ. ԺԲ)։

Ե. Մեր յայսմաւրաց մէջ (՚ի Նոյեմբ. 21 և յայր. 6) գրի զի Ծնողք Սրբոյ Կուսին՝ որ ուխտեալ էին Աստուծոյ նուիրել զնա « Բերին զաղջն ՚ի տաճարն երից ամաց. զոր առեալ քահանայն Զաքարիաս զսուրբ աղջն ՚ի գիրկս իւր. կոչեաց զանուն նորա Մարիամ, որ ասի լուսաւորեալ... օրհնեաց Զաքարիա զսուրբ աղջն, և մարգարէացաւ վասն նորա՝ անուանի լինել ՚ի մէջ մարդկան և երանելի յամենայն ազգաց։ Եւ Յովակիմայ և Աննայի կատարեալ զուխտ իւրեանց՝ և առեալ զաղջն, դարձան ՚ի տուն իւրեանց. և յամենայն ամ ՚ի տարելիցն բերէին զաղջն ՚ի տաճարն և տանէին։ Իբրև եղև եօթն ամաց սուրբ աղջն Մարիամ՝ բերին ՚ի տաճարն, և յանձնեցին Աննայի մարգարէի (գուսար Փանուէլի յազգէ Ասերայ), և այլ ոչ տաբան. և մնաց անդէն զամս եօթն և մնաւ սրբութեամբ ՚ի տաճարն, և ՚ի հրեշտակաց լինէր սպասաւորեալ և կերակրեալ»։

22 Եկեղեցին ՚ի պատիւ ընծայման Սրբոյ Կուսին հաստատեց զտօնախմբութիւն նորին որ կատարի ՚ի 21 Նոյեմբերի։

Բ Այս թուականս ճիշդ երևի՝ որովհետև ամենայն եկեղեցիք քրիստոնէից ՚ի նմին աւուր տօնեն զընծայումն Կուսին։ Բայց թէ երբ սկսաւ տօնուիլ՝ յայտնի չէ. երևի թէ յառաջին ժամանակս շատ տեղեր կը տօնուէր. բայց սահմանադրութիւնն և հրամանն տօնելոյ յամենայն տեղիս եղև յամի 1463 Պիոս Բ Քահանայապետի վճռովին։ Պատմէ Յովհան դամասկացի զի հնգեամեայ ՚ի հնուն տօն մի կատարէին յ30 յունուարի՝

յորում էգ գառն մի ընծայէին խաղաղութեան չաստուածուհւոյն, և կոչէին զայն տօնախմբութիւն մաքուր գառին. այս գառնս՝ ստուեր իմն էր Սրբոյ Կուսին որ ընծայեցաւ ՚ի տաճարն վասն խաղաղութեան համօրէն ազգի մարդկան՝ ոչ ՚ի յունուարի 30 այլ ՚ի Նոյեմբերի 21, որով և եղև օրս այս տօն ամենամաքուր գառին այսինքն Սրբոյ Կուսին (Պապիէր գ՚ծ էջ 110)։

23 Կիպրացին անգլիացի մեծահամբաւ պատմաբանն՝ բողոքական լինելով հանդերձ և ոչ նպաստաւոր կրօնից, հաւանի ընդ հարաւորութիւն կրօնական աւանդութեանց ՚ի Պաղեստին ասելով « Քրիստոնեայք անբիծ աւանդութեամբք հաստատեցին զամենայն դէպս արժանիս յիշատակաց » (Հտ. Դ էջ 101)։ Եւ ըստ Շաթոպրիանի եթէ երկրիս վերայ ստուգագոյն բան մի կայ՝ երուսաղէմի քրիստոնէական աւանդութեանց հարաստութիւնն է։

24 Սուրբքն Եպիփան, Գրիգոր Նիւսացի, Գր. Նազիանզացի, Գերմանոս պատրիարք Կ. Պոլսոյ, Յովհան դամասկացի և Գէորգ Նիկոմիդացի, և այլք։

ԳԼՈՒԽ Ե.

Մարիամ Ի տաճարին.

Տաճարին որմափակ շրջապատին մէջ՝ ընդարձակ երկիր մի կայր, ուր կրօնական չէնք մի չինուած էր՝ Աստուծոյ նուիրեալ կուսանաց բնակութեան համար սեպհականուած: Հոն տեղն Երուսաղեմայ քրիստոնեայք մատուռ մի կանգնեցին՝ զոր յետոյ Կովբեատոս քաջ խաչակիրքն յեկեղեցի փոխեցին ոսկեզօծ գըմբեթաւ [1], և որուն ներքին որմերն շատ անգամ տաճարական ասպետներն սարակինոսաց աւարներովն զարդարէին. և ահա այն չէնքն յանձնեց Զաքարիա իւր մանուկ ազգականն [2]:

Թէպէտ և Իսրայէլացւոց մէջ կուսութիւնն առժամանակեայ ժուժկալութիւն մի էր՝ որ յետոյ տեղի պիտի տայր ամուսնական պարտուց, սակայն այսու ամենայնիւ իւր առանձնաշնորհութիւններն և պատիւներն ունէր: Աստուծոյ մանաւոր կերպով հաճոյ էին անարատ երիտասարդաց և կուսանաց աղօթքն. ուստի ոչ թէ թագուհի՝ այլ կոյս մի ընտրեց մարդկան ազգի փրկութիւնն կատարելու համար: Այսպէս և տեսանողն Յուդայ՝ ընտրեալ բայց միանգամայն շատ անգամ պատուհասեալ ժողովրդեան՝ իրենց թշուառութեանց կամ յաղթութեանց մարգարէական պատկերն ներկայացուցած ժամանակ, իրենց խօսից մէջ յիշէին ուրախ կամ սգաւոր կոյս մի որ Հրէաստանի գաւառներն և քաղաքներն նշանակէր: Այն սպառնալուռ կոտորածոյ պատերազմաց մէջ՝ երբ Եբրայեցւոց երկայրի սուրն Մովաբու կանայքն և ծերերն և մանկունքն թրէ անցընէր, կուսա-

նաց խնայէին: Նոյնպէս զոհագործ քահանայն՝ որուն յօրինաց արգելեալ էր իւր սրտին սիրած բարեկամին և ժողովրդեան իշխանին անգամ թաղման հանդիսին գանուիլն՝ որպէս զի մի պղծեսցի, կարէր մերձ գտանիլ իւր քեռն մեռելոյ՝ եթէ կոյս էր, և այսու պղծեալ ոչ համարէր (Ղեւտ. ԻԱ. 1):

Հարկաւ ասացեալ օրինօրդք՝ տաճարն գեռ չէին նուաճ՝ եբրայական պաշտաման արարողութեանց մէջ՝ որոշեալ մաս մի ունէին. ինչպէս տեսանեմք զի Մովսիսի քոյրն Մարիամ նոցա պէտին անցած՝ Թմբկօք և պարուք տօնեն կարմիր ծովուն յաղթական անցքն: Այսպիսի պարապար օրինօրդաց գասք՝ որ յԵգիպտոսէ յանապատն անցին՝ եբրայեցւոց մէջ երկար աստեն տեւեցին: Սելովյ կուսանքն Դատաւորաց ժամանակ՝ որ Իսրայէլի ուրիշ օրինօրդներէն զատ կերպով մի բարձրեալոյն ծառայութեանն նուիրեալ էին՝ տօնի մի ժամանակ տաւղօք և երգովք սուրբ տեղւոյն մօտ պարած տեսնին՝ Բենիամինի երիտասարդքն ընոսա հափշտակեցին [3]: Եւ այնչափ արմատացեալ էր այս սովորութիւնս՝ որ և ոչ այս ծանր դէպքովս գադրեցաւ՝ մինչև այն թշուառ տեսնեն՝ յորում տապանակն աներևոյթ եղև, և առաջին տաճարն կործանեցաւ:

Հաւանական է որ ամենայն հարկայք ալ այս նուիրական պարուց մասնակից էին՝ բաւական էր որ իրենց անունն անպարսաւ լինէր. բայց նոցա բազմութեան մէջ ընտրեալ մաս մի ալ կայր՝ որ աւելի եռանդեամբ սեղանոյն չուրջն բոլորէին: Երբ Աստուծոյ տապանակն գեռ վրաններու տակ հանգչէր՝ այն ուխտաւոր կանայք որ և աղօթիւն առ դուրս խորանին, նուիրեցին Աստուծոյ իրենց յԵգիպտոսէ բերած մեծագին հայելիներն (Ելից ԼՉ 8): Անշուշտ սոքա բարեպաշտ այրիք էին հրաժարեալք ի նոր հարսանեաց՝ աւելի ևս երկնային բաներու զբաղելու համար. և

այս կանանց առաջնորդուԹեան նեբքև էին այն կուսանքն կամ հարևայր՝ զորս իրենց ծնողքն սրբաբանին սպասաւորուԹեան նուիրած էին. այս է Ս. Հերոնիմոսի կարծիքն ալ ելից վերոյիշեալ տողին նկատմամբ:

Եւ որովհետև ծնողաց ուխտն սովորաբար առժամանակեայ էր և կարելի էր փրկանաւորուԹեամբ աղատիլ, և փրկանաւորուԹեան գինն ալ նուազ գումար մի էր [4], ուստի քանի մի տարի անցնելէն ետև փրկանաւորէին զնոսա [5]. որով ուխտ առժամանակեայ կամ փոխ տալ Աստուծոյ կը կոչուէր [6]. ինչպէս Աննա իր փոքրիկ Սամուէլն 'ի Սելով տարած առեն ասէր. Ես զնա փոխ տուի Աստուծոյ (Ա. Թագաւոր. Ա. 28):

Իսկ Բաբելոնի գերուԹենէն դառնալէն ետև պարսկային գաղափարք իրենց վրայ ալ տիրած լինելով որոց մէջ կանանց արգիլուած էր կրօնական հանդիսից մանակցուԹիւն [7]. հարևայից կամ կուսանաց կենաց վերայ ալ փոփոխուԹիւն եղև, և սկիզբնքք դագրեցան ազգային մարմնոյ մասն սեպուելէն, և այլ ոչ ևս երևէին հրապարակաւ պաշտաման արարողուԹեանց ժամանակ: Ֆհանայապետաց տիրապետուԹեան առեն՝ կուսաստանին մէջ փակեալ կեանք մի վարէին, և այնպէս անտեսանելի և մենայեալ անցուցանէին իրենց օրերն՝ որ երբ Հեղինդորոս ամբարիշտ սրբապղծուԹեամբն բոլոր Երուսաղէմ տակնուվրայ եղև և այս կուսանքս չփոթած Ոնիա քահանայապետին քոյրն վազեցին՝ Իսրայէլացւոց պատմաբաններուն այնչափ անսովոր և զարմանալի երևցաւ այս բանս՝ որ իրենց տարեգրուԹեանց մէջ արձանագրեցին [8]:

Ուստի որչափ ուրիշներն հակառակն ասացին, սակայն յայտնի է ԹէԱ՛ Մարիամու առաջին ընծայուած ժամանակ՝ նոյն սուրբ տեղւոյն սպասաւորուԹեան

նուիրեալ կուսանք կային. և այս բանիս վկայեն նախկին քրիստոնէից տահմանագրուԹիւնները ալ [9], և Սուրբքն Ամբրոսիոս և Հերոնիմոս գնոյն հաստատեն: Բայց շատերն հետաքրքիր են գիտելու՝ ԹէԱ՛ ինչ բաներ հանդիպեցան՝ երբ Կոյսն այն կուսաստանն բնակեր, ոյք էին իր այն առեների զբաղմունքն, յօժարուԹիւնները, սովորուԹիւնները և հոգևորական պարտաւորուԹիւնները. որոց նկատմամբ յոյժ սակաւ են մեր ունեցած հարազատ յիշատակարանք: Այնուհետև այս բաներուս վերայ մանրամասն տեղեկուԹիւններ տուած էր այն Աստուածամոր աւանդական պատմուԹիւնն՝ զոր Ս. Եպիփան 390ի առենները՝ շատ հին համարեր. բայց աւաղ որ հիմա կորուսած է այն գիրքն: Իսկ այն որ կոչի Ակեսարան Ծննդեան Կուսին՝ անընդունելի է յեկեղեցւոյ. և Ս. Հերոնիմոս աղ որ հաստատէ Մարիամու ընդունուիլն 'ի դասս դասերաց Տեառն՝ աւելի բան մի ոչ յաւելու: ՊատմուԹեան այս պակասն լրացընելու համար՝ որ երևի ԹԷ Աստուած կամեցել է մուԹի մէջ Թողուլ, ուրիշ բան չունինք՝ բայց եԹէ քանի մի անստոյգ տողեր և Սրբոց Հարց մի քանի կցկտուր խօսք, զորս որչափ ալ քանամբ կարգի վերածել, սակայն և այնպէս գոհացուցիչ տուեբադիր մի չեմք կարող ներկայացընել: Եւ սակայն հնգիկ անկուածագործին կամիքն նմանիլ՝ որ պատռած կերպաս մի ԹելառԹել հիւսելով կը միացնէ, նախ անսպառ համբերուԹեամբ պատռած կտորին Թելերուն ծայրերն ծուռտեղով և աննշմարելի հանգուցիկ նոր Թել կապելով նոցա ծայրերն, և անհատտալի զգուշուԹեամբ իւր մագոյն տահեցընելով բզկտած աղքին առէջքին մէջէն՝ որ փրԹելու վերայ են: Մեք ալ նոյնպէս ձեռն հարցուք այս գործոյս՝ Կուսին կենաց պատուական ոստայնին ցրուեալ կտորներն հաւաքելով եԹէ հնար է նորէն հիւսելու համար:

Մեր անխոնջ աշխատութիւնն այն պիտի չլինի որ մտացածին գործ մի յառաջ բերեմք, որովհետև այն խորին յարգութիւնն զոր ունիմք այս նիւթոյս՝ մեզ ոչ ներբէ այս բանս, այլ կամիմք առուգագոյն հեղինակաց հետևելով և եբրայեցւոց կենցաղին և սովորութեանց քննութեամբն՝ ձիշտ և որչափ հնար է ձշմարտատիպ գաղափար մի տալ՝ եթէ ներելի է ասել միակեցական կենաց Մարիամու՝ ի տաճարի անդ։

Ձին առենուան բարեպաշտական վիպաց մէջ՝ հաչար և բիւր զարմանալի հրաչք պատմին Մարիամու մանկութեան ժամանակ. մէք՝ ի բաց թողումբ այն ամեն հրաչալի իրերն՝ որ բաւականապէս հաստատեալ և վաւերացեալ չեն. սակայն ոչ կամիմք լռութեամբ անցանել այն սիրալ կամ թէ ասեմ անընդունելի կարծեաց վերայ զոր յոյժ միամտութեամբ և առանց քննութեան աւանդեն ոմանք՝ ի մասենագրաց՝ թէ և սուրբք և արք կրօնասէրք [10], որք համարին թէ Ս. Կոյսն մինչ ամենասուրբ լինելոյն համար՝ որումհ ոչ ոք հակառակի, տաճարին սրբագոյն տեղն գրուած էր. այսինքն Սրբոյրիւն սրբոյրևաց ասացեալ սրբալայրն, որ նիւթականապէս ալ սխալ է։ Վասն զի Սրբութիւն սրբութեանցն՝ որ էր անմատոյց սրբարանն Աստուածոյ զօրութեանց՝ անմատչելի էր և ամենայն քահանայից, բայց ՝ի գերագոյն քահանայապետն, որ նա ալ տարին մի անգամ մտանէր անդր՝ յետ բազում պահոց և աղօթից և մաքրութեանց. և հոն մտած ժամանակ՝ խնկոց անուշից ամպ մի ղինքն պատէր՝ իր և Աստուածութեան մէջ անջրպետ մի դնելով. վասն զի մահկանացուն ոչ կարէր զնա տեսանել առանց մեռանելոյ՝ ասէն Գիրք. և հոն տէրն քանի մի վայրկեան միայն մնացած ատեն ժողովուրդն յերեսս ՝ի վայր անկեալ հառաչէին՝ վախնալով որ մի գուցէ քահանայապետն հոն տէրն մեռնի։ Ասոր և ինքն շուտով մեծահաց կոչունս տայր

իր բարեկամացն՝ նոցա հետ ուրախակից լինելոյս համար՝ որ այնպիսի ահագին վտանգէ միազատեալ էր [11]։ Ասոր ասա երևի թէ Սրբոյ Գուսին ՝ի սրբութիւն սրբութեանց բնակիչն և գաստիարակուիչն՝ անհնարին է։ — Եւ բաց ողջմտութենէ՝ նոյն իսկ Երուսաղեմայ տեղագրական աւանդութիւնք ալ այս յանդուգն կարծեաց դէմ ելանեն. վասն զի այս օրս հ Աղրա ասացեալն՝ որ ՝ի նախնումն քրիստոսական եկեղեցի մի էր՝ կանգնեալ ՝ի նմին իսկ տեղւոջ ուր էր կուսանաց բնակարանն, այժմեան Էօմէրի մզկիթին մատն համարի՝ բայց անտի զատուած է, և այն չէնքին մէջ ամփոփուած չէ. և սակայն Էօմէրի մզկիթն ձիշդ տաճարին գետնոյն վրայ չինուած է։

Հայրն Ֆրուազէ յիսուսեան վարդապետն ևս ոչ ընդունի այս կարծիքս թէ Մարիամ Սրբութիւն սրբութեանց կոչուած խորանին մէջ բնակած լիցի, բայց իւր Հրահանգք բարեպաշտութեան կոչուած գրոց մէջ՝ բոլորովին ալ չուզելով մերժել՝ միշն ձամբայ մի հնարի ասելով թէ քահանայք տաճարին իւր գերազանց առաքինութեանց վերայ զարմանալով՝ հրաման տուեալ էին իրեն երբեմն երբեմն ՝ի տաճարն երթալու աղօթելու։ Բայց այս խնամատուն վարդապետս այս ասելով շատ բաներ մոռացած երևի. Նախ որ առ հրեայս կին մարդն՝ գերազոյ պէս անսուրբ համարէր, որոյ աղօթքն ևս պարապուրեալ բան մի չէր սեպուեր [12]. այնպէս որ իրեն համար սահմանեալ գաւթին անդին ալ չէր կարող անցնիլ. իսկ տաճարն մանելն բոլորովին արգիլեալ էր՝ թէ և մարգարէ լինէր կամ գոնէսար արքայի։ Երկրորդ քահանայք այս առանձնաշնորհութիւնս ոչ կարէին տալ Մարիամու, որովհետև իրենք ևս չունէին, և իրենց կարծեօքն անշուշտ մահուան վտանգի մէջ դնել էր զինքն։ Վերջապէս եթէ այս նախապաշարումս և այս երկիւղս ալ ունեցած չլինէին՝ սակայն ոչ կարէին

թողուլ զքեզ մտանել 'ի Սբուրթիւն սրբուրթեանց կոչուած տեղն, որովհետև ոչ կամին թէ ժողովուրդն իմանայ թէ տապանակն հոն չէր և անյայտ եղած էր՝ կորսուած կամ ծածկուած Յուդայի լեռանց մէջին այրերէն միոյն մէջ՝ Երեմիա մարգարէին ժամանակէն 'ի վեր [15]: Ապա ուրեմն մեր վերն գրած կարծիքն թէ Մարիամ ալ այլոց կուսանաց հետ 'ի կուսատան բնակէր՝ աւելի հաւանական է:

Ուստի Մարիամ այն տեղն կատարեալ դաստիարակութիւն մի առաւ՝ որչափ որ ներէին նոյն ժամանակի գիտութիւնք և հրէից սովորութիւնք. այս կրթութեան գլխաւոր նիւթք էին անական աշխատութիւնք՝ յորոց աղատ չէին և ոչ իսկ Աւգոստոս կեսարու կինն և դուստրն կայսերական պալատան և Հռոմայ ճոխութեանց մէջ [14]: Ուրեմն Մարիամ ևս մովսիսական օրինաց ճիշդ պահպանութեան և իւր աղգին սովորութեանց համեմատ մեծնալով՝ թռչնոց երգել սկսած ատեն արթընաւ՝ նրբ չար սատանայն չքնի, և Աստուած աւելի հաճոյապէս քան արարածոց աղօթքն [15]: Եւ Աստուծոյ մեծվայելչութեան տալև որ ամեն տեղ է և զամենայն գործս մարդոյ տեսանէ՝ նոյն իսկ գիշերուան մթոյն մէջ, ամենայն պարկեշտութեամբ հագուելով գՀաստատօծոյ իրեն օր մի ևս պարգևելուն համար, և քնոյ ժամանակ զինքն չար ոգիներու դարաններէն պահպանելուն համար [16]: Հագուելն կոկուելն չուտով աւարտէր՝ առանց զարդասիրութեան, չունէր ոչ ապարանջանս ոչ մարգարեայ մեհեանգս և ոչ ոսկի շղթայս կիտուածովք արժարոյ, և ոչ ծիրանի պատմուճանս որպէս վայել էր և որպէս հագնէին իսկ իւր ցեղին աղջկունքն. այլ յանկնթի գուներով պարեգօտ մի ուստի աղուական ուքաղցը լայս մի անդրագառնայր՝ որպէս այն գաշտային ծաղկէն, վրայէն ձերմակ պատմուճան և 'ի նոյն նիւթոյ գօտին իր մէջքն կապած և ծայրերն երկայն

ձգուած, գլխէն 'ի վայր ալ երկայն և նորհալի լաչակ մի առանց արուեստակեալ ծալքերու, և այնպէս զեռեղուած՝ որ պէտք եղած ժամանակն շուտով մի կարկը ամբողջ երեսն ծածկել, վերջապէս ոտքն զգեստին համեմատ մեշհակներ. այս էր ահա Մարիամայ զգեստն արևելեան սովորութեան համեմատ:

Սովորական ըստացուածներէն եաև՝ կոյսն և իւր ընկերներն առաջնորդութեամբ այն բարեպաշտ կանանց որ առաջի Աստուծոյ և քահանայից այն անգին աւանդին պահապաններն էին, երթային այն վերնատունն՝ ուր հալածեալ իրենց պատուոյն համեմատ նստէին [18]: Երբ արեգակն սկսէր իւր նախկին ճառագայթներուն ոսկեզծել Արաբիոյ հեռաւոր լերինքն, և արծիւն ամպոց մէջ թևապարէր, և քահանայից փողերուն ձայնովն խաղաղական ողջակէզն այրէր սեղանոյն վերայ՝ Մարիամ գլուխն ծռէր քովն ներքև խոնարհած՝ եռանդեամբ կրկնէր Եղբասայ ուղեւատան աղօթքն, և բոլոր Իսրայէլի հետ 'ի միասին խնդրէր Աստուծոյ զՕծեալն նորա՝ որ խոստացեալ էր աշխարհի, և այնչափ ուշանար գալու, ասելով.

« Աստուած իմ, փառաւորեալ և օրհնեալ լեցի քոյ անունդ երկրիս վերայ՝ զոր ստեղծեր քոյով հաճութեամբդ, դոյ արքայութիւնդ բազաւորել ուղղութեամբ, և քովկեսցի փրկութիւնն և շուտով եկեսցէ Մեսիան » [20]: — Ժողովուրդն ալ խմբովին պատասխանէր. Ամէն ամէն: Յետոյ երգէին այն գեղեցիկ Սաղմոսին վերջին տներն որ Անգեայ և Ջաքարիա մարգարէից շարադրածն համարի (Սաղմ. ճԽԸ):

« Տայ հաց քաղցելոց, և արձակէ զկապեալս Տէր: Տէր բանայ զաչս կուրաց, և կանգնէ զվըրեալս Տէր: Տէր սիրէ զարդարս: Տէր պահէ զպանդուխտս. զորբս և զայրիս ընդունի Տէր, և զճանապարհս ամբարշտաց կորուսանէ: Թագաւորեսցէ Տէր յաւիտեան, Աստուած քո Սիոնէ, ազգէ մինչև յազգ » [21]:

Աբարողութիւնն աւարտէր դասաւանդի [22] ընթերցմամբն և օրհնութեամբ քահանային որ պարագլուխ էր հասարակաց աղօթից: Եւ այսպէս նոյն կարգն նորոգէր առաւօտ և երեկոյ:

Կրօնական պաշտամանց կատարուելէն յետոյ՝ Մարիամ և իւր ընկերքն իրենց սովորական գործոց ըղբաղէին, ոմանք իրենց շոյտ մատամբքն մայր վայտէ չինուած իլերով արագ արագ մանէին, ոմանք ծիրանի յականթի և ոսկի թելերով տաճարին վարագոյրներն ոսկայնէին, այլք սիգոնացի պաստառաձիւթ (քրկիֆ) մի առջևնին գրած՝ զանազան ձևերով ծալկներով գեղեցիկ գորգեր չինէին՝ որովք բոլոր Իսրայէլի մէջ գովելի հանդիսացած էին հանճարեղ կանայք, ինչպէս Հոմերոս և իր աղդին կանայքն այս բանիս համար գրուատէ [24]: Սուրբ Կոյան իր աղգակից աղջկանց մէջ շատ ճարտար էր այս ձեռագործոց՝ ըղրս նախանիք մեծապէս յարգէին. Սուրբն Եպիփան ասէ թէ իր աղնեգործներն հրաշալի բաներ էին, և շատ վարպետ էր բրդէ բեհեզէ և ոսկեթելէ գործուածներու մէջ [25]: Արևելից յերկիրն աւանդութեամբ պահուած է իւր աննման ճարտարութեան յիշատակն՝ պէլուսեան բեհեզով [26] մանուածոյն կոմանէ. և քրիստոնեայք Արևմտից իւր այս յիշատակս անմահացընելու համար կռահ ոտոյան անուանեցին այն սպիտակ և փայլուն և գրեթէ գոլորշիի նման թեթև ցանցն՝ որ աշնան խոնաւ առաւօտներն հովտաց խոտերուն վրայ սփռած երևի: Նախկին հաստատուցեալ մէջ հաստատիմ և անքակտելի սկրոյ կապանօք նշանած աղջկունք՝ իրենց սուրբ ամուսնութեամբ կապուելու ժամանակն որ հասնէր՝ սովորութիւն ունէին թագուհւոյն հրեշտակաց խորանն աղեկատ (հօրէքի) մի նուիրելու՝ ծիրանի երիզօք մաքուր բուրդ փաթթած [27]: — Երուսաղէմայ Եկեղեցին ալ Սրբոյ Կուսին յիշատակն պահելու համար 'ի վաղ

ժամանակաց իր գանձուց մէջ պահէր Մարիամու նուրբ իլերն [28]:

Այսպիսի պաշտօնասէր և միշտ զբաղեալ կենաց մէջ ալ Կոյան ժամանակ գտանէր ուսման պարապելու, և իւր արթուն և ուղիղ հանճարն զարմանալի կերպով զարգանայր՝ 'ի գնացս ջուրց տնկուած արմաւենւոյ պէս: Սուրբն Ամբրոսիոս ասէ թէ մեծ հմտութիւն ունէր սուրբ գրոց, և Սուրբն Անսելմոս հաւատայ թէ մովսիսական լեզուն կատարեալ գիտէր, այն հին եբրայեցերէնն զոր խօսէր Յեսու երբ ելոհեայ ձորոյն մէջ հրամայէր արեգական որ կացցէ, և զոր Աստուած ինքնին գործածեց տասնաբանեայ պատուիրանքն պատուհասական և խիստ տասատակաց վերայ [29] գրելու ժամանակ: Կամ այն է որ Մարիամ իր միայնակ ուղնութեանց մէջ Աննայի (մօր Սամուէլի) և Դեբովրայի լեզուն ուսանելով՝ սեսա-նողայն Իսրայէլի վսեմական ոգւոյն թափանցել է, կամ այն է որ սրբարար Հոգին՝ որ զինքն այնչափ ձրիւք շնորհազարդել էր, ընչեալ է 'ի նա զբոլոր քերթողական՝ որպէս զսիւքն գաշնակաւոր որ ընթանայր Դաւթի հոգմաշարժ տաղերն վերայ [30]. որ ինչ և իցէ՝ չեմք կարող ժխտել որ այս գեղահասակ մարգարէուհիս՝ որ նոր օրինաց ամենէն գեղեցիկ օրհնութիւնն երգեց, հանճարոյ քաղցրագոյն և աղնուագոյն ներշնչմանց տէղեակ էր: Սրբազան Օրհնութեանց նկատմամբ՝ նոյն իսկ մեր քրիստոնէական ղգացուածն 'ի բաց Թողլով ևս, Մեծացուցիչ երգն ամենայն աղջկց մէջ առաջին կարգի քերթողական շարագրած մի հատարի: Ուստի յայտնի է թէ Մարիամ անհնգետ սրբութեան հետ՝ բարձրագոյն հանճար ալ ունէր. տապանակին կենդանի որ կրելոց էր յինքեան զփրկիչն աշխարհի՝ հարկ էր ամենայն մասամբ զարդարուած լինել. վասն զի արևելեցոց ասացածին պէս երբ լուսոյ Հառագայթն բիւրեղանայ՝ կարկեհանի մէջ կ'ամփոփուի:

Բերթող ումն նուաստաբար ասէր առ Աւգոստոս՝ թէ չաս գարերու յօրինուած մի էր նա և թէ ՚ի ստեղծմանէ աշխարհի բնութիւնն բովանդակ իւր ճարտարութիւնն բանեցուցել էր զնա յառաջ բերելոյ համար. այս խօսքս որ չափազանցութեան ձևոյն չափազանցն է և անտեղութիւն իսկ կեսարու արիւնաբոյս քեռորդւոյն նկատմամբ՝ Սրբոյ Կուսին վերայ ՃՀմարտապէս յարմարի. վասն զի յիրաւի Մարիամ բնութեան հրաշակերտն է, հին սերնդոց ծաղկին և գարուց պաճուճելիքն: Աշխարհս ոչ երբեք տեսաւ և ոչ ալ պիտի տեսնէ՝ այնչափ կատարելութիւններ միացած մարդոյ զաւկի մի վերայ. ամենայն ընորհք սրբութիւն և մեծութիւն փայլէին այս ազնիւ և բարեբաղդ արարածոյս գլուխն. Աստուծոյ հետ բարեկամութեան մէջ յղացեալ յառաջ քան զծնունդն և ՚ի յղութեան անդ սրբեալ՝ անծանօթ էին իրեն այն կիրք որ ամբոխեալ մրրկեն զհոգիս, և այն անարգ յօժարութիւնք որ բազմաձեւեաց պէս վնասան մարդուս տղմասէր սրտին մէջ: Մեր նախահօր ծանր անհնազանդութենէն ետև՝ մարդս ՚ի խնամս չարին հատուտուռալ է ՚ի տևևկոտքևևէ. մեծամեծ սուրբք յառաջ քան զարգարանալն մեղաւորք եղեն, և նոցա առաքինութեանց ոսկին՝ միշտ անմաս չեղև ՚ի կղկղանաց: Իսկ Սուրբ Կոյսն ոչ երբեք գերի եղև գժոխոց. նաև պէս ծնաւ իւր արքայական Թագն ՚ի գլուխ՝ և իւր հոգին անթիմադարձ ձգողութեամբ առ բարին համակէս՝ պայծառ և լուսաւոր մթնոլորտի մէջ շղայր՝ ուստի մեղքն հալածեալ էր: Իր առաքինութեանց յիշատակն դեռ ևս կը պահուի նաև քրիստոնէութենէ օտար ազգաց մէջ. Պարսիկք պարզապէս սուրբ և փառաւորեալ անունն տան Մարիամու[31]. և Թուրք իր անուանն միշտ արդար (սատրդիկ) մակդրիւ յիշէն[32]. իսկ քրիստոնեայք հաստատեն թէ ինքն առաւել քան զամենայն հրեշտակս ՚ի միասին առեալ՝

Աստուծոյ առջևն արդիւնք ունեցաւ: Ապաքէն Մարիամու բարեգործութիւնքն յերկինէ թօթափեալ ձեան նմանի, որ լուիկ և անձայն ներանց գագաթն կը գիզուի. առջև երեկոյին իջածին պայծառութիւնն՝ երկրորդ օրն իջածէն նուազ չէ, պայծառութիւն պայծառութեան վերայ յաւելու, և սպիտակութիւն սպիտակութեան, մինչև որ մարգուս աչքն առնող կոնոն մի ձևանայ՝ որ արեգական լոյսն անդրադարձնելով՝ սիրելի զմարդ աչուըըներն ՚ի խնամս դարձնել, ինչպէս դէպ ՚ի արև նայած ժամանակ: Ոչ ոք յարարածոց իրեն կենաց նման կեանք մի ներկայացուցած է դերագոյն Դատաւորին. միայն Յիսուս Քրիստոս զնա գերազանցեց, բայց Յիսուս Քրիստոս Աստուած է և Որդի Աստուծոյ:

Մարիամ եմուտ ՚ի տաճարն Երուսաղէմի՝ այն անարատ զոհերուն պէս՝ զոր հոգին Աստուծոյ ցուցել էր մարգարէին Մալաքիայ: Թէպէտ և իր մանկութեամբ և գեղեցկութեամբ և ցեղին ազնուականութեամբն՝ կարէր դէմոյական պատուոյն հասնիլ, ինչպէս որ Իսրայելի մէջ չատ անգամ տեսանենք գեղեցկութիւնն յարքունական աթոռն բարձրացած[33], սակայն ինքն սեղանոյն եղջերացն փարեցաւ կուսութեան ուխտիւ՝ զոր իր մանկական շրթունքն թոթովէց, և յետ ժամանակաց իւր սիրոյն ալ զոյն հատատեց՝ բոլորովին հրաժարելով ՚ի փառաց և յուշանայնութեանց աշխարհի: Այս ուխտիս որ մինչև այն ժամանակ լսուած բան չէր ՚ի տարեգիրս աշխարհի, Մարիամ վկրացաւ անցաւ այն ցանկին որ զհին օրէնս ՚ի նոր օրինաց անջատէր, և աւետարանական առաքինութեանց ծովուն այնչափ խորերն ընկղմէր՝ Ոսկեբերան հայրապետին ասացածին պէս, որ ինքն արդէն այնոր խորութենէն չափել էր՝ երբ իւր աստուածային զանակն եկն յայտնելու զայն որդւոյ մարդկան:

Աստուած որ անփոփոխելի է ՚ի խորհուրդս իւր՝

յառաջագոյն ծանուցանէ և պատրաստէ զայն ամենայն մեծամեծ գէպս որ կերպարանափոխ առնելոց են զաշխարհս. երբ Մեսիային յառաջընթաց կարապետ մի հարկաւոր է՝ ի ձեռն առնու զՅովհաննէս Մկրտիչ. երբ նախաշաւիղ մի պէտք է նոր օրինաց՝ առաքինութիւնք Մարիամայ՝ աւետարանի նկատմամբ՝ գեղեցիկ աւուր զովագին և զուարթարար արշալոյսն լինին: — Սուրբն Եպիփան ի Նիկեփորոսէ յիշատակեալ, Սրբոյ Կուսին կերպարանաց գեղեցիկ նկարագրութիւն մի աւանդէ մեզ. այս կենդանագիրս՝ որ ընդորդ գարուն մէջ յօրինուած է ի հնագոյն աւանդութեանց առեալ որ հիմա եղծեալ են, և ի վաղեմի ձեռագրաց որ այժմ ոչ գտանին, մի միայն է ղոր ունիմք: Ըստ Եպիփանու Սուրբ Կոյն բարձրահասակ չէր, այլ միջահասակէն սակաւիկ ինչ աւելի. մարմնոյ գոյնն երգ երփոցի Սոմնացւոյն պէս՝ իւր հայրենեաց արեգական ջերմութենէն թեթև մի ոսկեզծեալ առոք հասկայ գեղեցիկ գոյն ունէր. խարտեաշ էին իր մազերն, վառվռուն աչքն և բիբքն սակաւ մի ձիթագոյն, յօնքն սեաւ արջնաթոյր և կցայօն աղեղնաձև (կամ Նարեկացւոյն գողտրիկ բացատրութեամբն «Յունից նրբեներց ի մի կից կամար» (տաղ). քիթն բարեձև էր և արծռունկն, շրթունքն վարդագոյն, և կերպարանքն վայելչապէս ձուաձև, ձեռքն և մատունք նուրբ և երկայնկէտ: — Ամենայն Սուրբ Հարք միաձայն վկայեն Ամենասուրբ Կուսին հիանալի գեղեցկութեանն. Սուրբն Դիոնեսիոս արիոսպագոյն՝ որոյ վկայութիւնն շատ մեծ յարգ ունի՝ ինքնին ականատես եղած լինելուն Աստուածամօրն Մարիամու՝ հաստատէ թէ այդ առնող գեղեցկութիւն մի ուրիեր, և երէ չգիտեի թէ Աստուած մի միայն է՝ իբրև Աստուածութեան զինքն պիտի պաշտեի:

Բայց Մարիամու հրաշազարդ գեղեցկութեան գովութիւնն՝ բնական կատարելութեանց բարեկազ-

մութենէն յառաջ եկած չէր, այլ աւելի բարձր աղբիւրէ մի բղխէր: Այս բանս լաւ հասկանալով բացատրէ Սուրբն Ամբրոսիոս երբ ասէ թէ այս արտաքին բարեմասնութիւնք թափանցիկ քող մի էին՝ որ նշմարել տային իւր ամէն առաքինութիւնները, և իւր նայուածքին մէջ երևէր բովանդակ իւր հոգին՝ որ ցիսուսի Քրիստոսի հոգիէն եաև ամենէն ազնիւ և մաքուր հոգին էր՝ որ բնաւ եղած են յաշխարհի: Բնական գեղեցկութիւնն Մարիամու՝ հեռաւոր լուսոյ ցոլացուցիչ մի էր իւր անմահ մտաւորական գեղեցկութեանցն. ինքն գեղեցկագոյնն էր ի կանայս՝ վասն զի ի մէջ դստերաց Եւայի քան զամենեսին առաւել մաքուրն էր և քան զամենեսին առաւել սուրբ [34]:

Աստուած կանաչ ծովուն [35] մարգարտին համար լուսացայտ պալատ մի յօրինեց իւր խեցին. բայց գաղտակուղն կամ ստատին առանց մարգարտի ինչ յարգ ունի: Ուստի և Հարք աւելեկագոյն գոլով այս բանիս՝ Մարիամու անձին վերայ խօսած ատեն՝ նորա բարոյական գեղեցկութեանց վերայ աւելի ճոխանան, գեղեցկութիւնք՝ որ որդանց կեր լինելու վախ չկայ: Հաւաքեմք մեք ալ այն փոքրիկ անգին գոհարներն՝ զորս ագուցին իրենց գրուածոց մէջ, և յօրինեմք միսխոն նկար մի որ երկրորդ կենդանագիր մի լինի իրեն՝ որ Սրբոյն Սոփրոնիոսի ասացածին պէս Աստուծոյ փափկութեան դրախտն էր [36]:

Կուսին Մարիամու ամէն գործոց մէջ գերագոյն համեստութիւն մի փայլէր. ինքն բարի հաճոյական և վշտակից բնութիւն մի ունէր. իւր մանկութեան ողորմութիւններն շատ անգամ առանց իմացուելու անկանէին այն գանձանակին մէջ՝ որ տաճարի սիւնեբուն միոյն վերայ հաստատեալ էր, և ուր որ ժամանակ մի եաև տեսաւ Յիսուս այնոր մէջ ձգուած այբոյն նաքարակիան: Ինքն սակաւիսիս էր՝ բայց ժամանակին յարմար, ամենևին իւր շրթունքն սուռ-

թեամբ չարատաւորեցան, քաղցր և սրտաչարժ էր իւր ձայնն, և իւր օծեալ և սիրական խօսքերն խաղաղութիւն շնորհէին հոգւոյ: Ինքն միշտ արթուն և ճիշդ էր աստուածային օրէնքն կատարելոյ. խնդութեան մէջ ամենէն աւելի, և քան զամենեսին կատարեալ ամենայն տեսակ առաքինութեանց մէջ: Ոչ երբեք բարկութիւն երևեցաւ իր վերայ, ոչ ըզք վշտացոյց, ոչ ըզք սրամեցոյց և ոչ ըզք անդոնեց: Պերճասիրութեան թշնամի էր, պարզ 'ի խօսս և 'ի վարմունս. թեպէտ և գեղեցիկ էր՝ բայց տեսնուիլ ոչ կամէր, թեպէտ մանկահասակ՝ բայց զարգասիրութիւն ոչ ախորժէր, և ազնուական լինելով հանդերձ՝ փառասիրութիւն չունէր, և թեպէտ աղքատ էր՝ բայց հարստանալու աչք չունէր. և զգուշութեամբ ծածկէր յայլոց իւր հանճարոյն և սրտին անգին գանձերն: Կարծես թէ իր ներկայութիւնն՝ բոլորովին եղած ամեն բան օրբացնէր, և միայն զինքն տեսնելն մոռցնել տայր մարդուս ամեն աշխարհային բաներն: Իւր մարդավարութիւնն սուտ խօսքերու հիւսուածք մի չէր, այլ ընդհանուր բարեսիրութեան զեղումն որ իւր սրտէն բղխեր. իր գթալից նայուածքն ևս ցուցանէր թէ ինքն էր Մայրն ողորմութեան:

Յաճախ խիստ պահեցողութեամբ օրերն անցուցանէր, ասէ Սուրբն Ամբրոսիոս, այն արևելեան պահեցողութեամբ որ մեզ սարսափ բերէ. որովհետև արևն ծագելէն մինչև աստեղաց երևելն յամենայն կերակրոց հրաժարէին [37]: Բովանդակ այս պահոց միջոցին իր յօժարութիւններէն և սրտին ուզածներէն հրաժարեր, ծանր աշխատանաց տայր զինքն, և բնութեան զզուռումն բերող գործերն յօժարութեամբ կատարէր. աղքատիկ զգեստներ հագնէր, չոր գետնի վերայ պառկէր, և այս ապաշխարանաց և ողբոց օրերա՝ որ շաբաթներ տևէին, թեթև ճաշիկ մի

առնոյր՝ մխրի վերայ եփած նկանակով և գառն բանջարովք, և Սելովայ աղբերէն գաւաթ մի ջրով [38]: Ատեպ և երկայն էին իւր աղօթքն, և այնչափ պարկեշտութեամբ և մտադրութեամբ՝ որ Յաւիտենականին առջև երկրպագելու ժամանակ՝ կարծես թէ իւր հոգին նորա գիմացն հալէր: Որոտմանց դոչիւնն և կայծականց չառաչիւնքն՝ յորոց կեսար սահմռկած իր պալատին սաորերկրեայ նկուղներն ապաւինէր [39], Կուսին յականջս անգամ ոչ հասանէին. բոլորովին ընկղմեալ իւր կրօնական պարտուց մէջ՝ իւր հոգին կայր առաջի Արարչին տիեզերաց՝ աշխարհիս սահմաններէն գուրս ելած և հեռի փոթորկաց պատուհաններէն: « Ոչ ոք իրեն չափ սասցած է, ասէ Սուրբն Ամբրոսիոս, ներանձնական խոկման գերազանց ընորհքն. իւր միաքն միշտ սրտին հետ միացած՝ ոչ երբեք իր աչքէն վրիպեր Այն՝ զոր ինքն քան զամենայն սերովբէս 'ի միասին առեալ՝ սիրէր և պաշտէր: Բոլոր իւր կենաց ընթացքն հանապազօրեայ կրթութիւն մի էր ամենամաքուր սիրոյն առ Աստուած, և երբ քունն իր թարթիչքն ծանրացնէր՝ իւր սիրտն տակաւին արթուն էր և գեռ աղօթեր [40] »:

Այսոքիկ էին առաքինութիւնք և պարապմունք Մարեմայ 'ի տաճարին. ինքն իր մանկահասակ ընկերաց մէջ փայլեր որպէս զադամանդ 'ի մէջ գոհարաց, և իւր անկեղծութիւնն և համեստութիւնն այլ աւելի սիրելի առնէին իւր գերազանց ձիրքն որովք ճոխացեալ էր [41]: Վասն որոյ և քահանայական պաշտամանց մէջ ալևորած ծերունիք՝ իր առջևէն անցած ատեն զինքն օրհնէին, այն սուրբ բնակութեան ամենէն գեղեցիկ զարդն ընա համարելով:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Ե. ԳԼՈՒԽ

1 Ըստ քրիստոնէական աւանդութեանց Իօսէրի մկկիճին Ֆոճիք ել «աղբ» Սողոմոնի տաճարին տեղն է. իսկ ել «աբ» ուր էր Ընծայման եկեղեցին՝ այն տեղն է ուր եկեաց Մարիամ իրեք տարուան եղած ժամանակէն մինչև Յովսեփայ հետ ամուսնացած տեղն: Հին տեղն այս տեղս սողոմոնեան տաճարին վերաբերեալ չենք մի էր. ինչպես նաև հիմա եւ «աբ» ասացեալն Իօսէրի մկկիճին վերաբերի: Յաչակրաց ժամանակէն յառաջ եւ «աղբ» պարզ մատուռ մի էր՝ որում յետոյ փրանկք յաւելին եկեղեցի մի ոսկեզօծ գմբեթով որոյ վերայ եղած մեծ և փայլուն խաչն երբ կործանելին սարակինոսք յաղթողք՝ այնչափ մեծ եղև սոցա ուրախութեան ձայներն և քրիստոնէից ցաւոց աղաղակն՝ որ կարծես թէ երկիրս անդնդոց մէջ գահավիժէր, ասէ արաբացի պատմագիրն (Թղխայ-ի-ի-ի

14 Աւգոստոս կեսար միշտ իր կնոջ և դստեր ձեռօք հինած շաթերն հագանէր :

15 Պատաժ հտ . Ե էջ 506:

16 Նոյնն ի նմին տեղւոջ:

17 Ձենովա քաղքին հաւատաւոր կուսանքն Ա-եթէաց՝ վերջա-ւանեորդ դարուն մէջ կուսամօր հանդերձից նման հագնելին այսինքն ապիպակ ի ներքոյ և վրայէն երկնագոյն իմ մխրճոյն ի յաԷֆեական յիշատակ Տէրամօքն . Նոյնպէս դասէ ուխտն ալ մխրճոյն մուշտակ պարբաբեալ էր (Յանուն Ա-եթէաց կոչէին զԼ· Բ):— Լամբերինի յուղևորութեանն յԱրևելս ուր ամենայն ինչ անփոփոխ է , տեսաւ որ Նաղվղոցի կանգուք Աստուածամօր զգեստուց պէս հագանէին , զոր այսպէս նկարագրէ . Երկնագոյն երկայն պարեգօտ մի՝ զպահալ սպիտակ գօտւով որոյ ծայրերն գետին հասանէին. իսկ ձերմակ պատմուճանին ուռուցիկ ծալքն՝ գեղեցկապէս անկանէին ի վրայ մխրագոյն պարեգօտին: Ներքոյդ համարի թէ սոյն իսկ էր կանանց հադուստն Ալբրահամու և իսահակայ ժամանակ , որ և շատ հաւանական է . և տեսանես որ վրանկ քերթողին նոյն իսկ այն երկիրներուն մէջ տեսած և ստորագրածն՝ շատ նմանութիւն ունի՝ վերջասանեորդ դարու կուսանաց ըստ իտալական աւանդութեանց հագածին հետ :

18 Որդիներս , Սուրբքն Բասիլիոս , Գրիգոր Նիւսացի և Կիւրեղ աւանդութեամբ ցուցանեն մեզ որ կուսանք զատ և պատուաւոր տեղ մի ունէին ի սիւնազարդ դաւթի կանանց :

19 Հրեից աղօթից մէջ հանդիսական մնան համարի ոՐՆԵ-գան հաղթող ասացեալն (եբր. ղՀՈՆ ԷհԷլԷբ) որ համարի շաբգրեալ յԵզրասայ վան մնձի ժողովարանին : Երուսաղեմի կործանմանէն սակաւ յառաջ բաբունի ոմն Գամալիէլ իննևատասաներորդ մ'ալ յաւել ընդդէմ քրիստոնէից : Ա.աջին ութեւտասանքն շատ հին են, և անշուշտ Յիսուսի Քրիստոսի ժամանակ ալ գործածուելով՝ ինքն ևս զնոյն մատուցած է Աստուծոյ ժողովրդեան հետ ի միասին ի ժողովարանն եղած ատեն . տղուն բանավարութիւնն բացուածին պէս՝ պարտաւոր էր իրեք անգամ յաւուրն առաւօտ կեսօր և երեկոյ այս իննևատասն աղօթքս մատուցանել Աստուծոյ (Բրիտոյ Պոմ. հրէից):

20 Այս մաղթանքս որ եբր . ղոՓՓէՀ ասի իսրայելացւոց մէջ պահուած աղօթից հնագոյնն է , և ինչպէս որ քաղդէարեներն մէջ ընթեռնուած՝ կարծուի թէ Բաբելոնի գերեզարձին ատեն շինուած է (Պատաժ հտ. Ե): Բրիտոյ հաստատէ թէ Տեառն մերոյ ժամանակէն շատ յառաջ ալ գործածուէր , և զի առաքեալք յաճախ նոյնն աղօթած են ժողովրդեան հետ ի միասին ժողովարաններու մէջ. տաճարին մէջ ալ շատ անգամ նոյնն կարդացուէր . և ժողովուրդն կրկնէր ոՓՆ :

21 Լևան մատենացի . — Մովսէս Մայմոնիտ :

22 Լևան մատենացի գԼ· ԺԱ: Դասանանէ (եբր. ՀՀՈ) ասելով կ'իմացուի Թուոց և Երկրորդմանն օրինաց երեք զանազան հատուածներն՝ զոր առաւօտ և երեկոյ ընթերցանութեան դասանուէրեան ձևով յորում ցուցանի միութիւն աստուածութեան որ ևհան զժողովուրդն յԵգիպտոսէ :

23 Սոյգ է որ Սուրբ Կոյսն պարտաւորեալ էր յառաւօտու և յերեկոյի ներկայ գտանիլ Հասարակաց աղօթից , որ քան զայլս աւելի ազդու համարեին . մինչև եղեն բարեպաշտք որ ասեն թէ Աստուած այս աղօթից միայն լսէ :

24 Տես Հոմերոսի Իլիականին Զ գիրքն :

25 Մինչև դարու մէջ ի յիշատակ Ճարտարութեան Սրբոյ Կոսմոն ի բերելեալ անկուածս՝ ոստայնանկք ընդ պարզապատութեամբ Աւետման կային . կերպասագործքն և ոսկեթել դիպակագործքն պարզապան ունէին զՏէրամայրն Ձոհ որոյ պատկերն գեղեցիկ և հարուստ ասղնագործ նկարեալ էր իրենց խաչվառին վերայ (Ակբս. Մոնթէյլ Պոմ. էրռնէյ ղՈռռոռոյ):

26 Գլխաւոր զոհագործ քահանայից առաւօտեան զգեստն բադէն մի էր , ասէ Միշնահ , ի ներքանիթ բերելոյ պելուսիոյ քաղաքին Եգիպտոսի որոյ քթանն անուանի էր. Et pelusiaco filum componere lino; ի բերելոյ պելուսիան պիտի յօրինել. Վիրգիլ:

27 Այս սովորութիւնս դեռ ևս պահի ի հիւսիսային և յարևմտեան տեղիս մինչ փրանկիոյ :

28 Այս իրերս յետ ժամանակաց յղեցան առ կայսրուհին Բուլքերիա՝ զորս եդ յեկեղեցւոջ ուրեք ի Կ . Պոլիս :

29 Ալեքսանդրիւն հրեական. — Տես ի Պատաժ : — Ըստ աբրևելեան մատենագրաց ոմանց տախտակք օրինացն էին ի կարմիր յակինթէ կամ ի կարկեհանէ . բայց առ արաբացիս և առ մահմետականս աւելի սովորական կարծիք է թէ էին ի զմբրեխտոյ՝ որոյ մէջ գրերն այնպէս փորագրեալ էին որ յերկու երեսաց ալ կարդացուէին (տ' Էրպելոյ Մոպէն . ոբԼԷլ. հտ · Բ):

30 Ըստ հին աւանդութեան եբր . Դաւիթ տաւիղ մի ունէր որ գիշերն որոշեալ հով մի փչած ատեն ձայն հաներ , որոյ վերայ պատաժ ծիծաղելով արհամարհէ անմտութեան խօսք համարելով , և սակայն հողմաշարժ տաւղաց գիւտն կամ վերանորոգութիւնն որոց գիւթական ձայնն կը լսուի անգլիական դասաստանաց մէջ բաբունեաց ասացածն ճշմարտէ :

31 Տ' Էրպելոյ Մոպէն . ոբԼԷլ:

32 Նոյն :

33 Դաւիթ , Սողոմոն և այլ թագաւորք ցուզայ շատ անգամ հասարակ վիճակէ կանանց հետ ամուսնացան . Սողոմոնի հռչակաւոր Սոմնացին ասի թէ գեղջուկ օրիորդ մի էր ի Սու-

լամ փոքրիկ գեղջէ՝ մօտ Յերուսաղէմ: Սրբոյ Կուսին ժամանակն Հերովդէս Մեծն էած ի կին զՄարիաննա Հասմբակ զոհագործի մի աղջիկն վասն գեղեցկութեան նորա:

34 Պեռնարտէն ասը Սէն Բիեր ասէ. «Ոչ բաժինք երկրի ոչ անուանդ և ոչ մարգք մարմնոյ ընծրհեն մարդոյ զբարեձեռն գեղեցկութիւն, այլ բարոյական զգացումն առաքինութեան՝ որ չկարէ կալառանց կրօնից: Գեղեցկութիւն կերպարանաց՝ ճշմարիտ պատկեր է հոգւոյն» (Ջննուրիւռ համառոտ. գլն. ժ):

35 Պարսկային ծոցին անուններէն մին է (տ՝ Իրպլըզ):

36 «Արդարև գրաստ վախկոտութեան էր կոյսն՝ յորում գտաւ նեն ամենայն ազգի ազգի ծաղկունք և բուրմունք անուշից առաքինութեանց» (Սոփրոնիոս Ծառ. վերափոխման):

37 Հրեայք (որպես և արևելեայք առ հասարակ) համարին թէ ծոմապահք ոչ համարին եթէ ոք յառաջ քան զմուտս արևու ճաշակէ ինչ:

38 Պատաժ գիրք Ի գԼ. ծԸ: – Ցլէօրի կենդաղէոպելցոց:

39 Եթէ Սուետոնիոսի խօսիցն հաւատամք՝ Աւգոստոս այնչափ երկնչէր յորոմանց և ի չանթից՝ որ փոթորկի նշան մի տեսանէին պէս արքունեաց առորերկրեայ նկուղներն իջնելով ծածկուէր, ուր չէր կարող լսել որոմանց ձայնն և տեսնել փայլատականց լոյս, որ և կանացի տկարութեան համար ևս ամօթ համարի:

40 Սուրբն Ամբրոսիոս Յաղթ. Հոռոմբէան գիրք Բ:

41 Նմանութիւն Սրբոյն Հերոնիմեայ:

ԳԼՈՒԽ Զ

Մարիաւոր որք ևնային.

Այս տեղս հարկ է խոստովանիմք որ Ամենասուրբ Կուսին վարուց պատմութիւնն շատ անգամ ցամաք է ըստ նիւթոց, և շատ տեղերն ալ գատարկ մնացած են, որ մեզ ալ զարմանալի երևի. կարծես թէ անապատի հինաւուրց քաղաքի մի վեմ աւերակներ են. ուր տեսանես աստ հսկայաձև սիւներ լերանց պէս հաստատ և անշարժ խարսխաց վերայ բարձրացած. անդ կամարակապ սրահներ՝ զորս հրաշապատում վիպեր սիրող արաբացին՝ աներևոյթ ոգիներէ կանգնած համարի. այլ աւելի հեռուն աւազի մէջ թաղուած տաճարներ՝ զորս պատկերողութիւն մատց կարեն վերականգնել, և յետոյ տեղ տեղ մերկ և անբեր աւազուտ՝ որ սէզ մի անգամ ոչ բուսուցանէ պանդուխտ պետվիիւն ուղտին անուն: Այնուհետև ինչպէս որ երևի առաքեալք աւելի զբաղած լինելով Յիսուսի Քրիստոսի գերագոյն անձին պատմութիւնն աւանդելու՝ նորա երկրաւոր գերդաստանին վերայն մտադիր եղած չեն. իսկ Ս. Հարք բաւական տեղեկութիւն առած են մեզ Ս. Աննայի առաքինութեանց վերայ. մեք ևս նոցա հետոյն հետևելով՝ մտաք նորա անշուք տունն, ականատես եղաք նորա բաղձանացն և եռանդագին աղօթից, տեսաք նորա ուրախութիւնն երբ վերջապէս մայր եղև, և թէ որպէս երախտագէտ սրբոտիւ ընկալաւ այս անգին պարգևս: Բայց հետ այսորիկ աւանդութեան թեղն բրդի և կորնչի, և Աննայի մնացած վարքն գրեթէ ենթադրութեամբ հաստա-

սի. և ինքն որ այնչափ պահօք և արտասուօք ընկալեալ էր իր միածին զաւակն և եսայեայ գուշակած կոյսն, և որոյ մանկութիւնն այնչափ գորովագութ խնամքով և սիրով մեծցուցած էր, և իւր գիրկն բառնալով Աստուծոյ նուիրած էր, և գորովալից արտասուօք աւանդել էր զինքն այն սուրբ տեղն, ոչ ևս այլ երևի մինչև մեռնելու ժամանակն: Եւ սակայն հաւատալի բան չէ որ Յովակիմայ ամուսինն մինչև ինն տարի առանց իւր սիրասուն զաւակին տեսնելու մնացած լինի: Տաճարին արտաքին շէնքն յորում դասախարակէին մանկունք նուիրեալք Աստուծոյ Իսրայէլի նոցա մարց առջևն փակեալ և արգելեալ տեղ մի չէր. և մայր մի այնպիսի սրբազան և կրօնական իրաւունս ունի իւր զաւկին վերայ՝ որ ամենայն ազգք գնոսին աննախադրելի համարած են. մանաւանդ որ Ս. Գիրք իսկ մեզ ցուցանեն թէ նախկինն Աննա կին Եկկանայ հանգիստաւոր օրերն ազատութեամբ գայր ի Սեղովե իւր զաւակն զՍամուէլ տեսնելու համար, և ամեն անգամ իւր ձեռօքն գործած փոքրիկ կրկնոց մի բերէր մանուկ մարգարէին՝ զոր Աստուծոյ փոխ տուած էր: Ահա Աննա զՍամուէլ ծնանելէն եւս ուրիշ շատ զաւակներ ալ ունեցաւ՝ որք իր աչաց առջև նորաբոյս ձիթենիներու պէս աճէին, որոց և վերայ ալ նոյն մայրական խնամքն ցուցանէր՝ ինչ որ տաճարին սպասաւորութեան նուիրեալ զաւկին: Իսկ այս Աննա Մարիամէն զատ ուրիշ զաւակ չունէր[1]. և այն էր իր միակ երջանկութիւնն, զառամութեան յոյսն և երկրիս վերայ իւր ցնծութեան աղբիւրն: Ապա ուրեմն անտարակոյս երբեմն երբեմն իր ամուսնոյն հետ միաւեղ տաճարն եկած ժամանակ՝ իր զաւակին ալ տեսնելու երթայր, և անոկան կանթեղին լուսոյն կամ լուսնին արծաթի ճառագայթից[2] առջևն նըստած՝ իւր աղջկան կուսական զգեստներն մանէր:

Կարծուի թէ Սուրբքն Յովակիմ և Աննա զՄա-

րիամ տաճարին ընծայելէն ետև՝ իրենց տունն դարձած են և հոն քանի մի տարի նստած՝ իրենց բնակութիւնն Երուսաղեմայ մէջ հաստատելէն յառաջ: Յովակիմ որ Յովսեփայ պէս արուեստաւոր էր՝ իր հօրենական փոքրիկ արտերն մշակէր, և վայելէր այն բարեբաղդ միջակային վիճակն՝ որ այնչափ սիրելի և ցանկալի է իմաստնոց մեծատանց և քերթողաց՝ երբ բաղդին դէմ դժկամակութիւն մի զգան[3]: Այս իր հայրենական կալուածոց մէջ որ էին ի Սեփովը ի Նազարէթ և Յերուսաղէմ յեռոյ եկեղեցիները շինուեցան. բայց այդին կամիր հարց արտավարն Սեփովրի մօտ եղած երևի, և այնոր համար էր որ դարձան ի տօրինն Գալիլեա: Յովակիմ արգարև այր իսրայէլացի եռանդագին սիրող էր օրինացն Մովսիսի. ամեն հանդիսաւոր տօներուն՝ իւր ամուսնոյն հետ միատեղ և ընդ այլ ազգականաց՝ որպէս սովորութիւն էր եբրայեցւոց, երթայր ի տաճարն, և հաւանական է որ իւր դուստրն տեսնելու բաղձանքն՝ կրօնական արարողութիւններն տեսնելու բնական յօժարութիւնն ալ աւելցուցած էր: Արդեօք որչափ ուրախութեամբ և շտապելով առնոյր Աննա բարի և բարեպաշտ կողակիցն՝ իւր ճամբու լաչակն ի սուրբ քաղաքն երթալու համար. ոհ որչափ երկար երևէին իրեն այն ի հեռուստ տեսած բազմապտոյտ ճամբայներն որ լեռներն և դաշտերն կարկին. աչքն իրմէ յառաջ վազէին, և միտքն շատ անգամ իրմէ յառաջ անցանէր՝ դեռ իրական կերպով չհասած այն թզենեաց անտառներուն և վարդեսարդի մացառներուն, և կանաչ կալնեաց կամ մլար թզենեաց պուրակներուն՝ որ տեղ տեղ իւր ճամբուն վերայ շարուած էին. որովհետև այս ամեն իւրաքանչիւր կէտերէն անցնելով իւր զաւկին այլ աւելի մօտենար, այն զաւկին զոր Աստուած հրաշիւք պարգևել էր իրեն և որոյ համար հրեշտակն ասացեալ էր թէ Իսրայէլի

փառք պիտի լինի։ Արդեօք որպիսի զգացմամբ հովտին մէջէն ողջունէր այն Անտոնեան աշտարակն՝ որ պայծառ և սպառնալից բարձրանայր իւր սրբատաշ և յղկեալ կճեպ հիման վրայ[4] զտաճարն զոյնն աղօթից պաշտպանելոյ համար։ Հապա տաճարին տեսքն յորում էր իւր Աստուածն և իւր զաւակն՝ արդեօք ո՛րչափ բաբախել տայր իւր գորովալիր և սուրբ սիրտն։

Երբ յերեկոյին քահանայից փողերն զժողովուրդն հանդիսին կոչէին[5], Աննա վազէր երթայր երկրպագելու Աստուծոյ և տեսնելու իր գուստրն՝ զոր ամիսներէ ՚ի վեր տեսած չէր։ Բայց գաւթին որոյ կամարն երկինքն էր՝ և որոյ վերայ աստեղայց մշնչաղ լոյսն ցոլայր՝ աշտանակաց[6] պայծառ ճառագայթներովն փայլէր։ բիւրաւոր ջահեր վերայ կարէին կամարակապ սրահներուն մէջ՝ որ կանաչ պսակօք[7] զարդարեալ էին. և բազմութեան մէջ անցանէին դառնային քահանայապետներն՝ իրենց շողշողուն զգեստներովն՝ զորս Պաղմիրայի[8] կարավանքն ՚ի Հնդկաց բերէին։ Մերթ ընդ մերթ տաւղաց ներդաշնակութիւնն ընկերանայր խուռն բազմութեան աղօթից ձայներուն հետ՝ որ ծովու ալեաց պէս գոռայր[9]. սոքա ՚ի հեռաւոր աշխարհ հայ եկեալ հրեայներ էին՝ որ գային յափանց Նեղոսի, Եփրատայ և Տիբերի՝ իրենց հարց Աստուծոյն մի միայն սեղանոյն առջին երկրպագելու համար[10]։ Այս ազգային և օտարական (եկք) հաւատացելոց բազմութեան մէջ՝ Աննա եռանդագին աղօթելու ժամանակ՝ աչքն վեր վերցուց և տեսաւ զՄարիամ և զընկերակից նորին՝ որ սպիտակազգեստ և պօզեալ իր առևէն անցանէին ձեռնարկին լապտեր բռնած՝ Աստուծոյ խմաստուն կոչանաց պէս։

Երբ հանգչման աւարտեցաւ՝ Աննա իւր գուստրն համբուրելով և օրհնելով՝ Յովակիմայ հետ ձամբայ ելաւ՝ լեռնակողման ուղին բռնելով. և կարեմք ասել թէ ոտքն յառաջ ոչ երթային, և ոչ համարձակէր

ելոյն յետս դարձնելոյ, և բոլոր ճամբորդութեան մէջ ուրիշ բան ոչ մտածէր՝ բայց եթէ միևնոյն միտս մեր ձաւոր հանդիսութեանց յիշատակին՝ յորում նորէն կարող պիտի լինէր իւր զաւակն տեսնելոյ։

Երբոր Յովակիմ ծերանալով ուժէ անկաւ՝ և ալ չէր կարող հայրենական արտն ինքնին մշակելոյ՝ մտածեց իւր բնակութիւնն փոխել, որով և զաւկին մօտ լինէր. ուստի բոլորովին Թողօսցին ատորին Գալիլեայի մէջ ունեցած երկիրն, և եկին բնակեցան Յերուսաղէմ, տաճարին մօտ փողոց մի։ Այլ Աննայի ուրախութեան չափ չկար. վասն զի այսու կարէր աւելի սակաւ Աստուծոյ տաճարին այց ելնելու և իւր զաւակն ալ աւելի յաճախ տեսնելու։ Արդեօք որչափ անգամ մտուան երեկոյներն տանն առջև եղած գաշտագեանին վերայ նստած մնալու ժամանակն՝ ինչ սահած է իր անշարժ մտերին, բոլոր միտքն զաւկին վերայ յափշտակուած, և աչքն յառեալ տաճարին ՚ի մայր փայտէ չվնտալ և ոսկեզօծ երդին վերայ. վասն զի Սուրբ Գիրքն ալ ասեն թէ Որ գանձ իր գաւնձր ձեր ևն՝ ասիպ և սիրտ ձեր եղիցին. և Աննայի գանձն իւր մէկ հատիկ զաւակն էր՝ յորմէ բաժնուած էր։

Այս վշտագին բացակայութիւնս և անջատումս կարճեցնելէն Աննայի ձեռքն էր, վասն զի մովսիսական օրէնքն թոյլ տայր փրկանաւորել Աստուծոյ ընծայեալ զաւակն՝ սակաւ գրամի հատուցանելով տաճարին, բայց ինքն չուզէր այս իւր իրաւունքս գործածել։ Ահա Աստուած ունեցած երախտագիտութիւնն այլ աւելի հզօր էր իր սրտին մէջ՝ քան զգօրով մայրենի, և երբ կրծնից ձայնն լսէր՝ բնութեան աղաղակն հանդարտեր և լռէր։

Գրեթէ լինն տարի էր որ Կայան ՚ի տաճարին առանձնացած ապրէր՝[11] երբ իր մանկութեան անամպ և քաղցր օրերն մտագին սկսան. իւր սիրելի հայրն արդարն Յովակիմ ծանր հիւանդացաւ, և շուտ մի

'ի վայր անկան, գլուխն խոնարհեցոյց և հոգին ա-
ւանդեց:

Մեռելոյն սենեակն ողբով և լացով համակեցաւ, կանայք իրենց կուրծքն ծեծելով՝ մազերնին փե-
ւեին[14]. արք գլուխնին մխիր ցանած՝ պատմու-
ճաններին պատառէին. անմիջապէս պատուհաններն բացին[15], բազմաստեղն պղնձէ կանթեղ մի վառեցին դիակին քովն դրին, որ իր սխուր լոյսն տարածէր ար-
գարոյն դէմնցած բայց զուարթ երեսին վերայ. և Թա-
ղին մարմինն պատնողաց ձեռքն որ լուանան և Թա-
ղեն[16]:

Չեռևեալ օրն բազմութիւն լալկանաց և փողա-
բաց[17] սգաւոր տանն առջև ժողովեալ էին՝ բազմա-
թիւ յուղարկաւորաց հետ միատեղ. աղգականք էլին 'ի վերնայարկն ուր մեռելն գրուած էր ըստ սովո-
րութեան, և բարձին զդիակն 'ի վերայ ուսոց իւ-
րեանց, և սկսան Երուսաղէմի փողոցներէն անցընել սխուր չարականներով հանդերձ սրնգաց քաղցր և տրտում ձայնակցութեամբն և լալկան կանանց ող-
բական ձիչերով. Անննա և Մարիամ ևս յուղարկա-
ւորաց հետ էին գլխակոր և սգաւոր՝ իրենց գերդաս-
տիանն տիկնայց հետ միատեղ որք աղբիւրի պէս ար-
տասուս թափէին[18]:

Մեռելն Խաչանց ասացեալ դռնէն դուրս հանեցին՝ զոր յետոյ քրիստոնեայք Դուռն Կուսին անուանե-
ցին: Թաղման տեղն երբ հասին՝ փողաբերն և լալկանք առ վայր մի լռեցին, և այն որ մեռելաթաղին գլխա-
ւորն էր սկսաւ այսպէս խօսիլ առ դիակն. « Օրհնեալ լինի Աստուած որ զքեզ ստեղծ անոյց պահեց և կեանքդ տուաւ: Ո՛վ մեռեալք՝ Աստուած գիտէ ձեր թիւն և օր մի ձեզ յարուներն պիտի տայ: Օրհնեալ լինի նա որ բառնայ զկեանս և միւսանգամ ընդունի[19] »:

Փոքրիկ պարկով մի հող դրին մեռելոյն գլխոյն վե-
րայ, և գագաթն գամեցին. յետոյ մուրթ քարայր մի

մահուան երևոյթներ սկսան երևիլ: Բարեկամք և մերձաւորք ահուդողով պաշարուած վազեցին եկին իրենց սէրն և բարեկամութիւնն յայտնելու. վասն զի հրէից գերդաստաններու մէջ այս գովելի միու-
թիւնս տիրէր: Հոգեվարքն քաղցրութեամբ ժպտե-
ցաւ իւր ազգականներն և մերձաւորներն տեսնե-
լով. Յակոբ նահապետին պէս իր պանդխտութիւնն ալ շատ երկայն տևել էր երկրիս վերայ, և հոգը չէր թէ մահուան չունչն սակաւ ժամանակէն իր տաղա-
արն պիտի կործաներ. վասն զի այս տրմաշաղախ աշխարհէս անդին՝ հոգւոյ աչքն տեսանէր այն եր-
կնային գաւառներն՝ ուր պիտի հանդչէր 'ի գոգն Աբրահամու:

Երբ երթալով այժն պակասէր՝ իմացաւ սուրբ ծե-
րունին որ կեանքն աւարտելու մօտ էր, ուստի բար-
ձրաձայն առաջն ամենեցուն խոստովանեցաւ իր մեղքն՝ ինչպէս որ սովորութիւն էր եբրայեցւոց, և իր մահն գերագոյն գաւառացուին նուիրեց՝ երբև 'ի քաւութիւն յանցանացն որ յարակից են մեր բնու-
թեանն, և արդարագոյնքն անգամ 'ի մարգկանէ ա-
զատ չեն[12]: Ա՛յս պարտքս կատարելէն եաև՝ ուղեց որ զաւակն տեսնէ և օրհնէ: Փութացաւ վազեց Մա-
րիամ[13]. իր հօր կենաց օրերուն պահպանութեան համար մատուցած եռանդագին աղօթքն լսելի եղած չէին. և Աստուած նախանձոտ կամէր սակաւ առ սա-
կաւ իւր ընտրեալ հարսին երկրաւոր կապանքն քա-
կել, որպէս զի երկրիս վերայ յիւրմէ զատ այլ ա-
պաւէն չունենայ:

Երկիւղած մատենագիրք ոմանք համարեցան թէ երբ Յովակիմ ձեռքն տարածեց իւր զաւակն օրհնելու համար՝ երկնային յայտնութիւն մի յանկարծ եղեալ նմա այն փառաւոր վիճակն՝ որում իւր դուստրն նա-
խատեսնելու էր 'ի յերկինս: Ընտրելոց ուրախու-
թիւնն իւր յարփելի դիմաց վերայ փայլեցաւ, ձեռքն

բացին որ տուն կենդանաց[20] կոչէր ուր նահապետա-
պետին ննջէր զքուն արդարոց՝ սպասելով իւր գերդաս-
տանին՝ ճեպազորդացն: Նոյն տաճն բարձրադային ձի-
չեր և սրատաճիկ աղաղակիներ բարձրացան ամէն կող-
մանէ. անկաւ Աննա գագաղին վերայ իւր ամուսնոյն
վերջին ողջոյնն տալոյ՝ և հոն մարեցաւ մնաց: Արգա-
րոյն մարմինն Թաղելէն եաւ այրին բերան Թաւա-
լեցուցին վեմ մի մեծ՝ զոր շարժուն բանադրանաց
պատժով պատուհասեր: Նորոգեցան եղերամարց
ջայլերն և ողբերն, և յուղարկաւորք երեք անգամ
ափ մի խոտ բրցնելով և դնել ի եաւնին նետելով
արամագին ձայնիւ ասէին. Ծաղկացիլ որպէս խոտ
հրկրի: Այս արարողութեամբքս կատարեցաւ ար-
գարոյն Յովակիմայ Թաղման Հանգէստ՝ որ սերունդ
էր Թագաւորացն Յուդայ, հայր Մարեմայ և պապ
Յիսուսի Քրիստոսի ըստ մարմնոյ[21]:

Սրբոյ Կուսին սիրտն այս առաջին ցաւով սասանիկ
վիրաւորեցաւ՝ որ ուրիշ շատ ցաւերուս սկիզբն և իւր
վշտաց առաջին գան էր: Անդէն առաջին մանկու-
թենէն Թշուառութիւնն իւր ձեռքն նմա կարկառեր.
բայց աշնուական մանուկն իւր ճամբէն եա չդար-
ձաւ. լացաւ այո վասն զի իւր սիրտն ալ իւր աս-
տուածորդւոյն սրտին պէս բուռն և զգայուն էր. ա-
կայն այն գառն բաժակն խմեց ասելով առ Աստուած
Եղիցին կամք քո: Մայրն ու զաւակն ի սուգ մանին
ըստ սովորութեան եբրայեցւոց. հագան խոշորնել և
առանց ծալքի խորգն՝ որ քուրձ անուանէր, գլուխ-
նին բաց և ոտքն մերկ երեսնին ձորձին քղանցքովն
ծածկած՝ խիստ լռութեամբ և ծոմապահութեամբ
եօթն օր գետնի վերայ նստան՝ իրենց ազգակցաց
հետ ողբակցելով և մեռելոյն հոգւոյն համար աղօ-
թելով[22]: Եօթն օրն անցնելէն եաւ՝ Աննա ժողովա-
րանին լապտերներն վառել տալով՝ իւր ամուսնոյն հա-
մար աղօթք ապսպարեց, և իւր վիճակին համեմատ

ողորմութիւն բաշխեց: Իսկ Մարիամ ամէն շաբաթու-
այն օրն որ որբ մնացել էր՝ ծոմապահութեամբ ան-
ցուցանէր՝ առաւօտ և երեկոյ իր հօր հոգւոյն համար
աղօթելով. և այս աղօթքս և ծոմապահութիւնս տան
և մի ամիս աւելցին[23]:

Այս առաջին թշուառութեան վերայ հասաւ ու-
րիշ մի այլ աւելի սրատակիղ, և նոր սուգ մ'ալ Յովա-
կիմայ սուգին հետ խառնուեցաւ: Հազիւ թէ մա-
րել էր Աննայի սգաւոր տան մէջ մեռելոց կանթեղն՝
հարկ եղաւ նորէն վառել, և կոյսն որ իր ծնողաց միոյն
վերայ դեռ վերջին արցունքն չէր սրբած՝ միւսն ալ ողբ-
բալու գժբաղդութիւնն ունեցաւ[24]: Իրիկուն մի
Մարիամ իւր ազգակցաց միոյն հետ տաճարէն վար
իջնելով՝ նեղ և մեռե փողոց մի մտաւ՝ ուր իր մօրն
բնակէր. կանթեղ մի պըղպըջաւ տան վերնայարկն, և
բակին մէջ ախորժակեմ լալականներն շարուած կեցել
էին, լուռ և մունչ սպասելով:

Աննա իւր տակաւ ոյժն ժողվեց զաւակն օրհնելու
համար. յանձնեց զինքն ախորութեամբ իւր ազգա-
կանացն՝ բայց առաւել Աստուածոյ՝ որ հայր է որբոց,
և ննջեաց զքունն արդարոց[25]: Լայ մի էր բրցուց
Մարիամ և անկաւ իւր մօրն պաղած երեսաց վերայ.
իւր խարտեաշ մազերն խառնուեցան մեռելոյն ճեր-
մակած հերոյ հետ, և կարծես թէ իւր հեկեկանաքն
մօրն արթնցնել չանայր. բայց Աստուածոյ չուզեց
միայն կարէ կենդանացնել զմեռեալս: Երբոր արգա-
րոյն ցաւոյն առաջին սաստկութիւնն տակաւ մի մեղ-
մացաւ՝ իւր ձեռաքն դոցեց այն սուրբ կնոջ Թարթիւ-
նեղն, երկայն և խտուր համբոյր մի տալով որ էր յե-
տին ողջոյն ըստ սովորութեան իւր ազգին[26]:

Լռութեամբ և աշնուականութեամբ կրեց Կոյսն իր
խորին ցաւն. նախախնամութենէ զատ ապաւէն մի
չունենալով երկրիս վերայ՝ Աստուածոյ ծոցն գնաց, և
անոի լսէր երբե'ք խաղաղ հաւատացեալ՝ աչքեր-

հային մըրկաց հեռաւոր գոչիւնն, և իմացաւ մարդկային կենաց ամենայն բանի ունայնութիւնն, զուբնայնութիւն պատուոյ և մեծութեանց, զունայնութիւն ճոխութեան և գեղեցկութեան, որ ամենն ալ ձմերնային հեղեղի վերայ երևցած ալգպկակի մի պէս փայլին և անդէն աներևոյթ լինին, այն հեղեղին հետ միասին՝ որ ձմեռն անցածին պէս ցամքի: Այս միայնութեան և առանձին խոկմանց ատենն էր՝ ասէ պատմագիր մի, որ Մարիամ մշանջենաւոր կուսութեան ուխտ դրաւ [27]: Եւ յիրաւի տեղ մի նշանակուած ոչ գտանէմք թէ այս ուխտիս ծանօթ եղած լինին Աննա և Յովակիմ, որ առանց իրենց հաւանութեանն վաւեր ոչ համարէր առաջի քաղաքական և կրօնական օրինաց: Իսկ իրենց մահուանէն ետև՝ Մարիամ թէպէտ և իննամակալի իշխանութեան նեղքև էր, սակայն զինքն աւելի ազատ կարէր համարել այս ուխտս առնելու. ուստի այն ատեն ընտրեց զԱստուած՝ ի ժառանգութիւն իւր, և նոյա սեղանոյն սպասաւորութեանն նուիրեց զինքն անսահման ժամանակաւ, և միտքն դնելով ոչ ևս ելանել արտաքս այն սրբարանէն: Ս. Կիպրիան ալ իւր ցեղին գլուխ եղող Թադաւորին պէս համարէր թէ լաւ է մի օր՝ ի գաւիթս տանն Տեառն քան զհազարս, և աւելի նախագասէր յետին լինել այն սուրբ տեղւոյն մէջ՝ քան թէ առաջին՝ ի խրախճանս կեղտաբուծ ։

ԾԱՆՕԹԱԽԻՒՆՔ Զ. ԳԼՈՒԽՈՅ

1 Եղև ոք որ համարեցաւ թէ Աննա այլ համանուն դուստր մի ևս ունեցած է՝ քան տարի յառաջ ծնեալ քան զկոյսն. սակայն եկեղեցին ոչ ընդունի զայս կարծիս:

2 Կանայք երբայեցիք ամառն ժողովեալ՝ լուանի լուսով մանելու սովորութիւն ունէին անտի յայտնի է՝ որ օրէնսգիրք իւրաւունս տային արանց արձակելու զկանայս՝ որ լուանակին մանելու ատեն չարախօսէին զարանց իւրեանց (Ոռթա գլ. Զ): Այս սովորութիւնս մինչև ցարդ տևէ՝ ի Քոթսիքա կղզին՝ որ ուրիշ շատ արևելեան սովորութիւններ ալ ունին:

3 Ըստ Սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ Հայրն Կուսին պարտաւոր էր՝ բարեպաշտութեամբ և երկիւղածութեամբ անուանի: Ուրիշ մ՝ալ հաստատէ թէ բաւական ունեւոր լինելով Յովակիմ և Աննա՝ տաճարին և աղքատաց առատ ողորմութիւնս տային (տես՝ի վերս Սրբոյ Հ.Ալֆերեանի հտ. Ե):

4 Աշտարակն անտունեան՝ տաճարին միջնաբերդն կարէր հասմարուիլ, որ երբեմն ամմոնեան իշխանաց պալատն էր. և ժայռն որոյ վերայ բարձրանայր անմատչելի է յամենայն կողմանց, յիսուն կանգուն բարձրութեամբ: Ջերմվռեռս այս աշտարակս դրեն մարմարիոնով պատեց՝ որպէս զի մարդ չկարացէ երթել և իջնել:

5 Երբայեցւոց որպէս նաև այլոց ազգաց արևելից կրօնական ծոներն նախընթաց յերեկոյէն սկսին որպէս յայտնի է:

6 Այս ոսկեղէն աշտանակներս յիսուն կանգուն բարձրութիւն ունէին, և պռոտոտիպօս բաբունիք ասեն թէ իրենց լոյսն երուսաղեմէն շատ հեռուէն երևէր, և քաղաքն ևս այնչափ լուսաւորէր որ խոհարարք կանթեղի պէտք չունէին ապրոյ բերինձն սոկելու (տես՝ի Թալմուան, և գարձի եկող բաբունեայ մի Գ. Թուղթն):

7 Այս սաղարթուց գրանսանգն տաղաւարահարաց տօնին գրուէին (Պատած գիրք Ի գլ. 16):

8 Ջոհագործից հանդիսաւոր տօներուն երեկոյներն հագած բադէնն՝ ի Հնգկաց գային, և շատ սուղ բաներ էին (Պատած գիրք Ի գլ. 15):

9 Հրեայք և արաբացիք բարձրաձայն աղօթեն ։

10 Քանի որ տաճարն կանգուն կայր՝ հրեայք պարտս համարէին այց ելնելու. Տիտոսի ժամանակ Երուսաղէմայ կործանման առնն միլիոն մի և հարիւրհազար մարդէն աւելի կորեան՝ որ եկեալ էին զատկի ոճոն կատարելու՝ երբ քաղաքն պաշարեցաւ (Պատմաժ գիրք Ի գլ. 11)։

11 Հայրն Բրուազէ Հրահանգ բարեպաշտութեան գլ. ԺԸ։ —

12 Պատմաժ գիրք Ի գլ. 24։

13 Նահապետաց ժամանակէն սովորութիւն էր որ հարք մեռած առնէին իրենց զաւկերն օրհնէին. ուստի Մարիամ ալ այս սովորութեանս հետևեցաւ, որովհետև կուսաստանն մենաստանաց պէս փակարան չէր, և հայրն յԵրուսաղէմ բնակէր։

14 Սուրբ Հերոնիմոս ցուցանէ որ իր ժամանակն ալ երբայեցիք ցաւելոյ և մազերնին փետելով մեռնողին նուիրելու սովորութիւն ունէին։

15 Աս հրեայս ով որ մեռելոյ գոլշի պղծեալ համարի. և երբ դուռն փակի՝ տունն գերեզման համարի և պղծեալ, իսկ երբ բացուի՝ պղծութիւնն ալ վերնայ (Մայմոնիտ)։

16 Պատմաժ գիրք Ի գլ. 24։

17 Յիսուս Քրիստոս իշխանի մի դուստրն յարուցանելու համար տունն մտած առեն՝ եւոես զփողարան որ մեծ աղաղակս առնէին։ — Մայմոնիտ ասէ թէ ամենեն աղքատն ալ երկու փողար և մի լալկան վարձելու է իւրկնօղ թաղման, հարուստներն այլ աւելի (Ֆլէօրի Կէնդաղ Էրայելացոց)։

18 Կանայք և որդիք իրենց արանց և հարց թաղմանն ընկերէին. Նայինի այրին իր որդւոյն դագաղին եւոեն երթայր. Յովսեփ իւր հօրն Յակոբայ թաղման ժամանակ յառաջընթաց լինէր սխուր հանդիսին։ Այս սովորութիւնս մինչև ցայժմաւէ՛ի Հրէաստանի։

19 Լևոն մոռենացի Սովորութ հրէից. Պուքստորֆ Բառարան էբր. ֆաղբ։

20 Գերեզմանն փոխանակ պոռն ֆեռելոց կոչուելու պոռն կենդոնոց կոչէր, ցուցանելու համար թէ անմահ հոգին՛ի մարմնոյ բաժնուելէն եւոե ևս կեայր. այս անունս երևի թէ փարիսեցիք հնարած են (Պատմաժ գիրք Ի գլ. 24)։

21 Տես՛ի Ֆլէօրի Կէնդաղ Էրայել Լևոն մոռենացի Սովորութ հրէից. Պատմաժ գիրքը Ի. Թղթակցութիւն աբեղայ հա. ե։

22 Բառասուն և իննևերորդ սաղմոսն երգեին. — Լայֆիւթ՛ի ՅՀ։ Լևոն մոռենացի։ Հ. Մխքայէլ Զամչեան։

23 Պատմաժ գիրք Ի։

24 Հայրն Բրուազէ համարի թէ Յովակիմ և Աննա իրարմէ եւոե մեռան՛ի սակաւ ժամանակի։ — Իսկ Հ. Մկրտիչ Ագաթեան համարի թէ Ս. Աննա վերկարեաց՛ի կեանս մինչև տեսանել և գգուել զԹոռն իւր զՔրիստոս (տես՛ի Լոր Սբբոց. տես ևս՛ի Ճշմարիտ ի Լոր Տէրմօրն)։

25 Հաւանական է որ Ս. Կույսն առընթեր գոաւ և՛ մահու մօրն ըստ սովորութեան հրէից։

26 Յոյժ հնագոյն է սովորութիւնս. Փիլոն երբայեցի յիշէ զողջոյս Յակովբայ՛ի վերայ որդւոյն իւրոյ, յորում ասէ թէ գոնեայ այս միսեթարութիւնս ալ չունեցաւ փակելոյ զաչս նորա և տալոյ նմա զյետին համբոյր, և յաւելու « Որդիք երբայեցւոց ընդունելին զօրհնութիւն հարց իւրեանց, փակելին զաչս նոցա, և յուղարկաւորք գնային՛ի գերեզման հանգստեան յաւանգելն գնոսին՛ի յոսկերս նախահարցն (Պատմութիւն օրինադրութեանցն Մովսէսի և ապէին երբայեցոց հա. Բ)։

27 Տէքութիւր Վարք Սբբոյ Կոյսին։

Ս. Վանն գերեզմանի Յովակիմայ և Աննայի, որպէս և Սրբոյ Կուսին և Յովսեփայ՝ հաստակաց աւանդութիւն է թէ էր՛ի ձորն Յովսափատու մերձ՛ի պարսէզն Գեթսեմանի, զոր և ստորագրէ Փրանկիսկոս Կուարեսմիոս ոմն՛ի Ջննոբեան սբբոյ երկրին հա. Բ գիրք Դ. գլ. 2 (տես՛ի Լիթոգրաֆ Լոր սբբոյ Աւգերեանի հա. ե էջ 20)։ Սրբոց գերեզմանացս նորագոյն խուզարկութիւնն և ստորագրութիւնն տես Գործոյս վերջերն Ատուածամոր ննջման և թաղման գլխոյն ճանօթութեանց մէջ։

ԳԼՈՒԽ Է.

Հարսնուբիւն Մարիամայ.

Երեւի թէ Յովակիմ մեռնելու ժամանակ՝ քահանայից մանաւանդ խնամոյն յանձնեց իւր զաւակն, կամ թէ իշխանք որ որբոց հոգ տանէին՝ իրեն խնամակալ կարգեցին զոմանս ի ցեղէն Ահարոնի՝ մօր կողմանէ ցեղակից լինելուն համար, և կամ տաճարին սպասաւորութեան նուիրեալ տղայոց խնամքն իրանց վճռական ցեղին անկանէր. այս սոյգ է որ իւր բարեպաշտ ծնողաց վախճանելէն ետև՝ Մարիամ քահանայական ցեղէն խնամակալներ ունեցաւ. և եթէ յանդգնութիւն չեսպուի այս ենթադրութիւնս՝ մեզ հաւանական երեւի ասել թէ այս խնամակալութիւնս Եղիսաբեթի երկիւղած երկանն Զաքարիայի վստահացան, որ թէ մօտ ազգական լինելով Սրբոյ Կուսին և թէ առաքինութեամբքն պատկառելի՝ շատ յարմար էր այս պաշտօնիս: Նոյն իսկ Մարիամու փոյթն էր թաղու ուրախակից լինելու Յովհաննու Մկրտչի մօրն՝ երկու երեք տարի յետոյ, և իւր երկայն տաճն բնակութիւնն ի Փեբրոն ի տան Զաքարիայի՝ այս բանս հաւաստմանն, և ցուցանէն թէ պարզ ազգականութենէ աւելի՝ մտերիմ յարաբերութիւն մի ունէին երարու հետ. հրէից մէջ խստիւ պահուած պատշաճողութեանց օրինաց նայելով՝ այն տունն յորում երկայն տաճն բնակեցաւ Մարիամ՝ իւր հօրեղբայրական տան պէս ապահով պէտք էր լինել:

Բայց քահանայից մէջ ոչ ամէն եղած իցեն Սրբոյն Աննայի երանելի զաւկին խնամակալութեան պանծալի պաշտօնն ունեցողներն՝ խղճի մտօք և անվրէպ կա-

տարեցին իրենց պարտքն՝ որ այս պաշտօնս պահանջէր. այնպէս որ երբ Կայան տանուտէրութենէ տարուան եղէ՝ մտածեցին որ արժանաւոր փեսայ մի տան իրեն: Հարսնութեան այս խորհուրդս մեծ տագնապի մէջ ձգեց զՄարիամ. իւր բարձր անարատ ներանձնական և հայեցողական հոգին՝ գուշակել էր աւետարանական կատարելութիւնն, և իրեն երևէր թէ կուսական վիճակն կին մարդու համար քան զամենայն պայմանս կենաց կատարելագոյն սրբագոյնն և պատուաւորն էր: Ըստ վկայութեան Սրբոյն Դրիգորի Նիւսացւոյ՝ հնագոյն հելլենակ մի պատմէ թէ Մարիամ երկար տաեն համեստութեամբ դէմ կեցաւ՝ և հաւանութիւն ոչ տայր իւր խնամակալաց Թախանձանացն, և խոնարհութեամբ խնդրեց իւր ազգականներէն որ Թողուն զինքն տաճարին մէջ անմեղ անյայտ կեանք մի անցնելու՝ ազատ յամենայն կապանաց բաց ի կապանաց Տեառն իւրոյ: Իր վերջապէս նամբ ունեցողներն շատ զարմացան այս խնդրուածոյս վերայ. վասն զի այն բանն զոր ինքն իրրև ընորհ խնդրեր ի Նոցանէ՝ ամբողջութիւն էր և անզատակութիւն, որով և նախատինք, և այնպիսի վիճակ մի զոր Մովսիսի օրէնքն ընդ անիծիւք դատապարտեալ էին [2]. և վերջապէս ամուրի կեանքն էր ուզածն՝ որ է ասել հայրական տունն և անունն չկորուսանել բոլորովին, որ առ երբայեցիս գրեթէ ամբարիշտ խորհուրդ մի համարէր, և մեծ թշուառութիւն սեպէին երբ ոչ կարէին մխնջենաւորել իրենց անունն Իսրայելի մէջ: Եւ ոչ ալ կուսութեան ուխտիւ զինքն պարտաւանդած լինելն կարէր իրեն օգնել. վասն զի այս ուխտս հրապարակեալ և վաւերացեալ չէ լինելուն համար՝ նովին իսկ գերդաստանին կամքն ոչինչ համարէր: Կին մարդ իւր բոլոր կենաց մէջ անտիական կամ անչափահաս կը սեպուէր հին տաեն, և ըստ այնմ ալ իրեն հետ կը վարուէին, մինչև որ հրատա-

Այս զօրաւոր պատճառներուս վերայ՝ որ Աստուծոյ խորհրդոյ անհասանելի խորոյ մէջ ծածկեալ են, ուրիշ պատճառ մի ալ կայր՝ որոյ սկիզբն նախքան ժամանակաց ժամանակներէն և ազգային փառասիրութենէ յառաջ գայր, որ ինքնին միայնակ բաւական էր ակարացնել Մարիամու խնդարհ ընդդիմութեամբ յաջողելու յոյսն։ Մշտնջենաւոր կուսութիւնն՝ զոր քրիստոնեայք թագուհի առաքինութեանց համարեցան՝ Մովսիսի օրինաց հետևողացն առջև անտեղութիւն մի էր, որք այնչափ գարեբէ՝ ի վեր անձկանօք սպասէին Աբքայ-Մեսիային գալըստեան։ Յեսսէի գաւազանին նորածիլ ծաղկին և Դաւթի գուսանն ազատ չէր ամուսնական լուծն մերժելու. այլ պարտաւոր էր զաւակ մի առնել՝ գերդաստանին վառառէր բարեպաշտութեանն, որ բոլոր Թագաւորական գանձուց հետ ոչ փոխէր այն ակնկալութիւնն որ ունէր՝ օր մի իր գերդաստանին մէջէն ելած համարելու զփրկողն Իսրայելի։ Այս ակնկալութիւնս որ քաջալերէր զՏրեայն՝ երբ աստրեստանցին զինքն գերի վարէց և տարաբնակեցուց Եփրատայ ափունքն, այլ աւելի զօրացած էր՝ ի յետին ժամանակս որ և վերաժխնդրութեան դաժան փափաքանաց փոխուեցաւ՝ երբ հռոմայեցիք Ասիոյ աիրեցին. և երբայեցիք յուսային Թէ մօտ էր այն օրն՝ յորում Թշնամեաց արծուենշաններն պիտի հալածուէին իրենց կանաչ գրօշակին [5] առջև, և մակաբայեցւոց նշանաբանն [6] պիտի ծածանէր հռոմէական ծերակուտին չորս գրերուն վերի դին։ Մեսիայի նկատմամբ եղած գուշակութեանց լուսին ալ՝ ամենուն մտաց մէջ մօտ առեններն պիտի կատարուէին. ուստի և Մարիամու խնդրածն ալ իրեն շնորհելու համար՝ ժամանակն չարմար ոչ երևէր։

Ուստի Սրբոյ Կուսին խնամակալքն նորա գիակամակութեան և առաքինութեանց ականջ չտալով ժո-

բակեցաւ աւետարանի անմահական օրէնսդիրքն՝ որ զայր ազատ և զկին և զգերի իրարու եղբայր կարգեց մի ժողովուրդ կազմելով։

Ջհանայից դասէն ալ ոչ ոք պաշտպան եկաց Կուսին Թախանձանացն. վասն զի գեռ այսպիսի վսեմ առաքինութեանց բարձրութեան հասու չէին, և որ չափ այլ իմաստուն և խորախորհուրդ մարդիկ էին՝ սակայն Մարիամու հրեշտակային և սուրբ հոգին՝ իրենց համար եօթն կնքով կնքեալ մատեան մի էր։ Իր մտաց որոշումն՝ որ իւր գարէն չատ բարձր էր և իր ազգին նախապաշարմանց հակառակ՝ իրենց համար անհասկանալի բան մի էր. ուստի ինչ առարկութիւն որ յառաջ բերաւ՝ իր սիրելի ուխտին հակառակ վճռակ մի չընտրելու՝ անօգուտ եղև։ Եւ ինչպէս կարելի էր կնքն համոզել զնոսա՝ երբ Աստուածն կնքին հակառակ էր իրեն խորհրդոյն. որովհետև աստուածային Նախախնամութեան անքննելի խորհրդովն սահմանուած էր նորա ամուսնութիւնն արդար մարդու մի հետ՝ որ վկայ լինելոց էր անարատութեան կենաց նորա, ազատելոց էր զնա իր ազգակից երիտասարդաց Թախանձանքէն՝ որք նոյն իսկ աստծուին մէջ եղած աստենէն՝ իրեն հետ կ'ուզէին նշանուիլ [3], և պաշտպան կալոց էր նմա և իւր Աստուածորգւոյն զանազան դժբաղդութեանց ժամանակ։ Բայց յայտնէ այս էր մի միայն մէջոցն Մարդեղութեան խորհուրդն ազատելու ապականեալ աշխարհն՝ ի վայրախաղութենեն և յաչալանաց, որ այն հրաշալի յղութիւնն իրեն գործէ առնելով ամբարիշտ կասկածներ կարէր տարածել, և մինչև անգամ յայն ատենն նախանձայուզութեան հանիլ՝ մինչև քարկոծել ևս զմայր Մեսիային իբրև վատահամբաւ աղջիկ մի [4]. վասն զի գթութիւն ատացեալ առաքինութիւնն չատ ծանօթ չէր երբայեցւոց, ինչպէս որ Աստուածն ալ չատ անգամ մարգարէին ձեռաքն երեսնին զարնէր իրենց խստասրտութիւնն։

զով մի կազմեցին մերձաւոր ազգականներով՝ որ ա-
մենքն 'ի սերնդոց Դաւթի էին և 'ի ցեղէ Յուդայ,
որպէս և ինքն [7], իրեն յարմար փեսայ մի ընտրելոյ
համար։ Զինքն հարս ուղղութեան մէջ կային շատ
երիտասարդներ, ամենք գեղեցիկ և կարիճ, և այլք
տեարք բարեբեր անդաստանաց, այգեաց, հօտից և
ձիթաստանաց։ Զօրավարքն Իսրայելի օժտէն զատ կա-
րէին տալ Մարեմայ՝ պատերազմոյ մէջ աւար առած
հարստութենից և գերեաց մի մասն. մեծատունք
առհմիւ կարէին զարգարել զնա Ընդկայց ոսկեթել
դիպակներով և Տիւրոսի կրկնաներկ ծիրանիներով,
իսկ վաճառականաց զաւիներն որ Եգիպտոսի հետ
գործուխտ, Պարսից հետ պերոզակի և Պարսից ծո-
յին հետ մարգարտի առուտուր առնէին՝ կարէին իրեն
առջև գնել անգին գոհարաց քառամանեակներ,
թանկագին ապարանջաններ, ծանրագին գինդեր՝ ո-
րոց գնոյն կարելի էր իշխանի մի կեանքն փրկանաւո-
րել. վերջապէս այն ամեն շքեղ և փայլուն զարդերն
և մեհեանդներն՝ որ ակար սեռին գերազանութեան նշան-
ներն են։ Բայց գերդաստանին Ժողովքն տարփաւո-
րաց այս ամեն բարեմասնութիւններս կշռելով բա-
ւական չհամարեցաւ. և երիտասարդութեան, ազ-
նուականութեան, հարստութեան և քաջութեան ա-
ռաւելութիւններն արհամարհելով՝ ամենեքեան միա-
բան քահանայք և իշխամակալք և տան նահապետք՝ ի-
րենց ընտրութիւնն աղքատ և հասակաւոր մարդոյ [8]
մի եռաւն Ժողովրդեան մէջէն՝ որ միշտ ամուրի [9] կեանք
անցուցել էր, և իր հայն ճակտին քրտինքովն վաս-
տըկէր. և այս մարդն էր Նազարէթ քաղքէն Յովսէփ
անունով հիւան։

Մարիամու չնաշխարհիկ գեղեցկութեան նայելով,
և իր տաճարին մէջ ընդունած դաստիարակութեան,
իր գերդաստանին ազնուականութեան և իր հայ-
րենական ժառանգութեան համար՝ շատերուն փափաք

գայր զինքն իրենց հարանացնելու, որովհետև հրէից
մէջ սովորութիւն էր որ աղջիկ իրենց կնոջէն բանի մի
ոչ սպասէին [10], այլ մանաւանդ թէ իրենք տային նո-
ցա օժիտ, այս ամեն բան նկատելով Թերեւս զարմա-
նան ամենք այս ընտանեկան ժողովքին ընտրութեան
վերայ. բայց պէտք է գիտել թէ Ս. Հարք մեզ ցու-
ցանեն որ Յովսեփայ ընտրութիւնն վիճակարկու-
թեամբ կատարեցաւ և որոշ յայտնութեամբ աս-
տուածային կամաց [11]։ Սրբոյն Հերոնիմոսի ձեռաք
պահուած հին աւանդութիւն մի՝ զոր կարմելոս լե-
րին պատմութիւնն ալ հաստատէ, ասէ թէ Մարե-
մայ տարփաւոր երիտասարդք Աստուծոյ օգնու-
թիւնն հայցելէն ետև յորմէ Պատրիարքի կիւն առնի՝
իւրաքանչիւրն առաջին երեկոյէն տաճարն աւանգե-
ցին իրենց նշենի գաւազաններն, և առաւօտուն տե-
սին որ Մաթթանայ որդւոյն Յակոբայ, Յակոբայ որ-
դւոյն Յովսեփայ գաւազանն՝ որ այլոց պէս չոր և
ցամքած փայտ մի էր՝ ծլել ծաղկել է, ինչպէս որ
հին աւեն նոյն կերպով հաստատեցաւ քահանայու-
թիւնն 'ի տանն Ահարոնի։ Եւ վերոյիշեալ պատմու-
թիւնն յաւելու՝ որ այն երիտասարդներէն մին որ
ազնուական անէր էր և Հրէաստանի զօրաւոր գե-
դաստանաց ազգական և հարուստ ժառանգութեան
տէր, այս հրաշքս տեսնելով՝ մեծ տրտմութենէն իւր
գաւազանն ջախջախեց և չոգաւ առանձնացաւ կար-
մելոս լերին այրերուն մէջ եղիայի աշակերտաց
քով [12]։

Այս կերպով եղած ընտրութիւնն՝ իւրամակալներն
Մարիամու ծանուցին, և այն հրաշալի օրիորդն՝ որ
ազնիւ աչխատութեանց վարժած էր, անուշահոտ
բուրմանց և քաղցրանուագ երգոց մէջ մեծցած և
սուրբ օթևանին հիացուցիչ մեծվայելչութեանց մէջ
սնած՝ առանց վարանելու սիրով ընդունեց անշուշտ
կեանք մի, հասարակ աչխատութիւններ և ծանր հո-

պէր՝ այն խոնարհ և ծերուկ արուեստաւորին հետ՝ զոր իւր աղգականք իրեն սահմանել էին: Կարծուի թէ աստուածային աղեցուԹիւն մի իրեն իմացուցել է՝ որ այս արդար մարդս իրեն համար պաշտպան մի և հայր և պահապան պիտի լինէր իւր ողջախոհուԹեան [15]. ինքն ալ աւելի բան մի ոչ փափաքէր: Աստուած իր աղօԹքն ընդունել էր՝ որ իւր գրած օրէնքն հաւատարիմ մնալու Թոյլ տալէն զատ՝ յաւելուր նաև հնազանդուԹեան արդիւնքն:

Անտարակոյս Յովսեփայ և Մարեմայ զիրար առնելոյ ըսբն իմացուելուն պէս՝ ՆազարէԹի և Երուսաղեմայ մէջ չատերն զարմացան այս բանիս, որովհետև Իոսեգեաքներուն տարիքն հարստուԹիւնն և վիճակն իրարմէ չատ տարբեր էին: Բայց մեք մեծապէս սխալիմք եԹէ համարիմք Թէ այս միուԹիւնս օրչափ որ մեզ ամէն կողմանէ անհամեմատ երևի՝ նոյնպէս անյարմար երևցած լինի նաև հրեից. որովհետև դեռ այն աղգին մէջ պահուած էր նախկին բարուց պարզուԹիւնն: Արուեստաւորի վիճակն՝ ԹէպԹէ սերուՀեան մէջ բարձր ասպիճան ոչ համարէր՝ սակայն առ իսրայելացիս անարգ և անպատիւ վիճակ մի չէր [14]. Յուդայի ցեղին աղգաբանուԹեան մէջ տեսանելիք բեհեղագործ ընտանիք մի, ուրիշ մի բրուտ խեցեղէն անօԹոց որ պատուով կը յիշատակուին. և Սաբբ Գիրք ապագայից աւանդեցին Բեսեղիէլի և Ֆիրամայ անուանքն. յայտնի է գարձեալ որ Պաղոս առաքեալ որ օրէնսգիտուԹեան աշակերտեալ էր, և անուանի րաբունապետն Հիլլէլ՝ այնպիսի ձեռնարուեստս ունէին՝ որ չատ նշանաւոր բան մի չէր, և սակայն իրենց արուեստն բանեցնելու ոչ ամաչէին: Բայց ասոնք ամէն իսրայելացի արուեստաւոր էր, և ամէն տանուտէր ԹէԹ հարուստ ԹէԹ աղքատ պարտաւոր էր արուեստ մի ուսուցանել իւր որդւոյն՝ կրնալ ապրիլ որ գող լիցի զաւակինիդ՝ ասէր օրէնքն [15]:

Այն հրեայք որ աղքատուԹեամբ կամ անհանգուԹեամբ պարտական անկանելով՝ իրենց հայրենի կալուածքն օտարի վաճառ գարձուցանէին իրենք գրաւ՝ ուրիշ բան չէին կարող առնել՝ բայց եԹէ կամ բոլորովին իրենց հայրենեաց հեռանալ, և կամ կարօտուԹեամբ իրենց ձեռաց աշխատուԹեամբն աղքատորէն ապրիլ իրենց ծնած երկրին մէջ՝ մինչև որ հասնէր յոբելեան տարին, որ իւրաքանչիւր ոք նորէն իւր կալուածոց տէր կարասցի լինել: Ուստի նոքա որ հայրենասիրուԹեամբ այս վերջին վիճակս ընտրեին՝ իրենց իրաւունքէն բան մի ոչ կորսուսանէին և ամէն պաշտամանց չարմար սեպուէին: Իսրայելացիք՝ հնդկաստանցւոց և եգիպտացւոց պէս զանազան աստուձան ոչ բաժանէին. իրենց բովանդակ պարծանքն կրօնական հաւատքէն և նահապետաց չայրորդ լինելէն չառաջ գայր. և Պօսիւէի ասացածին պէս « Ըստ մարմնոյ Աբրահամէն իջած լինելն այնպիսի պարծանք մի էր՝ որ քան զամէն պատիւ գերազանցէր ». և իւրաքանչիւր իրենց մէջ ամենէն յեսուին աշ ինքզինք իշխան համարէր օտարաց համեմատուԹեամբ [16]:

Սակայն իրենց մէջ աշ կային՝ որպէս առ արաբացիս, առաւել անուանի ցեղեր և քան զայլս աւելի ազնուական աներ. ցեղն Յուդայի՝ որ 'ի գլուխ հազարաւորացն Իսրայելի պատերազմներու ժամանակ ազգին գրօչակիրն էր, և որոյ ձեռքէն իշխանուԹեան գաւազանն պիտի չպակսէր մինչև 'ի գալուստ Մեսիային, միշտ առաջնուԹիւն ունեցաւ. և Յուդայի ցեղին գերդաստանաց մէջ աշ ԴաւԹի տունն ամենէն չառաջ և քան զամենեսին պատուաւորն էր: Իսկ արդ Յովսէփ ԹէԹ և աղքատ՝ բայց ԴաւԹի սերունդ էր, և իւր երակաց մէջ քան Թագաւորաց արիւնն ընԹանայր, և Ջօրաբաբէլ որ զԺողովուրդն Աստուծոյ գերուԹենէ գարձուցել էր իր նախահայրն էր: ԹէպԹէ այն ժամանակէն 'ի վեր իւր տունն սակաւ

առ սակաւ իւր փայլն կորուսած էր, և իւր գերդաստանն ոամկին հետ խառնուած՝ ինչպէս նաև Մովսէս և Սամուէլի, բայց տակաւին ամենքն ճանաչէին իւր փառաւոր ծագումն: Այհաւասիկ այսօր իսկ ազգասէր ցեղին մեացորդքն Հէճազի մէջ խեղճ կեանք մի վարեն, և սակայն Հարուն էլ Ռաշիտի յաջորդքն ալ զիրենք մեծարեն, և արաբացի ձոխ գերդաստան մի չկայ՝ որ նոցա հետ խնամութիւն առնելն իրեն անպատուութիւն համարի:

Ապա ուրեմն Յովակիմայ գաղթը նուաստութիւն չէր՝ ինչպէս որ կարծուի հիւսան հետ ամուսնութիւն: Իսկ եթէ այլ ազգի բարձրէն նկատմամբ այս միութիւնս՝ որ զառաջինն այնչափ անյարմար երևի մեզ՝ տեսանեմք որ յիրաւի աշխատական խնամութիւն մի էր. Աստուած՝ նայն իսկ երկնից տարփալի Կուսին ոչ կամեցաւ տալ ի փեսայութիւն այնպիսի մարդ մի՝ որոյ արդիւնքն լոկի միայն ունել արտս և այգիս, ոսկի և արծաթ, որք այնպիսի բաներ են որ ձեռաց ի ձեռս անցանեն, և հարուստ մարդու այնչափ սեպհական են՝ որչափ իրեն հագած զգեստներն՝ յորոց երեկոյ եղածին պէս մերկանայ, այլ տուաւ իրեն արդար մարդ մի իր ձեռակերտաց մէջ կատարելագոյնն. վասն զի ինքն ինսոի համարի զայնս՝ որ ոամկին մեծայարգ երևին. իւր աչաց առջև ամէն վիճակ հաւասար է ի մէջ խեղճ արարածոց՝ որ սակաւ մի ժամանակ քարշ գալով ընդ հող և ընդ փոշի՝ վերջապէս որդանց կերակուր լինին: Մարդ հայի չկրնաս այլ Աստուած հայի ի սիրտս ասեն Գիրք: Զհանարհն և զարդարն Յովսէփ հրեշտակաց Թագուհւոյն փեսայ և Մեսիայի հայրագիր ընտրելոյն պատճառ այն էր, որ լիովհետև ընդհայց և արբուհեան գանձերով ձոխացած էր՝ երկնային հոգեղինաց անգամ նախանձելի, և զի առաքինութիւնք՝ առաջին կացուցեալ էին զնա յազգին իւրում, և կենաց գրոց մէջ որ յաւիտեանս

կան կենաց աշխուհականութեան տարեգիրքն են՝ կեսարէն աւելի բարձրագոյն էր իւր տէրն: Աստուած զկոյսն հզօրագունին չյանձնեց՝ այլ արժանագունին. որպէս և տապանակն ուխտի՝ որում ոչ համարձակէին մերձենալ իշխանք և հզօրք Իսրայելի՝ վախնալով որ մի գուցէ մեռանիցին, պարզամիտ ղեւտացւոյ մի տունն իջաւ և երկնային օրհնութեամբ ձոխացոյց զայն:

Մարեմայ հարսնախօսութիւնն նախկին ժամանակաց պարզութեամբն կատարեցաւ. Յովսէփ ի ներկայութեան խնամակալաց նորա և վկայից ոմանց մատոյց նմա փաքրիկ արծաթի գրամ մի կամ ոսկի օղակ պարզ մատանի մի առելով. երբ հաւանիւս լինիր իմ հարսս՝ ընդունիւր զայս գրաւս: Մարիամ մատանին ընդունելով հանգիստապէս կապուեցաւ, և այն օրէն իւր ազատութիւնն չէր կարող նորին ատանալ՝ բայց եթէ ապահարզանի վճռով: Դպիրք գաշնագիրն գրեցին, որ համառօտ գիր մի էր առանց դիւանագրական ձևերուս [17]. յորում փեսայն խոստանայր՝ իւր կինն պատուելու, և ըստ սովորութեան հրէից նորա ապրուստն և հագուստն հոգալու, վարձանս կարգելով նմա երկուհարիւր զուռի (որ է գրեթէ 300 ֆր. Փրանկիոյ). այս առաջս ամենեցուն հաւասար էր թէ իշխանաւորաց և թէ ոամիկ մարդկանց գաւերացն, սակայն իւրաքանչիւր ոք իր վիճակին համեմատ կարող էր բան մի յաւելուլ ի վարձանս հարսնին: Այրողութիւնն կատարեցաւ համառօտ օրհնութեամբ առ Աստուած որ ամուսնութեան օրէնքն սահմանեալ էր. և զայս օրհնութիւնս կարգաց մին ի խնամակալաց՝ որ հարսին հօր տէրն բռնած էր: Այն ատեն գեռ ամուսնութիւնն խորհրդոյ կարգ չէր՝ յոր բարձրացոյց յետոյ Քրիստոս Տէրն մեր. ուստի և առ եբրայեցիս պարզ քաղաքական արարողութիւն մի էր:

Նշանաւորքէն մինչև ցհարսանիս՝ ըստ սովորու-

թեան քանի մի ամիսք անցին. և այն միջոցին խօսե-
ցեալոց ազգականքն և բարեկամք պէտք եղածն պատ-
րաստեցին հարսանեաց մէջ վայելչապէս երևելոյ հա-
մար: Արևելեայց մէջ հարսանիքն միշտ չքեղու-
թեամբ կատարի, ևս առաւել եբրայեցւոց մէջ՝ որ
բաց 'ի կրօնական հանդիսութենից ուրիշ հանդէս-
ներ չունելով, որովհետև անծանօթ էին առ նոսա
ըմբշամարտութիւնք, կառարշաւք, հասարակաց
խաղք, նաւամարտութիւնք և թատերական հանդէսք
և այլն՝ բոլոր քաղաքացիք անհամբեր սպասէին հար-
սանեաց հանդէսներուն: Այսոր համար է որ մար-
գարէք ալ Յուդայի երկրին ապականուելն և 'ի թշնա-
մեաց ոտնակոխ լինելով՝ Սիոնի բարձր աշտարակին
վերայ գերութեան դրօշակն պարզուած ցուցած ժա-
մանակ՝ գոչէին. « Ով երուսաղէմ, քոյ Ճանա-
պարհներդ անապատի պէս լուռ և գերութեան պէս
մունչ պիտի գառնան, և քոյ աւերակ գարձած փո-
ղոցներուդ մէջ սրնգի և տաւղի ձայներն պիտի լուեն.
և Տէրն պիտի դադրեցընէ զուարթարար ձայն փեսայի
և զձայն հարսի »: Աւետարանի մէջ ալ սահեպ յիշուած-
կին հարսանեաց հանդէսներ՝ զոր Քրիստոս Տէրն
մեր ոչ միայն չպախարակեց, այլ և երբեմն իւր ներ-
կայութեամբն ալ պատուեց և սրբացոյց:

Ամենասուրբ Կուսին հարսանիքն Յերուսաղէմ
կատարեցաւ, և գերդաստանին երևելի անձինքն յօ-
ժարութեամբ ներկայ գտան արևելից սեպհական
ճոխութեամբ՝ ընդ որ արևմտեայք յոյժ հիանան:
Մեծ անարգանք կը համարուի բովանդակ ազգա-
կաններն ալ հրաւիրելն. այնպես որ յետին աղքա-
տութենին ևս այս անհոգութիւնս ոչ արդարացուցա-
նէ. որովհետև եթէ ամուսնացեալք չքաւոր են՝ նոյն
իսկ հրաւիրեալ ազգականներն պէտք եղած ծախքն
հոգան:

Թէպէտ Յովսեփայ և Մարիամու սուրբ հարսա-

նեաց մէջ աշխարհային ունայն զուարճութիւնք և
երկրաւոր ուրախութիւնք չկային, և քան զուրիշներն
առաւել այս երկու սուրբ ամուսինք այն բաներուն
ոչնչութենին և ունայնութեանն Ճանաչէին, սակայն
և այնպէս հարկադրեցան սովորութեան հետևել, և
'ի պատիւ վաղեմի կարգաց նախնեաց իւրեանց՝ յանձն
առին այս վայրկենական հանդէսն՝ որ վայելման ամ-
պով մէջէն անցնելուն արագութեամբն իրենց կենաց
մէջէն ալ անցանէր:

Ձմերուան գեղեցիկ օր մի [18] երբ նոր լուսինն հան-
գարտաբայլ բարձրանայր լերանց ետևէն [19] հա-
րուստ լաթեր հագուած կանանց երկայն շարք մի ե-
րևցաւ՝ որ գնալ 'ի Մարեմայ տունն երթային. բազ-
մաթիւ ծառայից ձեռքն եղած եղևին ծառայ խնժոյս
ջահերուն լուսովը չորշորալին նոցա ոսկեձաղմանդ
կշտապանակներն, մարգարտե ծամակալներն, Ճա-
կատներն գրած ականակուռ մահիկներն, և պարսկա-
կան ապարօշներուն ադամանդներն [20]: Սիոնի օրիորդք
գեռ ևս պահած էին անգուրիս շպարելու սովորու-
թիւնն, և Յեզաբելի ժամանակէն 'ի վեր ծանօթ էր
իրենց յօնքն և արտևանունք ծարրով ներկելու 'ի սև
արջնաթոյր, և մատանց ծայրերն հինայիւ կարմրա-
ցնելու՝ անմշակ վարդի հատատղոց պէս [21]: Դանէն
'ի ներքս մտանելով՝ ուր էր Տարն սուրբ և նորա-
հաս՝ իր ազգական բարեպաշտ սիներայց մէջ, օրհնե-
ցին զԱստուած որ Տարսին պաշտպան փեսայ մի
տայր, և իրեն ալ բարեմասնութիւններ առնելով
իւր Տարնուհութեան համար՝ սրոյ ուրախութեան ե-
կած էին մանակից լինելու:

Մարիամ շնորհալի խոնարհութեամբ և պարզա-
միտ վեհմտութեամբ ընկալաւ այս բարեմասնութիւն-
ներս իւր հիւրերն՝ որ զմայլած հիանային նորա ազ-
նուական կերպին վերայ. պաշտամունք և մարդաւա-
րութեան զգացմունքն վերջի աստիճան փայլէին իր

վերայ, ինչպէս ասէ Սուրբն Ամբրոսիոս, և Թագաւորի աղջկան մի պէս շնորհազարդ էր իւր վարմունքն։ Իսկ գալով իր հարսանեկան զգեստուցն՝ զորս ենթադրեցինք միայն կարճ նկարագրել՝ պարզ և միանգամայն վայելուչ էին, որովհետև գեղեցկին ճաշակն ալ լաւ գիտէր, և թերևս քան զինքն աւելի գիտցող մի չկար թէ իր վիճակին կնոջ ինչ պատշաճի. ուստի այս հանգիստաւոր պարագային մէջ յիշեց իրեն Յովսեփայ հարան և Պաւղոս գուսար լինելն, այնու համար չուզեց անհոգ երևել իր զգեստուցն կողմանէ՝ որ կարեր ոչ ամենևին պատճառել իւր ազգականացն և առ այլս ունեցած յարգանքէն պակսիլ, աչխարհի վայելուչ պատշաճութիւնն պարզուելու հետ միացնելով՝ որպէս և պահանջէր իւր մանուանցն խոնարհ և չափաւոր վիճակին։ Իւր կոչիչն պարեգօտն՝ Յուդայի աղջկանց հանգիստաւոր օրերը հագածին պէս՝ հատանականաբար սիւրպայի ծիրանիէ էր. ի յիշատակ նախկին ժամանակաց և նահապետական սովորութեանց նախահարց իւրոց՝ Հռեբեկայի պէս օղեր գրած էր յականջն և պարզ ոսկի ապարանջաններ ի բազուկս՝ զորս Յովսէփ ընծայել էր իրեն հարսանիքէն քանի մի օր յառաջ, ինչպէս որ անվրէպ պարտք էր փեսային [22] եբրայեցւոց մէջ՝ հարուստներն մարգարէ քառամանեակներ և ականակած զարգեր և մեհեանգներ ալ յաւելուին. գլուխն մեծատուն տիկնանց աշտարակաձև [23] ոսկեղէն թագին տեղ՝ կուսանաց թագուհւոյն խարտեաշ և գանգուր [24] մազերուն վերայ գրած էր պարզ մըրաւենի պսակ մի. եթէ գարուն լինէր եղանակն՝ քանի մի վարդ [25] ալ կը գրուէր. ոսկեթել և արծաթով բանուած սիդոնացի քօղ մի գլխէն մինչև ոտքն կ'անկէր ծալ ի ծալ ծածանելով թեթև ամպոյ նման [26]։

Զորս իսրայէլացի կարճ նէր ծաղրագին կերպաւ պաղպաջուն հովանեակ մի բանած՝ գրան առջև [27] սպասէին՝ որուն նեբքև ևկն եկաց Մարիամ՝ երկու պատուաւոր տիկնայք ալ երկու կողմն. աջակողմն կեցողն Հարսին մայրն զՍուրբն Աննանեերկայացընէր, իսկ ձախ կողմն Թերևս Մարիամ Կղէովպայ էր՝ Սըրբոյ Կուսին նէրն և սրտոտ բարեկամն՝ որ յետոյ ընկերացաւ նմա մինչև ի Գողգոթա, որք զիրար շատ սիրելուն համար՝ ոմանք կարծեցին թէ քոյր էին [28]։ Իրենց եաւէն գային տասղն սրնգի և թմբկի ձայնեբով բոլոր Հարսնեւորներն, յորոնց ետեւէն նշան օգին մէջ ճօճելով ձեռուընին բռնած մրտեհուոյ և արմաւենւոյ ճիւղերն։ Իսկ փեսայն գլուխն բիւրեղի պէս փայլուն նորատեսիլ պսակ մի գրած՝ որ այն ազգին յատուկ էր [29], նոցա եաւէն երթայր՝ շուրջ պատեալ ի բարեկամաց՝ որ իրենց ուրախութիւնն յայտնէին մերթ երգելով մերթ պարելով և երբեմն ալ երկայն ազաղակներ արձակելով։ Վերջերս եբրայեցի ճամբորդ մի Ասորւոց երկրին մէջ այսպիսի հանգիսի մը հանդիպելով ասէ՝ Թէ այս ձայներս նմանին Փռանկիոյ մէջ հնձոյ և այգեկթոյ ժամանակ հնձողաց և կթողաց ազաղակներուն։

Հարսին ու փեսին անցած ճամբայներուն վերայ կանայք և մանկունք շարուած՝ նորա ոտից առջև սըփռէին արմաւենւոյ ճիւղեր, և տեղ տեղ հարսն կանգնեցնելով վարգելուց սրսկէին զգեստուց վերայ [30]։ Ս. յակոբ Մարիամ ալ ունեցաւ իր յաղթական օրն եբրայեցւոց մէջ։

Երբ հարսանեաց տունն հասին՝ փեսաւերք և հարսնաւերք միաբարբառ ազաղակեցին Օրհնեալ լիցի և կատրև։ Ս. յն տեղն Յովսէփ իր տալէգոնէն կամ կըճնոցուէն և Մարիամ իր լաչակոնէն ծածկուած՝ իրարու քով նստան հովանեակին ներքև, և փեսայն մտանի մի հանելով անցոյց օրհնութիւն մատն ասելով. « Ա՛յսուհետև դուք իմ կիներս եք ըստ օրինացն Մովսիսի և Իսրայելի. և իբր վերակոչին քաղցիք հարսին

վերայ տարածեց, ինչպէս որ արար Բոոս՝ Հռութին իրեն կին առած ժամանակ: Մերձաւոր ազգականներն մին՝ բաժակի մէջ գինի լեցուց և նախ համտես առնելով փեսին և հարսին տուաւ՝ օրհնելով զԱստուած ղայր և զկին ստեղծելուն և ամուսնութեան օրէնքն սահմանելուն համար: Նոյն առեն ափ մի ցորեան ցանեցին ընդ օգս, և մանուկ մի բաժակն գետին զարկաւ խորտակեց [31]:

Բոլոր հրաւիրեալք որ լապտեր՝ի ձեռին կանգնած էին՝ օրհնեցին զԱստուած և ինջոյից սրահն մտին: Ոտք ելլին նոյնպէս Յովսէփ և Մարիամ, բայց հրաւիրելոց քոմէն չհասած՝ առաջի երկնից և աստեղաց որ պատմեն զփառս Աստուծոյ, իրարու ականջէն բան մի բսբսացին [32]: Էս զքեզ մօրս տեղ պիտի դնեմ, ասաց նահապետն առ Կայն, և զքեզ Աբևնակալին ևս դանոյն պէս պիտի պատուեմ. այս խօսքէս ետև՝ առաջի կրօնական օրինաց՝ նոքա յամուսնութեան անդ իրարու եղբօր և քրոջ պէս էին, թէպէտ իրենց միութիւնն ամբողջապէս պահուած [33]:

Հարսանեաց հանդէսն եօթն օր տևեց՝ որպէս նահապետաց ժամանակն. և երբ եօթնեակն աւարտեցաւ՝ Յովսէփ և Մարիամ ընկերակցութեամբ խուռն ազգականաց՝ յորոց շատերն պալատական երիվարաց վերայ հեծեալ էին՝ դէպ՝ի Գալիլեայ Ճամբայ եղլին. և այն փոքրիկ կարաւանն դափերու և թմբկաց դոփմամբ մինչև Նազովթայ ազբիւրն [34] ՝ի միասին երթային: Հոն որ հասին երուսաղեմացիք բաժնուեցան՝ի փեսայէն և հարսէն արտասուալից աչօք օրհնութիւններ և բարեմաղթութիւններ առնելով նոցա, զձեռս իւրեանց բարեպաշտաբար կրծոց վերայ դնելով: Իսկ նազովրեցիք իրենց Ճամբայն յառաջ տանելով անցին Սամարիայի լեռներէն՝ ուր արծիւն օգապար բարձրէն տեսանէր անհոգաբար նոցա անցնելն: Ուղևորք նախ և յառաջ հասին՝ի Սիւքեմ

պուրակագեղ և կանաչազարդ, իր յատակաջուր աղբերօքն և ծառոց մէջ կէս մի ծածկեալ փառահեղ շինքերով անուանի: Իրենց եաին Յովնն Գալիլեան լեառն իր կարմրագոյն կողերօքն՝ ուր երևէին սամարացւոց տաճարին աւերակներն՝ ամթագարա նախանձորդ տանն Աստուծոյ՝ զոր Յովհաննէս Հիւրկանոս վեց ժխդիկը բոցերու մատնելով մխիր գարձոյց. յետոյ Գերզիմայ լերանց բարձունքն, և ապա զԱբեթասակ որ Աղդոստոսի պաշտպանութեամբ իւր նորանոր ապարանքն կառուցանէր, և զոր Հերովդէս սարկաւագ զարդարել չանայր՝ իբրև միակ բագին պատկանաւոր զոհագործելու Հռոմէական ոգւոյն:

Ուղևորութեան երկրորդ աւուր կիսուն՝ երևեցաւ Թափոր լեառն՝ որ իւր կանաչազարդ գլուխն՝ի վեր ամբառնայր Գալիլեայի մուրթ արծաթագոյն երկնից վերայ. անոի նշմարէին Լբանանու գագաթունքն՝ որ իրենց մշանջենաւոր ձիւներն ամպոց մէջ ծածկեն: Հերմոնի անառագախիտ եմակներէն անցնելով՝ ուր այծք արածէին Թափորու մասղաշ ճիւղերն, իջին վերջապէս հեշտալի դաշտ մի՝ որ ծաղկանց ընդարձակ զմբիւղի պէս կը տարածուէր մրտենեաք այգեաք և ձիթաստանեաք կանաչացեալ բլրոց մէջ: Գարնոյ ցուրեննոյ և առաւօտյան արաւերն բոլորովին կանաչացած՝ գարնան Թեթև հոտմոյ կերմին շնչելն գոլարիկ ծածանէին, հիւսիսային երկիրներէն աւելի կանխահաս և տաք լինելուն համար: Յատակ և ոսկեզօծեալ լոյս մի այս բերրի հողերս գգուէր՝ ուր բոյսք և տունկք ուժով կ'ուռճանային և հեղեղատք կապուտակ ջրոյ՝ որ յետոյ ամառն ցամքին, իրենց աղբեաքն առուգէին այս նոր գրախտս: Աստև անդ երևէին Ճախ գիւղեր՝ արմաւենեաց վսեմ կամարներուն նեքև, և մերթ ընդ մերթ ժայռի մի ապառաժ գարևանդեն վերայ՝ մենաւոր դղեակ մի՝ ուր բնակէին գեղ

և ազգային զօրականք՝ որ պահանդիպ էին միայն ուղևորաց ապահովութեանն համար, և իրենց գամասկացի սուրերն գիշերուան հուպկաղարաց և անապատի արաբացւոց դէմ միայն գործածէին։ Այս զուարճալի և զովարար հովիտս զոր բարձր լեռներ պատելով հովանաւորեն՝ Եպրեղոն կոչեցեալ հովիտն է, որոյ 'ի ծայրն երեւէր փոքրիկ քաղաք մի նկարակերտ յօրինեալ և յեցեալ 'ի զառ 'ի վայր գեղատրաշ բլրոյ միոյ՝ որ իբրև զծաղկի փայլէ մերձաւոր տաղաւարաց մէջէն. այս գեղածիծաղ և տարփալի քաղաքս էր Նազարեթ, երկիր ծննդեան Կուսին և խանձարուրք Քրիստոսի [35]։

Անտարակոյս յոյժ ուրախացաւ Մարիամ տեսանելով այն քաղաքն՝ յորում առաջին անգամ 'ի լոյս ընծայ զաչս իւր, և որոյ յիշատակին թեպետ տակաւին եղ 'ի միտն՝ բայց չէր ջնջուած, շատ անգամ ընդուներոյն մէջ զայն տեսանելով։ Ինքն առաջին անգամ թողեալ էր զայն իւր մանկութեան ժամանակին, և գնացեալ բնակել էր տաճարի չքեղ պարտպաց մէջ, և հիմա նորէն հոն գառնայր նոյնպէս գեղեցիկ մանկահասակ և կոյս՝ ինչպէս իրեն բաժնուած տեսնն։

Վերջապէս մեր ուղևորքն մտին 'ի տուն Սրբոյն Աննայի՝ որ հին և խորհրդաւոր բնակարան մի էր՝ մասամբ ժայռի մէջ փորուած՝ որպէս զմարդարէական անձաւս հին ժամանակաց [36]. և որ տակաւ մի յետոյ Երուսաղէմայ տաճարէն և Աւետնականին տնէն աւելի գեղազանցէր պիտի որբութեամբ։ Նազովրեցի կանայք օրհնութեամբ ողջունեցին զդաշտուսան նոր բահաս հարսին՝ որ պարկեշտութեամբ աքօղած յառաջ երթայր՝ որպէս զԻսահակայ. Մարիամ նոցա բարեմաղթութիւններն ընդունելով որ իր ծննդոյնն տեսել էին, բնակեցաւ այն խաղաղ հայրենի տան մէջ՝ որ տակաւին բուրէր զանուշահոտութիւն վարուց և առաքինութեանց Աննայի և Յովակիմայ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Է. ԳԼՒՈՒ

1 Հրեայք, որպէս և կ'ելլոս, Պօրփիւր և Փաւստոս այս ազգակցութեամբս համարեցան թէ կայսն էր 'ի ցեղէն Ղևեայ, բայց ուղղափառ վարդապետք այս կարծիքս հերքեն՝ հաստատելով թէ Մարիամ էր 'ի ցեղէն Յուդայ և 'ի տանէ Դաւթի։ Մաստիկոս աւետարանիչ ասէ զի Յիսուս Քրիստոս կոչի որդի Դաւթի ըստ մարմնոյ. իսկ արդ ըստ մարդկութեան հայր ոչ ունելով մեր կողմանէ միայն էր որդի Դաւթի։ Բայց եթէ հարցընէ ոք թէ Յուդայի ցեղէն լինելով որպէս ազգական կարէր լինել Եղիսաբեթի՝ որ էր 'ի ցեղէն Ղևեայ, ասելոր Աւգոստինոս պատասխանէ թէ անկարելի բան մի չէր՝ որ Յուդայի ցեղէն այր մի՝ 'ի ցեղէն Ղևեայ կին առած լիցի, որով և Սուրբ Կոյսն այսպիսի ամուսնութենէն յառաջ եկեալ՝ կարէր ազգական լինել Եղիսաբեթի իւր մօր կողմանէ։ Արդէն ուրիշ ցեղի հետ խնամութիւն չառնելու պատուէրն՝ միայն այն որք աղջկանց համար էր՝ որ հայրենական ժառանգութեան տէր էին։

2 Որոգինէս ցուցանէ թէ ամուսնութիւնն անիծապարտութիւն համարէր, որովհետև գրեալ էր թէ Անէծք ու ոչ բողոքք ղամակ ի ցեղէ իւրմէ։

3 Սուրբն Աւգոստինոս Յաղթ որբոյ կոչէն գԼ. Գ։

4 Տես յԳ. ճառէ Ս. Յովհաննու Ոսկեբերանի. և 'ի Հ. Լիկլե 'ի վարս Յիսուսի Քրիստոսի։

5 Յուդա Մակաբէի դրօշն կանաչ էր մակագրութեամբս Ո՛էջե Նման էլ յաւուրս քեզ։ Իսկ Հռովմայեցւոց դրօշակին վերայ այս գրերս կային S. P. Q. R. որ է ասել Senatus populusque romanus այս ինքն Վերակայն և ժողովուրդ Հռովմէական։

7 Ոչ եթէ ամենայն աղջկանց արգելեալ էր ուրիշ ցեղէ մարդու հետ չամուսնանալ, այլ միայն նոցա որ հայրենական տուցոյտաց ժառանգ էին. վասն զի սորա պարտաւորէին իրենց ցեղէն և ազգատոհմէն ընտրել իւրեանց այր (և ոչ թէ որպէս Մանթէպիէս ասէ՝ իրենց մօտագոյն ազգականն) որպէս զի ժառանգութիւնը և տուցուածք 'ի միոյ ցեղէ 'ի միւս չփոխագրին։

8 Ս. Եպիփան ուշադրէ ասելով զՅովսէփ ամուսնացած ժամանակ. Հայրն Բեզրոն յիսուն. առաջինն անտեղի է՝ որովհետև նոյն իսկ երրայական օրէնք արգելուն զամուսնու-

թիւն ծերոյ ընդ մատաղ օրիորդի. (տես ի Պաւնաժ հա Ե. գիրք Ի) և յայնի է թէ ոչ քահանայք և ոչ իսկ Սուրբն Յովսէփ կամէին հակառակ օրինացն գործել. ուստի հաւանական համարի Բեզրոնի կարծիքն: Խորենացի առ Սահակ արծրունի գրած թղթոյն մէջ ասէ թէ « Յովսէփ քառասնամեայ էր մինչ Կոյսն յանձնեցաւ նմա, և յերեսուն և մի ամի կենարարին հանդեաւ ի Նազարէթ ի տան իւրում »:

9 Ոմանք ի հարց համարեցան թէ Ս. Յովսէփ այրի էր՝ յորժամ ամուսնացաւ ընդ Սրբոյ Կուսին, զոր և հաստատուն Նախահարքն Սբբոյն Յոլոբայ և Աբեթարան կոչեն ասացեալ մանեանքն անկանոնականք. Սուրբն Եպիփան ասէ թէ Սուրբն Յովսէփ ունէր չորս ուսաներս և երկուս դստերս. Սուրբն Հիպոլիտոս Թեբացի ասէ թէ անուն առաջնոյ կնոջն Յովսէփայ էր Սաղոմէ. ի նմին կարծիս եղևն և Որոգինէս, Եւսեբիոս, Սուրբն Ամբրոսիոս, և ի մերոց խորենացի, և այլ բազում հարք: Սակայն այս կարծիքս ընդունելի եղած չէ, և ընդհանրապէս համարի թէ Սուրբն Յովսէփ ամուրի ապրեցաւ. զոր և պաշտպանէ Սուրբն Հերոնիմոս գրելով ընդդէմ Ելվիդիոսի այսպէս. « Ոչ ուրեք ընթեռնումք թէ այլ ոք կին լեալ էցէ նորա՝ բաց ի Մարեմայ »: Սուրբն Աւգոստինոս անորոշ թողու զհնդիրն, իսկ Սուրբն Պետրոս Դամիանոս հաստատէ թէ բովանդակ եկեղեցի հաւատայ թէ Սուրբն Յովսէփ հայրն համարեալ փրկչին կոյս եկեաց միշտ որպէս զՄարիամ:

10 Ի գաշնագիրս ամուսնութեան կինն ոչ այլ ինչ ընդունէր ի ծնողացն բաց ի զգեստուց. իսկ զօժիան այրն տայր նմա (Օբէդոդր Ռվէյ. հտ. Բ գլ. Ե.):

11 Գրիգոր Նիւսացի Ճառ ի Ծնունդն. — Նիկեփորոս գիրք Բ գլ. Ի:

12 Երիսաստարդս այս կոչեցեալ Ագաբոս՝ երևելի եղև յետոյ առաքելութեամբ՝ ընկալեալ զքրիստոնէութիւն. և համարեալ ի թիւս եօթանասնեւերկու աշակերտաց (Պդմ. Խրթել գլ. ԺԲ):

13 Վարք սրբոյ Կուսին գրեալ ի Տէքսութիւրէ էջ 49 — Վարք Յիսուսի Քրիստոսի ի Վալվէրտէէ հտ. Ա:

14 Մինչև ցայսօր արուեստաւորք յոյժ պատուաւոր համարին ի Հրէաստան: Պուբբարա ասէ թէ Պաղեստինու և Ասորեաց մէջ արուեստաւորաց դասն նոյն պատիւ ունին այսօր՝ ինչ որ ի մէջին դարս ունէին Փրանկիոյ և Կերմանիոյ մէջ, և երկրորդ կարգի վաճառականաց հետ հաւասար համարին, և քան զնոսա առաւել ազդեցութիւն ունին իրենց ժողովոց մէջ թէ և նոցա հարստութիւնն ոչ ունիցին, և կարեն քաղքին ազնուական տանց հետ ալ խնամիանալ (Ոսկեբերանի Քրիստոս հտ. Բ):

15 Թուրքք ևս այս խմաստն օրինաց հետևին, և թագաւորք անգամ պարտաւորին արուեստ մի ուսանելոյ:

16 Հրեայք իրենց ազգութիւնն կորուսանելով ևս՝ յայս կարծեաց հեռացած չեն:

17 Այս դաշնագիրս ձևն շատ հին է առ երբայեցիս, և հաւանական է որ նոյն էր նաև Յովսէփայ և Մարիամայ համար գրուածն: — Իտալիոյ Բերուճիա քաղաքն Սուրբ Լաբրենտիոսի եկեղեցւոյն մէջ աւանդութեամբ պահվի մատանի հարանախօսութեան կուսին:

18 Վեցտասաներորդ դարու մէջերն եկեղեցին թոյլ ետ այս ուծնս կատարելու որ Հանդիպի ի 23 յունուարի՝ որ համարի օր պսակման Սրբոյն Յովսէփայ ընդ Մարիամու առ լոտ:

19 Առ երբայեցիս ամուսնութիւնք ամէն օր անխտիր ոչ կատարէին, սովորաբար նոր լուսնի առնն և չորեքշաբթի օր մի աւելի նախապատիւ համարէր:

20 Կանանց զարդուց վերայ տես Եսայի գլ. Գ: — Փրանկիացի ճանապարհորդ մի սը Թևերամայ իր Ո-էրոսպէյո-րիէ յերուսաղէմ գրոց մէջ ասէ թէ եւրոպացիք ամենևին գաղափար մի չունին՝ արևելեայց ճոխութեան և չքեղութեան վերայ այսպիսի հանդիսից մէջ. հարուստք կանանց գրեթէ ամենեցուն զգեստն ոսկւով ասղնեգործեալ թաւշէ է՝ որոց վերայ շղան ագամանդեայ և մարգարտեայ զարդեր, և այլն: Նոյնպէս խօսի և Լամարթին ապշած այն ականակուռ և մարգարտակեռ շքեղ զգեստուց վերայ՝ որով կը զարդարուին կանայք Ասորեաց իրենց ազգակցաց հարսանեաց ժամանակ: Անտարակոյս Մարիամու հարսնութեան ժամանակ այլ աւելի ճոխութիւն կայր, զոր և ակնարկէ Յովհաննէս աւետարանիչ Յայտնութեան գրոց մէջ ասելով. « Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի զի իջանէր յԱստուծոյ և յերկնից՝ զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ » գլ. ԻԱ. 2):

21 Արևելեան ազգաց մէջ սովորութիւն է կանանց հինայիւ ներկել զծայրս մատանցն, որպէս յայտ է:

22 Քրիստոնեաք յԱրևելս դեռ այս սովորութիւնս պահած են. հարանեաց քանի մի օր մնացած՝ փեսային հարսին ընծայ ղրկէ ըստ իւր կարողութեան ոսկի կամ ականակուռ ապարանջան, և ոսկեթել դիպակէ զգեստ մի և հարիւր վաթսուն դահեկան ի ծախս բաղանեաց (Թղթակցութիւն Աբելեան 147):

23 Հարսին պսակն սովորաբար ոսկի էր աշտարակաձև՝ որ ի պարսից մոած էր առ հրեայս, և որ Տիտոսի պաշարման առեն արդիլուեցաւ ի նշան սգոյ: Ոմանք ի րաբունեաց հրաման առն հարսանց կրել պսակս ի մրտենեաց և վարդից (Պաւնաժ գիրք Է գլ. 21): — Միշնա Սոթահ գլ. Թ յօդ 4:

24 Ա. երբայեցիս՝ կանանց հագուստն անգամ աւանդական օրինօք սահմանեալ էր. հարսին մազերն գանգրելու համար մանաւանդ հերայարդար կանայք կային, որովհետեւ բարբիք աաէին թէ Աստուած ինքնին յօրինեց զսպոպոս Եւայի յաձել վնա առ Ադամ՝ ի գրախտին (Պաանաժ գլ. ԻԱ.)։

25 Պաանաժ։

26 Ա.յս ոսկեթել և արձթով բանուած քօղերն դեռ ևս՝ ի գործածութեան են յԱյօրիա և յընդհանուր Արևելս։

27 Հարսանեկան հանդիսին այս կարգս՝ ի հնուց՝ ի վեր մինչև այսօր պահի յԵգիպտոս, զոր Նպպուհր այսպէս նկարագրէ. « Հարսն քօղազգեստ յոտից մինչև ցգլուխ, յայմ և յահեկէ երկու տիկնայք՝ ծանրաքայլ յառաջ երթայ՝ ամպհովանիի մի ներքև զոր շորս մարդիկ կրեն. առջևէն երթան դերիք դափիր պարնելով. և ճանճեր վանելու գործօք, այլք ևս հոտաւէտ ջրեր կը սրսկեն, եւևէն գան բազմութիւն կանանց, և եչերու վերայ հնձած երաժիշտներ. թափօրս սովորաբար գիշերն լինի, և գերիներն ալ վառած ջահերով հանդէսն լուսաւորեն » (Նպպուհր Ո-գ-ս-ր-Բ-ե յԱբոբէս հտ. Ա.)։

28 Բէնեդ պատմագիրն շատ քննութեամբ հաստատէ թէ կինս այս էր Սրբոյն Յովսեփայ եղբօր կղեովպասի կինն՝ որ է նոր Սրբոյ Կուսին։

29 Պատկս այս փեսային՝ որ ըստ բարեբանեաց խորհրդաւորնշանակութիւն մի ունէր, չինուած էր աղուճակէ. աղն բիւրեղի պէս թափանցիկ լինելով՝ վերան զանազան ձևեր գծէին ծծմբով (տես՝ ի Մինա գլ. Ժ 14)։

30 Ա.յս սովորութիւնքս յեգիպտացւոց մնաել էին առնոսա, որպես և ուրիշ շատեր ալ որ պահին մինչև ցայսօր. տճ գաօօս։

31 Պաանաժ գիրք Ի գլ. 21. — Սահմանագր. մովս գիրք Է գլ. 1։

32 Սաբբն Թովմաս համարի թէ ամուսնանալէն անմիջապէս ետև Սաբբն Յովսէփ և ամենասուրբ Կոյսն իրարու հաւանութեամբ՝ ուխտ գրին կուսութիւն պահելով։

33 Երբայեցւոց մէջ անլուր բան չէր ժուժկալութեան ուխտն յամուսնութեան, բայց առ նոսա՝ ի բարկութենէ և՝ ի գժկամակութենէ յառաջ գայր, մինչդեռ այս սրբասնեալ ամուսնաց մէջ եղածն՝ ի բարեպաշտութենէ էր։ Ա. երբայեցիս եթէ այրն ասէր իւր կնոջ թէ ղէԷ էբէ Է մայթ համոբէ՝ ալ այնուհետև այրական իրաւունքն չէր կարող գործածել, մանաւանդ եթէ Աստուծոյ տաճարին կամ ծեղանոյն վերայ երդնուր. զնոյն առնէին երբեմն նաև կանայք. և թէպէտ այս երդումս շատ անգամ ոչ հաստատուէր՝ ի կրից և՝ ի բարկութենէ յառաջ եկած լինելուն համար, սակայն պարտաւորէին պահելու զայն (Պաանաժ գլ. ծԹ. — Լևտն մտանոցի գլ. Դ)։

34 Բոլոր ազգականք ձիաւորեալ յուղարկաւոր լինէին հարսին մինչև՝ ի տուն փեսային, եթէ շատ հեռու չէր. այս սովորութիւնս մինչև հիմա կը պահուի արաբացւոց մէջ։ Մենք այնպէս համարեցաք թէ յուղարկաւորք բաժնուեցան երբ Աննաթովմ քաղաքն հասին՝ որ յերուսաղէմ հինգ փարսախ հեռի է, և առաջին օթևան։

35 Անցեալ դարու լմաստասէրք ամենայն կերպով չանացին ցուցընել թէ պաղեստինու երկիրն անբեր և անպտուղ երկիր մի էր, և թերևս իրենց ասացածին հաւանին անմտադիր ընթերցողք՝ ոչ յիշելով թէ այս աղքատութեան և անմարդաբնակութեան պատճառն ուրիշ բան չէ՝ բայց եթէ ծանր գերութեան ներքև ընկճած լինելն ընդ սրովայլազգաց։ Բայց անտարակոյս բաց՝ ի երուսաղեմայ շրջակայից որ յիրաւի անբեր և ամայի է՝ ուրիշ կողմերն մանաւանդ որք քանանացւոց վերաբերեին՝ Մովսիսի ասորագրածին պէս աւետեաց երկրի գեղեցկութիւն ունէին։ Հոս գնեմք երկու զանազան նկարագրութիւն նոյն երկրին՝ ուր եաստան գար իրարմէ հեռի ժամանակաւ գրեալ, մին՝ ի Յովսեպոսէ Փլաւիոսէ և միւսն յարգի ճանապարհորդէ. « Գալիլեա յերկուս բաժանի, ասէ Յովսեպոս, ՝ի բարձր և՝ ի ստորին, և երկուքն ալ յոյժ բարեբեր են. հողն միանգամայն պարարտ է և թեթև, մարդերն ընդարձակ ամէն տեսակ մշակութեան յարմար, և ամէն ցեղ ծառերով զարդարեալ. մանաւանդ բազմութեամբ այգեաց և ձիթենեաց. լեռներէ իջած հեղեղք զայն ոռոգանեն, և ակունք և առուակք առատ ջուր կը հասցընեն երբ հեղեղատներն ամառուան տաքութենէն կը ցամքին։ Երկիրն այնչափ պտղաբեր է՝ որ աշխատութենէն փախչողներն ալ կը յորդորուին մշակութեան եւևէ լինելու. այնպես որ ամէն կողմ մշակուած է և անպտուղ երկիր չկայ։ Բնակիչքն ուժեղ և պատերազմող են, քաղաքներն ու գեղերն բազմամարդ, այնպես որ ամենէն փոքր քաղաքն սաան հազարէն աւելի բնակիչ ունի » (Յաղագս պատերազմին հրեից գիրք Գ գլ. 2)։

« Գալիլեայի և Նազարեթի շրջակայից վերայ գաղափար մի կարէ առնուլ մարդ՝ Հռոմայու շրջակայքն և հռոմէական ափունքն միայն բերելով, որովհետև երկրին դիրքն և կերպարանքն շատ նմանութիւն ունի այնոր։ Հոն բնութիւնն վանէ է, որպէս զԱվետարանն. Գալիլեայ գաւառն բոլոր Սուրբ երկրին մի փոքրիկ պատկերն կարէ համարիլ, և տուընչեան և գիշերոյ կերպարանօքն որ նկատուի՝ դիւրաւ մարդ կարէ՝ ի միտ առնուլ թէ ինչ դրից մէջ էր Յիսուս Փրկտոսի ժամանակ։ Պատկերհանին համար Գալիլեայն Եգեմական գրախտ մի է՝ յորում կը տեսնուին Յուդայի երկրին ելևէջներն, Պաղեստինու լուսաւոր միջնու-

ԳԼՈՒԽ Ը.

Աշտուելի.

Արգեօք ուրչափ քաղցր և օրհնեալ եղած պիտի լինի երկուց ամուսնաց կեանքն իրենց սուրբ միաւորութեան առաջին ամիսներն. խաղաղութիւն Աստուծոյ սիրած էր այն անշուք բնակարանին մէջ, և իրենց ժամանակն անցանէր աշխատութեամբ և աղօթքով՝ որ իրենց վաստակն սրբացնէր և թեթեւացուցանէր: Հին սովորութեան համեմատ՝ որ մինչև ցայսօր Արեւելից մեծ մասին և արեւբացւոց մէջ տիրէ, Յովսեփայ գործատունն [1] Մարիամ նստած այս ըն-նէս զատ էր. գործատունն ուր աշխատեցաւ նաև Յիսուս Քրիստոս՝ գեանայարկ սրահ մի էր գլեթէ տասուերկու քայլ երկայն և նոյնչափ լայնութեամբ. կրպակէն դուրս քարէ նստարան մի կայր՝ արեգական ոսկեթակէղ ճառագայթներէն պաշտպանուելու համար՝ արմաւենւոյ փսխաթէ չինուած հովանեկաւ ծածկուած, ուր անցորդք և ուղևորք հոգնութիւն առնուին [2]: Հոն աշխատասէր արուեստաւորն զբաղէր աւօրներ, եղանց լուծեր և գիւղական սայլեր շինելու. երբեմն ալ իր առաջնորդութեամբն հովսին մէջ անակներ շինել տայր պէտք եղողին, իր ուժեղ թեւովքն հատանելով բարձր մոլաթզենին և կարմելոս լերին հնցած սևցած բեւեկնիներն [3]: Եւ սակայն այսչափ աշխատութեամբ վաստակածն ալ շատ բան մի չէր. այսու ամենայնիւ այն սակաւէն ալ աղքատաց մասն հանէր:

Իր քաղցրահամբոյր և սուրբ ընկերն ալ պարապ

թիւններն և Սամարիայի յուդէի և կանաչազարդ արգաւառութիւնն: Գարիզին և Զիմենեաց լեռներէն պակաս վսեմաթիւն չունին թաւոր և Հերմոն լեռներն. և Սակաղնի կապուտակ ծովափունքն աւելի չքեղ չեն քան զծաղկահոտ եզերս ծովակին Տիբերեայ՝ ուր օդն բոլոր 'ի լոյս փոխարկեալ է: Գալիլեայ գաւառին ամեն կողմն ներկայացնէ հրաշալի վէպեր, դիւցազանց հետք և զարհուրս Աստուծոյ. երբ թափորի բարձրէն ընա դիտես՝ կիմանաս որ այն երկիրն է ուր ընակեցաւ Աստուածն մարդացեալ, որովհետև հոն միանան կրնական յիշատակք, երկնից և երկրի աքանչելիք ընդ անհնոյն » (Թղթ-ոյո-ՐԻ-Ն+ ԱՐԻԵԼԻՑ հատ. ե):

36 Նազարէթի մէջ դեռ ևս գտանին քանի մի տունք նման տան Ս. Յովսեփայ, փոքրիկ ցածունք և լերանց կողն փորուած պրի մի հետ կիցս (որ ժերամպ Ո-ԻՀՈՓՈՅՈ-ՐԻ-Ն յԵՐՈՒՍԱղէմ):

ոչ նստէր. լուսաւոր սուր և խմաստուն միտք ունե-
լով՝ իւր ներկայ վիճակին առանց գժուարութիւն կը-
րելու վարժեցաւ, առանց անցեալ կենաց վերայ ցա-
ւելու և ապագային սուտ յոյսեր ունելու. զաշ-
խարհ իր իսկական վիճակին մէջ ըմբռնելով և իւր
կենաց պայմանն ալ ճիշդ իմանալով՝ ուղեց այնոր ա-
մէն նուիրական պարտքն կրօնական ճշդութեամբ կա-
տարելու: Իւր մայրենի տունն մոռնին պէս՝ աղքա-
տութեան զգեստն հագաւ՝ որպէս Աստուծոյ իրեն
տուեալ պատուաւոր հանդերձ մի, և եղև հասարակ
ժողովրդեան յաղթկանց մին՝ որովհետև աստուածային
նախախնամութիւնն այն անշուք վիճակն սահմանել
էր իրեն: Ի բաց Թողուց այն ամէն ազնիւ և գեղեցիկ
ձեռագործերն՝ որոց մինչև այն ատեն վարժած էր և
որ աշնուական և իշխանական կենաց յարմարէին, և
փոխանակ այնոցիկ ինքզինքն տուաւ ծանր հոգերու
և ռնական միօրինակ աշխատութեանց՝ զորս պէտք է
կատարել աղքատ տանտիկին մի՝ որ ծառայներ և
գերիներ չունի հրամայելու:

Ուստի Մարիամու փափուկ ձեռքն որ գողտրիկ
կերպասներ յարդարելու վարժած էին՝ հիւսել սո-
վորեցան արմաւենւոյ սիրայէ և Յորդանանու ա-
փունքն բուսած սէզերէ՝ գեղջուկ նաճայներ՝ գետինն
փռելու համար, իր աղեկատին վերայ փաթթած խը-
ծուծն՝ այն առջի բարակ բեհեզն չէր. ինքն պէտք էր
աղալ տանն համար պէտք եղած ցորենն ու գարին և
այլ արմտիքն [4], և այն խոշոր ու դեղնաշորդ ալիւրէն
բարակ կլորակ բլիթներ չինել. իւր մաքուր լաչա-
կունքն ծածկուած և հին առենուան սափոր մի գը-
լուխն՝ [5] ջրուորներու պէս երթայր մօտակայ աղբիւ-
րէն [6] պէտք եղած ջուրն բերելու, ինչպէս առնէին
կանայք նահապետաց, կամ իրենց կապուտակ ձոր-
ձերն լուալու 'ի գնացս ջուրց վտակաց՝ Հոմերոսի
յիշատակած իշխանուհեաց պէս: Յիսուս Քրիստոս

ականատես վկայ լինելով այս աղնուագոյն արարած-
ոյն աշխատասէր սովորութեանցն՝ իւր առակաց
մէջ երբեմն զնա ակնարկէր. ուստի Մարիամու այս
պարզ զբաղմանցս յիշատակն՝ աւետարանի պատմու-
թեան մէջ հիւսուած կը պահուի, ինչպէս որ երբեմն
սաթի մէջ երևին ծովային ծաղկանց հետքն: Հոն ըն-
թեռնուելք թէ ինչպէս նախահոգ կին մի՝ զնմարն ծած-
կէ երեք գրիւ ալրոյ մէջ [7]. իւր տանն սահպ աւել
ածէ՝ կորսուած բան մի գտնելու համար [8]. պատա-
ռատուն խեղճ զգեստ մի խնամքէ և խնայութեամբ
կարկատէ [9]: Նմանապէս երբ Փրիստոս սրտի մաք-
րութիւն պատուիրած ժամանակ կամի օրինակ մի
բերել՝ միաքն կուգայ իւր մօր մաքրութիւնն՝ որ բա-
ժակին ներսն ու դուրսն մաքրէր փայլեցնէր [10], և աղ-
քատ այրին գովելու առեն՝ որ չէ թէ աւելորդէն՝
այլ բոլոր իրեն պէտք եղածն տայր Աստուծոյ՝ երևի
թէ Մարիամու աղքատաց վերայ ունեցած սէրն մը-
տածէր [11]: Ո՞չ ապաքէն քիսցի երդիչն ալ (Հոմե-
րոս?) արդարութիւնն նկարագրէ իւր մօր կերպա-
րանօքն՝ որ աղքատ և ռամիկ կին մի լինելով ևս՝ զինքն
և զաւակն կերակրելու համար՝ մանելի բուրդն ճըշ-
դութեամբ կշռէ, իւր խեղճութեան մէջ ալ արդա-
րութեամբ և անբծութեամբ հարուստին իրաւունքն
պահելով:

Երբ երեկոյ լինէր և մութն կոխէր [12], և Թաչունք
ծառոց սաղարթներուն մէջ իրենց բոյնն քաշուէին՝
Մարիամ փայլուն և մաքուր սեղանոյ վերայ՝ որ Յով-
սեփայ ձեռագործն էր, գարեղէն կամ ուրիշ ար-
մըտիքէ չինուած բլիթներն չարէր՝ գնելով միանգա-
մայն անոյշ արմաւներ կեթղեղիներ չոր պտուղներ և
ընդեղէններ՝ որ Իսրայէլի Թագաւորաց սեղանոցն
սակաւապէտ ճաշկին էին: Այս պարզ կերպով պատ-
րաստուած կերակուրներն էին նախկին եբրայեցւոց
դլխաւոր ուտեստն ալ, որ այնչափ պարկեշտ էին 'ի

կերակուրս՝ որ պէտք եղած առեն հացիւ և ջրով գոհանային [13]: Իսկ Կայն այնչափ սակաւակեր էր՝ որ հինգերն հրաշալեաց Հակամէտք, համարեցան Թէ հրեշտակք կերակրէին զնա:

Երբ Յովսէփ աւուր աշխատութենէն հոգնած՝ առնու մարն մտած առեն 'ի տուն դառնայր և գետնայարկ սենեակին մտանէր՝ իւր մանկամարդ ամուսինն պատրաստած տաք ջուրն բերէր ոտքն լուանալու համար, և յետոյ մաքուր և ջինջ սանոով [14] աղբիւրին զով և յստակ ջուրն՝ ձաշէն յառաջ լուացուելու համար: Այս ծանրագլուխ և պարզ մարդս որ նահապետական երևոյթ մի ունէր, և մարդկային կերք ոչ երևէին իր վերայ, այս հրեշտակային և մանկամարդ կինն՝ որ զաւակի վայել ծնողասիրութեամբ և փութով ծառայէր նմա՝ ոսկեզարու արժանի տուն մի ձևացնէին [15]:

Արդէն չորս ամիս [16] անցել էր՝ քանի որ այս ողջախոհ ամուսինք քաղցր և խաղաղ կեանք մի վարէին, և ահա հասաւ օրն և ժամն զոր Յաւիտենականն իւր աստուածային անքննելի խորհրդոց մէջ սահմանեալ էր իւր Օծելոյն մարմնաւորութեան համար: Ուստի հրեշտակապետն Գաբրիէլ առաքեցաւ 'ի Գալիլեա՝ որ երևեցաւ Կուսին՝ երբ նա 'ի զգալեաց դուրս ելած և խորին խոհմանց մէջ ընկղմեալ և զգլուխն գարձուցեալ և խոնարհեալ 'ի կողմն տաճարին [17] մատուցանէր զերեկոյին աղօթս իւր առ Աստուած Յակոբայ: Հրեշտակն որ մի էր յեօթանց անոի ոգեղինաց որ կան միշտ առաջի Աստուծոյ՝ խոնարհեցաւ առաջի անարատ Կուսին [18], և նկատելով զնա արդէն բազմեալ յաթոռ գերազանց՝ վերագոյն քան զամենայն սուրբս և հրեշտակական էութիւնս, իւր ճառագայթարձակ գլուխն խոնարհեցնելով ասաց « Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ [19] »:

Մարիամու վերայ վախ եկն այս լուսապայծառ երկնային գեսպանն տեսնելով՝ որ Յաւիտենականին հրամանն բերէր իրեն: Թերևս ինքն ալ Մովսիսի պէս կարծեց Թէ պիտի մեռնի ղԱստուած տեսնելուն համար. կամ որպէս Համարեցաւ Ս. Ամբրոսիոս իր կուսական ամենախածուելութիւնն կասկած մի ունեցաւ այն երկնային պատանւոյն երևման վերայ՝ որ արեգական ճառագայթից պէս թափանցել էր իր մենաւոր սենեակն՝ յոր ոչ ոք 'ի մարդկանէ համարձակէր մտնել. և կամ Թէ զուարթնոյն աղերսաւոր կերպարանքն և նմա տուած գովեստն՝ իւր խոնարհութենէն խռովեց: Արդ ինչ պատճառաւ և իցէ՝ Աւետարանն ասէ Թէ Կայն խռովեցաւ և 'ի զուր որոճայր մտաց մէջ Թէ ինչ էր արդեօք այս հրաշալի այցելութեանս պատճառն, և ինչ էր այս խորհրդաւոր ողջունին իմաստն:

Հրեշտակն նորա խռովիլն տեսնելով՝ քաղցրութեամբ վերայ բերաւ. « Մի երկնչիր Մարիամ, զի գտեր ընորհս Աստուծոյ. զի ահա պիտի յղանաս, և զաւակ մի պիտի ծնանիս, որոյ անունն Յիսուս պիտի դնես: Նա մեծ պիտի լինի և որդի Աստուծոյ պիտի կոչուի [20]: Աստուած իրեն պիտի տայ իր հօր Դաւթի աթոռն, և պիտի թագաւորէ 'ի վերայ տանն Յակոբայ, և նորա թագաւորութիւնն վախճան պիտի չունենայ »: Այս խօսից վերայ Մարիամ այլ աւելի զարմացած՝ իւր սրտին մէջ ոչ կարենալով միաբանել մարդութեան գաղափարն և յատկութիւնն ընդ ոսխային կուսութեան զոր արարեալ էր 'ի տաճարին, ասաց ցհրեշտակն իւր բնածին պարզութեամբն. « Եւ ինչպէս կարելի է այդ բանդ լինել՝ մինչգեռ ես զայր ոչ գիտեմ [21]: — « Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քոյ, պատասխանեց հրեշտակն, և ահա այսոր համար է որ այն սուրբ պտուղն ալ որ 'ի քէն պիտի ծնանի սուրբ է և Որդի Աստուծոյ պիտի կոչուի »: Այն առեն

Աստուածոյ պատգամաւորաց սովորութեանն համեմատ՝ ուղեց նշան մի տալ որ իր խօսից ճշմարտութիւնն հաստատուի, ուստի ասաց. «Ահա եղևսաբէթ աղջկան քոյ և նա յղի է՝ ի ծերութեան իւրում, և այս վեցերորդ ամիսն է իր յղութեանն՝ որ ամուլն կոչեցեալ էր. զի ոչ ակարասցի առ Աստուածոյ ամենայն բան»:

Հնազանդեցաւ Մարիամ աստուածային հրամանացն և խորին և անկեղծ խոնարհութեամբ ասաց երկնային պատգամաբերին. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քումմ». և գնաց՝ ի նմանէ հրեշտակն, և Բանն մարմին եղև և բնակեցաւ՝ ի մեզ [22]: Ահա այս կերպով կատարեց լուսեղէն զուարթունն իւր պատգամաւորութիւնն վասն փրկութեան մերոյ ընդ նորոյս Եւայի, որով և յանցանք մեղապարտ նախամօրն Եւայի որ դաշնակցեալ էր ընդ խաւարային հրեշտակին վասն կորստեան մերոյ՝ վաւաւորապէսդարմանեցաւ: Այսկերպովպարզ մահկանացու մի ամբարձաւ՝ ի գերագոյն և յանհամեմատ պատիւ Աստուածամայրութեան, կոյս միանգամայն և մայր, նորահրաշ եղանակաւ միացնելով յինքեան իւր սեռին երկու ներհական և գերապանծ վիճակներն: «Ոչ ևս այլ յառաջ երթամք այս անհասանելի խորհրդոյս մէջ, ասէ Ոսկեբերան, և չքընեմք թէ ուրպէս Հոգին սուրբ կարաց հրաշագործել զայս անքնին խորհուրդս յանձին սրբոյ Կուսին. վասն զի այս աստուածային ծնունդս անյատակ անդունդ մի է անհետազօտելի մարդկեղէն ընդվայրախոյզ աչաց [23]»:

Մեք վարդապետաց և աստուածաբանից կարծեացն հետևիմք՝ որ հաստատեն թէ Յովսէփ օրինաւոր այր էր Մարեմոյ՝ Բանին մարմնաւորութեան ժամանակ. և սակայն այս կարծեացս վերայ շատ վէճեր եղեն՝ ումանց ասելով թէ յայնժամ Մարիամ դեռ չէր ա-

մուսնացեալ այլ խօսեցեալ միայն Յովսեփայ. և այս կարծեաց պաշտպաններուն մէջ նախ գտանեմք զինքն զՄեծն Ոսկեբերան [24]. Թէպէտ և ինքն ևս ասէ Թէ Մարիամ Յովսեփայ տուն բնակէր՝ երբ երևեցաւ նմա հրեշտակն. «վասն զի, ասէ, հին սովորութիւն էր խօսեցեալ օրիորդաց երթալ՝ի տուն իրենց նշանածին. որ ցարդ ևս կը պահուի երբեմն. ինչպէս տեսանեմք որ Ղովտայ փեսայացուներն իրենց անեղրոջ տունն բնակէին իրենց խօսեցելոց հետ՝ի միասին [25]»: — Բայց ուրջափ մեծ է Ոսկեբերանի պէս սուրբ և պերճաբան ճարտարախօսի նկատմամբ մեր յարգութիւնն, սակայն եկեղեցին այս նիւթոյս մէջ իւր կարծիքն ոչ ընդունի: Գալով Ղովտայ փեսայացուաց օրինակին՝ զոր իր կարծիքն պաշտպանելու համար մէջ բերէ՝ համաձայնիմք ասելու թէ յարմար օրինակ մի չէ. վասն զի Ս. Գիրք ոչ ուրեք ասեն թէ դուքա՝ի տան Ղովտայ բնակէին. մանաւանդ թէ բոլորովին հակառակն մեզ հաստատացնել ցուցանեն, որով հետև այն տագնապալի ժամուն՝ մինչդեռ սարսափելի աղմուկ մի հնչէր բոլոր քաղքին մէջ՝ նահապետն ստիպի իր տունն դուրս եկնելու և իսկացնելու իր փեսայացուաց որ Սոդոմէն փախչին երթան: Դարձեալ են, թագրելով ալ թէ Ղովտայ աղջկանց խօսեցեալ երիտասարդքն՝ նահապետին տանն և գերդաստանին մտան եղած լինելին՝ որոյ խաչինքն այնչափ բազմաթիւ էին որ բովանդակ գաւառին բնըակիչներն ու ձորերն ծածկէին, այն առենի սովորութեան համեմատ այս երիտասարդաց վիճակն ալ առ եղերս Յորդանանու՝ տարբեր չէր կարող լինել Յակոբայ Միջագետաց մէջ ունեցած վիճակէն, այսինքն որպէս գործուներայ և արթուն ծառայս և հովիւս՝ բացօթեայ դաշտօրէից մէջ զգերեկ այրևալ լինելով՝ի տօրոյ և զցայգ՝ի ցրտոյ [26]: Արդ ոչ ուրեք ընթերցուածք թէ իրենց նշանածներն նոցա վրաններն բնակէին, այլ իրենց հօր նահապե-

տին հայրական պաշտպանութեանն նեղքև՝ որոյ դէմա-
ւոր հովիւներն էին իրենց խօսեցեալ կարիճներն, որ
հակառակ ոչ ելանէ Աստոյ նախկին սովորութեանց։ —
Իսկ Մարիամու համար որովհետև որք էր և անտե-
րունչ՝ առանց ամուսնացեալ լինելոյ իր նշանածին
տունն բնակիչն՝ չատ անտեղի բան մի կը սեպուէր և
անպատեհ սրբոյ կուսին նկատմամբ։ Միայն հրեից
մէջ եղած ընդհանուր սովորութիւնն թերևս՝ կարէր
այս կարծեաց հաստատութիւն մի տալ. և սակայն
այս կողմանէս ալ տեսանելիք որ իրենց Օրէնսգրոց մէջ
մանաւանդ պատուիրանաւ այս բանս արգիլեալ էր՝
խօսեցելոյ իրարու տուն բնակիչն [27]։ Ոսկեբերան
հայրապետն այլոց աստուածաբանից հետ միաձայն
ուսուցանէ մեզ՝ թէ Աստուած երկար ժամանակ մը-
թին քօղով մի ծածկեց Մարեմայ աստուածամայրու-
թիւնն՝ առ՝ ի պահել զնա յամենայն նախատալից
կասկածանաց. և ուրիշ Հայր մի յաւելու թէ Յի-
սուս Քրիստոս լաւագոյն համարեցաւ Յովսեփայ
հիւսան զաւակ սեպուելոյ՝ ի մարդկանէ՝ քան յայտ-
նելոյ զՀմարտութիւն մարմնաւորութեան իւրոյ՝
ընտրոյ պատուոյ մօրն։ Արդ ո՞չ ապաքէն այս կաս-
կածս և անպատուութիւնս յառաջ գայր՝ եթէ այն
ենթադրութիւնն ընդունիմք։ Եթէ Յովսէփ և Մա-
րիամ խօսեցեալք միայն էին՝ ի ժամու մարմնաւորու-
թեան Բանին՝ ի նմին վիճակի գտանելոյ էին անշուշտ
նաև չորս ամիս յետոյ, որովհետև Ա.Էլիսաբեթն ասէ
թէ Մարիամ յետ Ա.Էլիսաբեթի, և միայն յետ գտնելոյն՝ ի
Բեթլեհէմ ուր երեք ամիս կացեալ էր՝ յոյժ ուրախա-
ցեալ եղաւ, որ ասել կամի թէ ամենեքեան յայտնի
տեսանէին իրեն այն վիճակն։ Ապա ամուսնութիւնն
Մարեմու այն ատեն կատարուած պիտի լինէր՝ երբ
արդէն իւր մայրութիւնն յայտ յանդիման սոյգ
և անժխտելի եղած էր։ Եթէ այսպէս եղած չլինէր

ըլինչ պիտի ասէին երկուց կողմանց ընտանիքն. ինչ
պիտի ասէր բոլոր Նազարէթ քաղաքն՝ որ հարսանիքն
տեսնելու եկել էին։ Ո՛րչափ նախատական բարբան-
ջանաց նշաւակ պիտի չլինէր այն մաքրակենցաղ
Կոյսն՝ ի մէջ այնպիսի աղէի՝ յորում պատիւն կա-
նանց սրբազան բան մի էր, և որոյ նախատինքն և
տկարութիւն արեան վրէժխնդրութեամբ լուծանէր։
Ո՞չ ապաքէն այսու Մեսիայի ծնունդն ալ վատահամ
բաւեալ պիտի լինէր՝ ի չարախօսաց՝ այն ծնունդն որ
Դաւթի քերթողական բացատրութեամբ պիտի լի-
նէր որպէս ցօղ ի ցօղէ յերկիր։ Եւ հրեայք բովան-
դակ և մանաւանդ Նազարէթի բնակիչք որ այնչափ
հակառակ էին Յիսուսի Քրիստոսի և արհամարհանօք
որդի հիւսան կոչէին զնա, երեսն պիտի չզարնէի՞ն ի-
րեն անկանոն ծնունդն. և եթէ չարարին այս բանս՝
պատճառն այն էր որ փաստ մի չունէին այս չարա-
խօսութիւնս հաստատելի առնելու։

Ահա այսքիկ են այն պատճառներն որոց համար
չատ երևելի աստուածաբանք ընդունած են Մարիա-
մու ամուսնութեան կարծիքն յառաջքան զաւետումն
և զմարմնաւորութիւն Բանին. թէպէտ և հակառակ
կողմն իր կարծեաց հաստատութիւն բերէ Մատթէո-
սի այն խօսքն որ կարծես թէ աւելի իրենց կար-
ծեաց հաստատութիւն կուտայ. և սակայն բաւական
պարզ չէ այն խօսից իմաստն՝ գժուարութիւնն բո-
վանդակ բառնալու համար [28]։ Այս ալ գիտնալու է
որ վէճն գլխաւոր կէտին վերայ չէ, որովհետև եթէ
կին համարիս թէ խօսեցեալ՝ սակայն ոչ ոք ի քրիս-
տոնէից յանդգնած է տարակուսիլ Աստուածամօր
միշտ կոյս և միշտ մաքուր լինելուն վերայ. այս բանիս
նոյն իսկ մահմետականք մեզ հետ համաձայն են [29]։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Ը. ԳԼՈՒԽ

1 Տաւնս այս սրբոյն Յովսեփայ հարիւր քառասուն քայլ հեռի է ի տանէ Սրբոյն Աննայի, և մինչև հիմա այնոր տեղն ցուցանեն իրաւ սրբոյն Յովսէփայ անուամբ, որ բաւական ընդարձակ եկեղեցի մի գարձած էր, և թուրք մի մասն աւերեցին. հիմա նոյն տեղն մատուռ մի կայ, ուր ամէն օր պատարագ մատուցանեն (տը Ժերամպ):

2 Ա.յս կրպակներս մինչև ցայժմ նոյն ձևն պահած են լոլոր արևելք (Պուրքարտ Ո-ղնորհնիւն յԱբեբէս հատ. Ս.):

3 Յուստինոս վկայ Տրմխօտոնիւն ընդ Տրէֆոնէ գրոց մէջ յիշէ թէ Յիսուս օգնէր իւր հայրագրին լուծեր և արօրներ շինելու համար: Սուրբն Ամբրոսիոս ի Մենոնիւն Ղուկայ գիրք Գ, 2 ասէ թէ Յովսէփ վաստակէր ծառեր կտրելու, տներ շինելու ևն:

4 Ա.յսպիսի մանր ու ձեռքով շարժելու աղօրիք երբայեցւոց և արաբացւոց և արևելցոց ամէն տներն կային. Մէջքէի մէջ դեղեցիկ տուն մի որ Հատիճէի կարծուի՝ փորուած այր մի կայ ուր Մահմէտի դուստրն և Ալիի կինն Ֆաթիմէ աղալ տայր իւր ցորենն (Պուրքարտ). արաբացի շէյխերուն կանայքն մինչև ցայսօր այս ծանր աշխատութիւնս կրեն: Քլոտովէոսի որդւոց Թագաւորութեան ժամանակ Սրբուհին Ռադեկոնդա Թագուհին փրանկիոյ՝ մեծ պահոց մէջ պէտք եղած ցորենն իր ձեռօքն աղալր Սրբուհւոյ Կուսին նմանելու համար (Լը կրանտ տ՝ Ալսի Ա-ռնէն պատմութիւն էրանկոց):

5 Ա.յս խեցեղէն սափորներս մեծ և բարձր են, և Նազովցի կանայք գլուխնուն վերայ կրեն, և սակայն այս ծանրութեամբ ալ զարմանալի թեթևութեամբ ընթանան՝ շատ անգամ տղայն ալ գրկած (տը Ժերամպ հատ. Բ):

6 Ա.յս աղբիւրս Մարիամ աղբիւր կոչեն տեղացիք, և ա.ւանդութեամբ ասի թէ Ա.ստուածամայրն շատ անգամ հոն երթայր պէտք եղած ջուրն բերելու համար, և հաւանական երևի վան զի Նազարեթի մէջ ջուրն նուազ է. ճամբուն երկու կողմն հնդիկ թզենիներով և պտղատու ծառերով դողուած է. Կոստանդիանոսի մայրն Հեղինէ հոն մեծամեծ աւազաններ և ջրամբարներ շինել տուած էր (տը Ժերամպ):

7 Ղուկաս գլ. ԺԳ 21: — Մատթ. ԺԳ 55:

8 Ղուկաս Ե 36:

9 Նոյնն ԺԵ 8:

10 Նոյնն ԺԱ 39. — Մատթ. ԻԲ 25:

11 Ղուկաս ԻԱ 1:

12 Կարգաւորեալ մարդիկ ուշ ատեն ճաշէին երբ աշխատանքըն դադրէին (Լինյոլ էորյելյոյ): Յովսեփ և Մարիամ ճաշէին երեկոյեան ժամն վեցին:

13 Ֆիէօրի Լինյոլ էորյելյոյ:

14 Շատ մեծ զգուշութիւններ առնելու էին երբայեցիք կերակրոյ և ջրոյ անօթոց մաքրութեանն, որ մի գուցէ օտարք նոյնն գործածած լինին. որովհետև շատ դիպաց մէջ պիղծ և անմաքուր համարուէին (Միշնա էրբ Մաքրութիւն):

15 Ոչ անաբժան հաճարէի պարբառել Մոթոխբութիւն Յովսէփայ վէրթուրան, ասել տայ Սրբոյ Կուսին հին մատենագիր մի, և որ արդի երբայեցւոց սովորութենից ալ շատ յարմար գայ:

16 Հայրն Քրուազէ Հրահանգ բնբէպտը. հտ. ԺԸ:

17 Արևելեան ազգք աղօթելու համար երկնից մանաւոր մի կէտն դիտեն որ Քաղէ ասի առ արաբացիս. Հրեայք դեպ ի տաճարն Երուսաղէմ կը դառնան. մահմետականք դեպ ի Մէքքէ, Աբբայեցիք դեպ ի Հարաւ, և մոգք դեպ ի արևելք, որպէս նաև նախկին քրիստոնեայք և մինչև ցայսօր արևելեան հաւատացեալք:

18 Սովորաբար կարծուի թէ հրեշտակին երևելն արևու մըտնելու ժամանակն հանդիպեցաւ:

19 Հրեշտակային ողջունաւորութիւնն որ Հայերէնի մէջ թարգմանուած է Ո-ղջո՛ւ լեր Բերէքէտը՝ յոյնին մէջ սակաւ մի տարբերութեամբ ասի Որ Ո՛ղջոյն ե՛ւ լե՛ր Ընորհօ+.-Խորը Հոգիք և Խոր երկրութիւն բառից զանազան նշանակութեամբն. յոյնք և լատինք ողջունաւորութեանս մէջ յաւելուն նաև օրհնեալ Խոր ի կանայս որ Հայերէնի մէջ միայն Եղիսաբեթի ողջոյնին մէջ յիշատակի:

20 Երբայական ոճով կոչէ՝ լինել ալ նշանակէ, որպէս սակաւ մի յետոյ ասի վասն Եղիսաբեթի Որ ամուլ կոչեցեալ էր. փոխանակ ասելու որ ամուլ էր:

21 Սրբոյ Կուսին Հարցուն ի տարակուսէ և ի չհաւատալոյ չառաջ ոչ գայ, ասոնց վարդապետք ընդ սրբոյն Աւգոստինոսի, այլ կամ ուսանել թէ այս հրաշալիքս ինչ եղանակաւ պիտի կատարի. և Ոսկեբերան յաւելու թէ իւր Հարցուն չառաջ գայ ի խորին և յարգամեծար զարմացմանէ և ոչ ի վայրապար հետազոտութենէ:

22 Ա.յս անձառելի խորհուրդս կատարեցաւ ի 25 մարտի, և ութրաթ աւուր երեկոյ մի:

23 Յովհան Ոսկեբերան Ճառ Դ։

Ա. Թերևս այս կարծեաց հաստատուԹիւն տալու համար է որ մեր ԹարգմանուԹեան մէջ յաւելու այս հատուածիս վերայ Յ֊նոբ ՀՆա֊ ԶՅովհէփ վսյն Մարիամո՝ իբրև մեկնուԹիւն այս ի֊մաստիս որոմ՞ խօսեցեալ ԼՄարիամ նյս որ ի յոյնն և ի լատին չկայ։

24 ՏեքուԹիւր սխալմամբ Թէ Ոսկեբերան ևս կարծէ զկոյն ամուսնացեալ ընդ Յովսեփայ ի ժամանակի աւետման, որ այնպէս չէ սուրբ վարդապետիս կարծիքն՝ այլ խօսեցեալ միայն համարի յայնժամ զսուրբ կոյսն Յովսեփայ, Թէ և բնակեր ի տան նորա՝ երբ հրեշտակն ետնմա զաւետիս. այլ մեք վարդապետաց և աստուածաբանից մեծագոյն մասին հետեւելով ասեմք Թէ սուրբ կոյսն յայնժամ օրինաւորապէս ամուսնացեալ էր ընդ Յովսեփայ

25 Ոսկեբերան Ճառ Դ։

26 Ծննդոց գԼ. իԱ, 40։

27 Միշնա հտ. Գ. Յաղագս հարանաւօրուԹեանց. — ՊարԹենորա, Մայմոնիտ, Սուրենուսիոս, Սելդոն։

28 Վարդապետաց տարաձայնուԹեան պատճառ տուող հատուածն ՄատԹէոսի աւետարանին այս խօսքս է. Յետոյ քՀբէորոսի ՀՆա֊նդ էր այսպէս. խօսեցեալ ՀՄայր նորա Մարիամ Յովսէփա֊. ՊՆէնչ ԷՆեալ ա֊ ՊՆիանա ՀգաՀա յղացեալ ի հոգւոյն սրբոյ։ Նոքա որ բառից զօրուԹեանն միաք դնեն՝ ասեն Թէ կոյսն միայն խօսեցեալ էր, որովհետև ՄատԹէոսի եբրայական բնագիրն բացատրող յունական բառն՝ նշանակէ խօսեցեալ կամ խոսացեալ, մինչդեռ ամուսնացեալ նշանակելու բառն ոչ գործածէ. այնպէս որ Յովսեփ տակաւին իր տունն անգամ առած չէր զկոյսն, զոր և յուզանեն հետագայ բառերս Մի երՆէր ա֊ՆոՀ ա֊ ՀԷՀ ԼՄարիամ՝ կին Հոյ. ՀաՆոլ որ ի Նմայն ՀՆեալ է ի հոգւոյն սրբոյ է։ Բայց այսպէս Թարգմանելու համար՝ հարկ էր որ բնագիրն ասէր ի կին Հոյ, որ այնպէս չէ, այլ պարզապէս զՄարիամ կին ՀոյՀ։ — Իսկ հակառակ կողմն զոր պաշտպանեն սուրբ Հարք և անուանի մեկնիչք և գրեթէ բովանդակ աստուածաբանք՝ Ղուկասու աւետարանին Բ. գլխոյն խօսքն ընդդիմադրեն իրենց ախոյանիցն. որովք աւետարանիչն՝ զկոյսն ամուսնացեալ ընդ Յովսեփայ, նոյն խօսել բառով կոչէ ասելով Մ֊ոՆԷլ֊յալ֊ խորհրդեր Մարիամ հանդերձ զոր խօսեալն էր Նմա Ա֊ էր յղի. նոյնպէս ՄատԹէոսի Ա. գլխոյն 19 համարին մէջ սրբոյն Յովսեփայ համար ասի այր նորա և ոչ խօսեցեալ նորա։ Ուստի երբ ՄատԹէոս սրբոյ կուսին համար խօսեցեալ ասէ՝ ոչ կամի ասել

Թէ ամուսնացեալ էր՝ այլ զի նոքքին յարաբերուԹիւն չէր ունեցած ընդ առն իւրոյ, որպէս Թէ խօսեցեալ միայն լինէր, որպէս ասէ ոմն ի սուրբ Հարց։

29 ԱնարատուԹիւն Մարիամայ Ծանուցեալ է և ի մահմետականաց, այնպէս զի արևելեան կայսերաց դուռն եղող խալիֆայի մի դեսպանն ԼՀ֊ֆիրսուզապատի՝ յոյն պատրիարքին և եպիսկոպոսաց Հետ կրօնական նիւԹից վերայ վիճելու ժամանակ՝ Մարիամու Յիսուսի մօրն Համար ասէ՝ Թէ կարէ կոչիլ աղքիւր և բովք ամենայն մաքրուԹեան ՃԵՆՈՂԷՈՒՔ ՓՈԼԷՈՒՆԷՔՖՔ (տ՝ Էրպէդ Մաթենոփոլոն արխել Հտ. Բ)։

ԳԼՈՒԽ Թ.

Աղցկոռիւն Մարևայ.

Ուրեմն Մարիամ լսելով՝ ի հրեշտակէն եղիսաբեթի հրաշալի յղութիւնն՝ որոշեց երթալ առ նա և իւր սիրալիր բարեմաղթութիւններն մատուցանել պատուական աղգակցին: Ոչ թէ իւր աչքն ստուգելու համար իրին ճշմարտութիւնն՝ որ անսովոր երեւէր, որպէս յանդգնեցան ասել ոմանք՝ ի քննաբանից, որովհետև լաւ գիտէր նա թէ ամենայն ինչ հնարաւոր է առ Աստուծոյ և իրեն համար անկարելի բան չկայ, և թէ անհնարին էր որ երկնից պատգամաւորն Ամենակալին կողմանէ իրեն խաբէական և սուտ լուրեր բերէր. գարձեալ ասեմ, իր երթալն իրն ստուգելու համար չէր, այլ մանաւանդ թէ ստոյգ լինելն գիտելուն համար երթայր: Ուստի անյապաղ էլ՝ ի ճանապարհ. վասն զի սէրն ասէ Աւրբն Ամբրոսիոս յապաղումն կամ դանդաղութիւն ոչ գիտէ. և գարձեալ ինքն բնութեամբ բարի և բարեսէր լինելուն՝ փափաքէր որ իր աղգականացն ալ հաղորդէ այն սրբութիւնն և երկնային ընորհքն՝ որ յիւր հոգւոյն զեղեալ բղխէին որպէս մշտաբուխ աղբիւրք ջրոց կենդանութեան, յորմէ հետէ կրէր յողջախոհ արգանդին զարարիչն տիեզերաց. ուստի կամէր զնոսա ալ մանակից առնել՝ որք զինքն պաշտպանել էին՝ ի մանկութեան և իրենց զաւկին տեղ դրած էին զինքն:

Յովսէփ՝ որոյ պարզ և անմեղ միանգամայն առ Աստուած բարձրացեալ հոգին՝ նոյն զգացմունքն ունէր ինչ որ Մարիամ, որով երկուքն ալ մի սիրտ և մի

կամք ունէին, յօժարութեամբ հաւանեցաւ նորա առաջարկութեան. և Մարիամ մեկնեցաւ՝ ի Նազարէթ առ՝ ի երթալ վարդից եղանակին մէջ՝ ի լեռնակողմն Յուդայ ուր էր բնակութիւնն Զաքարիայ՝ ի ցեղէն Ահարոնի: Ս. Գիրք որ մանկական պարագայներն զանց առնելով դէպքն և իրին էական մասունքն հաստատեն, չասեն ինչ՝ թէ Կոյսն ուղեկից ունէր թէ չէ այս ճանապարհորդութեանս մէջ. ոմանք այս լռութենէս համարեցան թէ ինքն միայնակ գնացած է, որ ճշմարիտ ոչ երևի. վասն զի Նազարէթէ մինչև Աբին քաղաքն [1] հինգ աւուր ճանապարհ է, և հարկ է անցանել Գալիլեայի մի մասն, Սամարիայի պէս թշնամեաց երկիրն մէջէն և գրեթէ բովանդակ Յուդայի վրայէն. բոլոր երկիրն ալ դժուարակոխ լեռներով և անապատներով լի է [2]: Եաքի աւետարանչն հռոմայեցւոց այս ճամբայներս չտեսնէին յառաջ՝ բոլորն ալ աւերեալ և խորտուբորտ եղած էին ուղտուց երամակաց ծանր քայլերէն, և այնպէս քարուտ որ ուղևորն ամէն մի քայլին վտանգի մէջ էր անկանելոյ և չխլխլելոյ: Եւ երբ երեկոյ լինէր՝ հարկ էր իջևան մի իջնել պատսպարելու համար, որ կարաւաններու խեղճ օթևաններ էին՝ և ուրիշ բան չկար բայց եթէ նեղ անձուկ տեղ մի՝ ուր կերակուր և պէտքի բան ոչ գըտնէր՝ բայց եթէ՝ ի սիզոյ շինուած փսիաթ կամ նաձայ մի [3]. որովհետև քանի որ քաղաքականութիւնն յառաջ երթայր հրէից մէջ՝ նախկին ժամանակաց հիւրընկալութիւնն ալ երթալով պակսէր: Ուստի այս այսպէս լինելուն անկարելի է կարծել թէ Յովսեփայ պէս հասակաւոր և փորձառու մարդն՝ հանգարտ սրտով թողլոր՝ իւր մանկամարդ գեղեցիկ փափկիկ ամուսինն, որ և աշխարհէս հեռի դաստիարակուելուն համար ալ՝ որպէս ինքն իսկ Աստուածութիւնն ամենայնի վստահէր, այնչափ վստահագոյ և այնչափ նեղութեանց մէջ՝ որ միայնակ ճանապարհորդու-

թեան ժամանակ կարէին իրեն հանդիսիլ: Նոյն իսկ Ժողովրդեանն Աստուծոյ պատմութիւնն և ասիկան սովորութիւն են. թագուհիներս սուտ հանեն. եթէ այեցի կին մի առանց բազմաթիւ ուղեկցաց ոչ յանդգնէր իր տունէն այնչափ հեռի տեղ երթալու:

Եթէ Սուրբն Յովսէփ չկարաց ուղեկից լինել Կուսին այս ճանապարհորդութեանն մէջ՝ որպէս կարծէ Հայրն Քրուազէ, և որ հաւանական իսկ է՝ որովհետև իր աղքատ վիճակն ոչ ներէր նմա այնչափ ժամանակ իւր գործն և արուեստն թողուլ՝ որով հազիւ թէ աւուր ապրուստն ձարէր, հարկ է ասել թէ Աստուածամայրն կարաց իրեն ընկերակիցներ գտնել իւր աղգականներէն՝ որ բարեպաշտութեան համար՝ի սուրբ քաղաքն երթային՝ հանդերձ արամբք իւրեանց և սպասաւորաց, որոց հետ միանալով մինչև այն տեղն՝ յետոյ յառաջ վարած է իւր ընթացքն ապահով ուղեկիցներով: Եւ այս բանս անտի ալ յայտնի է՝ որ իւր ամէն ճանապարհորդութեանց մէջ թէ երուսաղեմայ մեծահանդէս ծնոնից ներկայ գտնուելու համար, թէ Ֆրիստոսի քարոզութեանց ժամանակ՝ որ այն աստէն տարիքն աւելի առած էր, միշտ ընկերացեալ գտանեմք զնոքն այն սուրբ կանանց հետ, նոյն իսկ՝ի Գողգոթա եւած աստէնն:

Վերջապէս հասնելով՝ի քահանայական քաղաքն՝ յորում բնակէր զևտացոյն գերդաստանն, առանց տեղ մի հանգչելու չկտակ Զաքարիայի տունն իջաւ. և եղնաբեթ՝ի միոյ՝ի ծառայից իւրոց լսելով այս անակնկալ այցելութիւնս՝ սաստիկ ուրախացած ընդառաջ գնաց. զոր տեսեալ մանկամարդ Կուսին խոնարհեցաւ և ձեռքն կրծոց վերայ դնելով՝ փութացաւ ինքն նախ ողջունել զնա ասելով. Խաղաղութիւն ընդ քեզ [5]: Եղնաբեթ ևս եւս քաջուեցաւ. վասն զի նորա մոերմական խօսից և հրաշափայլ գիմաց վե-

րայ այնպիսի բան մի նշմարեց՝ որ յարգութիւն և պատկառանս ազդէին. իւր գիմաց գծագրութիւնն երթալով լուսաւորէր և իմանայր յանձին թէ անսովոր և հրաշալի բան մի հանդիպէր իրեն: Կուսին մարգավարական պարզ ողջոյնն՝ զոր հանդարտ և քաղցր ձայնիւ արտաբերէր՝ իւր ազգակցին խոռվութիւն մի պատճառեց. և ահա յանկարծ մարգարէական հոգին եղնաբեթի վերայ իջնելով՝ ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու՝ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ. և ուստի է ինձ այս երջանկութիւնս որ Տէրոջս մայրն ինձ գայ. վասն զի հազիւ թէ քոյ ողջոյնիդ ձայնն յականջս իմ հասաւ՝ ուրախութեան կայծ մի տուաւ մանուկս որովայնիս մէջ. և երանի քեզ որ հաւատացերդ թէ պիտի կատարուի ինչ որ Տէրն ասաց քեզ»:

Այս խօսքիս Մարիամ պատասխանեց այն վեհ քերթող և ական յանպատրաստից օրհնութեամբն Մեծացուցէ՝ որ նոր կտակարանաց մէջ առաջիներգն է, և բովանդակ Ս. Գրոց մէջ գան զամենն հրաշալին: — «Մեծացուսցէ անձն իմ զտէր, և ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ. զի հայեցաւ՝ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք: Զի արար ինձ մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա: Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց: Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց: Գահակեաց զհզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ, և զվհատաւորն արձակեաց ունայնս: Պաշտպանեաց Իսրայէլ ծառայ իւրոյմ, յիշելով զողորմութիւնս: Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան»:

Այս կերպով սուրբ Կոյն գերբնական լուսով լուսաւորեալ՝ եռես յանկարծ զբովանդակ նախկին մար-

գարէուրեթիւնս և զանթերի կատարումն նոցին, հաղորեցս և բիւրիցս անգամ առաւել լուսաւորեալ և ընդհազարգեալ քան զամենայն մարգարէս միանգամայն. մինչև ասել Սրբոյն Ամբրոսիոսի « Այս գեղաշնոց խոսակցութեանս և հրաշալի քանակցութեանս մէջ Մարիամ և Եղնսաբեթ երկոքին ևս ազդմամբ Հոգւոյն սրբոյ մարգարէացան՝ որով լցեալ էին արդեամբք զաւակաց իւրեանց[6] »:

Սուրբ Կոյս երեք ամիս մնաց յերկրին քեռացւոց, և այս երկայն այցելութեանս ժամանակ բնակեցաւ մերձ ՚ի քաղաքն Ային (որ է Ֆեբրոն) հովանաւոր և բարեբեր հովտի մի մէջ ուր էր Զաքարիայի ամրասատունն[7]: Ինքն գուսոր գոլով Դաւթի և իւր ցեղապետին և հաւուն պէս մարգարէ և հաւատար հանձարով ճոխացեալ, այն երկայն միջոցին գիտեր աստեղաբաշխ երկնից կամարն, սօսափաձայն անտառներն, այն լայնածաւալ ծովն որ մերթ փոթորկալից ալեօք խռովէր, և մերթ մեղմընթաց միանամիք Ա. սուրբոց երկրին շառաչաձայն եզերքն համբուրէր: Բնութեան այս գեղեցիկ տեսարանին վերայ՝ որ այնչափ կատարեալ է իր մասանց մէջ, և այնչափ ճարտարութեամբ ներդաշնակեալ յամբողջութեան իւրում, ուր ամենայն ինչ հրաշալի է ՚ի ծաղկանց մանրանթեղից և միջատաց թևաւոյն սկսեալ՝ մինչև կայն թափառիկ գնտերն որ սիեզերաց մէջ փայլին՝ գիչերուան սոսկումն փարատելու համար, այնչափ հիացուցանէին զԿոյսն որ երբեմն յարատասուս լուծանէր ասելով. Ո՛հ որչափ մեծ է Նա որ առաւօտեան արուսեակին հրամայէ, և արշալուսոյն սահմանէ այն կէտն ուստի պիտի ծագի, որ հրաման պայ փայլականց և որում կայծակն փութայ հնազանդի կոչելով. Ահաւասիկ ևս: Սակայն որչափ մեծ է՝ նոյնչափ իւր բարութիւնն ջնջութեանն հաւասարի. ինքն առաւաւ մարդոյ զհանճար և անասնոց զբնաղդումն,

ինքն նախանձամբ իւր ամեն արարածոց մշանջենաւոր պէսքն. աւազոյ մէջ սաքցնէ զձուս ջայլամին, և բեհմովթին (ձիագետի) վերայ հսկէ նորա մրափած աւեանն՝ երբ ննջէ ՚ի շամբս եղեգանց և ընդ հովանեաւ ուռենեաց հեղհեղաձին. ինքն պատրաստէ զկերակուր ձագուց ագռաւոց որ կարդան առ նա և քաղցեալ թափառին դաշտոցն մէջ: Այս ասելով սաղմոսերգուին պէս ինքն ալ յորդորէր բոլոր զՀամադոյս իրեն հետ ՚ի միասին օրհնելու զԱյրարիչն:

Լեռներու ծործորներու մէջ ընդագայած ժամանակ՝ ինքն Մարդարիտ ծաղիկն ինչպէս որ այս քաղցրիկ անուամբ կոչեն զնա ոմանք, մեծ հաճութիւն իմանայր այն դաշտաց պարզ և սիրուն ծաղկներն գիտելէն՝ որոց նմանցնէ զինքն Սողոմն իր խորհրդաւոր երգոց մէջ Շուշան հովտաց, ծաղիկ դաշտաց կոչելով զնա: Պարսից իմաստուներ աւանդեն թէ օր մի փառաւորեալ Կոյսն Մարիամ՝ ծաղկի մի ծղօտին գպչելով զոր Արաբացիք Ամրեհիտա անուանեն՝ իւր կուսական մատամբքն՝ այնպիսի քաղցրահոտութիւն մի պարգևեց այնոր՝ զոր մինչև ցարդ պահէ[8]: Արևելեան քրիստոնէից մէջ պահուած աւանդութիւնն ցուցանէ մինչև ցայսօր այն ազգերն՝ ուր երթայր երբեմն Մայրն Յիսուսի՝ այնոր ցայտող ջրերուն սիրոյ գգչիւնն լսելու համար[9]:

Քահանայապետին ամարաստանին եաևի գին կը տարածուէր պարսկական պարտէզ մի գրախտ կոչուած, և որոյ օրինակն առնելով երբայեցիք ՚ի Ժողովրդոյն Կիւրոսի և Շամիրամայ՝ հետերնին բերած էին գերութենէ գարձած աւեն. հոն տեսնուէին Պաղեստինու գեղեցկագոյն ծառերն, ծաղկալից թփերը աստանդ ցրուած, նարնջենեաց քաղցրահոտութիւնն, ուռենեաց հակեալ սաղարթուց ներքև վտակաց գըգջալիք՝ ախորժ հովանի մի ձևանալ այս տեղս: Հոն Մարիամայ քաղցր խնամքն մռռանայր Եղնսաբեթ

մի Նեփտովայ աղբիւրին յատակ ջրէն խմելով. այս սակաւապիտութիւնս ոչ եթէ տեղւոյն և պարագային պատշաճութեանց համար էր, այլ իր յաժառաքութեամբն սատյած սովորութիւն, որ իւր կատարեան նազելի փափկութեանն ալ յարմար գայր:

Ոմանք Սրբոյ Կաւսին խոնարհութիւնն այլ աւելի յերևան հանելու համար որում ամենևին կարօտութիւն չունի, համարեան թէ ինքն Եղիսաբեթի տան մէջ ազախնեայց և գերեաց ծառայութիւններէն ալ ոչ փախչէր: Այս կարծիքս նախընթաց անցից հետ ամենևին յարմարութիւն չունի. վասն զի Եղիսաբեթ ոչ կարէր հաւանիլ որ այն փափկիկ օրիորդն զոր սակաւ մի յառաջ ինքն իսկ բարձրաձայն խոստովանել էր իբրև մայր Տեառն իւրոյ, և քան զամենայն դստերս Սիոնի գերազանց պատուոյ հասեալ, իրեն առջևն այն աստիճան խոնարհի և նուաստանայ: Մանաւանդ որ Զաքարիայի սուրբ ամուսնոյն ոչ պակասէին նաժիշտք և ազախնայք. որովհետև ինչպէս խոստովանին քրիստոնեայք և հրեայք՝ ինքն Եղիսաբեթ աշնուական գերդաստանէ էր, և Յովհաննու Մկրտչի շքեղ ծնունդն կերպով մի նահատակներ Յիսուսի Քրիստոսի ծնունդն՝ որոյ ծնողքն անծանօթ մարդիկ էին և աղքատաբար ապրէին հասարակ ժողովրդեան պէս[12]: Ուստի այն խնամքն զոր ցուցանէր սիրուն և քաղցրիկ կոյս առ Եղիսաբեթ՝ ծանր և ծառայական սպասաւորութիւն չէր, այլ այնպիսի հաճելի և փափուկ հոգեր՝ զորս սիրտ առնէր անշուշտ իւր մէն իսկ՝ եթէ Երկինք տակաւին իրեն թողած լինէին զնա: Անտարակոյս շատ անգամ այն գովելիը և յարգելի ամուսիններուն վերայ նայելով՝ որ զինքն ալ իրենց զաւկին պէս սիրէին՝ կարծէր տեսանել իւր իսկ ծնողքն. որովհետև սոքա ևս զինքն աւետածնուն պէս՝ խմանալով իւր գերազանց մեծութիւնն յարգութեամբ և զարմացմամբ հայէին իր

այն երկիւղն զոր զգայր երբեմն գալիքն մտածելով, որոյ յոյսն օրչափ զինքն ուրախացնէր՝ սակայն տարբերութիւն առած լինելուն պատճառաւ՝ կարէր վտանգ բերել իր կենացն: Ո՛չ օրչափ կրօնական եռանդեամբ լի էր արդեօք այն երկու սուրբ կանանց խոստակցութիւնն. յորոց մին գեւ ալ[13]իկ կոյս պարզ և անգէտ չարի օրպէս Եւայն այն ինչ ելեալ յաստուածային ձեռաց, իսկ միւսն տարեց և աչառարհիս ամէն վտանգաց փորձառու. բայց երկուքն ալ բարեպաշտութիւնք և հաճոյք Աստուծոյ բարձրելոյ. մին կրելով 'ի ծոցի՝ որ այնչափ ժամանակ ամուլ էր, մանուկ մի որ լինելոց էր մարգարէ և առաւել ևս քան զմարգարէ, իսկ միւսն զօրհնեալ որդի Բարձրելոյն՝ զառաջնորդ և զազատիչն Իսրայելի:

Ամառուան գեղեցիկ և պարզ երեկոյին՝ երբ լուսնոյ սպիտակափառ լոյսն ծառոց ձիւղերն լուսաւորեր՝ այն ձոխ գերդաստանին սեղանն կը պատրաստուէր Թզենւոյ լայնատարած ճիւղերուն կամ սաղարթաւոր որթոյ բարուրնակաց ներքև[14]. հոն բերէին սպասաւորք խորոված գառնն՝ լերանց խնկահոտ խոտերովն գիրացած, այծու երջուճ մի, սիգոնացի ձկնորսաց բռնած ձկներէն, հինաւուրց կաղնի ծառոյ խոռոչէն ժողովեալ վայրի մեղր պանն, լեռոյ արմաւենւոյ Թարմ սերոյէ ճարտարահիւս ափերիներով երիքովն արմաւներ՝ որ մինչև կայսերաց սեղանն երևելու պատիւն ունէին, Հայաստանի ծիրանիներ, Բերիոյ և Դամասկոսի պիստակներ և Եգիպտոսի սերներ: Իսկ ենդագեայ բլուրներուն գինին՝ զոր քահանայապետին տաճարապետն կձեայ Թակոյիներու[15] մէջ պահէր՝ աշխոյժ մատուռակներ մատուցանէին զայն կոչնականաց շրջղղուն բաժակներով: Մարիամ որ միշտ սակաւակեր էր Թէ առաւտուընեան մէջ և Թէ նուաղութեան՝ սոսկ պաղով և սակաւ մի կաթնեղինով կշտանայր, վասն բաժակ

վերայ, զոր Թէպէտ Մարիամ խոնարհութեամբ ջանայր յանձնէն հեռացնել, բայց չէր կարող բոլորովին նոցա մաքէն ալ հանել։

Զաքարիա որ նոյն իսկ հրեշտակին խօսից վերայ տարակուսած էր՝ ոչ բնաւ կասկած մի ունեցաւ Մարիամու անբիծ մաքրութեան վերայ. և եթէ հաւատամք արևելեան աւանդութեան՝ զոր և հարք ա-նուանիք ընդունած են[15] քանի մի ամիս յետոյ ինքն իսկ հրապարակաւ տաճարին մէջ պաշտպանել է Աստուածամօր կուսական մայրութիւնն, և իւր արեամբն կնքել է այս համարձակ վկայութիւնս։

Հարք սուրբք ասեն թէ գիշերային քան մի չէ ըմբռնելն թէ ո՛րչափ օրհնութիւններ բերաւ Կոյսն իր այցելութեամբն այն քահանայական գերդաստանին վերայ՝ որ զինքն այնչափ սիրով հիւրընկալեալ էր։ Վասն զի եթէ Աստուած օրհնեց զտուն և զամենայն ինչ Աբեդգարայ՝ ուխտի տապանակին երեք ամիս իւր տունն մնալուն պատճառաւ, մինչև ի նախանձ գըրգռել զԻսրաէլի արքայ, ո՛րչափ աւելի գերադոյն չըլնորհք լլցած չէին Զաքարիայի և բոլոր իր տան վերայ՝ այն երեք ամսոց մէջ՝ յորում իր տան մէջ բնակեցաւ Մարիամ՝ որում օրինակ էր միայն տապանակն հնոյ օրինաց՝ որչափ ալ սուրբ և ահաւոր եղած լիցի։ Այն մաքրութիւնն յորում տպրեցաւ միշտ Յովհաննէս Մկրտիչ՝ ասէ Սուրբն Ամբրոսիոս՝ Սրբոյ Կուսին ներկայութեան արդիւնքն էր՝ որ իւր հոգին այնչափ օծութեամբ և շնորհօք ճոխացոյց։

Աստուածամայրն չեմք կարող ասել թէ արդեօք Աստուածամայրն ներկայ գտաւ ի տնանէնն Եղիսաբեթի ջՅովհաննէս։ Որոգինէս, Սուրբն Ամբրոսիոս և այլ անուանի գրիչք ի հնոց և յարդեաց հաստատեն, և իրենց կարծիքն հաւանական և ճշմարտանման երևի՝ գոնէ այս պատճառիս համար որ շատ անպատեհ բան էր Սրբոյ Կուսին՝ այնչափ երկար ժամանակ իր ազգականին տունն մնալէն յետոյ՝ նոյն իսկ նորա ծանդաւոր ժամուն՝ յանկարծակի զինքն թողուլ մեկնէր երթայր՝ առանց բանաւոր պատճառ մի ունենալու այս իր տարաժամ և շտապողական երթին։

Իսկ այն աստուածաբանք և մեկնիչք որ Որոգինեսի և Սրբոյն Ամբրոսիոսի կարծեաց հակառակ կողմն բռնեն՝ գլխաւորապէս Ս. Ղուկաս աւետարանչի պատմածին յենուն՝ որ Եղիսաբեթի ծնանելն՝ Կուսին ի Գալիլեայ դառնալէն ետև կըսէ։ Մեզ այնպէս երևեցաւ որ այս պարագայս բաւականապէս արժանի էր մտադիր քննութեան. ուստի խնամով մեծաւ քննելով այս սուրբ աւետարանչին գրածն՝ բաւական համոզուեցանք, եթէ կարծիքնիս սխալէ, որ այս պատճառս այսինքն աւետարանչին խօսքն բաւական չէ՝ եղած տարակոյսն լուծելու. վասն զի Ս. Ղուկաս սովորեալ է այսպիսի յետևառաջութիւններ առնել իւր գրոց մէջ, որոց նման սեղափոխութիւններէն երկուքն միայն հոս կըսեմք. օրինակ նմա ինքն Յովհաննու Մկրտչի քարոզութիւնն և բանտարկութիւնն պատմելէն ետև, յետագայ հատուածին մէջ պատմէ Յիսուսի Բրիստոսի մկրտութիւնն՝ որ անտարակոյս յառաջ եղած է յառաջընթաց կարապետին բանտարկութենէն և եղերական մահուանէն։ Նմանապէս հովուաց երկրպագութեան վերայ խօսելով Ս. Ղուկաս ճոխաբար կարգէ հովուաց այս զարմանալի դէպքս պատմելնին այսինքն ի Բեթլեհեմի այրն երթալնին և այս բաներս լսելնուն զարմանքն, և յետոյ նորէն ածելով զմեզ առաջնին աւետարանին աեղն՝ ուր պատմութիւնն ընդհատեալ էր՝ հովուաց ետ դառնալն զլուցէ ի մարդ անտի։ Աւետարանչին այս ոճն աեսնելով՝ հաստատուի մեզ Սրբոյն Ամբրոսիոսի կարծեաց վերայ, որոյ հաւանականութիւնն ալ արդէն ակն յայտնի աեսանի։

Մարիամու Մկրտչին Յնանեցւոյն յառաջ մեկնած լինելն պաշտպանողներն՝ Սրբոյն Ղուկայ այս հատուածոյն զատ պատշաճողութեան պատճառներ ալ բերեն նորա երթալն արգարացուցանելու համար. ասելով թէ կուսանաց այս պարագայից առեն մեծ ոչ գտանէին, որ ըստ ինքեան յայտնի է: Եւ սակայն Մարիամ յաչս ազգականաց իւրոց արգէն ամուսնացեալ էր, մանաւանդ թէ յղի էս. և կուսութիւնն այնպիսի գաղտնիք էր որ ինքն միայն գիտէր. ուստի և իրեն չքմեղութեան տեղ ոչ ծառայէր: Նմանապէս կարծեմք թէ բաւական պատճառ չէ նաև այլոց ասացածն թէ՝ Մարիամ յառաջագոյն գիտեալով թէ կարապետին Յննդեան ժամանակ ուրախութեան հանդէսներ պիտի կատարուին որք իր առանձին և միայնասէր սովորութեանց հակառակ էին՝ այն պատճառաւ անմեղ և երկչոտ սրտիւնոյ պէս թողել փախել է: Այս բանիս ալ պատասխանեմք որ Մարիամ արգէն շատ լաւ գիտէր միացնել զնորոշումն իւր յաչխարհային զբօսանաց՝ պատշաճողութեանց նրբին զգայութեան հետ զոր ունէր՝ որպէս վկայեն Հաբէլ, և այն գողարիկ փութոյն հետ զոր ըզգայր ի սրտին առ ազգական մօրն իւրոյ Աննայի որ էր Եղիսաբեթ: Ուստի գարձեալ ասեմք թէ ինքն այն առեն Թողած մեկնած է քահանայապետին անէն՝ երբ Եղիսաբեթ բոլորովին վտանգն անցոյց. և ամենեցուն զարմանքէն և գովեստներէն ինքզինքն ձնղոպրելու համար՝ Յուգայի այն լեռնակողմանքն Թողոց՝ Նոր Եղիսայ այսինքն զՅովհաննէս Մկրտիչ գրկեալն գգուելն պագնելէն և օրհնելէն եաև[14]:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ. ԳԼՒՈՅ

1 Զաքարիա քահանայ ընակեր յԱՅԻՆ ԱՐՈՒսաղեմ երկու փարսախ հեռի դէպ ի հարաւ. Թագուհին Հելենէ եկեղեցի մի շինեց նոյն տան գեանին վերայ:

2 Թէ և Նոյն առեն Հրեաստան հիմակուընէ աւելի բազմամարդ էր, սակայն այնպիսի չոր ցամաք երկիրներ կային՝ որ անմշակ Թողուած էին: Աչեսարանն քաղաքաց մօտ անապատներ յիշատակէ՝ ուր Քրիստոս միայնանայր աղօթելու համար:

3 Վոլնէյ ասէ Թէ Աւորեաց և Պաղեստինու մէջ օթևաններ չկան, այլ քաղաքաց և գիւղից մէջ ընդարձակ իջևաններ կարաւանատեղի անուամբ ամեն ուղևորաց համար. այս իջևաններս քառակուսի շէնք մի է մէջ տեղն գաւիթ կենդանեաց համար, ուր ոչ ուտելու կերակուր կայ և ոչ պէտք եղած կահկարասիք:

4 Աւորեաց մէջ ոչ ոք առանձին ճանապարհորդէ, այլ հարկ է կարաւանի սպասել՝ որ մի և նոյն կողմն գնացող ուղևորներէ կազմի. այս զգուշութիւնս հարկաւոր է Աւորեաց և Պաղեստինու մէջ արաբացւոց վախին համար (Վոլնէյ Ո–ղ–ո–ր–դ–ի–ն ՅԱ–ո–ր–ի–ս):

5 Խաղաղ–ի–ն ընդ յեղ ողջունաւորութեան ձևն՝ զոր Քրիստոս շատ անգամ գործածէր՝ բոլոր արևելեայց մէջ նոյնպէս գործածուի:

6 Եղիսաբեթի ողջունին մէջ ուր Հայերէնն ասէ Երանի որ հաւատացեր էիր եղիր ևն՝ յոյնին և լտ. մէջ ասի Երանի ել որ հաւատացեր եղիր ևն:

7 Այս գիւղի տունս սակաւ մի հեռի է ՅԱյինէ բարերար և զուարճալի հովտի մի ծայրն՝ որ հիմա Ս. Յովհաննու գիւղին պարսէզն է. հոն ի պատիւ Աչեսբերութեան նուիրեալ եկեղեցի մի շինուած էր՝ որ հիմա աւերակ է (Շ–ն–ա–պ–ա–ր–հ–ո–ր–դ–ի–ն Յե–ո–ա–ն Բ–ր–ի–ա–ռ–ո–ն):

8 Այս Թուփս ըստ բուսաբանից կոչի cyclamen odoriferasns (Հերպլոյ Մ–ա–կ–ե–դ–ո–ն–ա–ց–ի Հ. Ռ):

9 Այնչափ առատահոս է աղբիւրս որ բոլոր հովիտն ոռոգանէ և պարարտացնէ. և աւանդութեամբ ասի Թէ Մարիամ ըստեղ այց ելանէր աղբերս՝ որ Յեսուայ առեն Նեփտուա անուանէր, իսկ հիմա Աղբէ–ր Կ–ո–ւ–ի–ն կոչի:

10 Եբրայեցիք չատ ախորժէին պարտէզներու մէջ և ծառերու և սարվինայից ներքև իրենց կերակուրն ուտել որ յոյժ բնական է ջերմ աշխարհներու մէջ օդին զովութիւնն վայելելու համար (Ֆլէօրի. կենցաղ էբրայեցոց):

11 Եմեն բնակող հրեայք մինչև ցայժմ նոյն կճեայ թակոյկներն գործածեն (Նայպուհր, Ո—ղ—որ—ՐԻ—Ն ՅԱԶԲԵՔ):

12 Զաքարիա իջաներ ի տաճէն Աբդեայ ութերորդ քահանայական գերդաստանին նահապետ այս հին ազգատոհմերէս ծակաբ ինացել էին, որովհետև գերութենէ ետև չտեղն Պարսկաստան հաստատուեցան: Իսկ եղիսաբեթ ՅԱհարոնէ և ի Դաւթայ իջաներ (Հ. Վալվերտե վ՚բր՛ Յէռոս Ռբէռոս Հտ. Ա.): Հրեայք զՅովհաննես Մկրտիչ վերադասէին քան զբրիստոս՝ նախ բոլոր կեանքն անապատի մէջ անցուցանելուն համար, և երկրորդ զի մեծ քահանայի մի զաւակ էր. ընդհակառակն զՔրիստոս յաղքատ մերէ ծնանելուն՝ հասարակ մարդ մի համարելին (Ոսկերերան Ներս. Մաթ. Ճառ ԺԲ): — Մահմետականք ալ մեծապէս պատուեն զՅովհաննես Մկրտիչ զոր կոչեն որդի Զաքարիայ հաւքեին Եահիա պէն Զաքարիա. Սաստի պարսիկ բանասեղծն իր Կ՚ԼԻՆԻՆ քերթուածոյն մէջ յիշատակէ զգերեզման Ց. Մկրտչի որ Դամասկոսի մզկիթին մէջ կը պատուէր, և ուր որ ինքն ալ աղօթել է, և յիշէ թէ Արաբացւոց Թագաւոր մի հոն ուխտի եկել է: Աբեալմէլէք խալիֆային այս եկեղեցիս՝ ի քրիստոնէից գնել ուզելով երբոր չեն ուզած տալ 4000 դենարի՝ բռնի յափշտակել է (Հէրպէլոտ):

13 Որոգինեան և սուրբ Բարսղի, Գրիգորի Նիւսացւոյ և Կիւրղի վկայութեամբ հաստատեալ աւանդութիւն մի ասէ՝ թէ Մարիամ յետ ծնանելոյ զփրկիչն՝ տաճարին մէջ կուսանաց կարգն անցնելով քահանայք ուզել են զինքն դուրս հանել, բայց Զաքարիա դեմ դնելով նորա միշտ կոյս լինելն յուցանելուն համար՝ քահանայք սպանել են զինքն: Այլ որչափ ալ յարգի են այս վկայութիւնքս, սակայն իրն մեզ տարակուսական երևի, և կարծեմք թէ Ց. Մկրտչի Հայրն Զաքարիա չփոթած են ուրիշի մի հետ որ է Զաքարիա որդւոյ Բարաքեայ զորմէ ասէ աւետարանն սպանեալ ընդ մէջ տաճարին և սեղանոյ: Այսու ամենայնիւ արաբացիք այս աւանդութիւնս ալ պահած են, և յաւելուն թէ զՁաքարիա հին բևեռկի ծառոյ բունին մէջ դնելով ծառին հետ միասեղ սղոցել են (Հէրպէլոտ Հտ. Ե):

14 Հայրն Վալվերտե ևս յայս կարծիս է թէ Սուրբ կոյս ձնաց ի տան Զաքարիայ մինչև ցծնունդ Ց. Մկրտչի, և Մեսիային նախընթաց կարապետն գրկելէն և օրհնելէն ետև՝ թողուց իւր ազգականներն և դարձաւ ի տուն իւր:

ԳԼՈՒԽ Ը.

Կոչտաւայրն

Մարիամ դարձ արարեալ ի Նազարէթ առանց դժուարութեան նորին ժողովրդական կենաց ձեռն էարկ՝ իւր առաջի գործերն յաւաջ տանելով՝ զորս առ վայր մի ստիպեալ էր թողուլ այն ազնուական տունն եղած ժամանակ՝ ուսոյն սակաւ մի յառաջ մեկնեալ էր: Նորին գարձաւ եղև ինքն իր աղքատիկ տան մանկամարդ ուղղիչն արթուն և փութաջան, բաւական ժամանակ ալ գտանելով աշխատութեանց, աղօթից, սուրբ գրոց ընթերցման, բոլոր իր կենցաղավարութիւնն երկնից հետ լինելով, այնպէս որ Ճիշտ իրեն համար զրուցուած երևին սաղմոսերգուին այն գեղեցիկ և խմաստուն խօսքերն. « Ամենայն փառք գստեր Թագաւորի ի ներքոյ »: Եւ սակայն ի միոյ կողմանէ իւր կուսական յղութեանն յաւաջանալով Յովսէփ մեծ մտատանջութեան մէջ անկաւ. խայթէր տարակոյս ցաւագին տագնապ նահապետին վսեմ և արդար հոգին տանջէին: Զաւաջինն ինքն իր աչաց ոչ հաւատայր, և այլ աւելի արդար համարէը իւր զգայարանաց վկայութեան վերայ տարակուսիլ՝ քան թէ իւր հարսին մաքրութեանն, որ անբծութեան և սրբութեան սքանչելիք թուէը իրեն. և անդամք անձին հարցանէը թէ կարելի՞ է արդեօք որ այսպիսի պարկեշտ ներանձնացեալ բարեպաշտ կին մի՝ որոյ գեղեցկութիւնն անգամ ողջախոհ աչեր խորհուրդս աղդեր, և որոյ սովրական իսկ գործերուն վերայ երկնային կնիք մի գըրոշմեալ երևէր, տպականութեան տեղիք տուած լի-

ցի և կեղտ բերած իր անուանն և կենաց՝ որ ընկեր
եբրև սուրբ և անարատ ընկալեալ էր իւր տունն:
Այս բանս կարելի չէ, ասէր Յովսէփ, սատանայի
Թեւադրութիւն է, և զանազր հայհոյութեան պէս
մաքին դուրս հանել: Բայց Մարիամու վճռակն եր-
թալով յայտնի լինէր, և ինչպէս ասէ Աւետարանն
գոնա՛ ղդացեալ այսինքն թէ բոլոր Նազարէթ խմ-
ցաւ նորա ծոցւոր լինելն. և Յովսեփայ աղգական-
ներն որ իրին էութիւնն ոչ գիտէին, և թէ որպիսի
սուրբ կապանօք միացեալ էին այն երկու ամուսինք՝
միամտաբար և պարզմտութեամբ բարեմաղթութիւն
ներ առնէին նմա և ուրախակից լինէին. և խեղճ
մարդն ալ պարտաւորէր այս անգութ ուրախա-
կցութիւններս ընդունելու առանց այլայլութեան. և
սոքին եղեն պատճառ որ փայլական պէս յանկարծ
իր միաքն ալ լուսաւորեցաւ՝ թէ ապա իր տեսածն
ալ խաբեական երևոյթ մի չէր: Ուրեմն ինչ պէտք
էր առնել. ընացեալ կին մի իւր քոյին պահէլն՝ օրի-
նաց գէմ մեղանչել էր և իր անձին անարգութիւն,
որովհետև Սողոմոն ալ ասէր « Ով որ ընացեալ կինն
իր քոյին պահէ՝ յիմար է և անմիտ»: Աւրգեօք արձա-
կելո՞ր էր զնա՝ առանց Աչմարիտ պատճառն յառաջ
բերելու. բայց նոյն իսկ արձակուհին միայն՝ մեծ նա-
խատինք լինէր Մարիամու որ յղի էր, և ոչ ոք պիտի
հաւատայր՝ թէ Յովսեփայ պէս պարկեշտ երկիւղած
և խստակրօն մարդ մի առանց ծանր պատճառ ուներ
լուս արձակած լեցի իր կինն՝ յարգանգի կրած զաւա-
կին հետ: Ապա ուրն էր աս բաւղէս եղնելու Ճարն՝ ուր
ամեն գիւղ ընդառաջ ելանէին խայտառակութիւն և
մահ: Յովսեփ ոչ գիտէր թէ ուր կողմն դառնայ, և
վերջին վհատութեան մէջ անկեալ մնացել էր:

Այնուհետև սոյն առենս Սուրբ Կոյան ինքզինք բարե-
բաղդ համարած է՝ աղքատ արուեստաւորի մի հետ ա-
մուսնանալուն համար. վասն զի եթէ ուրիշ մի լինէր

իւր այրն՝ անտարակոյս եղերական մահուամբ մեռա-
նէր և յիշատակն անարգուէր. որովհետև հրեայք
մոլեգին վրէժխնդիր էին իրենց պատուոյն և նա-
խանձու զայրոյթն սարսափելի էր, որպէս ցուցա-
նեն Դինային, Թամարայ և վերջերն անուանի Մա-
րիաննայի գէպքն. « Խիստ իրրև զդժոխս նախանձ,
ասէր Սողոմոն՝ որ լաւ ճանաչէր իր հպատակ ժողո-
վուրդն, և լի է նախանձու սիրտ առն նորա»: Յերաւ
Յովսէփ եղբայրական զօգիւ միացած լինելուն համար
իւր մանկամարդ ամուսնոյն հետ՝ կրեց զայրոյթն և
նախանձու մոլեգնութիւնն հեռի էին ի նմանէ, բայց
ուր Թագուհիք իսրայելացոյ մի պապիւն և հօր մի
կատանքն և անգութ կերպով խաբուած լինելու ըզ-
գացմունքն՝ որ գանձ կարծածն անարգ բան մի լի-
նելն տեսանէ. ուր Թագուհիք մանաւանդ Աստուծոյ
բարձրելոյ սասակապահանջ հրամանն որ օրէնսգիր
մարգարէին բերնովն գոչէր. Կինն չնացեալ մահու
մեռցի: Ահա այսոր համար է որ Յովսէփ հազար տե-
սակ կարծեաց մէջ ծփեալ տատանէր. և բիւր ան-
գամ իր կեանքն զոհելու պատրաստ էր՝ եթէ Դա-
նիէլ մի ելնէր և ասէր իրեն « կին քոյ այդ անբիծ է
և սուրբ». բայց մարգարէ մի ոչ գոյր այս բանս ի-
րեն վստահացնող, և Մարիամ ալ ևս բան մի ոչ ա-
սէր նմա:

Իսկ Յաւետեհանեանն յիւր աստեղազարդ գահոյ-
կի՝ հաճութեամբ հայէր այս արգարոյս վերայ՝ զոր
ինքն իսկ այն խիստ փորձին մէջ ձգել էր՝ յառաջ քան
զբարձրացուցանելն զնա յանձառելի պատիւ իւր
ներկայացուցչին լինելու ի վերայ երկրի. և հրեշ-
տակք ակնկատոյց ի վերայ տանն Նազարէթայ ան-
համբեր սպասէին տեսանել զվախճան այս նեղքին
կռուոյս՝ յորում պարտք և վեհմտգոյն զգացմունք
հոգւոյն մրցելին ընդ միմեանս: Վերջապէս նահա-
պետն այնպիսի վեհմ և գիւցազնական որոշում մի

արար իր մտաց մէջ՝ որ զինքն գրեթէ հրեշտակաց թա-
գուհւոյն բարձրութեանն հաւասարեց: Մինչ դրաւ
զոհելու իւր պատիւն, իւր անարատ քաղաքավարու-
թեան սուացած համարումն, իւր ձեռքն ունեցած
միջոցներն՝ որովք իւր հոգեպատիւ առօրեայ հոյն
ճարէր, և իւր ծննդեան գաւառին օդն՝ որ այնչափ
քաղցր է մանաւանդ երբ երթալով դերեզմանի մօտ
մարգս, զոհելու ասէմ այս ամէն բան՝ որպէս զի պա-
հէ իւր ամուսնոյն համբաւն՝ որ զինքն արգարացնէ-
լու խօսք մի անգամ ոչ հանէր իր բերնէն՝ երբ ար-
տաքին երևոյթքն այնպէս անգթաբար զինքն դա-
տապարտէին: Յովսեփայ մի միայն ճամբայ մնայր
Թողլու զՄարիամ առանց մատնելու զնա՝ իւր ընտա-
նեաց գտաքննութենէն ալ ազատելով զինքն որոյ
վերջին կարճը մահաբեր լինել նմա. և այս ճամբայս էր
Թողլու հայրենիքն և ինքզինքն տարագրելով երթալ
մեռանիլ 'ի տար աշխարհ, և իւր վերայ առնուլ ազ-
գականաց առելութիւնն՝ այնպիսի ամուսին մի երե-
սի վերայ Թողլուն համար: Պարտութիւններ կան որ
քան ղյաղթութիւն փառաւոր են, և կան այնպիսի
ցաւեր՝ որ եթէ մարդ համբերութեամբ կրէ՝ Աս-
տուած մարտիրոսաց հաւասար պսակօք վարձատրէ
զնոսին. Կուսին փեսին գաղտնի զոհն ալ սոցա կար-
գէն էր: Իւր պարտքն խոնարհութեան հետ միացնե-
լու համար՝ յանձն առաւ յառաջագոյն այն նախա-
տինքն զոր պիտի ընդունէր յիւր ազգակիցներէն
երբև վատ և գաժան մարդ առ կին իւր, երբև հայր
անգութ առ որդին, երբև մարդ անխիղճ և անհա-
ւատ. յանձին կալաւ իւր մերձաւորաց անարդանքն
և Մարեմայ ազգականաց մահուշտի առելութիւնն.
և որոշեց իւր իսկ ձեռօքն իւր բարի համբաւոյն պը-
սակն իւր գլխէն խլել և արկանել յոտս Ա.յինորիկ՝
զոր թեթև յանդիմանութեամբ մի ևս ոչ ուզէր վըշ-
տացնել՝ հայրական գորովալից սիրով զնա սիրելուն
համար:

Ոսկեբերան ոչ յագի ոչ կշտանայ Սրբոյն Յովսե-
փայ այս գեղեցիկ և աշխուժական վարմունքին վերայ
զարմանալէն և հիանալով ասէ. « Հարկ իսկ էր որ
Փըրկչին հնորհքն մերձեցած ժամանակ՝ աշխարհիս վե-
րայ մինչև այն աստէն երևեցած կատարելութենէն՝ ա-
ւելի ևս կատարելագունին նշաններն տեսնուէին: Ինչ-
պէս որ արևն ելած ժամանակ արևելք պայծառ լոյ-
սովլուսաւորին մինչդեռ տակաւին նորա ճառագայթ-
ներն հորիզոնին վերայ երևցած չէն, այսպէս ևս Յի-
սուս Փրկուտոս 'ի կուսական արգանդէ ծագելէն յա-
ռաջ՝ դեռ չծնած զաշխարհս լուսաւորէր: Եւ ահա
այսոր համար էր որ իր աստուածային ծննդենէն յա-
ռաջ՝ մարգարէք ուրախութեամբ ցնծային յարգան-
գի մօր իւրեանց, կանայք մարգարէանան, և Յովսէփ
դերմարդկային առաքինութիւն ցուցանէ »:

Մեք այս մասիս մէջ աւելի Ոսկեբերան հայրա-
պետի մտաց հետևիմք՝ քան թէ Սրբոյն Բեռնարդո-
սի՝ որ համարի թէ Յովսէփ անձամբ անձին հաստա-
տութենէ Յիսուսի Փրկուտոսի ծննդեան խորհրդոյն, և
տեսանելով զՄարիամ յղի, իր առ նա ունեցած խո-
րին յարգութեամբ՝ ամենևին ոչ տարակուսեցաւ
թէ նա ինքն էր Եսայեայ նախաձայնեալ հրաշալի
կոյսն: « Այս այսպէս հաւատալով՝ ասէ նոյն Սուրբ
վարդապետն, ուզեց հեռանալ 'ի Կուսէն 'ի խոնար-
հութենէ սոսկալով, որպէս երբեմն 'ի նոյն պատ-
ճառէ յորդորեալ ասաց Պետրոս առ Տէրն մեր. Ի
բաց գնա յինեն Տէր, զի այր մեղաւոր եմ ես. ուստի
և Սուրբ Յովսէփ որ Պետրոսի պէս խոնարհ էր՝
ուզեց թողուլ զնա և հեռանալ, հաստատապէս հա-
ւատալով թէ նորա յարգանգի կրածն ինքն իսկ
Փրկիչն էր աշխարհի »:

Այս մեկնաբանութիւնս՝ որ յոյժ բարեպաշտա-
կան է և արժանաւոր այն հռչակաւոր վարդապետին
եկեղեցւոյ՝ որ իրեն առ Տիրամայրն ունեցած սիրոյն

և եռանդեանն համար Աննևաևուհեր ապատաւոր Մա-
րիամու անուանն սատարաւ, ասելի յարմար է միջին դա-
րու ներանձնական գաղափարաց՝ քան թէ եբրայա-
կան սովորութեանց. որ և Աւետարանի խօսքն ձիշդ
քննութեան առնելով անյարմար լինելն յայտնի
երևի: Վասն զի Աւետարանի այս հատուածս այնչափ
պարզ է՝ որ շատ հնարք պէտք է ի գործ ածել զայն
մթագնելու համար: Յովսեփայ զՄարիամ թողուս
խորհուրդն՝ այն ի մեզ եղած բնական երկիւղն զգաց-
մունքն յառաջ ոչ գայր՝ որ յետս մղէ զմեզ սրբա-
զան նիւթոյ մի մօտեցած առնելս, այլ պատձառէր
կարեկցութեան և պարտուց գաղափարին: Իւր
խնդձն ոչ ներէ նմա իւր ձորձոնին ծածկելոյ զան-
ցանս կնոջն՝ զոր ինքն յանցաւոր հաւատայ, զանցանս
ասեմ որ արժանի էր մահու պատուհասի առ եբ-
րայեցիս. բայց ինքն արդար բարի և գթած լինելով
ոչ կամի առակել զնա:

Եթէ Սրբոյն Բեռնարդոսի մտաքն առնումք՝ հրեշ-
տակին խօսքն անիմաստ և պատրուակական լինէր՝ որ
անկարելի է. « Մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄա-
րիամ կին քոյ, ասէ բանբերն Յաւիտենականին, զոր
ոչ բնաւ բծաւորեաց արատ մարդկային. քանզի որ
ի նմայն ծնեալ է ի Հոգւոյն սրբոյ է: Ահա լսելով
Յովսէփ՝ աւելի ևս իր անարժանութիւնն պէտք էր
ցուցանել, սաստգապէս խմանալով որ Մարիամ յի-
րաւի կրէր յարգանդին զԱրարիչ համագոյիցս:
Պէտք էր այլ առաւել բացատրել իւր խնդձն, որ
այն խօսքն լսելով աւելի ևս զօրանալոց էր: Պէտք
էր ինդրել որ երկնային պատգամաւորն առ ինքն
մատուցած փառաւոր բաժակն՝ քան զինքն աւելի
արժանաւորագոյն մահացուի մի տայ: Ահա ոչ, բնաւ
այսպիսի բան մի ոչ խնդրէ. այլ մանաւանդ անդէն և
անդ իւր մատց մրրկին դադարի, իւր հոգին խաղա-
ղի, և իւր անձին մէջ տիրէ այն քաղցր և անխռով
անդորրութիւնն որ յաջորդէ սաստիկ մրրկաց:

Ահա մեր կարծեացս առարկութիւն բերեն ոմանք
ասելով թէ Մեսիայի համար եղած գուշակութիւն-
ներն ծանօթ լինելով Յովսեփայ՝ որպէս և ամենայն
հրէից, ինչո՞ պէտք էր գիտել թէ Մեսիայի գալուս
ժամանակն մօտ է. և Սրբոյ Կուսին անբծութեան
ալ տեղեակ գոլով՝ ինչո՞ այն վհատութեան մէջ տեսնե-
լուն պէս՝ պէտք էր իմանալ թէ նա յարգանդի իւ-
րում կրէ զՔրիստոս աշխարհի: — Սակայն գիտելու է
որ փրկագործութեան խորհրդոյն վերայ եղած մար-
գարէութիւններն հասկնալն այնչափ դիւրին բան
չէր՝ ինչպէս կարծուի: Վասն զի ժողովրդեան հրէից՝
կամայն է որ Եսայեայ՝ Իմմանուէլի փառաւոր թա-
գաւորութեան վերայ գրած պլաբանական նկարա-
գրութիւնն ծուռ իմանալով, և կամ իրենց շահասէր
խորհուրդներէն խաբուած՝ այն ամէն գուշակու-
թիւնները ժամանակաւոր և աշխարհային մեծու-
թեանց վերայ մեկնէր. որով և ժողովուրդն ալ որ
արդէն խստապարանոց ազգ մի էր՝ սխալ ձամբու մի
մէջ մտած լինելով՝ ոչ ևս անտի յետս գառնալ ախոր-
ժէր. որով և իրենց մտաքն Աստուծոյ օծեալն կամ ա-
ռաքեալն և կամ պարզապէս խօսելով Մեսիան՝ ցան-
կալին ամենայն ազանց՝ պիտի լինէր օրէնսգիր, զօրա-
վոր հզօր բանակաց և հզօր և ահարկու թագաւոր մի
որպէս զՍողոմոն: Նոյն իսկ առաքեալք երկար ժամա-
նակ այս սխալ կարծեաց մէջ էին, և իրենց մտաց հա-
կառակ երևէր տեսանել թագաւոր միխռնարհ և ան-
փառունակ՝ աննշան և խաղաղ իշխանութեամբ միայն
պերճացեալ. և նոյն իսկ աստուածատեսան քաղաքն մը-
տած առեն ևս՝ ուր իրենց տէրն մտանէր ի մահ եր-
թալու համար՝ իրենք դեռ մեծապայծառ թագաւո-
րութեան յուսով և նշուլափեղ ոսկեզնիկ երաշնե-
րով իրենք զիրենք խաբէին, և նորա յաղ և յահեակ
կողմն նստելու փառքն իրարու ձեռքէն յափշտակել
ջանային. և Տէրն մեր սակաւ աշխատանք չկրեց նոցա

այս սխալ կարծիքն ուղղելու և պատրոպական միաքն բժշկելու՝ որ միշտ հակամետ էր նեսթորական և աշխարհային իրաց անճոռնի սահմանին մէջ թարթափիլ՝ ուրոյ վարժած էին դպրաց և վարիսեցւոց փառասէր երազատեսութիւններուն և վարդապետութիւններուն որ անմիտ աւանդութեանց վերայ հիմնեալ էին։

Այլ եթէ առաքեալք՝ այն երկնաղթեցիկ մարգիկն՝ որ հիմունք պիտի լինէին քրիստոնէութեան, և դիւրը ցերեկ Մեսիային հետ լինելով նորա այնչափ հրաշագործութիւններն տեսնելով հանդերձ՝ այնչափ գժուարութիւն կրէին իրենց 'ի մանկութենէ սատյած նախապաշարմունքն 'ի բաց թողլու, ինչպէս կարելի էր Յովսեփայ ինքն իրեն և առանց երկնային օժանդակութեան այս մտածմունքս իր մտքէն հանել։ Աւետաւորին հոգած խոչը ըզգեսան ամենևին նմանութիւն չունէր Յուդայի թագաւորին ծերոնեայն. և մտքէն անդամ ոչ անցանէր թէ Մեսիան հասարակ ժողովրդեան գասէն պիտի ծնանի. իսկ Գալիլեայի գալով քան զամենեսին աւելի յետին գասուն էր, և ոչ ոք այնոր վերայ մտածէր. « Բննեա և տես, զի մարգարէ 'ի Գալիլեէ ոչ յառնէ » ասէին օրինաց վարդապետք առ աշակերտս Քրիստոսի։ Իրաւ մարգարէք ևս յանուանէ գնեթլեհեմ Յուդայ նշանակէին Մեսիայի ծննգեան տեղն որ Տոհմ հացի նշանակ. և բարեբունիք մեկնիչք դրոց քան զմարգարէս աւելի յառաջ երթալով նոյն իսկ այն քաղքին թագն ևս նշանակէին՝ ուր պիտի ծնանէր [1], բայց Յովսէփ այնչափ խոնարհ էր որ և ոչ մարդն անցուցանէր թէ այս բարեբաղդութիւնս իրեն պիտի հանդիպի, և իր խեղճ անակն պիտի լինի այն գերապանծ թագաւորին պալատն. Մարեմայ խորհրդական լռութենէն ալ բան մի ոչ կարէր գուշակել [2]։

Իսկ Յովսեփայ այն խորհուրդն որ մտածէր կայսն

իւր ընտանեաց գոլն գարձուցանել՝ սպարզապէս իրուրևիցէ յարգանաց համար՝ որպէս ասեն ոմանք լինելոյն ասուածածաբանից Սրբոյն Բեռնարդոսի կարծեացն հետևելով, անկարելի բան էր հրեից ազգին նկատմամբ՝ որ սատակի կատածոտ էր կանանց պատուոյն վերայ։ Մանաւանդ որ Մարիամ որը լինելով անմիջական հայր և մայր չունէր, այլ իր մերձաւոր ազգականաց իշխանութեան ներքև էր՝ որք ամենքն ալ խաղաղասէր մարդիկ չէին, և շատերն ալ արդէն ատածած էին իրենց մանկահասակ ազգականին՝ անծանօթ նազովացւոյ մի հետ ամուսնանալուն համար. որով հաւանական էր թէ գոհ պիտի չլինէին Յովսեփայ բերած պատճառներուն, և գիւրաւ պիտի չհաւատային թէ յարգանգի Կուսին յղացեալն ինքն իսկ Մեսիա Թագաւորն է, և շատ ապացոյցեր պիտի բնառէին այս խօսքիս ճշմարտութեանը հաւատալու համար։ Եւ այս պատճառաւ խեղճ Յովսէփին եկաւ պիտի առնչին ծերոց տաճարին առջև երևնալու՝ որպէս զի զինքն տիպեն այսօրինակ վարմանց բուն պատճառն ցուցանելոյ. որովհետև պարզ ապահաւանի կամ կինն արձակելու խնդիր մի չէր իրն, այլ մէջտեղն զաւակ մի ալ կայր որ մօտ էր ծնանելու 'ի Մարեմայ՝ որ աղնուական տոհմէ էր և անյարմար կերպով ամուսնացած, ինչպէս որ մտածէին նոքա որք ըստ Սրբոյն Հերոնիմոսի հետամուտ լեալ էին ամուսնանալ Յովակիմայ ժառանգ գեղեցիկ և մատաղ օրիորդին հետ։

Այս ամէն հարցափորձէս երկու հետևանք պիտի երևնէր. կամ այն էր որ Յովսէփ պիտի լռեր և իւր կիւղածութեան պատճառն պիտի չյայտներ՝ և այն առեն վճիռ պիտի երևնէր իրեն նորէն իւր կինն առնելու, և չեսթ այնորիկ ոչ ևս բաժնուելու [3]. և կամ պիտի ստիպուեր երդմամբ հաստատելու թէ այն զաւակն յԻւրմէ չէ. և այնու ծնանելու մանուկն իւր

հօրէն չճանաչուելուն համար՝ անյարմար լինէր որ և է պաշտօնի, և իւր ծնունդն անհարազատ սեպուե-
լով՝ և չկարենար մտանել ոչ յաղգային ժողովս, ոչ
ի հասարակաց ուսումնարանս, ոչ ի տաճարն և ոչ
ի ժողովարանն։ Եւ նոյն իսկ իւր յաջորդներն ալ
չկարէին վայելել զառանձնաշնորհութիւնս հրէից՝
մինչև ի տասներորդ սերունդն՝ այն իրենց վերայ դը-
րոշմեալ նախատանաց պատճառաւ. և ինքն հնդիկ
թարխայի մի պէս՝ որ պիղծ ցեղ մի համարի առ նոսա՝
տուն և տեղի և իւրաւունք ոչ կարէր ունել, և իւր
մօրն տուեալ դատակնիքն իր և իր յաջորդաց ձակ-
տին վերայ զարնուած խարանագրոշմի լինէր՝ կա-
յենի նման։ Բայց ալ աւելի հաւանական է՝ որ այս
ասացածներէս և ոչ մին պիտի հանդիպէր. վասն զի
իր աղգատոհմին Դաւթի վայրագ յաջորդներն՝ ալ
լաւագոյն պիտի սեպէին իրենց ձեռաքն իսկ դաշոյնի
հարուածով մի զկոյսն սպանանել քան թէ այնպիսի
նախատալից անարգանօք իրենց ցեղին աղնուակա-
նութիւնն արատաւորել։ Ասյօրինակ վերաբերու-
թեան օրինակներ սակայ հանդիպած են, և այսօր իսկ
հանդիպին Հրէաստանի նաև Արաբիոյ մէջ [4]։

Ուստի Յովսէփ զգօն և գթասիրտ լինելով այս եր-
կու սրոց մէջ չձգեց զինքն՝ տեսնելով որ վերհանձնու-
թիւնն լաւագոյն ճանապարհն էր։ Ասյսոր համար
միտքն դրաւ Թողուլ լքանել զհայրենիս և զամու-
սինն սիրելի բայց կասկածելի, որ իրենց սուրբ հար-
սանեացմէ եաև՝ իրեն այնչափ քաղցր և երջանիկ
ընծայել էր զկեանս աչխարհի։ Երբ բաժնուելու վայ
էր՝ և իւր մենացեալ սենեակն առանձնացած՝ ան-
հանգիստ քուն մի ննջէր՝ հրեշտակ Տեառն երևեցաւ
նմա և ասաց. « Յովսէփ որդի Դաւթի մի երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քոյ, քանզի որ ի
նմայն ծնեալ է ի Հոգւոյն սրբոյ է։ Ծնցի որդի, և
կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժո-
ղովուրդ իւր ի մեղաց իւրեանց »։

Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի՝ երկիր ե-
պագ անհասանելի խորհրդոց աստուածային տեսչու-
թեանն. քանզի հրեշտակական տեսիլն փարատեալ
էր ի մտաց նորա զամենայն խէթ կասկածանաց և
զամենայն տարակոյս. և այնուհետև հայեր ի Մա-
րիամ որպէս ի Մայր հանդերձելոյ փրկչին որ ծնա-
նելոց էր ի նմանէ, և առեալ լինքն զկինն՝ ոչ ևս
այլ խորհեցաւ մեկնիլ ի նմանէ։

Սուրբ Յովհան Ոսկեբերան հարցանէ Թէ ինչ պատ-
ճառաւ հրեշտակ Ամենակալն ի տեսլեան մանուանդ
երևեցաւ Յովսեփայ յերազի, քան Թէ յայտնապէս
յարթնութեան նորա՝ որպէս երևեցաւ հովուաց,
Զաքարիայի և Կուսին, և պատասխանէ ասելով.
« Վասն զի Յովսեփայ հաւատքն մեծ էր և չուներ պէ-
տըս այլ աւելի պայծառ յայտնութեան. Կուսին
յայտնապէս երևելուն պատճառն այն էր՝ որ առ
Զաքարիա զրուցածներէն աւելի մեծ և անհաւա-
տալի լուրեր ունելով իրեն տալոյ՝ հարկ էր որ կա-
տարուելէն յառաջ լինքն իմանայր զնոսին աւելի
հանդիսաւոր աւետեաք և շքեղ յայտնութեամբ։ Իսկ
հովիւք այլ աւելի պայծառ յայտնութեան կարօ-
տէին՝ վասն զի տգէտ և տխմար մարդիկ էին։ Գալով
Յովսեփայ՝ որ Մարիամու յղի լինելնէն տեսնելով՝ սըրտ-
մաշուք հոգերու և կասկածանաց մէջ անկեալ էր,
և փափաքէր որ ձեռք տուող մի գտանիցի իրեն տըրտ-
մութիւնն յուրախութիւն փոխարկելու, այնոր հա-
մար հրեշտակին յայտնութիւնն ցնծութեամբ ըն-
կալաւ։։ Նախախնամութեան այս բանած ձամբայն
կարի իմաստութեամբ էր. վասն զի այսու Յովսեփայ
առաքինութեան գերազանցութիւնն յայտնի եղև, և
աւետարանապատում վկայց աստուածութիւնն այլ ա-
ւելի պայծառ երևեցաւ և հաւատալի ընծայեցաւ՝
որք ցուցանեն մեզ զայրն զայն արդար՝ ի նոյն յու-
մանս պաշարեալ՝ զրոս պիտի զգայր որ և իցէ մարդ
ի նմանօրինակ դէպս [5]։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ Ժ. ԳԼՈՒԽ

1 Ուստի՛ դայ Մեսիան. — Յարբայական քաղաքէ Բեթլեհեմի Յուդայ. — Ո՞ր են ծնողք նորա. — Բեթլեհեմի Պէրճ-Աբպա կոչուած Թաղին մէջ (Թալմուտ Երուսաղէմ):

2 Բայց թէ ինչու համար Մարիամ ալ ան ոչ ասեր Յովսեփայ տարակոյսն լուծելու համար. տես՝ ի Մեկնութեան Մատթէի Մխիթարայ Աբբահօր էջ 19:

3 Սահմանադրութիւն Մովս. հա. Բ. գիրք Ն:

4 Պատմէ Նայսուհր թէ Եմենի սրճանոցի մի մէջ արաբացի մի իր աղջիկ զաւկին վերայ թեթև կասկածի խօսք մի լսելով տուն դառնալն և իր զաւակն զարնել սպաննելն մի արար: — Նպոլիսի դիպուած մի պատմէ Ջերամէ Բեթլեհեմացի այրի կնոջ մի վերայ զոր իր հայրն և եղբարքն բռնի դուրս քաշելով եկեղեցիէն հրապարակին մէջ սպանին ծանր կասկածի մի համար:

5 Ոսկերերան Ճառ Դ. տես և ս՝ ի վարս Յիսուսի Քրիստոսի՝ ի վալվերաեէ, հա Ա:

ԳԼՈՒԽ Ժ.Ա.

Մարիամ՝ ի Բեթլեհեմ.

Սակայն արդէն նոյն ժամանակ աւիւրարիչտ պետուրիւնն [1] իւր արծուէգլուխներն անկեալ էր աշխարհիս մինչև վերջին սահմաններն, և հռոմայեցիք բոլոր աբևելեայ երկիրն իբրև՝ ի յանոյն բռնած էին. սարմատացիք իբրենց անապատներուն մէջ դողային, և Ասիոյ հեռաւորագոյն ժողովուրդք՝ ինչպես խաղաղասէր սինէացիք՝ Չանգիսասը գետափներէն զրկէին կեսարու՝ նորա հզօր բանակամետութիւնն Հայկեզուն Արգէն եդիպտոս և Ասորիք հռոմէական պատառներ սեպուած էին, և Հրէից Թագաւորն՝ ոսկեզօ գինով նոցա գիւրաբուխ պաշտպանութիւնն գնելով, ուրիշ բան չէր՝ բայց Թագաղարդ գերի մի. ժամանակն հասած էր, Մեսիայի նկատմամբ եղած գուշակութիւններն կատարուելու վերայ էին. հռովմէական զօրութիւնն՝ ի վերջին ծայր բարձրութեան հասած էր, և ըստ հրեական մարգարէութեան Յակոբայ՝ գաւազանն իշխանութեան Յուդայի ձեռքէն ելած էր, որովհետև այն Թագաւորութեան սուրբն ալ որ տակաւին տէրը՝ ի քաղաքն սուրբ՝ ազգին ձեռքն չէր: Եւ ահա այն տաճարն էր որ եզ հրաման Աւգոստոս կայսերէ աշխարհագիր առնելընդ ամենայն սիւեղբս՝ այն ժողովրդոց որ իրեն տերութեան ներքև էին: Այս աշխարհահամարս որ տեղի կատարեալ էր քան զայն որ եղած էր՝ ի վեցերորդ հիւպատոսութեան քեռորդւոյն Յուլիոսի կեսարու [2], ոչ միայն սիւեղ բովանդակէր մարդկանց թիւն, այլև նոցա ստացուածքն, և երկիրներուն ընտանեան որակութիւններն, որ և պիտի լինէր հիմն նոր հարկապահանջութեանց և ըստ այնմպիտի գրուէր հպատակութեան տուրքն [3]:

Հռոմէական դերահիւպատից վերայ պարտք դրուե-
ցաւ՝ որ իւրաքանչիւրն իր գաւառին մէջ գործա-
դրել ապ կայսերական հրամանն [4]: Սեստիոս Սա-
տուրնինոս Ասորեաց դերահիւպատան սկսաւ նախ 'ի
Փիւնիկիոյ և 'ի Կիլէսիրիոյ՝ որ Ձոխ և մարդաշատ
նահանգներ լինելուն՝ երկայն ժամանակաւ և ծանր
աշխատութեամբ աւարտեցաւ. այս գործոյս գաղա-
փար մի կարէ տալ մեզ՝ այն անդլիացւոց ծանօթա-
դրոյն գիրքն որ Doomesday-book կամ Դրաձաւագրու-
թիւն կոչուածոց անուանի՝ զոր Աչխարհակալն Գու-
լիելմոս առնել տուաւ Եւրոպիոյ մէջ բոլոր իւր պե-
տութիւնն ստորագրել տալով, հռոմէական աշխար-
հագրէն հաղար տարի եղեալ: Հռոմէական գաւա-
ռին հպատակ թագաւորութեանց՝ և 'ի նոցանէ կա-
խեալ չորրորդպետութեանց աշխարհամարն՝ կեսա-
րուս հրամանէն ձիշդ երեք տարի յետոյ աւարտե-
ցաւ [5], և վերջապէս կարգն Բեթլեհեմի եկն՝ ձիշդ
այն անմոռանալի ժամանակին ծննդեան Փրկչին. այն-
պէս որ կեսար և իւր հրամանաց գործադիրք՝ առանց
գիտելոյ հլու և կոյր գործիք եղեն աստուածային
տեսչութեան, և հռոմայեցւոց ամբարտաւանու-
թիւնն և ընչաքաղցութիւնն ձեռնտու լիներ կատար-
ման մարգարէութեանց. վասն զի մարդիկ չարժին՝
բայց Աստուած է որ առաջնորդէ:

Երևի թէ ըստ հին սովորութեան՝ հրէայք իրենց
անուանքն արձանագրէին տակաւին ըստ տանց և ըստ
ցեղից: Դաւիթ 'ի Բեթլեհեմ ծնեալ գոլով իր սե-
րունդն իրենց ծննդեան քաղաքն համարէին զայն և
խանձարուրք իրենց գերդաստանին, ուստի իրենց
անունն և իրենց կալուածոց վիճակն ծանուցանելոյ
համար՝ ըստ հրամանի կայսերական հրովարտակին,
ամենքն հոն ժողովեցան:

Աչխոնն աւարտելոյ վերայ էր. հեղեղատք մեծ շա-
ռաչմամբ գահավիժէին ի խորս հովտաց, հիւսիսայ-

լին հողմն փչէր բարձրաբերձ բևեհինեաց մէջ, և եր-
կինք մախրագոյն ամպերով ծածկած՝ մեռեալ ձիւն
գուշակէին: Հռոմայ Թուականին 748ին [6] սխոսր և
մուխ առաւօտուն՝ նազարեթացի մարդ մի ուղևո-
րութեան պատրաստութենէն զբաղած երևէր՝ զոր
ուշացնելն անշուշտ իր ձեռքն չէր, թէպէտ և ժա-
մանակն Ձմերոցութեան յարմար չէր, և իւր ման-
կամարդ ամուսինն ալ չատոնց 'ի վեր ծոցւոր էր, և
զոր զգուշութեամբ զետեղեց հանդարտիկ և հեղուկ
իշուն վերայ, որով ախորժին Ձանապարհորդել սո-
վորաբար կանայք Յարևելս [7]: Թամբին մի կողմն
կախուած էր սիրայէ հիւսուած զամբիւղ մի՝ որոյ մէջն
էր իրենց Ձամբու պաշարն՝ արմաւ, պաղատիս թզոյ,
չամիչ և գարեղէն բլիթներ, և Ռամլայի հողէ փարչ
մի աղբիւրէն կամ հորէն ջուր առնելոյ համար, իսկ
միւս կողմն եգիպտական տիկ մի: Ուղևորն յուսն
զարկաւ պայուսակ մի՝ որոյ մէջ քանի մի կտոր լա-
թեր կային, մէջքն գօտևորեց, այծենիկ շինուած վե-
րարկուին մէջ պլլուեցաւ, և մի ձեռքն կոր ցուպ մի
և միւսովն իշուկին պախուրցն բռնած՝ որոյ վերայ
ալ մանկամարդ կինն հեծեալ էր՝ անկան Ձամբայ,
աղքատիկ տունն առանց պահապանի թողլով և Նա-
զարէթի նեղ Ձամբայներէն սկսան վար իջնել և ամեն
ծանօթք և դրացիք բարի Ձանապարհ և յաջող գարձ
մաղթէին և ասէին Երթայք խաղաղութեամբ: Ջմե-
րուան մշուշ առաւօտուն այսպէս Ձամբայ ելնողներն
Յուդայի թագաւորաց գարմէն և յայորդիներէն էին,
Յովսէփ և Մարիամ՝ որ հեթանոս և օտարոտի իշ-
խանի հրամանաւ երթային իրենց անծանօթ անունն
գրել տալ՝ տէրութեան մէջ եղած փառաւորագոյն
անուանց կարգն:

Այն խիստ եղանակին, մանաւանդ Պալեստինու
մէջ՝ այս Ձանապարհորդութիւնս շատ նեղութիւն
պատճառած է անշուշտ ուղևորաց, մանաւանդ Սբր-

բոյ Կռւսէին իր վիճակին նայելով, և սակայն ՀԱՒԿ մի պանդատ մի չՀանեց իր բերնէն. այս սակը և փափկիկ մանկամարդս՝ կարիճ սլատտա և վսեմ հոգի մի ունէը, մեծռւթեան մէջ ոչ հպարտանայը, ուրախռւթեան մէջ իր չափն պահէը, և գԺբաղդռւթեան ալ լռռւթեամբ Համբերէը: Աղնիւ Մարիամ: Իսկ Յովսէփ որ խորին խորհրդոց մէջ ընկղմեալ նորա քովէն քայլէը՝ հին պատգամաց վերայ մաածէը՝ որ չորս Հազար տարիներէ 'ի վեր Փրկիչ մի խոստանային աշխարհի, և Բեթլեհեմի ճամբուն վերայ ուր երթային Հռոմայեց ազն Հրամանովն՝ Միքեայի խօսքերն կրօրՃար. « Եւ դու Բեթլեհեմ տուն Եփրադայ սակաւաւոր, իցես լիւ նել 'ի Հազարաւորս Յուդայ. 'ի քէն ելցէ ինձ լինել իշխան իսրայէլի, և ելք նորա 'ի սկզբանէ աւուրց աշխարհի [8] »: Յետոյ դարձուցանելով զաչս իւր իր ազքատին տղային վերայ և իւր պարկեշտ ամուսնոյն՝ որ իւր վիճակին Համեմատ պարզ և վայելուչ Հագուած էր, Յիշէր Եսայեայ հուչակաւոր մարգարէութիւնն. « Իբրև զարմաւ 'ի ծարաւուտ երկրի՝ ոչ գոյր նորա տեսիլ և ոչ փառք... այլ տեսիլ նորա անարգ՝ նուաղեալ քան զամենայն որդւոց մարդկան [9] ». և Հոս սկսէը նահապետն լմնանալ Աստուծոյ խորհուրդներն իւր Օծելոյն վերայ:

Հինգ օր վաստակաբեկ ուղևորութենէն ետև՝ վերջապէս աւետն Հեռուանց ղԲեթլեհեմ ղքաղաքն Թագաւորաց՝ որ բարձր գրից վերայ շինուած էր՝ շուրջ պատեալ զուարթ բլուրներէ՝ որ այգեօք ձիթաստանեօք և կանաչ կաղնեաց պուրակօք զարդարեալ էին: Հոն երևեցան ուղտաբարձ ժանուարներու մէջ նըստած կանայք՝ ծիրանի վերարկուներու պլլուած և գլուխնին ձերմակ քօղերով ծածկած, երիտասարդ ձիաւորներ Հագուած սպուած և սանձարձակ արագացի նժոյգներու վերայ աշտանակեալ, ծերոց խումբ մի սպիտակ և գեղեցիկ ջորիներու վերայ Հեծ

ած՝ որ ծանր իրարու Հետ խօսելով՝ որպէս զի նին դատաւորս Իսրայէլի՝ եկանէին 'ի քաղաքն Բեթլեհէմ, ուր արդէն օրերով յառաջ Հասած էին խուռն բազմութիւն Հրէից: Քաղաքորդին դուրս քառակուսի չէնք մի երևէը՝ որոյ ձերմակ պատերն բլուրն ծածկող ձիթենեաց դունաթափ կանաչին մէջէն դուրս ցայտէին, որ Պարսկաստանէն եկած կարաւաններուն իջևանն լինելոյ էր. փեռեկեաւ գունէն ներս նայելով տեսնուէին ընդարձակ դարպասին մէջ բազմութիւն գերեաց և ծառայից որ երթային և գային. և յիրաւի այս չէնքս ուղևորաց իջևանն էր: Յովսէփ իշուին գրդելով յառաջ մղեց յորոյ վերայ նստած էր Կոյսն՝ և գնաց 'ի հոն սկսաւ երթալ՝ յոսալով որ ժամանակին Հասնելով կարասցէ փոքրիկ սենեակ մի բռնել՝ որ առաջին Հասողին իրաւունքն էր և ոչ ուժիք ղլանային [10]: Բայց պանդոկն լի էր ուղևորօք և վաճառականներով, և պարապ տեղ մի չկար: Թերևս ծանր վարձք մի տալով գտնուէր, որ րովէհետև պանդոկապետն հրեայ էր և հրեայ բեթլեհեմցի. բայց եկ տես որ Յովսեփայ քսակն ալ շատ նիհար էր:

Ուստի արտաւմ ախուր դարձաւ Մարեմայ քովէն՝ որ համակերպութեան անոյշ ծիծաղով ժպտեցաւ, և նորին բռնելով խեղճ իշուն պախրցին՝ որ հոգնած ուժերնին անկանելու վերայ էր՝ փոքրիկ քաղքին փողոցներն և հրապարակներն թափառիլ սկսաւ՝ յուսալով որ գթասիրտ քաղաքացի մի գտնէ՝ որ Աստուծոյ սիրոյն համար իրենց ապաւինելու տեղ մի ընորհէ. բայց 'ի զուր, մարդու մի հոգն չէրև: Երեկոյին սուր և ցուրտ հովէն կոյսն սասկիկ նեղէը, և թեպետ բան մի ոչ խօսէը, բայց երեսին գոյնն նետեր էը և հազիւ ինքզինք բռնէը: Յովսէփ կարի վշտացած՝ պարապ տեղ ապաւէն մի ընտռէը. և տեսաւ որ այն դուռն որ իր երեսն 'ի վեր ամարդուներամբ փակէը

էին՝ աւելի հարուստ օտարականներու առջև կը բա-
ցուէր: Շահասիրութիւնն որ հրէից գլխաւոր ախտն
է՝ որչափ խստացուցած պիտի լինի իրենց սիրտն՝ որ
Մարեմայ վերձակն ալ տեսնելով՝ դուռն մի ոչ զգացին
իր վերայ այն իւր ընչաքաղց հայրենակիցներն: Գի-
շերն մօտ էր, մուրճն կոխէր, և այն երկու ամուսինք
տեսնելով որ իրենց վերայ խղճացող մի չկայ, և իրենց
նախահաւուց քաղքին մէջ ապաւէն մի գտնելէն
յետոյ կարած՝ Բեթլեհեմին դուրս ելնելու հարկա-
դրեցան, երթալու տեղերնին ոչ գիտելով, և իրենց
առջև եղած առաջին ձանապարհն բռնելով դաշտն
հասան՝ որ վերջալուսոյն տակաւ լուսոյն դեռ սակաւ
մի կը նշմարուէր:

Հիւրատեաց քաղքէն սակաւ մի հեռի հարաւային
գին ժայռի մէջ փորուած մուրճ այր մի տեսին՝ մուտ-
քըն դէպ 'ի հիւսիս, որ երթալով նեղնար և բեթլե-
հեմացոց խաշանց հասարակաց փարախն համարէր՝
ուր երբեմն նաև հովիւներն ալ ապաւինէին մրրիկ-
ևոյ գիշերներուն. ուստի գոհանալով զԱստուծոյ որ
զիրենք այս վայրի ապաստանարանս առաջնորդեալ էր՝
Մարիամ վար ելաւ և Յովսեփայ թևն մտած գնաց
նստաւ մերկ քարի մի վերայ՝ որ նեղ և անհանգիստ
նստարանի ձև մի ուներ՝ այրին ներսերն:

Չոն այն ցուրտ քարին վերայ՝ երբ աստղերն կէս
գիշեր ցուցանէին՝ անմեղ և անբիծ Կոյսն առանց ցա-
ւոց և երկանց և առանց ուրուք օգնութեան՝ ծնաւ
մանուկ մի իրեն նման փափկիկ համբերող գթասիրտ,
և որպէս Աստուած ամենիմաստ հզօր ըզրաւոր և յա-
ւիտենն կան, Ազնկալութիւնն նախաձայնեալ 'ի Յա-
կոբայ, Մեսիայն մարգարէական գուշակութեանց,
Օծեալն քրիստոնէից, և զոր Դաւիթ իւր Տէրն կոչեց,
զորև պաշտեն հրեշտակք 'ի բարձունս երկնից թևաս-
քողելով զերեսս իւրեանց, Փրկիչն ազգի մարդկան՝ որ
գոնէ Մովսիսի պէս կնիւնէ պրոտեւայ որբան մ'ալ

չունելով՝ թաց յարդով լի մուրճն դրաւ մայրն, զոր
նախախնամութեամբն Աստուծոյ հոն մուտացել էին
Եգիպտոսի կամ Ասորեաց ուղտապաններն՝ վաղ քաջ
յառաւօտուն երթալու փութալով. Աստուած ինչ-
պէս որ պատրաստէ երկնից թռչնոց բոյնն՝ նոյնպէս
պատրաստել էր նաև իւր Միածին Որդւոյն անկող-
նիկն. որոյ համար գոչէ Սուրբն Բեռնարդոս. « Ա՜հ
Մարիամ ծածկէ՛ ծածկէ՛ այս նոր արեգական ճառա-
գայթներն, դիր զինքն մսրոյն մէջ, փաթթէ այս աս-
տուածային մանկիկին ալքատիկ ցնցոտեացդ մէջ. այս
ձորձիկներն մեր ճոխութիւնքն են, Փրկչիս ցնցոտիքն
քան զծիրանիս առաւել պատուական են, և մուրճս
այս փառաւորագոյն է քան զաթոռս Թագաւորաց.
և աղքատութիւնն Յիսուսի Քրիստոսի քան զամե-
նայն գանձս մեծագին »: — Եւ Սուրբն Բասիլիոս
Աստուածամօր սրտին մէջ եղած եռանդեան և զմայլ-
ման խորհրդոցն Թափանցելով, նկարագրէ զնա երբև
մայր որդեսէր և երբև զսուրբ երկրպագու խօսելով
առ որդին իւր այսպէս. « Ի՞նչ անուն տամ ես քեզ,
գոչէ գուստրն նախահարց՝ խնարհելով առ մանկիկն
իւր Յիսուս, ինչ անուն տամ ես քեզ — մահկանա-
ցո՞ւ — բայց ես զքեզ աստուածային զօրութեամբ
յղացայ: — Աստուա՞ծ — բայց դու մարդկային մար-
մին մի ունիս. — արդեօք խնկո՞վք անուշիւք քեզ մեր-
ձենամ, թէ իմ կաթս քեզ ջամբեմ. արդեօք գորո-
վափութի՞ւ մօր խնամքն քեզ մատուցանեմ, թէ 'ի հո՞ղ
խոնարհեալ պաշտօն քեզ հարկանեմ »:

Ահա այսպէս Կոյսն նախասահմանեալ Եսայեայ
մարգարէութիւնն կատարելով 'ի լոյս ընծայեց իւր
Անդրանիկն, և Բանն մարմին եղև՝ ամեն բան դարմա-
նելու և զամենայն ինչ կրելու համար:

« Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ բացօթեայգք,
որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւ-
րեանց: Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և

փառք Տեառն ծագեցին առ նոսա, և երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն. Մի երկնչիք, զի ա- հաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր, 'ի քաղաքի Դաւթի. և այս նշանակ ձեզ, գտանիցէք մանուկ պատեալ 'ի խան- ձարուրս, և եդեալ 'ի մսուր: Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ օրհնէին զԱստուած և ասէին. Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն [11] »:

Արդէն այն աքանչելի տեսիլն աներևոյթ եղեալ էր, և երգերն դադրած՝ առաւելն հովիւք իրենց վարա- կաւոր ցուցերուն վերայ յենած ունկն դնէին: Իսկ երբ ամէն ձայն դադրեցաւ, և հովտին մէջ գիշերուան զով քամիէն զատ ուրիշ բան ոչ լսուէր, և երկինքն ալ ապիտակ և լուսաւոր հեռք մի ոչ երևէր՝ որ հրեշ- տակ կարծուի՝ հովիւք խորհուրդ արարին իրարու հետ և ասեն. « Եկայք երթիցուք մինչև յԲեթղեհէմ և տեսցուք զինչ է բանս այս որ եղև »: Ուստի կո- ղովի մէջ ալքատիկ ընծայներ գնելով՝ ինչ որ գտա- նէը իրենց հիւրն, և խաչանց պահպանութիւնն միայ- նութեան հրեշտակաց յանձնելով՝ աստիճանաւոր գետ 'ի Դաւթի քաղաքն սկսան երթալ. և 'ի ձանա- պարհին երկնային ազգութեամբ մարն այն գոհն՝ ուր Փրկիչն առաւ մի յառաջ ծնած էր, և դարն անդ զԱեսայեայ եգեալ 'ի մսուր. Կայն իբր նորածին զաւկին վերայ խոնարհեալ՝ խորին խոնարհութեամբ և խանդաղատանօք երկիր պագանէը, և Յովսէփ նո- ցա դէմն վերայ՝ պատկառելի գլուխն 'ի խոնարհ՝ հայեր իբր որդեգրեալ զաւկին վերայ որ Աստուած էր. Լուսնոյ քաղցրիկ լոյսն սիւն գործեալ յայրին լուսաւորէը այն գերանդաշ անձինքն՝ որոց չորքանակ կազմէին այրին հարմարապատ պատերն: Իսկ քարան-

ձաւէն գուրս ամէն բան խաղաղ հանգարտութեան և քնոյ մէջ էր այն ատեղազարդ գիշերն [12]: — Հմմ է, հմմ է, կան չեզին իրարու հովիւներն, և պատկառա- նօք 'ի գետին խոնարհեալ առաջն մսրոյ Թագաւորին Թագաւորաց՝ մատուցին ալքատացելոյն և նորածին Աստուածոյ ղևտացին և ղընծայն ալքատին:

Յետոյ սկսան պատմել հրեշտակաց երևելն, նոցա քաղցրաձայն երգերն, և յուսոյ խաղաղութեան և սիրոյ խօսքերն. որոց վերայ Յովսէփ զարմացած ունկն դնէը, և Մարիամ լուսնեամբ լսելով նոցա պարզմտութեամբ պատմածներն՝ ամէն խօսքն սրտին մէջ գրոշմէը: Իրենց պարաքն աւարտելով և պաշ- տօնն կատարելով Յուդայի հովիւներն զԱստուած փառաւորելով ետ գարձան, և այն լեռնակողմերն հրատարակեցին այն սուրբ գիշերուան մէջ հանդի- պած ալքանչելիքն. և լսողներն զարմացած և ակնաբե- կած ասկին մինեք կարելի՞ է այս բանս, միեք Աբ- րահամու առեններէն եմք որ հրեշտակք երևին հո- վուց:

Թերևս այս հովուաց պատմութիւնն եղած է պատ- ճառ՝ զոր նոյն իրիկուն մերձակայ անասուն և խոր հովտին մէջ խօսկին ընդ միմեանս ուղղութ ջուր խըմած առենն այն մենաւոր տղբիւրէն, որ անապատին արաբացւոց ցեղմի զՄարիամ և զՄանուհին աստուա- ծացույց, և Գաղապի սիւներէն միոյն վերայ քանդա- կեցին զանուշակ պատկեր Կուսին Աստուածորգուհին 'ի գրկին, որ և երկոց մասանց Արաբիոյ երեքհարիւր վաթսուն աստուածոց մին համարուեցաւ: Այս քան- գակս մինչև Մահմետի ժամանակն գետ երևէր՝ որ- պէս վկայեն արաբացի մատենագիրք [13]: Եւ անմեղ մանկանց կոտորածէն ետև այս կարճ ցեղն բոլորն միաբան ոտք եղեն, և վրէժխնդրութեան աղաղակաւ յարձակեցան Հերովդէսի որդւոց վերայ՝ նոցա բազ- մութենէն չվախնալով թէ և հռովմայեցւոց հար- կատու էին և 'ի նոցանէ պաշտպանեալք [14]:

ցի մոգերին ումանք՝ որ միշտ աստեղաց չարժմունքն դիտէին՝ ասող մի տեսին առաջին կարգի մեծութեամբ՝ և այնոր տարօրինակ չարժմունքէն և այլ՝ի ատյդ երևութից՝ ծանեան որ Բաղաամայ երկայն ժամանակ յառաջագոյն գուշակած Յակոբայ ասղն էր՝ որ լուսապայծառ պիտի երևէր Կուսին ծննդեան առենն։ Ալոյլ Ֆերաձի հաւաքած պարսից աւանդութեանց համեմատ՝ Զրադաշտ մոգութեան վերջնորոգողն՝ այր իմաստուն և աստեղագէտ, և միանգամայն հմուտ եբրայական աստուածաբանութեան [16], ՝ի Բերսոսի առաջին յաջորդաց ժամանակ և տաճարին երկրորդ շինութենէն ասկաւ մի լեռոյ՝ ծանոյց որ Ասիոյ արևմտեան կողմն (Բաբելոնի նկատմամբ) աստուածահրաշ մանուկ մի պիտի ծնանի՝ի սուրբ և յանարատ կուսէ՝ որ աշխարհս կերպարանափոխ պիտի առնէ. այս ալ յայտելով՝ որ նոյնչան և մինչև այն ատեն անծանօթ ասող մի այս անմոռանալի դէպքս պիտի իմացնէ. և այս աստեղ երևցածին պէս նոյն իսկ մոգերն պիտի երթան ընծայիւք պատուելու զարքայն նորածին։ Ուստի երեք անուանի իմաստունք Բաբելոնի [17] հաւատարիմ և եռանդուն կատարողք կամացն Զրադաշտայ՝ այն ասղն տեսածնուն պէս՝ թմբկօք և գափովք ճամբայ ելնելու նշանն եառուն։ Արմաւենւոյ փայտէ շինուած [18] և գեղեցիկ չինքով զարդարուած Սեվենկեանց քալաքն իրենց ետին թողլով, և ելնելով՝ի Բաբելոնէ՝ ուր անապատի հողմն անբաւ աւերակաց մէջ հեծելով՝ կարծես թէ այն լուռ դերեզկաց կրնկեր Ամվսածնին (Եսայեայ) չարագուշակ պատգամներն, մեկնեցան արմաւենեաց երկրէն և Պաղեստինու ատաղձաց ճամբայն բռնեցին։ Իրենց առջևէն ընթանայր Մեսիայի ասղն, որպէս երբեմն սիւնն լուսեղէն ուղեցոյց իսրայէլեան գումարտակաց վախստէից՝ դէպ աւազածիր եգերս Կարմիր ծովուն։ Այս նոր-

Պատմութեան այս հարազատ և մանրական անցքս՝ որ շատ հետաքրքրական բան է և ընդհանրապէս անծանօթ մնացած է, Սրբոյն Ղուկայ պատմած դերբնականանցիկն հաստատութենէն՝ զոր ընդհատատ Վոլթեզի աշակերտքն անդոնիէ իմաստասէրք և նոցա հետևողքն քան զկատարելոյս անդամ ամբարիշտք՝ առասպելեաց կարգն համարին։ Արաբացւոց այն նորանշան եռանգն՝ որ աւետարանի քարոզութենէն յառաջ զդիցապաշտութենէն ձմեռարին Աստուծոյ պաշտման հետ խառնէին՝ ուրիշ բանէ յադալ եկած չէր կարող լինել՝ բայց եթէ՝ի ծանօթութենէ աքանչելեաց որ եղեն Ննդեան սուրբ գիշերն։

Ննդեան ութերորդ օրն Որդին Աստուծոյ թլփատեցաւ և կոչեցաւ Յիսուս ըստ հրամանի Հօրն յաւիտենական. հարկաւ կնքահայր մի եղած է այս աբարողութեանս մէջ, որպէս և ունէին ամենայն հրեայք, բայց թէ որո՞ւ եղած է այս հրաշափառ վճակս յայտնի չէ. իսկ արարողութենն կատարուեցաւ նոյն իսկ յայրի անդ ուր ծնաւ՝ ըստ Սրբոյն Եպիփանու, և Սուրբն Բեռնարդոս յոյժ հաւանական համարի թէ ինքն իսկ Յովսէփ կատարած է այս պաշտօնս՝ որ միշտ Եղիայի պաշտպանութենն հայցելով կատարուեր, և հրեայք համարէին թէ մարգարէն անտեսանելի կերպով միշտ ներկայ գտանէր [15]։ — Հասարակ ժողովրդէն շատերն՝ հրեշտակայ հրաբրանացն ունկնդիր՝ եկին և երկիր պագին Յիսուսի մանկացեալ խեղճուկ մսրոյն մէջ, և իրենց սև հացէն և այծերուն կաթէն մատն հանեցին. բայց սակաւ մի լեռոյ գերապանծ և մեծահրաշ աքանչելեօք՝ նոյն տեղն հասին հեթանոսութենէ դարձողաց նախախայրիքն. հովիւք առաջին եղեն եկողաց մէջ, բայց յետ նոցա գալոց էին իմաստուն և թագաւորք։

Յիսուսի Քրիստոսի ծննդեան առեններն՝ քաղդէա-

տեսիլ ասացաւ՝ որ ոչ հպատակէր այն անփոփոխ օրինաց՝ որ վարէն զլուսափայլ գունաս երկնից՝ իրեն սեպհական կանոնաւոր չարժումն ի չունէր, այլ մերթ կարաւանին առջևէն երթայր միշտ ուղիղ գծով դէպ 'ի արևմուտք, և մերթ կանգ առնոյր գիշերն օթևելու համար կանգնուած վրանները վերայ, և կարծես թևատարած սաւառնեալ կայր ամպոց մէջ՝ իբրև զասիդ կամ ալպարտոս թռչունն համատարած օդոյ մէջ որոբելով մրափած ժամանակ: Աստուածներն նշան տայր ճշդոյ, որպէս և յերեկոյին ըզնշան բանակ հարկանելոյ [19]:

Վերջապէս Երուսաղեմայ բարձրաբերձ աշտարակներն հեռուէն երևիլ սկսան լերանց լերկ և վէս գագաթներուն հետ միատեղ. և մինչդեռ ուղտք և գրաստք իրենց ծարաւն անցուցանէին ճամբուն վերայ եղած աւազանէն, մոգերն զարմացմամբ և երկիւղիւ իրար անցան, վասն զի այն աստղն աներևոյթ լինելով 'ի բարձունս երկնից ծածկեալ էր, ինչպէս բանաւոր արարած մի որ մօտ վտանգ մի տեսանէ և փախչի [20]:

Մոգերն խռոված և շփոթած՝ հին ժամանակին նաւորդաց պէս որք սև ամպ մի բևեռային աստղն իրենց աչքէն գողցածին պէս առնելիքնին ոչ գիտէին, սակաւ մի ժամանակ մէջերնին խորհեցան Թէ ինչ նշանակէր իրենց լուսապայծառ ուղեցուցին յանկարծակի աներևոյթ լինելն. արդեօք իրենց ուղևորութեան վերջն հասած էին, արդեօք վրաններն հարկանելո՞ղ էին նոյն տեղն օթևելու համար: Եւ յիրաւի կարելի մանաւանդ Թէ հաւանական խակ էր՝ որ նոր ծածկուելն Թագաւորն որում երկրպագելու համար մինչև Տիգրիսի յափանցն եկեալ էին՝ Երուսաղեմայ մէջ էր: Երկնից Աստուածն ասէին անօգուտ տեղ հրաշքն ոչ երկարէ, և հոն գագրին անաարակոյս ուր մարգկային հնարք բաւական են: Հոգ չէ ասել 'ի մէջ

ծածկուիլն և զմեզ Թողուլն, մեք առանց նորա օգնութեանն ալ կարեմք այսուհետև գիւրաւ գտանել մեր բնառածն իւր պետութեան մայրաքաղքին մէջ: Նոյն ծածկեալ Մեսիա Թագաւորին որբանն գտնելոյ համար՝ ուրիշ բան պէտք չէ մեզ՝ բայց եթէ մտնել այն առաջին փողոցն՝ որոյ յատակն կանաչ ոստեր սերմանուած, վարդի ջրերով ուռոգուած և ոսկեթել հրաշալ կերպասներով զարդարուած է. երբայեցւոց տաւիղներուն ձայնն, պարերգուաց ղուարթութիւնն և ցնծութեան աղաղակներն բաւական ցուցցեն մեզ Թէ ո՛ր կողմն դառնալու ենք: Այսպէս մտածելով մարակեցին իրենց երիվարներն, և մտին քաղքին այն դռնէն ներս որ բարձր և անառիկ համարեալ աշտարակով պատսպարեալ էր, և երկու կարգ շարուած բարբարոս զօրաց մէջէն անցնելով՝ եկան ի նախկինն Սիոն:

Տխուր էր Երուսաղեմայ տեսքն՝ և ժողովուրդն լուռութեամբ իւր բանին գործին զբաղած՝ ուրախութեան և ցնծութեան նշան մի ոչ երևէր. միայն Թէ ատա անգ խումբ խումբ մարդիկ ժողոված՝ այս ուղեւորներս գիտէին՝ որ իրենց երկայն ազիատակ և հանգրիձեալ հագուստներէն, մէջքի վարգագոյն հարուստ գօտիներէն, իրենց բազկաց անգին գոհարներով զարդարուած բահուանդներէն [21], և մանաւանդ իրենց դիմացն այրական գեղեցկութեան գծագրութենէն՝ երևէր Թէ արքայից արքային նախարարներէն էին: Ճամբուն վերայ այս արևելքէն եկած ուղևորներս մերթ ընդ մերթ ուղտերուն երկայն ճիտէն վար ծռելով՝ իրենց ճամբուն վերայ դիզուած բազմամբոխ ժողովրդեան հարցանէին Թէ ուր էր արդեօք հրեից նոր ծածկեալ Թագաւորն՝ որոյ աստղն տեսել էին 'ի Բաբելոն: Բայց ժողովուրդն Երուսաղեմի ապուշ ապուշ նոցա երեսն 'ի վեր նայելով՝ ոչ գիտէին Թէ ինչ պատասխան տան այս հարցմանս... Թագաւոր հրեից...

և ահ էր այս Թագաւորս: Իրենք Հերովդեսէն զատ ուրիշ մի ոչ ճանաչէին՝ զոր և սրտանց ատէին, և մեծաւորս նմա զաւակ եղած չէր: Մոգերն ևս զարմանալով որ իրենց հարցմանց պատասխան տուող և գիտցող մի չկայ, և ոչ ալ հանդիսի և ուրախութեան նշան մի՝ որտեղ մխուր այն բազմամբոխ ճամբայն բռնեցին՝ որ Դաւթի հին և խաթարեալ պալատն հանէը, և նորա անշուք և աւերակ գարձած գաւթին մէջ իրենց վրանն կանգնեցին:

Սակայն մոգուց տարօրինակ խօսքերէն լուռ չկնկոց մի բրգաւ քաղքին մէջ զոր շուտով Թագաւորին ականջն հասուցին այն կամակատար և արծաթով որսացեալ տորուկներն՝ որ այս բանիս համար կարգեալ էին, և որ երկրաքարշ ղեռուններու պէս ամեն մեծամեծաց քովը վխտան: Խռովեցաւ Հերովդէս, և իր չարագուշակ խորհուրդներով կնճռեալ և խորշոմեալ ճակատն սև ամպ մի պատեց՝ փոթորկալից երկնից նման. « Իբրև լուաւ արքայ Հերովդէս խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա »:

Հրեից Թագաւորին խռովելուն պատճառն յայտնի է. որովհետև ինքն Հերովդէս՝ էր ոչ օծեալ ի Տեառնէ և ոչ ընտրեալ ի ժողովրդենէ. կառպարիչս և գիւցընկէց Կամպիտոլիոնի չորքափակէն քաղուած գափնիոնին պսակեալ՝ այն սարկուելեան հարկատու Թագն ալ փչերով հիւսած էր, այն Թագն որոյ մէն մի տերևներն լերանց ծանրութեամբ ոսկով գնած էր՝ հարուստներու խնայութենէն և աղքատաց կթոտութենէն յափշտակելով: Այնոր համար աւելի էր մեծամեծաց՝ որոց գլուխն կարել տայր փոքր կասածի մի համար, զարհուրելի իրեններուն՝ որոց գիակովքն գերեզմաններն լցուցանէր, քաւութիւն հանայից՝ որոց իրաւունքն ոտնակոխ արարեալ էր, արհամարհ ժողովրդեան՝ իւր կրօնից երկբայական և ծննդեամբ օտարազգի լինելուն համար. և այս ամենայն հակառակորդաց դէմ ուրիշ ղօրութիւն չունէր՝ բայց իր շողոքորթ դրանիկներն, իր արիւնկզակ սրիկայներն իր հացկատակներն և սակաւաթիւ հերովդիանոսաց հարուստ աղանդն՝ որք իր ձախութեամբն շլացեալ էին. սոքա էին միայն իր ձեռնտուներն բոլոր ալգին գործունեայ եռանդուն և համարձակ աջերուելութեան դէմ: Շատ անգամ իւր յամառ հպատակներն իր երեսն զարնէին իւր անօրէնութիւններն՝ որ վնիշն կեսարու բարեկամ համարէր. նենգամիտ և հզօր աղանդն փարիսեցւոց՝ արհամարհական ծիծաղով մերժել էր հաւատարմութեան երդումն զոր նա պահանջէր, եսսեանք ալ որ պատերազմաց մէջ կարիճ և զարհուրելի էին՝ փարիսեցւոց օրինակին հետևեցան, և օրէնուսոյց վարդապետաց եռանդուն և նախանձայոյզ աշակերտներն՝ սակաւ մի յառաջ կէսօր աւեն իրենց վըէժխնդիր տապարներով ջարդել ջախջախել էին այն ոսկեղէն արծիւն՝ զոր տաճարին գլխաւոր դրան վերայ դնել տուած էր: Ամեն դիէն գաւաճանութիւններ լինէին իրեն կենաց դէմ, և ամեն անգամ որ ըստ դիպաց կամ կամքն տուա համբաւներ իր մահուան վերայ հեռաւոր գաւառներու մէջ ելլէր՝ ժողովուրդն անգէն և անգ իր աջերուելութեան նիւթ գտնելով հրավառութեան հանդէսներ կատարէր, զորս Հերովդէս իրենց արեամբն մարել չկրնար:

Այս քաղաքական տարաձայնութեանց մէջ՝ երբ ապստամբութեան հոգին զօրաց մէջ ալ ճարակել էր, և խռովարարաց այնպէս երևէր թէ ժամանակն հասած և պատրաստ հասունցած է իրենց վախճանին հասնելու՝ և ահա հասանէին Յերուսաղէմ այն իշխանազուն օտարականներն՝ որ բոլոր պարսկային ճախութեամբ գային և համարձակ հարցանէին հրէից նորածին Թագաւորն՝ որոյ աստղն տեսած էին: Հերովդէս ապշած զարմացած մեծ մտածման մէջ անկաւ,

և անցած յիշատակներն միաքն բերել ջանայր, իւր տան համար եղած չարագուշակ նախանձայնութիւն. ներն միաքն գային՝ զորս փարեսեցիք կամաւ ազգին ձեզ սփռած էին, և տեսանողաց պատգամներն զորս մինչև այն տեն բանի տեղչէր գրած՝ իր միաքն գառնային: Այն քաջամարտիկ Մեսիայն և Դաւթի սերնդէն յառաջ եկած մարգարէն՝ որ իւր յաղթանակներն պիտի տանէր յԱրևմտից յԱրևելս՝ սկսաւ իրեն մատանեալ անհանգստութիւններ տալ, իւր միաքն խռովեղն ծնեալ Աստուածն չէր՝ այլ նորածին իշխանն: Եւ որչափ որ մտածէր այնչափ աւելի համոզուէր՝ որ այս խորհրդաւոր դէպքս կապակցութիւն մի ունին այն ընդարձակ գաւառանութեան հետ՝ որոյ վախճանն ուրիշ բան չէր՝ բայց եթէ իր թագաւորութեան աւերակաց վերայ ծածուկ և նախանձ ընդդէմ իշխանութիւն մի կանգնել: Եւ միթէ 'ի զո՞ր երբև զջուր հեղեալ էր Մակաբայեցւոց առիւնն՝ առանց կնոջն և զաւակացն սրատարոփ ողոքանացն ևս ունկնդիր լինելոյս. պարապ տե՞ղ ուրեմն այնչափ երևելի մարգկանց գլուխն կորել տուել էր, և իւր բռնաւորութեան երկաթի անուոց ներքև ջախջախել էր զնոսա որք իրեն դէմ հակառակէին. միթէ Դաւթի տանն առջև 22 թագաւորական գահն էլնելոյս ճամբայն գնեցուցնելոյ համար էր՝ իւր հոգին և պատիւն զոհելն, որով գիչերուան քնոյ հանգիստն անգամ կորուսել էր՝ որով իր սպանել տուած մարգկանց արիւնաշաղախ ուրուականներն զինքն ահաւոր երազներով խռովէին... Եւ միթէ այն իշխանութեան գաւազանն որ այնչափ սուղի նստած էր իրեն և դեռ ևս սրիւն ծխէր՝ ջախջախ և անիծեալ եղջիւր մի պիտի լինէր իր ձեռքն, և մահն զայն պիտի փշրէր իւր գերեզմանին վերայ... Արդեօք իւր անցքն մրրկալից գիչերոյ օդերևութի մի պէս պիտի անցնէր անհետանա՞ր այն երկրին վերայ որուն նախկին

փառքն նորէն պիտի պայծառանար իր մահուանէն ետև: Եւ այն ժողովուրդն որ զինքն այնչափ սաէին և իր բարերարութիւններն անգամ մերժէին՝ արդեօք ո՞րչափ սիրով պիտի ընդգրկէին և բարեյօժար պիտի ծառայէին այն նորածին արքային որ իրենց նախկին թագաւորաց սերնդէն յառաջ գայր: Այս վերջի մտածութիւնս գառն օչինդրի պէս կաթիլ կաթիլ կաթկթէր այն յուսահատ և գառնացեալ ծերոյն սիրտն. որովհետև նոյն իսկ իր անգթութեանց մէջ ալ՝ սիրելի լինելոյ պէտք և փափաք մի զգայր, որ որչափ տարօրինակ երևի՝ սակայն այսպիսի բնութեան մէջ մարդկանց բնական է, որ կարծես թէ հակառակամարտ կրնաք թրծած խմորած էր, և որ իր ամենէն աւելի բռնաւորագոյն կրից հետ որ էր իւր ամբարհաւաճութիւնն՝ որ մարդուս հոգին կեղեքող քան զամենայն կիրս անգութն է, ուներ նաև քանի մի ազնուական յատկութիւններ:

« Ո՞ր և իցէ մանուկս իշխան աշխարհի և թէ մարդարէ բարձրելոյն հարկ է նմա մեռանել... և մեռցի » գոչէց Հերովդէս այս խորհրդածութիւններէս ետև, գոնէ այսօր ապահովապէս չիջուցանեմ այս արկար կայծիս հետ 'ի միասին՝ այն ամեն երազայոյս փառքն զոր յերազեցին տեսանողքն Իսրայէլի վասն ապագային. լուռ ինչ փոյթ է որ իմ մեռնելէս ետև երթայեցիք գերի և խեղճ պիտի լինին. որովհետև արհամարհեցին իմ փառքս, անուանս նախնացուցին և քաղաքագիտութիւնս ոչ ընկալան: Այս ապերախտ ժողովուրդս յիշէ արդեօք որ իրեն համար քանի պատերազմաց մէջ արիւնս թափեցի, սովոս ժամանակ զերեներ կերակրեցի, չքեղ ապարանքներով քաղաքս զարդարեցի, և Բարձրելոյն տաճարն նորոգեցի: Բայց այս բաներս իրենց աչաց առջև բան մի չեն. հրեից առջին ես միշտ օտարազգի Հերովդէսն եմ, Հերովդէս նորագարձ, Հերովդէս անազգորոյն: Եւ ես

թողում որ ուրիշ մի գայ ու զիրենք մեծացնելով և երջանկացնելով իմ յիշատակս ջնջէ վերցնէ. ոչ. ա՛ տելի եմ բայց անփառունակ լինել ոչ կամիմ, և եթէ Թագաւորութեանս աստղն անյաջող եղև, գոնէ պիտի չանամ որ իրենց համար ալ երկնից վերջին աստղն լինի... Բայց Թերևս այս Դաւթի որդին դեռ մատաղ և անմեղ մանկիկ մի է... Բայց ուսա՛ է ինձ այս վատ գիտութիւնս: Գոնէ ողիա այն հանճարեղ կինն որ Թագաւորելու կերպն լաւ գիտէը՝ Յուդայի տան կոտորածին ժամանակ՝ մի միայն մանկիկ մի մոռցաւ՝ որ տակաւին յորրանս էր... և սակայն այն եղև իր արքայութիւնն և կեանքն վերցնողն. ուսա՛ ամենայն չանքս գործածելու եմ որ մին անգամ չազատի... Բայց ո՞ր արդեօք ծածկուած է հրէից այս նորածին Թագաւորն՝ զոր աստղք հռչակեն, և այս լերք և աներես նախաբարներս գան որոնել զնա մինչև անդամ պալատիս դուռն... արդեօք յիրաւի Յակոբայ նախաձայնած Ակնկալութիւնն է... Թէ աստեղաբաշխից սուտ և նանիր երազներ... Ինչ և իցէ հարկ է սուտգիւ տեղեկանալ:

Այս ասելէն քանի մի ժամ ետև՝ օրինաց վարդապետք և քահանայապետք Երուսղեմի գահերիցուԹեամբն 'ի Ժողով կոչեցան, և շատ զարմացան երբ այնպիսի անհատ իշխանի մի բերնէն այս հարցումն լսեցին Թէ Մեսիան ուր պիտի ծնանի, Որ ժևաևիցի Քրիստոսն:

Անդէն և անդ ամենքն միաբերան պատասխանեցին ի Բեթլեհեմ Յուդայի. և այն չարաճճի ծերերն՝ հռոմայեցւոց բարեկամն աւելի կծելու և անհանգիստ առնելու համար՝ 'ի վերայ բերին Թէ Դանիէլի եօթներորդաց վերջին եօթներորդն ալ աւարտելու վերայ էր, ուսա՛ և Մեսիայի ժամանակն ալ մօտ էր: Բայց Երուսղէս այս տարտամ ծանօթութիւններով գոհ չեղև, վասն զի կամէր գիտել Թէ ուր պիտի կըշ-

ռէր իւր հարուածներն. ուսա՛ որոշեց որ եթէ կարելի էր նոյն իսկ մոգերէն հարցանէ տեղեկանայ մանկան ծնած ճիշդ ժամանակն որ աստեղ երևելուն հետ հաւասար էր: Եւ խորագէտ քաղաքագիտութեամբ փոխանակ հրապարակաւ ունկնդրութիւն տալու այն պարսից իմաստնոցն՝ որ կերպիւ իւիք հաստատութիւն տալ էր այն չընկոցին՝ զոր հարկ էր մոնաւանդ լռեցնել, Թագաւորն գաղտ կոչեաց զնոսա և ստուգեաց 'ի նոցանէ շատ հարցափորձիւ զժամանակ աստեղն երևելոյ, ուր Ոսկեբերան յաւելու. « Մանրամասն տեղեկութիւնն զոր խնդրէ մանկան վերայ չէ, այլ աստեղն, որպէս զի ամենայն ջրջահայեցութիւն բանեցնէ իր գործելու դաւադրութեան մէջ »: Եւ գիտել ուզածն իմանալով արիւնարբու գազանն մարդասիրութեամբ և հաճոյական կերպով օտարականներն ճամբայ դրաւ ասելով. « Երթայք 'ի Բեթլեհէմ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա »:

Ուստի մոգերն որ՝ որպէս ամենայն արք վսեմամիտք 'ի խորհուրդս և 'ի գիտութիւնս Թարթափեալք, բարի և անկեղծ մարդիկ էին և ոչ քնաւ հակամէտք չարիս կասկածելու ուրիշի վերայ, որչափ ալ տեսանէին Թագաւորին անձնիշխան կերպն և անգթութիւնն՝ բայց սուտութիւն և նենգութիւն ոչ կասկածէին, վասն զի Թագաւորք պարսից սովորական ժամանակ առջի սովրած բանն ճշմարտախօսութիւնն էր, եզոմայեցւոյն խօսքին հաւատացին, և անցանելով ապարանից չքեղ գաւթներէն՝ որ արքայից արքայի պալատան հետ իր պերճութեամբն մրցէր, Թէպէտ այն կամարակապ սրահներուն մէջ ոչ երևէր այն ոսկի զանգակն՝ որ աղերսարկուաց զանգակ [23] կոչէր, Թողլն քաղքին Բէրգերա [24] կոչուած նոր Թաղն, և իրենց վրանները բառնալով միւսանգամ կարեցին ան-

ցան այն սուրբ քաղաքն՝ երթալու համար այն տեղն՝ ուր կարծուէր թէ Մեսիայն ծնած է. և նոր ընկալօ-
ղը թաւարոնին ձոխ յալթանակներով զարդարուած պատին քովէն անցնելու ժամանակ, որոյ անսովոր
չքեղութենէն փարիսեցւոց երգիծաբանութեանց անսպառ նիւթ եղած էր, հանդիպեցան Հերովդեսի որ Թրակացի և գերմանացի սիգաւորներէ պատեալ պաշարեալ երիքով քաղաքն երթայր [25]: — Իսկ իրենք Թամասկոսի դռնէն դուրս ելլին, և յետոյ ձախ դին կառնալով մինչ՝ի խոր անդնդոց պաշարեալ ճամբու մի մէջ յորում տեղ տեղ բլուրներ կային անցնելու: Գրեթէ ժամու մի ճանապարհ հեռացել էին մայրաքաղքէն, և այն տեղն ջրհորէն ջուր արբուցանէին իրենց ուղտուցն, յանկարծ իրենց եղած տեղւոյն գագաթնակէտն լուսաւոր կէտ մի տեսին երկինքն որ ուղղակի և չեշտակի իրենց վերայ իջանէր մօտալ մի պէս: Ահա աստղն է, ուր աստղն է գոչեցին սպասաւորներն ուրախութեամբ. իրաւ այն աստղն է կրկնեցին տերերն՝ նոյնպէս զարմացմամբ. և այս անգամ ապահով լինելով թէ բռնած ճամբայն ուղիղ է՝ նոր եռանդեամբ յառաջ երթալ սկսան:

Այն ինչ պատրաստուէին մտանել ՚ի քաղաքն Դաւթի՝ և ահա աստղն դէպ ՚ի հարաւ չեղելով կանգ առաւ ամայի քարայրի մի վերայ՝ որ գիւղական գոմ մի երևէր, և վայր իջնելով գրեթէ Աստուածածային մանկան գլխոյն վերայ հանգեաւ: Այն աստեղ անշարժ գիրքն տեսնելով որոյ քաղցր ճառագայթներն լուսեղէն սիւն գործելով այն ժայռի մէջ փորուած այրին վերայ բոլոր շրջակայքն լուսաւորէր, մոգերն մեծ վստահութիւն առին, և այլ ևս ոչ ինչ նշանի կարօտ չեղեն ճանաչելու որ այն մերկիկ և աղքատիկ մանկիկն էր Թագաւորն Մեսիա՝ խեղճ մսրոյ մէջ պառկած, և մայրն առընթեր նմին, որ որչափ ալ գեղեցիկ էր և ընտրեալ՝ սակայն յայտնի երևէր իր վիճա-

կին աղքատութենէն: Եւ Աստուած որ կամէր յամեռ առնել զխոստաբանութիւն հրեից՝ հեթանոսաց պաշտօնեայն փոյթն և հնար հաւատքն նոցա ընդդէմ կարգելով թոյլ չտուաւ որ մոգուց հաստատ հաւատքն գեղեխի՝ այն սուրբ ընտանեաց նորանշան նուաստութենէն տեսնելով:

Արևապաշտ հեթանոսներն՝ զորս պիտի փրկէր Յիսուս Քրիստոս՝ աւետեաց զաւկներուն հետ միաւեղ, նոյն յարգութեամբ մինչ Յիսուսի աղքատիկ տունն՝ ինչ յարգութեամբ որ մտանէին իրենց կրակատուներն որ ստորերկրեայ հնոցներու վերայ շինուած էին, և յորս շրջէին աստեղազարդ գուներ [26]. և իրենց երկրին արարողութեանն համեմատ՝ սակաւ մի հող առնլով նոյն գետնէն ճակատներն գըրին, և ապա հարուստ ոսկեզարդ նուիրանշանով երկիր պագին նորածնեալին, ինչպէս որ այն ատեն բոլոր արևելեայք իրենց աստուածոց և տէրանց երկիր պագանէին: Եւ յետոյ բանալով իրենց անուշ խնկոց գանձերն՝ ուր պահած էին Մեսիայի համար բերած ընծայներն. հանին անտի զուտ ոսկի՝ որ մեծին Նինուէի մատերէն էլանէր, և անուշահոտ խնկեղէններ զորս ևմենի արաբացիներէն առնուին՝ զանազան պղպեղ և մարգրտի հետ փոխանակելով: Այս խորհրդաւոր ընծայներուն մէջ մարմնեղէն բան մի չկար՝ ինչպէս հրեից ընծայներն. Քրիստոսի ննջարանն՝ որ հրեից ժողովարանին զոհերն ընդունելու գայր՝ գառանց արեամբն պիտի չբծաւորէր. ուստի և մոգերն ալ ոչ անբիծ գառներ կոտրեցին և ոչ սպիտակ երինջներ. այլ մատուցին նմա ոսկի որպէս տէր և իշխան աշխարհի, և կնդրուկ և զմուռս որպէս Աստուծոյ կենդանւոյ:

Այս գեպքս Սրբոյ Կուսին համար փառաց և պայծառութեան վերջին տեսարանն եղև: Իր կենաց առաջին շրջանն՝ Ճիւնիսարաւի [27] բնակչաց անյշերաս

ղոց պէս՝ տաճարին եղևնեայ և ոսկեղեձեղուն յար-
կաց մէջ անցաւ՝ չուրջ պատեալ յանուշահոտ բուր-
մանց, վսեմ երգոց, և տաւղի և քնարի միաձայնու-
թեանց. երկրորդն լի սքանչելեաք և խորհրդովք՝
երկնաբնակաց և Աստի իշխանաց հետ զինքն ծանօ-
թացոյց. իսկ երրորդ չորեքն ուրիշ ապագայներ
պահուած էին, որ էր ժամանակ հալածանաց, ներ-
քին տագնապներու և անբացատրելի ցաւոց։

Վերջապէս Մոգերն որ այլ ուրիշ բան չունէին
առնելու Հրեաստանի մէջ, և ցանկային ժամ մի յա-
ռաջ իրենց հայրենիքն դառնալ, և քարոզել իրենց
ունեցած յաջողութիւնն և բարեբաղդ հանդիպումն՝
որոյ համար եկեալ էին, պատրաստուեցան մեկնիլ
'ի Բեթլեհեմ. և երբ իրենց խոստմանն համեմատ
կամէին նորէն տեսանել զաբքայն Հերովդէս յեր-
քով իբր պալատն, ծանուցանելու համար թէ ուր
գտեալ էին զՄեսիայն, ահա հրեշտակն Ամենակալն
ազդեց նոցա յերազի՝ այն նենգաւորին անագորոյն
խորհուրդն. և հրամայեց որ ճանապարհէն փոխեն։
Ուստի վոխանակ անիծեալ Հրէին (Մեռեալ ծովուն)
ամուր և վտանգաւոր եղերքէն անցնելոյ՝ որոյ պըղ-
ատոր և ջհացեալ ջրոց երեսն երևի երկնասաստ պա-
տուհասիւ հորձանեալ քաղաքաց ստուերն, դար-
ձուցին իրենց ուղեւորամանին դէպ 'ի ծովն մեծ (Մի-
ջերկրական), և Ասորեաց 'ի գեղեցիկ ծովափանց
անցած աւուն՝ կարծէին թէ իրենց երկրին կամ Շի-
լոաղոյ վարդաստան գաչաերին էին՝ զորս ոտոգեն Եփ-
րատ և գետն մեծ կամ Պէնա-էմիր (Քուր)։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԺԱ. ԳԼՒՈՒ

1 Երբայեցիք այս անուամբ կոչէին զերբութիւն Հռովմայե-
ցւոց՝ որ իրենց միշտ աւելի էր։

2 Աւգոստոս երիք անգամ աշխարհագիր առնել տուաւ պե-
տութեան բոլոր գաւառներուն մէջ. առաջինն իր վեցերորդ հիւ-
պատոսութեան աւուն ընդ Մ. Ագրիպպայ 28 տարի Քրիստոսի
Թուականէն յառաջ, երկրորդն Կ. Մարիոս Կենսորինոսի և Կ.
Ասինիոս Կալլոսի հիւպատոսութեան աւուն 9 տարի Քրիստոսէ
յառաջ, երրորդն և վերջինն առ հիւպատոսութեամբ Սեստոս
Պոմպէոս Ղեպոսի և Սեստոս Ապուլէոս Ղեպոսի Քրիստոսի
Թուականին 17դ տարին։ Սրբոյն Ղուկայ յիշածն երկրորդն է,
և հրամանագրին Թուականն է ինիներորդ տարի Քրիստոսի Թուա-
կանէն յառաջ (Սուետոն յՕկտաւիանոս 27)։

3 Աւգոստոս նոյն աւուն բովանդակ հռովմէական պետու-
թեան վիճակագրութիւն մի յօրինել տայր իրեն իշխանու-
թեան ներքև եղած գաւառաց ճշգրիտ ստորագրութեամբ
այս գրոց և զանազան գաւառաց մէջ եղած մասնական նկարա-
գրութեանց վերայ՝ յիշատակութիւն առնէն Տակիտոս, Սուե-
տոնիոս, և Դիոն Կասսիոս. և իրենց խօսուածքէն այնպէս ե-
րևի, ինչպէս բնագրին մէջ ալ ըսինք, թէ անգլիացւոց Doome-
sday-book կամ Վէճոփբոնիկն ասացեալ գրոց պէս բան մի ե-
ղած պիտի լինի՝ որ բովանդակ Անգլիոյ կալուածոց արձանագ-
րութիւն է՝ զոր ետ յօրինել Գուլիելմոս աշխարհակալ։

4 Տերտուլիանոս Հաստատէ զոյն վասն Սեստոսի Սատուր-
նինոսի որ Ասորւոց երկրին գահերեց էր։

5 Զարմանք չէ որ այս հրովարտակիս կատարումն երիք տա-
րուան մէջ լցացած լինի, որովհետև բոլոր Ասորեաց, Կելեսի-
րիոյ, Փիւնիկիոյ և Հրեաստանի վիճակագրութիւնն ասկէ սա-
կաւ ժամանակի մէջ չէր կարող լինել. գիտեմք որ Յովսէ գրե-
թէ տասն տարուան մէջ կարաց միայն թուել զինք կրելոյ յար-
մար մարդիկն 'ի տասն ցեղս Իսրայելի, ուր Քրիստոսի Ծնըն-
դեան ժամանակ Աւգոստոսի հրամայած աշխարհագրին մէջ՝ ոչ
միայն մարդկանց թիւն կը պահանջուեր, այլ նաև զանազան
գաւառաց երկրին յատկութիւններն։ Վերն յիշուած Գուլիել-
մոսի վիճակագրութիւնն աւարտելու համար երիք տարի պէտք

եղև, թէ և Ակովտիա, Իրլանտա, Կալլեսի գաւառն և նորմանտեան կղզիք մէջն չէին։

6 Յիսուսի Քրիստոսի Ծննդեան Թուականն չատ վիճաբանութեանց նիւթ եղած է. մէք քան զամենեսին աւելի ստոյգ համարիմք Աբռահամ Ըլէքրելը վերոյիշեալ առաջեալ գրոց հեղինակաց կարծիքն՝ որ հաստատուն ընդն ի 25 դեկտ 748 ամին Հռոմայ՝ որ անկանի վեց տարի յառաջ քան այժմեան սովորական Թուականն, զոր ոմանք երեք տարի միայն յառաջ համարին ըստ կարծեաց Բարոնիոսի ուրբաթ օր Հանդիսական է Տեառն մերոյ Ծնունդն։

7 Պալեստինու էշերն գեղեցկութեամբ անուանի են։

8 Միքիա ե 2։

9 Եսայի ՍԳ 2։

10 Հիմա այս հիւղերուս չորս պատերն միայն մնացած են փուչով և կարիճներով լի. պահապանն ճամբորդին ձեռքն բանալին և նաճա մի տայ, իսկ ուրիշ պիտոյքն ուղևորն ինքն հոգալոց է. ուստի պէտք է հետն ունենայ անկողինն և պաշարն (Վըլնէյ Ո—ղ—ոբ. յԱ—ոբէ)։

11 Հովուաց հանդրուանն կամ գիւղն զուարճալի դաշտի մի մէջ է Բեթլհեհեմի քաղքէն քառորդ փարսախաւ հեռի դէպ ի հիւսիս, և հովտի մի խորն որոյ առջև տարածի այն դաշտն ուր արածէին ղնաշխնս իւրեանց ի գիշերին ծննդոց։ Արբազան և արտաքին իմաստուն պատմագրաց խօսքին նայելով՝ միայն հրեշտակաց երեւելն չէզև հրաշալի՝ առ ի ցուցանել զծնունդ Աստուածորդւոյն. այլ ասի նաև թէ այն սուրբ գիշերն Ենգադեայ այգիքն ծաղկեցան, և Հռոմայ մէջ խաղաղութեան տաճարն յանկարծ գետնատապ եղև, և գիւաց պատգամքն լռելրուվին լռեցին. և միայն ծննդեամբ Տեառն մերոյ հալածական եղեն հեթանոսաց չաստուածներն՝ որոց մինչև այն աւուրն նեռեալ էր տալ պատգամս մնոտիս, զոր և վաւելուն երեւակայութեամբ քերթողաբար նկարագրէ Միլտոն։

12 Պարսիկք գիւղիր Ծննդեան կոչեն ֆէլէր պայթար և լռութիւն սակս իջման և երեւման հրեշտակաց (ա՝ Էլերալդ Մոռնտըրան արխելեան)։

13 Պուրքարտ ասէ թէ էլ Ազրաքի անուամբ արաբացի մատենագիրն բազում ականատես վկայից խօսքովն հաստատէ թէ Քասապայի դրան ամենեն մօտ սեան վերայ քանդակուած է կոյսն Մարիամ Հավրեին իսու կամ Յիսուս մանուկն ի գրկին (Պուրքարտ Ո—ղ—ոբ—ՐԻ—ն յԱբ—ոբէ հտ. Ա)։

14 Արաբացի պատմչին յիշատակած այս մանաւոր դէպս գըտանելիք նաև հրեից Թալմուդ ասացեալ գրոց մէջ՝ որ շատ հին գրուած մի է՝ քրիստոնէութեան դէմ կատաղի աւելութեամբ

լի։ Հոն կը պատմուի թէ Հերովդէս մեծն և իւր որդին մեծ պատերազմ մի ունեցան անապատի ցեղի մի դէմ որ պաշտէին ըստ պատկեր Յիսուսի և Մարիամ մօր նորա։ Այս արաբացի ցեղս ուզեց նաև գաղնակից լինել Պաղեստինու շատ քաղաքաց հետ, և մանաւանդ այն քաղքին հետ որ Հայի կոչէր։ Արդ որովհետև հրեայք ալ յիշեն այս անցքս Հերովդեսի վարուց մէջ ապա պէտք էր որ Աստծոյ մանկանց ջարդեն յառաջ եկած լիներ, որովհետև այն ծեր թագաւորն տարի մի միայն ապրեցաւ փըրկչին ծնանելեն ետև։

15 Տես Պատմագիրքը Ի գլ. 10։

16 Ոմանք համարեցան զնա աշակերտ Երեմիայի, բայց ժամանակն ոչ յարմարի. աւելի հաւանական է ասելն թէ աշակերտեալ էր Դանիէլի։

17 Մոգուց աշխարհին վերայ ամեն մատենագիրք ոչ միաբանեն. ոմանք համարին զնոսա եկեալ Յերջանիկն Արաբիոյ խորերէն, այլք ի Հընդկաց՝ որ հաւանական ոչ երևի. հաւանականն այն է որ եկած լեցին ի Պարսից. Գասպար, Մելքոն և Բաղդասար անուններն որ կը տրուին իրենց բաբելընական անուններ են։ Եւ յիրաւի Բաբելոն և այնոր կործանելեն ետև Սելևկիա՝ որ իրարմէ շատ հեռի չէին, հին ժամանակ երեւելի աստղագիտաց գաւառներ էին. և Երուսաղեմի արևելեան կողմն անկանին, և Եփրատայ եզերքէն մինչև յԵրեթլեհեմ քսան օր ճամբայ։ Որոգինէս հմուտ և տեղեակ լինելով ասէ թէ մոգքաստեղագիտութեան զբաղեալ էին։ Նաև՝ Էրպլըզ հմուտ արևելագէտն ստոյգ համարի թէ Մոգք ի Պարսից եկան։ — Մեր Հ. Ղուկաս Ինձիճեան վարդապետն իւր Հնախօսութիւն հայոց գրոց մէջ բաւական փաստերով ապացուցանէ թէ Մոգքս այսքիկ էին ի Մոկաց աշխարհէն հայոց։

18 Սարաքան գիրքը ԺԸ։

19. Ս. Յոհան Ոսկեբերան Ճառ Ջ ի Ս. Մատթ. — Կալկիդիոս հեթանոս իմաստասէր ի վերջ կոյս Գ դարու յիշատակէ զաստղն որ առաջնորդեց արևելեան իմաստնոց առ խանձարուրս Քրիստոսի։ Իսկ վարդապետն վարդապետաց Ս. Աւգոստինոս ասէ. «Նա որ ի մահուն իւրում խաւարեցուցանելոց էր զարեգակն հին՝ ի ծննդեան իւրում երևեցուցանէ աստղ մի նոր։ Ո՞ր էր ապա աստղն այն որ չէր բնաւ երևեալ ի Հաստատութեան, և զոր ոչ ոք կարաց գտանել ապա յերկինս։ Ո՞չ ապաքէն հրաշաճառ բարբառ իմն էր երկնից ի պատմել զփառս Աստուծոյ և զծնունդ կուսի ուրուք»։

20 Այս ջնհորս որ ի վերայ ճանապարհին Երուսաղեմի՝ մինչև ցայսօր կոչի Ջհոր երէց Թոփտորցոյ կամ Ջհոր ասորեղ ի յիշատակ անցիցս (Ճառաղարհ. Յիսուսի Քրիստոսի)։

21 Այս ապրանջաններս (ի պրս. բազուպէնտ) առ հինս աբ-

քունական ցեղի նախարարք թևերնին կրէին. զնոյն կրէն մինչև ցայսօր թագաւորք Պարսից և որդիք նոցա (Մորիեր Ո՜ղ՜ո-բո՜նի՜ն ի Պարս՜ս ե՜ւ Հայս՜)։

22 Պէտք չէ զարմանալ Հերովդեսի երկիւղին և կասկածանաց վերայ Դաւթի ցեղի սերունդէն՝ գիտելով այն ցեղին հնութիւնն և ազնուականութիւնն, որ անցելոյն մէջ ունեցած թագաւորական իրաւունքովն՝ ապագային համար ալ մեծ յոյս և ակնակալութիւն էր բովանդակ հրեից՝ որ զինքն իբրև օտար և յափշտակող ատէին։ Այս երկիւղս միայն Հերովդէս չունեցաւ, վասն զի Եւսեբիոս՝ Եգեսիպպոսի վկայութեամբ հաստատէ թէ նաև Վեսպասիանոս Երուսաղէմայ տիրելէն ետև՝ հրամայեց որ Դաւթի յաջորդներն որոնեն և զամենքն թրէ անցնեն. այս հալածանքս Տրայիանոսի ժամանակ ալ շարունակեր. վերջապէս Դոմիտիանոս այս անուանի տան երկու շառաւիղներն Հռոմ բերել տուաւ՝ որոց պապն էր Ս. Յուդայ առաքեալ. և հարցփորձ առնելէն ետև երբ իմացաւ թէ բոլոր հարստութիւնն երեսունևհինն արտավար հող է՝ զոր ինքեանք մշակէին, նոցա աղքատութեան վերայ վստահացած որով իշխանութեան ակնկալութիւն ունել չէին կարող՝ զիրենք յետս դարձոյց իրենց հայրենիքն։

23 Թագաւորք պարսից նահապետական կերպով իրենց ժողովրդեան դատերն տեսանէին. իրենց գահուն վերուն ոսկի զանգակ մի կախուած էր՝ որոյ շղթային ծայրն մինչև արքունեաց պարսպին դուրն հասանէր. ամեն անգամ որ զանգակն զարնուէր՝ պաշտօնեայք փութային զաղերսարկուն թագաւորին առջև հանելու՝ որ ուղղակի իրմէ խնդրէին զարդարութիւն, որ և անյապաղ կատարուէր (Անթար Ա՜նդր՜ո՜նիկո՜ս)։

24 Բեթզեթա կոչեցեալ քաղաքն կամ նոր թաղն զոր Հերովդես միացուց Երուսաղէմայ հետ՝ տաճարին հիւսիսային դին անկանէր, հոն էր ստորին աւազանն, Պրոբատիկէ կամ ոչխարաց աւազանն և Հերովդեսի պալատն։

25 Պատմութեանս շարքին մէջ այն մատենագրաց հետևեցաք՝ որ համարին թէ Հերովդէս՝ մոգուց բեթլեհէմ երթալու ժամանակ՝ երիքով երթալու համար ճամբայ ելած էր հիւանդութեան պատճառաւ, և ուր ժամանակ մի մնաց. այս կարծիքս Աւետարանի պատմածին հետ կատարեալ համաձայնի. վասն զի եթէ Հերովդէս Երուսաղէմ գտուէր՝ մոգուց դարձին ժամանակ՝ հաւանականապար սոքա զինքն հրեշտակին ազդեցութենէն յառաջ պիտի տեսած լինէին, և սակայն նորա խորամանկութիւնն ճամբուն առաջին հանգուցին իմացան՝ ի հրեշտակէն. Հերովդեսի խելքն իր հիւանդութեան երթալով մոռցաւ մոգերն և նորածին մանուկն, որով նոքա ազատութեամբ

իրենց հայրենիքն դարձան, և սուրբ գերդաստանն ալ ժամանակ ունեցաւ Նազարեթի ճամբայն բռնելու, և յետոյ նաև փախչելու։

26 Այս ոսկեղէն ղրճանակօք գնտերն մեր մանեկաւոր գնտերուն նմանէին՝ որք արևուն ելած ատեն շառաչմամբ թաւալէին. ինչպես որ տակաւին երեսն Ովլամ անուանեալ տեղն՝ ուր Ներ ասացեալ աղանդաւորք տաճար մի ունին (Ռաբբի Բենիամին)։

27 Մոգք ասեն թէ ի ստորոտս Կովկաս լերանց և յեղերս Կասպից ծովուն՝ տեսակ մի արարածք կային Տեվ և Բերի (Դև և Պարիկ) ասացեալ, Տեվք սարսափելի հսկայներ էին, իսկ Բերիք խաղաղասէր իմաստունք. ոսքա այժմ երկրիս վերայ իշխեցող մարդկանցմէ յառաջ ստեղծան։ Տեվք եօթն հազար տարի իշխեցին աշխարհիս, իսկ նոցա յաջորդքն Բերիք երկու հազար տարի. արաւասիք բոլորին միատեղ ձէն անունն տան որ է Հոէէ+. ըստ մոգուց Բերիներու բնական երկիրն Ձիննիսթան կոչի՝ որ յոյժ գեղեցիկ երկիրք մի ունի, և բաղդք և ճակատագիրք բնակեն հոն։ Այս հզօր էակներս հրամայէին համապոյից, կարգադրէին զտարերս և ինչ որ ուզէին ստեղծէին։ Բաղդք անդամանդ չատ սիրելուն՝ Ձիննիսթանի մայրաքաղաքն բոլոր անդամանդէ շինուած էր, և դիւթական գաւազանի մի զարնուածքով անդամանդք, յակինթք, ոսկի, կիճք և բիւրեղք պատուականք ինքն իրենց կտրուելով կոկուելով կամարներ ձևանային, և ականակիտ ջուրք մշտադալար խոտոց և յարազուարճ ստուերաց մէջ ընթանային. որ բոլորն ալ արևելեան երևակայութեան ըստեղծարանութիւններ են։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տևառն ընդ առաջ, Մարդարիւրի Մարևևայ.

Փրկչին Ծնանելչէն քառասուն օր եւս՝ Կայսն եկն 'ի տաճարն Երուսաղէմի, հնազանդելով պատուիրանի գրոցն Ղևտացւոց՝ որ հրամայէր զսրբութիւն մարց և զփրկանաւորութիւն անդրանկաց: Անտարակոյս այս օրէնքս ոչ պարտաւորէր զՄարիամ որովհետև Հոգւոյն Սրբոյ մաքուր հարան՝ անկարօտ էր մաքրութեան. բայց սակայն ինքն իւր խորին խմաստութեամբն հանդերձ՝ մովսիսական օրէնքն ոչ գատեր այլ կատարէր: Եւ ոչ միայն ոչ յայտնէր աչխարհի զգերապրաշ եղանակ կուսական մայրութեանն՝ այլ նաև երբեակ քօղով զայն ծածկելով՝ ուղեց խոնարհութեամբ հասարակ կանանց կարգն անցնիլ. յիշեց իւր պարտքն իբրև դուստր Սիոնի, և զնուսին կատարելու համար՝ մոռացաւ առ վայր մի աստուածամայրութեան առանձնաշնորհութիւննեն. « Շնորհք զՄարիամ գեր 'ի վերոյ օրինացն կարգեցին, ասէ Սուրբն Աւգոստինոս, իսկ խոնարհութիւն ընդ| օրինօք դասեաց զնա »:

Երբ Յովսէփ և Մարիամ այն նուիրական չքնաղ պատն մանելու վերայ էին՝ փրկանաւորութեան արծաթի դրամն 'ի ձեռս զոհի աղաւնեաց հետ միատեղ, սուրբ ծերունի մի Սիմէոն[1] անուամբ՝ որում Աստուած յայտնել էր որ զԾնեալ Տեառն չտեսած պիտի չմեռնի՝ ազդմամբ Հոգւոյն Աստուծոյ գաւթին ներս մտաներ, և այն սուրբ գերդաստանն տեսածին պէս՝ արդարոյն աչքն լուսաւորեցան և ծանեաւ որ այն ցնծութեաց մէջ խանձարրուած աղքատ մանկիկն՝ ինքն իսկ Մեսիա Թագաւորն էր. ուստի մօրն գրկէն առնը-

լով՝ մինչև իւր աչքն բարձրացոյց, և սիրտն ելած սկսաւ գիտել զնա՝ ուրախութեան տուաւ արցունք թափելով իւր պատկառելի այտերէն վար, և արտաոտաթոր աչքն յերկինս դարձնելով եռանդեամբ գոչեց. « Այգ արձակեա զծառայ քո, Տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց: Լոյս 'ի յայտնութիւն հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի »: Զայս ասելով օրհնեաց Սիմէոն այն մանուկն, և առ Մարիամ դառնալով ծանր և սիրուր լռութենէ մի եւս ասաց՝ թէ մանուկն այն ծնեալ էր 'ի կանգնումն և 'ի գլորումն բազմաց, և մարգկանց ապիրատութեանն նըպատակ պիտի լինէր, և ցաւն սպրատուր սուսերի պէս մօրն սրտին պիտի թափանցէր:

Այս անակնկալ գուշակութիւնս փայլակի պէս Քրիստոսի ապագայ կենաց վերայ սխրագին լոյս մի ձգեց, և նախատինքն, չարչարանքն և խաչին վերայ քաշած հոգեվարքն Սրբոյ Կուսին աչաց առջևն նկարուեցան, որ ծերունւոյն մահաւիթ խօսքերն լսելով՝ իբրև մրրկալից հովի գիմաց ծաղ իւր գլուխն, և իւր սիրտն՝ յորում անձայն մարտիրոսութեան տեսարան մի կը կատարուէր, նոյն դգայուն ունեցաւ՝ որպես թէ կրակ կարած երկաթ մի յուշիկ մըտնէր ոզջ և արիւնոտ մարմնոյն մէջ [2]: Եւ սակայն Մարիամ ինչ որ Աստուծոյ գայր իրեն՝ առանց գանգատանաց ընդունէր. դէղնցած չրթունքն բացաւ և քամեց մինչև ցմրուրն այն գառն բաժակն լիզոյց և օշնդրի, և արցունքն սրբելով ասաց քաղցրութեամբ. Եղիցին կամք քո, Տէր: « Եթէ կարելի լինէր, ասէ Սուրբն Բոնավենտուրա, ինքն իր յանձին ընդունէր զչարչարանս և զմահ Քրիստոսի. բայց Աստուծոյ հնազանդելու համար՝ այլ աւելի մեծ ընծայ մի նուիրեց իրեն՝ իւր երկրպագելի որդւոյն կեանքն, մե-

ծագոյն և ցաւով տիւեղով և յաղթելով այն կաթո-
ղին սիրոյն՝ զոր ունէր առ որդին իւր »: — Նոյն ա-
տեն վերայ հասաւ և կին մարգարէ մի Աննա ա-
նուամբ որ Ասերայ ցեղէն Փանուէլի աղջիկն էր, և
այրի մնալէն 'ի վեր ոչ երբեք մեկնէր 'ի տաճարէն,
այլ պահօք և աղօթիւք պաշտէր զայգ և զգիերեկ, որ
և տեսնելով այն աստուածային մանկիկին՝ ուրախու-
թեամբ սկսաւ օրհնել զԱստուած, և խօսէր ընդհանէ
ընդ ամենեսին որ ակն ունէին փրկութեանն Իսրայե-
լի: Ուստի չատ յարմարապէս այսպէս խօսի Սուրբն
Ամբրոսիոս. « Ջծնունդ Քրիստոսի քարոզեն ոչ միայն
հրեշտակք և մարգարէք և հովիւք, այլ և արդարք և
հինաւուրքն Իսրայելի զնոյն ճշմարտութիւն հռչա-
կեն. երիտասարդք և ծերք արք և կանայք տան վկայ-
ութիւն հաւատոցս հաստատելոյ այնքան սքանչե-
լեօք. կոյս ծնանի, ամուլն 'ի լոյս ընծայէ զորդի,
համրն բարբառի, Եղիսաբէթ մարգարէանայ, Մոգքն
երկիր պագանեն. և մանուկն տակաւին յարգանդի
մօրն փակեալ՝ տայ գնշան ցնծութեան, կինն այրի
խոստովանի զդէպս զայս հրաշալիս, և ծերունին ար-
դար ակնկալէ նմին »:

Որովհետև 'ի վերջին գաւթի տաճարին՝ կանայք
չէին կարող մտանել՝ որով և Մարեմայ ալ արգիլ-
ուած էր, և մանուկն մանչ լինելուն համար Աստու-
ծոյ նուիրուելու էր, ուստի Յովսէփ իր գիրկն առնը-
լով տարաւ անդրանկաց սրահին, միաքն դնելով թէ
տաճարն մտած տեղն Սիմէոն ծերունւոյն հանդիպե-
լով ինչ զարմանալիք որ եղել էին նոյնն պիտի հան-
դիպէր նաև Յիսուսի այն սրբազայրն մտած ժամա-
նակ՝ երբ հասնէին քահանայապետից սրահն. բայց
մանուկն աստուածային սքանչելիք մի ցայտնեց, և
Հրեպական արդարոչական իւր նորանշոյլ ճառագայթ-
ներն հոն տեղն սիրած ժամանակ՝ ամեն բան իրնախ-
կին ցրտութեան և մթութեան մէջ մնաց: Անծանօթ

ղՀաղորդ մի առանց մտադրութեան ընկալաւ խեղճ
արուեստաւորին փապարեալ ձեռքէն օրինաց հրա-
մայած երկուս աղաւնիներն՝ զնոքն անարդ մարդ մի
համարելով, իսկ Քրիստոսի վերայ և ոչ աչք մի դար-
ձուց: Անծանօթութիւնն՝ այն անամօթ կռապաշտու-
թիւն՝ որ զնոքն ծածկէ եթէ սակաւ մի ամօթ մնացած
է իր վերայ, ընչաքաղցութիւնն ասեմ՝ գայլախաղ ք-
րերու պէս սնդացուցել էր հրէից Ժողովրդապետաց
շատերուն՝ չար անձնասէր և անգութ սրտերն [3]: Ա-
ռաքինութեան գործադրութիւնն և չքաւորութիւնն՝
հասարակ ղեւտացւոյ [4] սեպհական համարելով իրենք
առանց ակնարկ մի ևս տալու անցանէին՝ իրենց տանց
կձնայ սէմոյ վերայ անկեալ աղքատաց քովէն և կամ
այք աւազակաց ձեռքէն մահացու վերք առած հե-
ծէծէին, և երեսնին միւս դին դարձուցած ճամբայն յա-
ռաջ տանէին՝ առանց գութ ղեալու այն խեղճերուն
վերայ. վերջապէս ոչ աստուածսիրութիւն ունէին
և ոչ մարդասիրութիւն: Եւ ահա այս բանս էր որ
Տէրն մեր՝ գթութեան և սիրոյ քահանայութեան
կարգն հաստատողն, նոցա երեսն զարնելով սուր և
սուրբ երկնածանօք յանդիմանէր Սամարացւոյն գե-
րազանց առակովն: Եւ այս բանիս համար ալ Մա-
զաքիա մարգարէին ասացածին պէս Աստուած զիրեւք
անիծաւեր մնինդուս նորա զնա օրհնեին, և իբր երեսն
դարձուցել էր իր տաճարէն՝ զոր սակաւ ժամանակէն
հռոմայեցւոց սրոյն և հրոյն պիտի մատնէր:

Այն եռանդն որ Մեսիայի ներկայութենէն բոր-
բոքէր իր երկու աշակերտաց սիրան Եմմաուսի ճամ-
բուն վերայ՝ յառաջ քան իրենց Տէրն ճանաչէին 'ի
բեկանել հացին՝ ամենևին աղձեցութիւն մի չունեցաւ
Ահարոնի սերնդոց սրտին մէջ, ինչպէս գարնանային
արեգական ճառագայթներն Այրարատայ գագաթան
ձնանջենաւոր սառոյցներուն վերայ. և այն վայր-
կեանն որ հրեշտակք չուրջ զաթոռով Անմահին լռե-

ցընելով իրենց ալեւոտիա երգերն՝ աչքերն յառած հայէին ութերորդ մեջ կէտի մի վերայ, այն վայրկեանն զոր Անդէոս գուշակած էր թէ երկրորդ տաճարին փառքն քան զառաջինն պիտի գերազանցէր, այն վայրկեանն ասեմ առանց իմացուելու անցաւ թռաւ վատացոյց և օրհնուսոյց վարդապետաց աչքեն։ Ոչ ոք ծանեաւ Մաղաքիայ գուշակած անիւժ և անարատ պատարագն։ Անկալոտիւնն հեթանոսաց՝ որոմ առջևէն հանդերձեալ պատրաստեալ էին հրեշտակք զձանապարհ նորա, խոստացեալ և ցանկացեալ Փրկիչն եկեալ հասեալ էր անդր մարմնաւորապէս 'ի տաճար իւր սուրբ. և ոչ ումեք փոյթ էր ընդունել զնա ոստովք արմաւենեօք գոչելով 'ի ձայն ցնծութեան յաշտարակաց և 'ի տանեաց Երուսաղէմ Ովսաննա որդւոյ Դաւթի։ Վասն զի այս ազգ մարդիկ իրենց անձնական շահուն յարմար Աստուած մի կամէին, Աստուած մի որ գերի լինէր Անտիոքոսներն [5] (Խորհրդարանին), Աստուած մի ծածկեալ 'ի ձորձս ներկեալս յարիւն Ալեքսանդրի։

Իսկ աստուածային մանուկն նոյն առեն քաղքին մեջէն անցած ժամանակ՝ տեսանէր իւր չարչարանաց և փրկագործութեան տեղերն, և այն քահանայից ամբոխին մեջ լռութեամբ համրէր զնոսա որ իրեն դահճներն պիտի լինէին, և այն տաճարին պաշտօնէից առ Յաւիտենականն երգած տաւղաց և քնարից ձայներուն մեջ՝ լսէր այն յանդուգն և չարագուշակ աղաղակներն որ քանի մի տարիէն եռա վայրագութեամբ պիտի գոչէին 'ի խաչ հան, 'ի խաչ հան։

Տուն Ահարոնի ո՞ր ես հիմա։ Խաչեցելոյն վրէժխնդիր չունէր՝ երբև վրէժ յարդի ցանէց ցրուէց ըզքեզ ընդ չորս կողմանս երկրի. և դու որ ազգիդ սրբիչ ցեղերն արհամարհէիր՝ նոյն իսկ քոյ տարագրութեանդ ընկերներն զքեզ ոչ ճանաչեն և յայլ ցեղից ոչ որոշեն։ Բայց Նոյն առենն՝ այս ապագայ թշուա-

ռութեանց վերայ մտածող չկար՝ որ արդէն իրենց դլխոյն վերայ սև ամպերու պէս սկսեր էր գումարիլ, և զոհագործք եբրայեցիք մատուցանէին Աստուծոյ մեծամեծաց և ամենին այն ընծիր զոհերն՝ զորս Աստուած մերժէր։ Ուստի մինն 'ի նոցանէ առաւ Յովսեփայ ձեռքէն աղաւնիներն և բոպիկ ոտքով էջնելով ողջակիզաց սեղանին գնատագոյն վերեւէն 'ի վեր մատոյց Աստուծոյ այն աղքատիկ և պարզիկ զոհն։

Յովսէփ և Մարիամ Աստուծոյ այս պատուէրս կատարեցին եւս, ասէ Սուրբն Ղուկաս աւետարանիչ, դարձան 'ի Գալիլեա 'ի քաղաքն իւրեանց Նազարէթ [6]։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԺԲ. ԳԼՈՒԽ

1 Ապրեցէք տան Աբիմելեքի զմակդիրս Սոքէթ որ է հաւատա-
րիմ և հաւատարմացնող, որովհետև վկայեաց Ճշմարիտ Մե-
սիայի գալստեանն յանձին Յիսուսի որդւոյ Մարիամու, զոր ա-
մենայն հաւատացեալք պարտին այնպէս ընդունել (տ՝ Էրսկին
Մորէնոբոան աբէլ. հդ գ)։

2 Աչս նկատեցէք վերայ ասէ Սուրբն Անսելմոս· Ո՛վ իմն թա-
գուհի, ես չեմ կարող հաւատալ թէ դուն վայրկեան մի ևս կա-
րէիր ապրելացս ցաւոքս՝ եթէ Աստուած որ տուիչ է կենաց՝ չը-
տայր քեզ նաև զօրութիւն տանելոյ այնմ։

3 Բաբունկէք հրէից միշտ այս սկզբան վերայ եղած են՝ թէ ով
որ իր ոխակալութեան վրէժն չառնու՝ անարժան է բարեբի կո-
չուելու (Պատնաժ գիրք Ը)։

4 Անհաւատալի բան էր Երուսաղէմայ քահանայապետաց չը-
քեղութիւնն և ագահութիւնն, սոքա գիւղօրէից տասանորդն բռ-
նորովին իրենց սեպհականելով՝ թողուին որ հասարակ քա-
հանայք թզով և ընկուզով միայն կերակրին. և թէ որ գանգատ
մի առնէին՝ հռոմայեցւոց ձեռքն մատնէին զնոսա՝ որպէս խռո-
վարար և ապստամբ։ Փելիքս դատաւորն ի սոցանէ քառասուն
հոգի բանտարկեց ժողովարանի իշխաններուն հաճելի լինելու
համար (տես Յովսեպոս և Պատնաժ գիրք Ա գլ. 4)։

5 Պատնաժ գիրք Զ գլ. 25։

6 Կուսին մաքրութենէն և Տեառն մերոյ ի տաճարն բերուե-
լէն ետև գրինք սուրբ գերդաստանին ի Նազարէթ երթալն՝
ըստ մտաց Սրբոյն Ղուկայ և Ոսկեբերանի և այլոց երևելի մեկ-
նըչաց . որովհետև այսպէսով միայն կարելի համաձայնել
Ղուսրբն Մատթէոս՝ որ ի տաճարն ընծայուելուն վերայ բան մի
ոչ ասէ, Սրբոյն Ղուկասու հետ՝ որ անմեղ մանկանց կոտորածին
և Յեգիպտոս փախչելուն նկատմամբ ոչ խօսի ամենևին։ Սուրբ
Ոսկեբերանի խօսքն այսոքիկ են . « Եւ զինչ ասացուք առ ի
միաբանելոյ զերկոսին աւետարանագիրսն, բայց զի դարձն ի Նա-
զարէթ յառաջ էր քան զփախուստն Յեգիպտոս։ Եւ զի Աս-
տուած ոչ յառաջ քան զսրբութիւնն հրամայեաց Յովսեփայ և
Մարեմայ գնալ Յեգիպտոս, զի մի իսկ օրէնքն այն լուծցին։
Այլ իբրև կատարեցին զօրէնսն դարձան ի Նազարէթ ինքնա-
յօրդորք, ուր և ընկալան զհրաման փախստեամբ երթալ Յե-
գիպտոս »։

ԳԼՈՒԽ ԺԳ.

փախուստ յԵգիպտոս.

Յովսէփ և Մարիամ հազիւ հասեալ էին ի սուրբն Գաղիլեա՝ սատկուեցան այլասէրն երկայն և վը-
տանգաւոր ուղևորութեան մի ձեռք զարնել, որոյ վախճանն լինելոց էր երկիրն աքսորանաց։ Գիշեր մի
հրեշտակ Տեառն քնոյն մէջ երևեցաւ Յովսեփայ և
ասէ. « Արի առ զմանուկդ և զմայրն իւր՝ և փախիր յԵ-
գիպտոս, և անդ լինիջիր ցորժամ ասացից քեզ. քան-
զի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ »։
Այս խօսքէս Յովսէփ զարհուրած ջոյս յարեաւ և
երկիր պագանելով կամաց բարձրելոյն՝ վազեց գնաց
զարթուցանելու զՄարիամ որ ննջէր զքաղցր և զթե-
թև քուն հրեշտակաց իւր զաւկին որբանին քով։ Նո-
րահաս մայրն անմիջապէս հասկացաւ այս անյապաղ
և գաղտ փախստեան պատճառն։ Տագնապալից ակ-
նարկ մի տուաւ որդւոյն, արտորնոք ժողվեց հաւքեց
սակաւ մի ճամբու պաշար, տղուն խանձարուրքն, ի-
րեն հարկաւոր հագուստն, և զաւակն գիրկն առած
սկսաւ Յովսեփայ եահէն երթալ իւր ծննդեան քաղ-
քէն հեռանալով՝ ուր ամենքն դեռ քուն էին՝ ատ-
գալնլոյ գիշերոյ լռաստիճ։

Սիմէոնի նախագուշակութիւնքն յոյժ կանուխ
սկսան սուգ տալ. ծնած չծնած բռնաւորին հալա-
ծանքն հասանէր Յիսուսի որբանին վերայ, և իւր այն
անբիծ մանկամարդ և սուրբ մայրն սոխակեր գի-
շերանց փախչիլ յանցաւորի մի պէս, ուրիշ օգնական
չունենալով՝ բաց ի այն ծերուկէն՝ որ լերանց կրճից մէջ
պահուըտած արաբացւոյն տէգին նիզակին դէմ դնե-
լու քաղցրութենէ և աղաչանքէ զատ ուրիշ բան

չունէր, նոյնպէս նաև Թերևս Հերովդեսի արիւնաբուռ զօրաց գէմ՝ որ անշուշտ իրենց եաւէն պիտի անկանէին։ Եւ կարծես Թէ Աստուած ինքնին այս սուրբ ընտանիքս Ճակատագրին ձեռքն մատնած էր, որովհետև հրեշտակն փախչելու հրամանն տալու ատեն Յովսեփայ՝ չխոստացաւ Ճամբուն մէջ զերբենք պաշտպանելու, ուստի իմացաւ որ դեռ Քրիստոսի ղինքն յայտնելու ժամանակն հասած չէր, և Աստուած միայն պարզ հնարքով և մարդկային խոհեմութեամբ կամէր ղինքն ազատել Հերովդեսի դաւանութենէն։ Ուստի բոլոր այս գործառ ձեռնարկութեանս հոգն ու խնամքն Յովսեփայ յանձնուած էր, և իրեն պէս աղքատ և անծանօթ ծերու մի անկանէր՝ այն բանաւորին չար խորհուրդներն ցրուել, գաւանութենէն զգուշանալ, և պարապ հանել կասկածոտ բանաւորին արձուն հսկողութիւնները, որ իւր կամքը կատարել տալու համարատոր սրիկայներ ունէր ձեռքն։ Եթէ Երուսաղէմայ Ճամբուն վերայ այս չարագործներէն ոմանց հանդիպէին ինչ կարէին առնել։ Մոգերու լսիկ մնչիկ և աճապարանօք մեկնելովն Հերովդէս այլ աւելի անձնապահ և զգուշաւոր եղած էր, և իւր կասկածներն աւելցած էին Սիմէոնի և Անայի խօսքերովն. արգէն ծածուկ լրտեսներ գրուած էին ամեն տեղ և գաղտնի խուզարկութիւններ լինէին. և ո՛վ գիտէ մինչև ո՛ւր կարէր հասնել այն արիւնախանձ իշխանին չարութիւնն՝ որ մարգասպանաց ձեռքն ոսկւով լցուցանէր։ Յովսէփ որչափ որ մտածէր այս բանս՝ այնչափ աւելի վախ գայր իրեն սարսափելի գաւաճանութենէ մի, և այն անստոյգ կասկածանաց երկիւղն՝ արիւնն երակաց մէջ սառեցընէր։ Մարիամ ալ գոյն նետած և անխօս մեռելոյ պէս իւր երկոտ աչքն գարձուցանէր հովիտներու խորերն անտառաց ներսերն և այն ապառաժ և գըժուարագնալի ճանապարհներուն լուռ և տմայլ անց-

քերն՝ զորս ծերունին՝ ալ լաւ և ապահով համարելով բանել էր՝ մարդկանց բնակութենէն միշտ հեռու փախչելով։ Լուսինն իւր քաղցր և մթնշաղ լուսովն լուսաւորէր իրենց անձայն և սուսիկ փուսիկ ուղևորութիւնն՝ զոր արևելից գեղեցիկ և վմայլելի երկիրն իւր կապտագոյն քօղովն ծածկէր։

« Եղանակն դեռ ցուրտ էր [1], և Պաղեստինն կրթելու անցնելու համար՝ սուրբ գերդաստանն սպասել էր՝ ամայի և գիւղաբնակոտ Ճամբայներէն անցնիլ. հապա գիշերն ուր պիտի գտանէին ապահով տեղ սակաւ մի հոգնութիւն առնելու համար, և ուր պիտի գտանէին կերակուր զօրանալու համար [2] »։

Աւանդութիւնն այս սրտաշարժ և վսանգաւոր Ճամբորդութեան շատ պարագայներն լռէ. բայց սակայս չկայ որ այն սուրբ ուղևորներն շատ գիւղաբնակ քաշած են այն լերանց կիրճերէն անցած ժամանակ, կանուխ մութն ի լուսուն Ճամբայ ելնելով, և շատ անգամ լուսնին ելնելուն սպասելով որ Ճամբային յառաջ տանին։ Գիտի որ Գալիլեայի մէջ էին՝ հոն յաճախ գտնուող խոր և ծամածուռ քարայրներուն մէջ՝ ուր գիւրին էր մարդկանց աչքէն ծածկուիլ՝ իրենց բաւական հանգստեան և ապաստանի տեղ գտանէին. Թէպէտ և հոն ալ վսանգներն պակաս չէին. վասն զի բազմաթիւ հուղկահարներ՝ որ երկայն ատեն տէրութեան զօրաց հետ կռուելով՝ և Հերովդեսի հիւանդութեամբ նորէն սիրտ առնելով գարձեալ երևան ելել էին [3], այն քարայրներն ընտրած էին իրենց ապաստան. և անշուշտ շատ անգամ Յովսէփ վախցած է այն տեղերն մտնելու և ապաւէն մի բնտռելու այն այրերուն մէջ՝ գիտեալով որ շատերն աւազակաց բնակարան էին։

Վերջապէս հազար վտանգներով և բիւր նեղութեամբ այն սուրբ ընտանիքն անցաւ Երուսաղէմայ մատերէն. բայց զգուշութիւններն և անհանգստու-

Թիւններն ալ աւելցան՝ որովհետև վտանգներն ալ աւելի շատ էին. ուղևորներն ոչ համարձակէին քաղաքներու և մարգաշատ աւաններու մօտենալ՝ ուր որ լըտեսից և մատնչաց խումբերն վխտային, և օտարականներն յաչաց նոցա ոչ վրիպէին. ուստի հարկ եղև որ ցամքած հեղեղատներու մէջէն անցնին, անանց և ամայի ձամբաներ բռնեն կամ անտառաց Թաց և խոնաւ անցից մէջ մոլորին, և ոչ իսկ սակաւ մի պահար ձարելու համար կարենալով հեռանալ այն տեղերէն՝ վախ ցրտե և սովէ ալ տանջէին: Արդէն Անաթովքի քաղաքն անցել էին և իրենց ընթացքն դէպ 'ի Ռամլա ուղղէին՝ Աւորեաց գաշտավայրն իջնելու համար, և որպէս զի ժամ մի յառաջ ազատին այն վտանգաւոր տեղերէն՝ գիշերոյ ժամերն ալ գողնային, և ահա մութ անդունդէ ընկեալ մարդիկ դուրս ելլին և ձամբայն արգիլելով ոչ Թողուին յառաջ երթալու. և այն որ աւազակաց գլխաւորն երկէր իւր ընկերներէն զատուելով յառաջ անցաւ տեսնելու Թէ ո՞ էին այն ուղևորներն. Յովսէփ և Մարիամ զարհուրած իրարու երես նայէին. իսկ Յիսուս իւր մոր գիրկն 'ի քուն լինէր: Աւազակապետն որ գայր նոցա կեանքն կամ ոսկին առնու՝ զարմացմամբ նայեցաւ այն անղէն ծերուն վերայ՝ որ Ճիշդ նահապետաց նմանէր, և այն աքողեալ կնոջ գառնալով՝ որ այնչափ ցաւագին կերպով իր գրկաց մէջ սեղմեր զաւակն՝ որ կարծես Թէ իւր սրտին մէջ կամեր ծածկել զնա, առքա աղքատ մարդիկ են, ասաց ինքն իրեն, և վախըստակեց պես գիշերանց ուղևորին:... Ո՞ գիտէ Թէ բնաւ ինքն ալ զաւկի տէր էր, Թերևս Յիսուսի և Մարեմայ վերայ տեսած քաղցրութիւնն և մարմնէն իւր անագորոյն սրտին գԹութիւն ազդեց. ուստի իր տիգին սայրն գետին ծռելով՝ աչ խաղաղութեան մատոյց Յովսեփայ, և այն գիշերն հիւրընկալեց զիրենք իր դղեակն՝ որ գիշատիչ Թռչնոց բոյնին պես ժայռի

մի դուրս ցցուած անկիւնն չինուած էր: Ուղևորներն անմեղ վտահութեամբ նորա հիւրասիրութիւնն ընկալան, և աւազակին բնակարանն արաբացւոյ հիւրընկալ վրանին պես ժողովեց զիրենք այն գիշերն [4]: Հետևեալ օրն այն սուրբ ընտանիքն արմատնեաց և ժանտաթոքնեաց ընդարձակ անտառի մի մէջ՝ կէս օր ժամանակ սակաւ մի հանգիստ առին՝ Ռամլայէն [5] սակաւիկ ինչ հեռու, և աչերն երկնի և երկրի անոյշ քուն մի քաշեց մյուռեօք նարկիսեօք և հոտմավարդիւք զարդարեալ գետնոյն վերայ. որովհետև օդին ջերմութիւնն, Թռչնոց գայլայլիկն, խոտոց անուշահոտութիւնն, Թզենեաց չուքն և հեռի աղբիւրի մի գըգգիւնն մանկան քուն բերաս: Սակաւ մի յոգնութիւն առնըլէն ետև՝ որոշ վայրկեաններն համրէին՝ նորէն ձամբայ ելլին, ոչ գիտեմք ինչ պատճառի համար սակաւ ուշացան Բեթղեհեմ քաղաքն մտնելու, և սակայն աւանդութիւնն այսոր յիշատակն պահած է, և քրիստոնեայք սեղան մի կանգնեցին այն այրին մէջ՝ ուր պահուըտեցաւ Մարիամ իր զաւկով [6], երբ Յովսէփ բաժնուելով եմուտ 'ի քաղաքն. կամ իմանալու համար Թէ երբ էր կարաւանին ելնելու ժամանակն, և կամ Աստուածամօր հեծած գանգատ էշըն ուղղի մի հետ փոխելու որ անապատն անցնելու համար յարմար կարևոր էր: Բեթղեհեմ քաղաքն ամենէն վտանգաւոր տեղն էր, կամ Թէ ասեմք հրաբղխին խառնարանն, ուստի սակաւ մի ժամանակ միայն հեռանալով հոն՝ աճապարեցին հասան փղշատցւոց ծովեզերեայ քաղաք մի, որպէս զի Եգիպտոս գնացող առաջին կարաւանին հանդիպած պիտի լինին: Եւ

Եթէ ժամանակագրաց Ճիշդ և հմուտ հաշուոցն հետևելիք՝ որ ասեն Թէ այս երկայն ուղևորութեան մէջ տեղ մի կեցած չեն՝ անշուշտ Աւորեաց ծովեզերքն գնացող կարաւանի մի հանդիպած պիտի լինին: Եւ

այնչափ սուբլի հատանական է այս կարծիքս՝ որովհետև գարնանային գիշերահաւասարն մօտ էր, և ամեն մարդ փութայր յառաջագոյն իւր տեղն հասնիլ՝ քանի որ էջը սկսած փչել սիմուռն կամ սաստիկ կոչուած հորշակին որ զանապատն տակնուվերայ առնէ՝ որով և այն սաստիկ ծուխը՝ նոյն իսկ Ովկիանոսի ալեաց հատասար վտանգաւոր և անգութ է[7]: Թէպէտ և Հերովդեսի կառապետ հալածանաց մահարեր երկիւղէն և կասկածէն սակաւ մի հանգարտեցան այն խեղճ ուղեւորներն, սակայն Ճամբորգութեան երկրորդ մասին հոգնութիւնն, վիշտերն և երկիւղն առջինէն պակաս չէին: Երբ Գազայէն դուրս ելին՝ որուն վրայ փլած փլփլեալ աշտարակներն ծովուն ալեաց ահարկու արձագանքն կրկնէին՝ իրենց առջին ուրիշ բան չեսնին՝ բայց եթէ սաստիկ անեզր անապատ մի ախտոր և ահարկու մերկութեամբ՝ որուն մէջ հորշակին փչելովն ակօսներ բացուէին՝ սոթախիճ երկինչ ներքեւ. բոյս ասացեալ բանն ամենևին ոչ երևէր՝ բայց 'ի յատի վտիտ ճիւղերէն որ սաստիկ բլրակներու վերայ տգիս անգին բուսանէին. ջուրն ալ սաստիկ ցած տեղերն ժողոված աղի ջուրն էր, և որովհետև Մարիամ և Յովսէփ աղքատ մարդիկ էին և պաշտպան մի չունէին՝ այն ջրէն ալ մի առնէր և զովանալու համար՝ հարկ էր սպասէին որ հարուստ վաճառականներն և իրենց գերիներն և ուղտերն կշտանային, որով իրենց ուրիշ բան ոչ մնայր՝ բայց եթէ պղտոր և աղմաղից ջուր մի, և այն այնչափ սակաւ՝ որ ալ մի հազիւ լեցընէր: Որչափ որ Աստուծոյ սահմաններէն հեռանային՝ ծարաւն ալ այնչափ սաստկանայր, և առուակներն ալ նոյնչափ նուազէին: Երբեմն հեռուէն ընդարձակ դաշտի մի մէջ Տիբերիոյ ծովակին պէս պայծառ և կապուտակ լիճ մի տեսանէին. և այն վճիտ ջրերուն վերայ երկինքն հայելւոյ պէս երևէր՝ մօտն ալ արմաւենի մի մեներ. ուղևորներն երբ

տեսանէին զայն՝ ցնծութեան աղաղակներով իրենց ուղեկիցն գէպ 'ի հոն վազէին. Մարիամ ալ իւր նուազեալ թալացեալ դլուխն վեր վերցընէր՝ երկայն երաշտ և խորշակէ թունաւորած Սահարոնի վարդի պէս: Երբ գիրենք հասած կարծէին այն երանեալ լճին մօտ՝ մաքերնին դնելով որ հիմա պիտի ըմպեն զոյանան, ահ թշուառութեանս կարծես թէ չարաճճի սատանան այն լիճն տեսարէզ մի ևս անգին տանէր՝ իւր տեղն ուրիշ բան չթողուլ բայց եթէ բոցակէզ աւազ մի[8]:

Երեկոյին կառապետն հանդչէր, ուղտուց բեռներն վար առնուլ՝ գիրենք կլորակ չորսուած կապէին՝ տաղին մէջ ցիցեր զարնելով, վաճառականներն ալ կաթով և արմաւով ճաշէին ետև՝ իրենց թաղեցայ վրանները դնելու 'ի քուն լինէին՝ մինչև լուսնին ելնելն: Իսկ գերիներն և աղքատ ուղևորներն՝ յորոց միջի էին նաև Աստուածածորփն, Աստուածամայրն և Յովսէփ, գետին փռած փսխաթին վերայ նստէին, և իրենց վրանն երկինքն էր, և գիշերուան ցուրտ հողմն տաքէն և աշխատանքէն տկարացած մարմիններն գոլայր և սարսեր[9]: Շատ անգամ ալ վայնասուն և իլար անցուցեր մի բրդեր. վասն զի անապատին արաբայիքն կարաւանին քանն եղած ժամանակ՝ աստեղաց մթնշաղ լուսնկա՛ն աւարելու չարձակէին, և կարկառ նըմանեցած նետերն՝ որով շատ մարդ վիրաւորուելով ցաւագին կանչուըռտէին՝ իրենց ետ գառնալու նշանն էր: Մատաղ Կայան որ իւր մարմնով ծածկէր և պատսպարէր իւր պաշտելի զաւակն՝ արտասուալից աչքն և ահուդողով գիշեցած ճակատն գէպ 'ի յերկինս վերցընէր. վասն զի լաւ գիտեր թէ իւր Յիսուսն ալ կարեր մեռանել որպէս յեսինն յորգիս մարգկան:

Իսկ երբ լուսնին տարածէր իւր սպիտակ լոյսն այն անձայն և անաստուեր անապատին վերայ՝ ուր միայնութեան հողմին և ոչ խոսի ծլօտ մի գտանէր սոյլ

մը հանելու, վրանները ժողվեին ծալլեին, և նորէն սկսանէին այն ոգեսպառ ճամբայն՝ այն ամեն նեղութիւններով և վտանգով զրոս առջի օրն կրել կամ կասկածել էին։

Վերջապէս հասան այն նշանաւոր և խորհրդաւոր երկիրն որ էր Եգիպտոս, որ ամեն գիտութեանց և ամեն աղէտ գիցապաշտութեանց բոյնն էր, վարդապոյն կրանիթեայ կոթողներով, արծնած պողպատէ գագաթներ ունեցող մեհեաններով և հսկայաչէն բուրգերով զարդարուած՝ որ ուղևորաց զարմանք բերէին, իր գիւղերն ալ կղզեաց նմանէին՝ որոց մէջէն անցանէր իր հրաշալի գետն չարեբերով պատած և նաւակներով ծածկուած։ Իրաւ քան զՀրեաստան աւելի հարուստ բազմամարդ և վաճառաշահ երեւէր, բայց ինչ օգուտ, ոչ ապաքէն այն չէ՞ որ աքսորանաց երկիր էր, մինչդեռ հայրենիքն անապատին անգիլի կողմն էր, ուր Թողել էին իրենց սիրան Իսրայէլ աքսորականքն։

Հարիւր քառասուն փարսախ[11] Ճամբորդութիւն առնելէն ետև՝ մեր փախստականներն հասին Ելիոպոլիս (Արեգ քաղաք) որ Մովսիսի ծնած քաղաքն[12] էր, և ուր իրենց ազգէն գաղթական մի բնակէր. հոն տաճար մի ալ կար Աստուծոյ կենդանւոյ՝ զոր Ոնիա վնեէ տուեր էր Երուսաղէմայ տաճարին ձևովն, և նոյն իսկ զարգերն ալ այնոր նման էին. միայն սորոնագոյն լինելուն նշան եօթնասաւէղն աշտանակին տեղ՝ կամարէն ձոյլ ոսկի կանթեղ մի կախած էր։ Այն քաղաքին դրանն առջև՝ որոյ բնակչաց մեծագոյն մասն եգիպտացի և կռապաշտ արաբացիք էին, մեծապանծ ծառ մի կար պատկառուելի ցեղէն՝ որուն Նեղոսի ափունքն բնակող Եմենի արաբացիք՝ պաշտօն մատուցանէին[13]. երբ սուրբ ընտանիքն այնոր մօտէն անցնելու վերայ էր այն նուիրական ծառն իր տերևաւելից ճիւղերն խոնարհեցուց՝ որպէս թէ ողջոյն տալով հա

մագոյից մանկիկ Տիրոջն որ Մարեմայ գիրկն էր[14]։ Եւ եթէ հաւատամք Պալլադիս պատմագրի՝ երբ պատուհածարեալ ուղեւորքն անցանէին Հելիոպոլսոյ գլխաւոր դրան կրանիթեայ կամարներուն տակէն՝ մեր ճառաւոր մեհենի մի մէջ եղած ամեն դրօշեալքն բեւեռանիվայր անցան գլորեցան[15]։

Յովսէփ և Մարիամ արեգական քաղաքն չմնացին, այլ անցին գնացին 'ի Մաթարիէ՝ որ գեղեցիկ գիւղ մի է, ժանտաթզենիներով հովանաւոր, ուր գոհանի մի միայն անոյշ ջրոյ աղբիւրն բովանդակ Եգիպտոսի մէջ. հոն վերջապէս փոքրիկ տան մի մէջ՝ որ աղաւնեաց բոյներով լի էր՝ հանգիստ չունէ մի առին այն խեղճ ընտանիքն՝ Հերովդեսի վախէն աղաւէղով, որ ճիշդ նոյն տաեն գիւտահարեալ և մղեգնեալ 'ի գործ գնէր իւր անագորոյն խորհուրդն՝ անմեղ մանկունքն կոտորելով[16]։

Աբժանահատատ և ծանրագլուխ մատենագրաց[17] չատերուն խօսքին նայելով՝ որոց վկայեն նաև աւանդութիւնն և Ճշմարտամանուածութիւնն, սուրբ ընտանիքն եօթն տարի բնակեցան Եգիպտոս, որոյ և հետքն ալ մինչև ցայսօր երևին. այն վտակն ուր Մարիամ երթայր Յիսուսի մանկան զգեստներն լուանալու[18], այն ծառազարդ բլուրին ուր յարևու փութով չորացընէր, այն մշտաթզենին որոյ հովանւոյն նեքև ախորժէր նստիլ Տիրամայր կոյս Աստուածորդւոյն 'ի գրկին[19] գեռ մինչև հիմա կեցած են իննևտասն գարերէ 'ի վեր. և ծանօթ են Եբրայեցոց և Աստիոյ ուխտաւորաց, զորս Փարաւոնի յաղորդքն պատուով և մեծարանօք յարգէն. և իւրաքանչիւր տեղերն իրենց տեսչական տաճկական վէպերն ունին անցած ժամանակաց վերայ, ինչպես արբազան շէնքի մի տեսրակներն իրենց խոնաւ և մամռապատ պատերուն վերայ՝ իւր յատուկ յիշատակարանն ունի[20]։

Մարիամ Նազարէթ եղած տեղն՝ անծանօթ աշխատասէր և չարքաշ կեանք մի ուները, բայց ոչ գիտէր թէ ինչ են ազգնապողական քննասուրեթիւնն, ահռելի երկիւղներն և ոչ ալքատասրեթեան հեռանք եղող խիստ և անընդհատ զրկմունքն. իսկ հոս ենթիպատոս յիրաւի անանկուրեթեան հնոցն անկաւ և խեղճուրեթեան ամէն տեսակին կրեց: Մոգուց ընծայ տուած ոսկին[21] հանդերվ հարկ եղև նոր աշխատանք բնատելոս ուսուր հացն ճարելոս համար, զոր հետ ի հայրենեաց գանելն դիւրին չէր, և մանաւանդ այն ժողովրդեան մէջ որ ազգային և ժառանգական արուեստանելոս բաժնուած լինելով՝ օտարազգեաց հաց ոչ թողուին, և անարգուրեթեամբ մերժելին զնոսա: Ուսոի Յովսէփ որդի Դաւթի և Զօրաբաբելի՝ ասուրչէքով բանող հասարակ գործաւոր մի եղև. և Մարիամ գուսար թագաւորաց գիշէրն ցերեկուան խառներ իւր ամուսնոյն վաստակած նուազ և անբաւական վաստակն լրացընելոս համար: Եւ ալքատ լինելոն համար, ասէ Սուրբն Բասիլիոս, յայտնի է թէ ծանր աշխատանաց զլուխք տուած են հարկաւոր պէտքն ունելոս համար: Այլ ասա՛ւ. արդեօք ունեցան միւս այն հարկաւոր եղածն ալ, արդեօք ուրչափ անգամ մանուկն Յիսուս անօթի եմ, հաց կ'ուզեմ ասացած ժամանակ իւր մօրն, այն խեղճն ուրիշ բան չուներ տալոս իրեն՝ բայց եթէ իւր աչաց արցունքն և ըրթանց համբոյրն և գուսանքն՝ տղուն անօթութիւնն մեռացընել տալոս համար:

Բայց հրեշտակն Ամենակալի վերջապէս եկն վերջ տալոս այս տառապանաց՝ զոր այնչափ քաջուրեթեամբ և համբերուրեթեամբ կրել էին. Յովսէփ երազին մէջ լսացաւ թէ Հերովդէս մեռել է. «Արի, ասաց նըմա հրեշտակն, առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն Իսրայէլի. զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ» . — Այս խօսքիս վերայ Յովսէփ էլնելով՝

առաւ տղայն և նորա մայրն, և նորէն անկաւ 'ի ճանապարհ Իսրայէլի երկիրն երթալոս համար: «Եւ իբրև լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստան՝ փոխանակ Հերովդէի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ 'ի տեսլեան՝ գնաց 'ի կողմանս գալիլեացւոց»: — Եւ այսպէս կատարեցաւ մարգարէին բերնով ասացեալ պատգամն «Յեգիպտոսէ կոչեցից[22] զորդի իմ»:

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԺԳ. ԴԼՒՈՅ

1 Փետրուար ամսոյ կէսին աւետեանք՝ յորում լեռնային կողմանք դեռ ցուրտ են, և բարեխառնութիւնն գրեթէ հաւասար է փրանկիոյ ըստ Վընէյի. ուր ընդհակառակն Այորեաց դաշտերն ամառնային տաքութիւնն տիրել սկսի (տես Դ գլուխոյն 5 ծանօթութիւնն):

2 Այուրն բռնավէնտուրա Ցաղէփ վրոմ Բէյոռոխ:

3 Այս զինեալ սրիկայից խմբերն երբեմն մինչև երկու երեք հազարի հասնէին՝ կարճ և փորձ մարդիկ իրենց առաջնորդ ունելով, շատ աշխատութիւն հասուցանէին Ղերովգեսի զօրականաց և հռովմայեցւոց. ոմանք քաղաքական նպատակաւ՝ ասդիս անդին զինուորաց հետ զարնուէին. իսկ այլք բոլորովին աւազակութեան համար միացեալ հրոսակներ էին, և իրենց զգեստուց ներքև ծածկեալ երկայն դաշոյններով մինչև երուսաղէմայ փողոցներուն մէջ ևս ուզածնին զարնէին և սպանէին (Յովսեպոս Ցաղէփ պաբէր-ըշէն հրէէց գիրք Բ):

4 Այն տեղն ուր կատարուած է այս աւանդական դէպքս՝ մինչև ցայսօր ցոյց տան ուղևորաց՝ ուր երևին դեռ ևս աւազակին ամրոցին աւերակներն՝ որ տակաւին վախնալու տեղեր են; խաչակրաց ժամանակ փրանկք որ այս աւանդութեանս տեղեակ էին՝ համարէին թէ այն հուղկահարն կալուածատէր մի էր: Իմանք ալ այս վիպացս վերայ ուրիշ դիպուած մ՚ալ յաւելուն որ որչափ հարազատ ալ լինի՝ մեք ստոյգ ոչ համարիմք, այսինքն ասի թէ այս հիւրընկալ հուղկահարն էր Քրիստոսի աջակողմն խաչուած բարի աւազակն Դիսմաս անուամբ՝ զոր յիշատակեն լատինք ի 25 մարտի:

5 Զուարճալի գիրք մի ունի այս տեղս՝ ուր աւանդութիւնն ասէ թէ սուրբ Գերդաստանս հոն հանգչած լեցին: Հիմա հոն երևին վանքի մի աւերակներն (Ուղևոր. ի Բոլէղ ՅԵբուղէմ, հտ. Բ):

6 Այս քարայրս ժողովուրդ կոչէ Կոռէն կոչի, համաձևով թէ Տիրամօր կուսական կաթէն կաթկթած է այն քարին վերայ՝ իւր Աստուածորդին դիեցուցած աեեն:

7 Այրաքացիք անապատին մէջ փշած տաք հովն ախռան կամ սամ կոչեն որ թոյն ասել է, և հաց եփելու վառած փուէն դուրս

հանած տաքութեան պէս ազդէ մարդուս վերայ: Այս հովս շատ անգամ գիշերահասարներու ժամանակ փչէ յիսուն օր անընդհատ (Վընէյի Ուղևորութիւն Յայորէս):

8 Բնախօսք այս երևութիս կրնեբէօրն անունն տան որ սաստիկ տաքութեամբ օդին անօսրանալէն յառաջ գայ. 1798 փրանկաց Յեգիպտոս արշաւած ատեն խեղճ զօրականք այն աբևակէզ անապատներէն ծարուած պապակած անցնելու ժամանակ՝ սուզ խաբուէին այս պատրոպական երևութէս՝ հեռու ջրի լճեր և ամբարներ տեսնելով. և երբ շունչերնին կտրած հասնէին հոն տեղն՝ լիճն աւելի հեռի փոխադրուած երևէր (տես ի Ֆելլէնս փրանկերէն mirage բառն յօդ. 2):

9 Այս եղանակս մէջ օրն որչափ որ սարսափելի տաք է անապատին մէջ գիշերն ալ ընդհակառակն սաստիկ ցուրտ լինի:

10 Հելիոպոլսոյ գլխաւոր տաճարին գագաթն փայլուն պողպատէ մեծ հայելի մի կար՝ որ արեգական ճառագայթներն անդրադարձնէր. նոյնպիսի հայելի մի ալ կար Աղէքսանդրիոյ փարոսին ծայրն՝ որոյ մէջ երևէին դեռ հորիզոնէն վեր չելած նաւուց պատկերքն (Թղխոյոռիխոս աբհելէց հտ. Ե. — Նոմոֆանէ Յավարիի):

11 Տես ի Պարա հտ. Ա. գլ. Ը. Ձանապարհորդութիւն Յիսուսի Քրիստոսի գրոց հեղինակն հարիւր փարսախ դնէ՝ անշուշտ Ճամբուն գարձերն մոռնալով:

12 «Որպէս ուսայ ի Ներոց եգիպտացւոց՝ ի Հելիոպոլսոյ էր Մովսէս» ասէ Յովսեպոս ի Ե գիրս ընդդէմ Ապիոնի:

13 Այրաքացիք հետ զհետէ մոռանալով զԱստուածն Աբրահամու՝ նոյն աստիճանին զանազան այլանդակ դրօշներ պաշտէին. իբր Ագգաքի ասէ թէ Քոզուա ցեղն պաշտէր զարմաւենի, Պենի-Թէքրիի ասացեալն զժայռ ինչ, ուրիշ ցեղ մի ծառի տեսակ մի. վասն որոյ պարսիկ զարաքացիս երկրպագուս քարանց կոչէին:

14 Այս դէպքս Յոզեմինոս պատմէ՝ որոյ վերայ Թերևս ծիծաղին մեր ժամանակի անհաւատ մարդիկ, և զոր մեք ևս ոչ զարմանալի բան մի համարիմք. վասն զի յիրաւի Այրաքիոյ մէջ տեսակ մի ծառ կայ Պմոզպէ կամ պատկառուկի ցեղէն՝ որում մարդ մօտեցածին պէս ճիւղերն խոնարհին: Նայպուհր որ գիւրահաւան մարդ չէր՝ եմենի մէջ տեսաւ այս ծառս՝ զոր ապրացիք այնչափ պատուեն՝ որ տերև մի ալ փրցնելու ոչ թողուն, և հիւրամեծար անուն տան այնոր: Արդ եթէ այս միմոզա ծառս մարդ մօտեցածին պէս բնական երևութով իւր ճիւղերն հակէ, ևս առաւել խոնարհած պիտի լինի Աստուածորդւոյն մօտեցած ատեն:

15 Միայն Պալլադէս չէ այս հրաշքս յիշատակողն, այլ նոյն-

ալէս վկայեն Դորոտէոս վկայ, Սոզոմինոս, Մ. Ադսելմոս, Մ. Բռնավենտուրա, Լիրա, Դիոնեսիոս կարդուսեան, Թեսթա, Լուտուֆոյ, Բարրադիոս և այլք:

16 Աշխարհի յիշատակած այս անգլես ոչ միայն ի Սուրբ գրոց հաստատի, այլ նաև հրեից և հեթանոսաց վկայութեամբ. տես ի Մակրոբիոս գիրք Բ գլ. Դ յաղագս սատուրնական տօնից. — Որոգինէս ընդդէմ Կելսոսի գիրք Բ գլ. ԾԸ. — Թոլեոտոս Հուլոր. տես նաև Ճէյմս երիցս Նոր Ֆոլոբանի պատմութիւն:

17 Թրոմպելլի ի վարս Աստուածամօր. Զաքարիա ի Ճառս եկեղեց. պատմ. — Անսելմոս կանդուաղ. — Եւսերիոս. — Սուրբ Թովմաս:

18 Այս աղբիւրս մինչև ցայսօր Աղբէր Մարիամ կոչի, և հին աւանդութիւն մի ասէ թէ կոյս հոն լուանայր զմանկիկն Յիսուս. ի նախկին ժամանակս քրիստոնէութեան հաւատացեալք հոն եկեղեցի մի էնեցին, յետոյ մահմետականք ալ մզկիթ մի, և յերկուց կողմանց ալ Մարիամ աղբէր դիմին իրենց ցաւոց բժշկութիւն գտնելոյ համար: Աղբիւրն մինչև ցայսօր կայ. ուխտաւորք ալ նոյնպէս յաճախեն, բայց եկեղեցին և մզկիթն աւերած և հետքն անգամ ոչ երևին (Սաւարի հտ. Ա. — Թրէնէյո-Ռիշ արէվէյ հտ. Զ):

19 Աղբիւրէն սակաւ մի հեռի ճառոց ցանկապատ մի մնաք, և մահմետական առաջնորդներս մոլեռանդներ մի ցուցանելով առաց. « Ահաւասիկ Յիսուսի և Մարեմայ ճառն »: Վասնզի առնուն քահանայն որ ժողովրդապետ էր ի Ցոհենէնբուկց մերձ ի Բարիզ, իր ճամբորդութեան մէջ ի սուրբ Երկիրն՝ պատմէ թէ 1056ին արդէն այն նախկին մոլեռանդներն ծերանալով անկած էր, և Գայիբէի փրանկիսկեանք այնոր կատրուանքն բարեպաշտութեամբ պահէին իրենց վանց աւանդատունն. և այն պարտիզին մէջ կոճղն մի միայն մնացած էր՝ ուսկից ծլած էր մեր տեսած ճառն: Զօրավարն Ռիչէլեր՝ Հելիոպօլսոյ յաղթութենէն ետև՝ ուխտի գնաց այս ճառիս, և իւր անունն ոստոյ մի կեղևին վրայ գրեց. բայց այս անունս հիմա աներևոյթ եղած է կամ ժամանակ անցնելուն և կամ ի նախանձէ (Թրէնէյո-Ռիշ արէվէյ հտ. Զ, նամակ 141):

Անցեալ տարի 1885 յունիսի 1 Թուականով ի Հռոմ տպուած Journal de Rome օրագրին մէջ յետագայ յօդուածս հրատարակեցաւ այս ճառիս վերայ.

« Գրեն ի Գայիբէէ. Ընթեռնումք Լիվէրպոոլ օրագրէն զի արճանոց-ճաշարան Մարիաիէի որ գտանի մերձ առ ճառ կաւսին վաճառեցաւ ի գին 720 Լ. ս. որ է գրեթէ 18000 ֆր. ընկերութեան Յիսուսի: Ուառս այս հռչակաւոր՝ զոր փոխադրչին

նախկին նուիրեալ էր կայսրուհւոյն Եւգինիայ ի գնալն նորա Յեգիպտոս ի նաւակատիս բացման ջրանցքին Սուէզի, պարգեւեցաւ ի Թագուհւոյն Հարց լիսուսեանց, որք և հաստատեն զի ի յետին ժամանակս երևեցաւ կոյսն առ ճառովս, և զի մերձակայ առուակն անցանէ ընդ երուսաղէմ: Այլ ևս զի հարքս խորհին կանգնել մատուռն մի և մենաստան ի նոր կալուածի անդ: — Մերրի խօսելով զճառս ասէ. Զև հասեալ ի Մաթարիէ՝ սակաւ մի հեռի յուղւոյն յայնմ կողմանէ գոյ պարտէզ՝ յորում ցուցանեն զմոլեռանդներն՝ ընդ որոյ հովանեաւ հանգեան ըստ աւանդութեան գերդաստանն սուրբ ի փախստեանն յԵգիպտոս: Եւ է սա ճառ գեղեցիկ՝ բերելով տակաւին զնշմարանս կենդանութեան, այլ կարի ոստաքանց յեռանդուն պաշտօնասիրաց և յայլոց. յորոց և երկաքանչիւրն մոռացեալ զքարեպաշտութիւն և կամ զվարանական աղանդսն՝ անձնասէր խին պանծանօք բառնան ի բաց զկեղեանս նորա (առ ի գրոշմել զանուանս իւրեանց) և թողուլ գյիշատակ անցից իւրեանց: Այժմեան տէր երկրին յազգէ ղափոյ՝ երկուցեալ զի մի գուցէ անընդհատ աւարառութեամբ անցաւորացն ի սպառ եղծեալ անհետացցի ճառն՝ որմփակ ած շուրջ զնովաւ՝ որով զերծան ոստք նորա յաւարառութենէ այցելուաց, թողեալ զմսն մի բնոյն արտաքոյ առ ի արձանագրել այցելուաց զանուանս իւրեանց ի յիշատակ՝ քանդակելով զմեզնաւ՝ զոր պարտիզպանն ինքնին մատուցանէ որոյ խնդրէնն »:

20 Այս մանրամասներս մին ալ փրանկիացի պարոն տ' Անկլէրը յիշատակած է՝ զոր իր հին պարզ ոճովն հոս գնեմք. « Երբ Տիրամայրն մեր Աստուածածին անապատներն անցնելով՝ վերոյասացեալ տեղն հասաւ՝ գետին գնելով զՏէրն մեր՝ ջուր փնտռելու գնաց մօտի գաշտերն, բայց չգտաւ, և արտասւ տըխուր գարձաւ իր սիրելի մանկիկին՝ որ աւազին վերայ պառկած տեղւոյն ուրջովն զարնելով անուշ և բարեհամ ջրոյ աղբիւր մի բղխեցուցել էր. որոյ վերայ շատ ուրախացաւ մեր Տիրամայրն և շնորհակալութիւն մատոյց Տեառն մերոյ. յետոյ Տիրամայրն մեր նորէն պառկեցուց իւր սիրուն զաւակն, և նոյն աղբեր ջրովն Տեառն մերոյ լաթիկներն լուաց, և գետնին վերայ փռեց որ չորնան, և այն լաթերէն կաթած ջրոյ կաթիլներն մի մի թուփեր բուսանէին և այն թուփերն բալասան կը բղխեն, ևն »:

21 Հայրն Գիպլէօֆ համարի թէ մգուց Մեսիայի ընծայած ոսկին՝ սակաւ բան մի էր, և նմանեցուցանէ զայն վարձակալաց իրենց կալուածատերանց մատուցած ընծային՝ որ աւելի նոցա տիրութիւնն ճանաչելու նշան է և ոչ թէ զնոսա հարստացնելու համար:

22 Ովսէէ գլ. Բ 1: — Ս. Մատթէոս գլ. Բ 15:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Դարձ յԵգիպտոսէ.

Ո՛հ, որչափ տխուր է աքսորն, և որչափ անուշիկ հայրենեաց օդն: Օտարաց հացն ալ աւետրիճին հացին պէս ուտողին բերանն խառով չեցնէ, սերան ալ գառնութեամբ. որովհետև իր առուտականերն՝ մեր տղայոց թեան խաղերն ոչ յիշեցնեն, թռչնոց դայլայլիկին մէջ ներդաշնակութիւն մի պակասի, իր շրջագայելու տեղերն չունին այն քաղցր հրապոյրքն և յանկուցիչ և սիրտ քաշող դեղեցկութիւնն՝ ինչ որ ունին հայրենեաց գիւղային տեսարաններն:

Արդեօք ինչ ուրախութիւն զգացին ի տեսանել անդ ղերկիլն Քանանոյ՝ որոյ վեմ հորիզոնն, քաղցրիկ շրջակայքն, լերանց և դաշտաց իրարու հետ ունեցած դաշնակաւորութիւնն և զանազան գրից և տեղեաց պէսպիսութիւնքն՝ երջանիկ և զմայլելի փոփոխութիւն և ներհակութիւն մի գործէին ենդիպատոսի միօրինակ մեծագործութեանց հետ: Աստ երևէր Ժողովուրդ մի քաջասիրտ և վայրագ լի պատերազմական աշխուժիւ և միանգամայն անկեղծ և հաւատարիմ, մեծարոյ և սուրբ կրօնից պաշտօնասէր. իսկ անդ զանազան ցեղ բաժնուած սարկաց խումբ մի աւազակաբարոյ՝ իրենց անմիտ կրօնից մէջ վատահամբաւ արարողութիւններ խառնած, միշտ զբաղած մեհեաններ կանգնելու Ապիս կովու, տիտառնց (կոկորդիլոս) և սոխից ծովայնոց: Յովսեփայ և Մարիամու պէս եռանդագին պաշտօնասէր լինելու է մարդ, և այնպէս հայրենասէր որպէս էին եբրայեցիք՝ ըմբռնելու համար այն բարեպաշտ և քաղցր սը-

պաւորութիւնները զոր ունեցան այն գալիլեացի ամուսինքն ի տեսանել անդ ղերկիլն որ իրենց պարգեւեալ էր ՅԱմենակալէն, և երբ մտին ի զուարթագին քաղաքն իւրեանց Նազարէթ՝ որ համանուն նեղ և զովագին հովտին ծայրն կանգնեալ էր՝ դաշտային ծաղկի պարզ և բնական գեղեցկութեամբն [1]:

Այսչափ երկայն բացակայութենէն ետև՝ սուրբ ընտանիքն մտին իրենց անշուք բնակարանն. եկին խունեցան աղքականք և ծանօթք աչքի լուսոյ բարեմաղթութիւններով, զանազան հարցումներով և լըսած բաներուն վերայ զարմանալով, և իրենց ուրախութենն և ցնծութիւնն յայտնելով, որ չուտով տեղիք տուին խեղճութիւններու և մտատանջ հոգերու: Աղքատիկ ընտանեաց տնակն այնչափ ատեն երեսի վերայ մնացած լինելուն՝ գրեթէ անբնակելի եղած էր, երդիքն չատ տեղ փլած փլփլկած՝ հողմն և գիշերահաւասարի [2] անձրևներն համարձակ ներս լեցուած էին, ամեն դին մուխոտեր բուսած, գետնայարկ սրահն ցուրտ խոնաւ և մամռապատ. վայրի աղաւնիներ իրենց բոյներն շինել էին այն խորշերուր և նուիրական սեղեկին մէջ՝ ուր Բանն յաւիտենական մարմին եղեալ բնակել էր. փոքրիկ գաւթին մէջ գժնկին համարձակ տարածել էր իւր փշալից և մթնագոյն ճիւղերն, վերջապէս ամեն բան փոքրիկ տան մէջ այն աւերեալ և տխուր կերպարանքն առել էր՝ որ երեսի վերայ թողեալ չէնքերու մէջ երևի, և իւր տիրոջ բացակայութեան անջնջելի կնիքն է: Ուստի հարկ եղև չուտով ձեռն արկանել այս անհրաժեշտ նորոգութիւններուս, պէտք եղև խոհակերոցի պատուհնեն ու տան կահկարասիքն կարգի դընել, յորոց ոմանք կորսուած էին և այլք բոլորովին հենցած և կոտրատած. այս ծախքէս զատ հարկ եղև թերևս հատուցանել Յեգիպտոսէ եկած ատեն փոխառած ստակն. և անշուշտ այն ատեն վաճառած են

իրենց հայրենի կալուածն՝ մինչև յոբելեան տարին. ուստի Յովսեփայ և Մարեմայ այն երկայն ճամբոր-դութենէն յառաջ ունեցածէն՝ ուրիշ բան չմնաց ի-րենց ձեռքն՝ բայց եթէ Նազարէթի կիսաւեր տունն, Յովսեփայ հրպարկն և իրենց աշխատաւոր ձեռքն: Բայց Յիսուսն ալ չմոռնանք, որ դեռ մանուկ գոլով կայենն ուսն զարկած Ծերուձի հայրապերն հետ մօտ գիւղերն երթայր՝ ուր որ գործ և աշխատանք գտա-նէին [3]. իսկ մայրն արդէն իւր աշխատանքն ունէր և անգործ ոչ մնայր իւր հասակին և ուժոյն համեմատ: Արդէն շատոնց տան լուռթիւնն աներևոյթ եղած էր. բայց իրենք զիրենք շատ բանէ զրկելով, գիշերն ցերեկի խառնելով և քաջուռթեամբ աշխատելով՝ ա-ռաջին կարգի հարկաւոր պիտոյքն հոգային: Յիսուս, Մարիամ և Յովսէփ խիստ աշխատանաց տուին զի-րենք, և այն աղնուական սրտերն որ հրեշտակաց խմբերու կարելին հրամայել՝ Աստուծոյ ուրիշ բան ոչ խնդրելին՝ բայց եթէ զհաց հանապազորդ և օրըստ օրէն:

Այս բարեբաղդ և միանգամայն վշտահար գեր-դաստանիս անական կեանքն՝ որ Երրորդութիւն յեր-կրի կոչեցաւ՝ շատերուն ծանօթ չէ. առուսակ մի է խոտերու ներքև ծածկած, Սրբուհիւն սրբոցն է ամ-պոց և խնկոց ծխոնէն իբրև կրկին վարագուրօք ծած-կեալ, և սակայն ուշի ուշով հետազօտելով և մի առ մի քննելով աւետարանապատում անդքն ըստ ամե-նայն երևութից, և այն որ անծանօթ է՝ մինչև առ վայր մի մակաբերելով Յիսուսի Քրիստոսի ապագայ հրապարակական կեանքն պայծառ և գեղեցիկ լոյս մի սփռէ իւր և Տիրամօր անական և գաղտնի կենաց վերայ: Մեք ևս ջանամք այս Թերթս լցացուցանել՝ այն ամեն զգուշութիւն և խղճամիտ շրջահայեցու-թիւն ձեռք առնելով՝ զորս պահանջէ այսպիսի ծանր նիւթ մի:

Յիսուս որ տէր և աղբիւր էր ամենայն գիտու-թեանց՝ մարդկային ուսմանց կարօտ չէր, բայց իւր աբանչելապայծառ լոյսն հողերէն քօղին ներքև ծածկել հաճելով, և յամենայնի ուրիշ մարդկանց նմանիլ ու-զելով՝ իւր առաջին մանկութեան մէջ ոչ անարժան համարեցաւ իւր առաջին դաստն 'ի բարեպաշտ Մա-րիէն ուսանիլ. ուստի ընդհանրապէս կարծուի թէ իւր առաջին դաստիարակութիւնն 'ի Մարեմայ ըն-դունած է. նա և ամենք յաստուածաբանից համա-րին թէ ուրիշ վարպետ ունեցած չէ: Հրեայք որ այս կարծիքս ոչ ընդունին՝ ընդհակառակն հաստատեն թէ անուանի րաբբի [4] մի՝ որ այն ատեն Նազարէթի մէջ դպրոց մի ունէր՝ ինքն յառաջ տարած է Սրբոյ Կուսին սկսած դասերն: Բայց հրեայք ինչ որ ալ ա-սեն՝ յայտնի է որ Յիսուսի դաստիարակութիւնն բաբունեաց ձեռքով ոչ եղաւ. որովհետև գիտեմք որ Յիսուս Քրիստոս ոչ նախանձայոյզ էր և ոչ ծերոց աւանդութեանցն պաշտպան, այլ մանաւանդ թէ յայտնապէս պախարակէր ժողովարանին ապակա-նեալ ոգին, սաստկապահանջ խստութիւնն անձ-նասիրութիւնն և բծախնդրութիւնները: Արդէն Սուրբ Յովհաննէս այս վիճաբանութիւնս լուծէ ա-սելով իւր աւետարանին մէջ թէ հրեայք զՅիսուս անուս մարդու մի տեղ դրած էին [5]: Եւ նա որ ե-կեալ էր աշխարհիս հաստացածներն փոխելու՝ 'ի մարդկանէ ուսանելու բան մի չունէր:

Յիսուս վսեմական և խորախորհուրդ հոգւով ճո-խացեալ՝ ընդարձակ ասպարէզ խնդրէր ծաւալելու համար. յառաջօրէ մինչև երեկոյ նիւթական աշխա-տութեանց հետ լինելով՝ գիշերներն իր ձեռագոր-ծէն գագրած առեն՝ աստեղազարդ երկնից գիմացն ղեկնայր իր օրհնագրական և մարգարէական մեծ-վայելչութիւնն: Ուղիղ ոտքի վերայ կանգնած այն բլրին վերայ՝ ուսկից երևէին բոլոր Քանանու երկրին

ջերինքն և ընդարձակ անտառներն՝ իւր վեհ հոգին ընդարձակէը տիեզերաց Արարչին առնէ, որոյ ինքն առաքեալն և որդին և հաւատարն էր: Այս Աստուծոյ հետ առանձին տեսակցութիւններս գիշերոյ ա-նապատի և խորհրդոց լուռթեան մէջ՝ Յիսուսի Քրիս-տոսի ցանկալի սովորութիւններէն մին եղէ, որոյ քանի մի օրինակներն ընթերցուածք Աւետարանին մէջ: Նախատիպ մարդն Բանն մարմնացեալ՝ անշուշտ այ-սու կամէր իրեններուն ուսուցանել թէ ինչպէս զա-տելու է ալօթից զուտ ոսկին՝ յանձնացոյց պարծա-նաց և կեղծաւորութեան այլանդակ խառնուրդին, զոր իւր ժամանակի փարիսեցիք այնչափ ձարտար էին իրարու հետ խառնելու:

Իսկ Կայն որ պահանջող և զուրկն անհանգիստ առնող բնութիւն չունէր ամենևին՝ ոչ բնաւ հակա-ռակէը իւր որդւոյն միայնասէր յաճախութեանցն. ինքն գիտէր որ այն առեններն Յիսուս չափելու հետ էր այն անյատակ անդունդն որ բացուած էր մարդկան աղբի ոտից ներքև, և այն լուռ խորհըր-դածութիւններէն պիտի ծագէր աշխարհիս փրկա-գործութիւն: Ուստի այն հզօր ոգւոյն վարմունքն յարգելով՝ որ ինքն իր վերայ անգրադառնայր, և իւր կուսական լուսացայտ աչքն յառելով այն փառա-հեղ ապագային վերայ որ երթալով մօտենայր՝ ար-գէն տեսանէր Մարիամ ղերկինս բացեալ, զմահ յաղթահարեալ, և զամենայն աղգս աշխարհի համա-հաւաքեալ ընդ գրօշս Մեսիային: Բայց նոյն ա-տենն՝ տաճարին մէջ ծերունւոյն մարգարէութիւնն ալ իբրև տխուր գագաղ մի մեռելոյ երևելով այս զմայլական տեսարանիս եզերքն, սարսուռ մի ընթա-նայր յերակունս խելք մերն, և իւր սիրան՝ որոյ մե-ծագոյն մասն գրաւած էր Յիսուսի սէրն, անհնարին տագնապներով այլայլէր. և ծածուկ ձայն մի լսէր որ գոչէր. Աբեան քաւութիւն մի հարկաւոր է,

հարկ է որ Քրիստոս մեռնի: Այս լսածին պէս ձեռ-քի գործն Թողոյր՝ որում դատապարտած էր զինքն աղքատութիւնն [6], և դուստրն Դաւթի իր զաւակին բնաւելու ելանէր. վասն զի պէտք մի զգայր տեսա-նելու զնա, և մայրական տագնապն հանդարտեցնե-լու, և սատւգելու թէ զաւակն դեռ ողջ էր և իր մօտն գտանէր:

Յիսուս ալ զինքն տեսածին պէս իւր դէպ 'ի յեր-կինս յառած և խորհրդոց մէջ ընկղմած աչքն 'ի վայր խոնարհեցուցանէր, և իւր բոլոր աշխարհիս մտածութեամբ յոգնած ձակատն՝ մանկական զուարթութեան կը փոխուէր. և Մարիամ իւր սրտին մէջ զգացած մահագոյժ երկիւղներն յետս մղելով՝ յոր-դորէր զաւակն որ երթայ հանգչի, որպէս զի եր-կրորդ աւուր ոյժ առնու աշխատելու՝ երթալու տեղն հեռու լինելով և գործն ծանր և դժուարին... Ա-տուածորդին լուռթեամբ հնազանդելով մահկանա-ցու ծնողին եուէն տունն մտանէր, վասն զի սիրէր զնա և էր նմա հնազանդ:

Հաւատարատէս հիանայ Սուրբն Բեռնարդոս որ-դւոյն հնազանդութեանն և կուսամօր մեծվայել չութեան վերայ ասելով. « Աստուած էր սա, որում հպատակին հրեշտակք և հնազանդին իշխանք և գա-տաւորք երկրի, և սակայն հնոյ հպատակ էր մօր իւրում: Դուք զարմացէք որում և կամիք՝ հիանալի խոնարհութեան որդւոյն կամ գերազանց վսեմու-թեան մօրն. իսկ ես երկոցունն վերայ ալ հիանամ, և յաչս իմ երկուքն ալ մեծամեծ սքանչելիք են: Աս-տուածոյ՝ հնոյ միոյ ակնարկութեան հնազանդին ան-օրինակ խոնարհութիւն է, իսկ հնոյ Աստուծոյ հրա-մայելն անհամեմատ աստիճան փառաց »:

Յիսուսի պատանեկութեան տարիքն մտած տեն՝ տարօրինակ դէպք մի պատահեցաւ որ Սրբոյ Կուսին սիրտն կարի յոյժ վշտովեց: Յովսէփ և Մարիամ ի-

քենց հայրենատուր օրինաց եռանդուն օրինապահք՝ սովորութիւն ունէին ամեն տարի զատիկ տօնին Երուսաղէմ երթալու։ Այս ճամբորդութիւնս որնախընթաց տարիներն ծածուկ և բազմութեան հետ խառնուած կատարէին՝ քանի որ Ասուծոյ Թշնամւոյն (Հերովդէսի) որդին Թագաւորէր մակաբայեցւոց աթոռոյն վերայ, Արքեղայոսի աքսորուելէն և Հռոմայեցւոց տիրապետելէն ետև՝ վախու բան մի ճեացած չէր, որով և աւելի գիւրացած էր։ Երբոր Յիսուս երկոտասանամեայ եղև, իւր ծնողքն ալ Հերովդէսի արքանեակներէն կասկած մի չունենալով՝ զինքն ալ իրենց հետ առին Երուսաղէմ երթալու համար, և մեծ բազմութեամբ Նազարեթէն ճամբայ ելլին. բայց սակաւ մի յառաջ երթալով ուխտաւորներն փոքրիկ խմբերու բաժնուեցան, ընտանեկան յարաբերութեանց և մտերմութեան համեմատ, որ զայք տղայոց հետ, կանայք առանձին, և արք ալ նոցա ետևէն [7]։ — Կուսին հետ էին Մարիամ Կղէոպայ՝ իւր տալն Յովսեփայ քոյրն, ուրիշ Մարիամ անունով ծանօթ մի՝ որ Աւետարանին մէջ միշտ այս պարզ անուամբ կոչի Միւս Մարիամ, Զեբեդեոսի կիներն Սալոմէ՝ որ Բեգսայիդայէն եկել էր իր տղոց և երկանն հետ ի միասին, Յովաննա Հուզայի կինն, և ուրիշ շատ մի կանայք նազարեթացիք որ իրեն ազգականներն և ծանօթներն էին։ Սակաւ մի հեռուէն գային Յովսեփ և Զեբեդեոս ձկնորան և ցեղին ծերերն ծանր ծանր իրարու հետ խօսելով։ Տղայք ալ ինչպես սովորութիւն է մանկանց՝ իրենք իրենց խումբ մի ձևացուցել էին, և Յիսուս ալ այն գալլիլեացի մանչիկներուն հետ էր զուրս Աւետարանն եբրայեցւոց լեզուին և սովորութեան համեմատ՝ նորա եղբայրներն կոչէ՝ այսինքն իր մօտաւոր ազգականներն։ Այս ազգայոց երամին մէջ՝ որ ուրիշ խումբերէն յառաջ քայլէին, որոշուէին Զեբեդեոսի երկու տղայքն Յակոբոս

որ Տիբերեայ ծովակին ալէաց պէս՝ անհանդարտ տղայ մի էր, և Յովհաննէս որ տարեօք Յիսուսէն կրտսեր էր՝ սիրուն և անոյշ դէմքով տղայ մի, որ իր կրակոտ եղբօր քով եղած տեսն՝ կարծես թէ Եսայեայ գառնուկին նմանէր՝ որ Յորդանանու առուծին հետ աներկիւղ ճարակի։ Բեգսայիդացի ձկնորսին տղոցմէ զատ՝ որոց յետոյ Փրկիստոս Բաներեգէս անունն տուաւ՝ որ որդիք որոտման նշանակէ, Յիսուսի հետ էին նաև Ալփեոսի Յովսեփայ եղբօր չորս տղայքն, յորոց առաջինն Յակոբոս որ Երուսաղէմայ առաջին եպիսկոպոսն եղև՝ ծանրակաց և խստակրօն պատանի մի էր երկայն մազերով, գեղնած երեսով, ցուրտ և ձգնաւորի կերպարանքով տղայ մի, որ նազովրեցի սեպուհըն համար Յիսուսի վերայ բարձրն նայէր և գոռոզանայր՝ խեղճ հիւսան զաւակ մի համարելով զնա. և այս իր բնութեան մէջ երևէին առաքինութեանց հետ միատեղ մարդկային թերութիւններ, անշարժ հաստատութիւն, ուղիղ և կրօնական նախանձ, բայց միանգամայն արհամարհութիւն այն ամեն բանի որ Աբրահամ նահապետէն յառաջ եկած էր, և ինքն իր վերայ մեծ համարումն։ Իսկ Ալփեոսի միւս զաւկներն ալ որ էին Յուդա, Սիմոն և Յովսէս, սոքա ալ բիրտ պարզ և կռուասէր տղայք էին, որ բաւական մեծկակ ալ լինելով՝ խնարհ Մարիամու զաւակն քան զինքեանս շատ վար համարէին, և Աւետարանէն ալ երևի որ այս կարծիքս շատ դժուարաւ ի բաց թողել են [8]։ Հապա Յիսուս ինչպիսի տղայ էր. Յիսուս ամենևին ցուցամոլութիւն չունէր, ոչ կարգէ դուրս բարեպաշտութիւն ցուցանէր, և ոչ նախանձայոյզ խստակրօնութիւն, ոչ իւր գիտութեան և իմաստութեան վերայ պարծէր՝ ինքն որ ամեն իմաստութեան լրումն էր, որովհետև սովորաբար մարդիկ չունեցածնին կուզեն ցուցանել։

Իրեն պարզ հագուստովն՝ որ Եսեանց ձևովն էր,

իր ոսկեգոյն խարտեաշ գունով երկայն մազերովն՝ որ Թուխս ձակտին վրայէն երկու բաժնուած՝ ուսերուն վերայ սիրուն ծածանէին, Դաւթի տղայոց Թեան նմանէր՝ երբ վախկոտ ամչկոտ Սամուէլի առջեւն ելաւ հովուի պարզ զգեստով, և սուրբ իւղով օծուեցաւ. բայց Քրիստոսի Թուխ և բնական մրայն աչաց [9] մէջ՝ իր պատուն վառվռուն և քերթողական աչքերն աւելի աղդեցութիւն և քաղցրութիւն մի երևէր, Թափանցող և աստուածային զօրութիւն մի տեսնուէր իր բոլոր մէջ՝ որ մարդկանց մաքէն անցածն ալ իմանայր և մինչև սրտին ներքին խորերն Թափանցէր. սակայն Յիսուս այն տեղն իւր ականջներուն փայլն քողարկէր, ինչպէս Մովսէս իւր պայծառագեմ երեսն՝ երբ խորանէն դուրս ելանէր: Հանգարտիկ քայլելով ընկերոց հետ խօսակցէր՝ իւր հասակին համեմատ խօսքն կշռելով՝ այն ըստ մարմնոյ աղգակից մանկանց հետ՝ զորս յետոյ իրեն պիտի աշակերտէր, տեսնելով նոցա բերան կձեպին ներքեւ ծածկուած ադամանդին կշիռքն և արժէքն՝ որ օր մի այնչափ չողշողուն պիտի փայլէին. ուստի Քրիստոս իրենց ապագայ վիճակին տեսնելով սիրեր զնոսա: Եւ իր ակնկալութեան մէջ չխաբուեցաւ. վասն զի ոչ քա՛ղ ալ որ իրենց աղգակցաց պէս Մեսիայի վերայ ճոխութեան հարստութեան և իշխանութեան գաղափարներ ունէին՝ երբ իր ձայնն լսեցին 'ի բաց Թողլն բովանդակ իրենց աղգային և կրօնական նախապաշարմունքն, և սիրով յօժարութեամբ ընկալան յաժմենեցուն գաւտպարտեալ վարդապետութիւնն Քրիստոսի, որոյ սկզբունքն և խոստմունքն՝ հին օրինաց անիծից պէս ուրիշ բան չէին բայց եթէ վիշաք չարչարանք նեղութիւնք և հալածանք՝ զորս կրելոց էին վասն նորա: Եւ այնչափ հզօր կապանօք կապեցան ընդ նմա՝ որ ոչ իշխանք աշխարհի, ոչ ցուրտ, ոչ մերկութիւն, ոչ քաղց և ոչ սուր՝ չկարացին ան-

ջատել զնոսա 'ի սիրոյ նորա. և որոյ հետացն հետևեցին քաջութեամբ կոխելով այն փուշերն և տատասկներն զոր աշխարհ նոցա ոտից ներքև արկանէր, և ինքզինքին մատնելով ամենայն ազգ տանջանաց՝ խոտանս և արհամարհս համարեցին զանձինս քան զամենայն որդիս մարդկան. ոչ ամօթ համարեցան ոչ զՈրդին մարդոյ և ոչ զԱստուածն նորա, և ոչ ըզդիւահարուբիւն խայխի: Եւ ինչքա՛ պիտի ամաչէին. ամօթն խաբեբայից համար է. իսկ առաքեալք կատարեալ հաւանութեամբ և համոզմամբ քարոզէին. իրենց ուղիղ և պարզ սրտին վկայութիւնն մարդկանց առջև նուիրական և արժանահաւատ ցուցանելոյ համար՝ ամենայն բան զոհեցին, ամենայն ինչ թողին, ամենայն չարչարանք կրեցին, ամենեցուն ներեցին, և արեամբ իւրեանց կնքեցին զԱստուածային վարդապետին իւրեանց [10]: Բայց այն ժամանակն զորմէ խօսիմք՝ այս գիւցազնական առաքինութիւններս դեռ ծլած չէին, և այն գալիքնեներուն մաքէն անգամ ոչ անցանէր թէ օր պիտի գար որ իրենց ուղեկցին աստուածութիւնն պաշտպանելու համար իրենց կեանքն ևս պիտի տային:

Զորս օրէն մէր ուխտաւորքն 'ի սուրբ քաղաքն հասին՝ ուր յառաջագոյն եկած էին հեռաւոր աշխարհներէ խուռն բազմութիւն հրէից: Յովսեփայ և Մարեմայ ընտանիքն ժողովեցան զատկական գառն ուտելու՝ զոր քահանայք զենած էին տաճարին գաւթին մէջ երկու երեկոյին պաշտամանց միջոցն [11], հետն ալ բաղարջ հաց և եղէգ կամ լեղի հազար վայրի՝ ինչպէս որ սովորութիւն էր: Երբոր տօնի օրերն աւարտեցան՝ Քրիստոսի ազգականքն ժողովեցան նորէն իրենց տեղն դառնալու, և նոյն կարգն բռնելով ինչպէս որ եկել էին, Յիսուսի ծնողքն 'ի սկզբան չանդրագարձան թէ մնուկն հետերնին էր. Մարիամ կարծեց թէ Յովսեփայ կամ երկու

Ցակոբներու հետն է. Յովսէփ ալ համոզեր էր կամ մըն հետն է և կամ ուրիշ ազգական տղոց հետ։ Առաջին հանգստի տեղն որ հասնին՝ բաժնուած խումբերն միացան, և Կոյան եւս եւս պանդոկն հասած ուղևորներուն մէջ բնաւելով Յիսուս չգտաւ, մարդ մի ալ չկար որ կարէր ասել թէ ինչ եղաւ։ Ալ ո՛վ կարէ պատմել ծնողաց ապտնասն ու ցաւն. «Նա երկնից աւանդ մի էր ինձ յանձնուած, ասէր Յովսէփ ինքնիրեն տրտմութեամբ»։ — Զաւակս տեսնող մի չեղա՞, զաւակս ո՛ւր է գոչէր խեղճ մարիկն արտասուելով։ Իրլոր գիշերն բոլոր ցերեկն բնաւեցին, ազնուն տալով կոչէին անտառներու մէջ, և գահավէժներու մէջ ղարհուրանօք նայէին. վախէին որ մի գուցէ վտանգ մի հանգիպած լիցի իր կենաց կամ ազատութեան, և ոչ գիտէին թէ ո՛ւր գտնեն զինքն՝ եթէ ճամբայն մոլորած և տեղ մի մնացած էր։ Վերջապէս յուսահատած նորէն Երուսաղէմ դարձան և գտնէ գուռ շրջելով բարեկամաց տներն հարցնէին, բայց գիտցող մի չկար. հոգնած դադրած այն ընդարձակ քաղքին ամեն դին շրջելէն եաև՝ հուսկ յետոյ տաճարն մտին։ Կամարակապ գաւիթներէն միոյն մէջ ուր օրինաց վարդապետներն ժողովէին՝ մանուկ մի կանգնած խօսէր, և Իսրայէլի ծերերն ըզմայլած հիանային նորա նրբամտութեանն և գիւրութիւն խնդրոց ուսած պատասխաններուն ճշդութեան և պայծառութեան վերայ, և բոլորն շարուած նորա վարդահաս հանճարոյն և սխրալի իմաստութեան վերայ ապշած ունկն դնէին. և մին՝ի նոցանէ որ Սուրբ կուսէն սակաւ մի հեռու կեցել էր ասաց. Սա տղայս կամ Դանիէլն է և կամ յերկնից իջեալ հրեշտակ մի։ Նա ինքն է, Յիսուսն է, ասաց մանկամարդ մայրն և գէպ՝ի վարդապետաց մտեցաւ, և մերձենալով Մեսիային՝ վերջին գորովանաց ձայնով՝ յորում իւր յետին տագնապն ալ երևէր, քաղցրու-

թեամբ ասաց. «Որդեակ զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ, ահաւասիկ հայր քո և ես տառապեաք խնդրեաք զքեզ»։ — Իսկ մանուկն բոլորովին առ Աստուած յափշտակեալ լինելով՝ թերևս սակաւ մի խստութեամբ խորհրդական կերպով պատասխանեց. «Ձի՞ խնդրեիք զիս, ո՞չ գիտեիք եթէ՝ի տան հօր իմոյ պարտ էր ինձ լինել»։ Յովսէփ և Մարիամ՝ի սկզբան չհասկնալով Մեսիային տուած պատասխանն լուեցին։ Ու երկնելով նոցա հետ միատեղ եկն՝ի Նազարէթ, և ամեն բանի մէջ նոցա կամաց կատարեալ հնազանդութեամբն՝ այս թեթև ամպս ալ փարատեցաւ։ «Եւ Մայրն նորա պահէր զամենայն զբանն՝ի սրտի իւրում։ Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ և հասակաւ, և շնորհօք Աստուծոյ և՝ի մարդկանէ»։

ԾՆՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԺԴ. ԴԱՒԹԻ

1 Նաղարէթն երբայականին մէջ Յաղէկ նշանակէ ըստ Քլարքի։

2 Հրէաստանի մէջ անձրևային եղանակն գիշերահաւասարներուն սկսանի, մանաւանդ աշնան գիշերահաւասարին որուն մունք հոսանք անձրևաց և կարկուտ անպակաս են (Վղնէյ Ո֊ղնոդոնիոն ԱԱոդբս)։

3 Ս. Յուստինոս վկայ (՚ի Տրմոխօոնիոն ընդ Տրէֆոն) պատմէ թէ Յիսուս Քրիստոս իր հայրագրին օգներ լուծեր և արօրներ շինելու աշխատած առեն. զնոյն ասէ և Կոտեպարտ ՚ի վրս Սբեց Յոպին հա. ԺԴ. պղ և յաւելու թէ հնագոյն մատենագիր մի հաստատէ թէ իր ժամանակներն դեռ ևս ցուցանէին քանի մի լուծեր որպէս թէ շինեալ ձեռամբ Նոցա։

4 Հրեայք Յիսուսի վարժապետ եղած համարին զՅեսու որդի Բարաքիայ՝ որ ինքն ալ Աքիբասայ աշակերտ եղած էր. բայց այս կարծիքս բոլորովին սխալ է, որովհետև Աքիբաս՝ որ հրէից մէջ շատ անուանի էր՝ Ադրիանոսի կայսերութեան առենն էր՝ Հերովդեսի և Յիսուսի Քրիստոսի մահուանէն հարիւր տարիէն աւելի յետոյ ժամանակաւ։

5 Հրեայք Քրիստոսի համար ասէին. «Զնարդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չէք» (Ա.ետ. ըստ Յովհաննու գԼ. Է, 15)։

6 Տերտուլիանոս յերրորդ դարու Մարիամու համար ասէ թէ իր աշխատութեամբն ապրէր. և յառաջ քան զնա Կելսոս երկրորդ դարուն մէջ քրիստոնէից երեսն հարկանէր Մարիամու իւր ձեռագործ աշխատութեամբ ապրիլն։

7 Սուրբ Եպիփան և Սուրբն Բեռնարդոս ծանուցանեն որ այսպիսի ուղևորութեանց մէջ արք զատ խումբ կազմէին և կանայք զատ, ուստի Յովսէփ և Կոյսն զատ խմբից մէջ լինելով՝ Յիսուսի անհետքն լինելուն վերայ հոգ չարարին, և երբ երեկոյ եղև և իրաքանչիւր գերդաստան միացաւ՝ այն առեն անդրադարձան թէ Յիսուս իրենց հետ չէր։

8 Յոհան Ոսկեբերան Ճառ ԽԹ։

9 Նիկեփորոս Պապոնիոն Եկեղեց. հա. Ա, յորում աւանդութեան հետևելով Տեառն մերոյ դիմաց նկարագրութիւնն ամենեն հարազատն է։ — Վոշ անգլիացի վերջերս գիրք մի հրատարակած է քրիստոնէութեան առաջին ժամանակաց տակաւ֊գիւտ և անծանօթ յիշատակարանաց վերայ, յորում յոյժ հե֊

տաքրքրական միտալի մի վերայ խօսի՝ որ արդէն հնգետասանեորդ դարուն ծանօթ էր։ Այս միտալիս վերայ Տեառն մերոյ Յիսուսի դէմքն գրոշմած է քոշնիի դիրքով. մազերն ըստ օրինի նազովրացւոց երկու բաժնուած մինչև ականջներն հասանեն և անտի ուսոց վերայ ծածանին. մօրուքն թաւ ոչ այնչափ երկայն և երկու ճիւղ բաժնուած. դէմքն և իրանն գեղեցիկ՝ որոյ վերայ իջանեն պատմուճանին սիրուն ծալքն։

10 Բառաքաղ ասաց «Կամակար հաւանիմ պատմութեանց որոց վկայք ՚ի մահ տան զանձինս»։

11 Ասել է ՚ի միջօրէէն կամ ժամն մէկէն մինչև արևու մտնելու առեն (Պամաժ հտ. Ե, գիրք Է. գԼ. 11)։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Մարիամ 'ի ժառանգական քարոզութիւնն Յիսուսի.

Պատմագրութեան մէջ աշխարհս երկու մասամբ նկատի՝ ասաց մեր Ժամանակի երևելի հանճարեղ մարդ մի, մի մասն խաչէն կառաջ և միւսն ըղկնի: Յիսուսի Քրիստոսի վերածնող առաքելութեան ժամանակ՝ նախկին աշխարհն զառամութեան վիճակի հասած՝ պլանդակ կերպարանք մի ներկայացնէր՝ ծաղրականն ահաւորին հետ միացած: Արաբացիք և Գալլիացիք երկայն դարեր Աստուծոյ միութեան նախկին գաղափարն պահէլէն ետև՝ այնչափ անմոռութեան հասել էին որ զակասիա և զկաղնի պաշտէին [1]. հնդիկ զՓանգէս աստուածացընելով՝ մարգազոհեր առնէին Աքաիս աստուածոյ մահու աստուածուհւոյն [2]. եգիպտացիք պաշտօն մատուցանէին սոխի, խաւարի, լուսատի և ամեն կալաքուսոց [3]. անծանօթ ժողովուրդք նորագիւտ Ամերիկոյ պաշտէին զվագր, զանգղ, զորոտուն և զՋրվէժս խոխոջաձայնս [4]. իսկ յոյնք և հռովմայեցիք ըստ իւրեանց իսկ ասելոյ ըզմէ հեանս գիւօք լցուցանէին [5], և այն հանճարել և կիրթ ազգերն՝ որոց մէջ վեմ հանճարներ ալ պատկաս չէ՛ին՝ աստուածոյ կարգն անցուցել էին զախտս նաև զպլանդակագոյնս և զանագորոյնս անգամ 'ի կրից, և զՈվկիանոս լցուցել էին աւազակներով չնայն զնեերով և մարգասպանեերով: — Իրենց հաւատոց համեմատ էր նաև իրենց վարքն ալ. ապականութիւնն լայնարձակ գետոյ մի պէս՝ կայսերական եօթն բլուրս բարձունքէն կ՚ընելով՝ ամեն գաւառներն ողողէր: Նոյն ինքն Հրէաստան՝ որ այս ախտից գարշութենէն

բոլորովին ազատ չէր՝ սարսափելի արագութեամբ ապականէր. իւր կրօնքն միայն հինական վարդապետութենէն վերայ հաստատեալ չէր՝ այլ անթիւ աւելորդաստաչա սովորութենէց, և րաբունեաց ցնորական աւանդութիւնք Մովսիսի աթոռոյն վերայ բազմէին [6]:

Այս ամեն մտաց մոլորութենէն մէջ ինչ բանի գայր խելքն կամ մտաց ամբարհատաճ զգրութիւնն որ դշխոյ և թագուհի համարի հանճարոյ, որ իւր անձուկ կարկնոյին չափել կամի զսիեղերս, և աստուածներն իր չափաւորութեան յարմարցնել ջանայ՝ Պրոքրուսթի առասպելեալ մահճին վերայ գնոսա չափելով [7]. ոՀր էր բանավարութեան այժն՝ որոյ վերայ պարծենայր և ուր անկած էր իր գրօշակներն, մինչդեռ իւր պատուարներն ամեն գիշեր փլել փլփլել կէին. եթէ ինքն բաւական այժ ունէը կարուսանծն ձեռք ձգելու՝ ինչու՞ չջանաց առնելու... Եթէ աչ վան զի գիտէր որ հեղեղն իր կարկառած թումբերն նորէն պիտի պատռէր, և յորձանքին դէմ գընելու զօրութիւն չունելով՝ բաւական սեպէց այնոր ձկանները իմաց տալու: Ինքն իմաստասիրութեան յենած՝ ընկերական մարմնոյ անզգայ մխրճոյն վրայ հառաչէր. հարկ էր ուրեմն որ քրիստոնէութիւնն գայր և ասէր այս գիակիս. Արի և կանգնեաց. և յիրաւի այս հրամանս լսածին պէս ընկերութեան գիակ նացեալ մարմինն ոտք ել և կենդանացաւ: Եւ այն օրէն 'ի վեր նոր սերունդ մի իւր ամեն ախտերէն բժշկուած, և իւր ամեն ազատերն սուրբ աւազանին մէջ լուալով՝ հաւաքեցաւ այն խաչին բոլորտիքն զոր որդին Մարեմայ անկեց նորածնեալ աշխարհիս վերայ, որպէս յաղթանակ Աստուծոյ 'ի վերայ դժոխոց:

Այս փառաւոր յեղափոխութիւնս՝ որ զսէր յաթոռ բարձրութեան բազմեցոյց, և ամենայն առաքի-

նուիրեալներն իրեն արբանեակ կարգեց, այս հրաշալի դէպքս որ բոլոր աշխարհք կերպարանափոխ արար, և որ մինչև ի վախճան դարուց պիտի հռչակուի ի Նազարեթէ իւր ծագումն ունեցաւ։ Այն անանուն քարաժայռէն բղխեց խոնարհ քրիստոնէութիւնն որ Լամարթինի ասացածին պէս « Անծանօթ առուակ մի և կաթիլ մի ջուր էր՝ որ հազիւ թէ երկուց ձընձղուկնց ծարաւն կարէր անցուցանել, և զոր արեւու ճառագայթ մի բաւական էր բոլորովին ցամքեցընել, հիմա այն կաթիլն ոգեղէն ովկիանոսի մի պէս մարդկային խմաստութեան ամեն անդունդներն լեցուց, և իր անսպառ յորդութեամբն ողողեց զանցեալն գներկայն և զապագայն » [8]։

Լաւ գիտեմք թէ ինչ տկար միջոցներ գործածուեցան այս մեծ գործոյս սկզբնաւորութեանն համար՝ որ արդի ժամանակաց պատմութեան վերայ բոլոր իւր բարձրութեամբն տիրէ։ Տաճարին մէջ գնացին յայտնեցին եաև՝ Որդին Աստուծոյ անծանօթ և խորախորհուրդ կեանք մի անցուցանէր իւր հայրագրին և մօրն հետ ի միասին։ Այս ժամանակս զոր աշխարհս կորսուած համարի՝ անչուշտ Սրբոյ կուսին համար ամենէն պայծառ և խաղաղ ժամանակն էր. վասն զի մարդուս կեանքն ոչ երբէք այն աստեն երջանիկ է՝ երբ ձմերային հեղեղի պէս աղմկալից թաւալի, այլ մանաւանդ երբ վճիտ յստակ և լուիկ առուակի մի պէս մարդագետնոց խոտերուն ներքև ծաւալի։ Մարիամ այն աստեն երջանկագոյն էր քան զամենայն մարս՝ երբ Հոխութեան ամեն վայելքն ղուրկ, և լուութեան քաղցրութենէն մերկացեալ՝ իր օրգոյն մօտ ապրէր՝ նորա համար աշխատելով, նորա հաճոյքն կատարելով, և գնացն ամեն աստեն իւր քովն տեսնելով, և ինքգինք սուրբ հնձոց երախայրեաց պէս իրեն նուիրելով, նորա աշակերտաց մէջ առաջնին քան զամենեսին և խոնարհ և հլու լինելով,

իւր կատարելագործեալ գատողութիւնն գերագոյն բանին և որդւոյն աստուածութեանն հպատակելով։ Իրաւ է որ երբ Յիսուս յայտնէր իրեն մարգարէութեանց խորին իմաստն՝ որոց մէջ յիշատակուէին իր քաշելոց չարչարանքն՝ Մարիամու կուսական ձագկան սև ամպ մի իջանէր, բայց շուտ գարձեալ իւր պարզութեան գառնայր այն քաղցր և ընորհալից դէմքն. փոթորիկն դեռ շատ հեռու էր, և իրենց նաւակն անքոյթ նաւահանգստի մէջ էր։ Հոն մօտ էր որդին, և իր աչքն նորա աչքին ոչ բաժանէր, նորա չրթանց խօսքէն կախուած և ամեն փոքր չարժմանցն մտադիր, ամեն ակնարկութեանցն պատրաստ, և ամեն ծառայութեանցն փութաջան։ Ո՛հ որչափ երջանիկ համարէր զինքն նորա սպասաւորութեան մէջ, որչափ գոհ սրտիւ անցուցանէր այն գիշերոյ երկայն ժամերն՝ մանելով հիւսելով նորա աշխատութեան ժամանակ հագնելու շապիկներն, ծոնական զգեստներն և այն անկար պատմուճանն՝ որ Ճարտարութեան և երկայնմտութեան հրաշալիք մի էր. աւաղ որ ժամանակէ մի եաև՝... Բայց գեռ նոյն ատեն Աստուած իւղով ուրախութեան վիայն օծել էր իւր փրկիտուն. և փեսաւերն՝ իմաստուն կոյսն Աւետարանին Թողոյր որ վաղիւն վասն իւր հոգայցի. և « Խաղաղութիւնն Աստուծոյ որ ի վեր է քան զամենայն միտս՝ պահէր զսիրտ նորա և զմիտս »։

Յիսուս իմաստութեան և գիտութեան բոլոր գանձերն բովանդակապէս ունէր, և լրումն աստուածութեանն մարմնապէս բնակէր ի նմա, ինքն էր Ճառագայթ փառաց հօր իւրոյ երկնաւորի. բայց երբեմն մարդ ի Մարիամայ ուսաւ անդամին ի մանկութենէն այն խոնարհ առաքինութիւններն որ յարակից են մարդկութեանս, և այն պարզ և խանդաղատալի կերպերն զոր բոլոր կենաց մէջ պահեց. այն երկայնամիտ և անխռով քաղցրութիւնն՝ զոր այնչափ լաւ

միացնէր օրէնսգրի և մարգարէի վայել հաստատա-
մտութեանն հետ, այն գործովագութ ողորմութիւնն
որ բարեխառնէր Աստուծոյ զայրացելոյ բարկու-
թիւնն, և նախատիպ մարդն և կատարեալ արգարն
օրինակ և նեցուկ կարգէր մեղաւորին, այն սրտանց
խանդաղատանաւքն զոր ունէր ապաշխարելոյ վերայ՝ զորս գը-
գուէր և օրհնէր իւր աստուածային քարոզութեանց
առեն. միով բանիւ Յիսուսի Քրիստոսի մահկանա-
ցու կեանքն կազմող լուսեղէն գնդին մէջ ընկղմած
շատ մի ճառագայթներ և քիւրաւոր աննշմարելի ե-
րանգներ կան՝ որոց վերայ յայտնի երևի Մարիամու
ազդեցութիւնն. ո՛չ ապաքէն երկինք ևս ծաղկանց
անուշահոտութեամբն բերկրին՝ թէպէտ և ծաղկունք
երկրիս ծնունդ են:

Տարակոյս չկայ որ Յիսուս ալ իւր մօրն խանգա-
ղատանաց խանդաղատանաւք և գգուանաց գգուանք
փոխարինած է: Վասն զի առաջին բարիքն որ է
կեանքն ըստ մարգկութեան՝ ի նմանէ առած էր, և
այն արիւնն որ խաղայր յերակունս իւր և զոր պիտի
նուիրէր յողջակէզ՝ ի վերայ խաչին առ՝ ի լուանալ
զմեզս աշխարհի, այն արիւնն Մարիամ տուած էր ի-
րեն: Այն ամեն նուիրական զգացմունք զորս Տէրն
բնութեան շնչէ՝ ի հոգիս որգւոց մարգկան առ ծը-
նողս իւրեանց՝ ի սրտին Յիսուսի՝ միայն Մարիամու
անձին վերայ հաւաքած էր. ինքն երկրիս հետ միայն
այս կնոջ միմնորգութեամբն կապուած էր՝ զոր և նա
սիրէր որպէս որգի և որպէս Աստուած, որ է ասել
յանհուն աստիճանի սիրով: Աստուածութեան հա-
մար՝ որ զամենայն բարիս շնորհէ և ոչ երբեք ընդու-
նի, այս առաջին անգամն էր որ պարտաւորէր առ
արարած ոք յուցանել այն վեհանձն սրտից առաքի-
նութիւնն՝ որ է երախտագիտութիւն, և Յիսուսի
երախտագիտութիւնն առ Մարիամ այնչափ ևս ա-
ւելցաւ՝ որչափ որ այս սուրբ և աղնուական կինս

իւր զոհերն իւր զրկմունքն իւր աշխատանքն աւել-
ցուց վասն սիրոյ նորա: Ասաի եթէ Աւետարանի
մէջ երբեմն ընթեռնումք Քրիստոսի աւելի իբրև տէր
քան թէ իբրև որգի խօսելն առ աստուածային մայրն
իւր՝ այս բանս իւր կողմանէ ոչ՝ ի նուազութենէ սիրոյ
յառաջ գայր և ոչ յանտարբերութենէ, այլ՝ ի կա-
մացն որով կամէր անջատիլ յամենայն երկրաւորաց
առ՝ ի լաւ ևս փառաւորել զՀայր իւր երկնաւոր, ո-
րոյ շահն ամէն բանէ յառաջ պէտք էր դասել, և ո-
րոյ մեծութեանն առջև ամենայն ինչ ոչնչանայր Յի-
սուսի մտաց մէջ: Եւ կոյսն որ շատ լաւ տեղեակ էր
իւր որգւոյն առաքելութեանն՝ ամենևին ոչ խռովէր
նորա խօսքէն որ երբեմն խիստ թուէին օտարաց:

Երբ Յիսուս քսանևհինն տարուան եղև՝ սուրբ ըն-
տանեաց մի անգամն մահն առաւ տարաբ. Յովսէփ
այն նախկին սովորութեանց հետևող նահապետն՝ ո-
րոյ խոնարհ հաւատքն և արտին պարզութիւնն զԱբ-
րահամ և իւր ժամանակին յիշեցնել կուտային, Յով-
սէփ՝ զոր Հոգին սուրբ արդար անուանով պատուեց,
քաղցրութեամբ ննջեաց՝ ի Տէր ըզբունն արգարոց՝
իւր որգեգրին և անարատ ամուսնոյն ձեռքն. Յի-
սուս և Մարիամ ողբացին նորա վերայ, և արտմու-
թեամբ հակեցին իւր պատած մարմնոյն քովն. բայց՝ ի
գիշերուան մեղմիկ հովէն՝ ազգատիկ ընտանիքն ուրիշ
ողբակից մի չունեցաւ. Գալիլեայի նահապետն (մե-
ծատունքն) աւելի հանգիստապէս մեռանէին, թէպէտ
և գերեզմանին ցածագոյն գունէն անցնելու համար
գլուխնին խոնարհած առեն՝ նազարեթացի հիւսան
վսեմ ակնկալութիւններն չունէին: — Իր վիճակին
համեմատ՝ Գալիլի որգւոյն յուզարկաւորութիւնն
ալ խեղճուկ կերպիս կատարեցաւ. և սակայն Մա-
րիամ շատ արցունք թափեց մահուան անկողնոյն
վերայ, և Աստուածորգին կատարեց նորա թաղման
հանդէսն՝ որ ոչ ոք՝ ի կայսերաց այս պատիւս ըն-
գունած չէ:

Հռովմ ուրեմն մտեցաւ Աւետարանն քարոզելու ժամանակն, և Նա որ 'ի յաւիտենից նախասահմանեալ էր յԱստուծոյ լինել քահանայ և առաքեալ՝ Թողուց զնազարէթ և եկն յեզերս Յորդանանու՝ ուր մկրտէր Յովհաննէս: Արդեօք ինչ սրատեսարժան եղև Մօր և Որդւոյն յիւրեքեան բաժնուելու ժամանակ՝ երբ վերջին ողջոյնն իրարու տային: Յիսուս իր հրապարակական կեանքն սկսած սկսանէր, միայնակ և աղքատ, յանչուն գասէ ժողովրդեան յառաջ եկեալ՝ ուրիշ մէկոց ջուններ՝ բայց եթէ իւր քաջութիւնն և երկայնամիտ համբերութիւնն, և այն հրաշագործութեան ձիրքն՝ զոր ոչ երբեք իւր անձնական շահուն համար բանեցուց. ինքն դիմագրաւ եղանէր այնպիսի արգելից որ թէ և բառական ոյժ չունէին իրեն դէմ դնելու, բայց բառական զօրաւոր էին զինքն 'ի մահ մատնելու [9]: Կոյսն ակամայ երկիւղ մի ուներցաւ տեսնելով զՅիսուս որ կը նետուէր այն հրէական ամբոխին մէջ՝ յորում շատ երեւելի մարգարէներ իրենց կեանքն կորուսեալ էին: Ինքն քաջ ճանաչէր փարիսեցւոց անյաղթելի հպարտութիւնն, ժողովարանին խիստ և մահացու նախանձայուզութիւնն, Անտիպաս Հերովդէի արիւնահաճ բարքն. գիտէր նաև Մեսիայի համար եղած գուշակութիւններն որ զչարչարանս և զանարգանս նախաձայնէին... Յուդայի Թագաւորաց գուսպն Թէպէտ և քաջասիրտ էր և գիտէր իւր որդւոյն աստուածութիւնն, սակայն և այնպէս սիրտն խոցեցաւ այս առաջին բաժանման առեն՝ որ երեն այնպէս երեւէր Թէ աւելի ևս անգութ բաժանման մի նախերգանքն և պատկերն էր: Յիսուսի իրմէ մեկնելու ժամանակ իր սիրտն ալ 'ի միասին բաժնուեցաւ, և երբ նա երթալով հեռանայր և ալ ոտից ձայնն ոչ լսուէր՝ ինքն միայն միայնիկ մնալով այն տան մէջ՝ յորում այնչափ քաղցր ժամեր անցուցել էր իր որդւոյն և իր ամուսնոյն հետ, լսչակոնքն գլուխն ծածկեց և ձեռց լուռ և մեղկ ախուր մտածութեանց մէջ ընկղմեալ՝ ինչպէս ցաւոց արձան մի կՀեռայ հերմի մի վերայ:

Քրիստոսի մեկնելէն եւս շատ ժամանակ անցել էր. և Կոյսն լսեց որ նա Երիքովն մտ եղած ամայի և բարձր լերանց ներսերն քաշուել է պահօք աղօթիւք և խոհեմութեամբ աշխարհիս փրկագործութեան մեծ գործոյն պատրաստուելու համար: Արդեօք ո՛րչափ նեղութիւն քաշած է Մարիամ՝ մտածելով որ Յիսուս Թափառէր այն վայրենի և ամայի երկիրներուն մէջ՝ ուր արծիւն հազիւ գտանէր շիւղ մի խոտոյ իր բոյնն շինելու համար, և ուր ճամբայնեն խորին և սարսափելի խորխորատներու մտէն անցանէին և անդնդախոր ձորերով պատած էին. ինչպէս տագնապերը երբ լսէր մրրկայց գոռալն. արդեօք ո՛ւր գտանէր յայնժամ Յիսուս, և զինչ առնէր միայնակ և անպաշտպան լերանց ծայրն. եթէ անդունդի մի եղերքն ոտքն սահէր ամեն բան լացած էր, և եթէ այն խիստ և երկայն ծոմապահութենէն որ իր բնական ուժէն վեր էր հիւանդանար և անկանէր՝ մարդ մի չուներ իրեն օգնելու: Այն քառասուն օրերն Մարիամու համար քառասուն դարեր եղան, և իւրաքանչիւր վայրկեանն որ անցանէր՝ իւր մայրական տագնապներուն մի մի յաւիտենականութիւն երևէին:..., Բայց վերջապէս գարձաւ Յիսուս 'ի Նազարէթ իւր աշակերտաքն, և Մարեմայ խռովեալ սիրտն ալ հանդարտեցաւ:

Նոյն առենները հանդիպեցաւ Կանա գալիլեացւոց հարսանիքն. խօսեցեալքն Սրբոյ Կուսին ազգականներն լինելով [10] հրաւիրեցին նաև զՄարիամ, զՅիսուս և իւր աշակերտներն. զոր ընդունելով Կոյսն բարեսիրտ և հաճոյական՝ իրենեն րեն յառաջ եղ և գնաց որպէս զի հանդիսին պատ-

բաստուածեանցն օգնէ՝ որ ազգին սովորութեան հա-
մեմատ շքեղութեամբ կատարուելոյ էր։ Հրաւի-
րեալքն չատուոր էին, ընտանիքն ալ աղքատ. փե-
սային ալ իւր հաշուին մէջ սխալել էր, այնպէս որ
երբ Քրիստոս եկն եմուտ ինջոյից սրահն՝ արդէն
գինւոյ տիկերն գրեթէ պարպել էին. Յիսուս որ իր
ներկայութեամբն ամուսնութիւնն սրբացնելով խոր-
հրդոյ բարձրութեան կամէր հասցնել՝ հասաւ
հոն տեղն չորս գալիլեացի ձկնորսաց հետ միասին
որ էին Պետրոս, Անդրէաս, Փիլիպպոս և Նաթա-
նայէլ որոց իմացուցել էր իւր առաքելութիւնն և
իւր հոգին շնչել էր նոցա։ Ինջոյից մէջէն յանկարծ
գինին բոլորովին հատաւ, և Մարիամ տեսնելով
հարսին և փեսին տագնապն՝ Յիսուսի դարձաւ որ
իր քովէն նստած էր և նշանաւոր կերպով մի ասաց
Դիմի ոչ ունի. Յիսուս ալ ծանր և հանդարտ ձայ-
նով պատասխանեց. «Ձի կայ իմ և քոյ, կին դու, չէ
է հասեալ ժամանակ իմ» [11]։

Կայսն որ իւր ազգականաց ամենով մեծն ոչ կա-
մէր՝ որով իրենց սիրտն ալ կարէր կոտրել, իմացաւ
որ Քրիստոս իւր խնդրած շնորհէն չմերժեց, և թէ-
պէտ դեռ ժամանակն չէր հասած որ Յիսուս իւր
փառքն յայտնէ՝ բայց գիտէր որ իր սիրոյն համար
պիտի կատարէր ուզածն՝ թէպէտ և խօսքին մէջ
խստութիւն մի երևէր. ուստի այն հաւատքով՝ որ
ղէրինս տեղէ տեղ փոխադրէ, ասաց ծառայներուն
Որ ցինչ ասիցէ ձեզ արասջիք։ Գիտեալու է որ հոն
տեղն քարէ վեց հատ մեծամեծ թաղոյկներ կային՝
լուացուելոյ սրբուելոյ համար որպէս հրեից սովո-
րութիւն էր. ուստի Յիսուս հրամայեց որ մօտ ալ-
բիւրքին ջրովն մինչև բերանն լեցնէն, և լեցուցած-
նուն պէս անոյշ գինի դարձաւ։ Այս կերպով սուրբ
Կայսն առաջինն եղև որ իւր Առաւածորդւոյն հրա-
շից նախախոյրքն ընկալաւ, և իւր գործակցութե-

բարեխօսութիւնն Աստենակալին տուած վշխուն ան-
գամ փոխել տուաւ։

Կանոյն աքանչելիքէն ետև՝ ալ հրաշքներն ետե-
ւէ ետև յաջորդեցին և աստուածային հնքով հաս-
տատեցին փրկչին երկնային ևնախահնամական ա-
ռաքելութիւնն. վասն զի իր ձայնն միայն լսելով
մրրիկներն լռէին, մարդկանց ախտերն աներևոյթ
լինէին, դևք հալածեալ՝ի մարմնոց իրենց տխուր գժ-
խոց բանտն գառնային, մեռեալք՝ի գերեզմանաց
յառնէին, և իւր սուրբ ոտից հետքն ուր որ հաստնէր՝
հոգեոյզ և մարմնոյ ցաւերն բժշկէին [12]։ Ա՛ռ ոտս նո-
րա գիմեն սիգոնացիք և տիւրացիք, եգոմայեցիք և
արաբացիք. և բազմութիւն ժողովրդեան իւր անց-
նելու ճամբուն վերայ շարուած՝ նորա զգեստուց
քղանցքն համբուրէին, խոնարհութեամբ խնդրելով
՝ի նմանէ զառողջութիւն և զկեանս, զոր Աստուած
միայն կարող է տալ այնոցիկ՝ որ բաւական հաւատք
ունին բժշկուելու։

Տէրն մեր դեռ պատշաճ չէր սեպած որ իւր մայրն
իրեն հետ շրջի այն գործարին ճամբորդութեանց
մէջ. ուստի Մարիամ իւր տան մէջ նստած լսէր այս
տարօրինակ լուրերս խռովայոյզ ուրախութեամբ և
անհանգիստ զարմացմամբ. և իւր խռովութիւնն և
տագնապն անհիմն չէր. վասն զի ժողովուրդն զինքն
օրհնելով և մեծացուցանելով եւևէն երթալու ժա-
մանակ՝ փարիսեցիք գպիրք և իշխանք ժողովրդեան
սկսել էին իրենց չար մտօքն դայթակղիլ և նախան-
ձիլ Աստուածորդւոյն յաջողութեան վերայ։ Եթէ
մեղաւորներն յորդորէր և գարձի բերէր՝ վատու-
թիւն համարէին. շաբաթ օր հիւանդ բժշկէր՝ անօ-
րէն և չօրէնս ոչ պահէ ասէին։ Իւր վարդապետու-
թիւններն իբրև բարերար ցօղ իջանէին իւր շրթունք-
քէն, և ոչ թէ ճեռասակար հեղեղի պէս, ուրեմն

նախկին մարգարէից ամենևին ոչ նմանի, ապա Աստուածոյ չէ իւր վարդապետութիւնն ասէին: Եթէ խոնարհութիւն, անչքաչարութիւն, համառօր աղքատութիւն, վասն Աստուծոյ ևեթ և՛ի մարդկանէ ծածուկ ողորմութիւն և ընդհանուր գթութիւն քարոզէր՝ այս ամենայն վտանգաւոր նորութիւն մի է ասէին ծերք ժողովարանին: Կեղծաւորութեան դէմ խօսած առեն՝ փարիսեցիքն զչարէին. արծաթասիրութեան և վաշխառութեան դէմ քարոզելով՝ օրինաց վարդապետներն յիւրմէ խորչէին. սագուկեցիք ալ ոչ կամէին որ հանդերձեալ կենաց վերայ քարոզէ: Եւ սոքա ամենեքեան որ զանազան նկատմամբ գաւանութեամբ և քաղաքական շահերով իրարմէ զատուած միշտ իրարու հետ կռուէին՝ իրենց անսիրելութիւններն մոռանային երբ խօսքն գԳալիլեացիի առելու կու գար, և այն առեն ամենքն ալ միաբանէին ինասելու և կորուսանելու զնա. մէն մի խօսքերնին մի մի գարան էին, մէն մի ծիծաղնին մատնութիւն, և ամեն գովեստնին այսպէս և նախատինք: Ոմանք յայտնապէս համարէին զնա խաբեբայ հերետիկոս և սատանայի. ոմանք ալ մեղմով համզէին զԺողովուրդն թէ մոլեգնեալ է. բայց մեծագոյն մասն իւր հակառակորդաց այն վատ նախանձոտներն էին՝ որ իրենց ձեռքէն լաւ և գեղեցիկ բան մի չգալուն՝ կատաղութեամբ յարձակէին իւր անունն կոտրելու իւր պատիւն աւրելու և ալարտելու. վասն զի իրենց խաւարասէր աչաց համար խոտոր ներքև ծածկեալ փոսուռայի նուաղ լոյսն անգամ անբերելի էր. ուստի Ժողովրդեան Յիսուսի համար ուռած գովեստներէն՛ի նախանձ գրգռեալ, և չկարելով ևս եղած սքանչելիքն ուրանալ՝ սատանայի գործ համարէին զնոսին ասելով «Բէեղզեբուղաս իշխանաւն դիւաց հանէ դա զդևս» [15]: Այս ծածուկ քրթմընջիւնս Մարիամայ սիրան վախցընէր, և իր

քոյրերիքն եղողներն ալ չարութեամբ թողուին զինքն որ այս տագնապներուս մէջ ալեկոծի: Գալիլեայի քաղաքաց մէջ ամենէն անհաւանն և ամենէն աւելի խաւսափարանոցն ընդունելու զբանն կենաց՝ Նազարէթ քաղաքն էր, և այնոր բնակիչներէն ալ ամենէն աւելի ընդդիմակաց զինքն իբրև Թագաւոր և Մեսիա ընդունելու՝ նոյն իսկ Քրիստոսի ազգականներն էին: Եւ որովհետև սոքա Կուսին հրաշալի ծնունդն ոչ գիտէին, և նորա ծննդեան և տղայութեան ժամանակի սքանչելիքն՝ հեռու տեղւանք եղած էին՝ ուստի իրենց առջին յովսեփայ համարեալ զաւակն՝ անուռ տղայ մի էր, իրենց տղոց պէս մեծցած և սնած, մանաւանդ թէ աւելի ալ աղքատ տան մէջ բնակեալ, և ծանր աշխատութեամբ իր օրըստօրեայ ապրուստն ձարելով, որով և ընկերներն ալ միշտ հասարակ մարդիկ եղած էին: Քրիստոս որ զաղքատութիւնն մեծարել ուզելով իրեն բաժին և ժառանգութիւն ընտրեց զայն՝ համբերութեամբ կրեց այն վիճակին հեռանալն զոր ընտրել էր և որ ձեռնտու ոչ երևեր իր գիտմանն. «Նաև եղբարք իւր չէին հաւատացեալ՛ի նա» [14] ասէ Յովհաննէս աւետարանիչ: Իրաւ այն կամակոր նազարեթացիք զարմանային այն հրաշից վերայ՝ որ Աւետարանի քարոզութեան ժամանակ ամեն տեղ գործուէին, սակայն ոչ կարէին համոզուիլ. և գիտեւով ալ թէ բոլոր Գալիլեա որգի Դաւթի անուամբ ողջունէին զՅիսուս, և միշտ երկու երեք հազար հոգի պակաս չէին նորա բոլորիքն իւր խօսքն լսելու համար, ուստի վախէին որ մի գուցէ այս բազմութիւն ամբոխս Հերովդէս Ագրիպպասի կասկած պատճառէ, և իրենք Յուդայի Թագաւորաց յաջորդներն՝ նեղութիւն կրեն այն նոր մարգարէին պատճառաւ: Այսպէս խորհելով անուն հանեցին թէ Յիսուս խելագարեալ է, և երդուան զինքն բռնութեամբ և զինու-

զօրութեամբ ՚ի Նազարէթ դարձնելոյ. և այս իրենց դաւակցութիւնն ՚ի Մարեմայ ծածկելով՝ զինքն ալ հետերնին առած եկին ՚ի Կափառնաում, որպէս զի մօրն անուամբն աւելի դիւրաւ կարող լինին մօտել Յիսուսի [15]:

Նոյն ատեն Մեսիայն Ժողովարանին մէջ ուսուցանէր, և բազմութիւն Ժողովրդոց մոգդրութեամբ և յարգանօք ունկն դնէին: Նազարեթացիք հանդելով, և Ժողովրդեան աչաց իշխանութիւն ցուցանել ուզելով, որպէս ասէ Ոսկեբերան, Փրկչին իմաց տուին թէ մայրն և եղբարքն ՚ի դուրս կեցած իրեն հետ խօսել կամէին: Բայց Յիսուս իր մարմնաւոր ազգակացն միտքն իմանալով, և այս պատեհս ձեռք առնելով հին օրինաց անձուկ սահմաններն ընդարձակելոյ՝ որով առանց խարութեան բովանդակ աշխարհս մարգկին մի մարգկային գերդաստան պիտի կազմէր՝ այս հետևալ պատասխանն տուաւ իւր ազգականաց կողմանէ եկող դեսպանին. Ո՛ է իմ մայր կամ ո՛վ են իմ եղբարք. չեմոյ իւր աչքն դարձնելով իւր բազմախուռն աշակերտաց վերայ՝ բարձրաձայն աւելացուց. Մայր իմ և եղբարք իմ սոքա են որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն: Այս խիստ յանդիմանութենէս ետև՝ զոր որդիք Ալփեոսի լաւ հասկցան՝ Աստուածորդին շուտ մի դուրս ել, ասէ Ոսկեբերան, առ ՚ի ևատուցանել Մօր իշխանի զանեցեալ պատիւ՝ զոր պատշաճորիւն իրաւ պահանջէր:

Մայրն ողջունելէն և սակաւ մի հետ տեսնուելէն ետև ծովուն եզերքն՝ Փրկչէն նաւակ մի մտնելով սկսաւ նորէն Ժողովուրդն ուսուցանել: Կայսն ալ ամբոխին մէջ խառնուելով բարեպաշտ մոգդրութեամբ ուշ գնէր սերմանացանին առակին: Իսկ նազարեթացիք Յիսուսի Փրկիչն նաւակ մի մտնելով՝ տարաբաղձութեան և դերմարդկային վսեմութեան վերայ զարմացած՝ ապշութեամբ իրարու հարցանէին

թէ արդեօք յիրաւի Մարեմայ զաւակն էր նա. նման այն ամերիկեան ափանց քարբին որ երբ անտառնեբոու խորէն երաժշտութեան ձայն մի լսէ՝ ընդարմացած թոված մնայ: Իրենք եկել հասել էին վախի և երկիւղի արագութեամբ, անձնասէր պերճախօսութեամբ և ամբարհաւաճ իշխանութեամբ զՔրիստոս յիւր առաքելութենէն ետ դարձնելու համար, համարելով թէ իրենց ինքասակար և վտանգաւոր է. և սակայն նորա մի հայեցուածովն այնչափ թովչացան՝ որ առջևն բերան անգամ ոչ կարէին բանալ: Եւ այս բանս յայտնապէս իմացընէ մեզ Սուրբն Մարկոս՝ որ նոցա թշնամական միտքն մեզ յայտնելէն ետև՝ ամենևին բան մի ոչ ասէ թէ համարձակած լինին խօսելու ընդ Տեառն մերոյ:

Ժամանակէ մի ետև գարձաւ Յիսուս ՚ի Նազարէթ. այլ Կուսին ուրախութիւնն ո՛վ կարէ պատմել՝ երբ տեսանէր զնա նոյն փսխաթին վերայ բազմեալ ուր երբեմն նստէր իւր մանկութեան տեսնն, ուսեալ այն հայցն զոր օրհնելով բեկանէր. Մարիամ բարեսրտութեամբ ՚ի գոլ չարժեալ առնոյր ածէր զնա երբեմն աղքատ հիւանդի մի տուն, և բժշկութիւն պարգևելով՝ ապսպարէր որ եղածն ծածուկ պահեն. զմայլէր հիանայր երբ տեսանէր զնա զօրաւոր ՚ի խօսս և ՚ի գործ, նա որ երկայն ժամանակ լռութեամբ և աշխատանքով անցուցել էր իւր կեանքն. ո՜հ յիրաւի իւր ուրախութեան չափ չկար. սակայն Աստուած ուզեց դառնութիւն խառնել այս ցնծութեան հետ: Շաբաթ օր մի Որդին և Մայրն ՚ի միասին ելին գնացին ՚ի Ժողովարանն՝ ուր մեծ բազմութիւն Ժողովեալ էին տեսնելու համար զՅիսուս և իւր խօսքն լսելու. բայց նազովրացիք նոյն վստահութիւնն և նոյն յարգելի մոգդրութիւնն ոչ ցուցանէին իւր խօսից՝ ինչ որ տեսած էր ուրիշ տեղեր: Իրենք յառաջագոյն նախապաշարուած էին Որդւոյ

մարդոյ խօսէին և գործոց վերայ, և պատրաստ էին առնել մի առնլով զինքն քարի բռնելոյ։ Յիրաւի կան երկիրներ որ իրենց պարծանք սեպուելոյս անձին Թշնամի դառնան, և մինչև որ իրենց նախանձն շարժող մարդուն գերեզմանին վերայ խոտ չբուսանի՝ հակառակութիւնն ձեռքէ ոչ թողուն։

Ինչ և եղէ մինն յերիցանց յառաջ մատեաւ և ասայի մարգարէի գլուխն տուաւ Փրկչին ձեռքն որ կարդայ։ Յիսուս յարեաւ և մագաղաթն պարզելով շնորհալի պարզութեամբ և հեանալի վեհմութեամբ սկսաւ կարդալ այս հատուածս. «Հոգի Տեառն՝ ի վերայ իմ, վասն որոյ և ետծ իսկ զիս, աւետաարանել աղքատաց առաքեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւ, քարոզել գերեաց զթողութիւն և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն ընդունելի»։ Յետոյ գիրքն խփելով պաշտօնէին տուաւ ու նստաւ, և ժողովարանին մէջ աչք ամենեցուն իր վերայ դարձան։ Այն ատեն Աստուածամարդն սկսաւ խօսիլ այն կենդանի և բնական Ճարտարախօսութեամբն որ ամենեցուն սիրտն իրեն քաշէր, և այն պատգամն իրեն համար զրուցած լինելն ցուցանելով՝ գերազանց կերպով վարդապետէր, ոչ որպէս աշակերտ ժողովարանին՝ այլ երբև տէր նորին և իշխան։ Լուռ չէին ընդկոց մի փրթաւ բազմութեան մէջ. ոմանք հիանային նորա խօսից զօրութեանն և գեղեցկութեան վերայ, իսկ այլք մինչ յամառեալ իրենց սկզբամբն զինքն արհամարհ և նուաստ ցուցանելոյս՝ յայտնապէս ասէին. «Ո՞չ սա է որդին Յովսեփայ»։ Եւ Յիսուս նորա միտքն թափանցելով, և բայ գրոց պէս նորա թիւր և նախանձոտ սրտերն կարդալով պատասխանեց այս Աստուածային խօսքս՝ որ և առակ դարձած է. «Ձէ մարգարէ անարգ եթէ ոչ ի քաղաքի և յազգատոհմի և ի տան իւրում»։ Եւ որովհետև

գիտէր թէ նորա ի կափառնաումայ գործած հրաշից պէս նշան պիտի խնդրէին, յայտնապէս ասաց նորա թէ իրենց անհաւանութիւնն անարժան արարեալ է զնորանք այս շնորհիս, և հրաշք ընդունելոյս համար՝ հաւատով խնդրելոյ է զնոսին։ Յետոյ Աստուածային ծառայութեան խմացընելոյս համար, և զայն վայրենի ձիթենւոյն պատուաստին նմանեցնելով ժողովարանէ հնացած քնոյն վերայ՝ ասաց. «Արդարև ասեմ ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցաւն երկինք զերիս ամս և զվեց ամիս, և եղև սով մեծ ընդ ամենայն երկիր. և ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեփթա սիդովնացւոց առ կին մի այրի։ Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէէ մարգարէէ. և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նեեման ասորի»։ — Այս վերջի խօսքս՝ խծուծի մէջ նետուած խանձողի մի պէս զամենքն վառեց բորբոքեց, և իրենց ազգային հպարտութիւնն վիրաւորելով, և ժառանգական առելութիւնն յիշելով, և աւանդական ակնկալութիւնն զայրանալով՝ բոլոր ժողովարանին մէջ եղողներն մռնչեցնեցան կրակ կարեցան. «Եւ յարուցեալ հանին զնա արտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչև յարաւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավիժ առնել զնա»։

Կայսն հասարակ կանանց մէջ նստած՝ անհանգստութեամբ և երկիւղիւ դիտէր այն մրրիկն որ երթալով զայրանայր, և նաղվրացւոց կատաղի աչքէն և մռնչգին շարժմունքէն լմանալով նոցա անօրէն դիտմունքն՝ առանց դանդաղելոյս վանդին դէմ վազեց մինչև իւր որդւոյն քովն հասնելոյս համար. բայց իւր ոյժն քաջութեանն չհատասարեցաւ։ Այն հրեայք որոց ոտք միշտ նրագունք ևն հնդուղ զարհուն եաւէ ետև վազէին, և Մարիամ տեսնելի պէս դողդողալով և հազիւ թէ ոտից վերայ կանգնելոյս ոյժ ունենալով հե-

ռուանց նոցա եաւէն ընթանայր՝ քունն գլուխն մաղ-
դու մի պէս: Տեսաւ զՅիսուս այն ժայռին ծայրն ո-
րուն մատ ահագին վիհ մի կար. լսեր հեռուէն մա-
հուան և վսեմութեան կատարչի աղաղակներն.
նոյն տեղն ծուռկերն կարեցան աչքն մթնցան, յա-
ւարժ հառաչանք մի հանեց, անկաւ մարեցաւ բըրին
վերայ [16]: Սակայն այն անօթի գայլերն որ գառին ե-
տևէն անկած հալածէին՝ իրենց վախճանին չհասին և
յոյն պարապ եղաւ. Որդոյ մարդոյ ղոհ լինելու
ժամն դեռ հասած չէր, և նորա արիւնն իրենց իշ-
խաններն պիտի խմէին: Յիսուս զարկաւ կուրացոյց
այն մարդախոշոր գազաններն, և իւր թշնամեաց մէ-
ջէն անցաւ գնաց առանց ձանչցուելու, Կափառնաու-
մի ճամբայն բռնելով՝ ուր հասին յետոյ իւր մայրն և
Մարիամ Կղէովպայ և որդիք Ալփէոսի:

Այս առենս էր որ Սուրբ Կոյսն իր որդւոյն Յի-
սուսի ձեռքն մկրտուելով Յորդանանու եղերքն,
ինչպէս որ ասանդէ Եւսեբիոս [17], ալ ևս չուզեց
միայնակ տունն նստիլ, և իր որդւոյն հետ միասեղ
էր ուր որ երթայր իւր քարոզութեանց մէջ, հա-
կառակ իւր նախկին միայնասիրութեան: Ինքն ամ-
բողջ երեսուն տարի կրօնասէր հոգւով հոգ և խնամք
ունեցել էր իր որդւոյն վերայ թէ յօտարութեան և
թէ ի հայրենիս նախահարց իւրոց, իրեն համար աշ-
խատել իրեն համար արցունք թափել իրեն համար
այնչափ վիշտ կրել էր. և մինչ դեռ մանուկ երախայ
էր նորա որբանին քունն էր գիշեր ցերեկ և անտի ոչ
բաժանէր: Ապա բնական էր որ նորա հալածական
կենացն ալ վիճակակից լինելով Թողոյր իւր խաղա-
ղիկ տունն յորում ծնեալ էր, և նորա օրհնեալ հե-
տոց եաւէն երթալ՝ հրկից քարոզած տեղն: Կոյսն
ինչպէս ամեն տեղն՝ այսպէս ալ այս փոթորկալից և
երկիւղալից կենաց խռովութեանց մէջ հրաշալի վար-
մունք մի ունեցաւ: Սիրելով զՅիսուս այնպիսի սի-

րով մի՝ որ ոչ ոք ի մարդ սիրած է իւր զաւակն, և
ինքն միայն հասուցանելով զայն անհուն սէրն մինչև
երկրպագութեան աստիճանն, ամենևին չուզեց որ
որդին իւր մայրական խանդաղատանաց նուիրեն այն
պատուական ժամուց մի ևեթ վայրկեանն ալ՝ որ
նուիրեալ էին նորա առաքելութեանն ի վերածնու-
թիւն աշխարհի. ոչ ևս խօսք մի արար իւր հոգնու-
թեանց, երկիւղներուն և կասկածանաց վերայ, նաև
իւր առանձինն պիտոյից: Մարիամ ոչ միայն աղա-
նի մի էր ծածկեալ ի ծերպս վիմաց, և անարատ
կոյս մի մնուցանելու որոշուած զԱստուածորդին կա-
թամբն և բառնալոյ զնա ի գիրկս իւր զհիւրն եր-
կնային, այլ էր միանգամայն կին մի զօրաւոր՝ զոր
Աստուած հաճեր կարգել ի զանազան վիճակս
մարդկային կենաց, որպէս զի ինքն օրինակ լինի գըս-
տերայց Եւայի իրեն հետևելու, և նախատիպ իրեն
նմանելոյս:

Բայց պատշաճ էր որ Աստուածամայրն միայնակ
հետևէր Յիսուսի և առաքելոց նորա յոլովաւորա-
թիւնն ի հրեաստանի, ուստի իրեն ընկեր եղեն Մա-
րիամ Կղէովպայ՝ որ էր մայր Յակոբայ, Սիմէոնի,
Յուդայի և Յովսեայ՝ որ ռամկօրէն կոչուին Տհառև
անուանեցին, Սաղովմէ մայր որդւոցն Զեբեդեայ՝ զորս
Փրկիչն առանձինն լեմն սիրով սիրէր, Շուշան կին
Քուզայ հազարապետին Հերովդէ, և այլ հարուստ
կանայք գալիլեացիք որ վասն սիրոյ Յիսուսի Քրիս-
տոսի աղքատացել էին: Սոցա հետ էր նաև մանկա-
մարդ հարուստ ազնուական և յոյժ գեղեցիկ կին մի՝
որ սաստիկ գորովանօք ծառայէր Տիրամօր Տհառև
իւրոյ: Կինս այս որ հրաբորբոք սիրտ մի ունէր, և
եգեան ծովուն ալեաց պէս մրրկայոյզ՝ առենօք հա-
զար և բիւր յայրատ բոցերով վառեալ յաչս աշ-
խարհի՝ վատանունութիւնն և անուանարկութիւնն
ևս արհամարհէր, և հասարակաց մեղադրանքէն ալ

ոչ ամաչէր, վերջապէս զղջալով իւր անառակ կեանց վերայ՝ և իւր հպարտ գլուխն Քրիստոսի առից ներքև խոնարհեցընելով՝ խնդրել էր ՚ի նմանէ իւր հոգւոյն ախտից բժշկութիւնն յայնմանէ զոր Աստուած դաւանէր։ Ուստի և ամենասուրբ սէր Տեառն մերոյ իւր անբաւ գթութեան մէջ ընկղմել էր Մագդաղենայ տիկնոջ ամեն խոշտան սիրահարութիւնները և աշխարհային ցանկութիւնները։ Ինքն ալ այս գթութեան վոխարէն՝ հանեց ՚ի բաց ընկեց իւր մարգարտեայ քայլամանեակները, ոսկեղէն և ականակուռ զարդերն և շղթայները, և վաճառելով իւր Գալիլեայի ծովակին մօտ ունեցած վարդասարդի ծառերով շուրջ պատեալ դղեակն, և հագնելով հաստ ու խոշոր խարազն մի, իւր հիանալի սեաւ մազերն զատ ուրիշ զարդ մի չունելով, որովք զտաս Տեառն իւրոյ սրբել ջնջել էր՝ հետևեցաւ Մարիամու, և այն մանկամարդ քնքուշ բամբիշն՝ հարուստ իւր առատաձեռնած ողորմութիւններովն և նորանոր առաքինութիւններով զարդարեալ՝ իւր ըղձացեալ սրտին արտասուքն թափէր Կուսամօր ամենագութ և անբիծ ծոցն. զոր և նա իւր բազկաց մէջ ընդունելով և իւր սրտին մէջ հանգուցանելով այն մեծ մեղաւորն՝ երկար ժամանակ անմիակ և անդարման ճնացեալ բարեբեր երկրին մէջ մշակեր երկնից համար պատրաստեալ ծաղիկներն։

Հոս չուզելով խօսքս երկարել Աստուածամօր ամեն քաշած վշտերուն և վախերուն վերայ՝ որոց վէպն յոյժ երկայն է, վերջապէս տեսանեմք զինքն որ մտանէ Յերուսաղէմ այն մեհադոյժ քաղաքն, ուր գայր Քրիստոս Տէրն մեր վերջին զատիկն կատարելու իւր աշակերտաց հետ միատեղ։ Ինքն ալ տեսաւ այն թագաւորեալ քաղքին բնակչաց խումբ խումբ ընդառաջ ելնելն որդւոյ Դաւթի՝ որ հեղուլթեամբ հոն մտանէր հեծեալ յէշ ըստ օրինի աղաա-

որդւոց իւրոյ տոհմին, մարգասիրութեամբ ընդունելով այն բարեսրտութեան պատիւներն զոր ժողովուրդն կամակար յօժարութեամբ մատուցանէր՝ անհամբերութեամբ սպասելով տեսնելու իւր մարգարէն։ Եւ Յիսուս որ ոչ երբեք մերժէր երախտագիտութեան և սիրոյ խոնարհ ցոյցերն զոր մատուցանէին նմա արարածք, որչափ փոքր և դիպչն ալ լինէին այս գործովս և շնորհակալեաց գրաւականքն երբ ՚ի սրտէ յառաջ գային՝ միշտ աստուածային բարեսիրութեամբ ընդունէր զնոսա։

Մագդաղինէ մերթ ՚ի վերայ Տեառն իւրոյ գարձընելով իւր աչքն և մերթ ՚ի վերայ ամբոխին որ Որսաւանա երգերով օդն թնդացուցանէին՝ քաղցր արտասուս հեղոյր՝ իւր քօղին ներքև ծածկուած. արտասուալից էին և աչք Մարեմայ՝ բայց յառեալ անվրէպ ՚ի հիւսիս արևմտեան դին՝ ՚ի կողմն Գողգոթային։

ՍԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԾԵ. ԳԼՈՒԽ

1 Հին դաղղիացիք վեցերորդ և եօթներորդ դարուն մէջ դեռ հեթանոսք՝ կաղնի ծառերն աստուածացընելով նոցա առջևն ջահեր վառէին, և աղօթս մատուցանէին. նոյն պատիւն մատուցանէին մօտ եղած մեծամեծ քարանց։ — Հայք մանաւանդ պաշտօն մատուցանէին սօսի և բարտի ծառոց, որոց նուիրական անուանուն նուիրէին իրենց զաւակները, որպէս « Պնուզաւան սօսանուէր, քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիան Արմինակայ որ ՅԱրմաւիր » (Խորենացի Պատմ. Ա, 11)։ Շնորհալի ևս ասէ « Ծառ որ բարտի անուանի ի կռապաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր »։

2 Պըքբինկեյմ Պոդիէր Հնդկաց։

3 Ծանօթ է ամենեցուն Յովնանի կամ Յունաղի երգիծանքն « Ով սուրբ ազանց յորոց պարտէզ-Բուսեալ աճին աստուածք այսպէս » (Երգիծ ԺԵ, 10)։

4 Տես ի Կարչիլ դիրք Ա. գլ. Բ և ԺԲ։

5 Պորփիւր որ բազմաստուածութեան գաղտնիքն լաւ գիտէր՝ խոստովանի Թէ հեթանոսք ի պաշտօն առնուին զգևս, ըստ զի ասէ « Են ոգիք պիղծք և ստապատիրք և չարարուեստք՝ որք կամին զի մարդիկ աստուածս համարեսցին զնոսիկ և պաշտօն ի նոցանէ առնուցուն. և հարկ է հաշտ առնել զնոսա զի մի մեղիցեն։ Ոմանք ի նոցանէ զուարթք և ուրախք հաճին ընդ տեսլարանս և ընդ խաղս, իսկ այլք տխուրք և թաղձեալք կամին հոտոտիլ ի ճնճղեր զոհից և արիւնաուշտ պատարագաց »։

6 Հրեայք այս սկզբան վերայ հաստատեալ են՝ որ Սինայ լերին վերայ Աստուծոյ իրենց հետ դրած ուխտն ոչ էր ըստ գրաւոր օրինաց՝ այլ բերանացի աւանդեալ օրինաց. որով առաջինն ջնջին՝ երկրորդն հաստատելու համար, ասով բոլոր կրօնքն աւանդութեան վերայ հաստատեն։ Այս ապականութիւնս այն աստիճան հասած էր իրենց մէջ առ ժամանակօք Քրիստոսի՝ որ Տէրն մեր շատ անգամ յանդիմանէ զնոսա՝ իրենց աւանդութիւններովն Աստուծոյ խօսքն և օրէնքն ջնջելնուն համար։ Իսկ այժմ այլ աւելի վատթարանալով՝ սուրբ գիրքն ջրոյ, իսկ Մէնասէ և Թալմուդն անապակ գինւոյ նմանեցուցանեն. ոմանք ալ առջինն աղ և երկրորդն համեմ համարին։

7 Յունաստանի մէջ բռնաւոր կամ աւազակ մի էր՝ որ ձեռքն

անկած ուղևորներն երկաթի անկողնոյ վերայ պառկեցընելով կարճերն քաշելով քաշքշելով իսկ երկայներն ծայրատելով սպանանէր, որ ինքն ալ վերջապէս սպանաւ ի Թեսէոսէ։

8 Լամարթին Ո՜ղո՜րմ՜ի՜ած յԱբ՜ե՜լ։

Ս. Խորենացի Ս. Յովսեփայ մահն դնէ յերեսուն և մի ամի կենաց Քրիստոսի զի ասէ « Յովսէփ քառասնամեայ էր՝ մինչ կայսն յանձնեցաւ նմա, և յերեսուն և մի ամի կենարարին հանգեաւ ի Նազարեթ ի տան իւրում. և սպասաւորեր Սրբոյ Կուսին Յակոբ արդարն ի Յովսեփայ յանձնեալ, զի և առ Յովսեփաւնա հոգայր ծառայապէս հետն և արդարն, մինչև ի Քրիստոսէ Յովհաննու յանձնեցաւ » (Թուղթ առ Սահակ պետրոնէ)։

9 Լամարթին ի նմին տեղւոջ։

Ե Խորենացի յաւելու ի միրտուլեան Տեառն և զյետագայս. « Յաւուր միրտուլեան Տեառն՝ խաժամուժ ամբոխ հրեից գնացեալ հրոսակք ի Յորդանան ըմբռնել զՏիրամայրն և զՅովհաննէս. իսկ հրեշտակ Աստուծոյ եդ զնոսա յայնկոյս գետոյն. և հրեայքն անցանել կամեցեալ արս քսան ի նոցանէ կորոյս Յորդանան » (Թուղթ)։

10 Ոմանք համարին Թէ Հարսն և փեսային ազգականք էին Կուսին (Բարոնիոս, Մալդոն)։

11 Մեզ երևի Թէ Տէրն մեր այս պատասխանս առանձինն ետ առ Մայր իւր, որպէս և աւետարանի պատմութենէն իմանամք. վասն զի հաւանական ոչ երևի Թէ Քրիստոս այս խորհրդաւոր պատասխանն բարձրաձայն տուած լիցի, զոր կռնչականք կարէին ծանր համարել Մարեմայ համար՝ իրին տեղեակ չլինելով. և այս անտի ալ յայտ է որ ծառայք անգէտ լինելով փրկչին ժըմտողական պատասխանւոյն՝ Սրբոյ Կուսին իրենց ասացածն անվըճռակատարեցին։ Բայց ինչ ալ լիցի՝ Տեառն մերոյ խօսից մէջ յանդիմանութեան կերպ մի չկայ, հապա պարզապէս ասել կամ ինձ և քեզ ինչ փոյթ է Թէ գինի չունին. իսկ կին անունն տալ մօր այն ատենի սովորութիւն էր առ հրեայս։ Մանաւանդ Տեառն մերոյ առ Մայրն ունեցած սէրն անտի ալ երևեցաւ՝ որ դեռ ժամանակն ալ հասած չլինելով հրաշագործութեան՝ նոքա աղաչանաց չկարաց դէմ դնել։

12 Տ'Իշրալը արաբացի կամ մահմետական բանաստեղծի մի քերթուածն յիշէ՝ որ գեղեցիկ բացատրէ Յիսուսի Քրիստոսի հոգւոյ ցաւոց վերայ ունեցած ազդեցութիւնն, և զոր իր Թարգմանութենէն Թարգմանելով հոս տեղս դնեմք. « Ի քոց բանից սիրա տխրագեաց ընդունի զնւր ըսփոփանս. Ի լուր ևեթ անուան քոյին՝ հոգի զգենու կեանս և կորով։ Եւ Թէ երբեք միտք մարդկային յաստուածայնոց ալացան խորհուրդս՝ ի քէն ըզլայն ընկալան խելամտել անհաս գաղտնեաց։ Եւ որ ի նմանէ կորով մտաց ի քէն նմին ընձեռեցաւ »։

Հմուտ արհեստագէտն դիտել տայ թէ նոյն իսկ քրիստոնեայ մի չէր կարող աւելի ուժով բացատրել։

13 Հիւսէին վախճ պարսիկ մատենագիրն իւր ՄԵՒԵԱՆ Մ-ԴԵՎԻ գրոց մէջ հրէից Յիսուսի Քրիստոսի դէմ՝ ունեցած անզօր և նախանձոտ կատաղութեան վերայ խօսելով ցուցանէ թէ ա-մէն հետ և նախանձ զոր ցուցանեն մարդիկ յոյզ կատարած ունեցած գործոյ մի վերայ, ուրիշի ինչս ոչ առնեն՝ բայց եթէ իրենք իրենց. և յաւելու՝ Շունն հայէ պայծառափայլ լուսնին դէմ, բայց չան հայհոյեն արգելք ոչ լինի այնոր պայծառութեան. սրընթաց գետին մէջ աւլուք և աղտեղութիւնք կը թափին՝ բայց նորա ընթացքն ոչ խափանեն և ոչ պղտորեն, այլ երեսին վերայ լողան անցանեն։ Մինչդեռ Մեսիան զմեռեալս յարուցանէ՝ հրեայք նախանձու մաչեալք՝ մատուցին խաչատեն և զմօրուսս փետեն (առ ա՝ Լրթղ.)։

14 Աւետարան ըստ ՅՀ. գլ. Ի 3։

15 Աւետարան ըստ Մարկ. գլ. Գ 15, 21, 32, 33, 34 և 35։

16 Հայրն ժերամիա ասէ թէ Նազարէթ քաղքին և այն ապառաժ ժայռին մէջտեղն եղած Ճամբուն կիսուն՝ ուստի որ հրեայք զՔրիստոս գահավէժ առնելոց էին՝ մինաստանի մի աւերակներն երևին՝ հանդերձ գեղեցիկ եկեղեցւով զոր Հեղինէ թագուհին շինել տալով նուիրեց Տիրամօրն ընդ անուամբ Սանահեալ Կուսի։ Ըստ ումանց Մարիամ հոն հասած ժամանակ տեսաւ որ հրեայք իւր Աստուածորդին լերին ծայրն հանելին առ ի գահավէժ առնել զնա. իսկ ըստ այլոց ասի թէ երբ Տիրամայրն լսեց այն կատաղեաց խորհուրդն ընչաստաւ մինչև այն տեղն վազեց՝ բայց յերկիւղէ սասանեալ ոչ կարաց յառաջ երթալ։

17 Այս մատենագրիս խօսից նայելով Տէրն մեր բաց ի Սուրբ Կուսէն և Պետրոս առաքեալէն՝ զուրիշն մկրտած չէ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Մարիամ ի Գողգոթա.

Այն արմատնեաց ոստերն զորս մանկունք եբրայեցւոց սփռել էին Յիսուսի Քրիստոսի ոտից ներքև՝ դեռ ծածկէին Բեթանիայի առասպար Ճամբայնեն, և այն ցնծութեան և յաղթանակի հեռաւոր աղաղակներն՝ որովք դուստրն Սիոնի ողջունել էր իւր Հնգ թագաւորն՝ դեռ արձագանս տային կեդրոնեան ձորոյն մէջ [1], և ահա Երուսաղէմ ի հիմանց դղրդեցաւ սխրալի և ցաւալի անցքով մի։

Վերջապէս քահանայապետք ծերք և փարիսեցիք ձեռք անցուցել էին գնով ոսկւոյ և ընտանեկան մատնութեամբ այն մեծ յանցաւորն որ իրենց ատցածին նայելով վտանգի մէջ ձգէր իրենց կրօնքն և աիերութիւնն։ Եւ յիրաւի շատ վտանգաւոր անձ մի եղած պիտի լինի այն մարդն, որովհետև իրեն հակառակորդ պատուաւոր մարգիկն՝ տարօրինակ և սովորականէ դուրս ծոմապահութիւն մի ապսպրել էին [2] զինքն ձեռք բերելու համար, և փարիսեցիք սնափառութեամբ և փողերու ձայնով ողորմութիւն մի բաշխել էին եւս քաղքին մէջ՝ բարեպաշտութեամբ տառնարն եղել էին ընորհակալ լինելու Աստուծոյ այս կարևոր ձերբակալութեանս յաջողելուն համար, Աստուծոյ որ յայտնապէս ատց. Պիղծ է իմն ահաբարիշտն որ հեղուռ զարիւն արդար։ Այն տեններն քահանայապետք և փարիսեցւոց վարդապետք առաջին պատիւն և պաշտօնները ունէին՝ հռոմէական գաւառի իշխանութեան նեքքև՝ որ իր սրցակներուն և իշխանութեան գաւազանին այժն չատ անգամ իրենց ցու-

ցանէր և այնոր համար իրենք ալ սրտանց ատէին
զնա: Այս կեղծաւոր փարիսեցիներն էին՝ որ հրաման
տային որգւոց անիծանել զՀայր Իւրեանց՝ միայն թէ
օրհնկղոյն անուանն չտիէին իրենց անիծից մէջ, և այն-
չափ երկիւղած էին որ չաբաթ օր ձգէին իրենց ծա-
նօթն մեռանել անկած հորին մէջ՝ քան թէ ձեռն տալ
գործս հանելոյ համար. այնչափ արգար որ անթերև-
փանտեղէն բան գողնալն մեղք ոչ համարէին, և այն-
չափ սուրբ որ ամենից նախընթաց օրն կատպաշտ գա-
տաւորին ապարանքն ոտք ոչ կոխէին, և սակայն ա-
նօրէն վճիռ մի հանել տալն մեղք ոչ համարէին՝ բա-
ւական սեպելով ամենայն ղգուշութիւն առնելոյ որ
մի գոյցէ հռոմէական պատմուճանին քսուելով պղծ-
ծին: Հարկ էր որ այն յանցաւորն՝ որոյ մահն բար-
ձրաձայն պահանջէին միանգամայն և նենգութեամբ,
Աստուծոյ և մարդկան թշնամի գատաւարտուէր,
որ վասն վատութեամբ ժողովուրդն գրգռելոյ հա-
մար ամեն ցածութիւն յանձն առնուին, մինչդեռ
ամբողջաբար ժողովուրդն իրենց առջին միշտ արհա-
մարհելի էր, և հռոմէական զօրքն վատակեզ կանային՝
իրենց անմեղին գէմ ունեցած ատելութիւնն ատելի
լաւ ի գործ դնելոյ համար, մինչդեռ այն զօրքն ի-
րենց համար միշտ գարշելի սեպուած էր: Եւ որպէս
զի ատելի չդայ ազատեն իրենց երկիրն այս մեծ յան-
ցաւորիս յանգգնութեամբ Իսրայէլի օրինաց կարգն
և սովորութիւնն ալ ատերեին՝ ինքեանք լինելով միան-
գամայն գատախազք քննիչք և գատաւորք ամբաս-
տանելոյն: Անշուշտ յօժարութեամբ նորա գահիճ
ներն ևս լինէին՝ եթէ այլ լաւ համարած էլինէին
զինքն անարգական մահուան մի մատնել՝ որ նոր մը-
տած էր իրենց մէջ՝ ամենէն մեծեղեռն յանցաւորաց
համար սահմանեալ, որպէս զի նորա չքշտակին վե-
րայ անարգութեան կեղտ մի տպաւորեն, և նորա
պատիւն ալ կենացն հետ ի միասին ի բաց բառնան:

Իրենց գրգռութեամբ էր գարձեալ որ զինքն չար-
չարելու այնչափ նորահնար և բարբարոսական տան-
ջանք մտածեցին՝ զոր ոչ ոք կրած էր մինչև այն ա-
տեն, և նախատինքն և կատաղութիւնն ատելի անգին
չէր կարող անցնել՝ քան ինչ որ կրել տուին խեղճ
գատապարտելոյն, որ ողջակիզի համար պատրաս-
տեալ ղոհի մի նմանէր և այնչափ անօրէնութեանց
գէմ բերանն անգամ ոչ բանայր: Գամեցին ի գլուխ
նորա սայրասուր փշեղէն պսակ մի, որոյ մի մի սայ-
րերն անտանելի ցաւոց խորունկ վէրքեր բանային. և
զինքն գերւոյ պէս մերկացնելէն ետև՝ ուսոց վերայ
արկին հին ծիրանի մի, և գատազանի տեղ ձեռքն ե-
ղէգ մի տուին, և գառն երգիծանօք և ծաղրալից ծըն-
րադրութեամբ ողջունէին՝ նորա ծիծաղելի արքայա-
կան մեծութիւնն այպանելով. բովանդակ մարմինն
ի հարուածոց գանահարութեան արիւնաշաղախ
վէրք մի գարձէր էր... Եւ քահանայապետք և փա-
րիսեցիք նոսեալ հաճութեամբ և խստասրտութեամբ
հայէին այս ահարկու տեսարանիս վերայ, իրենց մե-
ծութեամբն զգեթութիւն վատութիւն հոգւոյ հա-
մարելով [3]:

Բայց տեսցուք թէ ո՞վ էր այս գժբաղդ մարդս ի
նեղքոյ անկեալ այսչափ տանջանաց և լկտանաց: Ար-
դեօք հրընկէց մի էր որ տաճարին կրակ տալու ժա-
մանակ բռնուած էր, թէ հուղկնահար աւազակ մի՝
որ իր քարայրէն գիշերանց գուրս ելած տեղն՝ ձեռք
անկած էր, կամ թէ խռովարար մի որ բոլոր Ասիան
ապստամբութեան յորդորէր և ժողովուրդն կեսա-
րու գէմ գրգռէր: — Եւ սակայն ինքն ոչ աւազակ
էր և ոչ խռովարար. այլ իր յանցանքն աւելի եղեռ-
նաւոր էին և աններելի. վասն զի կամքը բոլոր մար-
գիկ իրարու եղբայր կազմել, և զամենեսին կոչել
յանմահական փառս. ինքն հրամայէր մեծամեծ ա-
ռաքինութիւնս զորս անձամբ իսկ կատարէր, և բո-

ըը Հրէաստան իւր բարեգործութեամբքն լեր էր։ Այս ամբաստանեալն՝ որոյ վերայ կիրքն և մոլեգնութիւնն իրենց զայրոյթն թափէին՝ որգի էր Դաւթի, Սողոմոնի և Եզեկիայ, այն որ սակաւ մի յառաջ յաղթանակաւ մտեալ Յերուսաղէմ Ժողովրդեան ցնծալից աղաղակներովն՝ այժմ ի Գողգոթա առնուէր՝ ինքն իսկ էր Յիսուս մեծ մարգարէն գալիլեացի։

Երբ քահանայք և փարիսեցիք այսպէս անարգեցին զՅիսուս յաչս Ժողովրդեան՝ նոցա մտքէն ջնջելու համար նորա աստուածութեան գաղափարն, շաբաթ օրն մեռ լինելուն՝ դժկամակութեամբ առին դատաւորին ձեռքէն իրենց կամաց և իշխանութեան մատնուած զոհն՝ զոր հռոմայեցի գատաւորն իրենց յանձնէր, և խաչին սարսափելի ծանրութիւնն իւր արիւնազանգ և պատառոտեալ ուսոց վերայ բառնալով՝ մղեցին զինքն սիգօք և նիզակօք Գողգոթայի ցաւալից ճամբուն վերայ՝ հոն տեղն զինքն խաչելու համար։

Անբաւ բազմութիւն հանդիսատեսաց խառնեալ էին հրապարակներն և հասարակաց ճամբայներն, ոմանք կատաղի ուրախութեամբ անէծք կարդային Աստուածորդւոյն, և այլք մրմնջէին երիսատարդ մարգարէին Թշուառ վիճակին վերայ՝ որ մարդկանց բարիքն զատ ուրիշ բան գործած չունէր, և մարդիկ ընդհակառակն զինքն Թողել և մեռնել էին։ Բայց այս անօգուտ կարեկցութիւնս սակաւուց ոմանց վերայ յայտնի երևէր, բարեսիրտներն ծածուկ լային, հոն էին անշուշտ և նոքա զորս հինգ հացով անապատին մէջ կերակրել էր, նոքա զորս բժշկել էր և որոց զանազան բարիք ցուցել էր։ բայց ոչ ոք համարձակ բողոքէր իրեն չարակրութեանց համար. իր քան զամենեսին սիրելագոյն աշակերտն վատութեամբ զինքն ուրացել էր, իսկ այլք բաց ի միոյն Թողել փախչել էին։

Մինչդեռ ինքն այն երկար և ցաւալից Golgotha-ն կառաջ երթայր գեպ ի Աւետնական գաւուն՝ ահաւասիկ կին մի ամբոխն պատառելով նմա խնդրէր մօտենալ. հիանալի գեղեցկութեամբ կին մի էր, հռոմէացի Վերոնիկեն երեսին վերայ փայլէր, և իւր սրտին անբացատրելի ցաւն. աչքն արտասուաց վերջի կաթիլն թափած՝ այնպէս տրամագին և ցաւալից հայեցուած մի ձգէր Փրկչին պատառոտեալ և քամահելի վիրաց վերայ՝ որ երուսաղէմացի կանանց ալ սիրտն չարժելով ծածուկ լային և ասէին խնդա վայր։ Իսկ նա լուռ և անձայն մտաւ ամբոխին մէջ որ գերութեան և կարեկցութեան ազդմամբն տեղի տայր։ Նոյն տեղն քարասիրտ փարիսեցիներէն միւն նախատանօք և թշնամանօք ծաղր առնէր զՅիսուս՝ որ արիւն քրտինք մտած և խաչին ահագին ծանրութեան ներքև չունչն կարած հազիւ քայլէր. բայց կինն չլսեց նորա խօսքն։ Որդւոյն բոլորն եղած զօրքն սպառնային նմա, բայց նա զնոսա ևս չտեսաւ. և երբ սիգաց և նիզակաց սայրերն իրեն գէմ դարձան և զՅիսուս իրմէ բաժնեցին՝ իր յառեալ և պիշ պիշ աչքեն այնպիսի փայլակ մի ցասքեց՝ որ Դաւթի արիւնն ցուցանէր, և գեղեցիկ գէմքն ցաւոց և մահու ցուրտ արհամարհանաց այնպիսի կերպարանք մի առաւ՝ որ զինուորներն յաղթուելով սէգերնին վար ծռեցին այն գիւցազն և սուրբ կնոջ առջին. որչափ որ պատերազմական կեանքն զիրենք խստացուցել էր՝ սակայն նոյն տեսն յիշեցին Թէ իրենք ալ մայր մի ունին։

Այն տեսն Մարիամ Magdalene քայլերով Փրկչին մօտեցաւ, իր վհատեալ աչքն անկեց այն հիւծեալ մարմնոյն վերայ՝ որ արիւնազանգ քարշ գայր ծանր բեռան ներքև, նայեցաւ այն պատկառելի և միանգամայն քաղցր և բազմագութ դիմաց վերայ

որուն իւր անարատ չընթունէն իսկ մերձեցընելու վախէր, և այժմ տեսանէր ուռուցեալ և կապուտացեալ խուխով և արեամբ ծածկեալ, այնպէս որ Աբարչին պատկերն և նախատիպ գեղեցկութիւնն ամենևին ճանաչած չէր: Տրտմութեամբ ձեռքն Ճակտին տարաւ՝ որպէս թէ սփոփելու համար որ տեսածն երազ չէր. իւր Ճնշեալ և հեղձամղձուկ սրտին Ճիկ մի չէլաւ, և մեծ եղողներն յուսահատութեան երևոյթ մի չտեսին այն հոգեվարք մը վերայ. կարծեցին միայն թէ մեռանի. և յիրաւի բիւր անգամ մեռած էր այն գժնդակ տեղն՝ եթէ Նա որ ոչխարին բրդին հաւհաւատ կլսէ զիողմն՝ զինքն պահած չէր իւրով աստուածային կարողութեամբ: Յիսուս հաղիւ թէ տեսնելով իւր մօրն այս անշարժ և անձայն կերպարանքն՝ Ճակատն երկնցուց առ նա՝ որ խաչին ծանրութենէն վար կախուած էր, և միայն կարաց ասել Մայր իմ ողջ ներ[4]: Կոյսն այս ձայնս լսածին պէս՝ որ մահաբեր հնչիւն մի եկաւ իրեն՝ սպրասուր ցաւ մի սիրտն ծակեց անցաւ, դողդողաց, աչքն մթագնեցան, ինքզինք կորանցուց և բերանս՝ի վայր անկաւ այն քարուտ Ճամբուն վերայ որ Յիսուսի արեամբն ոռոգուած էր...

Հոն անդէն գալիլեացի տխրագէմ երիտասարդ մի՝ և արտասուաթոր աչօք մանկամարդ մի ամբոխն Ճեղքելով Մարիամու քովն հասին, և շատ խնամքով նորա խեղքն գլուխն բերին. Կոյսն ցաւագին յանձնն զգալով խմացաւ այն բնական և բարոյական ուանջանաց սաստկութիւնն որ ըստ սովրը հարց ոչ ոք՝ի մարտիրոսաց նոյն ցաւն խմացած է: Անտարակոյս Յովհաննէս և Մագդաղինէ՝ որ զԿոյսն իրենց մօր պէս սիրէին և յարգէին՝ ամենայն ջանք արարին որ զինքն հեռացնեն այն արեան և մահու տեսարանէն որ Գողգոթայի ծայրն պիտի կատարուէր. բայց իրենց աղաչանքն պարապ եղև. վասն զի Մարիամ՝ յատ

նեղութեամբ ոտք ելնելով ուղեց երթալ Գողգոթայ մինչև այն ցաւալից բարձրութիւնն որ ամենէն կարճ Ճամբայն էր՝ ուստի որ չՅիսուս քարչէլով տարել էին[5]:

Հասին վերջապէս այն տխուր Ճամբուն ծայրն, և այն մահաւիթ և նուիրական տեղն՝ ուր որ գառնն անմեղ՝ Աստուծոյ ըսյրացելոյ արդարութեանն հատուցումն պիտի առնէր, ամեն ղօհից տեղն ղինքն նուիրելով, և մեր ամեն ցաւերն իր վերայ առնելով: Հոն պիտի կատարուէր այն մեծ ողջակիզն՝ որոյ ազդեցութիւնն՝ի միոյ կողմանէ մինչև՝ի սկզբնական մեղքն բարձրանայ, և՝ի միւս կողմանէ տարածի ապագայից գիշերուան մէջ մինչև՝ի վախճան դարուց: Այն քարուտ տափարակն նորոգեալ սեղան մի էր՝ ուստի արիւնն Յիսուսի հեղեղօրէն պիտի վազէր առ՝ի լուանալ զմեղս աշխարհի, և առ՝ի մշտնջենապէս ջնջել և ոչնչացընել մահուան և կորստեան գատակնիքն՝ որ զմեզ անդէն՝ի ծննդենէ մատնել էր՝ի ձեռս գժոխային գիւաց: Բայց սուրբ զոհն մէջ տեղ ոչ երևէր, ուր արդեօք տարել էին զնա, և ուր պահէին զինքն դահիճներն՝ իւր յուսահատ մօրն աչքէն ծածկելով: Մարիամ իւր տագնապալից աչքն դարձուց այն լերկ ու մերկ լերին վերայ, տեսաւ Ժողովուրդն որ կեցել սպասէին, խաչերն դեռևին դրուած, և մարդիկ որ անտարբեր կերպով զբաղած էին խորունկ ծակեր փորելու՝ ուր պիտի անկուէին այն երեք տանջանաբանութեանց: Ո՛ր էր ուրեմն Յիսուս:

Աչքն ասկի բերին զինքն, բայց ինչ խիղճ վիճակ. մինչև վերջին հագուստներն վրայէն հանած, և ոչ քուրջ մի ունէր ծածկելու իւր արօրեալ մարմինն և արիւնալից վերքն, ինչ որ այնչափ սուրբ էր և այնչափ մաքուր: Դահիճներն անարգաբար զինքն քաշկըռտելով՝ սակաւ մի ժամանակ Ժողովրդեան առջև

կեցուցին զինքն ծաղրելու համար, յետոյ տարածե-
ցին խաչին վերայ՝ այն պատուաւոր մահճին՝ որ նորա
անհուն սիրոյն փոխարէն մատուցանէր մարդկանց
ապերախտութիւնն: Այս տեսարանս այնպէս սար-
սափելի էր որ իրեն սիրելիներն ոչ հանդուրժէին տե-
սանել. ուստի Մարիամ քանի մի քայլ ետ ետ եր-
թալով կանգնեցաւ եկաց բնական այրին գուռն[6]
գոյն բոլորովին նետած և քարի պէս պաղած[6], ուս-
տի լսուէր ժողովրդեան խժլտուքն՝ Ենգադգեայ մե-
ղուաց բզզիւնին պէս՝ երբ հովիւն եբրայեցի վանէ
զնոսա կալնեաց խոռոչներէն. երբեմն երբեմն ալ
այն լուռ չընչման մէջէն սուլից չմանց հայհոյու-
թեանց և սարսափ բերող ծաղրերու և խնամալներու
աղաղակները լսուէին. իրաւ ամէն ազգաց ոամիկն
խառնիճաղանճն ալ կատաղութեան բերում մի ունի,
բայց հրէից սինհեդրայ այս արկածէն մէջ ցոյց
տուած մոլեգնութիւնն ամենեցուն յաղթեր:

Յանկարծ խոր լռութիւն մի պատեց և ամենքն
լռեցին՝ որ անտարակոյս նոր բարբարոսութեան մի
նշան էր՝ որ ամենեցուն մտագրութիւնն իրեն քա-
շէր. և ահա ուրագի հարուած մի լսուեցաւ, հա-
րուած մի խիստ փայտի և տրորեալ մարմնոյ վերայ.
Մագդալինէ ահուդողով Մարիամու պլլուեցաւ, և
սիրելի աշակերտն բնական ազդմամբ քարայրին պա-
տին կռթնեցաւ: Երկրորդ հարուած մ'ալ զարնուե-
ցաւ առջինէն աւելի խուլ և ստուար և մահագոյժ.
յետոյ այլ ևս երկու երիք հարուածներ որ մէջ ընդ
մէջ լսուէին. եղածն յայտնի էր: Անդադար խաչին
դամեն, ասաց հռոմայեցի զինուոր մի իւր ընկերոջն
դառնալով: Յովհաննէս և Մագդալինէ վախէն սահ-
մռռակեցան, և նոյն ղժացմունքն ունեցան՝ ինչ որ
մարդ խմանայ գիշերային մրրկի առեն՝ երբ նաւա-
կոծելոց ձայնն հեռուէն լսէ և չկարէ օգնութեան
հասնիլ, և որ մերթ ալեաց վերայ ելնելով և մերթ

ներքն իջնելով՝ մի առ մի անյայտ լինին և կորնչին և
աղաղակն դադարի: Հապա Մարիամ... պաղ քըր-
տինք մի բոլոր մարմնէն վազէր և ջղային դող մի բո-
լոր անդամներն սարսէր. նոյն առեն ինքն խելա-
մոյրն ալ խաչին դամուած էր, տանջանարանի վե-
րայ տարածեալ խոստովանող մի և բոցերու մէջ
շրջապատեալ մարտիրոս մի՝ Մարիամու 'ի հոգի և 'ի
մարմին կրած սարսափելի տանջանքն բնաւ զգա-
ցած չեն:

Սակաւ մի ժամանակէն պարանոներու ձախարակ-
ներու վերայ շփուելով գառնալուն ձայնն լսուե-
ցաւ, և ահա խաչն կամաց կամաց բարձրանար և
Որդին մարդոյ դիտելով ընդ հարաւ և ընդ արևմու-
տըս՝ որոց ժողովուրդքն 'ի վաղուց հեաէ լուսոյ
սպասէին, բարձրանայր 'ի քառաթևին որպէս նշան
և դրօշակ յաչս աղգաց անհաւատից, որպէս և
գրեալ էր: Այն առեն անարգեալ ժողովուրդն՝ ու-
րախութեան խուլ և երկայն մռնչիւնով պռռալ
սկսաւ. Ո՛ղջ լեր թագաւոր հրէից, Աստղեցւոյ գրկոց, երէ
որդի ևս Աստուծոյ էջ 'ի խաչիդ, Զայրս ապրեցոյց,
ապրեցուսցէ և զանձն, Երէ յուսացաւ յԱստուած՝
փրկեսցէ այժմ զդա՝ երէ կամի զդա: Նոյնպէս ձա-
խակողմն խաչուած աւազակն ալ հոգեվարաց վերջի
ջղաձգութեանց և գողգոլմանց մէջ անգամ զնա հայ-
հոյէր: Իսկ Յիսուս անխռով խաղաղութեամբ և
վեհական մեծանձնութեամբ զանձն գերագոյն 'ի
մարգարէս և Աստուած և Փրկիչ ցուցանելով՝ իւ-
րով արեամբն լռութեամբ կնքէր զգերազանց վար-
դապետութիւնս նորոյ օրինաց: Գանգատ և յանգիմ
անութիւն մի ոչ էլ իր բերնէն այն անարդ չարչա-
րանաց և տանջանաց առենն՝ զոր կրեր առաջի աչաց
բովանդակ քաղաքին. մանաւանդ թէ այն մոլորեալ
ժողովրդեան վերայ գթութեան աչքն գարձնելով՝
Հանայր աստուածային արդար վրէժխնդրութիւնն

հաշտեցնելոյ՝ որք զինքն խաչէին մեռած ձայնիւ ա-
սելով. Հայր թող դոցա՝ զի ոչ գիտեն զինչ գործեն: —
« Եւ սակայն ուրեմն դարերէ 'ի վեր դեռ Հայրն
երկնաւոր ոչ ներեց նոցա. և իրենց պատուհասն
հետերնին կրեն երկրիս ամեն կողմերն, և աշխարհիս
ամեն գին գերին անգամ սուիպուի ծռելոյ նայելոյ՝
գիրենք տեսնելոյ համար [7] »:

Կայն Թողով իւր ապաստանարանն՝ ուր սակաւ
մի ատեն ծածկեալ էր՝ կորպելուին երթայր դեպ 'ի
պատուհասի տեղն. նախատանաց վայրէն քիչ հե-
ռու վայրագ զօրականներ վիճակ արկանէին այն
անկար պատմուճանին վերայ՝ զոր ինքն իր ձեռքով
մանել հիւսել էր [8], և պատառէին ու իրենց մէջ
բաժնէին այն սուրբ հագուստներն՝ որ այնչափ
հրաշս գործեալ էին: Մարեմայ երեսաց ջղերն
թեթև մի ցնցեցան. միաքն եկին այն առիւծներն՝ որ
միայն Յիսուսի սիրոյն հարուստ, և մերձաւոր եր-
կիւղէ և 'ի կասկածանաց ազատ՝ երեկոյներն նստեր
և այն ծանոթ զգեստուն աշխատէր՝ որդին ալ իւր
քովն. այս մտածութիւնս նոյն ցաւն առաւ իրեն՝
ինչ որ դաշոյն մի որ վիրաց մէջ յամր յամր դառնայ.
վասն զի այն վայրկին որ անցեալ ժամանակի մէջ
անցուցած երջանիկ օրերն իրեն ցուցանէր՝ նոյնն
հիմա իւր թշուառութեան սաուերներն թանձրացու-
նէր: Աչքն դեպ 'ի երկինք վերուց՝ այժ և զօրութիւն
խնդրելոյ համար, և իւր հայեցուածքն խաչելեալ
Աստուծոյ ականջներուն հանդիպեցան. այն խեղճ և
ահարկու տեսարանին Թուլցած ոտքն դեռին գա-
մուեցան, և ահռելի երևութէն և սրտին անդուր
տագնապէն պատանդեցաւ քար կտրեցաւ, և
մինչև այն առեն կրածն տխուր երազ մի Թուէր ի-
րեն և ահարկու տեսիլ որ աներևոյթ լինելու վե-
րայ էր. իւր բոլոր զգացմունքն խաչին վերայ, և բաց
յայնմանէ ուրիշ բան ոչ տեսանէր [9]:

Յիսուս խորհրդական և քաղցր հայեցուած մի
ձգելով Կուսին վերայ՝ կարծես Թէ կամէր ասել
նմա ինչ որ ասաց նախընթաց երեկոյն իր աշակերտաց. Մայր, ժամևանակս հասած է: Որ ժամն արդեօք. ամենէն անմոռաց և տարօրինակ դիպաց բիւրաբեղուն ժամն. ժամն յորում որդին Աստուծոյ պիտի յաղթէր աշխարհի, մահու, գժոխոց և նոյն իսկ աստուածային արդարութեան. ժամն որ լրումն էր գուշակութեանց, ընդունն զոհագործութեանց, ազատութիւն գերեաց և մեր յաւիտենական փրկութեան: Եւ Կայն կարծես Թէ իր աչաց առջևն շարուած տեսանէր հին նահապետներն, արդար Թագաւորներն, Աստուծոյ հոգւոյն լցեալ մարգարէներն որ Քրիստոսի առջևն խոնարհէին՝ երբև զորայս որդւոյն Յակոբայ՝ առաջև խորհրդաւոր որպէս Յովսեփայ: Նմա այնպէս երևէր Թէ տեսանէ զՄովսէս և զԱհարոն որ դնէին առ ոտս նորոյ ծառայն կենաց զտապանակն ուխտի, զեփուդն, զտախտակն դատաստանի, զթիլթեղն ոսկի և զծաղկեալ գաւազանն նշէնի՝ նշան երբայական քահանայութեան՝ որոյ պաշտաման ժամանակն լրացել էր և պիտի գադարէր. յետոյ Դաւիթ որ իւր մարգարէական սաղմոսարանն դնէր առ սրոյն փենեհեզի և նուիրական սրոյն Աբբահամու և օձին պղնձի: Քահանայք և պատարագք, ծէսք և սահմանադրութիւնք, օրինակք և նշանակք՝ խաչին բոլորն ժողովեալք՝ սպասէին լըրման իւրեանց, և մտաբանն եօթնակնքեան պղնձի բացուած կայր առ ոտս մեծի քահանայապետին ըստ կարգին Մելքիսեդեկի՝ որ յաջորդէր քահանայից 'ի ցեղէն Ահարոնի: Նախկին աշխարհն որ յետս ընկըղկէր՝ ծովեզերաց ետ քաշուող յամրընթաց ալեաց պէս, նորանոր տեսարաններ յանդիման առներ. և Մարիամ կարծէր Թէ տեսանէր զամենայն ազգս աշխարհի առ ոտս խաչին Ժողովեալ՝ զԱստուածն ըն-

գունելու համար. Եթովպիա և կղզիք հեռաւորք առ Մեսիայն տարածէին զձեռս իւրեանց, և անապատն ծաղկէը իբրև զվարդ և հրճուէը, և գիտուրեաւք Ցեսեի լինոյր երկիր իբրև զչուրս բազուկս որ ժամկեաւ զծովս, և բիւրաւոր ձայնք ի ղանազան անկոյս բարբառս կրկնէին. Յաղթեաց Քրիստոս օրհնեալն: Եւ աշնուական և վսեմամիտ կինն ի բաց Թուզեալ զայրաստուր ցաւն որ զսիրտն կեղեքէին՝ հիանայր ընդ յաղթութիւն օրինացն ընորհաց և ընդ մեծ վերածնութիւն մարդկային ընկերութեան: Բայց այս փառաւոր տեսիլքն չատ չտեւեց աներեւութացաւ, և ամեն գիշեր ցաւն փոխանակեց. Հառաչէր պէս Մարիամ ողբայր իւր անդրանիկն և ոչ կամէր միխիթարել:

Եւ սակայն նոյն ատեն բոլոր քնութեան վերայ տագնապ մի երեւէր՝ և կարծես թէ ողբակից լինէր Մարեմայ. արեգակն կամաց կամաց խաւարէր և օրն մթնէր, և լոյն նուաղելով տիրապէս գունով մի գունաւորէր այն ընդարձակ և ամայի երկիրն՝ զոր չատ յարմարութեամբ ընտրել էին զայն աստուածապանութեան եղեռն կատարելու համար: Վայրկեանէ վայրկեան խաւարն թանձրանայր, և ջերմութեան յանկարծ խափանուելէն՝ գիշերոյ պէս ցօղ իջնել սկսէր, արծուիք կարկաչելով իրենց բոյներն որոնէին, չարաղղ կեդրանի եղերքն կռնային, և Գողգոթայի արգէն սխուր տեսքն՝ սեաւ կաճ չնուած մեծ մահարձանի մի կերպարանք առնոյր: Ժողովուրդն այս անակնկալ արկածէս սարսռած՝ երկիւղի լռութեան մէջ ընկղմէր. միայն փարիսեցւոց ամանց և Ժողովրդապետաց ձայնն դեռ լսուէր՝ որ ոչ գադարէին անիծանել և այպանել զԲրիստոս:

Սակաւ առենէ երկինք երեան ծածկող մութ վարագուրն տակէն՝ գագաղի բոլորտիքն վառող մահագուշակ ջահերու պէս՝ աստղերն երեւել սկսան՝ աս-

տուածասպանիչ երեան կանաչկեկ և մահատիպ լոյս մի սփռելով. և Գեհոնի գառ՝ի վայրէն վերայ աստանդ խմբեալ հանգիստառեսից գէմքերն այնպիսի գիակնային գունով մի գունաւորեց՝ որ կարծես թէ դիւաց և ուրուականաց խառնուրեր էին. իրենք ևս իրարու երես նայելով զարհուրեցան և պատկերացան: Պարապ տեղ գոլորք և փարիսեցիք այս սքանչելիքս բնական պատճառներով կամէին բացատրել և Ժողովրդեան սիրտ տալ, որովհետև իրենք անօրէնութեան հեղեղին մէջ յոյժ չատ յառաջ գնացել էին՝ ցամաքն ելնելէ յուսահատ. որչափ լուսոյն նորէն երեւելն ուշանայր՝ այնչափ առաւել իրենց բեռած պատճառներուն ատութիւնն յայտնի լինէր. ծերերն իրենց ալեւոր գլուխն շարժելով ասէին թէ այսպիսի խաւարում մի երբեք տեսած չէին, միս կոզմանէ ալ քալդէական գիտութեանց հմուտ ղողներն պնդէին թէ ամենևին խաւարման գուշակութիւն մի եղած չէր, և ոչ ալ կարելր լինել լուսնի գրից նայելով [10]:

Այն ժամանակն որ բոլոր Ժողովուրդն արհաւրոք սարսափած տագնապէին՝ Յիսուս իր հաւատարիմ սիրելիքն մտածէր՝ որ այն անարգական հոգեվարքին ժամանակ իր խաչին բոլորտիքն Ժողվել էին. և խանդաղատելով Յովհաննու արիութեան վերայ, և տեսնելով այն երիտասարդին և եռանդուն առաքեալն ցաւն ու մորմոքն զոր էր կարող ծածկել, ուզեց տալ նմա զգրաւական սիրոյն իւրոյ. ինքն որ քար մի անգամ չունէր իւր գլուխն դնելու՝ էր կարող երկրաւոր ստացուածոց ժառանգ զնա կացուցանել, ինքն որ իւր թաղուելու գերեզմանն ևս ետրախտագիտութեամբ պիտի ընդունէր ուրիշ աչակերտի մի գթութենէն, աշխարհիս վերայ ուրիշբան չունէր՝ բայց եթէ իւր մայրն, իւր մայրն որ ոչ երբեք թողեալ էր զինքն, և որոյ խօսուն աչքն չառեալ

'ի նա՝ կարծես թէ ասէր. « Դու ինձ ամեն բանի տէղ ես որդեակ իմ, դու ես իմ հայրս, դու ես իմ մայրս, դու իմ ամուսինս, դու իմ զաւակս, իմ Աստուածս, իմ կեանքս, իմ գանձս. զքեզ կորուսանելով ամեն բան կորուսի, և այլ ոչ հայր ունիմ, ոչ ամուսին և ոչ որդի ... » Այժմ որդացայ 'ի հօրէ, պղիտացայ յաւուրանոյ, անզաւակեցայ և զանևնայն լինիմ կորուսեալ. ուստի Յիսուս հանդիսասէս իւր սիրելոյ աշակերտին յանձնեց զնա՝ որպէս գրաւական երկնային բարեաց՝ զորս պահեալ էր նմա յարքայութեան Հօր իւրոյ: Եւ գիտելով թէ ուրչափ սիրելին զինքն այս երկու սուրբ հոգիներս, և թէ որպիսի յուսահատութեան մէջ պիտի մնային իւր մահուանէն ետև, իւր երկրպագելի գթութեամբն ուղեց այս երկու աննեցուկ բաղէղներս զօրացընել՝ բաժանեալ Ճիւղերնին իրարու պատատելով:

Այս կարգադրութենէս որ նոր և սիրելի արժէք մի տայր իր կենացն՝ իմացաւ Կայան որ Որդւոյն հետ միատեղ գերեզման ինքանելն երբեն ընդհատած չէր տակաւին, և դեռ երկրիս վերայ պանդխտութիւնն 'ի վախճան հասած չէր: Ուստի գլուխ ծռեց աստուածային հրամանաց վանն սիրոյ մերոյ, զմեզ յանձն սրբոյ աշակերտին իրեն որգեգրելով: Նոյն աստեն Մարեմայ զոհն՝ մարդկօրէն խօսելով Յիսուսի Քրիստոսի զոհին հաւասարեցաւ. վասն զի սակայ թութեամբ մեռնիլ յանձն առնոյր վասն մեր, և նա կեաւ և ապրիլ ... Առքա երկու վառեալ սրտեր էին բորբոքեալ սիրով վասն մարդկան, զոր ինքեանք միայն կատարելապէս իմանային. որովհետև երբենց խորհուրդներն մերիններէն չատ տարբեր էին, և իրենց առաքինութեան ոսկին զուտ և անխառն էր:

— Յիսուս ինչպէս իր մահկանացու կենաց ամեն գործերն՝ այսպէս ալ իւր մայրն Բեթսայիդայի ձկնորսին յանձնելն պարզ և վեմ կերպով բացատրեց

ասելով. Կին դու ահա որդի քո, և սիրելի աշակերտին Ահա մայր քո: — Եթէ առ Մարիամ խօսած առեն՝ աւելի գողտրական բառ մի չգործածեց և մայր անուանն չգիշեց՝ պատճառն այն էր որ գիտեր թէ այն անուանն տալով ինչ սաստիկ կսկիծ պիտի տայր, ուստի ոչ կամեր նորա արիւնալից վէրքն նորէն բանալ՝ որոց ցաւն այնչափ սաստիկ և 'ի խորոց սրտի ղպայր սիրամայր Կոյան:

« Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, զի կատարեսցի գիրն՝ ասէ. Ծարաւի եմ: Եւ անդ կայր աման լինի լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեզուոյ՝ շուրջ եդեալ զմշակաւ ղոպայի, մատուցին 'ի բերան նորա ... » Անգութք և անօրէնք մինչև ցյետին վայրկեանն ... « Իբրև առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուովն՝ ասէ. Ահա կատարեալ է » : Յետոյ կամելով ցուցանել աշխարհի որ ինքն մահուան բռնութեամբն ոչ մեռանէր՝ այլ ինքնայօժար կամաց ներգործութեամբն՝ գոչեաց մեծաձայն, խոնարհեցոյց զգլուխն, և աւանդեաց զոգին:

Նոյն վայրկեանին հեթանոսութեան կուռքերն սարսեցան անկան իրենց մարմարեայ պատուանդանները վրայէն. Մովսէսի աստղն՝ որոյ փայլն աշխարհիս մի կէսին վերայ ևեթ ծանուցեալ էր, և որ առ ժամանակ մի միայն պիտի փայլէր՝ խոնարհեցաւ հովտաց հորիզոնն, և Աբեթարանի արեգակն որ սահմանեալ էր լուսաւորել զաշխարհս բովանդակ ծագեց 'ի ծագս երկրի և տեւել մինչև 'ի վերջ աշխարհի՝ եւ և լուսապայծառ բարձրացաւ արշալոյսն դիէն: Բայց Աստուած իւր Որդւոյն փառաց արհամարհութենն հրաշիւք պիտի ցուցանէր, ուստի և չգտ 'ի վերայ հասին զպրացեալ երկնից նշաններն: Այն գերբնական խաւարէն ետև՝ որ սկսեալ էր կամաց կամաց լուսաւորել, երկրաշարժից սարսափելի

աստանմունք յաջորդեցին՝ որ Ասիոյ մէջ քսան քա-
ղաք կործանեցին[11]: Նոյն ատեն տաճարին վարա-
գոյրն ալ պատառեցաւ, քարերն ձեղուեցան[12], և
բազում մարմինք ննջեցելոց սրբոց որ ննջեին ղբուն
մահու յարեան կանգնեցան, և սուրբ քաղաքն մըտ-
նելով՝ արդէն տագնապեալ ժողովուրդն նոր եր-
կիւղիւ սարսափեցուցին:

Այն ատեն նորանշան և հակագարձ ազդեցու-
թիւն մի խաչեցելոյն աստուածութիւնն յայտնեց.
հարիւրապետն և իր զօրականքն որ ձեռնտու և
գլուխ եղել էին իր եղերական մահուանն՝ միաձայն
գոչեցին որ նազովրեցի մարգարէն՝ մարգէ աւելի
գերագոյն էակ մի էր անշուշտ, և այն ժողովրդեան
բազմութիւնն որ հոգեվարքութիւն քաշող Քրիս-
տոսի այնչափ նախատինք և անէծք և դառն կատա-
կանս արարեալ էին՝ այն մահահոտ լեռնէն վար իջա-
նէին իրենց կուրծքն ծեծելով, և ահիւ և դողու-
թեամբ գոչելով. «Արդարև որդի Աստուծոյ էր սա»:

Ժողովրդեան սարսափմամբ կանչուըռտելու ա-
տեն՝ որ ղնրաբ մղելով փախչող փախչողն լինէին, և
երբ Գողգոթայի ժայռուտ կողերն ի հիմանց սա-
սանեալ պատռտէին, և այն մեծնչաղ լուսոյն մէջ որ
այս ահաւոր տեսարանիս վերայ տիրապին լոյս մի
ձգէր՝ հոն երևէր կին մի հիսակ ոտից վերայ կանգ-
նած. բոլոր համագոյից կործանման և աւերածոյն
մէջ ինքն միայն անսասան՝ կործանեալ և փլած տա-
ճարի անկործան սեանմի պէս, և որոյ վերայ աղդե-
ցութիւն մի ոչ առնէր ընդհանուր և ամենուն վերայ
տիրող սարսափն. այլ ձեռնամած աղաչաւորի կեր-
պով երևէր բոլորովին ընկղմած խաչեցեալ մարգա-
րէին ցաւագին խոհման մէջ. ուստի դառնքը երու-
սաղէմի նորէն սկսան արտասուել և ցաւակցելով
գոչէին. Եղո՜ւկ քեզ, խե՜ղճ մայր, ցաւագի՜ն մայր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ք. Գ. ԳԼՈՒԽ

1 Կեդրոնեան ձոր կոչէր ի հնումն Յովսափատու ձորն:

2 Այս պատմութիւնս յիշատակի Թողոխ մէջ զոր հրատա-
րակեց Հիւլորիք էջ 56 և 60:

3 Սալվատոր անունով Հրեայն որ Օքէնոբրո-Նիկոֆ Մովսէսի
գրոց հեղինակն է, իւր կրօնակիցներն անմեղադիր առնել ջա-
նայ՝ հռոմայեցի զօրականին վերայ նետելով այն տանջանքն զոր
ետուն Քրիստոսի ի գաւթի անդ. բայց յայտնի է թէ հռոմայ-
եցիք ի գրգռելոյ Թէնտամայն Յիսուսի գործէին: Այս նիւ-
թիս վերայ այսպէս գրէ Ռոկեբերան. «Նըքին իսկ հրեայք են
որ դատապարտեն զՔրիստոս ի մահ՝ թէ և ընդ անուամբ Պի-
ղատոսի ճանկիցին. և կամին զի արիւն նորա լեցի ի վերայ իւ-
րեանց և որդւոց: Նըքին են որ այսպանեն զնա, կապեն և տա-
նեն առ Պիղատոս, և անագորոյն տանջանօք կոտորեն ի ձեռն
զօրականին, զոր Պիղատոսի չէր հրամայեալ առնել (Մեկն
Մատթ. ճառ. Էն):

4 Սրբոյն Վընիվակիոսի և Ռնսելմոսի վկայութեամբ հաս-
տատեալ աւանդութիւն է որ Յիսուս Քրիստոս ողջունեց զՎերգն
ասելով Ողջ լեր Մարդ. և որովհետև գտանեմք զՏիրամայրն առ-
ոտս խաչին՝ այս հարց աւանդութիւնն հաւանական երևի. ուս-
տի և Շաթոպրիան ասէ. «Հաւատալ ոչ ընդդեմ լինիմն աւան-
դութեանցս, այլ մանաւանդ ցուցանեն թէ որչափ անչինչ սը-
պասուորեալ են ի միտս մարդկան հրաշապատում վէպք չարչա-
րանաց փրկչին: Դարք ուխտատան անցեալ սրացեալ և հալա-
ծանք անդադար և յեղափոխութիւնք անթիւ չկարացին ընչել
և կամ հետախաղաղ ծածկել զհետս մօր որ ընծանայ առ ի
ողբալ զորդին»: Տիրամօր մարելոյն և նուագեալ անկանելոյն
յիշատակ՝ եկեղեցի մի կանգնուեցաւ նոյն տեղն նուիրական
անուամբս Տիրամայր Նուագեալ. որ որ ըստ ժերամոլի զօրա-
կանք ի բաց վանեցին զՄարիամ՝ երբ հանդիպեցաւ իւր որ-
դւոյն, որ զանարգական փայտ պատուհասին ուսով բարձեալ
գժուարաքայլ ընթացիք երթայր ի խաչ ելանել: Այս տա-
րուան 1885 յունիս 22ի Missions catholiques ամսաթերթին 333
թուոյն մէջ կարդացի որ տաճնուհինգ տարի առաջ այս եկե-
ղեցւոյս աւերակն գտնել է կաթողիկէ հայ քահանայ մի:

5 Այս ճանապարհս որ հայեր երբենն ի Գողգոթա, և ուս-

տի անցաւ փրկիչն՝ հիմա ոչ ևս երևի՝ տներ շինուած լինելուն, որոց մէջ հասս սիւն մի տնկած է՝ որ ինչներորդ դադարն ցուցանէ. այլադէնք այլ աւելի անմատոյց առնելու համար նոյն տեղն՝ ամէն տեսակ աղտեղութեամբ լեցուցած են, որպէս զի քրիստոնեայք չմօտին (տը Ժերամպ հտ. Ա.)։

6 Մերձ՝ ի տեղին ուր դահիճք խաչին վերայ բևեռեցին զՏէրն մեր՝ մատուռ մի երևի նուիրեալ Յաճախին Տէրամօղն. հոն առանձնացաւ Կոյսն երբ իւր որդւոյն տանջանաց արիւնառուչտ պատրաստութիւններն տեսնուէին (տը Ժերամպ հտ. Ա.)։

Ս. Ալեքսեեան աւազակին յիշատակն առնեն լատինք ի 25 մարտի անուամբս Ս. Դիսմոս։

7 Լամընէ։

8 Չին աւանդութիւն է որ զպատմուճանն Քրիստոսի յօրինեալ էր Նոյն ինքն Տիրամայր Կոյսն իւրով ձեռամբ։— Այս տարւոյս 1885 փետր. 27 այսպիսի ծանօթութիւն մի ընթերցաք կրօնական օրագրի մի մէջ. « Անկար պատմուճան Տեառն մերոյ պահի ի քաղաքին Արժանթէօյլ՝ ի Փրանկիա, տուեալ՝ ի պարգև ի մեծէն Կարոլոսէ յ'Թ դարու. ըստ վերջին քննութեանց եպիսկոպոսի Թեմին ի հերուն ի չորս մասունս բաժանեալ է այժմ պատմուճանս. ի վերայ մեծագոյն կտորին երևին ընդարձակ բիծք արեան ի պարանոցէն մինչև ցուսն և ցկողս, որով և այն մասունք խիստ են և ոչ մեղկաշօշափ որպէս մնացորդքն. Թուի յօրինեալ ի գորշագոյն ստևոյ ուղտու կակղագոյն և անօսր ոստայնանկեալ»։

9 Հաբք և վարդապետք եկեղեցւոյ կուսամօր Գողգոթայի վերայ քաշած ցան և տանջանքն յոյժ առաւել համարին քան զտանջանս բովանդակ մարտիրոսաց։ — Սուրբն Բասիլիոս ասէ. « Կոյսն այնչափ գերազանցէ քան զբովանդակ մարտիրոսս, որչափ արեգակն քան զայլ աստեղս ». և Սուրբն Ինսելմոս յաւելու. « Որ ինչ կատանք տանջանաց տուան մարմնոյ վկայից՝ Թեթև նա մանաւանդ ոչինչ են առ քոյովքդ »։

10 Փլեկոն աւանդէ Թէ յերկուհարիւրորդի երկրորդի ոլիմպիադին որ մեր Թուականին 33 տարւոյն համապատասխանէ՝ այնպիսի մեծ խաւարումի մի եղև արեգական՝ որոյ նմանն ամենևին չէր տեսնուած, մինչև կէս օր աստղերն երևէին. և որովհետև աստղաբաշխութիւնն նոյն տարին խաւարմունք ոչ նշանակէր՝ հարկ է համարել Թէ այս չլսուած խաւարն գերբնական ինչ էր »։(Յովհաննէս Բրնաբոս յանդիման ալեաբհի)։ Դարձեալ Սուրբն Դիոնեսիոս արիսպագացի որ նոյն աստն ի Հելիոպոլիս գտաներ ասէ. « Տեսաք որ լուսինն յանկարծ եկն և արեգական և երկրիս մէջ անկաւ՝ Թէ և ըստ բնական կարգի օրինաց չարժման աստեղաց զուգընթացութեան ժամանակ չէր՝ և այլն » (եօթներորդ Թուղթ առ Պոլիկարպոս)։

11 Պղինիոս և Սորալեն ալ խօսին այս երկրաշարժիս վերայ՝ որ այնչափ սաստիկ էր որ մինչև Հիտալիա իմացուեցաւ ասեն։

12 Լսեիսըն պատմէ Թէ աստուածեան աղանդաւոր անգլիացի Ճանապարհորդ մի՝ երուսաղէմ եղած ժամանակ ուզեց ծաղրական ցուցանել քրիստոնէից սուրբ երկրին վերայ տուած մեկնութիւններն. բայց պատառեալ ժայռն տեսնելով սկսաւ տարակուսիլ, և մտագրութեամբ քննելէն ետև՝ դարձաւ իր բարեկամ ուղեկցին և ասաց. « Ես ալ կամաց կամաց քրիստոնեայ պիտի լինիմ. որովհետև երկայն աուն քնաբանութեան և ուսողութեան վարժած լինելով՝ ապահով եմ որ ժայռ մի սովորական և բնական երկրաշարժով այսպէս չկարէ ջախջախիլ. և պատառուածքն բոլորովին տարբեր ուղղութիւն մի ունէին սովորական երկրաշարժի պատառուածքէն՝ զոր ուրիշ տեղեր դիտել եմ։ Ուստի յայտնի տեսանեմ որ այս բանս հրաշիւք լինէ յառաջ եկած է՝ զոր ոչ արուեստ և ոչ բնութիւն՝ չէն կարող յառաջ բերել։ Արդ ընդհ ունիմ Աստուծոյ որ զիս հոս տեղս առաքինորդեց տեսնելու համար իր հրաշալի կարողութեան յիշատակարանն, որ և Յիսուսի Քրիստոսի աստուածութիւնն ալ յայտնի ցուցանէ » (Յաղագս էքսորհեկան կրօնէն երկրորդ տպագրութիւն հտ. Բ)։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Մարեւնայ կեանքն յետ յարութեան և հաւիրարմանն Պետրոսի ժողովոյն.

Հանդարտութիւնն սկսել էր տիրել, և երկնային բարկութեան սարսափելի նշաններն ալ դադրել էին երկիւղիւ խռովելու Փրկչին արիւնն թափող հրեայներն, գազանաբարոյ դահիճներն ալ սակաւ մի՛ ի բաց թողել էին իրենց վայրագ անգթութիւնն՝ գործած անօրէնութենէն զարհուրելով և վախնալով որ մի գուցէ Գողգոթայի սասանեալ ժայռերն իրենց վերայ ալ փլչին և զիրենք ջախջախեն, կամ երկիրն պատռելով ողջ ողջ կլլէ զիրենք: Բայց սակաւ մի յետոյ հրէից երկիւղն փարատեցաւ և խիղճն հանդարտեցաւ. այնպէս որ կամաց կամաց նորէն իրենց ատելութիւնն և չարութիւնն ձեռք առին, մանաւանդ քանի որ տեսանէին թէ երկինքն ալ պարզէր և պայծառանար:

Եւ որովհետև ոչ կարէին ուրանալ այն նորաձանչ հրաշքն՝ զոր բոլոր Ժողովուրդն իրեն աչօքն տեսած էր, և որոց վկայ էին լերանց հերձեալ ժայռերն, կիսաբաց և թափուր գերեզմաններն, և տաճարին վերուստ ի վայր պատռեալ վարագոյրն, այնոր համար այս եղած բաներս սկսան դիւթութեան տալ և ասել թէ Փրկուտաս՝ որ միով ակնարկութեամբ բոլոր տիեզերաց հրամայէր, որմէ էր Բելիարայ՝ որ Ժողովրդեան աչքն խաբել էր, և տակաւին վերայ իշխեր զօրութեամբ անճառելի աստուան Աստուածոյ Իսրայելի՝ զոր ծածուկ գողցել էր տաճարին սրբութիւն սրբոց խորանէն[1]:

Միամիտ ժողովուրդն ալ այս ծաղրական ստութեան հաւատայր՝ զոր իշխաններն զիրենք համոզելու համար հնարել էին. որովհետև էին այլանդակ և անտեղի չարախօսութիւն մի՝ որ չգտնէ դիւրահաւան ականջներ զայն ընդունելու, և խաբեբայ լեզուներ զայն հրատարակելու: Գահանայապետք այս խաբէական չարախօսութիւնս և յիմարական զրպարտութիւնս հաստատելու համար՝ իրենց արբանեկաց մէջէն ընտրեցին արթուն և զինեալ պահապաններ՝ դերեզմանն զգուշութեամբ պահպանելու համար. որովհետև Յիսուս յառաջագոյն ծանուցեալ էր որ մեռնելէն երեք օր ետև փառաւորապէս յարութիւն պիտի առնուր. ուստի Ժողովարանին իշխաններն վախնալ ձևանային՝ որ մի գուցէ աշակերտներն գան և գիշերանց մարմինն գողնան և ժողովուրդն համոզեն թէ յարեաւ:

Երրորդ օրն որ էր միաշաբաթի այսինքն կիրակի՝ սկսել էր ծագիլ, և արևելեան դին արշալուսոյ կարմրութեամբն գունաւորիլ՝ երբ գալիլեացի բարեպաշտ կանայք անուշահոտ խունկերով եկին իննկել զմարմին Տեառն ըստ սովորութեան թագաւորաց հրէից[2], և տանջանաց լեռնէն անցնելով բազմահոգ արամութեամբ յառաջ երթային գէպ ի այն պարտէզն՝ ուր էր գերեզման Փրկչին: Ըստ աւանդութեան ոմանց այս սուրբ կանանց հետ էր նաև Մարիամ մայրն Յիսուսի[3], որոյ տրամագին անձն և հասակն նման էր գեղեցիկ շուշանի՝ զոր գիբաղդութենէն մրրկահոյլ հողմունք ծռած խոնարհած էին. սակայն իւր զուարթ աչաց մէջ ոչ այնչափ ցաւ՝ որչափ յոյս և ակնկալութիւն փայլէր: Իսկ պլէք առեն թէ Տիրամայրն իւր հաստատ և անչարժ հաւատքովն իւր Միածնին խոստման վերայ թէ յիրաւի յարութիւն պիտի առնու և նախ և առաջ իրեն պիտի երևի, իր տեղէն չէր շարժած, և այն իւղաբեր

կանանց չէր ընկերացած. և այնպէս յառաջ քան զսոսա տեսաւ Իւր Միածինն յարուցեալ 'ի մեռելոց. և որովհետև այս առաջին տեսութիւնս միայն իրեն համար էր, ուստի և աւետարանիչք զանց առին զայն նշանակելոյ. որովհետև պատշաճութիւնն ալ արդէն բոլորովին ստոյգ և աներկբայ համարեալ էր Ա: Իսկ իւղաբերք իրենց ճամբայն յառաջ վարէին՝ երբ Երուսաղէմ դեռ առաւօտեան միգին մէջ թաղեալ էր. ծաղկունք իրենց ցօղալից թերթերն բանային, թռչունք մոլեռնեցաց թաց ճիւղերուն վերայ ճոխողէին, և բոլոր բնութիւնն նոր յոյժ մի ապած երևէր, և այն ամայի տեղւոյնքն զուարթ կերպարանք մի առեր էին, և կարծես թէ խորհրդական աւետիս մի տալ ուզած ժամանակ՝ գաղտնիքն ալ պահել կամէին: — Ա,յս զուարթասեսիլ երևութիս առեն՝ յանկարծ ահագին ցնցում մի եմացան, և այն մեծ քարն որ կափարիչ էր գերեզմանին՝ աներևոյթ զօրութեամբ մի մղեալ 'ի բաց թաւալեցաւ. մեռ եղած պահապանքն յերեսս 'ի վայր գետինն անկան, և կանայք որ Յիսուսի խաչուած առեն աներկիւղ խաչին քովէն չէին բաժնուած՝ գահճաց և զինուորաց սպառնալիքն բանի առղ չդնելով, հիմա գոյներնին նետած ահուդողով ետ ետ քաշուիլ սկսան՝ կարծելով թէ նոյն սարսափելի նշանները պիտի նորոգէին՝ ինչ որ Որգւոյ մարդոյ մեռնելու առեն հանդիպել էին: Բայց ահա ձեռն պէս սպիտակ պայծառազգեստ և փայլակնաձև հրեշտակ մի՝ եկն նստաւ գերեզմանին քարին վերայ, և Յիսուսի աղախիններն քաջալերելով ձայնեց առ նոսա. « Մի՛ երկնչիք դուք. գիտեմ ես զՅիսուս զխաչեալ խնդրիք. չէ աստ քանզի յարեաւ՝ որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր կայր »: Մինչդեռ բարեպաշտօն գալիլիուհիք ահիւ և դողութեամբ 'ի գերեզմանն խոնարհած՝ զարմացմամբ տեսանէին

զվարշամակն և զխնկեալ պատանին որ գերեզմանին եղերքն Թողուած էին, Մարիամ ուրախութենէն և զարմանքէն այլ լայլմ լեալ՝ սակաւ մի հեռի ձիթենւոյ մի յենած կեցեալ էր, հոն յառաջ քան զանեսին երևեցաւ իրեն Տէրն մեր գեղեցիկ երիտասարդի կերպարանօք՝ անդրանիկն 'ի մեռելոց և հզօր յաղթողն գժոխոց Յիսուս Քրիստոս [4]. ապա Մագդաղինէին յանկարծական և անակնկալ խնդութիւն մի պատճառեց՝ նախ պարտիզպանի կերպարանօք երևելով՝ և յետոյ զինքն յայտնելով. և ապստրեց որ երթան աւետիս տան եղբարց իւրոց այսինքն առաքելոց, զի երթիցեն 'ի Գալիլեա և անդ տեսցեն զնա. յորմէ հաստատի դարձեալ թէ իւր Մօրն յառաջագոյն երևցեալ էր. վասն զի եթէ երևցած չէր նէ՝ նոյն աւետիսն ամենէն յառաջ իրեն զրկելոյ էր: Ուստի Մարիամ որչափ որ խաչելութեան առեն անտանելի ցաւ մի կրած էր սրտին մէջ, նոյնչափ և աւելի անճառելի ուրախութիւն զգաց իր Միածինն յարուցեալ տեսնելով:

Տէրն մեր յարութենէն ետև քառասուն օր չատ անգամ երևեցաւ Իւր աշակերտացն, և աւանդէր նոցա այն խորհուրդներն որ պատկանէին Աստուածոյ արքայութեանն և քրիստոսական կրօնից և մարգկան վերածնութեանն՝ որ պիտի կատարուէր 'ի ձեռն մկրտութեան: Բարեպաշտ մատենագիրք իրաւապէս համարին թէ այս միսիթարական այցելութիւններս այլ աւելի յաճախ ունեցած է սուրբ Կոյս՝ ընտրելոց երջանկութեան հասն երկրիս վերայ ալ առնելով. որով իւր արտմութեան դառն արտասուքն փոխեցան յուղիս փափկութեան և յաղթութիւս մսիթարութեան:

Բայց վերջապէս եհաս ժամն որ Յիսուս ըստ աստուածային պատգամաց պիտի դառնայր 'ի յերկինս. արդէն իւր փրկական անօրէնութիւնն և ա-

ռաքելութիւնն կատարեալ էր երկրիս վերայ, և առաքեալք յարութեան սքանչելեօք լիովին հաւատնեալ էին նորա աստուածութեան, և ընկալեալ էին ՚ի նմանէ զամենայն կարևոր հրահանգս՝ առ ՚ի գործադուցանել զաշխարհ ամենայն ՚ի հնազանդութիւն աւետարանին: Ուստի քառասներորդ աւուր միջոցին՝ նոցա հետ միասեղ եղ Յերուսաղէմ, և սկըսան դնալ ՚ի Բեթանիոյ բարձունքն Ելիայ. ոչ ըստ դիպաց այս ճամբայս բռնելով, այլ վասն զի հոն էր այն ձիթենեօք պսակեալ լեառն՝ ուր Փրկիչն մեկնելով յամբոխէ շատ անգամ եղանէր անդր աղօթելոյ առ Հայր իւր, հոն էր նաև այն պարտէզն ուր ինքն այնքան ցաւօք հոգեվարաց առաջին տագնապներն զգացեալ էր տրտմելով մինչև ցմահ և արիւն քրտինք մանելով. հոն էր ուր անձագործոյն Թշնամիք եկել էին զինքն կապելու կաչկանդելու. ուստի վայելչեր որ իւր փառքն ալ նոյն աեղէն սկսէր ուր սկսել էին իւր անարգութիւնն և տանջանք. որպէս զի այն արտերն և հովանաւոր անտառաց վայնութիւնն ալ՝ որ շատ անգամ վկայ եղել էին իւր խոկմանց և աղօթից՝ ընդունէին իւր քայլերուն վերջին հետքն յառաջ քան զվերանալն ՚ի յերկինս [5]:

Սակայն հոս սրտաշարժ հանդէս մի ներկայանայ մեր առջև ՚ի մէջ խանդակաթ Մօր և սիրելի Որդւոյ՝ որ բաժանին ՚ի միմեանց հրաժարական ողջունիւ, զոր և այսպէս նկարագրէ Թ. դարուն մէջ Զաքարիա կաթողիկոս ՚ի Ճառն Յաղագս ննջման Կուսին՝ ըստ հին աւանդութեանց. «Յորժամ եկաւորեալ լինէր քաւչպետեան Քրիստոս ՚ի լեառն ձիթենեաց, և հանդերձեալ էր համբառնալ ՚ի փառս անճառս աստուածութեան իւրոյ, կացեալ առաջի փառաց Թագաւորին ամեներջանկին ՚ի կանայս Թախանձեալ և մրմնջեալ սրտիւ ասէ ցվերկագործն բոլորից. «Տէր իմ և Աստուած իմ և արարիչ իմ և որդի իմ,

զինչ հրամայես վասն իմ՝ յորժամ համբառնաս ՚ի հայրական փառսն քո. և հիմ բացալքեալ Թողուս զնս անտյգելոյս և անտերունչ ընդել յայսմ կենցաղի. քանզի ՚ի մէջ հեթանոսաց ոչ գոյ ինձ հանգիստ, և զհրկից զտպերատութիւն և զկատարեալ ապերատանութիւն Տէր դու քաջ գիտես, որ գաղտնեաց գիտակ ես և յայտնեաց. արդ առ ո՛վ յատկովեալ ապաւինիմ »: Ասէ ցնա վերկագործն բոլորից. « Մայր իմ և տածող և առագաստ անճառ մարգեղութեան իմոյ, և խորան բանաւոր անհասանելի, ոչ եղէգ արհամարհելով անտես առնեմ զքեզ. այլ որպէս յանձն արարի զքեզ սիրելի և հաւատարիմ աշակերտիս իմոյ, առ ժամանակ մի Թողում զքեզ յաշխարհիս ՚ի մէջ ընտրելոց իմոց աշակերտաց. որպէս զի նկատեալ օր ըստ օրէ սփոփեալ մխիթարեսցին. և դու նկատեալ վերատեսցես զարուեստս նշանացն և սքանչելեաց՝ որ յանուն իմ կատարի ՚ի ձեռս նոցա ՚ի զարմանս և ՚ի հիացումն բոլոր տիեզերաց... Եւ ՚ի լրման կեաց կենաց քոց՝ ըստ կամաց իմոց սահմանեալ ՚ի վերայ քո, ո՛չ հրեշտակ առաքեցից առ քեզ, և ո՛չ հրեշտակապետ, և ո՛չ զմի ոք ՚ի գերագունից զօրաց վերնական իշխանութեանցն. այլ ես եկեալ պատուով զարդափայլեալ և հրաշալի փառաք առեալ վերափոխեցից զքեզ ՚ի տենչալի գեղապատիճ դրախտն » [6]:

Հաւատալք ուրեմն այն լերին գագաթն՝ ուստի երեւին Մեռեալ ծովն և Յորդանանու խորափոս ելեզերքն և Երիքովի գաշտին հակայաձև արմաւենիներն՝ Փրկիչն կանգ առաւ բայ տափարակ գետնոյն վերայ՝ սակաւ մի հեռի այն ձիթաստանէն զոր յետոյ հռոմայեցիք Երուսաղէմի պաշարման ժամանակ բոլորովին կարեցին. անդ վերջին հայեցուած մի ձգեցուբ Մօրն և առաքելոց և աշակերտաց վերայ՝ որ հարիւր քսան հոգի էին, և վայրք լինելոց էին այն

հանդիսաւոր ժամուն գերահրաշ տեսլեանն՝ « ամ-
բարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա. և եղև յօրհ-
նել նորա զնոսա՝ մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր
յերկինս » :

Այս վերջին անգամ Փրկչին մերոյ աստուածային առաքելութեան արժանաւոր կնիք մի եղև. իր մարմնաւոր կենաց ժամանակ շրջեցաւ բարի առնել ամենեցուն. խաչին վերայ իր գահճաց համար աղօթեց, և ի վերանալն յերկինս՝ օրհներ իւր հաւատարիմ բարեկամներն՝ զորս Թողոյր յաշխարհի, և գեռ բազկատարած երևեր ինքն՝ երկրամած ի գեհին խոնարհեալ աշակերտաց վերայ՝ երբ լուսաւոր ամպ մի ծածկեաց զնա յաչաց նոցա : Ի համբարձման Տեառն մերոյ ոչ երևեցան այնպիսի ահաւոր նշաններ որ հին ժամանակ սարսափելիացնէին զմարդիկ. մովսիսական օրէնքն հրատարակեալ էր ի ձայն աւադափող փողոց, որոտմանց և փայլատականց ահարկու ճայթմանց մէջ. Եղիա հրեղէն կառօք յերկինս յափշտակեր. իսկ Փրկիչն աշխարհի հեղնկ համբարձաւ թեթև ամպոց վերայ, այնպիսի պարզ և խաղաղ մեծ վայելչութեամբ՝ որ վայել էր Աստուածորդի և սրտաշարժ սիրոյն Յիսուսի որ աւանդեաց զնա [7] : Հրեշտակք և երկնային ոգիք որ ուրախանան մարդուս երջանկութեան վերայ՝ հանդիսակից էին այս շքեղ տեսարանիս՝ յորում պարզէր և աւարտէր փրկագործութեան մեծ արարուածն՝ որ ի սահմանէ մարդոյ սկսած էր. նոքա որ իրենց երկնային երգերովք աւետել էին հովուաց զծնունդ Մեսիային և հռչակել էին զարթութիւն նորա ի մեռելոց՝ յայժ վայել էր որ վկայ լինէին նաև իւր փառաւոր համբարձմանն ալ : — Ուսոմ մինչդեռ աշակերտք հիացմամբ դիտէին զՅիսուս որ երթալով երթայր և բարձրանայր օդոյն մէջ, յանկարծ երևեցան նոցա արք երկու ի հանդերձս լուսաւորս և ասեն. « Արք գալի-

լեացիք, ընդ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս որ վերացաւ ի ձէնջ յերկինս այնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս » : — Այս հրաշալի դիպուածէս տասն օր յետոյ՝ որ պասեքին կամ զատկին սկիզբն յիսներորդ օրն անկանէր՝ գտանեմք զՄայրն Աստուծոյ ի վերնատան Սիոնի՝ ուր առաքելոց հետ ի միասին ընկալաւ զՀոգին սուրբ [8] :

Նորածին եկեղեցւոյ առաջին տարիներն՝ Մարիամ լուսեղէն սիւն մի էր առաջնորդ հաւատացելոց. նմա ընծայէին առաքեալք այն բազմաթիւ հասկերն՝ զոր քաղէին հրեից ժողովարանին անդաստաններէն՝ առ ի չտեմարանել զնոսա ի չտեմարանս Տանուտեառնն, և ինքն այս ընծայներս խոնարհութեամբ և լի ընդհօք ընդունէր յանուն Որդւոյն իւրոյ : Աղքատներն խեղճերն մեղաւորներն իրմէ ոչ բաժանէին, որովհետև ինքն ալ մանաւանդ դուռ և սէր ցուցանէր նոցա և մխիթարէր. աւետարանիչք իրմէ ընդունէին լոյս և տեղեկութիւն Քրիստոսի մանկութեան և առաջին ծածկեալ կենաց վերայ. առաքեալք՝ արիութիւն և հաստատութիւն. հիւանդք հոգւով և մարմնով բժշկութիւն և առողջութիւն. տրտմեալք՝ հոգեւոր մխիթարութիւն. նորադարձք զօրութիւն կրելոյ զնաչն զկնի հետոյ Քրիստոսի ի վիշտս և ի հալածանս. և ամենքն իրմէ բաժնուած ատեն օրհնէին զնա և ընդունէին զօրհնութիւն նորա : Եւ թեպետ Արեգական արդարութեան խոնարհեալ ի մուտս իւր Գողգոթայի արիւնազանգ հորիզոնին վերայ՝ երթեալ էր լուսաւորել զաշխարհս ստորայնոց, սակայն Արուսեակն զուարթաբար տակաւին ափեր զձառագայթս իւր՝ ի վերայ նորատեղծեալ աշխարհիս, և հեղոյր զբարերար հոսանս շնորհաց ի վերայ որբանաց քրիստոսական կրօնից :

Ամենուն հետաքրքրութիւնն գայ գիտել թէ ար-

գեօք Տիրամայրն ուր և ինչպէս անցոյց իւր վերջին տարիներն երկրիս վերայ՝ Աստուածորդւոյն յերկինս համբառնալէն ետև։ — Նախ և առաջ պէտք է գիտել՝ որ եկեղեցւոյ վարդվի հաստատուն աւանդութիւն է՝ հաստատեալ գրեթէ միաձայնութեամբ հարց և պատմագրաց թէ սուրբ Կոյսն յետ համբարձման Քրիստոսի միշտ յԵրուսաղէմ բնակեցաւ մերձ ՚ի Սիոն և ոչ հեռի ՚ի գերեզմանէ Տեառն. որպէս գրեն Խորենացի, Սոփրոնիոս, Նիկեփորոս, Մետափրաստէս, Անդրէաս կրետացի և այլք, այն վերնատան մօտ ուր հաստատեց Քրիստոս վերջին ընթրեաց ժամանակ զաւորհնուրդ մարմնոյ և արեան իւրոյ, և յորում երևեցաւ բազում անգամ յետ յարութեանն աշակերտաց իւրոց գրօք փակելովք, և ուր էջ Հոգին սուրբ ՚ի վերայ առաքելոց։ Եւ որովհետև՝ որպէս աւանդէ Խորենացի, Ս. Յովսէփ ՚ի մեռանելն յանձնեալ էր զկոյն Յակոբայ արդարոյ՝ որ եղև առաջին եպիսկոպոս Երուսաղէմի, և յետոյ Տէրն մեր յանձն արար զնա Յովհաննու սիրելւոյ աշակերտին, ուստի և Աբեսաբանիչս ոչ երբեք մեկնեցաւ ՚ի նմանէ՝ քանի որ Կոյսն կենդանի էր, այլ որդիաբար ծառայէր նմա, որում օգնական եղև երբեմն և Ս. Ղուկաս աւետարանիչ՝ բժիշկ հարտար և նկարիչ. և երկոքին սոքա Մարիամայ հետ ունեցած ընտանութենէն՝ բազում ինչ ուսան ՚ի նմանէ Քրիստոսի աստուածութեանն և նորա մարդանալոյն, և մանկութեան ժամանակ անցած գիպուածոց վերայ, զորս և ՚ի գիր անցուցին. Յովհաննէս անձառելի կերպով իսաւելով յաւիտենական Բանին աստուածութեան վերայ՝ որով և Աստուածաբան անուանն ժառանգեց. իսկ Ղուկաս նորա մանկութեան և անյայտ կենաց պարագայներն աւանդելով զորս ոչ ոք կարէր գիտել եթէ ոչ Կուսամայրն. ինչպէս որ ինքն ալ խոստովանի իւր աւետարանին սկիզբն ասելով.

«Որպէս աւանդեցին մեզ՝ որ ՚ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն Բանին»[9]։ — Եւ որովհետև սոյն Ղուկաս հարտար նկարիչ ալ էր՝ որպէս ասացաք, նկարեց զպատկեր սրբոյ Կուսին զանազան դիրքով թէ առանձինն և թէ Աստուածորդւովն ՚ի գրկին, որք սովորաբար վեց հատ համարին, և ոմանք պահին մինչև ցայսօր ՚ի Հռոմ, մին Վիա-Լաթա ասացեալ փողոցի Աստուածամօր եկեղեցւոյն մէջ՝ զոր նկարած էր նոյն եկեղեցւոյն ներքև սաորերկրեայ տան որմին վերայ, որ և Ս. Պաւղոսի և այլ առաքելոց բնակարանն եղած է, և միւսն Ակադ Մարիամ ասացեալ եկեղեցւոյն Պորկիզեան կոչեցեալ մատրան մէջ Աստուածորդւովն ՚ի գիրկս. զատ ՚ի սոցանէ Հռոմայոց մէջ կան նաև քանի մի նկարներ Տիրամօրն զորս բարեպաշտ ժողովուրդն Ս. Ղուկասու նկարած համարի, և հոկտեմբերի 18ին ըստ լտ. Ս. Ղուկասու տօնին օրն զամենքն ալ դնեն ՚ի յարդուքիւն հատատացելոց. կայ նաև Ս. Ղուկայ նկարած միւս այլ պատկեր ՚ի Վենետիկ Ս. Մարկոսի հռչակաւոր եկեղեցւոյն մէջ որ ՚ի Կոստանդնուպոլսոյ բերուած է, որպէս նաև ՚ի Սպանիա Մատրիտ քաղքին մօտ Ադրջալ եկեղեցւոյն մէջ՝ որ մեծ ուխտատեղի է[10]։

Ս. Ղուկայ նկարած պատկերներէն զատ՝ սիրելի աշակերտն և Աստուածամօր սրդեգիրն ալ փորագրած կամ նկարած էր Տիրամօր պատկերն ՚ի վերայ կիպարիս կամ նոճի տախտակի, զոր յետոյ Բարթողիմէոս առաքեալ բերաւ ՚ի Հայաստան և գրաւ Հոգեայ վանք ասացեալ եկեղեցին արծրունեաց երկրին մէջ. որոյ պատմութիւնն գրած է Խորենացի առ Սահակ արծրունի իշխանն, զոր համառօտելով այս տեղս գնեմք[11]։ Երբ սուրբ Կոյսն հրաւիրեցաւ փոխադրիլ ՚ի յերկինս և յայտնեց զայն Յովհաննու՝ սիրուն աշակերտն շատ տրտմելով այս լսոյս վերայ, ուստի զի պիտի բաժնուէր իր սիրելի Մօրէն՝ կիպա-

ըես փայտ մի առաւ՝ յորմէ շինուած էր նաև Յիսուսի խաչն, և Թախանձելով զՏիրամայրն՝ մեծ աշխատուԹեամբ նորա պատկերն ձեւացուց, որպէս զի յիշատակն մնայ 'ի մխիԹարուԹիւն սրտին, և իւր կարօտն այնով լեցընէ: Որովհետև, ասէ հեղինակին, Տեառն մերոյ համբառնալէն ետև՝ առաքելոց միակ մխիԹարուԹիւնն Տիրամայրն էր, և զինքն տեսնելով իւր Որդւոյն կարօտն առնուին. այսոր համար Պետրոս և Պաւղոս (որպէս և այլ առաքեալք աշակերտք և հաւատացեալք) ամէպ ելանէին Յերուսաղէմ՝ տեսանել զսուրբ անօրինական տեղիսն և առանձինն զերանելի Կոյսն: Արդ երբ Յովհաննէս աւարտեց իր ձեռակերտն՝ առաքելոց հետ խորհեցաւ որ ազաչէին զՏիրամայրն իւրեանց՝ որ այն փայտէղէն պատկերն իւր աստուածատիպ երեսաց վերայ դնելով օրհնէ, և բժշկուԹեան զօրուԹիւն շնորհէ այնոր. վասն զի այն տեղերն բորոտուԹեան ախտն ամեն տեղ եռայր՝ մանաւանդ Յերուսաղէմ: Ուստի Պաւղոս և Յովհաննէս բոլոր հոն եղեալ առաքելոց հետ գնացին աղաչելու զՏիրամայրն, և Պաւղոս առաջնորդ բանին ասէ ցամենօրհնեալ սուրբ Կոյսն. « Անարատ առագաստ Աստուծոյ Բանին՝ աղաչեմ զքեզ, ընկալ զփայտեղէն պատկերս զայս զնկարեալս 'ի Յովհաննէ 'ի սուրբ ձեռս քո, և օրհնեա զսա, և տուր զսա նշան կենաց աշխարհի, և աղաչեա զՈրդին քո և զԱստուած մեր՝ բառնալ 'ի ձեռն պատկերիս զբորուԹիւն յորդւոց 'ի մարդկանէ, որք ապաւինին 'ի քո բարեխօսուԹիւնդ»: — Պատասխանի ետ ամենօրհնեալ սուրբ Կոյսն և ասէ. « Դուք որ աշակերտք էք արարչին մերոյ Քրիստոսի՝ ձեզ առաւ իշխանուԹիւն հալածելոյ զդևս և բժշկելոյ զախտս և զհիւանդուԹիւնս.. ուստի աղաչեցէք զՏէր ձեր և զԱստուած, և լինիցի ձեզ: զի Թէ զերկինս փակել իշխանուԹիւն առէք յերկրի.. ոչ ինչ անհնարին

լինիցի ձեզ»: — Ասէ Պաւղոս. « Կոյս սուրբ և Մայր Աստուծոյ, մեք ծառայք անպիտանք եմք.. իսկ դուք սիրամայր գոլով մեր.. աղաչեմք զքեզ արա մեզ նշան զպատկերս զայս, որպէս և միածին որդին քո, որ զփայտ մահու իւրոյ անմահուԹեան գործարան ետ աշխարհի, և գանձ կենաց»: — Այն առեն ամենօրհնեալ սրբուհին նկարած պատկերն առնելով՝ ձեռն յերկինս բարձրացոյց և օրհնեց, և յետոյ իւր երեսաց վերայ դնելով՝ արցունքովն Թրջեց զայն. և լոյս ամպեղէն խաչանման կաԹեաց 'ի սուրբ պատկերն: Իսկ Պետրոս և Պաւղոս առնելով զայն 'ի ձեռաց սրբուհւոյն՝ ամենեքեան երկրպագեցին:... Եւ բոլորք որ էին 'ի քաղաքին՝ գային առաքեալն և օծանէին իւղով, և տեառնագրէին սուրբ պատկերաւն, և առժամայն բժշկէին յախտից.. մինչ զի և համբաւն ընդ ամենայն Հրեաստան ընԹանայր: — Ահա այս պատկերս էր զոր յետոյ առաքեալք շնորհեցին ԲարԹողիմէոսի՝ որ 'ի ննջման Կուսին ուշ հասնելով՝ էր կարացեալ վերջին անգամ տեսանել զնա. և նա բերելով զայն 'ի Հայաստան, կուսաստան և եկեղեցի մի կանգնեց յանուն Տիրամօր, և հոն դրաւ հրաշագործ պատկերն, և կոչեցաւ տեղին Հոգեց կամ Հոգեաց վանք՝ որ է անձկացեաց գաւառին մէջ, որ և մեծ ուխտատեղի եղև՝ շատ զարմանալի բժշկուԹիւններ լինելուն համար. զոր և յետ ժամանակաց Ս. Հայրն մեր լուսաւորիչ առաւել ևս պայծառացոյց սոյն տեղս, և Ս. Կոյսն եղև պաշտպան ազգիս:

Իսկ Աստուածամօր Յովհաննու աւետարանչի հետ Եփեսոս երԹալն և մանաւանդ հոն վախճանելն ընդունելի չէ, Թերևս և ոմանք զնոյն պաշտպանեն. որովհետև աւելի հաւանական երևի Թէ Յովհաննէս յամի տեառն 66ին Թողած է զՀրէաստան և գնացեալ Եփեսոս. իսկ արդ ստոյգ է որ նոյն Թուա-

կանին արդէն Աստուածամայրն երկրաւոր պանդխտութեան ժամանակն աւարտել էր և վերափոխել ի յերկինս: Վասն զի եթէ համարիմք զնա հնգետասան ամաց յղացեալ զբանն Աստուած, որպէս ընդհանուր կարծիք է, ուրեմն և մի տարուան եղած պիտի լինէր՝ Յովհաննու հետ Եփեսոս գնացած ատեն. ուր հաստատուն աւանդութիւնն համարի թէ Կայն ննջեաց ընդ մէջ 63 և 73 ամաց հասակին: Ապա ուրեմն սխալին նոքա որ զննջումն Տիրամօր Եփեսոս եղեալ համարին. և իրենց այս վրիպակ կարծիքը հաստատելու համար՝ ուրիշ ապացոյց չունին՝ բայց եթէ Նեստորի գէմ յամի 431ին գումարեալ Եփեսոսի ընդհանուր ժողովոյն առ վիճակաւորս Կոստանդնուպոլսոյ ուղղեալ թղթոյն մի կրճատ յօդուածն՝ որ նոյն քաղքին վերայ խօսելով ասէ ձիշդ այս բառերովս «յորում Յովհաննէս Աստուածածնական և Աստուածածնին Կոյսն սրբուհի Մարիամ». խօսից ճեացորդն բնագրին մէջ պակաս է, և իմաստն լըացընող բայ չգտուելուն՝ ոմանք համարեցան լըացընել զայն բայիւս ունեալ, և այլք իմանան բնակեցեալ. զոր չաւերն համարին պարզապէս թէ պակասած մասն լինելոյ է ուղիղ տուձադրս, որ աւելի հաւանական է. այսինքն թէ այս թերի խօսքս ոչ ցուցանէ ամենևին թէ Ս. Կայն և Յովհաննէս հոն բնակած են, այլ թէ երկոցուն անուամբ ալ եկեղեցիներ կային այն քաղքին մէջ մին նուիրեալ Տիրամօր ուր ժողովն գումարեցաւ, և միւսն նուիրեալ Աստուածաբան Յովհաննու աւետարանչի: Հակառակ այս մեկնութիւնս յայտնապէս մերժէ նաև Երուսաղէմի պատրիարքն Յոբնաղ որ նոյն ժողովոյն հայրապետներէն էր. վասն զի երբ դշխոյն Պուլքերիա՝ քոյր Թէոդոսի կրտսերոյ և կին Մարկիանոսի կայսեր, անգիտութեամբ խնդրեր ի նմանէ մասն ինչ ի նշխարաց Կուսոյն՝ պատասխան տայ նմա թէ դերեզման Կուսին

պատարկ կայ ի Գեթսեմանի, զի մարմին նորա վերափոխեալ է ի յերկինս. ուստի յղէ առ նա ի պատուական կտաւսն որ գտան ի գերեզմանի նորա: — Այս աներկբայ վկայութիւնս հաստատուն նաև յայն փաստաւորս եկեղեցւոյն՝ որ շինուած է ի ձորն Յովսափատ ի վերայ գերեզմանի Տիրամօրն, որ յառաջին դարէ ի վեր ուխտատեղի եղած է հաւատացելոց:

Այս պատճառներէս զատ՝ նաև անհաւատալի երևի մեզ թէ Ս. Կայն թողուր իր Աստուածորդւոյն անօրինական տեղւանքն՝ որ միակ մխիթարութիւն էին իրեն, և օտար երկիր երթար պանդխտէր՝ հեռի իր Միածնին յիշատակներէն: — Իսկ այն առաքուածն զոր առնեն ընդդիմախօսք թէ ինչու ուրեմն սուրբքն Եպիփան և Հերոնիմոս անօրինական տեղեաց վերայ խօսած ատեն՝ ոչ յիշատակեն սրբոյ Կուսին գերեզմանն, մանաւանդ թէ առաջինն տարակուսի ևս Մարիամու խնկապէս մեռած լինելուն վերայ, Բարնաբոսի հետ պատասխանեմք՝ որ երբ Տիտոսի ձեռաք Երուսաղէմ քաղաքն կործանեցաւ՝ Աստուածամօր գերեզմանն ալ մաս չէնքերու վրայ ակներևապէս ծածկուեցաւ. այնպէս որ հիմա ալ դեռևին երեսէն քառասունևվեց ասպիճան սուրբերկրեայ սանդուխով վար իջնելու է գերեզմանին հասնելու համար: Ուստի չատ գարեր ծածկուած մնալէն յետոյ՝ և գարուն մէջ երբ հոն գիզուած աւերակներն ի բաց առին՝ այն սուրբ տեղն ալ յայտնուեցաւ՝ երբ վերոյգրեալ սուրբ հարք արդէն վախճանեալ էին: — Վերջապէս նոյն իսկ հրեայք որ քրիստոնէական աւանդութեանց այնչափ հակառակ և աւերող են՝ իրենց Թալմուտին մէջ խոստովանին թէ առաջին դարու քրիստոնեայք աղօթարան մի շինած էին Յիսուսի մօր գերեզմանին վերայ՝ Երուսաղէմի կործանմանէն յառաջ, և հոն կանթեղներ վառելով պաշտած կատարէին, զոր ժողովարանն ար-

գիլել ուզելով՝ հաւատացեալներէն չատ մարդ ջար-
գեց [12]։

Այսպէս հաստատելէն ետև՝ թէ երանեալ Կայն
միշտ ներուսաղէմ բնակած է՝ հիմա տեսնենք թէ
ինչպէս անցուց իւր վերջին տարիներն երկրիս վե-
րայ։ Մարիամ զայն մայրութիւնն ըղը ընկալաւ առ
ոտս խաչին վան ամենայն հաւատացելոց, ոչ եր-
բեք մոռացաւ. այլ ամենայն խնամոք՝ ի գործ դրաւ
բոլոր այն տարիներուն մէջ որչափ որ միայց երկրիս
վերայ. ինչպէս նաև հիմա ալ չարունակէ անդադար
յերկինս յօգուտ և յօժանդակութիւն հաւատացե-
լոց։ Ուսոն տարակոյս չկայ որ յաճախ առաքելոց և
հաւատացելոց հետ էր, և իրենց հետ խօսէր իւր
Մխածին որգւոյն վերայ. և թէպէտ աւետարանիչք
և նախկին մատենագիրք բան մի ոչ յիշատակեն իր
կենաց նկատմամբ՝ սակայն դիւրին է գուշակել զայն.
ինքն ինչպէս յառաջ նոյնպէս և այժմ ներանձնա-
կան և միանգամայն գործունեայ կեանք մի ան-
ցուց. սակայ յայց ելանէր այն սուրբ տեղեաց որ
Աստուածորդւոյն կեանքն և մահն իրեն յիշեցընէին.
և թէ աշխատելու և թէ սակաւ ինչ կերակրուվ և
հանգստեամբ գադարած ժամանակն ալ միշտ նորա
կրածներն մտածէր՝ որ իր սրտին մէջ անջնջելի տպա-
ւորած էին, և՝ ի հրեից կրած նեղութիւններն ալ միշտ
նորոգէին ընոսա. վան ղի ինչպէս գիտեմք յաւան-
դութեանց՝ զորս յիշէ և Խորենացի «Բազում չար-
չարանս կրեաց՝ ի Կայիափայ, և հալածանս՝ ի Հրէից.
ղի ոչ տային նմա գնալ՝ ի գերեզմանն կալ յաղօթս,
կամ՝ ի Գեթսեմանի յայտնապէս կամ յայլ տեղիս
անօրինականս փրկչին, բայց միայն գաղտնի։ Եւ հա-
լածեալ զեղբայր Տեառն զՅակոբ, երթեալ հուր
հարին՝ ի տունն՝ յորում կայր Սրբուհին. և ջրջա-
պատեալ հուրն զնեցայն՝ կիզեաց արս եօթն, զկա-
յիափա և զՅննա և զԱկէն քահանայապետս, ոչ ինչ

վնասեալ տանն։ Եւ յաւուր հանքարձման Տեառն՝ ի
լերանն ձիթենեաց՝ յախուռն քարամբք հասեալ
հրեայքն՝ ի վերայ Սրբուհւոյն՝ սատակեցին յին-
քեանց արս յիսուն քարավրէժս»։

Ըստ աւանդելոյ այլոց երանեալ Կուսին հետ էին
միշտ քանի մի բարեպաշտոն կանայք և կուսանք՝ որոց
պարագլուխ էր Մագդաղինէ անբաժան ընկեր Տի-
մոթէոսի՝ որ զինքն բոլորովին իրեն սպասաւորու-
թեան նուիրած էր. որոց հետ երկնային բաներու
վերայ խօսելով Կոյն՝ ոչ միայն մխիթարէր զնոսա՝
այլ և առաքինական կենաց վարժեցընէր հոգևոր
խրատներով և ընթերցմամբ սուրբ գրոց։ Շատ ան-
գամ ալ մնոքն յափշտակեալ յաղօթս՝ հոգւոյնն վե-
րանայր յերկինս՝ իւր Որգւոյն տեսութեան կարօտն
առնելով. սակայն այս կարօտս ոչ նեղէր զնա, այլ
քաղցրութեամբ սպասէր աւետաբեր հրաւիրանաց,
և ժամանակն անցուցանէր՝ ի քաջալերութիւն
առաքելոց և աշակերտաց և այլ հաւատացելոց, որք
նեղութիւն մի ունեցածնուն պէս՝ հեռի տեղերէ ևս
առ նա դիմէին իբրև՝ ի դանձարան մխիթարութեան։
Եւ նոյն իսկ զինքն չձանչցողներն և իր աստուածա-
մայրութեան գերագոյն փառքն չգիտցողներն՝ զինքն
տեսնելով և անոյշ ձայնն լսելով՝ այնպիսի քաղցրու-
թիւն մի զգային որ զերեզք յափշտակէր։ Եւ այս
ասացածս մեր առ նա ունեցած սիրոյն և յարգանաց
առաւելութեան կեղծիք չեն. վասն զի եթէ այլ
ապացոյց ալ չունենաք՝ բաւական էր Դիոնեսիոսի
արիոսպագացւոյ վկայութիւնն՝ որ Յովհաննու ծայ-
րէն եղև և եկաւ միայն զինքն տեսնելու համար, ձամ-
բուն երկայնութիւնն և դժուարութիւնն բանի տեղ
չդնելով և որչափ որ իր խնամատարէր մտաց մէջ մեծ
գաղափար ունէր Տիրամօր վսեմութեան և գեղեց-
կութեան վերայ, սակայն ինքն անձամբ վկայէ առ
Տիմոթէոս գրած թղթոյն մէջ՝ որ երբ Յովհաննէս

քաց օգտակար լինելու իղձն այնչափ էր՝ որ ինքն էր յուշարար առաքելոց, զօրացուցիչ մարտիրոսաց, ջինջ և մաքուր հայելի կուսանաց, խրատիչ այրեաց և արամբեաց, յորդորիչ մելորելոց, մխիթար վշտացելոց և պաշտպան աղքատաց և ակարաց: Զամենեսին քաղցրութեամբ ընդունէր, ամենեցուն փրկարար խորհուրդներ տայր, և եռանդուն բորբոքեալ խօսքով յորդորէր յառաքինութիւն. այնպէս որ իրեն քան զիւր որդին աւելի երկայն տալրին՝ ոչ միայն օգտակար եղև նորածին եկեղեցւոյ, այլ և յոյժ հարկաւոր. մանաւանդ երբ տակաւ մի յետոյ յանկարծ սաստիկ հալածանք մի եղաւ Երուսաղէմի մէջ և գրեթէ ընդդէմ հաւատացելոց՝ սրբոյն Ստեփանոսի քարկոծութենէն ետև: Հալածչաց գլուխն կեցած էր Սաւուղ նախանձայոյզ և կատաղի երիտասարդն՝ որ բռնի քրիստոնէից տներն մտնելով՝ քարշէր զարս և զկնայս և մատնէր ի բանտ. որով եկեղեցին մեծ նեղութեան մէջ անկանելով՝ շատերն թողին զտունս և զստացուածս իւրեանց և փախեան ի զանազան կողմանս Հրէաստանի և ի Սամարիա, որ և աւետարանի տարածութեանն մեծ պատճառ եղև: Իսկ առաքեալք այն դառն հալածանաց ժամանակ ալ Երուսաղէմ մնացին, Քրիստոսի անուանն համար տանջանք և մահ աչք առնելով, որոց հետ էր նաև Տիրամայրն՝ որ իր բորբոքեալ սիրովն յոյժ տրամէր հաւատացելոց կրած նեղութեանց վերայ, և վախէր որ մի գուցէ ոմանք այն ծանր փորձանաց չդիմանալով թուլան ի հաւատոց. միանգամայն իր աղերսն հրեից վերայ ալ սուգ առնոյր՝ տեսնելով որ իր Որդւոյն այնչափ խրատներովն և յորդորներովն ալ, և այնչափ յայտնի և լուսաւոր ապացոյցերու գէմ, և այնքան բարիք տեսնելէն ետև ալ՝ գէտ իրենց չարութեան մէջ յամառէին, և Աստուծոյ բարկութիւնն իրենց վերայ գրգռէին: Անշուշտ հալածչաց

գինքն Աստուածամօր առջև հանէց՝ այնպիսի պայծառ լուսով զինա շրջապատած տեսաւ և այնչափ անուշահոտութիւն զգաց՝ որ աչքն խտղելով և ի հիացմանէն ինքն յիրմէ գուրս եղնելով՝ երեսս ի վայր գետինն անկաւ և ասաց. «Ո՛վ ամենասուրբ Կոյս՝ եթէ ես չհաւատայի քու որգւոյդ՝ իբրև աստուածութեան պիտի պաշտէի զքեզ[15]»: Սակայն միայն Դիոնեսիոս չէր որ հեռի տեղէ եկն զԱստուածամայրն տեսնելու. Լուկիոս Դեքատեր վկայէ [14] որ շատերն մինչև ի Սպանիոյ գային Երուսաղէմ իրենց աչօք զեռանեալ Կոյսն տեսնելու համար. ապա որչափ աւաւելը նոքա որ Պաղեստինու մէջ էին և լսէին միշտ Տիրամօր գովեստներն, իւր հրաշալի գեղեցկութիւնն, աղնիւ և բարեգութ սիրան. որ և իրենց երկիրն գառնալով հռչակէին զնոսա իրենց հայրենակցաց մէջ, և նոցա սիրան ալ վառէին երթալու տեսնելու այս հրաշագեղ Կոյսս՝ որ ամենեցուն սիրան յափշտակէր, և միայն նայուածքն բաւական էր սուրբ սիրով լիրենք լեցընելու:

Թէպէտ յիշատակութիւն մի ոչ գտանեմք Տիրամօր կենդանութեան տեն գործած հրաշից վերայ, սակայն ով կարէ տարակուսիլ այս բանիս. ինքն որ լի էր գթութեամբ և ողորմութեամբ մարդուս ամեն կարօտութեանց և խեղճութեանց վերայ: Մխիթ հրաշագործութիւնն ալ Հոգւոյն սրբոյ պարգևներէն չէ զորս աստուածաբանք ձրի շնորհագա անուանեն. և ինքն ալ առաքելոց հետ ընդունած չէր այն պարգևաց առատութիւնն, և պէտք չունէր նոցա ձեռնտուութեանն՝ առ ինքն դիմողներու հաւատքն հաստատելու համար. ուստի յոյժ հաւանական է որ շատ հրաշս ալ գործած է՝ խոնարհութեան քողով ծածկելով զնոսա, որպէս առնէր երբեմն իւր Միածին որդին:

Իսկ իր գործունեայ կեանքն կամ թէ մերձաւո-

գլուխ կեցոլին Սաւուղայ գարձն ալ միայն Ս. Ստեփանոսի աղօթից արդիւնքն չէր, այլ և Մարեմայ ամենագութ սրտին արտասուագին պաղատանաց և եռանդուն բարեխօսութեան պտուղն, որով այն մեղկին հալածիչն գարձաւ եղև Առաքեալ հեթանոսաց և անօթ ընտրութեան. որ և այնուհետև այնչափ առաւել եռանդեամբ սկսաւ քարոզել և աշխատիլ ի պաշտպանութիւն հաւատոց Յիսուսի Քրիստոսի՝ որչափ որ յառաջ կատաղութեամբ զայն ջնջելու աշխատէր: Այս հրաշալի գարձս Նախավկային մահուանէն հնգետասան ամիս յետոյ հանդիպած երևի ըստ Բարոնիոսի, կամ Քրիստոսի համբարձմանէն երկու տարի եաև:

Երբ Ագրիպպաս Հերովդեսի յարուցած երկրորդ հալածանաց փոթորիկն ալ գադրեցաւ՝ այլ առաքելոց ժամանակն եկել հասել էր իրենց պաշտօնն կատարելու, և աւետարանի լոյն աշխարհիս ամեն դին սփռելու: Անտարակոյս յիրերաց զատուելէն յառաջ ամենքն կուսամօր բոլորն Հոգվեցան, և իրմէ լոյս և խորհուրդ հարցընելով՝ յանձնեցին զիրենք նոքա աղօթիցն և բարեխօսութեան. դիւրաւ կարեմք գուշակել նաև թէ Տիրամայրն ալ ինչ զգացմամբ լցաւ՝ այս սիրելի և հաւատարիմ գնդէս բաժնուելու ժամանակ, օրհնելով զնոսա և քաջալերելով և Աստուածորդւոյն պատուէրներն յիշեցընելով: — Իսկ թէ արդեօք Յակոբոս աւետարանիչ ալ միւս առաքելոց պէս՝ հեռացաւ թէ մնաց Երուսաղէմ Տիրամօրն քովն՝ վերն ասացածներէս աւելի որոշ բան մի չենք կարող յաւելուլ, բայց եթէ ծանուցանել որ երկու կարծիքն ալ պաշտպանողներ եղած են. և այս խնդիրս որոշելու համար՝ նախ հարկաւոր է հաստատել թէ ե՞րբ եղև առաքելոց ի Հրեաստանէ ելնելն ի քարոզել զաւետարանն [15]: Եթէ նոցա կարծիքն ընդունիմք որ Քրիստոսի յարութենէն

տասուերկու տարի յետոյ եղած համարին այս բանս, յորում ժամանակի ոմանք դնեն նաև Տիրամօր ննջումն, այն ատեն գրեթէ ստուգապէս կարեմք հաստատել թէ սիրելի աշակերտն՝ գրեթէ ոչ բնաւ Թողած է զԿոյն՝ այլ միշտ բնակած է Երուսաղէմ: Ուստի հիմա ինայ մեզ այս խնդիրս լուսաբանել թէ արդեօք քանի տարուան էր Կոյն վախճանած և ի յերկինս վերափոխած ժամանակ, որով և ննջման Թուականն ալ ճշդեսի:

Արդ երանուհի Կոյն հրաշալի յարատևութեամբ հանելով առաքինութեանց գերագոյն կատարն՝ զոր մարդուս միտքն չէ կարող ըմբռնել, հարկ էր որ անցանէր յաքսորանաց ի հայրենիս, ի վերջաց յորբանութիւն, յանարգանաց ի փառս, և վերջապէս յերկրէ ի յերկինս: Անտարակոյս կուսամայրն յառաջագոյն իմացաւ՝ ոչ միայն աւելի եռանդուն փափաքէն՝ որ իւր սիրտն բորբոքէր, որով կենաց իւրաքանչիւր վայրկեանն ալ հազարապատիկ գարեր թուէին իրեն, այլ նաև ըստ բազմաց մանաւանդ յայտնութեամբ հրեշտակապետին Գաբրիելի որ այս երկրորդ աւետիսս ալ բերաւ իրեն՝ լուծանելու ի մտայ ի կապանաց մարմնոյն և աղատ թռչելու առ ցանկալին իւր: Վաստակաբեկ և յոգնած ուշևոր մի՝ որ վտանգալից ճանապարհորդութեան ծայրն հասանէ, վչտահար նաւորդ մի՝ որ մրրկալից ծովեր կարելով ցանկալի նաւահանգստին մօտենայ, վաստիժ և ակար կանանաւոր մի որ չատ տարիներ մնութ բանակ մէջ մնալէն յետոյ՝ վերջապէս իմանայ իր չղթայից քակուիլն և ազատութեան դռներուն բացուիլն, տակաւ և անզոր օրինակներ են այն խնդութեան՝ զոր զգայ Մարիամ՝ երբ իմացաւ թէ սակաւ ատենէն իր պանդխտութիւնն պիտի աւարտէր և հասանէր իւր ցանկացեալ վախճանին: Նորահրաշ ուրախութիւն մի փայլեցաւ իւր կուսական ամօթխած երեսաց վերայ,

հրեշտակային ժպիտ մի ծաւալէցաւ իր անուշիկ
ընթանց վերայ. այնպէս որ իր սրտին ցնծութիւնն
իր դիմաց վերայ նկարած երևէր, և ուրախ զուարթ
այն աւուր սպասէր: Բայց իւր կենաց այս վերջին
արարուածս պատմելէն յառաջ՝ ամենուս բնական
հետաքրքրութիւն մի գայ դիտել թէ արդեօք քանի՞
տարուան էր Կայան նոյն պահէն: Անշուշտ եթէ մեր
սրտին և սիրոյն զգացմանն հարցանեմք՝ սրբոյն Եպի-
փանու [16] և Թէոդիս սրբոյն Նարեկացւոյ [17] ալ կար-
ծիքն նախամեծար պիտի համարիմք, որք երկմտին
Աստուածամօր մահուան վերայ, ազատ համարելով
զինքն այն հանրական դատաւկնքոյն՝ որ՝ի մահ գա-
տապարտեաց զամենայն մարդ հողածին. և թէպէտ
մարդուս կենաց պայմանն Քրիստոսի արդեամբ բա-
ղորովին փոխուեցաւ՝ սակայն այն վճիռն ոչ ջնջե-
ցաւ, և զոր կամաւոր զոհի պէս ամենքս ալ պարտա-
կան եմք մատուցանելու առ Աստուած՝ որ տուողն
է կենաց և կենդանութեան: Ուստի բաւական պատ-
ճառ չէ Կուսամօր անմահ մնալն ցուցանելու համար՝
բարեպաշտ դիմախօսից ասելն թէ որովհետև Մա-
րիամ ազատ էր՝ի սկզբնական մեղաց և յանիծից
նախահօրն, ապա և ոչ ներքոյ անկեալ այն մեղաց
պատժոյն որ է մահն: Վասն զի այս առարկութիւնս
նախ կարեմք լուսաբանել սուրբ վարդապետաց մա-
նաւանդ սրբոյն Աւգոստինոսի խօսքովն որ ուսուցանէ
թէ նոյն ինքն Յիսուս Քրիստոս միայն մեղաւորի կեր-
պարանք առնլոյն համար՝ կամեցաւ՝ի մանկութենէ
իւրմէ մարդկային բնութեան ամեն թշուառութիւն-
ներն կրել, որպէս նաև զլաբտացումն և զչիփոխ-
մունս հասակին, այնպէս որ եթէ յերիտասարդա-
կան հասակին մեզ համար իւր սուրբ արիւնն չթա-
փէր խաչին վերայ՝ հաւանական էր որ ծերանալով
մեռնէր: Գեղեցիկ է նաև կիւրղի երուսաղեմացւոյ
խորհրդածութիւնն՝ զոր այսպէս պարզաբանէ Զամ-

չեան Միքայէլ վարդապետ. « Նախ մահ սրբոյ Կու-
սին ոչ էր յանիծից Ադամայ կամ՝ի մեղանաց նորա,
այլ՝ի հանգամանաց մարդկային բնութեան, որ բա-
զադրեալ գոլով՝ի տարերաց՝ ըստ ինքեան է մահկա-
նացու: Ուստի նաև առաջին մարդն ըստ ինքեան ա-
ռեալ՝ նաև ըստ շնորհաց, ոչ էր անմահ, այլ ըստ
բնութեան իւրում՝ մահկանացու. իսկ անմահու-
թիւնն զոր ունէր՝ էր՝ի մանաւանդ զօրութենէ
սկզբնական արդարութեան, որում նպաստէր նաև
իբրև զօրացուցիչ բնութեան՝ պատուղն ծառոյն կե-
նաց: Ըստ այսմ և սուրբ Կայան ունելով զբնութիւն
մարդկային բազադրեալ՝ի տարերաց՝ ըստ այսմ էր
մահկանացու, և ոչ եթէ սակս ենթարկեալ լինելոյ
մեղացն Ադամայ [18] »: Կարեմք յաւելուլ նաև որ
Կուսին մեռանելն՝ ոչ էր ըստ հարկի, այլ ըստ պատ-
շաճի, իբրև պատճառաց համար. նախ առ՝ի նմանել
որդւոյն իւրոյ՝ որ անպարտական իսկ լինելով մահու՝
սակայն մեռաւ իսկապէս. երկրորդ առ՝ի արդիւնա-
ւորել չարչարանաց և մահուամբ՝ զոր իբրև Մայր
Աստուծոյ արդէն ունէր զիրաւունս ժառանգելոյ՝
որպէս և Քրիստոս, որ նոյն իսկ իւր անձին համար
ասաց. « Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի
և մտանել՝ի փառս իւր »: ուստի և Տիրամայրն
յօժարութեամբ յանձն առ ոչ միայն չարչարել ընդ
Միածնին, այլ և մեռանել ընդ նմա. երրորդ պատ-
ճառն մեռանելոյ սրբուհւոյն էր առ՝ի զօրացուցա-
նել զմեզ ընդդէմ մահու՝ որ բնականաբար երկիւ-
ղալի է մեզ, և թէպէտ գիտեմք որ Քրիստոս այս
երկիւղս արհամարհեց, սակայն կարէաք ասել թէ
իրեն համար գիւրին բան մի էր՝ որովհետև ինքն է
տէր կենաց և մահու, և կարէ զանձն իւր դնել և
միւսանգամ առնուլ զայն. իսկ երբ տեսանեմք որ
երանեալ Կայան ալ ընդ յօժարակամ յանձն առ-
նու՝ նորա օրինակին աւելի յորդորիմք և խրախուս
սիմք այս զոհս կամակար նուիրելու Աստուծոյ:

Արդ այս ապացոյցերովս կարծեմ բաւական հաստատել Թէ Տիրամայրն ալ յիրաւի և անսասրակոյս մարդկային բնութեան այս անհրաժեշտ պարտքս հատոյց Աստուծոյ, և մեռաւ իսկապէս՝ որպէս հաստատուն կարծիք է եկեղեցւոյ. նախ հոգին բաժանելով 'ի մարմնոյն՝ անմիջապէս հաստատ երանական տեսութեան Աստուծոյ, իսկ մարմինն եգաւ 'ի գերեզմանի, և անապական մնալով՝ յետ երից աւուրց դարձեալ միացաւ ընդ հոգւոյն, և հոգւով և մարմնով վերափոխեցաւ 'ի յերկինս: Որով և այս ծանուալ կրկին նշանակութիւն ունի. առաջինն մահ Կուսին՝ որ ըստ հարց յունաց մեր մէջ ալ Հանգիստ կամ Ննջումն ասի. իսկ երկրորդն հոգւով և մարմնով փոխադրութիւնն 'ի յերկինս:

Գալով Աստուածամոր հատակին և թուականին յորում մեռաւ՝ զանազան կարծիք եղած են՝ իրարմէ այլ և այլ աստիճան հաւանականութեամբ, այսինքն ոմանք համարեցան Թէ Աստուածամայրն իւր Միածնին համբառնալէն ետև տարի մի և քանի մի աւիս միայն ապրեցաւ. իսկ այլք Թէ մինչև առաքելոց քարոզութեան համար ցրուելու ատենն՝ կամ Թէ ասել տասուերկու տարի յետ համբարձմանն Քրիստոսի. որոց հետ համաձայնի Հիպոլիտոս Թեբացի (յիշատակեալ Եպիփանէ երիցուէ եկեղեցւոյն Կոստանդնուպօլսոյ). Թէ և ինքն Եպիփան համարի զկնոյն կեցեալ ամ եօթանասուն և երկու: — Եւսեբիոս և Խորենացի համարին Թէ ապրած է տասնուչորս կամ տասուերկու տարի յետ համբարձման. որոց հետևին նաև Զամչեան և Աւգերեան վարդապետք սակաւ զանազանութեամբ, որ և Պաւղոսի առաքելոց առաջնագոյն գրածն Թէ «Յետ այմոց չորեքտասանից ամսանգամ եղի Երուսաղէմ... ըստ յայտնութեանն՝» Կուսին վերափոխման տարեն առաքելոց հաւաքելոյն համար ասացեալ ենթադրեն՝

զկնի չորեքտասան ամաց համբարձման Տեառն և գարձին Պաւղոսի. բայց Աբեղեան Գաբրիել Վ. ոչ յիշատակէ այս դէպքս 'ի մեկնութեան Թղթոց առաքելոյն: — Եւոդիոս յիշատակեալ 'ի Նիկեփորոսէ (որ այլ է կարծեմ Եւոդիոսէ յաջորդէ առաքելապետին յաթոռն Անտիոքայ) համարի Թէ քառասնդակ կեանք Կուսին եղած է յիսունևվեցն տարի որ է ասել գրեթէ տասուերկու տարի յետ համբարձման: — Եթէ ստոյգ և հարազատ են Դիոնեսիոսի արիոսպագացւոյն անուամբ Թղթերն, և իբ Ներկայ գտանիլն Ննջման Տիրամօրն՝ պէտք է որ գոնէ տասնևհինգ տարի ապրած լինի յետ համբարձման Քրիստոսի, զոր այլք աւելի ևս դնեն: — Կեդրենոս, Սուարիդ, Բարոնիոս համարին զնա կեցեալ քսանևչորս տարի յետ համբարձման՝ և ննջեալ 'ի հասակի եօթանասուն ամաց վճարելոց: — Բենեդիկտոս ԺԴ քահանայապետ յետ բազում քննութեանց նախընթաց կարծեաց՝ համարի զնա կեցեալ քառասնդակ եօթանասունևերկու տարի: — Անդրեաս կրետացի համարի զնա վախճանեալ 'ի զառամեալ հասակի, և ոմանք ասն նմա մինչև ամս ութսունևերկու: — Արուեստ ձշգրտելոյ զրուցախաւսս ասացեալ անուանի գրոց հրատարակիչք համարին զնա կեցեալ եօթեւտասան տարի յետ համբարձման: — Իսկ նոր աւետարս Տիրամօր վարքն գրողքն ալ իրարմէ զանազանին, բայց ընդհանրապէս կարծեն Թէ տասնևհինգ կամ տասնևութ տարի ապրած է յետ համբարձման[19]: Այս զանազան կարծեաց տարբերութենէ երևի Թէ ամենէն աւելի երկարակեաց համարողքն ենթադրեն 63 էն մինչև 73 տարի Կուսամօր կեանքն, սակայն այսչափ զառամեալ հասակին մէջ ալ՝ ամենքն միաձայնեն ընդ Դիոնեսիոսի՝ Թէ հոգւական գեղեցկութիւնն կորուսած չէր, մանաւանդ Թէ ջրչափ մահն մօտենար՝ այնչափ աւելի

աստուածահրաշ պայծառութիւն և քաղցրութիւն մի փայլէր իր վերայ, և զամենեսին 'ի սէր և յարգութիւն յորդորէր, և այլ աւելի իր կերպարանաց գծագրութեամբն՝ որ շատ նմանութիւն ունէր Քրիս տոսի Տեառն մերոյ:

Մինչև հիմա գրածներէս տեսանեմք թէ Հոգւոյն սրբոյ գալստենէն ետև՝ յորում վերջին անգամ յիշատակի Մարեմայ անուն, առաքեալք և աւետարանիչք քարոզութեանց ղբաղեալք՝ բան մի գրած չեն Աստուածամօր վարուց վերայ. և թէպէտ կայ յիշատակութիւն և յայտին մերում (Յայտնութիւնք օգոստ. ԺԲ) թէ Յովհաննէս սիրելի աշակերտն գրած էր ղպատմութիւն ննջման և վերափոխման Կուսին, զոր և յետոյ Ս. Հերոնիմոս ալ թարգմանեց, սակայն և այս անհարազատ գրոց կարգն համարի: — Նոյնպէս նաև որոշ ոչ գիտեմք թէ առաջին դարուց մէջ առաքելական հարք գրած էին թէ չէ այս նիւթոյս վերայ. վասն զի նոյն իսկ Վիրենէոսի արիոսպագացոյ առ Տիմոթէոս և Տիտոս գրած թղթոց հարազատութիւնն երկբայական և խնդրոյ նէրքև է առ քննաբանս, որք առաջին գրաւոր արձանագիրք համարին այս նիւթոյս, և ուստի առած է նաև Նորեն նայի իր ծանօթութիւններն առ Սահակ արծրունի գրած թղթոյն մէջ, զոր բազում անգամ յիշեցաք 'ի կարգ պատմութեանս: Իսկ այլ մատենագիրք որք Կուսամօր վարուց վերայ գրեցին՝ յետոյ են ժամանակաւ քան զՆորենացի, բայց 'ի Յօթնաղէ պատրիարքէ Երուսաղէմի որ ժամանակակից կարէ համարուիլ. այսպիսի են Դրիգոր տուրոնեցի, Զգարուն մէջ, Մոգեստոս պատրիարք Երուսաղէմի, Անգրէաս կրետացի և Իգելիոնոս տոլեդացի ի դարուն. Գերմանոս պատրիարք Կոստանդնուպոլսոյ, Յովհաննէս գամասկացի և Փոտ Ը դարուն մէջ և այլն: — Բայց այսու ոչ կամիմք ասել թէ վերոյիշեալ մատենագրաց

պատմածներն անհիմն են, կամ կասկածաւոր գրուածոց հետևութեամբ շինուած, և կամ ևս առաւել 'ի սուտանուն Մելիտոսի գտատպարտեալ գրուածքէն քաղուած, որ երևի թէ երկրորդ դարուն մէջ 'ի հրեամիտ թշնամեաց քրիստոնէութեան շարադրեալ պատմութիւն մի է սակս մահուան և յարութեան Մարեմայ, և Մելիտոս սարդիացոյ եպիսկոպոսին անուամբն քողարկած, որ քրիստոնէից ձեմարիտ աւանդութեանց վերայ՝ շատ մի առասպելներ կարկատած է: Այլ մեզ հաւանական երևի որ թէ և առաջին հարք գրով բան մի թողած չեն Կուսամօր կենաց և ննջման վերայ, սակայն շատ բնական է որ նմա վերաբերեալ անցք և գեպք բերնէ բերան աւանդութեամբ տարածուած էին Պաղեստինու հաւատացելոց մէջ՝ յառաջ քան զաւանդեալն 'ի սուտանուն Մելիտոսէ, զորս թշնամիք նորանոր յաբեղուածներով այլանդակած էին. վասն զի սուտութիւնն ալ ձշմարտութեան կեղծ պատկերն է, ինչպես սուտ սաւան արգոյ գրամին նմանցընելու ջանքէն յառաջ գայ: Սակայն բարեպաշտ անձինք նախկին աւանդութիւններն սուտգեղով 'ի գիր անցուցին 'ի յիշատակ ապագայից, ուստի և մեք այս աւանդութեանց և գրուածոց վերայ հիմնեալ՝ Տիրամօր ննջումն և վերափոխումն. թէպէտ և վերջին տարիներս եղեն նաև ոմանք որ համարեցան թէ Աստուածամայրն առանց բնական մահուան՝ 'ի կենդանութեան իւրում փոխեցաւ 'ի յերկինս:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ՅԼ. ԳԼՈՒԽ

1 Պատմաժ գիրք Ջ. ԳԼ. ԻԹ և ԻԸ։

2 Յայտնի է որ իւղաբեր կանանց միտքն աւելի պատիւ մի տալ էր Քրիստոսի մարմնոյն՝ զոր արդէն Յովսէփ և Նիկոդիմոս զմռսեալ և պատեալ էին սուրբ կտաւով։

3 Ա. Այն պատճառաւս է որ աւետարանիչք բաց ՚ի Յովհաննէ՝ խաչին մօտ եղած կանայքն յանուանէ ևս յիշած ժամանակ՝ Աստուածամօր անունն լռեն. որովհետև շատ յայտնի բան էր և ծանօթ ամենեցուն։

4 Ա. Ամբրոսիոս ՚ի Գ. գարու ասէ Թէ յառաջ քան զայլս սուրբ Կոյսն Եռես զՔրիստոս յարուցեալ ՚ի մեռելոց և միխթարեցաւ։ Սեդուլիոս անուամբ ժամանակակից քրիստոնեայ քերթող մի ալ նոյն աւանդութիւնը յիշէ ՚ի տաղս իւր, ասելով Թէ բոլոր քրիստոնեայք այնպէս հաւատան։ Իսկ աւետարանչաց՝ աստուածամօր երևելուն համար լռելն՝ ասի յառաջ գայ՝ որ շատ յայտնի բան սեպած են, և յիշատակութիւնն աւելորդ։

5 Ա. Ղերսէս լամբրոնացի ՚ի Ճառն Համբարձման։

6 Նոյնն գոհանումբ ասացեալ ՚ի Շնորհալւոյն ՚ի գանձն վերափոխման, և Աբևել ք վերարվին ղարականին մէջ. սովին մտօք խօսվին և այլ հին հարք։

7 Կարդա Լամբր. Համբարձման Ճառն որ Ռափայելի պլալկերպութեան պատկերին նման նկարագրութիւն մի է։

8 Ալոնի վերնատան վերայ գաղափար մի ունենալու համար՝ պէտք է գիտել որ Հրեայք սովորաբար իրենց տան վերի յարկն աւելի ընդարձակ գտնիկոն կամ սրահ մի ունէին՝ ուր կատարէին իրենց ընտանեկան հանդէսներն, և հոն ուտէին զատկական գառն։ Ըստ աւանդութեան այն վերնատունն ուր հաստատեց Քրիստոս ամենասուրբ հաղորդութեան խորհուրդն Յովհաննու Մարկոսի տան պատկաներ որ քեռորդի էր Բառնաբայ և աշակերտ Պաւղոսի. այս տեղս յետոյ Աստուածամօր և առաքելոց ժողովարան մի ձևացաւ, և ետքը նոյն գեհոյնն վերայ փառաւոր եկեղեցի մի շինուեցաւ՝ զոր Մահմետականք գրաւեցին իբրև Դաւթի գերեզմանին տեղն։ (Տես ՚ի Վանտելդրուկ Հա. Ա., էջ 236)։

9 Աւետարան Ըստ Ղուկասու ԳԼ. Ա., 2։ Առաքեալք շատ բան ուսան ՚ի Տիրամօրէն Յիսուսի Քրիստոսի մանկութեան և առանձնական կենաց վերայ. իսկ ինչ որ իր հրապարակեալ կենաց և հաւատոյ խորհրդոց վերաբերեր ուսան զայնս իւր կենակցութեան մէջ և ՚ի նոյն ինքն յաստուածային վարդապետէն և ՚ի Հոգւոյն սրբոյ։

10 Քննաբանից մէջ մեծ վիճաբանութեան նիւթ եղած է՝ Թէ արդեօք յիրաւի սրբոյն Ղուկասու նկարածներն են այն Աստուածամօր պատկերներն՝ որ իր անուամբ յիշատակին. վասն զի Նոր կտակարանին մէջ (Թուղթ առ Կողոսացիս) բժիշկ կոչէ. բայց նկարիչ ալ լինել ոչ յիշատակի. իբր նկարուց վերայ առաջի խօսողն եղած է Թէոդորոս ընթերցող վեցերորդ դարու մէջ՝ որ գրէ Թէ Եւդոքսիա Յերուսաղէմ ղրկեց առ Պուլքերիա զպատկեր Կուսին Մարիամու զնկարածն ՚ի Ղուկայ աւետարանչէ, որ եղաւ ՚ի նորաշէն եկեղեցին Կոստանդնուպօլսոյ ընդ պատկերի Յիսուսի Քրիստոսի։ Քննաբանք շատ հմուտ գրուածներ հրատարակած են երկու հակառակ կողմանց, որոց վերայ երկայն լինի խօսել. միայն գիտելու է որ սրբոյն Ղուկայ համարեալ Տիրամօր պատկերներն ամենքն ալ հաւասար վաւերականութիւն չունին։

11 Տես ՚ի մատենագրութիւնս Մ. Խորենացւոյ, Թուղթ առ Սահակ իշխան արծրունի։

12 Տես ՚ի վանտելդրուկ Աթոքֆրո-Ռիւֆ Պալեոպիոս տպագրեալ ՚ի 1885 Հա. Ա., 242։

13 Թէպէտ ոմանք անհարազատ համարին Դիոնեսիոսի արիոսպագացւոյ գրուածներն կամ յօտարաց ձեռք խառնուած, սակայն և այնպէս միշտ իբրև հնագիր աւանդութիւն իր յարգն ունի ո՛ր լինի գրողն։

14 Ղուկիոս Դեքսեր ՚ի ժամանակագիրսն առ Տեառն 37։

15 Դիւրին բան չէ ճշդիւ սահմանել Թէ արդեօք առաքեալք հաւատոյ հանգանակն այսինքն չարադրելէն ետև ո՛ր տարին իրարմէ բաժնուեցան երթալու ՚ի զանազան կողմանս աշխարհի։ Ոմանք ասեն Թէ երբ Ս. Պետրոս գնաց հաստատելու գաթոռ իւր Անտիոք, Յակոբոս Ջերեդեայ մեկնեցաւ ՚ի Սպանիա. յայս կարծիս են Ալափիոէ և Սիւլպիրս։ Թիրինոս համարի Թէ այս բանս եղած է փրկչին համբարձմանէն տասուերկու տարի յետոյ ՚ի ժամանակս երկրորդ հալածանաց Հերովդեսի Ագրիպպայ, յայս կարծիս է և Բարոնիոս։ Իսկ այլք համարին հանդիպեալ ՚ի քառասուն և չորրորդ ամի Քրիստոսի՝ որ համապատասխանէ երկրորդ ամի կայսերութեան Կլավդիոսի՝

յորում ամի Ս. Պետրոս հաստատեաց զաթոռ իւր ՚ի Հռոմ՝ եօթն տարի յԱնտիոք նստելէն ետև:

16 Ս. Եպիփան այսպէս խօսի վասն վախճանի Տիրամօրն. «Թող հետազօտեսցէ ոք ՚ի Սուրբ գիրս, այլ ոչ գոցէ ՚ի նոսին յիշատակ ինչ յաղագս վախճանին Մարիամու, մեռաւ արդեօք եթէ ոչ մեռաւ, կամ թէ թաղեցաւ եթէ ոչ թաղեցաւ... ոչ սահմանեմ եթէ անմահ եկաց ինաց գլխովին, և ոչ ունիմ ասել եթէ մեռաւ. քանզի Սուրբ գիրն ՚ի կախ եթող զկրոն՝ որ յաղագս անգին և գերազանց անօթոյն» և այլն:

17 Այն օրինակ տարակոյս ցուցանէ նաև Նարեկացի յասելն. «Որ սլացեալ հասեր ՚ի բարձունս երկնից՝ իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման. մարմին յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու». վասն զի ազատ լինելով ՚ի յանցուածոց նախասահեղծիցն անկարդ ՚ի հոգևն հղանալոցս հաւաքոյ՝ վասն որոյ և ոչ պարտաւոր էր մահու կամ հողագարձութեան:

18 Տես ՚ի Պարսիք ծանիկ ճառ վերափոխման:

19 Այս զանազան կարծիքս դիւրինաց առնելու համար՝ յաւելումք յետագայ ցուցակս սակս ամաց կենաց Տիրամօրն և թուականի ննջման նորա.

ՄԱՏԵՆԱԳՐՔ	ՆՈՅՆԻ ՔԱՀԱՆԱՅԻ Ի ՀԱՄԱՄԱՏԻ	ԿԵՆԱՑ ՀՆԴԿԱՑ ԳՐՈՒԱԾՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ Ի ԹՈՒԱԿԱՆԻՆ ՓԱՓԱՆԱԿԻՆ	ՅԱՅՍ ՀԱՄԱՐԵՑԱԼ ԲԱՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆ	ՆՀԱՐԱՒՈՐ ՅԱՄԻ	ԿԵՆԱՑ ՀՆԴԿԱՑ ԸՆԴ. ՄԻՄՅ
Հիպպոլիտոս Բեթլեհեմի	46	54	41 կամ 42	45	61
Եպիփան					72
Եւսեբիոս պատմ. Հետևի Զաքէոս վ. . .	45	54	44	48	65
Թեոդոտոս եպս. Ղեսարիոյ և Ցոյսէ. որոց Հետևի Ս. գիրքն վ.	45	55	42	45	60
Եւտոկիոս մրկաւոսկեայ.	44	55	42	45	60 կամ 64
Կեդրենոս, Ցուարեզ Բալսամոն	44	55	24	57	71
Բենեդիկտոս ԺԲ.	45	54	25	57	72
Ածիէաս՝ Գիւտասցի	46	54	20 կամ 23	54 կամ 59	70 կամ 75
Գրողք Ամուեսոյ Ծէդրատեայ զԵռակոնս.	45	54	17	50	66
Յետին գրօղք զկոչ կաւարին	45	55	15	48	65

ԳԼՈՒԽ ԺԸ.

Նիչումն և թաղումն Աստուածամօր.

Արդ որչափ որ մտեներալ այն ցանկալի ժամին՝ նոյնչափ ալ Տիրամօր փափաքն երթալով սասականայր՝ երթալու տեսնելու իւր Միածինն արքայութեան փառաց մէջ. ուստի ալ այնուհետեւ ընդ ոչ սփոփին Գողգոթա լեռն՝ ուր տեսաւ զինքն բևեռեալ ի խաչին, ոչ Գեթսեմանի պարտէզն՝ ուր թաղեցաւ և յարեաւ փառօք, ոչ վերնատունն Սիոնի՝ ուր բազում անգամ երեւցաւ իրեն յետ յարութեան, և ոչ Զիթենեաց բլուրն՝ ուստի համբարձաւ աստուածապէս: Ոչ ևս մխիթարէին զինքն առաքելոց ընծայած պատիւն իբրև Մօր Աստուծոյ, և ոչ հրեշտակաց կենակցութիւնն՝ որ մեծարէին զնա որպէս Դչխոյ երկնից և երկրի. այլ իւր սիրտն բորբոքեալ հնոցի պէս վառէր և բոցի նման յերկինս սլանայր: Նոյն տեն բան մի ալ չկար որ իւր հոգին այլայլէր. ոչ սէր երկրաւորաց՝ յորոց միշտ հրաժարեալ ապրեցաւ իւր բովանդակ կենաց մէջ, ոչ սէր ազգակցաց՝ յորոց ազգական հասակէն ի վեր բաժնուած էր, ոչ փափաք սաացուածոց՝ զորս միշտ արհամարհելով աղքատութիւնն մեծարած էր, ոչ փառք և պատիւ՝ յորոց միշտ փախչէր էր անծանօթ և խնարհ ապրելով՝ որչափ որ Աստուած զինքն քան զամենայն արարածս գերագոյն դասեց և փառաւորեց: Չէր կարող արամեցընել զինքն ոչ մեղաց յիշատակութիւն. վասն զի միշտ անբիծ և անարատ մնացել էր՝ ոչ միայն ի սկզբնական մեղաց՝ այլ և ի ներդործական թեթե-

ւագոյն անգամ թերութեանց, և բոլոր կենաց մէջ իւր մտածութիւնն սէրն փափաքն խօսքն և գործք միայն Աստուծոյ վերայ էր՝ յամենայնի նորա կամացն հպատակ. որով և չունէր ամենևին կասկած ինչ և երկիւղ յարդարութենէն Աստուծոյ՝ որում արդէն միակ սիրելին և ակնելին էր, և երկնային յաւիտենական փառքն իրեն համար պատրաստ էր:

Այսպէս պատրաստ ակնարկութեան կամաց Բարձրելոյն՝ վերջապէս հասաւ այն ցանկալի օրն՝ որ երբ ի Զիթենեաց լեառն աղօթից հետ էր՝ երևեցաւ նմա հրեշտակապետն Գաբրիէլ՝ որ բերելով նմա զբարեբան յաղթութեան՝ ծանոյց նմա այն երկրորդ ցանկալի աւետիսն թէ անձկացեալ ժամն հասած էր, և ինքն իսկ իւր Միածինն ըստ խոստմանն պիտի գայր ընդունելու զինքն ի փառս իւր, որպէս գրէ Շնորհալի հայրապետն ի Գանձն վերափոխման:

Այս աւետիս առածին պէս՝ գարձաւ ի վերնատունն Սիոնի՝ ուր նոյն տեն աստուածպային ազդեցութեամբ եկեալ հասեալ էին առաքեալք և աշակերտք ի զանազան կողմանց աշխարհի [1]. որոց մէջ էին նաև Դիոնեսիոս արիոպագացի և վարժապետ նորա Յուեթեոս՝ աշակերտք սրբոյն Պաւղոսի, որք և դիմեցին առ հասարակ ի սենեակ սրբոյ Կուսին, որ և սիրով ընկալեալ զնոսա՝ ծանոյց որ ալ մերձ էր ժամանակն լաժնուելու ի նոցանէ. և տեսնելով նոցա տրտմութիւնն՝ սկսաւ մխիթարել զնոսա և քաջալերել:

Երբ մուրճն կոխեց և առաստաղէն կախուած թևաւոր կանթեղներն վառեցան՝ խորհրդաւոր լոյս մի սփռեցաւ այն լուռ և անձայն ժողովին վերայ՝ որ ամենեցուն սիրտն եւսծ՝ արտասուալից շուրջ պատէին նորա անկողնոյն բոլորտիքն՝ ամեն ակնարկութեանցն պատրաստ: Առաքեալապետն որ այնչափ եռանդեամբ սիրել էր զԱստուածորդին իւր մահկա-

նացու կենաց առեն ցաւալից սրտիւ անթարթ աչօք հայեր 'ի Կայան, և կարծես թէ ասէր առ Յակոբոս եղբայր Տեառն առաքեալն եպիսկոպոս Երուսաղէմի. ո՛հ որչափ նման է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և յերեսաց զարմանալի էր նմանութիւնն Մարիամու ընդ որդւոյն իւրոյ Յիսուսի, այնպէս որ երբ գլուխն սակաւ մի 'ի վայր խոնարհէր՝ կարծես թէ զնոյն ինքն զՅիսուս տեսանէիր նոյն դրից մէջ վերջին ընթերեաց ժամանակ: Եւ Յակոբոս Ալփար կոչեցեալն նաև 'ի հրէից՝ որ իւր զգացմանց վերայ կատարեալ իշխեցող մարդ մի էր՝ հազիւ արցունքն զսպէր. նոյնպէս նաև Յովհաննէս սիրուն աշակերտն որ իւրըզգիկն գլուխն քաշած հեծութիւնն չկարէր ծածկել իւր սիրելի մօրն բաժնուելուն համար. այսպէս նաև միւս առաքեալք և աշակերտք: Իսկ Կայան սակաւ մի ամփոփուելով՝ դարձոյց իւր աչքն այն հաստատուեմ փոքրիկ հօտին վերայ՝ որ սիրովն Յիսուսի լրացու հետ կապեալ էին. ինչպէս որ սակաւ մի յետոյ պիտի ցուցանէին զայն 'ի մեծ զարմանս բոլոր աշխարհի և նոյն իսկ իրենց թշնամեաց: Երբ իւր սիրան ալ ելած սկսաւ խօսիլ՝ ձայնն այնպէս անոյշ հնչէր որ կարծես թէ առ վայր մի ամենուն ցաւն դադրեցաւ, և մխիթարական խօսքով զիրենք սփոփելով՝ խոստացաւ միշտ իրենց բարեխօս և օգնական լինելու, և երկնային փառաց մէջ ալ ամենևին զիրենք չմոռնալու. և այնպիսի գերազանց խորհրդածութեանց բարձրացաւ՝ որ բոլոր հոն ներկայ եղողներն ապշած և զմայլած՝ գրեթէ մոռցան որ այն վերջին անգամն էր որ լսէին Տիրամօր անուշիկ ձայնն:

Իւր բարի յորդորներն աւարտեցէն ետև՝ պատպրեց կուսանաց՝ որ մնացած լապտերներն և ջահերն ալ վառեն, և Յովհաննու ալ հրամայեց որ սուրբ խորհուրդն մատուցանէ և զինքն ալ հաղորդէ (Յայտ. ԻԹ և Ի օխոստոս.) յետոյ տարածելով իւր պաշտպանական ձեռքն 'ի վերայ որդւոյ իւրոյ՝ զորս որբ թողոյր յաշխարհի, օրհնեաց զնոսա գարձեալ և ասէ. «Որդեակք իմ, չէ ձեզ արժան այդպէս մոլմռքել զսիրտ իմ. գնամ ես այժմ, եկեսջիք և դուք յետ սակաւուց զհետ իմ. գնամ ես և լինիմ բարեխօս վասն ձեր. և արդ պատուիրեմ ձեզ զոր պատուիրեաց որդին իմ. յայտ ծանիցեն ամենեքին՝ թէ իմ որդիք էք՝ եթէ սիրիցէք զմիմեանս»:

Այս բաներս խօսելու առեն՝ անմահական պայծառութիւն մի փայլեցաւ իր երեսաց վերայ, և հրեշտակական երաժշտութիւն լսէին օդոյն մէջ՝ որ հրաւիրեալ փոխադարձականէին զԿայան՝ որ բոլորովին յափշտակեալ էր մտօք, որպէս թէ հրաշալի տեսիլք մի տեսնէր. վարդի գոյն մի սփռեցաւ իր այտից վերայ և հրճուողական ցնծութիւն մի գիմաց վերայ փայլեալ ծաւալէր: Մինչդեռ առնէր ասպած հետացած էին այս հրաշալի երևութիւս՝ յանկարծ սաստիկ լոյս ծագեցաւ վերնատան մէջ, և տեսին զԱրեգական արդարութեան զմիածին որդին՝ որ պարառեալ 'ի զուարթնոց հրեշտակաց անդր հասանէր: Իսկ սրբոյն Կայան բոլորովին յափշտակեալ տեսլեամբ Աստուածորդւոյն՝ այսչափ միայն կարաց ասել. «Որդեակ իմ և Աստուած» և անդէն հոգին աւանդեց. որով և Կուսին մահն ոչ այլ ինչ էր՝ բայց նուաղումն յառաւելութենէ սիրոյն առ որդին, որպէս առհասարակ աւանդութիւն է եկեղեցւոյ՝ թէ սուրբ Կայան ոչ մեռաւ բնական մահուամբ ակարութեան, այլ սիրոյն սաստկութենէն սպառեցաւ. ուստի և սովորութիւն եղած է հարց ևնջուելի կամ հանգիստ կոչել զնոյն քան թէ մահ:

Հրեշտակաց հիանալի ներդաշնակութիւններէն, այն պայծառ լուսոյն շողալէն՝ որով բոլոր տունն ողողեր, և օդոյն մէջ սփռեալ զմայլելի անուշահոտութենէն՝ մերձակայք որ մինչև այն առեն արտասուագին

աչօք ՚ի նա յառած կացեալ էին՝ սկսան իրենց մայրն և Թագուհին ձայնել արթնցընելու համար, բայց պատասխան մի չլսելով՝ երբ մահճին մօտեցան՝ տեսին որ այս անբիծ աղաւնիս կենաց կապանքն լուծանելով Թռուցեալ էր յերկինս. բայց իւր դէմքն այնպէս խաղաղ էր որ կարծես թէ հանգարտ քնոյ մէջ ընկղմեալ էր, այնչափ քաղցր և անոյշ՝ որ մահն իսկ գեղեցիկ երեսէր իր չնորհալի գիմայ վերայ: — Յայսմաւուրքս մէջ կարգացք որ Աստուածամօր ննջման ժամանակ՝ իւր հոգին արեգական պայծառութեամբ երևելով առաքեալք զարմացմամբ իրարու հայէին, և Պետրոս համարձակեալ հարցանէր առ Տէրն, և լսեր ՚ի նմանէ թէ Աստուած մարդոյս հոգին այնպէս պայծառ ստեղծած էր ՚ի սկզբանէ՝ որ յետոյ մեղաց նեմացաւ. սակայն Աստուածամօր հոգին իր առաջին պայծառութիւնն միշտ պահած էր՝ ամենևին անշաղախ յառաջին մեղաց նախամօրն, ուստի այնոր համար այնպէս պայծառ փայլէր:

Այսպիսակս մահու կանխեղն վառեցաւ, պատուհաններն բացուեցան, և կուսանք ամփոփելով այն սուրբ և անարատ մարմինն մաքուր կատաղ մէջ հանգուցին իր անկողնոյն վերայ. և առաքեալք և աշակերտք սկսան արտասուախառն խնդութեամբ շարականներ և օրհնութիւններ երգել, հանդերձ ներբողական գովեստներով որոց մէջ յայժ սրտաշարժ էր՝ ըստ վկայութեան Դիոնեսիոսի, Յեռոթէոսի ներբողն որ զամենեսին հիացոյց. «Յետ աստուածաբանիցն հզօրագոյն ցուցաւ աստուածաբանութիւնն Յեռոթէոսի. զի բոլորովիմբ սարսեալով, բոլորովիմբ զարմացմամբ յինքեան՝ յամենեցունց որք անդ էին... աստուածընկալ և աստուածային օրհնաբանող կուչիւր»: — Ըստ աւանդութեան ազգիս յիշատակեալ ՚ի Սեբաստոսէ սիւնեաց եպիսկոպոսէ, և ՚ի Յակոբայ սրճեցւոյ ասի թէ նոյն առեն յօրինեց և Թովմաս

առաքեալ ղերդն փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, յորում Տիրամօր աստեն գերապանց մակդիրներն ամփոփած են:

Հետևեալ օրն հաւատացեալք եկին հասին ծանրագին նրբանիւթ բեհեզներով և անուշահոտ խնկերով առ ՚ի թաղել զթագուհին կուսանաց, և դնելով զսուրբ մարմինն բաց գագաղն մի մէջ՝ առաքեալք բարձին զայն պանծանօք ՚ի վերայ ուսոց իւրեանց և բերին մինչև ՚ի ձորն Յովսափատայ, և անտի ՚ի պարտէզն Գեթսեմանի, և քրիստոնեայք Երուսաղեմի՝ վառեալ լապտերներով և սաղմոսներ երգելով եւևէն երթային:

Այսպէս աւանդութեամբ թէ երբ իջանէին Սիոն լերին արևելեան կողէն վար՝ հրեայք որ անհնարին առելութիւն ունէին սրբուհւոյ Կուսին, որպէս երբեմն իւր անմեղ որդւոյն դէմ, երբ տեսին որ մեծահանդէս թափորով տանէին զմարմին նորա՝ կատաղութեամբ գագաղն վերայ յարձակեցան, և Սոփոնիա անուամբ քահանայն յանդգնեցաւ ձեռք երկնցընել ՚ի տապանակն Աստուծոյ կենդանւոյ, և ուղեց զայն վայր քաշել և գետին ձգել. բայց անգէն ձեռքն չորացան, կամ ըստ այլոց թևերն կտրած գագաղէն վար կախուեցան, մինչև յետոյ զղջալով գործած անօրէնութեան վերայ՝ բարեխօսութեամբ Տիրամօրն առողջացաւ. շատերն ալ այս հրաշքս տեսնելով սարսափեցան, և Պետրոսի և Պաւղոսի քարոզութեամբն դարձան ՚ի հաւատս: Ուսոյ և առաքեալք աներկիւղ և անկասկած յառաջ տարին յուղարկաւորութիւնն, և Թաղման տեղն հասնելով՝ տեսին որ արքեպաշա կանայք այնպէս զարդարել էին գերեզմանն[3] և քարայրն՝ որ ծաղկանց պարտէզ մի դարձել էր, ուր և լացով և ողբով զեռեղեցին Կուսամօր անարատ մարմինն. և ամբողջ երեք օր երեք գիշեր հսկմամբ և աղօթիւք անցուցին՝ գերեզմանին

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԺԸ. ԳԼՈՒԽ

1 Այս աւանդութիւնս Հաստատի վկայութեամբք սրբոց Դիոնեսիոսի արիոսպագացւոյ, Մ. Խորենացւոյ, Յովհաննու դամասկացւոյ, Գերմանոսի պատրիարքին Կոստանդնուպոլսոյ, Անդրեասայ կրետացւոյ, Նիկեփորոսի, Մետափրաստեսի, Յոբնաղայ երուսաղէմացւոյ և այլոց. սակայն պարագայից վերայ ամենքն ոչ միաբանին. ոմանք ասեն թէ Սրբոյ Կուսին փափաքանաց համեմատ՝ աստուածային հրաշքով և աներևոյթ ձեռօք նոյն տեղ դեռ կենդանի եղած առաքեալներն փոխադրեցան Յերուսաղէմ. իսկ այլք թէ աստուածային տնօրէնութեամբ այնպէս կարգադրեցաւ՝ որ բնական կերպով ամենքն ալ նոյն ժամանակ Յերուսաղէմ գտուին, որպէս զի վերջին անգամ կարասցեն տեսանել զՏիրամայրն։—Դիոնեսիոս՝ յետոյ հասեալ առաքելոյն անունն որոշ ոչ յիշէ. ուստի յոյնք և լատինք համարեցան թէ Թովմաս էր, որովհետև Տեառն մերոյ յարութեան ատենն ալ ինքն էր յետոյ հասնողն. բայց մեր ազգին հնագոյն աւանդութեան նայելով սկսեալ՝ի Խորենացւոյ, Բարթողիմէոս լինելն Հաստատի. մանաւանդ որ լատինք ալ առաքելոյս տօնն անմիջապէս վերափոխմանէն ետև կատարեն։

2 Խնդիր է առ քննաբանս թէ արդեօք քրիստոսական կրօնից որ խորհուրդներն ընկալեալ էր Սուրբ Կոյսն. Տերտուղիանոս և Ոսկեբերան համարին թէ Տիրամայրն չէր ընկալեալ զմկրտութիւն, պատճառ բերելով թէ մկրտութիւնն ի նոր օրէնս սահմանեալ էր առ ի ջնջել զսկզբնական մեղս, և առ ի գործնական ընդհանուր զօրացընել զմարդիկ ի կատարումն պատուիրանացն Քրիստոսի. իսկ արդ այս երկոցուն ալ անկարօտ էր Տիրամայրն ոչ ունելով զսկզբնական մեղս, և լցուած լինելով աստուածային ընդհանուր և ամենայն կատարելութեամբ։ Սակայն աւելի հաւանական է ասել՝ որ թէպէտ Մարիամ կարօտ չէր սուրբ խորհրդոց օգնականութեան, բայց ընկալաւ զմանս ի նոցանէ առ ի տալ օրինակ խոնարհութեան, որով և հին օրինաց հրամայածին ևս հնազանդեցաւ գալովն ի տաճարն ի սրբիլ, փրկանաւորելով ևս զմիածին որդին իւր՝ որ ամենևին սուրբ էր և անկարօտ մաքրութեանց. ապա ուրեմն ևս առաւել ընկալաւ զխորհուրդս հաստատեալս Աստուածորդւոյն իւրոյ.

մտէն չհեռանալով. ուր և հրեշտակաց գաշնակաւոր երաժշտութիւնն ալ կարծես թէ Մարիամու վերջին քունն քաղցրացընէին. իսկ երբ երկնային երգերն դադրեցան՝ իրենք ալ լռելով իրենց տեղն գարձան, ամենևին իրենց մտքէն չանցնելով թէ այլ աւելի հրաշալի և գերազանց աքանչելիք պիտի աւարտէր սրբոյ Կուսին երկրաւոր կեանքն։

դարձեալ առ ի լինել օրինակ պահպանութեան օրինացն Աստուծոյ և ի խրախոյս հաւատացելոց և առանձինն մեղաւորաց. որպէս և առ առաւելուլ զարգիւնաւորութիւն իւր, քանզի և ինքն ողջոյր էր այսինքն ի վիճակի և ի պայմանի սուանալոյ առաւել և ա արդիւնս աստուածային օրինաց պահպանութեամբ: Ուստի նախ ընկալաւ անշուշտ զմկրտութիւն ոչ Յովհաննուն այլ զԲրիստոսին, թէ և ժամանակն և երբ ընդունիլն յայտնի չէ, սակայն հաւանօրէն շատ ալ ուշացուցած չէ: Ըստ հնագոյն կարծեաց Տէրն մեր մկրտեաց միայն զՊետրոս, և սա զայլ առաքեալս, և գործակցութեամբ Յովհաննու աւետարանչի զՏիրամայրն: — Երկրորդ զլսորդ գրոչմին ընկալաւ՝ ոչ ըստ սովորական ձևոյ խորհրդոյն՝ այլ ուղղակի իմամբ Հոգւոյն սրբոյ, որպէս և առաքեալքն ի վերնատան: — Երրորդ զսուրբ խորհուրդ հաղորդութեան ընդուներ յաճախ ձեռամբ առաքելոց, և մանաւանդ Յովհաննու աւետարանչի, մանաւանդ թէ թերևս ամեն օր, որպէս սովորութիւն էր նախկին հաւատացելոց: — Չորրորդ ապաշխարութեան խորհուրդն ընդունած չէ. զի չուներ զնիւթ խորհրդոյն ազատ գոլով ի սուտերէ անգամ մեղաց, և ամենևին սուրբ և անարատ: — Հինգերորդ նոյնպէս և ոչ վերջին օծումն՝ որ կարգեալ է ջնջել զնացուածս մեղաց և առ ի զօրացուցանել զՀոգեվարն ընդդէմ հնարից սատանայի, զի կոյսն ջախջախեալ էր արդէն զգլուխ նորա: — Վեցերորդ և ոչ վերջին պսակն. վասն զի թէ և ճշմարիտ ամուսնացաւ ընդ Յովսեփայ, սակայն տակաւին խորհուրդս հաստատեալ չէր, զի յառաջ էր քան զԲրիստոս. և երբ կանաչ գալիլեայ հարսանեաւքն հաստատեաց զայն Տէրն մեր՝ Յովսէփ արդէն վախճանեալ էր:

3 Աստուածամօր գերեզմանին եկեղեցին ի Գեթսեմանի մերձ ի ձորն Յովսափատայ՝ հիմա հողուն տակին է՝ ուր քառասուն և վեց աստիճան մարմարեայ սանդխով կ՝իջցուի եօթն մետր լայնութեամբ. այս սանդուխին վարերն որ հասնիս՝ պատին հաստութեան մէջ երկու մատուռներ շինուած են, աջակողմեան մատրան մէջ են Յովակիմայ և Աննայի գերեզմանները, իսկ ձախակողմին մէջ սրբոյն Յովսեփայ աստուածահօր: Սանդխոց ծայրն նոյն շտկութեան վերայ խաչաձև՝ բոլորովին գետնափոր սրահ մի կամ եկեղեցւոյ խմբարանն մտանիս՝ արևմուտքէն դէպ ի արևելք՝ որ կամարին վերայ եղած լուսամուտ մի միայն լոյս առնու. այս սրահին երկու ծայրերն կիսաբոլոր խորաններ են. և երկայնութիւնն է 30 մետր և լայնքն 6. սանդխին անմիջապէս դիմացն ալ խորանաձև տեղ մի կայ: Սրբոյ Կուսին գերեզմանն այս խմբարանին մէջն է՝ իր երկայնութեան երկու երրորդ մասին վերայ շինուած՝ դէպ ի արևելքի կողմն. Տեառն մե-

րոյ գերեզմանին պէս՝ ժայռի մի մէջ փորուած է և բոլորտիքն տապանակի ձևով պատ քաշուած է, և երկու մուտք ունի դէպ ի հիւսիս և արևմուտք: Գերեզմանին մարմարիոն կափարիչն սրոյ վերայ յոյնք միայն պատարագ մատուցանեն վարդեվօվ միշտ լուանան, և տապնուվեց կանթեղ միշտ անչէջ վառին: Գերեզմանի պատնէշն երկու կողմերն ուրիշ խորաններ ալ կան սրոց երկուքն մեր ազգին ձեռքն է և մին խաչիկներու. ինչպէս նաև մահմետականք ալ ֆէրթաղ մի ունին նոյն տեղն (տես ի Վանտելպուրկ Պողոսդին Հա. Ա, էջ 312):

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վկրաւիոխառմն Տիրամօր.

Աստուածամօր ննջման ժամանակ և թաղման հանգիսին սուրբն Բարթողիմէոս առաքեալ ներկայ չէր գտուած, որպէս պատմէ Խորենացի, վասն զի Թոմայի հետ ՚ի Հնդիկաստան գնացեալ էր քարոզելոյ, Թէպէտ և այլք նոյն իսկ Թովմասու համար ասեն այս գէպքս. իսկ Դիոնէսիոս արիսպագացի առաքին պատմիչ իրացս յանուանէ ոչ յիշատակէ՝ Թէ ո՛ր առաքեալն էր ներկայ հանդերձ. ուստի մեզ ալ հաւանական երեւի Խորենացւոյն վկայութիւնն՝ ՚ի հնուց աղբիւրէ աւանդութեան վերայ հաստատեալ: Սակայն այս գէպքս ալ աստուածային նախախնամութեամբ անօրինուած էր՝ որպէս զի այս միջոցով հռչակուի այնպիսի սքանչելի խորհուրդ մի, այսինքն Աստուածամօր յարութիւնն և ՚ի յերկինս վերափոխիլն հոգւով և մարմնով, որ այս կերպովս յայտնուեցաւ: Թաղմանէն երեք օր ետև՝ երբ հրեշտակաց երգերն դադրելով՝ հաւատացելոց օրհնութիւնները ալ լռեցին, և առաքեալք իրենց քարոզութեանց զբաղած էին՝ եկն ետքս սուրբն Բարթողիմէոս առաքեալ՝ որ նոյն ինքն է Նաթանայէլ ՚ի Կանայ գալիլեացւոյ, հայաստանեայց Հայր հոգեւոր՝ առաջնորդ աւետարանչի ազգիս, և եղածները լսելով՝ սկսաւ լալ և ողբալ Թէ ինչպէս ինքն զրկուած էր ներկայ գտնելու Կուսամօր ննջման, և իր վերջին օրհնութիւնն առնելոյն պէս ընդունելու: Եւ Թէպէտ այլ առաքեալք զինքն մխիթարէին ասելով Թէ Տիրամայրն իւր օրհնութիւնն մերձաւորաց և հեռաւորաց համար առ հասարակ աւանդած էր, սակայն ինքն ոչ դադարէր յողբալոյ: Հուսկ ապա շատ ալաչէց պատեց որ գերեզմանն բանան, որպէս զի գոնէ ինքն ալ տեսնէ այն սուրբ մարմինն և կարօտն առնու: Առաքեալք չդիմանալով նորա թախանձանացն եկին ՚ի միասին և բացին զգերեզմանն. բայց զարմացած ապշած մնացին՝ երբ տեսին որ մարմինն հոն չէր, այլ միայն այն մաքուր կտաւներն որոցմով թաղուած էր, որ և այնպիսի անուշահոտութիւն մի բուրէին՝ որ զամենքն զմայլեցուցանէր. նոյն իսկ այն ծալկներն որով զարդարեալ էր գերեզմանն իրենց գոյնն և գեղեցկութիւնն չէին կորուսած: Այս անսովոր գիպաց վերայ առաքեալք զարմացած՝ ոչ գիտէին ինչ մեկնութիւն տան այս բանիս. որովհետև իրենց մաքէն ոչ անցանէր՝ Թէ յանգուդն ձեռք մի անսի գողցած տարած լինի մարմինն. վասն զի ինչպէս որ ասացաք այն երեք օրերն Թէ իրենք և Թէ անթիւ հաւատացեալք գերեզմանին մօտէն չէին հեռացած: Վերջապէս երկնային լուսով յանկարծ իրենց միտքն լուսաւորելով՝ իմացան Թէ մեզք ապականեալ երկիրս անարժան սեպուած էր ընդունելու այն կուսական և անապական մարմինն՝ որ առաջար և բնական եղած լինելով Բանին Աստուծոյ՝ գերեզմանի որդանց կեր ոչ կարէր լինել. ուստի այն կտաւներն անթառամ ծաղկներն ձեռք ձեռք տալով և եւանգեամբ համբուրելով՝ չմոռնալու իրենց մէջ բաժնել, այլ դարձեալ դրին ամեն բան նոյն գերեզմանին մէջ և զգուշութեամբ ծածկեցին, և նոյն տեղն աղօթարան մի շինեցին: Իսկ զսուրբն Բարթողիմէոս մխիթարելու համար՝ եռուն նմա զպատկեր Կուսին զձեռագործ Յովհաննու աւետարանչի, զոր յետոյ բերաւ ՚ի Հայաստան: — Սակաւ ժամանա-

կէն այս հրաշալի դէպքս տարածուեցաւ ոչ միայն Երուսաղէմայ և Պաղեստինու սահմաններէն, այլ և աւանդութեամբ բերնէ բերան անցնելով հաչակեցաւ աշխարհիս ամէն կողմ եղող հաւատացելոց մէջ, և նոյն հաստատուն վկայութեամբ հասաւ մինչև առ մեզ: Եւ թէպէտ մինչև հիմա սուրբ եկեղեցին դեռ իր վճիռն տուած չէ, և զվերափոխումն Կուսին չէ անցուցած հաւատոյ մասանց մէջ, խոհեմութիւն համարելով իմաստուն աստուածաբանից քննութեանն յանձնել աւելի բացայայտ ցուցանելու համր խորհրդոյս պատշաճութիւնն և ստուգութիւնն, սակայն հրամայէ և հրաւիրէ զամէնայն հաւատացեալս մեծահանդէս ածնելոյ և հաչակելոյ այս ա-ռանձնաշնորհութիւնս սրբոյ Կուսին՝ որ որչափ փառք ու պարծանք է Մարիամու՝ նոյնչափ ալ պատիւ մարդկային բնութեանս, և մեր յարութեանն ալ առհաւատչեայ:

Արդ վերափոխումն ասելով իմանամք որ երանութիւն Կոյսն յետ հատուցանելոյ մահուամբ մարդկային բնութեանս պարտքն՝ իր անբիծ հոգին տարօրինակ հրաշքով նորին գործաւ միացաւ ընդ մարմնոյն՝ որ երեք օր գերեզմանին մէջ անապական մնացեալ էր, և այնպէս հոգւով և մարմնով վերացաւ յերկինս ընկերակցութեամբ հրեշտակաց, որոց ամէն պարագայներն այնպէս ճոխաբար և գեղեցիկ նկարագրած են սուրբ Մովսէս Խորենացի այս տօնախմբութեանս առաջին աւուր շարականաց մէջ՝ հետևողութեամբ Դիանեսիոսի գրուածոց, և յետոյ Շնորհալի հայրապետին հետևեալ աւուրց պատկերաց մէջ: — Տիրամօր այս փառաւոր փոխադրութիւնս ի յերկինս՝ այսու զանազանի փրկչէն մերոյ համբարձմանէն ի յերկինս՝ որ Տէրն մեր արարիչ և բարձրաձակ աեր գոլով ամէնայնի՝ իւրով զօրութեամբ վերացաւ ի յերկինս՝ որուհմ չուրջ պատեին հրեշ-

տակք ի պատիւ և ոչ թէ յօգնութիւն. իսկ սուրբ Կոյսն վերացաւ չնորհօք Աստուծոյ և ոչ թէ իւրով կարողութեամբ, ուստի և հրեշտակք ուղեկից և օգնական եղեն նմա իւր երկնաւոր Ճանապարհորդութեան մէջ:

Մինչև յարդ ասացածէս դիւրաւ իմանամք թէ որչափ պատշաճ էր որ անարատ և ամենասուրբ Կոյսն այնպէս փառաւորուէր և գերազանցէր հոգւով և մարմնով. վասն զի այս բանս պահանջէր նախ իւր Աստուածամայրութեան պատիւն՝ որով գերազանց գտաւ քան զայլ ամենայն արարածս, և նոյն իսկ քան զհրեշտակական երկնային ոգիս. երկրորդայն ներքին կապակցութիւնն զոր ունէր ընդ ամենասուրբ Որդւոյ իւրոյ. վասն զի մարմին Փրկչին՝ զոր պաշտեն հրեշտակք և հոգիք երանելեաց ի յերկինս՝ նոյն մարմին է անարատ Կուսին՝ որ յղացաւ զնա միայն զօրութեամբ Հոգւոյն սրբոյ. երրորդ այն գործակցութիւնն զոր եցոյց Կոյսն՝ Աստուծոյ իրեն տուած անբաւ շնորհացն, որով և սրբութեամբ այնպիսի մեծ փառաց արժանացաւ՝ որ արքայութեան մէջ եղած բովանդակ սրբոց միանգամայն առեալ փառքէն և արգիւնքէն ալ գերազանց է. վերջապէս նոյնն պահանջէր այն տարապայման խանդակաթաթն զոր ունէր Աստուածորդին իւր Մօր վերայ՝ որ ոչ միայն զինքն ծնեալ և մեծցեալ էր, այլ և բոլոր կրած նեղութեանց և չարչարանաց ընկեր եղած էր ի ծննդենէն մինչև ցմահ խաչին: Ուստի եթէ երկրիս վերայ իւր մայրն այնչափ պատուեց և մեծարեց՝ որչափ ևս առաւել փառաւորած է զինքն յերկինս. և եթէ անդէն ի յղութեան պահեց զինքն չարաւոյ սկզբնական մեղաց և զկուսութիւն նորա անխախտ ի ծնանիլ իւրում՝ ինչո՞ւ չպահէր նորա մարմինն յապականութենէ գերեզմանին՝ որ սեպհական է որդւոյ Ադամայ՝ որ գառապարտեալ են դառնալ ի

հոգ ուսոմի ստեղծան: — Պարձեալ եթէ ոմանք 'ի սրբոց յառաջ քան զ'Քրիստոս և յետ Քրիստոսի յարուցիչն առնլով՝ ըստ ոմանց աստուածաբանից հոգւով և մարմնով իրեն հետ յերկինս վերացան հաւաբձման օրն՝ կարծիք տարակուսիլ որ նոյն շնորհքն տուած չլնցի իւր ամենասրբը և քան զամենայն սուրբս առաւել սիրելի Մօրն:

Այս գրած պատճառներուս զօրութիւնն բաւական է Աստուածամօր վերափոխման ճշմարտութիւնն ստուգելու, զոր և հռչակած և քարոզած են հայոց յուսնաց և լատինաց հարց և վարդապետաց շատերն. որք թէպէտ և ճշմարիտն ասելով առաջին դարուց մէջ աւելի հոգւով վերափոխելն լմացած են քան թէ մարմնով ևս, սակայն յետոյ այս վերջին մտօքս ալ այնչափ հաստատութեամբ խօսին՝ որ տարակուսի տեղ ոչ թողուն Աստուածամօր այս առանձնաշնորհութեանս վերայ. մինչև ոմանք այլ աւելի յառաջ անցնելով տարակուսին իւր բնական մահուան վերայ: Իսկ թէ ինչո՛ւ առաջին դարուց մէջ աւելի բացայայտ յիշատակութիւն ոչ գտանեմք այս գեղազանց խորհրդոյս վերայ՝ պատճառն յայտնի է. վասն զի նախ և առաջ պէտք էր որ առաքեալք հեթանոսաց միտքն տպաւորէին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յարութիւնն՝ որ մեր յարութեանն ալ հաստատութիւնն է, և մարդկային մտաց անհասանելի և գրեթէ անկարելի համարեալ. այնպէս որ այնչափ քարոզութիւններէ և հրաշագործութիւններէ եաև ալ՝ գեթ հեթանոսք գժուարութիւն կըրէին հաւատալու այս ճշմարտութեանս: Արդ ինչպէս կարելի էր որ ախտիւք և տգիտութեամբ կուրացեալ հեթանոսք՝ հաւատային որ աննշան և անծանօթ կոյս մի այնչափ փառաց հասնի՝ որ հոգւով և մարմնով ալ յերկինս վերանայ, մինչդեռ նոյն իսկ Որդւոյն Աստուծոյ յարութեան վերայ տարակուսէին,

այնմ՝ որոյ բովանդակ կեանքն և մահն աքանչելի և սիեզերալուր հրաշիւք պայծառացած էր, և ոչ կարէին ըմբռնել թէ ինչպէս մեռնելէն եաև կենդանանալով իր զօրութեամբ վերացել էր յերկինս: Այսքր ահա գլխաւոր պատճառն որ առաքեալք և առաջին հարք եկեղեցւոյ՝ գժուարութիւն գժուարութեան վերայ չբարդելու համար՝ լռէին Աստուածամօր վերափոխման խորհուրդն ալ հեթանոսաց յայտնելու և քարոզելու. թէ և հաւատացելոց մէջ աներկբայելի էր 'ի սկզբանէ, և տօնն ևս հաստատեալ. իսկ յետոյ յաջորդող հայրապետք ամենայն ևկեղեցւոց պանծանօք հռչակեցին զայն'ի գիրս իւրեանց ճառերով ներբողներով շարականներով և գանձերով. որպէս և 'ի մեզ 'ի հինգերորդ դարէ սկսեալ Ս. Մովսէս խորենացի, Թէոդորոս քռեթենաւոր, Զաքարիա կաթողիկոս, Ս. Գրիգոր Նարեկացի, Ն. Շնորհալի, Ն. Լամբրոնացի, Վարդան մեծն, Կիրակոս և այլք. թող վերջն երկու դարուց մէջ երևեալ հռչակաւոր վարդապետք Մխիթար աբբայ, Զամչեան, Աւետիքեան և Ալգերեան հարք:

Աստուածամօր մարմնով ևս վերափոխելոյն մեծ ապացոյցերէն մին ալ այն է՝ որ երկրիս վերայ իր նշխարներէն ոչ գտանի: Ամենուն յայտնի է թէ քրիստոնէութեան սկզբնաւորութենէն 'ի վեր հաւատացեալք որչափ եռանդեամբ հաւաքէին և զգուշութեամբ պահէին սրբոց մարմինքն, շատ անգամ անբաւ գանձ ալ տալով գահճաց և զօրականաց՝ որպէս զի այն սուրբ նշխարքն իրենց շնորհուի. ասով է որ մինչև ցայսօր գրեթէ երկու հազար տարիներէ 'ի վեր անհամար սրբոց մարմինքն պահուած են 'ի զանազան աշխարհս, և մանաւանդ 'ի քաղաքիս Հռոմայ: Յայտնի է գարձեալ որ Աստուած զանազան ժամանակ յայտնած է սրբոց մարմինքն որ այլ և այլ տեղուանք ծածկեալ էին և գրեթէ կորուսեալ, ինչ-

պէս վերջերս ալ Սպանիոյ Կոմպոստելլա քաղքին մէջ գտուեցան Յակոբոյ մեծի առաքելոյն որդւոյն Զեբեդեայ նշխարքն, և շատ քննութիւններով հաստատուեցան: Արդ եթէ սրբոյ Կուսին մարմինն ալ երկրիս վերայ մնացած լինէր՝ անշուշտ քան զայլ սրբոց նշխարս աւելի զգուշութեամբ պիտի պահէին զնա հաւատացեալք, և թէ ծածկուած էր՝ Աստուած պիտի յայտնէր զայն ի մխիթարութիւն և ի ջերմեռանդութիւն բարեպաշտից, որովհետև քան զայլ ամենայն սուրբս արժանի է մեծարանաց: Իսկ արդ բովանդակ տիեզերաց մէջ տեղ մի չկայ՝ ուր Տիրամօր նշխարաց մասն մի գտնուի, որպէս ասէր Հնիգերորդ դարուն սկիզբն Յոբնաղ Երուսաղէմի պատրիարքն առ Բուլքերիա Թագուհին՝ որ Կոստանդնուպոլսոյ մէջ յանուն Աստուածամօր փառաւոր եկեղեցի մի շինելով պարզմտութեամբ խնդրած էր երմէ մասն մի ի նշխարաց նորա. որուն պատասխանէ հայրապետն որ Թէպէտ գերեզման Աստուածածնին է ի միջի Մերում՝ ի Գեթսեմանի, այլ մարմին նորա ոչ է անդ՝ այլ յերկինս: — Միայն ի զանազան տեղիս գտանին ի հանգերձից սրբոյ Կուսին և յայն կտաւեաց որ գտան իր գերեզմանին մէջ յետ վերափոխման. կան նաև իւր մազերէն՝ զոր հատանականաբար կտրած և պահած էին իւր անձնանուէր աղախինն և անբաժան ընկերն Մագդաղինէ և իւր սրդեգերն Յովհաննէս աւետարանիչ:

Այս հրաշափառ անցից հաստատութիւն կարեմք համարել նաև վերափոխման տօնն ալ՝ որ ինչպէս ամեն ազգաց՝ այսպէս ալ մեր ազգին մէջ-առաքելականաւանդութեամբ սահմանուած համարի ի Ս. Բարթողիմէոս սկսեալ և հաստատեալ ի Ս. Լուսաւորչէ. որովհետև Խորենացի ալ որ դարուս կէսերն է ենթադրէ թէ այն տօնն ի վաղուց կայր ազգիս մէջ. ուստի գրէ առ իշխանն Սահակ որ հրաւիրեր

զնա գալ առ ինքն. «Այժմ ոչ ժամանեմ առ հզօր իշխանդ ի տեսութիւն, մինչև կատարեսցի տօն Իսկուհուղի». որոյ ի պատիւ յօրինեց նաև զառաջին պահեր վերափոխման: Նոյնպէս Զաքարիա կաթողիկոս վերափոխման Ճառին մէջ հաստատէ թէ յառաքելոց սահմանուած էր տօնս. «Եւ կարգեալ արձանացուցին զիշատակ նորա յօգոստոս ամսոյ տասնևհինգն». Թերևս ինքն է յօրինած Աներառեալ ժողովի գեղեցիկ և վեմ Ճաշու շարականն՝ ի պատիւ վերափոխման Կուսին:

Յունաց և լատինաց մէջ ալ շատ հին է վերափոխման տօնախմբութիւնն անյայտ ժամանակէ սկսեալ. որով քննիչք համարին թէ առաքելոց աւենէն սահմանեալ է, թէ և այլք ասեն Եվթեսեոսի Ժողովքէն, ոմանք ալ կարծեն վեցերորդ դարուն սկսած. աւելի հաւանական է որ ի սկզբանէ հետէ տօնէին զայն անուամբ ննջման կամ հանգստեան Կուսին, իսկ մարմնով ալ վերափոխելն ոչ գիտէին մինչև ի վեցերորդ դար. ինչպէս նաև տօնին օրն ալ որոշ սահմանեալ չէր. զի յոմնք առաջ տասներկու հետ ի միասին յունուարի 18ին տօնէին, յետոյ վեցերորդ դարուն՝ Մօրիկ կայսր հայկազն փոխեց զայն և օգոստոսի 15ին հաստատեց: — Իսկ առ լատինս Թէպէտ և յայտնի չէ թէ յառաջ երբ և ո՛րպէս տօնէին, սակայն ստոյգ է որ յամի 847 Լեւոն Դ. քահանայապետ սահմանեց որ ուղղափառք տօնուի ի միշտահաս հրաշալի ազատութեան քաղաքին Հռոմայ Թոնաւոր վիշապի մի ճիրանէրէն որ շատ մարդիկ սպանանէր:

Վերափոխման տօնէն զատ ըստ յայսմաւուրաց հայոց և յունաց օգոստոսի 31ին յիշատակի նաև Գիւտն պատուական գօտւոյ Աստուածածնին՝ որ իր ղեկտուզ հետ միասեղ հնուց ի վեր պահուէր Եերուսաղէմ քաղաքն, որ մեծին Թէոդոսի որդւոյն Արկադիոս կայսեր ժամանակ ի Կոստանդնուպոլիս

փոխադրուեցաւ, և փառաւոր գըրոցի մէջ գրուած և Թագաւորական կնքով կնքուած կայսերական գանձուն մէջ պահուէր, և հիմա գտանի Դոսքանայի Բրաթդ կոչեցեալ քաղքին մէջ։ — Բայց ասոր յոբելեսի երկրորդ օրն յիշատակի ըստ մեզ Գիւտն տիոյ Աստուածածնին՝ որոյ մէջ գրուած էր Տիրամօր լաչակն. որ ըստ յունաց ասի Փոխադրութիւն զգեստուց ամենասուրբ Կուսին, որոյ վերայ այսպէս պատմեն Թէ Լեւոն կայսեր ժամանակ այսինքն 457ին երկու իշխանազուն եղբարք չնորհօք ամենօրհնեալ Կուսին արիսեան ազանդէն յուղղափառութիւն գառնալով՝ ուխտի գնացին Երուսաղէմ. և երբ Գալիլեայի մէջ չորեքին հրեայ այրի կնոջ տանն առջև բազմութիւն մի տեսանեն հիւանդաց և ախտաժետաց. տան ներսի գին ալ խորան մի որոյ վերայ տապանակ մի կար, և առջևն մոմեր վառելին անուշահոտ խունկեր ծխելով. և հարցընելով իմացան Թէ այն տապանակին մէջ պահուէր Յիսուսի մօր գլխոյն ծածկոյթն և զգեստներն, որոց զօրութեամբն շատ հրաշալի բժշկութիւններ լինէին ի վերայ հիւանդաց։ Այս լսելով իշխաններն նոյն տան մէջ քնակիլ ուզեցին՝ որպէս ի պանդոկի, և քանի մի օրէն նոյն տապանակին ճիշդ նմանն չինելով՝ առջևնին տեղն գրին, և միւսն վերցընելով բերին ի Կոստանդնուպոլիս, զոր և մեծ հանդիսով ընդունեցան Թագաւորն և պատրիարքն, և տարին զետեղեցին Վլաքեռնա ասացեալ Աստուածամօր եկեղեցւոյն մէջ՝ տօնն ալ կատարելով ի յուլիսի երկու։ Այս պատուական գանձս յետոյ լատինաց Պօլիս առած ժամանակ՝ ըստ լորովին կամ մասամբ հռոմայեցւոց ձեռքն անցաւ, և ասուի են այն մասունք զգեստուց կամ լաչակի Կուսին՝ որ գտանին ի զանազան տեղիս. որպէս և մանր մի ի հերաց նորա պահեալ ի ժամանակէ անտի ննջմանն ի բարեպաշտ հաւատացելոց. իսկ ամբողջ

մարմնոյն երկրիս վերայ չէն՝ այլ յերկինս ընդ փառաւորեալ մարմնոյն. և փոխանակ նոցա բոլոր աշխարհիս վերայ սփռեալ ծաւալին սուրբ Աստուածամօր չնորհաց և զթութեան գանձերն, հանդերձ օրինակաւ գերահրաշ վարուցն և առաքինութեանց, և զբաւոր հովանաւորութեամբ պաշտպանութեան նորա ի վերայ չերմեռանդն պաշտօնէից իւրոց. որով և մեք ալ յուսամք արժանի լինել տեսանել յերկինս զՏիրամայրն զսուրբ կոյս Աստուածածնին Մարիամ, և փառաւորել զնա յաւէժաբար ընդ Միածնի Որդւոյ իւրոյ։

ԳԼՈՒԽ Ի.

*փառք Տիրամօրն յերկինս, և պաշտպանուհւոյն
նորա յերկրի՝ ի վերայ հաւատացելոց.*

Թագաւորաց մէջ իմաստնագոյնն Սողոմոն իր որ-
գիական սէրն և յարգութիւնն ցուցանելու համար
առ մայրն իւր՝ իր յաջակողմն նստոյց զնա արքու-
նական աթոռի վերայ, խոստանալով նորա խնդիրքն
անյապաղ կատարելոյ: Այս անգ օրինակ և գուշա-
կութիւն մի էր այն գերագոյն փառաց Կուսին՝ որ
երբ սերովբէից սպասարկութեամբ եմուտ յերկինս՝
իւր Միածնին որդին բազմեցնելով զնա ի գահ ար-
քայական և պսակելով զնա անմահական պսակով՝
կարգեաց զնա Թագուհի երկնից և երկրի. այնչափ
գերազանց քան զփառս Բերսաբեայ՝ որչափ որ սա
երկրաւոր Թագաւորին մի մայր էր, իսկ նա երկնաւոր
և յաւիտենական Թագաւորին: Յիրաւի մեք կարող
չեմք ոչ բացատրել և ոչ ի միտ առնուլ զանձառելի
փառս Մարեմայ յերկինս. վասն զի այս բանիս հա-
մար հարկաւոր էր գիտել նորա արժանեաց և առա-
քինութեանց չափն, սակայն այսու ամենայնիւ յար-
գական համարձակութեամբ մատիցուք առաջի ա-
թոռոյ ընծայից նորա. որովհետև ինքն ալ ուրչափ
գերազանց է ի փառս՝ նայնչափ ալ բազմադէզ ի
գթութիւն:

Արքայութեան մէջ երանելեաց փառաց չափն՝
իրենց երկրիս վերայ ունեցած արդեանց համեմատ
է, և այնչափ աւելի գերազանց՝ որչափ գերագոյն
վախճանի մի համար ստեղծած և գործածած է զի-
րենք Աստուած. իսկ արդ Աստուծոյ մայր լինելէն
աւելի գերագոյն վախճան և գործ կարէ՞ լինել մարդ-
կային բնութեանս համար: Մարիամ ի յաւիտե-
նից սահմանեալ այս աստուածամայրութեան պատ-
ուոյն, և ընդունելով Աստուծոյ ամեն երկնային
ձիրք և շնորհք և կատարելութիւն՝ ինչն ալ հաւա-
տարմութեամբ գործածեց և աճեցոյց զնոսա, և որ-
չափ որ ձոխացեալ էր շնորհօք որպէս գուսար Հօր
ամենակալի, մայր Միածնին և հարսն Հոգւոյն սրբոյ՝
նոյնչափ ալ իւր խոնարհութեամբ փոխարինեց Աս-
տուծոյ իրեն տուեալ բարեմասնութիւններն, մինչև
հասաւ նստաւ ընդ աջմէ Որդւոյն իւրոյ յերկինս՝
սրբոց համար պատրաստեալ օթեվանաց առաջին
տեղին, իբրև զարեգակն փայլելով ի մէջ բիւրաւոր
աստեղաց, և իւր ճառագայթներն սփռելով երկնից
և երկրի անսահման պարունակին մէջ, և իր պետու-
թիւնն տարածելով բովանդակ սիրելեաց վերայ,
որով և ամենայն արարածք որ պաշտեն մտաւոցանեն
Աստուածոյ՝ պատուեն և մեծարեն և զՄարիամ որպէս
գշխոյ և Թագուհի՝ յորմէ ընդունին ամենքն ալ զնո-
սանս ընծայս, ոչ միայն մարգիկ որ ի վերայ երկրի
և հոգիք երանելեաց ի յերկինս, այլ և հրեշտակք
և հրեշտակապետք և ամենայն դասք լուսեղինաց՝ որ
իւր լուսոյն աւելի ևս պայծառանան: Վասն զի եթէ
Աստուած ինքնին իւր մարդկութեամբն հնազանդ
եղև այս գերագոյն արարածոյն՝ կարելի բա՞ն է որ
աղաս լինի ոք նորա հզօր պետութենէն և իշխանու-
թենէն:

Սակայն որչափ ալ մեծ է Մարիամու փառքն և
իշխանութիւնն ի յերկինս, նոյնչափ ալ զօրաւոր է

իր մայրական հովանաւորութիւնն երկրիս վերայ՝ զոր գործադրել սկսաւ այն առենէն երբ Յիսուս Քրիստոս ի յետին ժամու կենաց իւրոց իր մայրութեանն յանձնեց զբովանդակ որդիս Ադամայ՝ որով և ինքն եղև նոր Եւա մայր ամենայն կենդանեաց՝ ծնանելով զնոսա առ ոտս խաչի Միածինն որգւոյն կսկծագին ցաւոք և չարչարանօք։ Այնպէս որ իր լուսափայլ երեսաց Ճառագայթներովք զհոգիս արդարոց որ են յերկինս լուսաւորած ժամանակ՝ յիշէ թէ երկրիս վերայ ալ ունի ուրիշ զաւկներ զորս իւր Միածինն իւրով արեամբ գնած, և իրեն յանձնած է նոցա խնամքն և պաշտպանութիւնն. որով թեպէտ մարմնովն ալ վերափոխելով յերկինս հեռացաւ ի մէնջ, սակայն ինքն միշտ ներկայ և կենդանի է կաթողիկէ եկեղեցւոյ մէջ իր հզօր հովանաւորութեամբն և անդադար բարեխօսութեամբն առ Աստուած։ Այսոր համար է որ Ս. Եկեղեցին ալ իրեն ուղղէ զաղաչանս իւր և զաղօթս, և յետ Յիսուսի Քրիստոսի Մարեմայ վերայ հաստատէ իւր ամեն յոյսն և ակնկալութիւնն. և իւր աստուածային հիմնարկութենէն մինչև հիմա՝ ոչ երբեք պարապ ելած է իր վստահութիւնն, և Տիրամօր բարեխօսութեամբն յաղթած է ամեն դժուարութեանց, հեթանոսաց հալածանացն, հերձուածողաց նենգութեանցն, կայսերաց և թագաւորաց ահարկութեանցն, սուտ իմաստնոց խորամանկութեանցն, և վերջապէս սատանային իրեն դէմ հնարած ամեն տեսակ պատերազմաց։ Եւ այս պաշտպանութիւնս ոչ միայն ընդհանուր եկեղեցւոյ վերայ տարածէ, այլև իւրաքանչիւր մարդու ալ առանձինն, այնպէս որ ընդունողներն ոչ երբեք պարապ ելանեն և զրկին իր ողորմութենէն։ Զայս գիտելով ուրեմն և աներկբայապէս հաւատալով՝ մեր ամեն կարօտութեանց և նեղութեանց մէջ դիմենք վստահութեամբ մեր ամենագութ մօր

գիրկն՝ որ ոչ երբեք զմեզ յերեսէ թողու՝ որչափ ալ անարժան լինիմք իր ողորմութեանն. «Մատիցուք համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք զգթութիւն ի դէպ ժամանակի». որում արժանի արասցէ զամենեսին զգրոցս և զընթերցողս մատենիս ինքն Տիրամայրն մեր Աստուածածին Մարիամ։

ՀԵՐՈՆԻՄՈՍԻ ՎԻՏԱ.

Ի ԿՈՒՍԱՄԱՅՐՆ ՄԵԾ

Այլ ո՛տտ մատչել ինձ Սրբուհի քոյ պրուատեաց յերջ
մահացու՝
Յոր պարանցիկք երկնաւորք երկնախօսիկ յիւրեանց բարբառ
Հավիտ ժամին՝ թէպէտ ոչ հակեալք խոնարհ հողաշինգուած,
Եւ ըղխաւաղ իսկ տեսանեն հանապազօր դէմ յանդիման։
Իսկ ես քանիցըս նըկրտիմ յաւել ՚ի դէմսըդ կենդանի՝
Եւ զաչս ՚ի վեր ամբարձեալ պընուլ յերեսըդ դեղանի,
Շլացեալ ակնկոթեմ յահնախըտիվ լուսոյդ նըշոյլ,
Նա և ոչ իսկ բացածէդ ճառագայթիցըդ հանդուրժեմ
ի քոյ դիմաց շողշողենի. զի դու զմարմինդ աստուածազգեաց
Փողարկեալ վայելչապէս արփիազգեաս պճնեալ ճեմիս,
Որպէս Դչխոյ պըսակեալ ՚ի ծամակալս աստեղազարդ.
Եւ մինչ ՚նդ ոսկեքոյղ շողոյ լուսին փողփողենէջ և ոսկեփայլ
Դու զկրեղէն կոխես զաստեղս շուրջ զաշխարհաս պարսյածիկ։
Անդէն ՚ի սկզբանէ ամենիմաստ ամենից Հայր՝
Զև զաշխարհ ստեղծագործեալ ըղքեզ ընտրեաց բիւրից յէից
Միայնակ՝ զի զթածաւորն ածցես ՚ի լոյս դու վերկնաւոր։
Զի ՚ի ստունգանել նախաստեղծին ՚ի դրժել զուխան աս-
տուածաղիր
Երբ հայրն հանուրց առաջին՝ զանձրն և զիւրս եղծեաց համայն
Դարուց ՚ի դարս հանդերձելոց՝ Դու միայնակ կացեր անխոտ
ի նախկին մեղանաց վերծ և յղացեալ չինչ անարատ
Յարդանդի մօրդ ամենևիմբ ազատ անբիծ ՚ի մեղաց.
Եւ կամ՝ անդէն և անդ երկնաբնակաց արքայն հզօր՝
Զերծ կացոյց՝ ըղհասարակ զաղտս մեղաց չնչեալ ՚ի բաց.
Մի եթէ քարձր յեթերաց վառվռ իջեալ յականակիս
Պղտորեալ ինչ խառնեսցի, և առ յաղայս ծընունդ քոյին
ի մայրական արեանէն նախկին ըղկեղտ յինքն ընկալցի։

Ո՛հատ՝ ի սիոցըզ զարգանալ հեռ՝ ի չարեաց մեղաց անգէա
Սուրբ և անբիծ պահեալ խնամօք նախախնաց իմաստութեամբ,
Որպէս ըզքոյս գեղազեղ գաշտ յընդարձակ վերընձիւղեալ
Նախընծայ նորածագիկ ծայրիւք թերթից փթթինաղարդ
Ի բուրաստանս արքենի թէ փոխադրի երանուէտ,
Նոյն և դու մանկիկ զողորիկ ըզհայրենին լքեալ ըզգարկ՝
Ի զաբելայն ընծայիս ի մայրական ուխտեալ ձօնի.
Ուր և կանուխ տեսանողաց ի սուրբ քարոէաս ներկուս
վարժիւք
Նախաճաշեալ պատգամաց խոստացելոց երեր հասու՝
Եթէ երկնից Տէր վեհափառ ի մահացու ծնցի մօրէ:
Անդ ուրեմն ի քաղցր հրճուանս յեռանդագին իղձըս սրտիդ
Ըզժամանեալըն զԱստուած մերձ նկատեալ մտօքդ անբիծ,
Մօրն յղացելոյ ըզսրբանուէր ձօնս պատրաստես.
Ո՛հ թէ պանծալին բաստ մօտ յաւուրս երկիր նըսիհ,
Եւ քումդ խոկ ժամանակի տապն նուէրն այն գերապանծ:
Մինչ անձամօթ հանդերձելոց դու զարժանիսդ ոչ նշմարես,
Եւ տակաւին Հարան չքնաղ ըզվեռս քոյին անգիտանաս՝
Ահա հասցեալ սրացեալ յերկինից աւետաբեր քարձր յեղերաց
Խոնարհեալ ի լանէ արագաթեւն սիրապատար՝
Եւ ըսկզնացդ հնչէ հեզիկ զուարթագին ի բարբառ.
“ Աւետիս, երկնաքնակաց դու արքային ակնահաճոյ,
Լիի ընտրօք Բարձրելոյն գերազանց մայր երանաւէտ.
Մի զանգիտեր, Կոյս պատկառուս, զօրէնս մարդկան ածեալ
ընդ միտս.
Զաստուածային շնչեացես սիւք և ընդ երկինից դու հարսնասցիս.
Զի յայտնեսցէ ոչ այլ ումեք եղեալ ծննդեանս այս փառք վեհիմ:
Դու զԱրարչին համայնից՝ յերերական սիւք սաղմնաւիկ
Անփորձ յառնէ յղասցես աստուածահրաշ արգասաւոր,
Եւ զկուսականդ անբծութիւն միշտ պահեսցես ամենազեղ.
Որպէս ըզգեղոյն խմանալի անթմփանց ցօղ յանձրևածին՝
Մինչ թմանց զերկիր համայն տեղատարափ խիտ չառաչուկ.
Դու յաւետեան դուռնըն փակեալ՝ ընդ որ անցցէ Ամենակալն,
Ոչ զանշարժ զադիսըս նորին և ոչ զնիզակըն խարխարեալ.
Դու մորենին անկիզելի յաւերեալց հուր ճարճատիւն՝
Այր սաղարթունք կանաչազեղ ոչ խանձողին ի ջոց հրատին.
Որպէս երբեմն անդ ուրեմն ի բորբոքեալ հնոցին զմանկտնա

Անխայեաց հուրն անվընաս հեզիկ զմարմինսըն լիզելով.
Հրաշք զարմանալիք պատկերեալց քեզ օրինակք,
Եւ վաղուեան դուշակութեանց առ ապագայս յոյս անյապաղ:
Ասաց, ու անդէն որոտընդոստ տեսեր ջերկինս դուզ վեռե-
կեալ,
Եւ առ նմին թեւաքօղեալ յոսկեզխոսակ ամպոց նըշոյլ՝
Ար քեզ եկաւորել պէշնն ըզգացեր անճառահրաշ,
Ի բարձանց ի յօդ հանդարտ ոգի չնչեալ եթերաշունչ:
Ո՛վ գնարդ ըզմայլեցար անդէն կուսանդ սրտաճըրոփ.
Հաւատամ աներկմիտ՝ սեր անուշակ ըզքեզ վառեր
փաղցրաղուարճ ի տարփանս համայն կիզեալ խանդաղակաթ:
Իսկ յորմէ՞ քերկրութիւնն սիրտ քո հալեալ նուաղեցաւ՝
Յորժամ ամուլն այն զառամ արեանառուս քոյզ ազգակից
Աչկերտիդ բերկրեցելոյ ի լեռնակողին եղ ընդ առաջ,
Եւ ի խայտալ արգանդին ըզքոյդ ծանեաւ վառս գերապանծ,
Որովայնիդ երանի երիցս քաւիցըս կուրդալով:
Իսկ դու չիկնեալ պատկառանօք որպէս ըզվարդ գիրգ վառ
ի վառ՝
Ի լարս չրթանցըդ կարմրորակ յերկինս ուղղես զերդս երախ-
տեաց
Անարժան զքեզ կոչելով այնքան չնորհաց անընդունակ:
Այլ դուզնաքեայ ցարդ առացեալքս, ըզչրաչագոյնս եկիցս
ճառել:
Աղէ ածէք բռնալիր՝ ածէք չուչանս ինձ կուսափայլս,
Տուք լիքանոն, պարմանիք, յորոր ի կայթս ածէք պըրակս.
Զի ի պատկեր հողածննդոյ ծնանի մանուկ որ էր միշտ
Եւ է և եղիցի էնն անակիզըն և անվախճան,
Զոր ոչ տանել կարասցեն տիեզերաց անհուն սահմանք,
Որ անտես յաչաց մարդկան ու անշնչական ձեռաց նորին:
Ցառաջ թուիմ տեսանել ըզքեզ Կոյս ի դուռս հարեալ,
Եւ ծունր յերկիր պչրացեալ ընդ նորածինդ զորովալից՝
Որ ճառագայթս ոսկենշոյլ փայլատակէ հարատաւ սահմանս,
Եւ առ նմին կարկառեալ ըզծերունին ես նկատեմ՝
Ի տես հրաչիցըն պակուցեալ քեզդու անդրանկանդ երկրպագուս:
Երանի ձեզ դասք հովուաց՝ որոց քաղդ գեղանսիհ
Եղաւն ի մատուրըն տեսանել ըզծնունդն անզուգական.
Ո՛հ թէ և ինձ հասանէր ժամանակիդ գոլ ղեւդակից

Եւ ի ծըմակս անառատացդ հովուել զաւինս ճարակաւորս,
Օ՛ն և ան զի ոչ գնայիք առանց իմ Յայրըն նչմարեալ՝
Զոր ցուցին ձեզ զուարթունք նուագաւոր յերկս երկնային.
Նա՛ զի ես ինք նախաժաման ի սաղարթիւն յոստ մրտենեաց
Դրանսանգըս ձըգէի Յայրին ի մուտս ծաղկազարակ,
Յաւելեալ և երգս տաղից ի գեղջային յեզերն ի սըլ,
Տաղս զոր Դաւթայդ արդ նուիրեմ ումպէտ ինձեմ ես ձեռնհաս:
Եւ ոչ ես ոք իշխեր զիս Յայրէն վտարել երանաւէտ՝
Յանուշակ ի սպասուէ քեզ և մանկանդ և ծերունւոյն.
Նա՛ զղխտեակն իակ յարդարել յովնանակին ի յարդ խոտոց:
Անգանօր էր ինձ տեսանել նուիրեալեր արքայս մանկանն
Յեթովղիոյ եկեալ յերկրէ ասաղաղուշակ կարապետեալ,
Գեռնամածս առ ոսս քո ու առ ոսս որդւոյդ սիրելւոյ.
Եւ զիմեալարս իակ լուսաղգեաս ի սպաս քոյին վուիթագեալ՝
Սառեալ ընդ քեզ դող խօսակից և ըզվշտաց սփոփել իմախիթ,
Մխիթար մատուցանել կարօտելոյդ պէս պէս հնարիւք,
Թէ զորդւոյդ խիթաս երբեք առ ի վտանգաց պատսպարել՝
Ըզգլուխըն նազելի սիրա ի բուին զողզոջելով:
Անմեկին կայի ընդ քեզ և ի տաճարըն սրբավայր՝
Յորժամ յեսին բանք ծերունւոյն օրհասական հարան ի քեզ
Մինչդեռ ըզզոյգս ազատնեաց դու հանէիր զոհս ի բադին
Ընդնախկին զերկունս լուծեալ՝ երբ վշտահար յանձն կարեվէր
Եւ ի սարսուռ սիրտ խիտանցանց սայրատուր հարաւ սուսեր.
Ուրանօր և զվաղնջուց պատգամս ահեղս ածել ի յուշ
Զի վոխանակ բազմաց որդիդ նուիրեաց՝ ի մահ դառնաղէտ:
Զոր և արկածք գժընդակ անդէն ըզխեխթսըդ ճշդրտեն:
Ահա բանքեր լիեւազդեցիկ ծերոյն յերազ ազդ առնէ
Յառնել փութիալ փախչել ընդ քեզ ի խիթալի հայրենեաց.
Զ՝ի միաս աբքայն կասկածաւոր ընդ երկեան հարց գաւազան
Ի խնդիր չըՀի մանկանդ վայրագն հարուլ ի սայր անգութ:
Վաղուէր անացեալ ուղեղ, յո՛ գքեզ մըղէ մոլեգնութիւնդ,
Էր խոչխողել զանմեզ մանկանն ի մարցն ի առհանցըն քեցելով.
Համարիս կալ հակառակ յաւխանիցըն խորհրդոց:
Այլ տակաւին չէ ժամն հասեալ մահու մանկանն հեղգունի.
Զի զնա ես ոչ չըՀեցայ ըզգերագոյն Հօրըն պատգամս
Ցուալել յերկիր հանուր, և ոչ զանձնէ տալ ծանօթս

Անճառահրաչ սքանչելեօք զմարդիկ զաշխարհս հիացուցեալ,
Ոչ զօրութեամբ մարդկայնոյ, ոչ արուեստիւ ի հելենեմանս:
Նա նորանոր օրէնս կարգաց, նոր ուխտ տացէ աշխարհի.
Ընդ աղտաղտուկ ալեաց կուտակ գնացէ անթաց ի գաբաշտար.
Հրաման տացէ վայրագ ծովու և փրփրերակս կոհակաց.
Յակնարկել կամաց նորա ահաք ի մարմնոց հալածեացին,
Եւ անդրէն ի կեանս գարձցին՝ որոց ոսկերք կային տապատած.
Նա դուղնաքեաց ի պարէն ըզնքողեալս հազարաւոր
Կշտասցին յագեցուսցէ, քաղե հրաշիցն, յանկոխ վայրի.
Ըզքաջքան խորհուրդս մարդկան առակեացէ՝ լեալ խելամուտ.
Յամաքեացին ծառք անտառաց, ծարաւահիւծ անդք խորխոլին.
Իակ ի զայրոյթ արդարութեան ի կշտամբելն ըզնշամիս
Խնայեացէ ըզչրթունս յաղերնաքան եպերանաց:
Ընդ այսոսիկ հրաշացեալ հրճուեսցիս Կոյս ի սրտիդ,
Եւ ըզմայլեալ քաղցրութեամբ զուարճասցիս բերկրասատար
Յորժամ զմանուկն ի տաճարին ի ճենճերել գտնիցդ թողեալ՝
Յետ ընդ երկար դեղերանաց դաժես որպէս զարեւ ծագեալ՝
Լուսափայլ դիմօք պայծառ ի լիճ լուսոյն չողչողինի.
Մինչ հոլանեալ ընդնովաւ ափիբերան կան ի յակճիռ
Նախաթռուքըն ծերունեաց և վարդապետք տղայոց՝
Ի պարզել նորին զպատգամըս վաղնջուց տեսանողաց,
Զորս համօրէն ուսուցանէ երկիցս վեցեակ տիւք մանուկ,
Եւ զանհատանս ըմբերանէ յոսկեզնիկիկ բարբառ չրթանց,
Անմահական ձայնիւն ըզվիսս այլ և ըզսիրտս ամբռնելով.
Եւ ի մարմնոցըն բովանդակ սէր ծաւալեալ չուրջանակի,
Զերդ նոր արիւն ծայրակարմիր կամ զեղանի ասող ոսկեփայլ
Ուսոի և մարց ակնթեղոց քաղմահոյլ գաւք երամ երամ
Երանեալ կարդային ում յարգանդի կրեաց ըզնա,
Եւ ըստեամբքըն գնեցուցց զնմափիկիկ չրթունսըն կանճնասուն:
Յայն տեսիլ դու գրկախառն բոլոր լանջիւք փարեալ զնովաւ
Չամբոյր գլխոյն օծելոյ՝ համբոյր տայիր վեհ ճակատուն,
Ողջագուրեալ չրթամբքդ անբիծ ըզքիս աչացն ասահզափայլ
Ի տուրհատս անուշակ քաղցր համբուրից սիրաբորբոք:
Այլ խնդալով խնդացեր և առ յաղայս ի միտս քոյին՝
Յորժամ ըզնուն ակնակից ի հրաշէկ փոխեաց գինի՝
Ի նորս քոյին ակնարկի զուրախարար խառնեալ բաժակ,

Բազմականացն 'ի զարմանս և կոչնատեառնէն խրախճանին։
Զայսոսիկ տեսցես դու Մայր՝ չև տակաւին բնաւորին
Շամբուշ կառաղումեհան յաղուրդ առեալ մոլեգնումեհին։
Այլ այժմ երկնից թեւատրումեհան միտ դիր զոր քեզ աղդեաց
զուարճունն.
Մի՛ զահանդեալ ըստուժեր գնալ 'ի սահմանս նիլոտական.
Բարեպատեհ է քեզ ժամդ, ձեզ դիւերոյն մութ հոլովեհ
Ու աղօտ նշոյլ լուսնակին փախստեխդ պատսպարան.
Նայիս գիտրդ հարթանան սաղարթուն լերանց պարսիք,
Եւ անտառք վարագուդք ծառի գծառի ծփեալ ցնծան։
Եւ երկիր նորաբանէ զանուշահոտ բուրմունս յղէ.
Նոյն և գաղանք դիւերընթեաց, թռչնոց երամք թիւապար
Իւրն զբաշուստ խմացան գի գալով գայ և մերձենայ.
Գետոց ընթացք իսկ քարավէժ ոտնակառեալ պակեան կայնի՝
Մինչ զուարթ յաւիտնս իւր Նիլոս ասպնջական կացցէ անքոյթ,
Զոր արդէն դուժական ախուր զողջոյն սահմանս զարհուրեցոյց՝
Թէ մանկտոյն մատաղերամ յորդին արեան ճաղատիք
Ի խնդիր մանկան քոյին՝ քան թէ այլուս, 'ի Ռեթլեհէմ։
Ո՛հ գիտրդ հարար յոդիդ, արիւն 'ի սերտրդ պաղեցաւ,
Եւ ընդ անձնդդ սարսռագին էանց անդէն սուր սպրատսուր։
Այլ ոչ ատեն վախման առնուն կոյս քո վշտաց աղէտից ցաւոց,
Եւ չեն հասեալ տակաւին ժամք դառնագին քոյդ տրամութեհան,
Զի առ յաղագս քեզ ինան ապիղորմ ցաւք դժընդակ։
Ո՛վ աղեխոցս, և ո՞վ երբեք հաւատայր մահ ահագնալուր
Պատրաստեալ այնմ որոյ Հայրն գահակալէ բարձր յՈլիմպոս,
Որում ծով, որում երկիր, որում երկինք լսեն ու պատիք։
Սակայն նա ինքըն ճոխաբար գիտեաց 'ի մահ յօժարութեամբ
Առեամբ իւրով լուծանել ընկճախաչօր մեղս մահաւորի,
Եւ կամակար իւր մահուամբ քաւել զյանցանս մահկանացուաց,
Այս իսկ ելով կամբ Ձօրն անգարձ, սոյն և երկինք հաշտարար,
Որում և կոյսդ կանխադէտ հանդերձելոց ոչ անդիտակ՝
Սակայն գողգոս ըընաւից գու մուսացօնս արարեալ՝
Ո՛վ մայրենի սէր խանդակաթի, ընդ աղեխիւք ընկճես ցաւոց.
Որով այն ինչ գոյժ դժընդակ հնչեաց ահեղ յունկըն քոյին
Թէ անդրանիկըդ միամօր նենգեալ յիւրացըն ձերբակալ
Ասդղ դրուժան մախանաք 'ի սպանդ վարի անպարտաւիր

Եւ համակ բոլոր մարմնովը վիրաւորեալ դառնակսկիծ
Նչաւակ կախեալ զխայտէն կայ 'ի տեսիլ քաամընափուշ՝
Ընդ չէնն ասէն էլեր արտաքս՝ զանցըս լցեալ և զուղիս
Գերաչխարան յողբս կախանաց կողկողաձայն 'ի լալիս։
Որպէս հաւիկ ջամբ 'ի բերան գարձեալ 'ի բոյն յուղէշ ծառոց
Եառս ըզտուն իւր աւերեալ յանգութ ձեռաց մանկանն հովուի
Որ զաղուաղեհ զմանկտին ասաղ չտպեաց տարաւ ճուռղաձայն,
Նա հիւ եկեալ ման առեալ ընտ ըզկայրն ողբոց 'ի ճիչ
Յաւարառուէն նենգաւորէ հաղիւ և զանձըն ճողոպրեալ։
Ընդ աղետս քոյին յայնժամ և առաստպոք չարժեալ 'ի գութ
Եւ անտառք հողմակոծեալք քոյդ լալընից եղեն կցորդ։
Իսկ մինչ յոդիս ապաստան հաղթեալ 'ի վայրն եղեր ժաման
Եւ տեսեր կախեալ զխայտէն՝ որ սորեալ պաշտըն մահաբեր
Յայս կոյս և յայն չրջչրջելով խնդիր յիւրոցըն անձկայրեաց
Ի խոտ անդ առելեաց չուրջ պատելոց ահեղասաստ,
Ծունգք կրթուցեալ անկար անդէն յերկիր նուաղեալկիսամահ,
Եւ գերկընդխառն ըզկայտիւ յոգւոց հանեալ կարղայիր.
"Ա՞յս էր ուրեմն տուեալ երբեմն յերկնից զուարթ աւետիս,
Եւ գրաւական ապառաժային լինձ խոստացեալ պարգեւաց.
Ա՞յս լինձ պահէր երանութիւն 'ի մարդ երամ որդւովք բեր-
կրեալ.
Սա՞ղէս ուրեմն ծաղկեացին փառք իմ 'ի գարըս ապագայս"։
Երանի՛ կարդայիր քեւր երանիս գու այնոցիկ
Որոց հնաս ողբալ ըղրդիս 'ի նախադուռն սեամս հառաչին
Եւ այց երկար սուգ արտմութեհան դոյզն ինչ ցաւոցըն գիւր
մատոյց։
Անցաւորք ճանապարհի ողորմելոյն գուք գութ ածէք,
Ա՛ն ձեզ կարդայ մայրն եղկելի՝ լալահառաչ հեկեկանօք
Յեղերամայրս սըգաղղեհաց զձեզ կոչելով յիւր աչխարան,
Որ 'ի նոյն փայտ անպարտաւկիր որդւոյն ըղձայ գոլ մահակից։
Եւ գուք բարձուէք ամպածրար ողորմեցէք և գուք հիքիս՝
Մի յեղակարծ դըղրդմամբ 'ի մայրն հոսիք գուք գահավէժ՝
Թէպէտ ուխտիք զայն թիանանձ բազմիցս արկեալ ձեզ
պաղատանս,
Գէթ ըզրուն առնել թէ հնար ցաւոց իւրոց դժընդակ"։
Այլ ոչ նոյնպէս անտես որպիսի ըզմայրդ առնէ նաղելի,
Թէպէտ 'ի մահ խոց վիրաւոր խանդաղակաթի ձայն արձակեալ,

Զայն ալիկար անզօր լանջայ՝ ուր ոխերիմք խոկ ոչ ժուժէն.
Եւ զմահաբուն ականոդիս ի քեզ յառեալ օրհասական՝
Ճգնի հնարի ի դէմս անոյշ ըղձէրն յայտնել եռանդուն:
Իսկ դու լուիկ և հեզիկ զարթօսր ի ծոց ժողովելով
Ոչ ևս առնես լսելի ոչ հեկեկանս և ոչ հառաչս.
Այլ անխօսուն յաւք անքարբառ կառեալ զսիրտդ երդիծանէն.
Անդ քեզ վճռան աշխարհ քերրի ըղբարերարն իւր աշխարէր,
Եւ ի հիմանց դղրդեալ երկիր և դողալով երերէր.
Աբառաղ պարեխք և ժայռք յանառս ուժգ ցնծալ հերձուն՝
Ի նշանակ մեծի ցաւոց սուգ ըղձեցեալ մահահանդոյն.
Տեսիլն յահել և երկին այլագունեաց, ու անդէն և անդ
Աբեզական արիւնահեղ յամոզս աքօղեաց զդլուխ դերասանծ,
Ի միջօրեայն նըսեմացաւ, և թուխ գիշեր պատեաց զաշխարհ՝
Աբհաւիրս ածեալ աղանց թ՝ երկիրս սուզի յանլոյս խաւար:
Այլ սակայն ոչ ընդերկար ծնգեալ ծխրիս կոյս սգաւոր,
Զի ի ծագել երրորդ արիւոյն ընդ արշալոյսն առաւօտուն՝
Նա զդժոխոց խաւարին զալուցս ներքինս հեռաղօտեալ
Եւ մահաւիթ ի սուէրաց թափեալ զհոգիս արդարոց՝
Ոստեաւ ի բաղմաց ի չիմէն ըզվէմն թողեալ սին և թա-
փուր,
Փեղ նախ զառաջին յաստուածահրաշ դէմս երևեալ,
Ապա և այլոց զորս ընարեաց յառաջագոյն
Գործոյն մեծի զործակիցս վաստակակից իւրոց երկանց:
Զիսրդ ցնծացար արտասուախառնըն խնդութեամբ
Ի սիրտ քոյին հրճուալից զուարթացեալ բերկրազատաւր
Զանկնակեալզ աներկիւղ նկատելով դէմ յանդիման:
Տես զիսրդ քոյդ անդրանիկ մերկեալ զմարմին մահկանացու
Զգեցեալ ըզվառս աստուածայինն երան անապատ անապական
Համակ ճառագայթեալ արիւնաքանչ և հրաշափայլ:
Իսկ յետ աւուրց տեսեր ըզնա զերկիր թողեալ ի բացէ
Ի բարձունս վերամբարձ վարագուրեալ ամպածածուկ
Երկնից կացեալ ռահասորդ հիքացելոց մահկանացուաց:
Բայց ոչ լքեալ անօգնական թողու ըզքեզ նա յաշխարհի՝
Յորչափ ըզշունչ մահկանացու դու չնչեցես ի յերկրի.
Փանդի նա ինքն Ամենակալն կացցէ ըզքեզ հովանաւոր,
Եւ զօրութիւն Բարձրելոյն միշտ անմահին զոհս և գիշեր.
Նորին ի թիւս օժանդակ յարկածս չարեաց դու աներկիւղ

Ի մարմնի մահկանացու կենօք կեցցես երկնահանդէս,
Մերթ յընթերցուածս տեսանողաց զաղջնածածուկ հին
պատգամաց,
Եւ մերթ հոգւով սլացեալ յերկինս յԱստուած մտօքըզ խո-
րամուխ
Ամենակալ Որդւոյդ ի տես զմայլեալ ի սէրն աստուածահրաշ
Ի վայելս սիրոյ նորին յաւերժական հիացմամբ,
Որ զուղխըս փափկութեան տայ քեզ ըմպել ուրախաբար:
Սակայն ահա օր զուարթ գալով և գայ և մերձենայ՝
Զի և դու լքեալ վերկիր յերկինս ուղիս՝ արփիաձեզ.
Եւ այն ինչ զայլսըդ կախուցեալ ի քուն մահու հեղաբար՝
Երագաթռիչ չարժմամբ ի վեր կառավարես ընդ այերս՝
Ի բոցավայլ ճառագայթից արեգական վառ բորբոքեալ
Նշուլազեղ ամպք ծիրանի ըզքեզ պատին հովանաւորք,
Եւ յայնմ և յահեկէ թռչին թռչանին և ճախր առնուն
Դասք զաւրութեանց թևաշարժիկ աստեղազարդ երկնից համա-
բակք,
Եւ սրաթռիչ հովանեաւն ի թիկնամէջս ըզքեզ բառնան:
Ըզքեզ ընդ ամպըս երկնաչու ի սուրբ բարձանց հիւսքանչ
Տեսեալ և հրաշեացն մանկունք հովուացըն Եդոմայ
Ընդ ճանապարհ նորահրաշ հեռուս թողեալ արփիաձեմ.
Զերդ Արշալոյս յԱրևելից վերամբարձեալ յալեաց ծովու
Կամ նոր լուսին վարդակարմիր ծագեալ ի փայլ ոսկեճամուկ.
Այլ երկոքին խոկ քալ ի բաց աղօտափայլ տան քեզ տեղի.
Նա և ոչ խոկ արեգակն ազրիւր լուսոյ ճաճանչագեղ
Ընդ քեզ մրցել կարասցե չուրջ պար առեալ ժամուք տուընջեան:
Այսպէս մեռեալ տարփալիր յերկինս կայքիւք և պարուք
Զգանգիւնս երդոց գաշնակաւոր հնչեն և ամպք ցօղագին.
Որպէս զակաւն՝ ի չողալ հանդիպակաց լերանց բարձանց
Ի փայլ գինուց չաչ և չառաչ, թնդիւնն բոմբիւն կուռ պղնձոյ:
Անդ հինաւուրց աւազանին պարծանք ազգիդ մեծապանծ
Փեղ ընդ առաջ ընթանան, և տեսանողք հանդերձելոց
Որ ըզղալոցսըն պատմեցին ղբերկրեալզ յինքեանս ընդու-
նելով
Ի բարձունս ածեն ըզքեզ ընդ զուարթնոց վերնոց երամս.
ՄԱՐԻԱՄ դուէն երանելեաց պարք լուսեղէն կամարին

ՄԱՐԻԱՄ երկնեն և արձագանք ի վեհավայր տաճարին .
Եւ դանդիւն ծավածայնից հարուստ ընդ վայր որոտացեալ
Լնուն երկինս նոր խնդութեամբ կատարելով տօն ցնծալից :
Անդուստ և որդիդ սուրբ Աիմաւեայ արքային հզօր
Որ ընդ աջմէ Հօր բազմեալ զերեսս երկնից զեկավարէ՝
Խանդաղակաթ վարեալ ըզքև և խոնարհեալ տայ ըզհամբոյր
Ջմայրդ ընդ ինքեան անլոյծ կապեալ ի սէր անմահ յա-
ւէրժական :
Անտի և Հայրն ի բարձրադոյն ի գահոյից վերացելոյ
Անթառամ սաղարթու ածէ զդիւմովք թագ պարծանաց
Եւ ի մահիկ ականակուռ աստեղազարդ պճնէ զձակատդ ,
Եւ զեր ի վեր զըսարթնոց ակումբ արկեալ յերկնից տաճար
Ըզքեզ Դշխոյ տիեզերաց հրամանատար կարգէ երկնից ,
Ոտտի զչքնաքոս տեսանես աղաղաղեամ այսր աշխարհիս ,
Նոյն և զլուսին և զաստեղս և զդունդ արփւոյն հրաբորբոք .
Եւ ի բարձանց անտի ժամիս ընդ երկրիս դանդաղ բեռն ա-
նարգիլ ,
Եւ ընդ անմիտ հոգս և վարանս պանդոյր սրտի մահկանա-
ցուաց :
Ողջոյն քեզ Մայր սրբասուն , ողջոյն քեզ Կոյս անհարսնա-
ցեալ
Ի յուշդեան արենէ չառաւեղեալ արքայազարմ ,
Զոր Հայրն ամենակալ հոգւով երկից աստուածային ,
Եւ ընդհօք ճոխացուցեալ եղ դերազանց մարդ հաւօրէն .
Որով և զմեզ ածէր կրկին ծննդեամբ ի լոյս աշխարհի ,
Եւ ի լուսոյդ անտի և յոյս մեր փրկութեանս ծագեցաւ :
Պատրանաց կնոջն առաջնոյ ու ամօթապարտ կորանաց
Լուծեալ ըզվրէժ , և զազգ քոյին յաստեղս երկնից հանեալ
ի վեր ,
Մինչ նախամայր մարդկութեանս և մայրն հանուրց օձապատիր
Ինքն առաջին նախ եմոյծ յազգ իւր զմահուն զախտ ժան-
տաբեր .
Իսկ յետ դարուց անցանելոյ դու կոյս ածէր նախ զառաջին
Հիքացելոյ մարդկութեանս ըզփրկութիւն անախտ ծննդեամբ :
Խորասուզեալ նա աշխարհիս ետ զաքտասուս՝ իսկ դու հըր-
ճուանս .
Նա հողածնաց ած պատուհաս , իսկ դու նըմին վարձըս բարեաց .

Քև բայան զրունք երկնաւարքք՝ զորս նա վակեաց արքարոց՝
Յօձաջամբ դարանս անկեալ ի սպրանաց խարամանուին՝
Զոր դու նդ ոտիւք յաղթական ջախջախեցեր ըզգլուխ նորին՝
Որ զուր գնելեալ գալարի յաղթ քնթռնոց վիշապաչունչ :
Նովին չնորհօք գերազանցեալ հասեր Դշխոյդ յերկնից սահ-
մանս
Ոսկահոսդ զնետ ընթացելոց բիւրաւորաց յազգէ կանանց
Որ յօրհնեալ պարս ըզքև և փութացեալ ի տօնս վերնոց՝
Խառնին յերամս երկնաձեմ յեղերական մեծ վազարանս :
Համայն էակք ամենայնիւ ակնարկութեանդ կան և ունան .
Որպէս և մեք՝ յոր ձեռնհաս փառս և պատիւ քեզ նուիրեմք
Կանգնեալ ի ձօն սեղանս հարիւր , հարիւր բազինըս խնկա-
նուէրս ,
Ընծայաբերք տաճարացդ կասխա նարդոս անուշահոտ :
Ահա և մարք ըզճմարկաւոր արկանելիս արկեալ զանձամբ՝
Նուիրաբերք բնհեղոց՝ նորահայրի ծաղկանց ի փունջ
Գան ըզտաճարս քո պճնել ի հովասուն սաղարթի ծառոց .
Որ և զորդեական խոխոջահոս ժինջդեռ ըզքառս յօդել ճգնին
Զանուանդ հնչել սալ նկրտին ի նահանջայն ի բարբառ ,
Եւ համօրէն հասակք և տունք տունեն զովիցըզ եղևել .
Նա և չէնք խակ և քաղաքք ի բարձրաբերձ աշտարակաց
Զքեզ ողջունեն յերս այդուն , և զքեզ ի մուտս նորուն ,
Ու որոտընդոստ հնչեն տաճարք բազմախոշտան յոտկի չեփոր .
Եւ ի թէպէտ դու անկարօտ երդոց ձայնիկ հովերկնայ՝
Այլ ոչ խոտեալ զորովիս զօրհներգութիւնս մահկանացուաց .
Եւ ուրանօր և կոչիս՝ լսես զազերս օրինաւորս
Ու արգահատեալ ողորմութեամբ զաղէտըս մեր բառնաս ի
բաց .
Վանեալ ի մէնջ տարտղիր ըզսրածութիւն և զախտս ժանդ ,
Ըզմարտս , ըզսուլ , զարկածս մահու և զերկնատատս սպատ-
նալիս ,
Ո՛վ ապաւէնդ ի վտանգաց մեզ թշուառաց ձեռնկալու :
Որպէս ի ծով անպարագիր ալեկոծեալ նաւաղին
Պատուպարան կայ ապաղ պայծառ դամ մի փայլէ թեթ ի բեւեռ՝
Այտպէս և լոյս քո զերատեսիլ առաջնորդէ մեզ անվհանդ
Յամենայն արկածս կենաց կարեօք հասեալ ի մեր վերոյ :
Հանդս ուրեմն առաղիկ ծովուս հաշտ ակնարկեա ի մեզ այժմիկ ,

Նահատուածեր Թուխ կռակաց սանձեամ զայսոց զսպառնալիս.
Ծագեամ ըղծողք և զարուսեակ լուսոյդ 'ի մեզ ցոլացի,
Եւ ողորմեամ աչխարհիս փարատելով զամպոց դուպար.
Մի, աղաչեմ, անօգնական Թողուր ըզմեզ 'ի վտանգիս:
Ցայն որ յատեաս քեզ քաղցրագոյն և սիրելի միշտ եկաց՝
Ցանուն որըւոյդ քեզ պաղատիմք 'ի գրաւական քոյ սիրոյդ.
Վասն ըստահանգոյ որոց մածեալ ելոյս միջնոյս աղայաբար,
Եւ ըզծղնս իւր փոխիկիկ զուլամբդ արկեալ քո մայրենի
Փաթեալ 'ի խնդրելս պնդապէս՝ քեզ բեռն Թեթեւ անուշակ,
Ծըծեալ զծծրանըդ կաթնատուն տոյժ տանդեաց աղածրի.
Վասն աղաւական քրքանոց յողջագուրանս քաղցրահամբոյր,
Եւ մանկական զբօսանոց, և որ ինչ այլ հոգ խնամոց
Զորս դու նըմին պաչտեցեր 'ի մայրենի սէր խանդակաթ:
Ընդոյն և արդ մատո', Մայրիկ, առ սեամբըս Հօրն աղաչաւոր:
Եւ Թէ երբեք վասն յանցանոց զաչս իւր յերկրէս դարձուցանէ՝
Փութա՛ լինել հաչտարար պիծուցանիլ ըզնօր զպյորդի,
Զարժանահաս պատրաստանալ պատուհաս վասն մեղոյ մեր
Գաւեւ ընդել լուանալ ցօղով արեանն աղդողական:
Բիւրս վտանգաց ես նկատեմ անդոհականս 'ի հեռուստ,
Բիւր կոտրածս ամպամբիւնս այրացաւեր բիւր քանդմունս:
Ահա ճիւաղքն հազարածին յահել բանակ սպառնալից
Տաղնապ խուճապ ածեն կուռն 'ի գէն վառեալ՝ բազմաքրդոպյեմ՝
Զերկիր համայն 'ի հարկի յաւակնելով կացուցանել.
Մինչ մերքն որոց հարկ անհրաժեշտ ըղդէմ ունել զազանին՝
Այր ընդ ընկեր կապին արքայք յարիւնըռուչտ մարտից դուս-
մունս,
Աղեղք և աղինք միաձաղին բաղխեալք յիերեսս ռազմ յան-
օրէն:
Դու զայսքանի զմեզ խուճապ վշտակրոց փարատեա՛,
Դու Սրբուհի 'ի դուխ եկեալ անդորրութիւն մեզ-չնորհեա՛
Եւ հաչտարար խաղաղութեան աչ կարկառեա՛ աչխարհիս:

(Ի Հռոմ 'ի 15 աւգուստոսի 1884).

Ս. ՀԱՅՐԱՊԱՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅ-ՍՍՌ

ԷՋ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
3	15	մայրն ալ	մայրերն ալ
58	32	616	610
63	34	Կէյլերն	Կրէյլերն
63	34	Պիսսի	Պահատոսի Պ.
93	7	Եւ Սուբ-	Եւ Ա+-
95	6	համեմատ:	համեմատ [17]:
95	18	աղօթքն,	աղօթքն [19],
96	4	երեկոյ:	երեկոյ [23]:
111	29	մոլար թզենեաց	մոլաթզենեաց
115	22	դերդաստանան	դերդաստանին
122	15	Կուսին	Կուսին [1]
157	6	Ֆիրուզապատի	Ֆիրուզապատի
161	15	քեզ „:	քեզ [6]„:
161	17	քերթողական	քերթողական և
163	18	Աբբէնէ-	Աբբենէ-
169	23	հայեէնն	հայերէնն
169	31	odoriferasn	odoriferans
175	13	ցնծալին	ցնծան
187	1	որ ծանր	որ ծանր ծանր
217	9	սոխալէ էր	սոխալեալ էր
238	19	իւր տալն Յովսեփայ քոյրն	իւր նեռն Յովսեփայ եղբօր կինն
241	34	էր	չէր
251	21	ձեռքն.	ձեռքն Ա.
286	11	Ս. Դիմոս	Ս. Դիմոս.

15

ՀՀ Ազգային գրադարան
NL0685786